

Գիրքը յուսադատճեհահանվել է
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՄԱՅՑՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅՐ ԵՐԿՐՈՒՄՆԵՐ ԱՐԿԵՐԱԸ ԼՅՅԱՅԱՍ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ
ԼՈՒՄԻՆՈՍԿԵՆԱՆՈՒՆԵԼ ԳՐԵՐ:


ՔՐՈՅՆ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՄԱՆ ՄԱՆՈՍՄԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄՈՒՍԱՆ "ՄԱՍԸՆՅՈՒՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՑՔԻՑ

www.freebooks.am

ԵՆԴՐՈՒՄ ԵՒՐ, ՈՐ ԾԳՏՄԻՄ ԵՔ ՄՏԵՐ ԿՈՑՔԻՑ
ՑԱՆԿՈՒՄ ԵՒՐ ԶՈՒՆԻ ԸՆԹԵՐՍՈՒՆԹՅԱՆ:



ԳՐԵՐ ՄԻՔ՝ freebooks@rambler.ru




Առս
Շարգսյան

ՎԱՐԱԳՈՒՅՐԻՑ ԱՅՍ ԿՈՂՄ



Նու Նարդյան



ՎԱՐԱԳՈՒՅՐԻՑ ԱՅՍ ԿՈՂՄ

ԵՐԵՎԱՆ 1991 «ՀԱՅԱՍՏԱՆ»

Սարգսյան Ս. Ա.

Ս 259 Վարագույրից այս կողմ, Եր.: Հայաստան, 1991, 351 էջ:

Քաղաքացիական մեծ շունչ ու հոգու ազնիվ պոռթկում կա գրքում այս: Հեղինակը դերասանի վառ անհատականությամբ ու նույնքան հմայիչ արվեստով քեմում կիսատ թողած իր խոսքը համոզիչ ու տաք շնչով շարունակում է կուլիսների հետևում, դահլիճում, դրսում՝ հանդիսատես ընթերցողի հետ:

Դա հայ մարդու տազնապն է մեր այսօրվա ու, մանավանդ, վաղվա համար, մեծ ցավ ու բողոք է հոգու գորշության ու անտարբերության դեմ, քաղցր կարոտ ու կարճատև վերադարձ դեպի անխոռվ մանկության տարիները: Եվ, վերջապես, սրտի խոսք է՝ քեմական արվեստի ու նրա մեծ ու փոքր մշակների մասին:

Դրանով էլ անտարբեր չի թողնի ընթերցողին:

4608010000

Ս _____ 2 հայտարարված
701 (01)—91

ԳՄԴ 88. 84

ISBN 5—540—01463—0

© Սարգսյան Ս. Ա., 1991

ՀՄԱՅՔԻ ՄԵԾ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Այդ օրը նա մի նոր դերում էր, ավելի ճիշտ դերում էլ չէր, ինչպես որ հաճախ է պատահում իր հետ: Պարզապես նրան հաջողվել էր իրական խաղի մեջ քաշել, մարդկայնորեն տրամադրել մի մեծ դահլիճ, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարը: Քար լռություն, համակ ուշադրություն դարձած մարդկանց հայացքը գամված էր ամբիոն՝ բեմում կանգնած այդ անձնավորությանը, որի արտասանած ամեն մի բառը շեշտված ցավ էր, կսկիծ, կարեկցանք ու քար սիրուն անգամ տեղից շարժող, եթե նույնիսկ գուր իայցող, բայց և արժանապատվորեն տոկուն, արդարության մեծ բողոք հայ ժողովրդի համար կարծեք ճակատագիր դարձած պատմական մեծ անարդարության դեմ:

Իսկ ավարտը... ավա՛ղ, իսկական բեմում գործողությունն ավարտվելիս հանդիսատեսը բուռն ծափեր ու երբեմն էլ օվացիաներ է պարզևում դերասանին ու ապա ամիսներով, երբեմն էլ ընդմիջտ ապրում այդ ներկայացման ավելի կյանքոտ կյանքով: Համագումարի դահլիճը թեև կարճատև, մի պահ ընդամենը, սակայն դերասանին նույնպես պարզևեց իր կարեկցանքն ու համակրանքը՝ լուռ ու զարմացած, հայացքով միայն: Բայց դա կարեկցանք էլ չէր իրականում, ցնծության զուսպ մի զգացում՝ ոգու մեծ պոռթկման հանդեպ:

Մի պահ էր միայն կոտրվել դահլիճի քար անտարբերու-

թյունը, սակայն, մարդիկ կարծեք մարդկայնացել էին, ավա՛ղ, մի կարճատև պահ միայն և դրանից հետո նույն դահլիճում նորից շարունակվեցին ու հիմա էլ շարունակվում են գորշ ներկայացումները, ինչպես սրանից յոթ տասնամյակ առաջ և միշտ: Ախր իսկական թատրոնում ուրիշի ճակատագիրը դահլիճը չէ, որ վճռում է: Նա ընդամենը հուզվում է՝ դեպքերի թվում է թե նույնիսկ անմիջական մասնակիցը դառնալով, մինչդեռ հերոսներն իրենք են գործողության իսկական տերը: Իսկ այս դեպքում դահլիճն ինքն էլ է գործող անձ, նույնքան մասնակից ու պատասխանատու: Ու լուրմ է՝ քարսիրտ ու անտարբեր:

Ինչևիցե: Այդօրվա ներկայացման «հերոսը» Սոս Սարգսյանն էր՝ հայ ժողովրդի հավաքական ոգին ու սիրտը, նրա մեծ արժանապատվությունը դարձած: Նա այդ օրը և՛ Նահապետ էր, և՛ Ջորի Միրո՝ միայն շատ ավելի իրական ու շատ ավելի հավաստի, քան նախկինում: Դա նրա գլխավոր դերն էր:

Դերասանի տաղանդի ուժը, նրա հմայքն ու մեծությունը քննականաբար պայմանավորված են դերի ճիշտ ընտրությամբ նախ, ապա մեծ վարպետությամբ բացահայտելով, ինքնատիպորեն իրենը դարձնելով այն, իր շունչն ու ոգին նրան տալով, մեծ իներցիայով իր ուսերին տանելով ներկայացման հիմնական ծանրությունը: Այդ դերասանի ամեն մի մուտք քեմ՝ երևույթ է պարզապես, իսկ նրա ստեղծած կերպարն՝ անկրկնելի:

Մարդու հմայքը նույնպես անհիմնալի է, առեղծված, որ ասենք նույն տոհմածառին մի դեպքում դառն ու անհամ պտուղներ են աճում, իսկ հենց դրանց կողքին նաև արևահամ: Հավանաբար ժողովուրդը դա լավ է հասկանում. «Պայծառ աստղի տակ է ծնվել»:

Սոս Սարգսյանի հմայքը նրա անձնավորության, խառնվածքի ընդգծված անհատականությունն է, ներքին բուռն զգացմունքներն ու դրանց համապատասխանող արտաքինը, և, որ, նա իր քնատուր նվիրումով հողին ու հողագործին, իր առօրյա նիստ

ու կացով, կենցաղով, բնագոյով անգամ ինչ որ տեղ հայ գեղջուկ է մնում ոտքից գլուխ՝ այդ կոչման ողջ իմաստությամբ ու արժանապատվությամբ հանդերձ՝ Չորի Միրո ու Նահապետ, բայց և գրեթէ անհասկանալի ու անիմանալի մի խորհրդով բոլորովին հակադիր կերպար՝ Չամբախով, Աույնքան իրական ու Աույնքան համոզիչ, Աույնքան էլ դերասանին սազական ու հարազատ: Ախր Արան շատ է բնորոշ մեծ հումորը՝ տխրությամբ ու թախիծով շաղախված, ողբերգական երանգով նաև:

Երևույթ են դարձել ռադիոբեմականացումները նաև՝ անվանի դերասանի ամենատարբեր դերերով: Այս դեպքում առանց Արան տեսնելու էլ խոսքի կախարդիչ հնչյունների տակ միայն ռադիոունկնդիրների երևակայության մեջ ուղեղի տեսածապավենի օգնությամբ հասակով մեկ գալիս կանգնում է դերասանն իր ընդգծված դիմագծերով, անգամ շարժումներով:

Ու հիմա «Վարագույրից այս կողմ»: Գրքում այս շարունակվում է բեմում կիսատ թողած խոսքը՝ Աույնքան տաք շնչով ու ջերմ՝ կուլիսների հետևում արդեն, դահլիճում ու դրսում հանդիսատես ընթերցողի հետ՝ Աույնքան անկեղծ:

Գիրքը բացվում է «Չորուկ ճյուղեր» շարքով: Այն ողջ կառուցվածքի ողնաշարն է կարծեք, սիրտն ու ուղեղը, որից շունչ ու ոգի է ստանում պատումը՝ հավատամքի հզոր լիցքով: Թեման՝ Ժողովուրդ, Հայրենիք, Սփյուռք, պատմության անողոր դաժան դասեր և, որ, ամենակարևորն է, անզգուշություն, դյուրահավատություն, մինչև իսկ կուրություն մեծ անցուդարձումներում սեփական ճակատագրի նկատմամբ՝ անփորձությունի՛ց, մեծ ինքնավստահությունի՛ց, թե՛ պարզապես անկարողությունից, որ միշտ ժամանակից առաջ ենք ընկնում կարծեք ու ի վերջո հետ մնում Արանից: Ինչ է, միայն պատմության խա՞ղն է մեղավոր Արցախի համար, մեր անօգնական վիճա՞կը:

«Հայի ետին խելքը իմը լիներ»...

Ուշ ենք ուշքի գալիս, շատ ուշ... այն էլ ինչ գնով միշտ:

Հիմա էլ մեր կողմնորոշումն ենք ծանր ու թեթև անում՝ որից հրաժարվենք, որն ընտրենք: Բայց դա քվեաքելու քա՞ն է: Կողմնորոշումը ապրելու, գոյատևելու մեր ճակատագիրն է ու նաև ժամանակի մեծ խորհուրդը, որ մենք կաբողանանք լեզու ու ելք գտնել մեր հարևանների հետ՝ լույս աշխարհ դուրս գալու:

Դա հայ մարդու տազնապն է մեր այսօրվա ու, մանավանդ, վաղվա համար, մեծ ցավ ու բողոք հոգու գորշության ու անտարբերության դեմ, որոնք միշտ էլ կործանաբար են եղել ու կմնան ժողովրդի, ազգի համար:

Շատ հետաքրքիր են ժանրային առումով պատանդիկներն այս. հուշեր, հրապարակախոսական հոդված, ակնարկ, պատմվածք, արձակ քանաստեղծությունն անգամ՝ մանրապատումների տեսքով: Ամեն դեպքում սակայն առանձնանում են դրանք քաղաքացիական ակտիվ դիրքորոշմամբ, տաք շնչով:

Ծանաչողական անուրանալի արժեք է դառնում հայ բեմի մեծերի, գործընկերների մասին խոսքը, որը որքան ծանրակշիռ ու հավաստի, նույնքան էլ ջերմ է ու հուզիչ: Զուսապ ու ժլատ տողերում էլ ընթերցողը մի նոր հանդիպում է՝ ունենում Հրաչյա Ներսիսյանի, Ավետ Ավետիսյանի լուսավոր կերպարներին: Հենքիկ Մալյանն էլ ներկայանում է հրթիռի . նման այրված իր բուռն կյանքով, որքան էլ պատումը թռուցիկ ու գիւսապ՝ իր արմատների, իր ակունքների հարազատությամբ սակայն:

Մեր Մկրտչյան: Բացառիկ ջերմությամբ ու կամեցողությամբ, մեծ գիտակությամբ է բացվում մեծատաղանդ ողբերգակատակերգուի հարուստ ու բարդ կերպարը, մի մարդու, որն ինքնատիպ էջ է մեր բազմադարյան թատրոնի պատմության մեջ նույն Սոս Սարգսյանի հետ միասին, գրեթե նույն ճակատագրով որքան նոր, նույնքան էլ հին, մեր ազգային բեմում ու նրանից դուրս, կյանքում՝ հայ ժողովրդի մեծ տխրությունն ու թախծոտ ուրախությունն աչքերում, հոգու մեջ, սակայն, ապրելու, արարելու մեծ արծանապատվությամբ:

Ինչի մասին էլ գրում է հեղինակը, մեր ժողովրդի ճակատագիրը մայր հայրենիքում ու դրսում, ամենուրեք դառնում է գլխավոր թեմա: Արդարություն, անարդարություն, սուտ ու կեղծիք, հոգու մեղանշումներ, օտարացում:

— Հայրենիքից հայություն են պահանջում,— ցավով ասում է Սարգսյանը: Հապա ինչ անեն, նրա մտքերը շարունակում են ընթերցել ես: Հայրենասիրությունը, հայությունը, մեծ կարոտը դրսում է սովորաբար ավելի ուժեղ, որ համատարած ձուլում չլինի հանկարծ՝ այն էլ ոչ միայն դրսում: Հայրենիքից հայություն են պահանջում մարդիկ, որ Հայրենիքը և՛ ինքը ապրի, և՛ ժողովուրդ պահի-պահպանի դրսում: Թե չէ տրտնջում ու փնտվում ենք միայն, երբ մարդիկ արդեն թողել են հայրենիքը՝ գնալուց առաջ նրան հարցնելու, հարազատավարի թևը բռնելու փոխարեն, թե ինչո՞ւ ես ախր թողնում Հայրենիքդ: Ի՞նչն է խանգարում քեզ:

— Կարո՞ղ ենք ստեղծել այնպիսի մթնոլորտ, ուր հայի համար ապրելը տանջանք չլինի, ցեղակիցներից չվախենա, կյանքի համար չվախենա, ինչքի համար չվախենա, հպարտանա, որ ապրում է Հայաստանում: Գոնե ցեղակիցը չնստնացնի նրան:

Առանձնահատուկ տեղ են գրավում ինքնակենսագրական մանրապատումները, որոնք մանրանկարչի հմուտ վրձնով ասեաշունչ ու ոգի են տվել հեղինակի մանկության տարիների դրվագներին, անց ու դարձերին, Լոռվա խռովահույզ ու կուսական բնությանը: Պապենական մեծ կարոտ է ծորում յուրաքանչյուր էջից:

— Սպիտակ աշխարհը լցվում է աչքերիս մեջ... ամենազարմանալիկ ծառերից կախված բրդոտ ձյունն է ու մեկ էլ դեղնակարմիր դդում արևը, որ դրել են մեր հարևանի քարե ցանկապատին, ուղիղ իմ դիմաց...

Գողտրիկ մի նատ ուրմորտ.

Լոռի: Շատերի ծննդավայր, հայրենի օրրան, գողտրիկ անկյուն: Բայց ո՞ր հայր կարող է հաստատու ու վստահ ասել այսօր, թե իր յոթը կամ ավելի պորտերը որտեղից են սերվել կոնկրետ: Միակ հիմնավորն ու կայունը. Էրզրում, Ղարս, Մուշ ու էլի բնակավայրեր, որոնք մեզնից շատերը չեն էլ տեսել իսկի, լսած կանք միայն: Մինչդեռ աշխարհով մեկ սփռված ժողովուրդ: Քշելով, սեղմելով մեզ, մի անօրենին մյուսը միացած, մեկին մյուսը դրդելով, մեկը մեր թևերը կապելով, մյուսը տեղահանելով ու թալանելով, խոսքը մեկ արած փորձել են ու շարունակում են փորձել անհայրենիք թողնել ամենահին հայրենիքն ունեցող մի ողջ ժողովուրդ՝ կեղծիքը, սուտը, զրպարտությունը պետական մակարդակով հրամցնելով ի լուր ամենքի: Ամբարտավանությունը սահման ունի՝:

Մենք ենք, մեր սարերը: Այդ սարերը դարերի խորհուրդ ունեն պահած:

— Մանկությանս տաք քամիները սարերից իջնում են մեր փոքրիկ քաղաքի վրա... Ես եմ ու քամիները:


Այս լեռնաշխարհում են ապրել հեքիաթային Ենոքն ու Եսթերն իրենց առասպելական ազնիվ սիրով: Արձակ բանաստեղծություն ես կարդում ասես:

«Եռանկյունի»: Գողտրիկ մի պատում՝ նույնքան ինքնակենսագրական, նույնքան լայնահուն ու լայնաշունչ: Նորից ճակատագիր ու առաջին ճանաչում: Մեծ կարոտ, կսկիծ, կորուստ և լուռ համակերպում:

Գիրքը փակում ես մի հաճելի զգացումով, որ ավելի վառ ու լուսավոր, ավելի հավաստի է դառնում քո երևակայության մեջ Սոս Սարգսյանի ամբողջական դիմանկարը՝ իր մարդկային արժանապատվությամբ, քաղաքացիական մեծ շնչով ու հմայքով:

ԿԱՄՈՒ ՄԱՐԻԲԵԿՑԱՆ

Impressions of the



1. ԶՈՐՈՒԿ ՃՅՈՒՂԵՐ

Քրիստոնեության առաքինությունը
հույսն է:

ՎԱԶԳԵՆ Ա

Հեքիաթի կախարդական ջուրն ենք ուզում. բոլոր անենք,
խմենք, հանկարծակի ապաքինվենք: Ո՛ր էր թե...

Զի լինելու այդպես, որովհետև այդպես չի լինում:

Սփյուռքն ու մենք. որքան էլ մեզ անջատ են պահել, մեր
էությունը մնացել է նույնը: Այնտեղ էլ հոգիներ կան, որ ապա-
վինում են հրաշքին: Պայքարելո՞ւց ենք հոգնել, հայ լինելո՞ւց,
միամի՞տ ենք, հուսահատվեցի՞նք, թե ծուլացանք...

Դեռ մեզ համար չէ կուշտի կյանքը, և չենք հաշտվելու մեր
սեփական թերությունների հետ: Մենք մեր մեջ, ուրիշից թա-
քուն, ախտորոշել ենք մեր տկարությունները, պայմանով, որ
ինչ սպեղանի էլ գտնենք, նրա հիմնամասերը լի՛նելու են քրի-
տիանքն ու համբերությունը:

Տիրեթի բժշկական խորհրդավոր ուսմունքն ասում է՝ մար-
դուն շրջապատող մթնոլորտն ապաքինման դեղամիջոց է: Ավե-
լացնենք՝ գուցե և գլխավոր:

Կարո՞ղ ենք ստեղծել այնպիսի մթնոլորտ, ուր հայի համար
ապրելը տանջանք չլինի, ցեղակիցներից չվախենա, կյանքի հա-
մար չվախենա, ինչքի համար չվախենա, հպարտանա, որ ապ-
րում է Հայաստանում: Գոնե ցեղակիցը չնստնացնի նրան:

Գուցե հենց սրանի՞ց սկսենք:

Մեր աչքի առաջ լեղանք, հուսահատ հայերը փախչում են

հայրենիքից. «Ինձ տար էս դժոխքից... Փրկիր մեզ էլ... անհնար է դիմանալ...»

Այս ճիշերն են լսում օվկիանոսից այն կողմ սրանց հարազատները:

Դարեր ենք երազել՝ միասին լինենք:

— Գնում ենք...

Մթնոլորտն անպիտանի է:

* * *

Միացյալ Նահանգներ... Մի այլ ժամանակ հանգամանակից պատմությունն կանեի մարդկանց մասին, տեսածիս և անպատճառ այն մասին, որ ինձ ստել են, դեռ դպրոցում ուսուցանելով Գորկու ակնարկը՝ «Պեղին հրեշի քաղաքը» վերնագրով: Կամ Նյու Յորքի հոմանիշ սարքած «Քարե ջունգլիները...»

Անկրկնելի, զարմանալի քաղաք է. ծառեր, ամեն հնարավոր տեղ ծաղիկներ աճեցնելու մրցում և մարդիկ, որ ավելի հաճախ իրար ժպտում են և ոչ թե հոշոտում «ջունգլիների օրենքով»: Հարստությունից բլթացող երկիր, մի անտառ օրենք, օրենքին հնազանդ քաղաքացիներ, մաքրության պաշտամունք և աշխատանք, որ անում են գոհունակ մոռոթներով և իրար ժպտալու չգրված կանոններով: Այսպիսի մթնոլորտ:

Ծապոնիա, Սինգապուր, Անգլիա. զարգացած երկրներ, հիմքում նման են իրար՝ օրենքն է գործում, անխտիր բոլոր քաղաքները դաժանորեն շահագործվում են ոչ թե մարդու, այլ օրենքի կողմից:

Ուրեմն, ԱՄՆ... Ինչքան ասես նախանձելի ճանապարհներ, կամուրջներ, շենքեր, թունելներ... Գույների պար, ճաշակի խրախճանք: Ինչին էլ նայում ես, թվում է՝ ընծա է երկնքից, այնքան է կատարյալ. թվում է չի սարքված, ծնված է... ծնված չեն, «երկնուց պարզև» չեն, քրտինք, մարդու ձեռքի գործ, մտքի աշխա-

տանք: Իսկ Լաս Վեգասը անապատում կառուցված Ռեքիաթ է իրական: Հպարտացիր մարդու համար...

Հաճախ եմ ելույթ ունեցել հայաշատ քաղաքներում. հարց-պատասխան, բանավեճեր, երբեմն՝ թե՛ծ: Հին ժողովուրդ եմք, շատը խոսացած պիտի լինեինք, պրծած. թվում է կես խոսքից պետք է իրար հասկանայինք: Չէ, պարզում-պարզաբանում եմք, դեռ որոնում եմք, դեռ ճշտում եմք: Եռանդի, ժամանակի, ջղերի անհսնա, անտնտես մսխում: Էն երկար դարերում ի՞նչ եմք արել, որ այսօրվա համար մի ավարտուն գաղափար չունենք:

Ազգային ծրագիր չկա, և կազմված չի եղել հնում ազգային մատյանը: Հին ու 'նոր մեր իշխանները քաղաքական պատգամներ չեն թողել: Մեր իշխանները մի՞թե բան չունեին մեզ փոխանցելու ու մի՞թե չեն հավատացել ապագային:

Մեր ստացած ժառանգությունը... «Աբսուրդային տարածք», — ինչպես կասեր Նժդեհը: Դարերի աղբուխոր: Չլուծված խնդիրներ, վերքեր, կնճոռոտ հարցեր... Բարդվեցին, ծառու եղան ազգի առաջ այս անդ օրերին, հետո էլ իրար միս ուտելու կայուն ավանդույթ, ու՛ հարցեր, հարցեր...

Եթե աշխարհը թագավորներով է կառավարվել, մենք ինչո՞ւ եմք իշխաններով յուր գնացել: Մի՞թե հազար տարվա մեջ գոնե տասն անգամ առիթ չենք ունեցել ստեղծելու մեր թագավորությունը:

Մենք ինչո՞ւ հպարտ ու ռազմատենչ ժողովրդի համբավ չունենք:

Ինչի՞ց է, որ մեր սուրը դառնում է «Թուր Կեծակի», երբ բարձրացնում եմք իրար վրա (օտարից, թշնամուց միշտ էլ մի ճար կգտնվի, հայ «ֆիդայուց» պրծում չկա: Մարդկանց թուրը չորանում է, երբ ասում են՝ «ֆիդայի եմ, մեքենայից իջի». սարսափ... Խորոտ էինք ծաղիկ հանեցինք):

Երկայնաբազուկներն ու լոռիամեկիքովները ինչո՞ւ էին իրենց քաղաքական խարտիաները օտարի մատյաններում գրում... Մի՞-

թե մենք ազգովի ենք կենտրոնախույս ու օտարամոլ...

Մի՞թե նախանձը մեր գեներտիկ հիվանդությունն է...

Ինչ խոսք, հաճախ են փոխվել մեր հարևանները, հաճախ են հավատափոխվել: Մեր հարևանները դարձել են մեր ճակատագիրը. թույլ ենք տվել, որ դառնան: Ծակատագիրը ամեն դարում մեզ ձևավորել է յուրովի և նորանոր խնդիրներ է դրել մեր առաջ և միշտ նույն սրությամբ՝ լիճե՛լ, թե՛ չլիճել...

Բայց ի վերուստ մեզ այս է տրված, և ամոթ չէ՞ր գյուղերով, գավառներով տեղահան լինել, փախչել սեփական ճակատագրից: Ծակատագիրն անտերություն չի սիրում, անտեր թողեցիր՝ քեզ կանտերացնի... (Մեր հարավի հարևանը դատարկություն չի սիրում, դատարկ տեղ տեսավ թե չէ՛ լցվում է...):

Նոր խնդիրները ստիպել են մեզ նոր սխալներ անել, բայց մեկը՝ ամենաբութը, կրկնում ենք հավիտյան. աշխարհի դաժան թոհուրոհի մեջ բարոյականություն ենք փնտրում, համառորեն արդարություն ենք ակնկալում, աղերսելով...

Զգայուն ժողովուրդ ենք. եթե չենք գտնում, իսկ մենք չենք գտնում երբեք, խոր հիասթափություն ենք ունենում, անհարկի ցնցումներ...

Չենք տեսնում, որ արդարությունն ու հաղթանակները քայլում են նրանց հետ, ովքեր ազգը միացնող միտք ունեն, պետականության ձգտում...

Քանի՞ դար կարելի է, ժողովրդի ասած՝ նստել թախտին, սպասել բախտին...

Եվ չարքանանք: Աստված հեռու պահի, մենք մեզ չարքանենք, թե չէ կդառնանք մատաղացու ոչխար. պատմությունը վկա: Միլիոն ու կես միանգամից, անպայքար զոհ տալուց հետո չարժե հոխորտալ՝ «Բայց մենք գոյատևում ենք, ուրիշները չկան...», չարժե. դեռ մեր հողում թաղված ու չթաղված մեռելների ոսկորներն է տրորում նվաճողը:

Մեր մեղավորությունը ինքներս մեզնից չպարտակենք, պար-

տությունները տղամարդավարի ընդունենք, Ազատի պես մտածենք, թող կարգավորվի, առողջանա մեր հոգու աշխարհը, մեր պատմության առաջ ապաշխարենք ազգովին, թողություն հայցենք մեր Աստծուց՝ մեր թերացումների, մեր դեմ իսկ գործած մեղքերի համար...

* * *

Միաբանություն... Միաբանվենք, կառուցենք, ամրացնենք հայոց պետական շենքը: Կուսակցական, խմբային, անհատական շահերից վեր դասենք պետության, ուրեմն և ժողովրդի, շահերը: Յուրաքանչյուրս մեր արահետով, բայց դեպի այդ գլխավոր նպատակը՝ առանց թուփակի պես իրար կրկնելու: Ծակատագրական քայլերը միասին, ազգովի քննենք: Հակաճանողը դեռ պատակտիչ չէ...

Յոթանասուն տարի ունեցել ենք մի հսկա բեմ՝ մի գլխավոր դերակատարով. դուրս է եկել, կարդացել իր մենախոսությունը... Մնացած բոլորս անխոս դերակատարներ, միմանա...

Կյանքն էլ երկխոսություն է...

* * *

Համարյա ամեն մարդ, իրականությունից զատ, անուրջների իր աշխարհն է ստեղծում, հատկապես, երբ կյանքը ծանր է: Մարդու իրավունքն է, բայց ոչ քաղաքական գործչի: Մտահայեցական կառույցները իրականությունը մերժել է: Մարքսիզմ-լենինիզմ ուտոպիական ուսմունքը և բոլշևիզմի փորձը դա հատատեցին: Բոլշևիզմը մինչև անգամ նպատակադրվեց «նոր մարդ» ծնել. անսահման իշխանության շնորհիվ դա նրան հաջողվեց, ու քանի որ անբնական էր գործողությունը, աշխարհ եկավ նաև վիժվածք...

Ժողովրդի պատմություն, հոգեբանություն, աշխարհագրական դիրք, պարզապես՝ ազգի բնավորություն,— սրանցից է ծնվում պետության քաղաքականությունը, նրա դիրքորոշումը, տնտեսաձևը: Քաղաքական գործիչն իրավունք չունի գիշերը տեսած երազները փաթաթել ժողովրդի վզին, ու եթե նա երազում անվտանգ սավառնել է անդունդների վրայով, դա դեռ չի նշանակում, թե պիտի զարթնի քնից ու ժողովրդին տանի նույն ճանապարհով:

Մարդ կա ինքն իր հետ շախմատ է խաղում և բացակա հակառակորդի քայլերը ակամա հարմարեցնում իրեն: Մինչդեռ իրական հակառակորդը միշտ կարող է մեզ համար անսպասելի քայլ անել, անդուր... Չականջելով նույնիսկ մեր քաղաքական այն գործիչներին, որ ասում են՝ պարոն Թուրքիա, կներես, որ մեզ սպանել ես, մենք չենք իմացել՝ էս ինչքան ես լավը... Դե, հիմա էլ արի մեզ փրկիր...

* * *

Նայենք տեսնենք ո՞վ է փնտրում մեր բարեկամությունը, էդ կողմը գնանք...

* * *

«Որտեղ հաց՝ էնտեղ կաց»... Տխուր է, բայց օտարության մեջ ենք ապրել, Հայրենիքում՝ օտարի օրենքով: Այսպես բացատրենք. Հայրենիքի տերը չենք եղել, մերը չի եղել, հազար հնարքով խույս ենք տվել պետական օրենքներից ու այսպես աննկատ փչացել ենք որպես քաղաքացի:

Եթե չենք կառուցելու համար նախ շինանյութն են ստեղծում, շտապով, ուրեմն, բայց և խնամքով հղկենք, տաշենք, վեհացնենք մեր ապագա պետության քաղաքացուն: Ծտապենք,

վաղը խուճապ չլինի. հնարավոր է ուրբաթը շաբաթից շուտ գա...

Այսքան փոքրաթիվ ազգ և, պարզվում է՝ այսքան շատ թալանչի, կաշառակեր, ձրիակեր, գող ու թմբամուլ, ու դեռ էլի ինչ ասես... Խորհրդային ժողովուրդ ենք՝ անհրաժեշտամբ, ստով ու կեղծիքով անեցված և... Չէ, հանցանքը, մեծ հանցանքը քայքայված տնտեսությունը չէ: Վերջապես, դա արդյունքն է: Հանցանքը մարդու դատարկված հոգին է... Այս շաղախը հիմնապատի մեջ չեն լցնի, պատը պատ չի դառնա...

Ծառը տնկում է մեկը, պտուղն ուտում են շատերը: Այդպես է՝ ծառ տնկողն առաքինի է, այդ առաքինի մարդիկ են պակաս:

* * *

Կալիֆոռնիայի Գահանգի մայրաքաղաք Սակրամենտոյում Ջորջ Դոքսեյանի հետ մեր զրույցը տևեց քսան րոպե: Խոհուն մարդու տպավորությունն է թողնում մեր հայրենակիցը, համեստ, զուսպ, հոգնած: Մթնոլորտը պաշտոնական է, բայց Սարգիս Մուրադյանն ու ես մեր զրույցը վարում ենք մի քիչ հայավարի, տնավարի: Սարգիսը նույնիսկ կշտամբում է Գահանգապետին, որ ԱՄՆ-ի օգնությունը Հայաստանին չնչին մի բան է, խորհրդանշական...

Ինչևէ, ուշադիր լսեց մեզ, հարցուփորձ արավ Արցախից, երկրաշարժից. Հայրենիք այցելելու մեր հրավերը մերժեց, պատճառաբանելով առաջիկա ընտրությունները, խոստացավ հետագայում անպայման գալ:

Հանդիպումից հետո օգնականները, երիտասարդ հայ տղաներ՝ կիրթ, ձիգ, ասացին. անհկա շատ չի սիրեր ինքզինքը ռեկլամել, սակայն գործ կընե... Պաշտոնը ձգելեն վերջը ավելի պիտի օգտակար ըլլա հայերուն:

Հուսանք:

Օրվա կեսին սենատի անդամները դահլիճում ենք: Ապրիլի քսաներեքն է: Նիստը օրհնանքով բացում է Տաթև Սրբազանը: Սենատորներն աղոթում են հայոց Եղեռնի զոհերի հոգեհանգրստին:

Սենատի սպիկերը հայտնում է, որ հրավիրյալներ ունեն: Հյուրերից մեկին, այսինքն ինձ, ամբիոն է ուղեկցում չորս հոգիանոց սենատորների հանձնախումբը: Խոսքն ավարտելուց հետո, նույն հանդիսավորությամբ, վերադարձնում են ինձ իմ տեղը:

Պայմանականություն, արարողություն, ծես... Հորինել են որպես քաղաքակրթության կարևոր տարր: Վարքագծի կանոններ, էթիկա, որով տարբերվում է մարդու աշխարհը...

Զմոռանամ ասել. նախապես հետաքրքրվել, իմացել էին, որ դերասան եմ, և մեզ դիմավորող տիկինը նույնիսկ թվեց իմ խաղացած մի քանի դեր...

Սակրամենտոյից մինչև Լոս Անջելես մեկ ժամվա թոհչք է: Տասը հոգուց բաղկացած մեր պատվիրակությունը նույն օրը վերադարձավ: Սպասասրահում մի խումբ աղջիկներ ինչ-որ հաղորդումից իրար անցան. պարզվեց, սխալմամբ երկու կրկնակի տոմս է վաճառվել: Ընկերությունն առաջարկում է՝ եթե երկու ուղևոր համաձայնեն հաջորդ ինքնաթիռով գնալ մեկ թե երկու ժամ հետո, ապա նրանք կպարզևատրվեն երկրի ուղած վայրը թռչելու ձրի տոմսակով: Աղջիկների ուրախությանը չափ չկար: Այդպես, իր մեղքերն իր վրա վերցնող ընկերությունը կանխում է հնարավոր անախորժությունը:

Սարգսի հետ նայում ենք իրար՝ «Աերոֆլոտ»...

Թռչում ենք... Կարծես ամեն ինչ լավ ստացվեց, բայց մոայլ եմ, ու դժգոհության որդը թաքուն կրծում է սիրտս: Ինչո՞ւ, չէ որ աշխատեցի արժանապատիվ մնալ խոսքիս մեջ, նույնիսկ՝ հպարտ: Մտաբերում եմ ելույթս՝ Արցախ, աղետյալ գոտի, շրջափակում: «Հայերը ուրիշի որսի պատանի վրա չէ, որ աչք են

դրել. պարզապես ուզում եմ ունենալ ժամանակակից «որսի» միջոցներ...»

Ունեցիր,— կասի լսողը, ինչո՞ւ չունեք...

Իսկապես:

Հիվանդ չեմք, անդամալույծ չեմք. հիմա եկել ես սրտանց պատմում ես քո դժվարությունների մասին, ի վերջո, ասում ես՝ ձեռքդ տուր, ինձ էլ առաջ քաշիր... Մի գլուխ, երկու ձեռք նա ունի, երկու ձեռք, մի գլուխ էլ՝ մե՛նք...

Իսրայելցիները մի գյուտ են արել, պարզ, հասարակ ու հանճարեղ՝ «կաթիլային ոռոգում»: Բարձր ճնշումով ռետինե բարակ խողովակներով ջուրը մղում են ծառի, խաղողի վազերի տակ, կաթիլ-կաթիլ խոնավացնում արմատները: Իսպառ կանխվում է ջրի կորուստը, և արդյունքը հսկայական է: Ամբողջ Կալիֆոռնիան օգտագործում է:

Իսրայելցիները հորինել են, որովհետև սակավաջուր են: Իսկ մե՛նք...

Կխնայե՛հնք Սևանը, խմելու ջուրը, գետերը, որ Հայոց բարձրավանդակից վազում են, գնում օտար տափաստանները: Իջե՛վանի շրջանում թեքության վրա խաղողի մեծ այգի է գցված. Անանյան Ջեմման ինձ պատմում է կակիծով, որ ջուրը այգու տակն են անում, բայց չի հասցնում ներծծվել, փախչում գնում է ներքև, ոռոգում ադրբեջանցիների այգիները, թանկարժեք պարտանչություն էլ հետն է տանում:

Թումանյանի Դսեղն անջուր է համարյա, իսկ տակի Դևրեղը խշշալով ջրերը տանում է սահմանից դուրս... Ինչքա՞ն ջուր է դուրս գնում Հայաստանից, ո՞ր է գնում: Իսկ եթե չգնա՞... Կամ, եթե վաճառե՞նք... Իսկ եթե պահե՞նք... Իսկ եթե չվաճառե՞նք, չուզեճա՞նք... Համենայն դեպս պարզե՛նք՝ ով ումից ինչքան կախում ունի...

Թուրքիան Եփրատը կտրելով, ի չիք դարձրեց Սիրիայում Խորհրդի սարքած հիդրոկայանները: Անգործ կանգնած են հսկա

այդ կառույցները, աշքովս եմ տեսել: Այսօր արդեն Թուրքիան ոչ միայն բարեկամաբար զրկել է հարևանին ոռոգման ջրից, այլև ստիպել է իրենից էլեկտրաէներգիա գնել...

Ամեն կաթիլ ջուրն աշխարհում գին ունի...

Մտքեր են. չգիտեմ, օդո՞ւմ ենք, թռչո՞ւմ ենք: Նայում եմ ցած նրանց երկրին՝ գծած, չափած, խնամված... Տրամադրություն չկա... Մտածում եմ... Հիշեցի մի քանի օր առաջ մեքենայով գնացինք Սան Դիեգո: Ավելի քան երկու հարյուր կիլոմետր ճանապարհ է. լարված նայում էի, ասի տեսնեմ ժանգոտած երկաթի կտոր, երկաթալարի մի կծիկ խոտերի մեջ. չէ, չտեսա...

Ոչ ոք իր ունեցածը մեզ չի տալու, ավելորդ վիզներս չծռենք, ձեռք չպարզենք. ուզողին չեն հարգում... Ի՞նչ եղավ մեր բանող միտքը...

Հաշվենք, վերահաշվենք մեր ունեցածը, նոր միայն մտնենք սասպարեզ:

Երազում ենք ստեղծել դեմոկրատական կարգեր, որ ազատ ապրենք, ստրուկ չլինենք, երազում ենք ունենալ իսկական ազգային կառավարություն, որ հպարտ ապրենք, արժանապատիվ, որ անկախ քաղաքականություն վարենք: Բայց եթե ես չեմ աշխատում, դու չես աշխատում, կառավարությունդ ստիպված է սրա-նրա առաջ վիզ ծռել... Մեր վիզն էլ հետն է ծովում:

«Արմենիա» խոսքը աշխարհում պետք է շատ հնչի, որքան կարելի է շատ, բայց Աստված ոչ անի, որ այսպես՝ դժբախտությունների, պարտությունների հետ կապակցված: Այսպես, այս խեղճությամբ ավելի լավ է բնավ չհոլովվի:

* * *

Մարդը, որից վախենում են, անբարոյական է, պետական կամ քաղաքական գործիչը, որից վախենում են, ավելի անբարոյական է...

* * *

Աշխարհը վաճառականություն է, առևտուր՝ ապրանքի բեր, ապրանքի տար...

Լոնդոնում եղա թատերական կենտրոնի միջազգային կապերի բաժնում: Տնօրենը, ժպտացող մի տիկին, նախկինում դերասանուհի, չթողեց, որ երկար խոսեմ: Ժամանակ չվատնենք, ասաց, պրոբլեմ չկա, մենք լավ ներկայացումներ ենք փնտրում, որ գնենք կամ փոխանակենք. եթե ունեք, բերեք, կառնենք...

Հա, լավ ապրանք ունե՞ս, գնորդ միշտ կա:

Կարգին բան չենք ստեղծի, ոչնչով չենք զինվի, եթե այսօրվանից չորոշենք զինվել... գիտելիքներով: Մանավանդ գիտելիքը համաշխարհային շուկայում ամենաթանկ ապրանքն է: Գիտելիքը բարոյականություն է, մինչև անգամ՝ ազնվական արտաքին...

Բայց ինչպե՞ս անենք, որ դիպլոմի փոխարեն գիտելիք ունենանք...

* * *

Բոստոնում, նախկին հայաստանցի մի երիտասարդ, ինձ մի կողմ քաշեց: «Երևանում ջրի «նալոգ» մտցրեք, լույսն էլ մի գողացեք, ըստե՛ չեն գողանում, ըստե՛ որ բռնեն... Էդ «լույսի մարդկանց» կաշառքի համար պատժեք... Ըստե՛ որ բռնեն... Ըստե՛ հնենց տուգանքի կապեն որ...»

Կարելի է մեծ տուգանքներ նշանակել, դատել, պատժել, դա իր հերթին, բայց կարելի է և փոխվել գիտակցաբար, չէ՞. անհնարի՞ն է, չփորձե՞նք, գոնե: Ասենք, ձմերուկը ծորակի տակ չսառեցնենք. հասկանալի է, որ դժվար է, բայց... Բայց փորձենք մեր ունեցածին մոտենալ տիրոջ նման:

Անսարք ծորակներին եթե գումարվում է մեր անխնա վերա-

բերմունքը, դառնում է թշնամություն: Վնասը ուրիշինը չէ. վատնում, փչացնում, գողանում ենք մեր՝ իմ, քո, նրա, բոլորիս ժառանգի վաղվա բաժինը:

Պատմում են՝ Լոնդոնում ջրի պակասություն է եղել, հեռատեսիլով հայտարարել են՝ լոգատաշտի մեջ ջուրը քսանհինգ սանտիմետրից ավելի չլցնել: Հաջորդ օրը սանտիմետրերն ու զանազան չափիչները խանութներում սպառվել են...

Պատմողը ծիծաղեց, ես էլ ծիծաղեցի. հիմարություն, որ մի սանտիմետր ավելին լինի, աշխարհը կքանդվի՞... Հա, էլի... Իսկ Լոնդոնում հիսունից ավել պաշտոնական թատրոն կա, միշտ լեփլեցուն, հիմնականում երիտասարդներով, անթիվ թանգարանների մոտ էլ առաջին անգամ հերթեր տեսա...

Երևանն էլ մի ժամանակ համարվում էր թատերական քաղաք...

Նույն Անգլիայում, եթե անգամ քո բակի, քո անեցրած ծառն էս կտրում, հատուկ հանձնաժողովը պետք է հաստատի, որ չորացած է: Ծառ կտրելը իրադարձություն է. կտրելը, կոտրելը, չորացնելը, չխնամելը պատժվում է: Այդպես են բնությունը բերել քաղաք...

«Գեղեցիկի զգացողությունը մարդու մեջ բնությանը հաղորդակցվելուց է սկսվում»,— ասում են ճապոնացիները:

Հուսանք, հայոց խորհրդարանը հատուկ որոշումով ապրիլ ամիսը կհայտարարի ծաղկի ու ծառատնկման ամիս:

Աշտարակից մինչև Սպիտակ ճամփեզրին մի ծառ չկա:

Եթե մեր երեխաները շարունակելու են անպատիժ ջարդել շենքերի մուտքի դռներն ու ապակիները, եթե այդ մուտքերը մնալու են աղբանոց, եթե վերելակները ծառայելու են հայ մարդուն որպես մի միզանոց, եթե ծառը տնկելու ենք ու չենք ջրելու, եթե մեկը կառուցելու է, մյուսը՝ քանդելու, եթե դարձյալ մեկն աշխատելու է, հինգը՝ ղեկավարելու, եթե ահել-ջահել բոռերը չեն պակասելու, եթե մեր միտքը չենք սրելու, մեր հոգին չենք լրց-

Անլու Աոր հույզերով, մեր կենցաղին Աոր շրակ չենք տալու, եթե մենք ասելու ենք, մենք լսելու ու չենք դառնալու մեր երկրի տերը,— մենք երբեք չենք դառնա Արա ազատ ու հպարտ քաղաքացին, որ կոում է սեփական Աերկան ապագայի համար:

Հասարակական, ընտանեկան վարքագծի ավանդույթ-առաքինությունն ենք ունեցել: Հիշենք՝ մեծին հարգել ենք, փոքրին՝ խնամել:

«Փոքրիկ պտուտակ» չենք մենք, մեր ճակատագրի տերն ենք, ուզվոր չենք, մուրացիկ չենք, անպատիվ չենք, Ասեմ չենք...

Իրենց ծաղկած Կալիֆոռնիան իրենց հալալ:

ԱԶԱՏ— Աստվածային.

ԱՆԿԱԽ— Վեհ.

ՄԻԱՑՅԱԼ— Պայքար ու համբերություն.

ՀԱՅԱՍՏԱՆ— Մեր ապրելու տեղը:

Իսկ առայժմ իրար կրծելով ենք զարմացնում... իրար:

* * *

ԱՄՆ-ում որ կողմը 'նայում ես՝ ծածանվում է պետական դրոշը, հաճախ թվում է որպես զարդ՝ մեծ ու փոքր հրապարակներում, պատշգամբներում, դռներից ու պատուհաններից կախ, պարտեզներում, ծաղկանոցներում ու... (պարզապես ապշեցի)' գերեզմանոցներում, շիրմաքարերի կողքին...

* * *

Կարծես դարձանք ազգասեր. դառնանք և հայրենասեր...

* * *

Արգենտինահայ ընկերս մեքենայի պատուհանից ծխախոտի

մնացուկը դեմ չգցեց՝ ուրիշ տեղ գուցե և նետեմ, բայց Հայրենիքում չեմ կրնա...

Տեղացի ընկերս ձեռքից խլեց ու կատակով՝ դուր չես կրնա, ես կրնամ... Ծարտեց մայթին, հետո ջիասկացավ, թե մեր հայրենակիցը ինչու տխրեց...

* * *

«Թղթե շերեփով» Խրիմյան Հայրիկն էր ո՞ւր էր գնում...

Պատմում ենք իրար տխրահոշակ շերեփի մասին ու մեր հոգում բուն դրած թերարժեքության որդը փոխանցում հաջորդ սերունդին: Վերջում տմբտմբացնում ենք գլուխներս՝ ախ, վախ... մեր բախտը... հայի բախտ.. անգլիացին էսպես... ոուսն էնպես... ֆրանսիացին...

Խրիմյան Հայրիկին ազգն էր ուղարկել՝ «թղթե շերեփը» ձեռը տված, արդարություն հայցելու, խնդրելու... Դատարկ ուղեկցեցինք, դատարկ հետ եկավ...

Կրեմլի պատերից ներս ես մտնում, և իսկույն կամքդ դառնում է այնքան հաստատ, որքան հաստատ ու ապահով է թիկունքդ, այնքան է ազդեցիկ դառնում խոսքդ, որքան ազդեցիկ է ազգդ, հպարտ ու արժանապատիվ ես ճիշտ այնքան, որքան՝ քեզ ուղարկած ժողովուրդդ:

Արդարության կոչերիդ տակ ի՞նչ կա... Հետդ ի՞նչ ես քերել, ի՞նչ ես ուզում: Եթե չտան՝ ի՞նչ կանես, քո արածից ո՞վ կմրսի, ո՞վ կտաքանա...

Հեքիաթն այստեղ սկսվում, այստեղ էլ վերջանում է...

* * *

«...Թևաթափ ենք եղել... Չէ, աշխատել չի լինում... Գործ չենք կարողանում անել...»

Երկնքից մանանա ենք սպասում...

Անհոգնում վանկարկեցինք՝ պայքար, պայքար մինչև վերջ. միահամուռ բռունցքներս վեր շարտեցինք՝ միացում... Գեղեցիկ էր: Երկու տարի շարունակ միտինգներում ուժաքամ եղավ ժողովուրդը, միտքն ու կիրքը թողեց Ազատության հրապարակում: Միացում... Ինչո՞վ էինք միանալու՝ սոսնձո՞վ, խոսքո՞վ, թե՞ գործով, թե՞ Արցախ լցվելով: Չէ. Գորբաչովը թող լուծի մեր հարցը: Հետև էլ մեծաբերան ճառ ենք ասում՝ մեր հույսը դնենք միայն մեզ վրա: Դենք. երիտասարդություն, արցախցի, գնացեք, լըցվեք ու ապրեք Արցախում...

Թող միացնեն, թող տան՝ գնանք...

Գնա, որ տան, ախր...

Կամ միտինգ, կամ տրտունջներ, թուլամորթություն, շատ-շատերի համար գործից խուսափելու, անշնորհքությունը պարտակելու պատեհ առիթ...

Սիմուլյանություն...

Դրությունը կարող է ավելի վատանալ: Հավանաբար այդպես էլ կլինի: Հսկա կայսրությունը քանդվում է, հանաք բան չէ:

Երկու քարի արանքն են: Ազգին հաղթանակներ են պետք՝ գիտությունից (տեսնենք հայոց Ակադեմիան ի՞նչ է տալու ժողովրդին) մինչև առևտուր՝ մեծ ու փոքր, չընդհատվող:

Ի գործ կանչենք հանճարը հայոց. աշխատող մարդը աղքատ չի լինում, աշխատող ժողովուրդը անհնար է, որ չբարգավաճի:

* * *

Կողքից նայենք մեզ՝ օտարի աչքերով...

Հա, ավելորդ չփնովենք մեզ, բայց և՛ «վերին արտի ցորեն» չդառնանք:

Հայոց մասունք Հայաստանին նայենք, մայրաքաղաքին, փչա-

ցող հողերին, մեր վարքուբարքին, ցամաքող ջրերին, անկարգու-
թյուններին...

Ո՞վ է կարգավորելու:

* * *

Բարդ ու հակասական Սփյուռքը մեր...

Հայրենանվեր սուրբ խենթեր, բայց և հալվում են հատիկ-
հատիկ՝ խառն ամուսնություններ, օտար դպրոցներ, քաղաքա-
կրթություն, որ քոնից բարձր է, հմայքներով լիքը կենցաղ, հան-
դարտված քաղաքական կյանք: Չձուլվելու համար գերճիգեր են
պետք:

Պատահել է, մի բարեկամի հետ վիճել-խոսել ես ժամերով
հայրենասիրությունից, հետո քեզ հրավիրել է իրենց տուն և...
Սրա տիկինն ինչպե՞ս թողնի այս հարմարություններն ու գա
մտնի մեր բոհության մեջ...

Հայաստանից գնացած հայերի շատ մասը մինչև կոկորդը
զգված է մեր «երջանիկ ապագայից» (խեղճ իմ Հայրենիք), իրենց
հեռու են պահում համայնքի կյանքից ու թվում է մտադրվել են
մեկընդմիջտ կորցնել իրենց հայկական հետքը...

* * *

Հայրենի «իշխանները» Սփյուռքը համարել են «դասակար-
գային թշնամի», խորթացել ու խորթացրել: Կոմունիզմի լուսա-
վոր ապագան կերտելուն չափազանց նպաստում էր, որ դաշ-
նակներին անվանեինք «իմպերիալիզմի գործակալներ»: Սրանից
և՛ մեր կոլերի կաթնատվությունն էր բարձրանում «անշեղորեն»,
և՛ առատանում էր դաշտերի բերքը, և...

Հայրենիքից առաքված խոսքը աղետաբեր է եղել, երիտա-
սարդ հայի սիրտը կասկած է ընկել. «իմպերիալիզմի գործակալ»

իմ սուրբ Հայրենիքի դեմ: Ու՛ հազար հետևանք... Այսպես է Հայրենիքը հայրությունն արել աշխարհացրիվ իր զավակներին: Ոչ աներ...

Բուլշևիզմի ամենաթունդ խորհրդանիշը՝ փշալարը (քանի՞ միլիարդ կիլոմետր է արտադրվել յոթանասուն տարում), անհույս բաժանել է մեզ: Սոսկալին, սակայն, Արցախն ու մեր, մեր ու Սփյուռքի միջև քաշած անտեսանելի փշալարն է: Հատուկ բաժինները, ռեժիմի հավատարիմ պահապան շները սարսնեցնող ձայնով արտասահման գնացողներին, տուրիստ-մուրիստներին խրատներ են տվել հրահանգի պես՝ ում հետ կարելի է խոսել, ինչ խոսել, ինչ ճանել: Տեր Աստված, ինչպես ենք ստել, կեղծել, ինչքան ենք ստել մեր հարազատ եղբայրներին, բարբաջելով մեր խորհրդային, մեր լուսավոր, մեր կոմունիստական, մեր բարոյական... Հետո վերադարձել ենք, մանրամասն հաշվետու եղել, բայց միշտ էլ մի սաստող կշտամբանք՝ ինչու՞ անկետայում չեք գրել, թե որտեղ է թաղված ձեր հայրը...

...Տո, քո ի՞նչ գործն է, այ ընկեր-ընկերուհի, հերս մեռավ, էլի՞ չպրծավ ձեզանից... Չէ, չենք հանդգնել ասել, մեր մըտքում ենք մտածել, ո՞վ կհամարձակվեր. այդ ձայներից կանայք հորթատում էին, տղամարդիկ՝ տղամարդկությունից ընկնում...

Դաշնակների հիմնած դպրոցը չենք այցելել, դաշնակների դպրոցում սովորող երեխաները թող կարոտից մեռնեն...

Խորհրդային դեսպանատների հատուկ բաժինները դիվային խաղերով, աննախադեպ խարդախությամբ թշնամացրել են իրար երեք կուսակցությունների և տասնյակ տարիներ այդ անհաշտությունը թեժացրած պահել: Անհաշտության վրա շոաչլորեն ծախսված եռանդով քանի՞ մանչուկի կարելի կլիներ հայերեն մի քանի բառ սովորեցնել:

Պարոններ, ընկերներ, ինչպե՞ս անենք, որ այլևս ուրիշի ձեռքին խաղալիք չդառնանք, ծվեն-ծվեն չլինենք...

Ավատրալիայից մինչև Ամերիկա երեխաներ ունենք: Եթե ծնողը հատուկ չի հետևում, երեխան մայրենի լեզվին չի տիրապետում: Ուժ առնենք, որ Լոռին, Ջանգեզուրը, Արցախն էլ հետը դարձնենք նաև Սփյուռքի երեխաների հանգստյան կենտրոններ: Որքան էլ դժվար լինի, պետք է ճարվեն այդ միջոցները, գուցե հենց գաղութներն իրենք կառուցեն սեփական ճամբարներ:

Ոչ մի դպրոց, ոչ մի ծնող ու հայ մանկավարժ չեն կարող երեխային հայացնել այնպես, ինչպես Հայրենիքում նրա մեկերկու ամիս մնալը, դասարաններով, դպրոցով: Չամաչենք, նորից ասենք՝ երեխաներն են մեր ապագան, և ստիպված ենք: Այլապես՝ «ձմերուկի կուտի նման ատամիդ տակեն կապրդեն...»

Մերը ուրիշին չտանք...

* * *

Պատմում են, Աֆրիկայում, հավանաբար՝ Եթովպիայում կամ գուցե Սենեգալում, ով գիտե, խառն ամուսնություններից այնքան սևամորթ հայեր կան, որ հավատացած են, թե հայերը սեփամորթ են: Պատմում են, օր մը այդ երկիրն է ընկնում եվրոպահայ մը, տեղացիք կհավաքվին ասոր գլխուն ու շատ կզարմանան, հետն էլ կուրախանան՝ փառք քեզի, Աստված, կըսեն, չէինք հավատա, վերջապես սպիտակամորթ հայ տեսանք...

* * *

Սփյուռքն ու Հայրենիքը... Մենք լավ, իրենք լավ, մենք վատ, իրենք՝ ավելի վատ:

Այստեղից գնացած մի տիկին խիստ ագրեսիվ է պատասխանել հին սփյուռքահայի հանդիմանանքին:

— Ի՞նչ ես ուզում, այ մարդ, ես էնտեղ տանջվեմ, որ դու էստեղ ասես Հայրենի՞ք ունեմ..

Դյուրաթեժ եմք, մեղադրում եմք, մեղադրվում, գանգաւ-
փում-փնովում եմք, մի կանգ չենք առնում մտածենք՝ էս քանի՞
դար եղավ դարիբության ճամփեքը մեզնով եմք բանուկ, քանի՞
դար է մեր սարերից հոսում եմք ցած... Այսօր էլ: Մի դեպքում սա
է մեղավոր եղել, մյուսում՝ ճա... Բա մե՞նք... Հրեն, ասում եմ
հունվարից էս կողմ հիսունվեց հազար հայ Վրաստանում ազ-
գափոխ եմ եղել, գրվել վրացի... (հապա մինչ այդ):

Մեկի համար սրբություն է Հայրենիքը, մյուսի համար՝ հերձ
անիծած, որտեղ հաց՝ էնտեղ...

Դառը ճշմարտությունն այն է, որ Հայրենիքը իրեն չի քա-
շում, չի հմայում: Հայաստանը հային վանում է: Ինչո՞ւ: Ամեն
ինչով: Պետությունը չի ապահովում քաղաքացու անվտանգու-
թյունը, նրա ազատությունը, նրա պատիվը: Պետությունը չի հար-
գում իր քաղաքացուն, չի գուրգուրում արժանավորների: Ասենք,
պետության ու համակարգի հարցը պարզ է, բայց մենք էլ, հա-
սարակ մահկանացուներս, իրար հարգել չգիտենք, ներել, ներո-
ղամիտ լինել, զիջել...

Ապրելու մեր մթնոլորտը...

Մայր թատրոնում մի դերասանուհի, որի օրն անցնում է
հայրենասիրական կրթու գրույցներով, հարազատ աղջկան հա-
սակակից մի ուրիշ աղջկա, ցեղակից քույրեր, գիծ կովի պես
տրորում, պոզահարում է՝ ո՞նց թե, համարձակվես ասել իմ աղջ-
կա աչքի վերևը հոնք կա...

Էս էլ մեր «մտավորական» հայրենասեր տիկիներ. մութ բնագղ-
ներ...

Ի դեպ, ժամանակին չգուրգուրեցինք (ծիծաղելի խոսքեր՝
գուրգուրել, սիրել, խնայել, խնամել) «Սունդուկյանի աստղ» դար-
ձած տաղանդաշատ Ծաքե Թուխմանյանին՝ մեծն Մետաքսյայի
տեղը թափուր մնաց. անտարբեր, գուցե և հաճույքով, բաց

թողինք նույնքան օժտված ժան Նշանյանին, Հ. Տողուլյանին: Երիտասարդներ, որոնք այսօր շատ էին պետք լինելու, լրացնելու էին Մայր թատրոնը:

Ուղեղիս մեջ մեխվել են լուսահոգի Սուրեն Բուրսալյանի խոսքերը, որ ինքնաթիռի վերելակի մոտ, չվելու վերջին պահին ասել է ընկերներին. «Մի՞թե ես այս երկրին բոլորովին պետք չեմ, ինչո՞ւ մեկն ու մեկը չասաց՝ մի գնա»:

Մեր կետը դրսում է, մոռանում ենք, իսկ նա ակնդետ նայում է մեզ, սպասում մեր հայրական խոսքին, ու մեր հաջողություններն են նրա ուժը:

Եղածն արագ ընդօրինակում են. «Ռաբիսը». համոզված են՝ հայոց երգը հենց այդ է: Մենք Ծարա Տալյան չենք լսում, իրենք էլ չեն լսում: Կոմիտասի մասին էլ չխոսենք: Ազգն այսօր ազգային երաժշտություն չունի:

Ներքևը կերել է վերևիցին...

Գնում ենք հայոց համայնքները, արտասանում այսպես կոչված՝ ճապաղ ոտանավորներ, շահագործում մարդկանց կարոտը. խուտուտներ ենք տանում և ոչ արվեստ՝ «Իմ թշվառ Հայրենիք... Իմ Ղարաբաղ... Բազմաչարչար...». ազգային զգացմունքի սպեկուլյացիա, գավառական լալկանություն, գավառական անամոթություն:

Պատերազմից անմիջապես հետո մոտ երկուհարյուր հազար մարդ բերինք Սփյուռքից սոված Հայաստան, լցրինք նկուղները, գոմերը, բանտերը, սիբիրները...

Հունաստանից եկած Մելքոնյան Ասատուրը: Ծով հմայք: Ընդունվեց Ստեփանավանի թատրոնը: Քառասունինը թվի օրերից մի օր, առավոտյան եկանք գործի՝ Ասատուրը չկար: Դերասանները շշուկով իրար հաղորդեցին՝ «ժողովրդի թշնամի» Ասոյին գիշերս տարել են: Հետո իմացանք ինչի համար: Կատակել էր Ասատուրս, կատակչի էր, ասել էր՝ հոն զուգարաններն

այնքան մաքուր են, որ օրվա լրագրերը հոն կկարդայի...

Ասատուրը հետ չեկավ: Նրա տղաները մի կերպ մեծացան, խոովեցին, լքեցին Լոռին ու գնացին... Ֆիլադելֆիայում հանդիպեցի Պերճուհուն՝ Ասատուրի տիկնոջը: Գրկախառնվեցինք: Երկար, խեղդվելով լաց եղավ: (Ով գիտի, ինչի՞ համար)...

Զարմանալի է, որ այդ հայրենադարձությամբ ոչ մի հայ գրող կարգին չհետաքրքրվեց, չուսումնասիրեց այդ մեծ խաբեությունը: Ոչ գրողները, ոչ արվեստագետները: Մինչդեռ ճակատագրի ինչպիսի ողբերգական ավարտ, հույսերի որպիսի կործանում:

Եթե չեմ սխալվում, հիսուն թվականին ֆիլմ էր նկարահանվելու՝ «Երկրորդ քարավանը» վերնագրով: Հետո խափանվեց այդ գործը: Կարելի է միայն ենթադրել, թե ինչ սցենար է եղել՝ «դասակարգային թշնամիներով» և, անշուշտ, «ամերիկյան լռտեսներով»: Զգիտեմ լավ էր, թե վատ, որ այդ ֆիլմը չնկարահանվեց, բայց մի ինչ-որ տեղ, երևի, սցենարը կա, հետաքրքիր է...

«Ախպար» ասացինք, մեզնից չափառեցինք, կոմունիզմի վեհ գործը» չվստահեցինք, մեզ հատուկ բոհությամբ ոտնակոխ արինք նրանց ոռմանտիկ հայրենասիրությունը: Մի խոսքով, թքեցինք մեր եղբայրների հոգու մեջ: Նույն հողի վրա ապրելով, հաջողացրինք էլի «փշալար» քաշել մեր միջև, ու նրանց սարքել երկրորդ սորտի խորհրդային քաղաքացի:

Ազգավնաս մի փշալար էլ ավելի վաղ էինք քաշել: Քսաներկու թվականին հապճեպ փոխեցինք դասական մեր ուղղագրությունը, որ ոչ մենք հասկանանք իրենց գրածը, ոչ էլ նրանք՝ մերը, որ հայ մարդիկ միլիոններով վերջնականապես բաժանվեն Հայրենիքից, օտարանան, կորչեն...

Դժբախտաբար և՛ ժողովուրդը, և՛ իշխանությունները, և՛, նույնիսկ, մտավորականությունը մի «փշալար» էլ այսօր է քա-

շում մեր և Ադրբեջանից փախած համարյա կես միլիոն մեր քույր ու եղբայրների միջև: Անսիրտ ենք, թե՛ անխելք: Ոչ համբերություն, ոչ հասկացողություն, ոչ էլ... Ասենք, ամոթ էլ է գուրգուրելուց խոսելը կամ՝ նրբանկատությունից... Մի պոչ էլ սրանց ենք կացնում:

Հիմա այցելությունները դրսից շատացել են: Հայրենիքը տակավին անհմայիչ է, անսահման սերն է միայն, որ արտերկրի հային ստիպում է աչք փակել մեր բազմասայթաք գոյության վրա: Բայց ապրում են մեր հյուրանոցներում, տեսնում են, թե մոյթն ընկնելուն պես ինչպես է իրեն պահում հայոց «ոսկյա» երիտասարդությունը, «արև-արև» տղերքը... Բայց նրանք եկել են, որ հպարտանալու բան տանեն:

Անդաստիարակությամբ, բոփությամբ է լիքը հայերի մայրաքաղաքը, անպատիժ խուլիգանությամբ...

Կամ կարգի գանք, կամ մենք էլ գլուխներս առնենք, կորչենք մի կողմի վրա...

Էսպես, շնորհքից ընկած, ապրել չի լինի:

* * *

Պատմում են՝ Ֆլորիդայի մի քաղաքում երեք հայ են ապրում. Արաքսը՝ մայրը և նրա զավակները՝ տասը-տասներկու տարեկան: Արմենիա անունով փողոց կա այնտեղ, որտեղ գտնվում է թուրքական հյուպատոսարանը: Ամեն ապրիլի քսանչորսին երեք հայերը բողոքի քայլարշավ են անում այդ փողոցով մինչև հյուպատոսարան, «եռագույնով», իհարկե, պահանջատիրական լոզունգներով: Միջոցառումն ավարտվում է միտինգային ճառով...

Արաքսը և իր երկու զավակները չեն մոռանում իրենց պապերի հողը...

Ժամն Նշանյան: Գրեթե տասը տարի է Ծաքեի հետ ապրում է Լոս Անջելեսում: Նեղություններ է քաշել, քրտինք է թափել, մինչև, փառք Աստծո, կանգնել է ոտքի: Հոգին նուրբ, սիրտը մեծ ու մեծ, թատրոնով լիքը արտիստ է, իսկական արտիստ: Աներևակայելի դժվար է այդ հսկա քաղաքում մի խումբ դերասան մի տեղ հավաքել, ժամանակ գտնել, փորձ անել, բայց ուրիշ ինչ անի մարդը, եթե արտիստ է ծնվել: Բեմադրություններ է անում, խաղում է, հայությանը ազգային մշակույթին կապելու համար իրեն չի խնայում, գործն ավելի լրջացնելու համար Հայաստանից դերասաններ է հրավիրում, ինչպես, օրինակ, մեծանուն մեր Վարդուհի Վարդերեսյանին: Ինքը՝ Ծաքեն, Աննա Նշանյանն ամեն միջոցի դիմում են, միայն թե համայնքը առանց թատրոնի չմնա:

Բայց թվում է նաև, որ այդ նվիրումով, այդպիսի ծառայությանը է, որ արդարացնում է Հայրենիքից գնալը, ու ես զգում եմ, խաղաղ չէ Ժամոն, փոթորկոտ է ներսը, մտքերն՝ անհանգիստ: Եվ մեղավոր եմ զգում ինձ ամեն ինչի համար, բոլորիս համար, մեղավոր եմ, որ Ժամոն Հայրենիքում չի...

Ժամոյի հետ ինչ-որ երկար ճանապարհ ենք գնում, զրուցում ենք:

Ոնց էլ մտածում եմ, ասում է, տալիս-առնում եմ, լքել եմ Հայրենիքս, բայց արդարացումներ եմ փնտրում: Թաքուն ուրախանում եմ, երբ այնտեղից վատ լուր է գալիս: Վատը շատ, իմ արդարացում՝ շատ: Բայց սիրտս ծակում է, երբ լավն եմ լսում: Հայաստանի լավն ինձ համար դառնում է ապտակ, նախատիճաք ու կարոտ, կարոտ: Սուր, ցավոտ: Ինքս ինձ ասում եմ՝ է՛ ի՞նչ կյանք է, ինչի՞ս է պետք...

Միայն Ժամոն կարող է այսչափ անկեղծանալ:

• • •

Ազգային ծրագրի գլխավոր համաձայնություններից մեկը պետք է լինի այն, որ, անկախ կուսակցական մեր դավանան-

քից, պահանջատիրական գործում հանդես գանք մեկ միասնական ճակատով, մեկ ծրագրով, մեկ խոսքով: Հսկայական փորձ է կուտակված արտասահմանի «Հայ դատի» գրասենյակներում, «Արմենիեն Ասամբլեում», մյուս կազմակերպություններում: Այս փորձը հարկ է, որ ի մի բերվի, յուրացվի իշխանությունների կողմից, պետականացվի:

Տարբեր դիրքերից հանդես գալով, աշխարհի վրա անլուրջ տպավորություն կթողնենք: Մինչև այժմ հայոց կառավարությունը լուռ էր, ամեն գնով մի կողմ էր քաշվում հայոց պահանջատիրական խնդրից, նույնիսկ խանգարում էր: Դրսում հասկանում էին. Հայաստանի կոմունիստական ղեկավարությունը չունեի սեփական ձայն և ինքնուրույն գործելու իրավունք: Պետք է ենթադրել, որ մի մասն էլ գլխացավանքի հավես չունեի. էն է, տաքուկ կյանքով ապրում էին էլի... Ի՛նչ Ղարաբաղ, ի՛նչ Ղարս, Սփյո՛ւռքս որն է, հայ դա՛տս որն է...

Այսօր... Այսօր կծիծաղեն մեզ վրա: Ի վերջո, չորս հազար տարեկան ազգ ենք, ամոթ է:

Կամ էլ՝ քանդենք Ծիծեռնակաբերդի հուշարձանը...

• • •

Իմ ընկեր Ն. Թ.-ն Բեյրութից տեղափոխվել էր Փարիզ: Կիրթ, ազնիվ մտավորական, լրագրող: Փարիզում մնացել էր միայնակ ու անգործ:

— Մի փոքր յենյակ վարձով առի,— պատմում է,— ամեն առտու կերթամ գործ փնտրելու: Բնականաբար հայերու քով կերթամ: Ամենուր մերժումի, չկայի հանդիպեցա: Այն փողոցը, ուր կապրեի, խանութ մը կար, միշտ քովեն կանցնեի, բնականաբար, մտահոգ: Օր մը խանութի տերը զիս ներս հրավիրեց, սուրճ հյուրասիրեց ու թե՛ պարոն, քանի օր է կհետևիմ ձեզի, միշտ

տխուր եք, ի՞նչ հոգս ունիք. գործներնիդ լավ չէ, անշուշտ: Ըսեք ձեր մասնագիտությունը, կօզնե՞նք: Ի՞նչ գործ կուզեք սկսիլ...

Պաղեցա այս խոսքերուն վրա: Հասկցա, որ թյուրիմացության մեջ է մարդը: Ըսի՝ կներեք, պարոն, ես հրեա չեմ, ես... հայ եմ: «Բարձրացիր՝ բարձրացուր»: Ի՞նչ եղավ, ո՞ր մնաց...

* * *

Մարդը նվիրատվություն է անում՝ դպրոց է կառուցում, սրահ, մի դասարան, ուզում է անունը վրան գրվի, կամ հանգուցյալ մոր, հոր հիշատակին նվիրվի: Չի կարելի. «կոմունիստական մեր բարոյականությանը» անհարիր է:

Թատրոնը ժամանակին ուզեց իր փորձասրահներից մեկը կոչել Աճախյանի անվամբ: Վերևի սաստոցից սառեցինք՝ ո՞վ է ձեզ թույլ տվել, Կենտկոմի որոշում եղե՞լ է...

Ուր մնաց թե ինչ-որ մի անհատ, առանց հատուկ որոշման...

Հերն էլ անիծած: Մեր հարուստն էլ գնում է հարյուր հազարանոց քարը դնում հոր գերեզմանին: Մեռելի վրա՝ մեռած ծախս. ոչ տեսնող կա, ոչ ճանաչող, ոչ հարգող...

Սաղմոսավանքի «Գրատունը» տասներեքերորդ դարում կառուցել են ծնողները ի հիշատակ իրենց վաղամեռիկ դստեր: Քանի՞ ողորմի է սավել...

* * *

Հայերը թաքուն գոհունակությամբ գանգատվում են ինձ՝ այս Լուիզ Սիմոնի ուշքն ու միտքը այլևս Հայաստանն է, մեզի մտիկ չի ըներ այլևս... Ինչ հարցով կդիմես, կըսե՛ Հայաստան, Հայաստան...

Գանգատվում են ու բեղի տակ ժպտում:

Օրհնվի քո ծնունդը, քույրիկ, քո իմաստուն սրտով: Կգա էն

օրը, և արյունակիցների քո եռանդն ու գործը կհավերժացնեն քո քաղցր անունով...

* * *

«Բարեգործական», «Կարմիր-Կապույտ խաչ», «ՀՕՄ» ու դեռ էլի կան մեծ ու փոքր միություններ, ֆոնդեր: Սրանք կատարում են իրենց ազգախնամ գործը: Սակայն ժամանակը, մեր պատմությունը մեզ համար նոր գաղափար է հասունացրել: Հրամայական պահանջ է ստեղծել՝ «Համահայկական ազգային ֆոնդ», որը կգոյանա ազգային տուրքի ձևով: Թվում է՝ սա կլինի առաջին քայլը մեր, վերջապես, մեծ, մասշտաբային մտածողության:

«Համահայկական կոնգրեսը», որը, հուսանք, կգումարվի և կգործի մշտապես, կլինի այս ֆոնդի տնօրենը, իսկ կառավարությունը պարտավոր կլինի պարբերաբար հաշվետու լինել ժողովրդին՝ արած ծախսերի վերաբերյալ:

Ազգային այս ոչ պաշտոնական, ասենք, ժողովրդական բյուջեն ապագայի մեր հիմքն է, գոյության գրավականը: Եթե իրականացվի այս գաղափարը, ապա մեր ձեռքին, նյութականից զատ, կլինի քաղաքական հզոր զենք, մեր հակառակորդին զրուպող ուժ: Ոչ մի կասկած, որ այս դեպքում մեզ հետ կխոսեն ավելի հարգալից:

Ասում են, որ մինչ հեղափոխությունը Անդրկովկասում և Թուրքիայում հայերի ձեռքին զգալի կապիտալ է եղել: Ենթադրենք, նույնիսկ՝ համաձայնենք: Այո, եղել են հարուստ հայեր, բայց դա չի եղել ազգային կապիտալ: Ընդհակառակը, հարուստ հայն ամեն գնով ձգտել է չկորցնել ձեռք բերածը, ուրեմն ամեն գնով նպաստել է, որ կայուն մնա այն երկրի վիճակը, ուր ինքն ապրում է, ուրեմն ամեն գնով խափանել է հայ ազգային շարժումը: Նույնը չէ՞ այսօր: Բաքվի հարուստները, իսկ դրանք կային, որևէ քայլի դիմեցի՞ն հայերին պաշտպանելու համար և ու-

նեի՞ն, արդյոք, համակրանք Ղարաբաղյան շարժման նկատմամբ...

Ո՞վ օգտվեց մեր հարուստներից: Համենայն դեպս, ոչ նրանց ծնած ժողովուրդը և ոչ էլ հարազատ երկիրն ու մայրաքաղաքը:

Ազգային ֆոնդը պետք է ստեղծվի: Պետք է կուտակվի և պահվի միջազգային բանկերից մեկում:

* * *

Սիյունքն այլևս արհեստավորն ու մանրավաճառը չէ: Ներքին Սիյունքը չենք անջատում: Պետական քաղաքական գործիչներ, իրավաբաններ, գործարար մարդիկ, առևտրականներ, գիտնականներ... Միանգամից կրկնակի է դառնում մեր կշիռը, եթե կարողանանք դրսի ու ներսի իմացական այս հարստությունը գումարել իրար:

Այնպես որ, ավելին պետք է ակնկալել Սիյունքից, պահանջ-կոտորությամբ:

Բաց ենք խոսում, այո, հայրենի կառավարությունը տիրություն չի արել. ավելին, լավ չի վարվել արտերկրի հայության հետ, բայց փաստ է նաև, որ երկրում ապրած հայերը անհամեմատ թշվառ վիճակում են եղել, զրկված, զարկված, անիրավված, բայց և մաքառել են, կառուցել են, պահպանել են այս փոքրիկ հողակտորը: Պահպանել են որպես հայության Հայրենիք: Եթե չենք ուզում դառնալ անտոհմիկ ցեղ, գլուխ խոնարհենք Հայրենիքի առաջ, ծառայենք:

Պատմության նոր էջ ենք բացում. ժամ է սահմանել համազգային կարգապահական նորմեր: Բոլորիս համար, անխտիր:

Լոնդոնում մարդ ունենք. շաքաթ-կիրակի թոչում է Ալլասկա ձուկ որսալու: Երևանից մեկ օրով թոչում ենք Մոսկվա՝ ընթրելու...

Ուրախ եմք, բայց Հայրենիքը նեղության մեջ է՝ անտուն, անօթևան քույր ու եղբայր... Անորոշություն...

Բոցերի մեջ է Արցախը: Ծգնածամը կարող է էլ ավելի խորանալ:

Այնտեղ, ուր չի գործում պարտքի զգացումն ու խիղճը, թելադրողը պետք է դառնա կարգապահությունը:

* * *

Ելենա Բոներին հանդիպեցի Բոստոնում: Եկեղեցական ընտրություններից հետո բազմամարդ ճաշկերույթ էր: Այդ օրը Մեսրոպ Սրբազանը հանդիսավորությամբ տիկին Սախարովային հանձնեց տարվա լավ մարդու պատվավոր մրցանակը: Ելենան պատասխան խոսքն ավարտեց այսպես.

— Ես երջանիկ կլինեմ և երազում եմ օրերից մի օր, լավ կլինի՝ շուտ, հայ ժողովուրդը արժանանա Տարվա Ազգ կոչմանը...

* * *

Մարդիկ կան մեր մեջ, առանձնապես տիկիներ, իրենք իրենց տառապելու պաշտոն են տվել. «Մայր Հայաստանն են՝ ավերակներին նստած»:

Ի սեր Աստծո. «անարգանքի, «ճմրթուկի» կնիքը դեն նետենք մեր վրայից: Մեր պոետները լավան ոտանավորներ չգրեն, դերասանները նվազական ձայնով չկարդան: Մարդ ապրելու համը կորցնում է, երբ որոշ պոետներ սկսում են «Հայաստանը քարաստանի» հետ հանգավորել: Ասես մտադրվել ենք Հայաստանի մի անհմայիչ կերպար ստեղծել:

Ուխտ անենք ազգովի. այլևս չարտասանենք «բազմաչարչար, տառապյալ, խոշտանգված, դժբախտ...» Եվ մնացյալ սրբամաշուկությունները:

Իսկ այդ տիկիներինց մեկը մի օր խորհրդավոր ձայնով ինձ հայտնեց, թե ինքը գիտի, հաշվարկել է՝ երկրաչարժը սարքած բան է մեր գլխին...

Բնական աղետը, եղած ցավը քիչ է տիկնոջ համար. նրան դեռ համաշխարհային դավեր էլ են պետք: Հազարավոր զոհերը քիչ են, որբերն ու հաշմանդամները քիչ են, ավերված երկիրը քիչ է: Տիկինը այդ ցավով չի հագեցնում, ավելի խոր ցավ է ուզում, ավելի տանջալից, շատ մեծ, որ մի կարգին կշտանա...

* * *

«Գորշ գայլերը» դարձյալ հայտնվեցին մեր սահմանագլխին... Ի՞նչ են ուզում:

Միտինգների թեժ ժամանակ, նոր կյանք մտած մի պատանի հարցի պես դիմեց ինձ՝ տասնհինգ թվականին թուրքերը մեզ ինչո՞ւ կոտորեցին...

Ջահել, անարատ ուղեղով մտածել էր, մտածել էր ու անպատասխան՝ շվարել: Հարցը՝ պարզ, հստակ, հասարակ: Ինչո՞ւ:

«Գորշ գայլերը» մերթ ընդ մերթ աղվեսախոս են դառնում. հիմա ասում են՝ եկեք հարևանություն անենք: Ձեր բախշի դուռը բացեք, ասում են, իրար «խիար» տանք...

Ուրիշի աշխարհն ինչո՞ւ ես ուզում մարսել, հարևան: Սարդաբապատը որ չիներ, մեզնից ի՞նչ էիք թողնելու...

Հայորդի պատանու արյունը հիշողություն ունի: Հարցը հավիտենական է...

* * *

Դժվար ենք հաղորդվում աշխարհի հետ. մեր «տեղական նորությունները» չենք կարողանում դուրս տանել: Արցախյան պրոբլեմը լինելով միջազգային, չի դրվում այդ շարքը: Ինքներս

կարդում ենք մեր գրածը ու մեր մեջ ետում, դրանով բավարարվում:

Հեռատեսիլի դար է, մարդիկ սովոր են տեսածին հավատալ: «Հայ դատի գրասենյակների» աշխատակիցները՝ Սեթոն Բոյաջյանը Վաշինգտոնից, Կարապետյան Պերճը Լոս Անջելեսից, մյուսները մի գլուխ էդ էին ասում՝ մեզ մատակարարեք ծապավենի վրա վերցրած նյութեր:

Խիզախ օպերատորներ ունենք, թեժ տեղեր են մտնում, նյութեր են բերում: Բայց ինչ օգուտ: Դարի ամենաթանկ ապրանքը, վերջապես, ինֆորմացիան է:

* * *

Հանցագործի գլխավոր հոգսը հանցանքի հետքերը կորցնելն է. մտահոգությունը՝ իր ալիքին հաստատելը: Մենք պեղողն ենք, հետաքննիչն ենք հանցագործության: Նա չի կարող հանգիստ ապրել, քանի մենք կանք. քանի որ վաղ թե ուշ մենք ենք բերելու նրան ժողովուրդների ատյան: Հանցագործը մեղքը խոտովանողներից չի, մենք՝ մոռացողը չենք...

Պրոբլեմը կա, քանի կանք մենք:

Սիյուոքում հաճախ կրկնվող, տազնապալից հարցերից մեկը՝ վերջը ի՞նչ կըլլա Հայրենիքը:

Ի՞նչ կըլլա: Հրաշք չի ըլլա. մի օրում մարդիկ չեն փոխվում, յոթանասուն տարվա մղձավանջը հետապնդում է մեզ:

Միանգամից իսկական հողագործ ու մտավորական չի ծնվում, միջազգային կարգի քաղաքագետ չի ծնվում: Օրենքները դյուրությամբ կփոխվեն, բայց մենք օրենք շրջանցող ենք...

Մարդկությունը երեսունմեկ քաղաքակրթություն է ճանաչել: Ծառերը չկան, կործանվել են, քանզի ոչնչացվել են ազատությունն ու դեմոկրատիան: Տիտանական ճիգեր են պահանջվում, որպեսզի դեմոկրատիայի նորելուկ ընձյուղները, որ ծլել են մե

զանում, աճեն, դառնան ամբողջական ծառ: Չէ որ յուրաքանչ-
յուրը մեզանից, առավել կամ նվազ չափով, վարակված է բու-
շնիզմով:

* * *

Զավեշտի համար:

Շարքային մի կոլտնտեսական դիմում է շրջկոմի քարտու-
ղարին.

— Մի քիչ էլ ինձ նշանակի կոլխոզի նախագահ:

— Կկարողանա՞ս որ...

— Ընչի՞, վախում ես «Վիլիսից» վեր ընկնե՞մ...

* * *

Անիմաստ զոհեր... ժողովրդին հայտնում-հայտարարում ենք,
որ «կենտրոնի» հերթական կազմակերպված սադրանքն է: Հայ-
տարարում ենք, ժողովրդի ցասումը թեքում դեպի հեռու «կենտ-
րոնը», ձեռքներս լվացած քաշվում մի կողմ: Զոհերին շքեղ ենք
թաղում, ոչ մի բան այսպես լավ չենք անում:

Ընդունենք, որ սադրանք է: Էս ինչի՞ ենք ենթարկվում, չենք
զգուշանում: Ո՞նց է, որ հմայված ճագարի նման ամեն անգամ
ընկնում ենք օձի բերանը: Սա մեր ինչի՞ մասին է վկայում...

Սադրանքն էլ պայքարի զինանոցից է. ինչի՞ցն է, որ այսպես
անվրեպ ընկնում ենք լարված թակարդները:

Ինչո՞ւ ենք զոհում մեր ամենալավ տղաներին, ո՞ւր մնաց մեր
«խելոք ժողովուրդ» համբավը, և ո՞վ է պատասխան տվողը: Ո՞վ
է ո՞ւմ կյանքին տիրացել, ո՞վ է տնօրինում...

* * *

Արցախյան շարժումը ազգի ընդերքից հանեց զոհար-հատիկ-
ներ, անվարժ ձեռքերով անվարան զենք բռնեցինք:

Սակայն ֆիդայությունը պայքարի անցած, սպառված ձև է, այսօր անօգուտ, պետական հիմքերը թուլացնող: Տեղին ու ճիշտ ձև էր անպետականության պայմաններում, չնայած այն ժամանակ էլ տարերային չի եղել, դեկավարվել, կազմակերպվել է:

Անհեթեթություն է՝ պետություն ունենալ և ինչ-որ ինքնագլուխ, ցրիվ խոսքեր: Պետականության մեջ ապրելու զգացողության բացակայում:

Ֆիդայու անունը պատմական հմայքից չզցենք, չպղծենք Մեծ ֆիդայիների առասպելը:

Պետությունը կանոնավոր զինված ուժերի կարիքն ունի: Ուրիշի բանակը մեզ չի պաշտպանելու երբեք:

* * *

Ադրբեջանցի պատգամավորը Գերագույն խորհրդում հայտարարեց՝ Ռուսաստանը տասնհինգ հանրապետություն ունի, ուրիշները շատ բան ունեն. մենք՝ ադրբեջանցիներս, ունենք-չունենք մի Ռուսաստան, մի ոռու ժողովուրդ...

Ոչ ավել, ոչ պակաս: Նրա ցեղակիցներից ո՞վ հավատաց այդ երդմանը:

Ոչ մի հայ պատգամավոր չէր համարձակվի այդ բառերն ասել: Մերը մի գիծն է, մի գույնը, երկրորդը՝ չիք: Այսպես չենք թույլ տվել, որ դիվանագետ ծնվի և թույլ չենք տա, հավանաբար, անունը կդնենք Վասակ:

Մենք կամ հարձակվում ենք նահատակվելու վճռականությամբ, կամ՝ սուսուփուս պարտվում: Բացի մեզնից ո՞ր պետությունն է, ո՞ր ազգն է, որ չունի իր երկրորդ, թաքուն քաղաքականությունը:

* * *

«Մոսկվա» հյուրանոցում երեկոները եռուզեռ է: Տանում են, բերում են, բերում են, տանում. լիքը, տուփեր, փաթեթներ, կո-

ղովներ, պայուսակներ: Ինչքան ասես «օտար» մարդիկ մտնում են Ադրբեջանցիների համարները...

Հայ պատգամավորներից մեկը նկատեց, ասաց՝ սրանք իրենց հայրենիքից կապոցներ են ստանում, «գործ են անում», մենք՝ թուքումուր...

Պետության գլուխ կանգնած մարդուն ծեծում, անարգում ենք, ասում՝ գնա, մեր դատը պաշտպանի: Չարախնդացողներ եղան, բայց այսօր Մարկոսին, վաղը՝ Կիրակոսին: Ուրուգվայում ապրող մի հայ իմացավ, ասաց՝ հոգիս ցավում է, ինձ են ծեծել, իմ պետությունը...

* * *

Գրեթե երկու տարի Արցախն անկախ պետություն էր. չօգտվեցինք, չկարողացանք: Ժամանակավոր կոմիտեն, ըստ էության, պրեզիդենտական կառավարություն էր: Այսինքն՝ Արցախը չէր ենթարկվում Ադրբեջանին, այսինքն՝ մեր պահանջած տարբերակներից մեկը, ազատագրման ճանապարհի առաջին քայլը:

Հին թղթերիցս հանել եմ Վոլսկու առաջարկությունների պատճենները Հայաստանի վարչապետին: Արցախի հետ տնտեսական, կուլտուրական կապեր հաստատելու մի «դաստա» ծրագիր...

Չնայած Վոլսկու ճկուն ու խորամանկ քաղաքականությանը, Ադրբեջանը շատ լավ գլխի ընկավ, որ այսպես Ղարաբաղը կորցրել է ու սկսեց բուռն պայքարը Վոլսկու, Սիդորովի, ընդհանրապես կոմիտեի դեմ: Մեր հակառակորդի հետ ձեռք ձեռքի տվինք, լծվեցինք նույն սայլին, միահամուռ վերացրին «Ժամանակավոր կոմիտեն»: Ոչ մեկս չհասկացանք. առաջինը՝ ես, մեր արածը և առանձնահատուկ, Արցախի քաղաքական լիդերները, որ առավել անհնաշտ էին ու մարտական:

Պետք է ղեկավարվեինք գոնե հետևյալ սկզբունքով՝ ինչ որ

չի ընդունում հակառակորդը, մենք պիտի ընդունենք. ինչը նա
չի սիրում՝ մենք պետք է սիրեինք: Բայց, դե, մենք մաքսիմա-
լիստ ենք՝ տվեք, միացրեք անմիջապես...

Հիմա պրեզիդենտից մի «պատանդ» կունենայինք:

Վոլսկու փոխարեն ստացանք Պոլյանիչկո...

«Հայի ետին խելքն իմը լինեք...»

«Մենք մեր հույսը դնենք միայն մեզ վրա»: Ուրեմն ամեն ինչ
ծնվում, սկսվում և շարունակվում է մեր միջից: Մենք մնում ենք
մեզ հետ և դառնում արժանի մեր անցյալին, ներկային, ապա-
գային...

* * *

Կամ ուժեղ ես, կամ՝ թույլ: Զինվածության մասին չէ խոսքը-
թույլի ձեռքին գենքն էլ անօգուտ քան է:

Սաֆոնովին իրենցով են արել, Պոլյանիչկոյին դարձրել իրենց
տան նոքարը. ատել են, կաշատել, պարզևատրել են, ընտրել են:
Մի խոսքով՝ կեցցեն:

Մենք մեր արյունակից Մարգարյանցին չկարողացանք կամ
չուզեցինք հայացնել: Առաջին նրա թերությունը նկատեցինք
այն, որ նա Գորբաչովի ընկերն է, պարոն Լոբովին դարձնում ենք
անօգուտ դիտորդ, քանի որ նա Ելցինի մոտ մարդն է:

Մութալիբովը (նեղն ընկած տեղը որտեղի՞ց են գտնում Թա-
լեաթ, Աթաթուրք) վերածնեց թուրք-բուլղարիկյան ավանդական
կապը: Նեղանաս, չնեղանաս, միշտ լավ դեկավար են ունեցել:
Բուլղարիկ են, թե մուսավաթ, նախ ազգային են: Լնացում է, վե-
րակառուցում է՝ նշանակություն չունի: Բաղիրովը Ստալինի շըր-
ջապատի մարդ էր, Հարությունովը՝ ոչ: Բրեժնևին՝ ոռուսաց թա-
գավորին, իրենց «ղուլն» էր դարձրել Ալիևը: Քժնանքով, կա-
շառքով լուծում էր իր ազգի հարցերը, մերն էլ հետը, Մեղրի-
Նախիջևանն ճամփա էր քացում դեպի Անկարա: Գիտեք, մի օր

քանդվելու էր կայսրությունը, ճանապարհը մնալու էր: Մեր լի-
դերը կարծում էր հավիտյան է Խորհուրդը: Մենք գոռոզանում,
հրճվում էինք, որ մեր Դեմիրճյանը «արհամարհում է», պոռշտի
չի անում: «Հեչ էլ անի»:

Սունդուկյանի ասած՝ «Աղքատ ու հպարտ, որ կոսիմ, էս է,
այ...»

Գալիս են, դառնում իրենց ցեղի «աթան», հետո ամեն մեկն
իր ճակատագրով հեռանում, գործերը մնում են:

Ալիևին հայհոյիր. Նախիջևանը հայաթափ արեց, հերթը Ար-
ցախին էր, Մոսկվայի բոլոր կարևոր բուհերը լցրեց «ազեր»
ուսանողներով:

Մեր երիտասարդն իրեն կոտորում էր, որ Ապատակային
ուղեգիր ստանա. սպասիր, տեսնենք, ո՞ւմ տղան էս, ո՞ւմ ծա-
նոթն էս...

Հիսունական թվականներին վրաց կառավարությունը հատուկ
որոշումով դիմեց կենտրոնին և իր շնորհալի երիտասարդներին
լցրեց Մոսկվայի կինոյի ինստիտուտ. այսօր համաշխարհային
համբավ ունի վրացկիներն...

Գահրնկեց եղած Ալիևը չի հանդարտվում, չի հանգստանում,
մտնում է ամենաթեժ տեղը, Նախիջևան, մեզ մոտիկ... Դու ասա՝
էս է, էն է, փնովիր: Իսկ նա համարձակ գալիս է ծառայելու հա-
րազատ ժողովրդին. գլխի վրա են ընդունում, եռանդ ունի, փորձ
ունի, պիտանի է...

Մեր «նախնիները» մեզ համար բորոտ են, հեռու: Դրանց
փորձն ու գործը մեզ պետք չեն: Մերոնք էլ նստում ու պարա-
պությունից հաշվում են, թե քանի՞ սխալ արին «Ծարժման ղե-
կավարները»: Իսկ ինչո՞ւ դուք չէիք «Ծարժման» ղեկավարները:
Արցախյան շարժումը մի՞թե ազգային պետական գործ չէ:

Սո. Նազարյանը 1860 թվականին դեռ գրում էր. «Հայ հե-
ղինակի պարտականությունն է՝ այսօր ցուցանել անաչառապես,
թե հայոց ներկա, այժմեյան դրությունը չէ մի պատահական բան,

մի անհրաժեշտ ընթացք բախտի կողմից դեպի Հայկի որդիքը, այլ մի հարկավոր հետևանք նոցա թույլ և աննշան պատմական կյանքի. նոցա անբաղաճ կառավարության... Նոցա կործանիչ անմիաբանության...»

«Ինձ մի պաշտոն տվեք, մնացածը դուք գիտեք...» Ազգային ցավից երբ պիտի պրծնենք...

Երկյուղով առաջ ես նայում, տնքալով՝ հետ... Հազար տարի ինչո՞ւ ենք ուրիշին տուրք տվել, ուրիշին ծառայել, ուրիշի՝ գորավար, պաշտոնյա, առևտրական, ուրիշի՝ շինարար, գիտնական, արվեստագետ...

* * *

«Մենք նրանց վնաս չենք տվել, բայց նրանք իրենք իրենց են վնաս տվել...», Ղուրան, 16 սուրահ:

Տարեց մարդիկ եմ տեսել, հայհոյում էին դաշնակների՝ դրանց հերն անհծած, ջահել էինք, մեզ ստիպում էին կռիվ գնալ: Ժողովրդի թշնամի էին...

Աշխարհ ենք եկել, ո՞ր ենք գնում: Ո՞րն է ազգային մեր բովանդակությունը, ի՞նչ իդեալներով:

Մինչև օրս յուր ենք գնացել ճակատագրի հետ: Որ որ շարտի մեզ պատմության ալիքը...

Չենք սիրել մեզ, մեր ապագան չենք սիրել:

Այսպես թե այնպես, հասել ենք երրորդ հազարամյակի դուռը: Հույսով նայենք հայ երիտասարդին, թող առաջին քայլն անի հայոց հողի վրա գլուխը բարձր պահած ու հավատով, որ գրելու է մեր նոր պատմության առաջին էջը...

* * *

«Երրորդ ուժին», չգիտեմ որ ուժին ապավինելու-չապավինելու մասին գրույցները կարող են չլինել և չեն լինի, եթե սեփա-

կան ուժ ունենանք: Ապապիները մոռանանք: Մեզ պառակտող այս գրույցներն էլ մոռանանք. մթնոլորտն ավելի է անմարդկային դարձնում:

Պարզապես չապապիներն ոչ մեկին. վերակառուցվենք ինքներս ու վերակառուցենք մեր փոխհարաբերությունները աշխարհի հետ: Հուսախաբությունից է ծնվում ատելությունը (ատելությունը չորացնում է մեր հոգիները): Ուզում ենք՝ չեն տալիս, հիասթափվում ենք, ատում ենք: Մենք մեր շահերն ունենք, ուրիշներն էլ՝ իրենցը: Եթե չենք հասունացել այս մտքի համար, կմնանք նույն բախտի տերը:

Ռուսիան Թուրքիայի հետ բարեկամություն է հաստատում, մենք նեղանում ենք: Իսկ եթե նրանց շահերը բռնում են...

Վրաստանը եղբայրություն չի անում: Իսկ եթե իր շահերին չի գալիս...

Քաղաքականությունը սիրելով, ատելով չէ. ո՞ւմ շահը կբռնի մերին, ի՞նչ պատճառով կընդունեն կամ կմերժեն մեր բարեկամությունը:

Մեզ չեն սիրում... Իսկ մենք ո՞ւմ ենք սիրում: Մեզ չեն գնահատում... Իսկ մենք ո՞ւմ ենք գնահատում...

Մեր թեատակն ընկնող չկա, ոտքի ել ու քայլիր, եթե կարող ես:

«Ռուսաստանը շահ ունի, որ մնում է աղետոյալ գոտում»: Հայտնություն, գյուտ: Ի՞նչ ես կուրծքդ ծեծում, պարոն, ինչո՞ւ ես կոկորդ պատռում: Իսկ ինչո՞ւ չպետք է ունենա: Իսկ ինչո՞ւ ողորմություն ստանանք...

Ազատվենք, բուժվենք ապապիներու հիվանդությունից: Մեր ուժը չի պատի բոլորին ատել: Ատելությունն էլ խավար ազգի հատկություն է, մենք՝ լուսանանք...

* * *

Վառելանցյութ չունենք՝ նավթ է, ածուխ է, գազ է: Հայտնի

չէ, թե մեր գիտնականները երբ կհանճարեղանան և փոխարինող մի բան կհորինեն:

Հատուկ անցել եմ Ֆրանսիայի գյուղական շրջանները, մտել եմ գյուղերը, Անգլիայում՝ նույնպես: Դե, մաքրության, կարգուկանոնի մասին չխոսենք, համեմայն դեպս մթերային խանութներում ու խորտկարաններում ճանճը ուտելիքդ չի ուտում: Բայց անսպասելին դա չէր. բոլոր ազարակատերերի բակերում երկուերեք ձի է կանգնած: Ամեն փուչ բանի համար տրակտորն ու մեքենան գործի չեն գցում՝ վառելիքը խնայում են, աշխատանքի մեծ մասն անում են ձիով: Ամենահարուստ, զարգացած երկրներն են, տնտեսելով են հարուստ:

Վերջապես Լենինի ծրագրած տրակտորներն էին, որ արտադրվեցին նրա ուզածից էլ ավելի շատ ու երկիրը տարան աղքատության: Աստված գիտի ինչքան հող փչացավ տրակտորի թրթուրների տակ, ինչքան անտեղի վառելանյութ ծախսվեց դաշտերում: Ինչքան երկաթ է ժանգոտվում կանաչ արտերում, մեր ճամփաներին...

Կյանքն է մեզ պարտադրում ձի պահել, ավանակ, սայլ ո՛ր սայլակներ: Մեր թեքություններն են հրամայում, մեր ձորերը: Մեկ էլ ասենք՝ ձորերը հայ մարդու հարստությունն են եղել, յուրացնենք: Չորերը ջրաղաց են, սագ ու բադ են, այգի են, բուտան: Չորերում կարելի է շատ հարստություններ ստեղծել: Տրակտորով ձորը չես մտնի:

Եվ, բացի այդ, անհրաժեշտ է, որ մեր նրբաթաթիկ ջահելը «ժիգուլու» դեկի փոխարեն մեկ-մեկ էլ ձիու սանձը բռնի: Ոչ միայն գործին օգուտ, ոչ միայն կազմվանա, այլև կվերակենդանանա «այրուձիու» առնական կերպարը մեր գիտակցության մեջ, և ձի նստողն արդեն ինչ-որ չափով ռազմիկ է...

Քաղաքակիրթ Եվրոպան, կատարյալ իր տեխնիկայի առկայությամբ, ձիուն իր կենցաղից չի հանել (ինչքան են գեղեցիկ,

խոշոր, հզոր, հիացմունք): Մենք էլ կվերադարձնենք, գոնե մեր աչքը կսովորի գեղեցկության...

* * *

Եթե հսկաներն արթնանում են, ու դեռ չգիտես՝ քայլերն ուր են ուղղելու, հարկ է զգուշանա, ոտի տակ չընկնես: Մանավանդ՝ ոտի տակ նայողներից չէ, մանավանդ՝ հսկան աչքի չի ընկել երբեք նրբանկատությամբ, իր քայլի համար բարոյական արդարացումներ չի փնտրել:

Ժամանակին Քրիստափոր Միքայելյանն է ասել՝ «Ռուսական արքունիքը երբեք չի ունեցել հայերին փրկելու ծրագիր»:

Չի ունեցել, չունի և, կարծում եմ, չի ունենալու: Վերջապես, մեր քեռին չէ: Ծնորհակալ ենք, որ կործանելու հատուկ ծրագիր էլ չունի: Չնայած, ով գիտե... Աշխարհում շատ բան է փոխվել: Ինչևէ, կապրենք, կտեսնենք:

Համենայն դեպս, ճիշտ կլինեն Ռուսիայի հետ հանաքներ չանել: Անդրկովկասը դեռ նրա ազդեցության ոլորտն է և, բնականաբար, նրա համար միևնույն չէ, թե ինչ է կատարվում այստեղ: Հայաստանի նկատմամբ նա հատուկ քաղաքականություն չի վարելու: Մեծ տերությունների համար Անդրկովկասը քաղաքական նշանակություն ունեցող աշխարհագրական ամբողջականություն է: Մինչ այժմ մենք դատապարտված ենք եղել ապրելու միևնույն ճակատագրով, հիմնականում՝ դրսից պարտադրված: Ցավոք, այդ «ճակատագրով» մեր շահերը ոտնահարվել են: Գուցե թե մեր միամտության պատճառով նա: Հիշենք Բաթումը. ցերեկը բանակցությունները վարում էին չորս պատվիրակությունները միասին, իսկ գիշերը՝ թուրքերը, ադրբեջանցիներն ու վրացիները բանակցում էին հայերից ծածուկ: Հավանաբար, ձեռի հետ մեր բախտն էին վճռում:

Հիմա Ադրբեջանը, բնական ձգտումով, շուտ է եկել դեպի

Թուրքիան: Վրացիները, հույսը դրած իրենց ծովի վրա, փաստորեն մեզ խաղից դուրս են համարում: Մենք պարտավոր ենք վարել մեր սեփական քաղաքականությունը: Մենք պարտավոր ենք թույլ չտալ մեր երկու հարևաններին և հատկապես նրանց, ովքեր շահեր ունեն այստեղ, մեզ միջոց դարձնել իրենց գործարքների մեջ:

Անկասկած է, որ Ռուսիան սերտ հարաբերությունների մեջ է մտնելու Թուրքիայի՝ հետ, նաև՝ Պարսկաստանի: Թվում է նույնիսկ, որ արդեն լոք է արել մեր վրայով ու անցել այն կողմ: Այս դեպքում երկու կողմերն էլ պետք է ձգտեն մեզ հարմարեցնել իրենց «քարեկամությանը»:

Շրջափակումը կամ բոլկոտը քաղաքական պայքարի ներկայիս հզոր միջոցներից են: Ոչ ոք, և առանձնապես մեծերը, չեն խորշում այդ միջոցներից: Ռուսիան, առայժմ Ռուսիան, իր մատը պահում է մեզ սնուցող երակների վրա. անհրաժեշտ դեպքում մեզ խեղճացնում է, հույս ունի տեղն ընկած տեղը նաև ծնկի քերել:

Թուրքիան ինտենսիվ կերպով կմտնի մեր տնտեսության մեջ, նույնիսկ մեզ շահավետ պայմաններով, որպեսզի տնտեսական կախվածության մեջ պահի մեզ: ...Բացի այդ, ներխուժելով Անդրկովկաս, աշխուժացնելով տնտեսական ու առևտրական կապերն այստեղ, Թուրքիան, ըստ էության, կկենդանացնի Ղարս նահանգի կիսամեռ կյանքը, ինչպես և ողջ Արևմտյան Հայաստանը, որ փաստորեն դուրս է իր տնտեսական համակարգից:

Կարելի է և պետք է փորձել վերականգնել դարերի խորքերում կորցրած ավանդույթները Պարսկաստանի հետ, բայց ինչպես ասում են՝ միևնույն գետը երկու անգամ մտնել չես կարող: Ծառ բան կախված է նրանից, թե ինքը՝ Պարսկաստանը, որքանով է շահագրգռված:

Ռուս-թուրքական «քարեկամական խաղերում մենք պետք է

որոշենք մեր նշանակությունը, մեր ընտրած դերն ենք խաղալու և ոչ երբեք՝ պարտադրվածը:

Հնարավոր է, որ Ռուսիան ուզենա մեզ շարունել Թուրքիայի գիրկը: Չպիտի շարուվենք, եթե, իհարկե, լալկան երեխա չենք, որից զզված՝ գրկից գիրկ են փոխանցում, միայն թե ձենը կտրի:

Ի դեպ, մեզ կհանդուրժեն, անգամ կսիրեն, միայն թե ձեններս կտրենք: Ավելին՝ կգուրգուրեն, եթե հրաժարվենք Ղարաբաղից, էլ ավելի շատ՝ եթե գիջենք Չանգեզուրը (Բաքվում «Չանգեզուր» միություն է ստեղծված), որ Նախիջևանն ու Ադրբեջանը կապվեն-միանան: Կրծքներին կսեղմեն, եթե մոռանանք Արևմտյան Հայաստանը, 15 թիվը, մեր պահանջատիրությունն ընդհանրապես:

Միայն թե, այս ամենից հետո արժե՞, որ այս «արսուրդը» կոչվի Հայաստան, իսկ մենք՝ ազգ:

Ասենք, բա մեր տեսածը յոթանասուն տարի ի՞նչ է եղել, մեր ղեկավարի համար ձեռք զցած բազկաթոռը և՛ հայրենիք է եղել, և՛ Հայաստան...

Այսօր պատահական չէ, որ շատերս ենք ասում՝ «Մեր հույսը դնենք միայն մեզ վրա»: Իհարկե, բոլորը չէ, որ ըմբռնում են արտասանածի խորությունը, բայց դա չէ էականը: Սա ինքնապահպանման առողջ բնագոյն է, որ խոսում է մեր մեջ, անցյալի դասերն են, որ բարեբախտաբար ապարդյուն չեն անցել: Սա նշանակում է կոչ՝ ի գործ... Սա կնշանակի՝ առաջին հերթին սեփական ուժերով, մեր եղած-չեղածով ապահովել «հանապազօրյա հացը մեր...»

Սա կնշանակի, որ Հայոց խորհրդարանը անհերթ պետք է կայացնեն հողային ռեֆորմը:

Նախանձելի չի լինի ներկայիս կառավարության ապագան, եթե նա մտադրվել է ժողովրդին կերակրել բոլշևիկյան «ժամանակավոր դժվարություններով»: Սունկի պես կբուսնեն այն ուժե-

րը, որոնք վարպետորեն կհավաքեն «քաղաքական դիվիդենդներ», չխնայելով ոչ կառավարությանը և ոչ էլ սեփական ժողովրդին: Մի երկիր, ուր անընդհատ մեղավորներ են փնտրում, կործանված երկիր է: Բոլշևիկները բոլոր անհաջողությունների համար, քաղաքական նոխազներ ունին. վնասարարներ, ժողովրդի թշնամիներ, մտավորականություն, մենշևիկ, աջեր-ձախեր... Սարսափի, սվինների վրա հենված իշխանություն:

Հայաստանում հեղափոխություն չեղավ. փառքի շատ, Աստված: Դեմոկրատները հաղթանակեցին, որովհետև հավատ կար: Անբարոյականությունը սահման չի ունենա, եթե այդ հավատը շահագործվի:

Կկարողանա՞նք մեր մտքում պահել հայտնի ճշմարտությունը՝ «Իշխանությունը դժվար քննություն է, ծանր փորձություն»:

* * *

Պատմությանը նայենք: Առավել, քան երկու դար, մենք լողում ենք հսկա մի նավի ետևից, որի անունն է Ռուսիա: Լողում ենք, հուսալով, որ վերջապես ձեռք կպարզեն և մեզ կբարձրացնեն տախտակամած:

Չպարզեցին...

Սա այսպես է: Բայց երբ մեզ կոտորել են, ձգվել ենք հյուսիս, մեր լավն ու վատը փնտրել ենք այնտեղ: Այո, սին հույսեր, այո, հիասթափություններ, բայց այդ ժողովրդի հետ կապված ենք հազար ու մի թելերով: Քայլի նպատակն ու արդյունքը պետք է հստակ լինեն: Ի՞նչ նպատակով ենք հայ ժողովրդին բորբոքում Ռուսիայի դեմ: Հակառուսական հիստերիան ինչի՞ համար է: Արդյո՞ք դրանով նպաստում ենք քաղաքական մեր կշիռն ավելացնելուն, թե՞ կրթերով ենք հասունացնելու պետական մեր միտքը: Նեղության մեջ, և ինչու միայն նեղության, մարդը թշնամի՞ է ավելացնում, թե՞ բարեկամ է փնտրում: Հայ

դեմոկրատներն ինչո՞ւ չպէտք է կապեր հաստատեն զարթոնող
ոռւս դեմոկրատների հետ...

Նախագահի առաջին այցը Մոսկվա ոմանք համարյա որպէս
ազգային դավաճանություն որակեցին: Ի՞նչ տրամաբանությամբ:

Թող բացատրեն նրանք, որ ցանկանում են փոխել հայ ժո-
ղովրդի օրիենտացիան՝ շուտ գանք դեպի թուրքերը: Ենթադրենք:
Բայց ինչո՞ւ մեկ ուրիշի հետ թշնամանալու գնով: Որ ի՞նչ շա-
հենք: Գուցէ Թուրքիայի համակրանքը միայն:

Մի հողված ընկալ աչքովս, հայ տիկին էր հեղինակը, գուցէ՛
օրիորդ: Այնպիսի մի գորովանք ու բաղձանք, այնպիսի սեր ու
քնքշություն թուրքերի հանդէպ: Նստես ու լաց լինես խղճա-
հարվելուց. էս ինչքան ես տանջվել, տոչորվել առանց թուրքի,
էս ինչպէս ես ազդվել նրա կարտոից, աղջիկ ջան... Էդ ի՞նչ ես
հիշում, ամոթ չլինի հարցնելը, որ սիրտդ էդպէս բացել ես...

Անգլիան ու Ֆրանսիան, հզոր Գերմանիան, գերհզոր Ամե-
րիկան, նույն ինքը Թուրքիան փնտրում են Ռուսիայի բարե-
կամությունը:

Մենք ինչո՞ւ և ինչո՞վ ենք թշնամանում:

«Չկան հավիտենական թշնամիներ և բարեկամներ, կան հա-
վիտենական շահեր»: Աշխարհակալ Մեծ Բրիտանիայում ծնված
բանաձև: Մեծ Բրիտանիան կարող էր ընտրել ու մատների վրա
խաղացնել՝ թշնամի, բարեկամ: Մեծ Բրիտանիայի նավերը գի-
նավորված ակոսում էին օվկիանոսներն ու ծովերը... Մեծ Բրի-
տանիան կարող էր այսպիսի բանաձևով ապրել: Աշխարհի
բարտեզի վրա Մեծ Բրիտանիայի կանաչ գույնը գրեթէ կեսն էր...

Ուժեղին ի՞նչը չի ներվել...

* * *

Բոլշևիզմն, ուրեմն, ոռւսական երևույթ է: Բայց դե, արի տես,
թե ինչքան է մեր մատը խառը էդ գործին: Սպանդարյանից

մինչև Շահումյան, Աթարբեկյան-Կասյաններից մինչև Միկոյան... Իսկ էն Բժշկյանցին հարցնես՝ երկիրդ նեղության մեջ էդ սիմբիրսկները ո՞ւմ համար էիր ազատագրում, գայիր Ղարսն ազատագրեիր...

Հանրապետության բանակը հայ բոլշևիկներով էր քայքայվում, երեսունյոթ թվականը Հայաստանում հայի ձեռքերով էր արվում... Հազարավոր մատնություններ «Տիզբոն» էին առաքվում մեր ստորագրությամբ...

Ինչո՞ւ ենք զոհի կերպարը սազեցնում մեզ: Տղամարդու պես մեր բաժին մեղքը մեզ վրա վերցնենք: Այլապես չենք ազատվի թերարժեքության զգացումից, էլի կմնանք թույլ: Ի վերջո, նաև մեր բրդածն ենք խրթում...

Միտինգներում բոլորս ենք հուզականությունը մտքի տեղ հրամցրել, բոլորս ենք եղել «պոպուլիստ», բայց հիմա փրփուրը քաշենք, տեսնենք տակի նստվածքն ի՞նչ է: Չի կարելի լինել, որ մեր անցյալի համար մենք ինքներս պատասխանատու չլինենք:

Խոստովանանքի ժամին մեղքներն ուրիշի վրա չեն բարդում..

* * *

Թող մնար տեղում Ղուկասյանի արձանը: Վրան կգրեին՝ «Մոլորյալն այս...» և արած «քաջագործությունները»:

Աշմարտությունն է դաստիարակում, իմանալն է առաջ տանում: Բոլշևիկություն չանենք՝ «Մենք հին աշխարհը կքանդենք...» Ջնջենք, ավերենք, մոռանա՞նք: Մոռանալ պետք չէ: Մոռանալը վտանգավոր է:

Եղելությունից ինչպե՞ս կհրաժարվես, պատմությունից ինչպե՞ս կթաքնվես...

Չեխովի արձանը կարող էր լինել Երևանում, կարող էր և չլինել: Արձանը գցել ենք, սրանով ի՞նչ ենք ուզում ասել: Հրա-

Ժարվե՞նք ռուս մշակույթից: Չկարդա՞նք, չբեմադրե՞նք: Չեխովը լույս է: Չեխով կարդացողը նրա արձանը չէր գցի երբեք, կխոնարհվեր: Ուրեմն տգետն ի՞նչո՞ւ է ճշտում ազգի ուղին:

Գոգոլ, Տոլստոյ, Բուլգակով, Սոլժենիցին և, և, և, և ... Չկարդա՞նք:

Բարբարոսի անուն չե՞նք հանի, եթե աշխարհով մեկ հայտնի դառնա, որ մենք՝ հայերս, ջարդում ենք Չեխովի արձանը:

Մեկին կարող է դուր գալ, մեկ ուրիշին՝ ոչ, բայց փաստ է. համաաշխարհային մշակույթի (ռուսականը մի կողմ դնենք) ու գիտության դոկերը առայժմ բացում ենք ռուսական բանալիով: Եվ հայտնի չէ, թե մենք երբ կարող կլինենք թարգմանելու տպագրելու անգլիալեզու, ֆրանսիական, իսպանական, չինական գիտական ու գեղարվեստական վիթխարի գրականությունը: Մանավանդ դեռ թրքախոս չենք, որ օգտվենք թուրքերեն թարգմանություններից:

Եթե դրանք մեզ պետք չեն, ուրեմն ճշտենք մեր տեղը համաաշխարհային քաղաքակրթության աստիճանների վրա:

* * *

Պարզվում է, որակն էլ իր հերթին կարող է քանակ դառնալ...

Փոքրաթիվ ժողովուրդն էլ կարող է մեծ գործեր անել, եթե ունի որակյալ մտավորականություն: Ամեն ինչ պայմանավորված է մտավորականով, նրա բարձրագույն կարգով: Ժողովուրդը միշտ ունակ է վեր բարձրանալ, եթե տանող կա: Ակադեմիկոսից մինչև ամենափոքրիկ գյուղի ուսուցիչ. ունե՞նք մեր կոչման ճանաչության գիտակցությունը:

Ինչով է շնչում ժողովուրդը, ինչ կատեգորիաներով է մտածում, ինչ սկզբունքների է դավանում: Ամեն ինչ պայմանավորված է մտավորականով:

Պատմությունը դաժան դասեր է տվել մարդկությանը. ժողո-

վըրդին ստրկացնելու հաջողության առհավատչյան նրան մտավորականությունից օտարացնելն է, ապա և՛ ոչնչացնելը: Ստալինիզմ, ֆաշիզմ, Մաո, Պոլ-Պոտ, ամենքն էլ սկսել են մտավորականության հերն անիծելուց: 20-րդ դարի չմոռանալու դասեր են...

* * *

Խորհրդարանով, կառավարությունով, մեր կուսակցություններով այնպես գործենք, որ հաջորդ սերունդները պատճառ չունենան «հպարտանալու», թե՛ փյունիկ թռչունի պես մոխիրներից հառնեցինք...

Բավական է:

* * *

Երկու էություն կա մարդու մեջ՝ Դոն Բիշոտ ու Սանչո Պանսա: Նմանապես՝ ազգերի մեջ: Սրանցից մեկը միշտ մեզնից բացակա է:

Եթե սխտոր ուտող Սանչո Պանսան ենք, Դոն Բիշոտ չկա, որ ասի՝ այ մարդ, մի քիչ էլ աստղերին մտիկ արա...

Եթե Դոն Բիշոտն ենք, ուրեմն՝ զուլալ, և չկա Սանչոն, որ մեր փեշը քաշի, ասի՝ այ ասպետ, մի քիչ էլ հողին իջիր...

* * *

Սկեսուրից նեղացած հարսի պես կարող ենք թքել ամեն ինչի վրա ու ժամ առաջ դուրս գալ «Մեծ տնից»: Հայավարի կլինի...

Էստեղ մենք հորական տանից բան ունենք բերած: «Մեծ տունը» մեր ունեցվածքը բաժանել է սրան-նրան: Ինքը բաժանել է, ինքն էլ թող հետ տա: Էս ո՛ր ենք թողնում-գնում...

Զավթողի մտքինն էլ հենց դա է՝ խոռվենք, մեր ինչքը մնա իրեն...

* * *

Լոս Անջելես, դիմում են Հայաստանից գնացած, արդեն զգալապես հարստացած պարոնի, դրամ են ուզում:

- Ինչի՞ համար,— հարցնում է:
- Զենք առնենք, ուղարկենք Հայրենիք:
- Գործ չունեք, իրար կկոտորեն...

Նյու Յորք կարելի է մտնել և՛ կամուրջներով, և՛ թունելներով: Վճարովի: Մասնավոր ընկերությունն է գանձում դրամը: Լույս, օդափոխիչներ, հարթ ասֆալտ, պատերը սալիկապատ, մաքրություն: Հաճույք...

Հիշեցի Ստեփանավանի թունելը՝ խեղդոց, կաթոց, քանդված կամ ցեխ, կամ փոշի...

Մինչև դուրս ես գալիս «լուսավոր ապագա», շնչահեղձ ես լինում:

Էս էլ մեր չը-սեփականությունը: Անտերությունը:

* * *

Ութսունիննի ամռանը Ստեփանակերտում եմ: Հազարավոր փախստականներ, հազար կիսաշեն կանգնած տուն: Վիրաբույժ Վալերի Մարությանի հետ պտտվում ենք. կիսաշեն, կիսաշեն, կիսաշեն... Մոայլ գոտի: Գլուխդ առ ձեռքերիդ մեջ ու լաց եղիր: Էդպես էլ անում ենք...

Հանրակացարաններում փախստականներն իրար վրա դարսված են ապրում...

Մի տեղ ձայն ենք լսում, մոտենում ենք: Երկու տղա երեխա,

եղբայրներ՝ տասներկու և ութ տարեկան, բահով քշփորում են հողը:

Մինգեչաուրից են փախել, հայր չունեն, տան տեղ են ստացել, հիմք են փորում...

Իջնում ենք հրապարակ. տղամարդիկ, մի քանի հարյուր մարդ, պատերի տակ նստած, նարդի են խաղում, ծխում են, կամ խմբիսմբված քննարկում են ազգային հարցերը:

— Էս ի՞նչ գործի եք, տղերք:

— Հեչ...

— Ախր, օրը ցերեկով հավաքվել եք...

— Հա, գործադուլ ենք անում...

Մենք շինարարի համարում ունենք, «նրանք»՝ ոչ: Մենք տարիուկես գործադուլ էինք անում, «նրանք»՝ շինարարություն: Մենք հայրական տուն վերադարձած ընտանիքներից հուշտ էինք անում, գյուղից փախցնում, «նրանք» թափով կառուցում էին խոջալուն, լցվում մյուս գյուղերը...

Երևանից մի քանի երիտասարդ հայրենասերներ տեղափոխվեցին Արցախի գյուղերը, ընտանիքներով: Ոչ գյուղերի անունը տամ, ոչ՝ գյուղխորհուրդների նախագահների: Բայց սրանք ամեն խոչընդոտ ստեղծեցին, որ այս երիտասարդները զգված ու քոռուփոռման վերադառնան: Տեղեկանք ու տեղեկանքացավ... Մենք ընդհանրապես մոռանում ենք, որ Արցախն էլ ունի իր թրծված բյուրոկրատն ու նոմենկլատուրան: Սրա մասին մի ուրիշ անգամ:

Նույն օրը երեկոյան գրուցում եմ շարժման ղեկավարներից մեկի հետ:

Սումգայիթից հետո Սարգիս Մուրադյանի և մեր մյուս ընկերների հետ օրեր ենք կորցրել Աղվերանի պանսիոնատներում հայերին համոզելու, որ վերադառնան իրենց Հայրենիքը, օգնություն ենք արել, տեղափոխել ենք այստեղ, 5 հազարներով ենք

բերել, հիմա հազարներով էլ լքում են, ցրվում: Գործադուլների վերջ կտանք, գոնե շինարարությունը չդադարի:

— Պայքարը զոհեր է պահանջում,— պատասխանում է բոցաշունչ հեղափոխականը...

Այսպես: Գործ չկա, տուն չկա, գործադուլ ու միտինգ՝ ինչքան ասես:

Տարվա կեսը դասադուլ ենք անում: Ո՞ւմ դեմ, ի՞նչ ենք շահում, ո՞ւմ ենք վնաս տալիս...

Նրանք բանակում եռանդուն ռազմի գործ են յուրացնում, մենք՝ Կենտկոմի պատերի տակ, վրանների մեջ, փափուկ «մութաքանների» վրա զինադուլ ենք անում:

Աղետոյալ գոտին տնքում է աշխատուժի պակասից...

* * *

Վաշինգտոնի «Հայ դատի» գրասենյակը նախապատրաստել էր իմ մի քանի հանդիպումները ԱՄՆ-ի կոնգրեսում: Ֆիլադելֆիայից գնացքով հասա Վաշինգտոն և Սեթո Բոյաջյանի հետ իսկույն անցանք գործի: Նախ հանդիպեցինք սենատի՝ Հելսինկիի հանձնաժողովի տնօրեն Մայքլ Օքսի հետ: Երկար տևեց մեր զրույցը, մանավանդ, որ պարոն Օքսը փայլուն խոսում էր ռուսերեն:

Կարճ ընդմիջումից հետո մեզ ընդունեց Ջոզեֆ Քենեդիին: Սա սպանված Ռոբերտ Քենեդիի որդին է: Երեսունհինգամյա կենսախիճ մի երիտասարդ, բարձրահասակ, լայնաթիկունք, աշխատավորի կոշտ ձեռքերով: Առանձնասենյակը զարդարված է ընտանեկան լուսանկարներով՝ երեխաները, հայրը, մայրը, պապը ու տատը: Մի խոսքով՝ Քենեդիների տոհմի անթիվ անդամներ:

Համաշխարհային ճանաչում ունի Արցախի պրոբլեմը: Թե Ամերիկայում և թե Եվրոպայում համակրանք կա դեպի Արցա-

խը, բայց բոլորն ասես ցնորվել են Գորբաշովի վրա: Մենատոր Ռիչարդ Լիմանը, որի հետ հանդիպեցի նույն օրը, այդպես էլ ասաց՝ «Աշխարհին հուզող հարցը այսօր «պերեստրոյկան» է, ամեն ինչ կախված է նրա հաջողությունից...»

Այնպես որ, առայժմ մեզ բաժին է ընկնում կարեկցանքը...

* * *

Օտար երկրներում հայազգի պաշտոնյաների պահվածքը հիմնականում հայոց գործերից հեռու մնալն է: Իսկ եթե ազգափոխ են եղել՝ աստված հեռու պահի: Վրացացած հայի հայատյացությունը սահման չունի...

Մոսկվայում պաշտոնյա հայերը, այսպես ասած, հայ «լոբբիները», հարազատ են Միկոյանի թողած ավանդույթին՝ չեն տեսնում, չեն լսում, չեն խոսում: Մինչև օրս թաքնված էին «ազնիվ կոմունիստի» քողի տակ. տեսե՞ք ինչ ազնիվ կոմունիստ են, հանկարծ շասե՞ք, թե հայ է, կողմնակալություն է անում:

Մինչև հիմա, ուրեմն, ազգությամբ կոմունիստ էին, իսկ հիմա՞...

Հաճախ սրանց է հանձնարարվում զբաղվել հայոց հարցերով, իբր արյունակիցներին լավ կհասկանան: Հենց այստեղ էլ սկսվում են մեր անհաջողությունները: Եղածն այնպես են ցամաքեցնում, տակից-գլխից խուզում, քարին կապ անում, որ մնում ես մոլորված:

Պրեզիդենտական ոլորտներում պտտվողները, ավելի ներքև կանգնածները կամ եղած, կամ չեղած մեզ համար: Ոչ միայն քեֆուհալ չեն հարցնի, այլև վախենում են նույնիսկ դահլիճում մեր կողմը նայել, քարե տալ...

Այսպես, մեր ծնած զավակները դրսից դրսի աչքն են հանում, ներսից՝ մեր...

Մենք էլ ամեն ինչ պետք է անենք, որ մեր գործերը սրանց

ձեռքը չընկնեն, որովհետև օգուտն իրենց մնա՝ մեծապես վնասում են:

* * *

Գերագույն խորհրդի փակ նիստում, Կրեմլի պատերից ներս, Եվտուշենկոյի գովերգած հերոսուհին (էն, որ, իբր, «հաշտության գլխաշոր» էր նետել հաշտության կոչով) փրփրեց ու տրաքտրաքեց: Այս անգամ Յազովն ու մյուս նախարարները Բաքվի վայրագությունները շարադրեցին փաստերով:

Ծղրտաց դահլիճով մեկ այս կինարմատն ու սուտ գլխաշորի փոխարեն մի ուրիշ կոչ շարտեց.

— Ջինաթ... Ջինաթ...

Սրան ձայնակցեց մի ուրիշ մոլեռանդ բաջի. պարզ ոռուներենով ճչաց.

— Միևնույն է, մուսուլմանները կհաղթեն քրիստոնյաներին...

Այսպես: Կրոնական պատերազմ: Իբր մենք նրանց կրոնին ենք դեմ:

Թուրքիան ու Ադրբեջանը, ձեռք ձեռքի տված, ոչ մի կեղծիքի առաջ կանգ չեն առնում համոզելու իսլամ աշխարհը, որ մեր արդար, Արցախյան պայքարը, կրոնական բնույթի է:

«Հայ դատի» դաշնակցական կենտրոնները ամեն ջանք թափում են հերքելու այս անհեթեթությունը, առանձնապես արաբական շրջաններում:

Խաղաղություն, եղբայրություն, հաշտություն. մեր երազանքըն է: Չէ՞ որ մենք գիտենք ինչ բան է արյուն ու ավեր: Սակայն մեր երազածը հազար տարի է չենք գտնում, չկա: Աշխարհի բարոյականությունն էլ, ճշմարտությունն էլ, առայսօր ուժն է: Ու մենք ստիպված ենք խաղի այս կանոններով խաղալ:

Վազգեն Առաջինի խոսքերով՝ «Պայքարը ապրելու ձև է դարձել հայերիս համար»:

Գոյատևման պայքար...

Բայց մենք էն ենք, որ Տիգրան ենք գնացել ու շղթայվել: Հոռմ ենք գնացել ու գլխատվել... Բարեկամին մեր տուն ենք թողել, ու հենց մեր տանն էլ սպանել են մեր թագավորին...

Չենք եղել փշոտ, պինդ չենք եղել: Եղել ենք քաղցր, որ կամ կուլ են տվել, կամ դանդաղ ծծելով բերանի մեջ հալեցրել...

Հազիվ մի քիչ փշոտվել է ջահելությունը, ինչո՞ւ ենք փուշը կոտրում. հազիվ մի քիչ բացվել է աչքներս, ինչո՞ւ ենք նորից թմրում: Ինչո՞ւ ենք քաղցր-մեղցր «տեսություններով», սին հույսերով կոտրում մեր զգաստությունն ու զգուշավորությունը:

Մենք նեղ չենք, բայց դա չի նշանաում, թե դիմացինը նեղ չէ: Մենք մեր հարևանների հետ արդար համակեցություն ենք փնտրում, բայց ով գիտե, թե մի մութ գիշերով, մեր թիկունքում նրանք արդեն մեջ-մեջ չեն արել մեր եղած-չեղածը...

Կողոպտողը կողոպտվածին առավել է ատում. մարդու բնությունն է այսպիսին:

Տասնչորսից մինչև տասնիններորդ դարը մենք գործող անձ չենք եղել Անդրկովկասում: Օտարներն են վկայում: Լուռ ու մունջ, հլու-հնազանդ...

Արարոն ծնվել է տասնիններորդ դարում: Ծնվել է, տեսել է, սա ապրել չէ, սա ստրկություն է... Չենք վերցրեք, տղերք, Ջարթիր, լառ...

Վերջին երկու հարյուր տարին է, որ վերածնվեցինք, փորձեցինք մեր իրավունքներին տեր կանգնել:

Ինչո՞ւ փափուկ կյանք փնտրելով (դե, ամեն մեկս մի պուճախում մեր գլուխը կպահենք) զրկվենք դժվար ձեռք բերած մեր կամքից ու կարծրությունից, նորից դառնանք խաշիլ, կորցնենք ազգային մեր համակարգությունը, դառնանք «խա՛լխ»...

Անդրկովկասը եղել է ու դեռ մնալու է վառողի տակառ: Այս-

տեղ հանգստություն փնտրողն ինքնախաբեությամբ է զբաղված:

Պետական շենքի կառույցն անավարտ է: Փառք ու պատիվ նրանց, ովքեր կկարողանան կիսատն ավարտել, վեր բարձրացնել նրա առնական ու խրոխտ էությունը: Օրենքի ողջ ուժով սահմանենք քաղաքացու պարտավորությունները հանդեպ պետության և ընդհակառակը: Միայն այսպես կարող ենք ապրել:

Մեր մի ձեռքին խաչն է, Քրիստոսի բարոյականությամբ, և մեր խաչին մի պատվիրան էլ ավելացնենք, հրամայական մի հրահանգ՝ մյուս ձեռքը միշտ ազատ պահել, ազգային մեր պատիվը պաշտպանելու համար: Մեր մի հարևանը Բելգիան չէ, մյուսը՝ Շվեյցարիան...

Եթե որոշեն վերացնել մեզ ու այդպիսով փակեն «հայոց հարցը», մենք իրավունք չունենք միայնակ գնալ... Բայց սա արդեն հայ գիտնականների, իշխանությունների հոգսերն են...

«Տերը դառնում է տեր, քանի որ վտանգում է կյանքը. ստրուկը մնում է ստրուկ, քանի որ վախենում է մահից»: Հեգել:

* * *

Կամ մենք կարգապահ ենք դառնում, կամ մեր վերջը հայտնի չէ...

* * *

Բերդից մի քանի կիլոմետր այս կողմ Արմենասարն է: Փոքրիկ մի պանրագործարան կա, սարվորների համար մի քանի շինություն: Ամառ-ձմեռ այստեղ է կենում Վարպետ Լևոնը: Այինանց Լևոնը մեխանիկ է, գյուտարար է, խոզ է պահում, որսորդական հրացան ունի, ձեռքի ռադիոընդունիչ, գլխատակին՝ «դաստա-դաստա» թերթ, ամսագիր, «Ոգնի»: Վաթսունն անց, միջահասակ, ջլուտ, շարժուն, և փափուկ, և համառ, ճակատին ասող-խփող, սեփական կարծիքի տեր:

Մեր առաջը կտրեց:

— Եթե դու դու ես, մի խոզ եմ ծակում քեզ համար:

— Չէ...

— Հա...

— Չէ...

— Եթե դու ես...

Խանջալն առնում է, մտնում խոզանոց: Չորս ժամ միասին էինք: Օղի ունեինք մեզ հետ. խմեցինք, գրուցեցինք:

Ասում է՝ հացադուլ ու աչքերը լցնում առնական այս մարդը...

— Ես մի բան էլ ասեմ, այսինքն որն ասեմ, որը թողնեմ, մենակ մարդ եմ, էստեղ սարերում. գիշերը հրացանն առնում դուրս եմ գալիս, ման եմ գալիս ու մտածում եմ, մտածում եմ... Չէ, իհարկե, հավան եմ, տանջվում էի ձեզ համար, բայց Համբարձումյանին չեմ ներում, չէ, չեմ ներում... Էդ մեծ մարդու գործը չի հացադուլը, էդ մեծ գիտնականի գործը հացադուլը չի: Ամեն գիշեր դուրս եմ գալիս, մի երկու անգամ կրակում, զգուշացնում եմ: Դե, գիտես, էլի, ավազակությունն ա, գեյ ու գազան ա... Գիտնական մարդ ես, դու ինչի՞ չես մի էն տեսակ բան հնարում, որ քո ժողովուրդն ապահով կենա... Ես էլ էս տեսակ եմ մտածում: Մի բան էլ եմ ասելու. մեր ձեռները դես ու դեն չգցենք: Հլա տես ինչ սարեր ունենք, հլա տես ինչ ժողովուրդ ենք... Մի օր ոնց է պատահում, մեր Գիգոլ բիձեն ջուրն է ընկնում: Չսիրված, անպետք մի մարդ ունեինք, անունը չեմ տալիս, սա տեսնում է, ձողը երկարում, որ փրկի: Չէ, ասում է Գիգոլ բիձեն, եթե դու ես ինձ փրկողը, թող գետն ինձ տանի... Բա, մենք էս տեսակ ենք... Հլա ասա՝ Ծամշադին...

* * *

Լոնդոնի հայությանն հետ եմ: Հագուստ-կապուստով անգլիացիների են նման, նմանվում են և ընդհանուր դիմագծերով, պահ-

վածքով, շարժունով... Չարմացած մտաբերում եմ՝ ախր, Ֆրանսիայում՝ ֆրանսիացիներին, Արարատում՝ արարներին ենք նմանվում: Ամեն երկիր իր կնիքը դնում է մեզ վրա:

Հայաստանում մեզ ենք նման: Լա՛վն ենք, թե՛ վատը: Եթե լավըն ենք, փառք աստծո, շարունակենք, իսկ եթե՛ ոչ... Ունենք ընդօրինակելու-նմանվելու համբավ, շատերն ունենք: Տառ հորինող, սրբապատկեր գիտող, Հոփսուհմե ու Զվարթնոց կառուցող, «Նարեկ» գրող: Ծատ են, շատ, միայն թե նրանց շունչը վերադարձնենք մեզ. նրանց հրաբուխ հոգիները, ու չիջնենք... Մեր աստիճանն իջնողին տեղ չտանք, չներենք, միայն վեր բարձրանանք:

Արժեքը արժեքավորենք, անարժանին յուր չտանենք...

Լյառն ԱՐԱՐԱՏ... Գագաթդ միշտ սպիտակ, անաղարտ, մաքուր լույս: Մեր չափանիշ, մեր բարձրություն: Քո զավակներն ենք: Հասնելու ենք քեզ...

* * *

Ռաբիս... Ռաբիսություն... Քաղհան անող չկա, մոլախոտը կերել է ամեն ազնիվ բան: Ռաբիսությունը աղտոտել է հայոց ազգային երաժշտությունը, ժանգով պատել արվեստը, գրականությունը, կենցաղը, հայոց լեզուն: Երկար տևող հիվանդության պես մի բան է, որին սովորել ենք, հանդուրժում ենք, դարձրել ենք մերը: Ռաբիսությունը վարքագիծ, պահվածք, մտածելակերպ է: Ամեն տեղ բուսած շոշափուկներով կառչել է հայոց ամբողջականությանը, քաշում է ցած, ցած, ցած... Մինչև ո՞ր...

* * *

Համարյա երեք տարի տևած մեր պայքարում յուրաքանչյուրըն իր տեղն ունի և իր գնահատականը: Հայկական միլիցիան

(անսպասելի) ցուցաբերեց ազգային մտածողության բարձր լատիճան: Առաջին իսկ օրվանից, առանց տատանվելու, ժողովրդի կողմը բռնեց: Գնահատականը գերազանց է: Ոստիկանությունն առաջին, անմիջական կապն է իշխանության ու ժողովրդի միջև: Իսկ քաղաքակիրթ երկրներում՝ ամենահարգված մասնագիտություններից մեկը:

Հավատալով, վստահելով, բարձրացնենք նրա բարոյականությունն ու վարկը, հարգանքով՝ հարգանքի արժանի դարձնենք: Ու խոնարհվենք նրանց ծանր գործի առաջ:

* * *

Հայ «ֆիդայիները», հայ «կտրիճները» զենքավորվել են: Մեծ հաջողությամբ կեղեքում են հարազատ ժողովրդին...

Կանգ առեք, տղերք: Չահել եք, ազգի հույսն եք, մեր հողը մեր ոտքի տակ կշիկանա, մեզ կայրի: Հողը քրտիների է կարոտ, տղերք: Կանգ առեք...

* * *

«Պատերազմը չափազանց լուրջ գործ է, որպեսզի վստահվի գեներալներին»: Կլիմանտ:

* * *

Մերձբալթիկայից, Օդեսայից, ուր ապաստան էին գտել աղետյալները, անվերջ բողոքներ էին գալիս հայ կանանց, հայ տղամարդկանց անպարկեշտ վարքագծի մասին: Մանրամասները՝ ամաչելու, գետինը մտնելու...

Անունով հայ են: Սրանցով մեր մասին կարծիք է կազմվում: Վաթսունվեց թվականին, Բեյրութում, ինչ-որ կինոթատրոնի

մոտ, մթան մեջ կրակոց լսվեց: Պարզվեց՝ հայերը խփել են մի հայ երիտասարդի: Իմ զարմանքին ու զայրույթին պատասխանեցին. «Հայ է, ճիշտ է, սակայն գողությամբ կզբաղի: Արաքական թերթերը գրել են անոր մասին... Հայու անունը կարատավորե...»:

Ոչ այսպես խիստ գործել, բայց այսպիսի խստությամբ մտածել՝ պարտավոր ենք: Սրանց ձեռիցն է, որ տառապում են ազգային արժանապատվություն ունեցողները, պարզապես մարդկային պատվի տերերը: Ազգի մարմնի վրա թարախի պալարներ են. մենք ենք բուժելու...

* * *

Միաբան լինենք: Բայց սա երբեք ու երբեք չի նշանակում ճշմարիտը զոհաբերենք, ճշմարտությունը ճակատին չասենք...

Ի վերջո՝ կառավարությունը նրա համար է, որ դատվի ու քննվի նրա գործունեությունը և՛ աջից, և՛ ձախից:

Կառավարությունը պարտավոր է դիմանալ կամ... չդիմանալ...

* * *

Աճեմյանը «Պեպո» էր բեմադրել. Ջիմզիմով էի խաղում: Սարգիս Մելիքսեթյանը քննադատել էր ինձ: Մի քանի օր հետո փողոցում հանդիպեցի, կողքովն արագ անցա, ցուցադրաբար չբարևեցի: Հետո շուտ եկա, ասի՝ տեսնեմ ազդվե՞ց: Խեղճ մարդը շվարած մեխվել էր տեղում ու մի այնպիսի զարմանքով էր նայում իմ հետևից, ասես մի արտասովոր կենդանի էր տեսել...

Նախահեղափոխական կրթություն էր ստացել Սարգիս Մելիքսեթյանը, հին բարքերը դեռ ապրում էին նրա մեջ...

* * *

Արթնացել ենք, կսովորենք և՛ գործել, և՛ կրթվել: Կարևորը՝ արթնացել ենք:

* * *

Դրամն Արևմուտքում ոչ միայն ազատ շուկան ու տնտեսությունն է կառավարում, այլև կարգավորում է կենցաղն ու բարքերը: Դրամն է հարկադրում օրինապահ լինել:

Լոս Անջելեսում մեքենայից գցած ծխախոտի համար հինգ հարյուր դոլար տուգանք է հասնում:

* * *

Լայնաթիկունք, ջահել հայ ցլիկները, խիճողուխաղով վզվզացնում են «Ժիգուլիները» ասֆալտ ճամփաներով:

Սև ասֆալտը փոում են... հայոց տիկիճները... «փափկասուն կանայք Հայոց աշխարհի»:

Մեզ ի՞նչ անուն տանք:

* * *

Լոնդոնում, փողոցում սևամորթ մի ջահել, մանրավաճառի ապրանքը շաղ տվեց: Ներողության փոխարեն սկսեց քաշքշել, սպառնալ:

Նայում եմ՝ սևամորթ, հաստապոռոշ, պնեխած քթով ու... անսահման ծանոթ, հազար անգամ տեսել եմ այս դեմքը Հայաստանում, այլուր: Նույն լկտիությունը աչքերի մեջ, նույն անասնական անիմաստությունը, բռի, դաժան...

Խուլիզանը, թերևս ամենաստոր արարածն աշխարհում, ոչ ազգություն ունի, ոչ էլ դասակարգ: Ամեն խավի մեջ էլ կա, տարբեր տեսակներով, տարբեր երանգներով, պոռնիկներից սկսած մինչև բարձրաստիճանավորները: Փողոցային, հիմնարկային, ընտանեկան, կուսակցական, գիտական, պետական խուլիզանություն... Երասանակներ չունեցող, արգելքներ ու սկզբունքներ,

պատիվ ու ազնվություն չունեցող, խորամանկ, քծնող: Ստալին, Հիտլեր, Սադամ, Մուսոլինի, Բրեժնև ու Չաուշեսկու, Թալեաթ, Ալիև՝ քառերորդ դարի դասական քաղաքական խուլիգաններ:

Ստախոս է «Պրավդա» թերթը իր բազմահոծ ստերով: (Ինչ փույթ, թե հայ ժողովուրդը տաքուհով է լինում դրանից): Խուլիգանության առաջ թևաթափ է պարկեշտը, ու մնում է միայն խնդալ «Վրեմյա» ծրագրի վրա, որ լուրջ տեսքով, վարպետորեն աղավաղում է փաստերն ու դեպքերը:

«Գիտնական» Զ. Բունիաթովը օրը ցերեկով, ի տես աշխարհի, մասնագիտանում է գեղծարարության գործում, օրը ցերեկով գողանում է մեր հողն ու մշակույթը... Այս վայ ակադեմիկոսի ձեռքն ինչպե՞ս բռնես...

Երկիրը հանդուրժում է խուլիգանությունը...

* * *

«Ես հավատում եմ անհատի գերագույն արժեքին»: Սալաքարը, որի վրա փորագրված է Ֆորդի այս խոսքը, դրված է Նյու Յորքի փողոցներից մեկում:

Այսպես կոչված ցեխավիկները, գործարար մարդիկ, ազգի եռանդն իրենց մեջ առած մարդիկ են: Սրանք կարողացան կանաչել ստալինա-բրեժնևական բետոնածածկի վրա: Սրանց հմտությունը ազգային հարստությունն է:

Զհարցենք՝ ի՞նչ, որտեղի՞ց: Միթե պարզ չէ, որ խախտել են հազար օրենք, ճեղքել բյուրոկրատական պնդանակատությունը, ձրիակեր մի անբան չինովնիկի կաշառել են, մյուսին՝ խաբել: Մի՞թե պարզ չի, որ գործ ստեղծելու համար ամսական տուրք են տվել օբխս-ից մինչև վերև:

Առևտրաարդյունաբերական այս խավը բնականից արարող է,

ձեռներեց, շենացնող: Սրանց ոխերիմ թշնամիներն են ծուլերը, անբանները, անշնորհքները:

Սրանց պետք է ազատել կաշկանդումներից, օրինակաճանգնել բանող միտքն ու կուտակած դրամը: Սրանց դրամը պիտի աշխատի: Ժողովրդին ու պետությանը ի՞նչ օգուտ, թե միլիոնները վեր են ածվում անշունչ արժեքների:

Գործի մարդկանց գործից հեռու պահելով, ի՞նչ հասարակարգ կարող ենք կառուցել...

* * *

Բուշնիզմը ստալինյան հասկացությամբ արգելակներ չունեցող վարքագիծ է և կապ չունի որևէ ուսմունքի հետ, նույնիսկ ուտոպիզմ-մարքսիզմի հետ: Ի վերջո, ամեն ուսմունք ունի բարոյական հենքեր և գիտական կանխադրույթներ, սխալ թե՛ ճիշտ: Այն վարչակարգ է, որի դավանանքը բռնությունն է, և կարող է երկար ապրել, քանի որ անհատի մեջ մշտապես ծնում, արթնացնում է ամենատորիմ կրքերն ու բնազդները՝ դաժանություն, նախանձ, մատնություն, այլասերում... Եվ առավել վտանգավոր է նրանով նաև, որ ուզածը գաղափարախոսությունը կարող է հարմարեցնել իր գործելակերպին, ցանկացած նպատակ կարող է ծառայեցնել իր շահերին:

Ստալինի երկաթյա ձեռքով հսկա երկիրը դարձավ հսկա մի ոհմակառնողի ու ապրեց օրենքից դուրս, միշտ պատրաստ՝ հարձակվել-հռչոտելու... Երկրի փլուզումից հետո մենք ունենք մարդ՝ ոհմակասեր, մարդ՝ օրենքից դուրս, ոհմակային գիշատիչ հոգեբանությամբ: Ով մեզ հետ չէ՛ մեր դեմ է... Եթե թշնամին չի հանձնվում՝ նրան ոչնչացնում են...

Բռնապետությունը ջրի երես հանեց այն, ինչ մարդը առողջ բնազդներով ու չգրված օրենքներով թաքցնում էր հոգու մութ խցերում գերված, կապանված: Չար հողմի պես՝ սրբեց, տա-

պալեց բարոյականության, առաքիճության մեծ ու փոքր ամբողջները: Փաստորեն նա ի չիք դարձրեց պատմության վիթխարի աշխատանքը:

Համարյա մի դար տեսել ու սովորել ենք... Եվ արատավոր ենք մենք...

Մենք մեզ հետ գործ ունենք:

Գիտենք խղճի հետ գործարքներ անել: Անկիրթ՝ սակայն ուսուցանել գիտենք: Անձեռնհաս՝ բայց ղեկավար: Վերևից՝ քրծնել, ներքևից՝ ստորացնել: Ձեռքը մեր կաշառք տալու-առնելու է սովոր, մեր աչքը՝ գողության, մենք սուտ արտադրող ենք ու լեզուն մեր՝ անամոթ: Մեջքը մեր՝ անբանության սովոր: Ստրկացնել հոգիներ և արբեճալ իշխանությունից անսահմանափակ: Տիրել՝ ինչ շարժվում է, ինչ անշարժ է, ինչ ծնվել է, ինչ ծնվելու է...

Բանկոնավոր, աննկուն հեղափոխականներ ենք տեսել, կուռքեր ենք տեսել ու կուռք ենք սարքել հորը մատնողին: Մարդու կյանքն արժեք չունի մեզ համար, հոգին՝ առավել: Հանուն գաղափարի զոհաբերել գիտենք ու զոհերին չհաշվել: Մեր ճանապարհից շնորհալիներին հեռացնելու վարպետ ենք, դիակների վրայով բարձրանալու՝ սովոր: Մարդ չես, եթե մեր ոհմակից չես և արժեք չունես: Հոգևոր գանձերը ոչինչ են, եթե չեն ծառայում տիրապետությանը մեր: Երկրորդ անգամ խաչեցինք Հիսուս Քրիստոսին, ծաղրուծանակեցինք: Ազգային մեր մշակույթը խառնեցինք ցեխին, խարույկներ սարքեցինք մագաղաթյա ձեռագրերից: Հաղթանակների ու հրճվանքների մեջ մնացինք աղքատ: Ամոթի կարմիրը խլեցինք մարդու երեսից: Խոշտանգեցինք հավատացյալներին, ծաղրեցինք հոգևոր մեր առաջնորդին: Մենք մոլեռանդներ ենք, կասկածից զուրկ: Մենք ձև ենք և ոչ բովանդակություն: Մենք խոսք ենք և ոչ թե գործ: Ժողովրդին ակմբել գիտենք ու դարձնել ամբոխ: Տերերից վախենում ենք, հիստերիկ ցավագարությամբ ծափահարում: Նախրային բառաչներով ող-

ջունել ենք առաջնորդներին ու նսեմացրել մեր մարդ էությունը...

Այն՝ ինչ տեսել ենք, այն՝ ինչ սովորել ենք...

Մենք տեսանք, թե ինչպես ժողովրդավարություն ասելով, պետության ղեկը տվին լեհինյան «խոհարարուհիներին», և արդյունքը տեսանք, և վայելեցինք դրանց եփած ճաշերը: «Խոհարարուհիները» չեն չքացել, կան, նրանք կան ու, պահը որսալով, ձեռքը գցում են ղեկին...

Մենք անզգամության ենք սովոր և անզգամի պես չենք տեսնում աղետյալ գոտու ողբերգությունը: Միայն մենք կարող էինք այսքան անտարբեր մնալ փախստականների տառապանքներին: Միայն մեր «ֆիդային» կարող էր լինել այսքան ավազակաբարո: Միայն մեր կրթությունը կարող էր լինել այսքան կեղծ: Միայն մեր մտավորականը կարող էր լինել այսքան վախկոտ ու եսամոլ...

Մարդու հոգին՝ բարդ ու անեղծվածային: Մարդու հոգին՝ խորն ու անհատակ մի անոթ, դարը դարի հետևից մղվելով, մի-մի կաթիլ առաքինություն է կաթել այդ անոթի մեջ, պըտղունց-պտղունց հավաքվել է իմաստություն: Եկավ լեհինիզմը, շուռ տվեց, դատարկեց անոթը, տեղը դնելով սուտ ու կեղծ իր գաղափարախոսությունը, որի չնչին ծավալն ու Քշիռը ոչինչ էր մարդու հոգու անհունության համար:

Ու դատարկ մնաց մարդ էակի հոգին, և դատարկությունից է այսօր ճայթում, պատառ-պատառ լինում, դատարկությունից...

Հայաստանում ազատություն է... Օրենք չկա, եղածը չի գործում: Մարդն անպաշտպան է, ապրանքը՝ անտեր: Ամենուր ական-թալան է...

Ազատություն է: Հրաշալի է: Բայց մենք իրար չենք սիրում, չենք զիջում ոչինչ: Մենք շարունակում ենք իրար վրա կրակել, հայի կյանքը չենք խնայում: Չարության սատույցը կալել է մեր հոգիները...

Մենք պատրաստ չենք ազատության համար:

Ազատության խառնիխուռն ալիքները ցրիվ կտան մեզ, իրենց խելահեղ ջրերի տակովը կանեն, մեր երեխաներին կդարձնեն անկառավարելի, անմիտ, եսամոլ արարածներ: Դա կլինի մեր վերջը:

Բայց հիշենք՝ մենք առաջինն էինք, որ սասանեցինք կայսրությունը: Արցախն էր, որ արթնացրեց կայսրության ժողովուրդներին:

Մենք միլիոնաճոց միտինգներ ենք արել և մի քոլ չենք փչացրել: Ազատության տենչի ֆետ պենք է լինի և սրա տրամաբանական շարունակությունը: Մենք քանդվելու համար չենք սկսել մեր գոյամարտը, այլ՝ կառուցելու:

Ճշմարիտ դեմոկրատիայի առաջնության դափնին զիջելու իրավունք չունենք ոչ մեկին, որովհետև մեր ծառն առողջ է ու կմնա առողջ, եթե պրկվենք ազգովին ու կտրատենք չորուկ ճյուղերը: Վարակիչ են...

* * *

Գերագույն իմաստը դեմոկրատիայի այն է, որ քաղաքացու ճակատագիրը տնօրինի ոչ թե մարդը իր քնահաճույքներով, իր անազնիվ կամ ազնիվ, չար ու բարի էությանը, այլ **օրենքը**:

Ուրեմն, եթե մենք հաստատում ենք բանականության դատն անցած, կյանքից թելադրված օրենքներ, եթե զինվում ենք բնական գիտություններով, եթե բացախոսությունը հայտարարում ենք առաջընթացի մեր զենքը, եթե սահմանում ենք **օրենքի գերիշխանությունը** Հայաստանի ողջ տարածքում, մենք դրանով դեմոկրատիայի հիմնաքարն ենք դնում:

24 հոկտեմբերի, 1990 թ.

ԵԹԵ ԵՂԱՅՐՆԵՐ ԵՆՔ...

Բուենոս Այրեսում բնակվող Գալֆյան Վահանի սիրտը Հայոց լեռներում է, բայց օվկիանոսը շատ է մեծ, ճամփան երկար,

հայերս էլ ջուրը կտրելու սովոր չենք, հմուտ չենք, քանի որ ջրի ճամփա չունենք, չնայած, ասում են, ջուրն աշխարհում ավելի շատ է, քան ցամաքը...

Հայաստանցիներս հերոսացանք ու մեծ մի խմբով ութսունվեցի հոկտեմբերին «կտրեցինք» օվկիանոսը: Վահանը՝ մորը գտած մոլորված գառ, հոտոտում էր մեզ: Մտերմացանք: Ծատ տանջվեց մեզ դիմելու պատշաճ կերպը գտնելու համար. մեկ պարոն էր ասում ու մեղավոր շիկնում (դե, մեզնից ի՞նչ պարոն), մեկ էլ վարանելով՝ ընկեր ու... «Սակայն ես ձեզի ինչպե՞ս ընկեր կըլլամ...»

Ասացի՛ Վահան, Հալեպ քաղաքում մի հայ կա. Երևանում ծանոթացանք, առաջարկեց իրար եղբայր կոչենք:

Վահանը նստած տեղը բարակ մեջքն ուղղեց, մղվեց առաջ՝ դեպի ինձ:

— Եղբա՛յր...

Ի խորոց սրտի հարցրեց: Լրջացա ռկամա:

— Այո, ի՞նչ կա դրա մեջ, — ու փորձեցի կատակի վերածել, — բոլորս էլ եղբայր ենք, էլի, իրար...

— Ոչ, եղբայր չենք... Տեղակից ենք, ճիշտ է, բայց դեռ եղբայր չենք: — Խոնարհ, բայց համոզված առարկեց Վահանը: — Ուրեմն կրնա՞մ ձեզի եղբայր կոչել:

— Անշուշտ... Եղբայր Վահան...

Պատասխանեցի, փակվեցի, ծանրաքար սուզվեցի հոգուս խորքը, մինչև հատակը... Այն պահերից էր, երբ մարդը բաց աչքերով նայում է իր բացված էությունը՝ իր իսկ սարքած քննությունը պատասխանելու... Եղբայր... Եղբա՛յր... Տենդագին փնտրում եմ նրանց... Գոնե երեքին, երկուսին, մեկին, որոնց համար ճշմարիտ եղբայր եմ...

Հալեպում ապրող հայր Հովհաննես Գալմաջյանն էր. որի հրավերով ութսունվեցի նոյեմբերի քսաներկուսին վայրէջք կա-

տարեցի Հալեայի փոքրիկ օդանավակայանում: Առաջինն ինքն է մոտենում: Վաղուց չենք տեսնվել, գրկախառնվում ենք:

— Եղբայր Սոս...

— Եղբայր Հովհաննես...— այսպես խլացրինք մեզ խեղդող հուզումները:

Դիմավորողների մեջ են տիկին Ջուլիետան՝ Գորիս հայոց քաղաքից Հալեայ հարս գնացած բարձրահասակ, ծաղկեփունջը ձեռքին Զանգեզուրի եղնիկը... Դոկտոր Պետրոս Բոյաջյանը ու էլի մի քանի հոգի:

— Եղբայր Սոս, կխնդրեմ ծանոթանաս եղբայր Ասպետին հետ:

Ասպետ... Երիտասարդ մարդ է, կոկիկ հագնված ու... Այդքան էլ սազող անո՞ւն: Խիտ հոնքամազը՝ սև սաթ, փայլիլող խոշոր աչքերը՝ առնական դեմքի տերը... Մեջս հպարտանում եմ՝ մերն է: Գեղեցիկ տղա է ու մերն է: Հակառակ սովորությանս, չհարցրի՝ արմատների որտեղի՞ց են գալիս, շնորհակալ եղա ճակատագրին, որ փրկվել են սրա պապերն ու մեզ համար ծնել ազնվակերպ այս երիտասարդին: Ազգի ժառանգականության զարկերակը կենդանի է, բարբախում է, ուրեմն...

Հաթակիսա քաղաքից ոչ հեռու հնագետները մի քաղաք են գտել ու պեղել: Հակոբ Ադամյանը ոգևորված, հիացած փորձում է ինձ տեղեկություններ տալ: Քաղաքի անունը Ուգարիտ է եղել: «Աս ապարանք է, աս բաղնիք է եղած, շուկան է, գլխավոր դարպասն է... Աաշեցուցիչ է, կոյուղի են ունեցել... Մնացյալը դեռ պեղված չէ...»

— Ադամյան, դեռ ինչքան չպեղված քան կա աշխարհում...

— Այո, կսեն թե վեց հազար տարվա պատմություն ունի այս քաղաքը... Քրիստոսի ծնունդեն առաջ:

Լսում եմ ցաքուցրիվ այդ բացատրությունները, քայլում եմ մեռած քաղաքի վրայով ու զարմանում եմ, որ... չեմ զարմանում: Ախր, ինչ զարմանամ. մարդիկ են, ապրել են: Եթե ապ-

րել են, ուրեմն պետք է կառուցեին. պատերազմ է եղել՝ պետք է ավերեին... Քսաներորդ դարի մարդ են, ավերածություն տեսած հայ են, ինձ զարմացնել կլինի”...

Ու մեկ էլ կանգ են առնում, անկախ ինձանից ժպտում... Երկու սպիտակ ուլիկ արածում են անկենդան քարերի տակից ծլած կանաչը, մկկալով... Փլատակը ոչինչ, ձեռքի գործ է, ի վերջո, եթե կենդանի մկկոցը չի ընդհատվում...

Եղբայր Ասպետը մաքսատան գործերն արագ «կարգադրեց», մտանք քաղաք:

Արաքական աշխարհ՝ այսօր բարդ ու անկայուն: Հայեպն արտաքնապես ապրում է սովորական իր հոգս ու գործով, սակայն օդում սավառնող անորսալի մի տազնապ կա մշտապես, մի ինչ-որ բանի լարված սպասում՝ կա և՛ հույս, և՛ երկյուղ... Արաքրատան... Ընդերքային հոսանքները թանձր նավթի պես շարժվում են անկախ ու ծածուկ, ու հողը ոտքիդ տակ անկայուն է թվում, ու անապահովության որդը անընդհատ կրծում է հոգիդ: Հոսանքները մի տեղ կարող են քաղաքական ուժ դառնալ, բախվել իրար ու, բարեկեցության բարակ շղարշը պատռելով, անգուսպ շատրվանել, կրակվել...

Այդ անկայուն, իրարամերժ սպասումներով չի, այդ երեքուն աշխարհում իր հույսերով ապրում, շնչում է հայկական համայնքը...

Արաքական երկիր՝ Սիրիա... Կուսակցություններ, կրոնների, աղանդների խառնարան. իսլամ՝ սունիներ, շիա՛ներ, քրիստոնեություն՝ կաթոլիկ հայ, քրիստոնյա արաբ, քուրդ, հրեա, ասորի... Հաշտ ու անհաշտ, բարդ, դժվար կյանք...

Հայոց գաղութը տասնամյակներով ճշտել, ստուգել, ընդունել է այդ կյանքի, այդ միջավայրի թելադրանքները: Գոյատեվելու համար պայքարի իր ձևն ունի: Ու դժվար է նրա մակերեսը տեսնելով, հասկանալ նրա բարդ կառուցվածքը. աստված ոչ անի, թեթևամիտ քիթը կոպտորեն խոթես այդ սարդոստայնի

պէս նուրբ, հազար ջիղ ու երակ կառույցի մէջ: Միշտ վտանգ կա նաև մեզ իրար կապող մի բան քանդելու, մի թել կտրելու: Հատուկ վերաբերմունք է պահանջում Սիյունքն ամբողջապէս, սակայն ամեն մի երկրի գաղութ ունի իր առանձնահատկությունը, իր հոգեբանությունը: Եվ սա է, որ պետք է հաշվի առնենք, զգուշավոր լինենք. եղբայրները տարբեր բնավորություն ունեն... Զէ, կան, այնտեղ էլ կան մեր «խնամի-բարեկամ» թաքուն շարժիչները յուրացրածներ, որ խորամանկ են, հաճոյացել են, յուրովի օգտվում են Հայրենիքից: Անշուշտ կան: Բոլորը չէ, որ ազնվահոգի Գառնիկ Ադդարյան են, որ Սիյունքում ապրելով Հայաստանի քաղաքացի էր: Զանազանել է պետք՝ ով ինչքան է օգտակար հայապահպանման գործին, ում սիրտն ինչքան է ցավում ազգի ապագայի համար... Անկախ գաղափարներից, կուսակցական պատկանելությունից...

Պետրոս Բոյաջյան. սրտաբան բժիշկ: Հայրենիք է եկել, ուսումն անել ու տարել է Սիյունքին: Մարդիկ կան մանրամասներում չեն տեղավորվում, հեռանում են՝ խոշորացված են գալիս աչքիդ առաջ: Մտածում են՝ ինձ ի՞նչ կգա Պետիկը: Ինձ որդի կգա... Որբի թախիժն աչքերում անպակաս, բայց և շարանի մի փայլիլոցով... Բնավորությունը թեժ, եռանդն անզուսպ, անարդարության դեմ անհաշտ, պողթկուն... Զէ, ինձ հայր կգա Պետրոսը, մտածում են, խոսքը ծանր է, միտքը հասուն այր մարդուն սազական, հեղինակությունն անվիճելի... Զէ, ինձ, քեզ, բոլորիս եղբայր կգա Պետրոսը, հոգեհարազատ եղբայր:

Երեք միտք են հյուսում դոկտոր Բոյաջյանն ու նրա նմանները, երեք սուրբ պարտականություն՝ հպարտ սիրել Հայրենիքը, անձնուրաց ծառայել Սիյունքին, հմուտ լինել անձնական գործի մէջ: Դժվար է պարտել, թե օրվա ընթացքում սեփականի հեռքանի հասարակական գործ են անում այս մարդիկ օրեր, ամիսներ, տարիներ: Անվարձահատույց...

Մանուկին մարդ-գազանի մասին չի գրում, չնայած տեսել է,

արյուն է տեսել, ավերակ, շարը շարին դաստած է տեսել... Բնությունն է պատմում, սեր, ազնվություն, միամիտ կատակ, անարատ մարդկություն... Նրա մտքով տեսնում ենք տրորած ծաղկածառը... Հա, այս ենք տանուլ տվել, «Հայաստան, Երկիր Դրախտավայրն» են ոչնչացրել: Գազանություն պատմելով ո՞ւմ կզարմացնես, կորուստն է մեր չփակվող վերքը, կորուստ, որի հետ չենք հաշտվի երբեք...

Մեծուրու ճղակոտոր աշխարհի տաշեղներն ապրում են հայոց Սիյուռքում, սակայն ուրիշ կյանք-կենցաղով, ուրիշ խնդիր-նպատակով:

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը համաշխարհային ընդգրկումով նշում է իր գործունեության ոլթունամյակը: Բարեգործական... Բարի գործ անելու միություն. առաքինության բարձունք...

Եվ ով էր տեր լինելու պատեպատ տված միլիոնավոր հայերին, ով էր ունենալու համաշխարհային այս միությունը, եթե ոչ՝ մենք: Եվ ոչ միայն տեր լինել «զրկված ու զարկվածին» օտարության մեջ, սատար լինել ազգապահպանման նրա գործին, այլև աննախադեպ շարությանը պատասխանել անթիվ բարի գործերով:

Հյուգոյի «Թշվառները» եզակի գիրք է այս ծով գրականության մեջ: Բարին՝ համար ու տքնաջան, առնական ու անշեղ, իր էությանը հավատարիմ հաղթանակում է ի վերջո: Չարը ինքնասպան է լինում: Եթե չարն ինքնասպան չլինի, նրան սպանել չկա,— ասում է այդ գիրքը: Կերպը փոխելու, թաքնվելու հազար ձև ու տեղ ունի նա: Հավատա՞նք... Մեր չարն ինքնասպան կլինի՞:

Սպասենք: «Բարեգործականը» գործելով է սպասում, բայց դեռ շուտ չի գալու նրա հաղթանակը, որովհետև հային հետապնդող չարը լիրք է, կաշուն, որտեղ էլ բուն դենք, գտնում ավերում է (Բեյրութ-հրաշքն էլ գտավ ավերեց):

Մանրանում են գաղթօջախները, կարծես մի հսկա ցախավե-
լի տակ քշվում երկրագնդի կլորությունով մեկ՝ արևելքից արև-
մուտք, հարավից հյուսիս: Ավազի փոքրիկ հյուլեներ՝ փշրվում
ենք է՛լ ավելի, էս ու էն ազգի արանքներում հավվում...

Սահուն ու վարժ կարդում է հայ մանչուկը անգլերեն ու ֆրան-
սերեն ու ռուսերեն, ու... Մաշտոցի գիրը սովորում է որպես
կցուկ, որովհետև կյանքը կենսական պահանջ է դրել նրա առաջ՝
սոված շմնալու համար հմուտ լինել... աջից ձախ գրելու մեջ:

Իսկ ութսուն տարեկան պարոն Մազումյանը, որ «Բարոն»
հյուրանոցի տնօրենն է, բարկանում է ամեն անգամ:

— Ի՞նչ կընեն, աս ի՞նչ կընեն... Մեր երգն անոնք կերգե՞ն,
որ մենք իրենցը երգենք... — Մազումյանը չի հաշտվում, չի
դադարում հոգետանջվել ազգի ճակատագրով: Ջղային է, ինչ-
պես շատերը Սփյուռքում, նյարդերն ասես մաշկի երեսից են
անցել, հոգնել, անհամբերացել է:

— Պարապ տեղը հոս կմնան, ինչո՞ւ չեն երթար Հայրենիք...
Հայրենիքը կա, կապասե, ինչո՞ւ չեն երթար...

Մնձուրու աշխարհի փխրուն, փխրուն հոգիներ, միամիտ ու
մաքուր՝ բոտրով դեռ սփռված են Սփյուռքում...

Տիկին Սալին, որ անգլուհի է և հայերեն խոսում է, բոյ-բու-
սաթով ցեղական կինարմատ, պարոն Գոգոյի կողակիցը, վր-
դովվում է ամուսնուց առավել.

— Սա երիտասարդներ, մեր հայեր, այնքես բարեն օդար,
օդար...

Հավ են պարում, վարժ են պարում եվրոպերեն, ամերիկերեն,
մանավանդ՝ արաբերեն, մեջք-մուջքը, պորտ-մորտը այնպես են
խաղացնում, ջարդուփշուր անում: Ուրիշի երաժշտությունն այն-
պես են զգում... Տաղանդավոր են, ինչ կարող ես անել...

Պարահանդես-ճաշկերույթներին լրջանում է հանկարծ եղ-
բայր Հովհաննեսը, խոռվում է աշխարհից, հերսոտում:

— Եղբայր Սոս, Հայաստանիս մեկ պարը չեմ փոխեր... Ձե, չեմ սիրեր ասիկա...

— Ինչո՞ւ, Հովհաննես, ջահել եմ, ուրախանում եմ, ի՞նչ կա որ...

— Այսպես անմիտ ուրախանալով մեր ջահելներն ո՞ւր կերթան...

Ո՞ւր կերթան... Ո՞վ իմանա... Աստված գիտե...

Բայց եղբայր Հովհաննեսը տաքարյուն է նաև:

— Անձնականության կորուստ է ասիկա... Մեր խնդիրը մեր երկիրը վերագտնելը չէ՞...

— Է, այո՛...

— Սակայն ինչո՞ւ հստակ չենք լսեր հայկական ուղիորդի ձայնը: Չենք լսեր, եղբայր, մեզի չի հասներ: Ուսի՞ն համար կհաղորդեք.. Ինչ ձեզի համա՞ր: Չնական է...

Հալեպահայերը հոգնել են օտարությունից, հոգնել են մեծակ մնալուց, բեզարել են նրանց հոգիները: Սար ու ձոր ընկածի պես, Սասնա հովիվների պես գիշեր-ցերեկ, ամառ-ձմեռ բուք-բորանի ռեխից խլում են, մի տեղ անում մոլորվածներին, ճգնում են հոտի համբրանքը տեղը պահել, ազատել գողից ու գայլից, հազար հրապուրանքից, սև ու սպիտակից...

Ամեն երեկո Հովհաննեսս հանում է իր ծոցատետրը.

— Ուրեմն, ժամը տասին վաղը հոն պիտի երթանք, մեկին՝ հոս, երեքին՝ հոն...

Հլու եմ, չեմ հարցնում՝ ի՞նչ, ո՞ւր: Կգնանք, կտեսնենք. իմ գործը գնալն է:

Երեք փոքրիկ սենյակ, հինգ կինարմատ: «Վարդան Ջինիշյան» ձեռնարկն է, բարեսիրական հաստատություն: Կանայք մանրամասն պատմում են:

— Խնդիրն այն է, որ իսկապես կարիքավորներն օգտվին մեր ֆոնդեն: Տուն չունեցողին կօգնենք, որ տան տեր դառնա,

հիվանդին... Առանձնապես կհետևինք, որ դպրոցականը դրամ չունենալու դատժտուրի դպրոցեն դուրս չմնա և այլն, և այլն:

Ամերիկահայ Ջինիշյանը մեծ հարստություն է կուտակել և ամբողջը տրամադրել ազգին: Հիմնել է մանկատներ, ծերանոցներ, բուժարան, դպրոց ու... մնացել անհայտ: Տարիներ շարունակ մարդիկ օգտվել են, բարերարի անունը շիմանալով: Մահից հետո է միայն պարզվել նրա ով լինելը: Սեփական աչքերով տեսել է ջարդերը, հարազատի կորուստը, սով ու մերկություն է տեսել... Ու ամաչել է այնուհետև շքեղ հագուկապից, մեղք է համարել շվայտ կյանքով ապրելը:

— Մեր ֆոնդեն օգտվելու միակ պայմանը ըստ Ջինիշյանի կտակի, հայախոս ըլլալն է:

— Իսկ եթե խառն ամուսնության երեխա՞ է:

— Երեխան հայերեն պիտի խոսի: Պայման է:

Մահից հետո Վարդան Ջինիշյանն էլ այսպես է կոիվ տալիս, այսպես է պայքարում հայապահպանման համար:

Նոր տարին մոտենում է, Հայրենիքում չեմ. չեղած բան է: Կարոտել եմ, շատ բանի համար մտահոգ եմ, բայց տխրությունս ամեն կերպ թաքցնում եմ: Իմ նոր ընկերն ու, մանավանդ, Հովհաննեսն ու քույր Լուսինեն չնկատեն, բանի որ խանդավառ են. միասին ենք դիմավորելու Ամանորը. հայավարի պատրաստվել են:

Դեկտեմբերի երեսունի համար տիկին Ջուլիետան խոսք է տվել՝ պիտի գնանք Ջինիշյան ձեռնարկ:

— Ջուլյա ջան, եղել եմ այնտեղ,— տրտնջում եմ հոգնությունից:

— Ձե, ասիկա ուրիշ է,— պատասխանում է ինձ շեշտված արևմտահայերեն:— Ասիկա ծերանոց է, ատենապետուհին շատ կուզե քեզի ցուցունել ծերերուն...

Այսպես. Հայաստանից մի նմուշ եմ, պիտի «ցուցունեն»: Ծանապարհին, մեքենայի մեջ արդեն, չեմ դիմանում:

— Գիտես չէ՞, Հայաստանը ոնց եմ կարոտել:

— Կրնամ երևակայել:— Թախծոտ ժպտում է Ջուլիետան, ու ես ենթադրում եմ, թե հիշեց իր չքնաղ Գորիսն ու սիրտը բարակեց... Բայց ով կհասկանա մտավորական սփյուռքահային, նրա իմացածը, նրա ներաշխարհը, նրա անկոտրում համոզվածությունը, որ ինքը հենց այստեղ է պետք, առաջին դիրքում, դժվար տեղը, զինվոր ու մարտիկ է, հմուտ հրամանատար է, որ կարող է և զոհվել, բայց դասալիք չի դառնա, դիրքը չի լքի... Ի վերջո, այս կյանքում մարդն ինքն է որոշում իր տեղը: Թող որոշի: Եթե այսպես է:

Մեծ դահլիճ է, երկու հարյուրի չափ ծերեր՝ այր ու կին: Տերհայրը կենտրոնում կանգնած մաղթանք է ասում: Դոճերի մեջ սպասում ենք, չենք խանգարում:

— Բոլորը չէ, որ ծերանոցը կմնան, շատերը տուն-տեղ ունին, հարազատ ունին, կուզան, կմասնակցեն միջոցառումներուն՝ կերթան:

Վերջապես ներս ենք մտնում: Ընդհանուր բարևում ենք: Անթաքույց հետաքրքրությամբ ծերերը նայում են ինձ: Ատենապետուհին՝ չափազանց հաճելի մի անձնավորություն՝ Գոհար Համաշյանը, ներկայացնում է:

— Հայրենի հյուրը դերասան է, ձեզի այցի է եկած, ան ձեզի շատ կսիրե...

Երկու-երեք ծափ՝ ու քար լուրջուն:

— Իմ նե դո մենյա,— շնչում եմ Ջուլիետային:

— Չտո վի, չտո վի...— եռանդուն ընդհատում է նա, իբր շատ է կարևոր ու չփոշմանես, որ եկել ես:

— Ինձի լսեք,— համբերատար վարում է տոնական այս հավաքույթը քույր Գոհարը: Տեսարանը տխուր էր, ճնշող. ասեմք՝ ծերությունից տխուր բան էլ ինչ կա աշխարհում: Անօգնական, աշխարհի անօգնական անհույսները. մարդկությունը մի բան մտածեր, մի հնար գտներ...

— Ինձի լսե՛ք, հիմա ձեզի համար կերգեմ./.

Սիրունատես ջահել մի տիկին երգում է, ծերերն աշխուժանում են, ոմանք միանում են երգին, մյուսները տակտով ու անտակտ ծափ են տալիս: Մի կես ժամ: Ծրագրի հաջորդ համարը. երեք երիտասարդ ծիծաղաշարժ մի պարողիա են խաղում ընկնել-վեր կենալով, ծիծաղելով, լացով... Հրճվում են ծեր մարդիկ, զվարճանում...

Բանվոր, արհեստավոր տղաներ են, իրենց նախաձեռնությանը եկել էին հարգելու, գեղեցկացնելու մամիկների ու պապիկների տոնական օրը:

— Ինչ որ կրցանք, ըրինք...

— Հիմա դարձյալ ինձի լսե՛ք.— դահլիճը հանդարտվում է.— հարց պիտի տամ՝ դուք պիտի պատասխանեք: Որտեղե՞ն կուգա Կաղանդ Պապան:

— Կաղանդ Պապան կուգա Հայաստանեն...

— Այո, ապրիք,— գոհանում է ատենապետուհին,— ամեն տարի այս օրերուն Կաղանդ Պապան Հայրենիքեն դուրս կուգա, աշխարհով կպտտի, բոլոր հայերու քովը կերթա, նվերներ կուտա, կուրախացնե: Ձեզի ալ նվեր բերած է...

Այսպես, ամեն ուսուցիչ, նախակրթարանից սկսած, սովորեցնում է երեխային, որ հայերի Ձմեռ Պապին Հայաստանից է գալիս, նվերը Հայաստանից է բերում: Ու երեխան հավատում է, այն մտքով մեծանում, որ Հայրենիքը հիշում է իրեն, որ որտեղ լինելը գիտի, ինքն անտեր չի...

Կաղանդ Պապան կուգա Հայրենիքեն...

Հավատում են երեխաները, հավատում են ծերերը, հավատում են ասողները...

Միանգամից աշխուժություն է տիրում, խառնվում են իրար ծերերը, շնորհավորում միմյանց, արտասավալից գրկախառնվում, երգում, արտասանում... Հայրենիքի Ձմեռ Պապն իրենց համար նվեր է ուղարկել, ի՞նչ երջանկություն...

Չարմայի նման մի բան գլխին, բարձրահասակ մի մարդ փորձում է ելույթ ունենալ. ընդհանուր ժխտի մեջ հազիվ էմ լսում:

— ...Հետո մեր քաղաքն ավերվավ... Կոտորածեն ետք այլազգությունն ըրի շատ տարիներ... Թուրք կկասկածեր միշտ, կըսեր՝ քրֆե խաչը... Դե, քրֆե խաչը... Վերջը փախա Հալեպ, հայացա...

Կապուտաչյա, նիհար, շատ նիհար մի մարդ անսպասելի ուժով վեր թռավ տեղից «խոսք կուզեմ» ասելով, երգեց... Ինքնամոռաց խաղեր ասաց Էրգրից պահած, Էրգրում ծնված ու հետո...

— Եթե թույլ տաք, ճառ պիտի ըսեմ: Հայրենասիրության ճառ պիտի ըսեմ: Իմ կնիկ մեռած է, հըմը ես երեք անգամ Հայրենիք գացած եմ... Առաջի մարդ եմ... Իմ կնիկ ինձի մեռակ թողուց... Գրել կարդալ չգիտեմ, հըմը շատ լավ մարդ եմ... Երեք անգամ Հայրենիք տեսած եմ, իմ աչքեր տեսած են... Երանի իմ աչքերուն... Ձեր մեջ պատվավոր մարդ ես եմ... Կեցցե Հայաստան... Կեցցե ես...

Հանդեսը վերջացավ: Հերթով կարգով նվերները բաժանվեցին: Քույր Գոհարն ու իր խումբը հետևեցին, որ դռան մոտ իրար չհրեն անզգույշ, մեկին վնաս չլինի:

— Ինչ ընեմ, իմ կյանքն ալ աս է, այս ծերերն են, անօգնական են... Կաշխատի՞նք ուժերնու չափ...

Գոհար, ալ Գոհար, ալ գթասիրտ մարդ, ես իմ աչքերով տեսա՝ ծերերի մայրն ես, հոգի ես, հեճարան-համբերությունն ես... Աստված քեզ շատ երկար կյանք տա, առողջությունն տա, երջանկություն...

Դուրս ենք եկել փողոց: Բարակ անձրն է մաղում: Հարությունն Չինոզյանը, մեր բեմադրիչը, ազնվագույն մի տղա, Մարինոսյան Մարատի ռեժիսորական կուրսն ավարտած տաղանդավոր արվեստագետ, վազեց տաքսի ճարելու ու երկար բացակայեց: Նկատում եմ՝ ծերերից մեկը, մեծ նվեր-փաթեթը թևատակին սեղմած

հենվել է պատին վախեցած աչքերով խլշկոտում է... Ուժ առավ, համարձակվեց, թուլացած ոտքը քարշ տալով ընկավ անձրևի տակ, մտավ մարդկային հոսանքի մեջ: Ողնաշարը ծոված, պառաված 'հայ մի մարդ' օտար աշխարհ, ուրիշի քաղաք, ուրիշ ցեղի մարդիկ... Չէ, գնացող չի, քայլող չի... Մի կերպ իրեն հոսանքից դուրս է գցում, նորից ծեփվում պատին:

Դիմացի խանութից միջահասակ ու մեծ քթով մի մարդ դուրս եկավ, փողոցը գործնական կտրեց, մոտենալով ծերուկին, ինչոր բան ասաց: Հետո համբերատար կանգնեց մայթեզրին, մեքենա բռնեց, ծերուկին գրկեց դրեց հետևի նստատեղին, վճարեց փողն ու ճամփա դրեց: Մոտեցա:

— Հա՛յ եք:

— Անունս Սեդրակ է:

— Այս մարդը...

— Նույնպես հայ էր:

— Ինչի՞ց իմացաք:

— Հոս ծերերու հավաքներ կըլլան, վերջավորությանը կհետևին, մեջերնուն մոլորվածներ կպատահին: Արհեստավոր եմ... Լավ է, խանութս հոս է, դիմացն է. կհետևին:

Սեդրակ. հալեպահայ, արհեստավոր մարդ, ինքնաընծայում, ցեղակից... Եղբայրություն: Այսպես՝ շատերը: Հակառակն էլ կա (որտե՞ղ չկա)՝ եսակենտրոն, անտարբեր, ազգուրաց... Կանա, որ հայտնում է համապատասխան տեղը, թե այսինչ ակումբում օտար դրոշ է դրված: Գալիս են համապատասխան տեղից՝ Խորհրդային Հայաստանի դրոշն է, հանեք, չերևա... Մեկ ուրիշը համապատասխան տեղ է գնում ու բողոք անում, որ իր երեխային ստիպում են հայոց լեզու սովորել, մինչդեռ «խեղճ» երեխան առանց այն էլ ծանրաբեռնված է...

Որտե՞ղ չկան... Մեր խոշոր քաղաքներից մեկում բնակվող երկու հայ տիկին համամապատասխան տեղ բողոք են գրում, որ տեղիս հայ ղեկավարը խոչընդոտում է իրենց հայ երեխաներին...

ռուսական դպրոց տալու: Կամ, մայրաքաղաքից մի հայ տիկին
նամակ է գրում «Մեր լեզուն, մեր խոսքը» հաղորդաշարի վա-
րիչ Արտեմ Սարգսյանին, թե հերիք է պրոպագանդեք ձեր փուչ
լեզուն... Տիկնոջ անգիտությունը թույլ չի տալիս իրեն իմանա-
լու, որ աշխարհում փուչ լեզուներ չեն լինում: Աշխարհում փուչ
գլուխներ են լինում:

Այսպիսի բաներ... «Գողը որ տանից լինի՝ եզը երդիկից
կհանեն»:

Ամեն դպրոց ունի իր տնօրենը և պարտադիր նշանակովի
պետական տնօրենը, որին վարձատրում են հայերը... իրենց
հսկելու համար: Այսինքն՝ չլինի թե հայ երեխան հայոց լեզու
սովորի, կամ, աստված չանի՝ հայոց պատմություն, հայոց աշ-
խարհագրություն:

Դպրոցի նվաճածը չորս թե հինգ պահն է (այսինքն՝ ժամը)
շաբաթվա մեջ: Հայոց լեզվի ու գրականության ուսուցիչը ուրեմն
շտապ, ուրեմն՝ ծածուկ, ուրեմն՝ խիտ, պետք է հասցնի երեխա-
յի մեջ հայության սերմ գցել, ջրել, խնամել, փայփայել, որ ծլար-
ձակի...

Սիյունքում ամենածանր բանն ինձ համար հայոց դպրոց
այցելելն է: Ինքնատիրապետում է պետք տեսնելու վեց-յոթ տա-
րեկան երեխային նստարանին կուսցած ու կենտրոնացած, գրի-
չը ձեռքին պինդ սեղմած օտար գրերը գծելիս ու յուրացնելիս...
Այս մաքառումը տեսնելով, թվում է, քանդվում է փոքր մարդու
կմախքը, որ հետո այլ կերպ հավաքվի, միտքը խաթարվում է,
պղտորվում, ջարդվում է լեզուն... Թվում է՝ օրը ցերեկով բռո-
նաբարվում է բնությունը...

Հայոց վարժապետ, վարժուհի, ուսուցիչ, ուսուցչուհի՝ էն
գլխից չնչին վարձատրվող մտավորական:

Հերոս մարդիկ:

Ծանր է մի դպրոց երեխա տեսնել օտարության մեջ, որ
հայտնի չէ, թե ճակատագիրն ո՞ր է նետելու նրանց և ո՞ր երկ-

րում են մաշվելու... Էլի որ երկրում... Դե արի, կոկորդ, ու դի-
մացիր, մի սեղմվիր սրանց աչքերի թախծոտ նայվածքից և դեռ
խոսք ասա, էլույթ ունեցիր...

Համալսարանականները հավաք են արել՝ տասնութ-տասնինը
տարեկան երեխեք, բոլորը սիրուն-սիրուն, բոլորը հայաբաղձ,
մի քանի հարյուր հոգի: Հերթով լուսանկարվում են ինձ հետ.
պարզ է՝ ինձ հետ չէ, մի քանի, որ Հայրենիքից է եկած: Կա-
րոտի... Բոլորը հերթով իրենց երազանքն են ասում՝ կուզեմ,
շատ կուզեմ Հայաստան սորվիլ... Մեկը մյուսից լավն է, մեկը
մյուսից շողշողուն, բոլորը միասին գանձ են, մեր հարստությու-
նը՝ մաքուր, անարատ, մատղաշ հոգիներ... ծնվել են, աչքները
բացվել է, ոտի են կանգնել, տարակուսած նայում են աշխար-
հին՝ ասում եք հայից ենք ծնվել, հայ ենք... Բա ինչո՞ւ Հա-
յաստանում չենք...

Ու անկասելի ցանկությունն առաջացավ մեջս. մի հրաշք կա-
տարվեր, թներս երկարեին այնքան, որ սրանց էսպես խորձ
անեի, գրկեի ու բերեի լցնեի Հայոց երկիրը...

Ամեն դպրոց գանգատ ունի (բոլորն անխտիր), որ քչերն
են հրավիրվում Հայրենիք վերապատրաստման, որ կարծրացած
մոտեցում կա, ջոկողություն կա, որ կարիք ունեն գիտելիքների
խորացման, որ, որ, որ... Գանգատվում են: Բա ինչ անեն, ո՞ւմ
դիմեն, ո՞ր օտար քեռուն...

Հայրենիքից հայություն են պահանջում...

Օտարության անբնականությունը շատ բան է սովորեցնում,
շատ բաների է մղում, նույնիսկ՝ ծայրահեղ, նույնիսկ՝ ժպիտ
առաջացնող (իհարկե, մեր ժպիտը): Հասկանալ է պետք՝ գեր-
խնդիրը հայապահպանումն է: Եկեղեցի, դպրոց, մարզական միու-
թյուն, նաշկերույթ, հայ գրքի ցուցահանդես-վաճառք, գործող
թատերական խմբեր, խանութ, արհեստանոց, ցուցանակներ,
ամեն կարգի արտադրանքներ, պիտակները վրան՝ Կիլիկիա,

Մասն, Շիրակ: Բուենոս Այրեսում դեմ առանք մի խանութի՝ ամենաբանուկ Ֆլորիդա փողոցում: Լատիներեն մեծ տառերով խանութի գլխին գրած՝ «Հայ»: Հոնա քաղաքում մեզ հրամցրին «Արարատ» պիտակով գարեջուր, Փարիզում Կարպիս Ջրբաշյանը չոր մրգի առևտուր է անում, տուփերի վրա՝ Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթ» քանդակը... Թույլատու ամեն միջոց գործ են դնում, դառնում են հնարամիտ, ճկուն, իմաստուն, և դա հույսի ու հավատի աղաղակն է, նորից ու նորից տոկունության հաստատում:

Ինձ համար թերևս ամենագարնանալին դպրոցի տնօրեններն են: Այստեղ արդեն համայնքի ղեկավարները անսխալական են: Որպես կանոն, ընտրված են ամենանվիրյալները, խելոք, ուժեղ բնավորությունները: Հավանաբար բնագոյով են զգում՝ որ դպրոցն է ճակատի ամենաթեժ տեղը, մատղաշն է ապագան... Բացառիկ մարդիկ են սրանք, առաջին հայացքից աննկատ, բայց ուշադիր, աչքի համար նկատելի, նրանք տարբերվում են բոլորից: Բուենոս Այրեսի դպրոցի տնօրեն Գևորգ Մարաշյանից սկսած մինչև հալեպցի Ալեքսանը, մի ընդհանուր գիծ ունեն իրենց մեջ՝ միշտ զգոն, գերկենտրոնացած, ուղղամիտ, անանձնական կյանքով ապրող մարդիկ: Հետաքրքիրն այն է նաև, որ նրանց մեծ մասն ավարտել է Երևանի համալսարանը կամ մեկ այլ ինստիտուտ:

Տնօրենները, մանկավարժները, դպրոցի հոգաբարձուները, ազգային գործիչ-մտավորականները այգեպանի նման, բոստանչու նման, բահը ձեռքերին առվակները միացնում են իրար, ջահել աղբյուրները մի տեղ են անում, քանդում են այստեղ, քանդում են այնտեղ, բայց ջուրը մի անապատելի տեղ ճղում է բանդը, թևները բշտած հասնում են վթարատեղը, ճղվում է ուրիշը, փախչում է հայոց ջուրը երբեմն բարակ, աննկատ շիթերով... Գդալ-գդալ հավաքածը կորչում է, ներծծվում օտար հողի մեջ, խոնավացնում օտարի արմատները...

Հրապուրանքները շատ են, սիրուն չարքերի նման պարուրում են ջահելներին, արբեցնում, տանում...

Սփյուռքի աշակերտներին տրված տեղերը Ծաղկաձորի պիոներական ճամբարներում քիչ են, սահմանափակ են: Ամեն դպրոցից՝ մեկ-երկու աշակերտ, իսկ ընդդիմադիր կուսակցության հովանու տակ գործող դպրոցներից ոչ մի աշակերտ, կարծես երեխան մեղավոր է, որ նրա պապը ոչ թե հնչակ է եղել, այլ՝ դաշնակցական:

Տնօրենները մոլորվում են, չգիտեն որի՞ն ուղարկեն, մնացածներին ի՞նչ պատասխան տան: Բա էլ ե՞րբ հաղորդվի հարազատ ակոնքներին մարդը, ե՞րբ կապվի հոգով Էջմիածնին, եղբորը ե՞րբ գտնի, եթե ոչ՝ մանուկ հասակում:

Ասենք, ո՞վ չգիտի այս ճշմարտությունը, սակայն ո՞վ հավես ունի անդարդ գլուխը դնի ցավի տակ: Մենք այստեղ պաշտոնական ենք, դեռ ձևական ենք, ցամաք ենք:

Որտեղե՞ն կուգա Կաղանդ Պապան...

Կաղանդ Պապան կուգա Հայրենիքեն...

Այսուհանդերձ, ապավինենք Ալեքսան Ադդարյանի հզոր ուսերին ու պարթև հասակին, որ Նազարյան, Գյուլպենկյան դրպրոցի տնօրենն է: Հավատանք, որ չի հոգնելու և իր առաքելությունը կհասցնի մինչև վերջ:

Հավատանք տիկին Ազնիվ Քիրիշյանին, որ իսկական ազնիվ է թե՛ տեսքով, թե՛ խոհուն ու թախծոտ աչքերով և պատասխանատվության այնպիսի խոր գիտակցությամբ, որ ասես մոռացել է անձնական ցավն ու կորուստը...

Ապավինենք Գևորգ Մարաշյանին, որ օվկիանոսից այն կողմ, հայոց «լաճերի» համար դարձել է Ջենով Օհան, հայահոտ, հայկական...

Սրանք են հուսադրում: Վերջապես, քրտինքն է, անխոնջությունն է բերք տվողը:

Կարեն-Եփփե ազգային ճեմարանը, որ 1150 սան ունի, որի 85 դասախոսներից 50-ը հայ են, ճեմարան, որ իր պարիսպներով, շենքով ու մեծ բակով ինձ հանդուգն մի ամբողջ հիշեցրեց, անառիկ բերդ՝ իր հազար աշակերտ-զինվոր կանոնավոր շարքերով, տնօրեն-հրամանատար Անդրանիկ Խաչատրյանով:

Ու մեկ էլ՝ Մեսրոպյան դպրոցի տնօրենը՝ Արփին, նուրբ, քնքույշ ու երիտասարդ, 27 տարեկան ու այդ դպրոցի բեռը ո՞նց է քաշում... Քաշում է:

Գիշերային ճաշկերույթ-պարահանդես է կազմակերպել: Մարդկանց մի տեղ հավաքելու միջոց է՝ զվարճանան, իրար կողքի նստեն, իրար տեսնեն և... Ավիրատվություն անեն: Բազմությունը մեծ է, դպրոցի կարիքները՝ շատ, ու մարդիկ կարծես առատաձեռնության մրցույթի են դուրս եկել: Արփին ուրախ է, ժպտադեմ. կողքիս է նստած: Երգիչ Կարոն Սասունի ոլորն է երգում, գորանին, ապա՝ Մայաթ-Նովա, ու Արփիի աչքերը թրջվում են...

— Հոս ինձի շատ բաներից պիտի զրկեմ... Պարտավոր եմ... Միակ բանով, որ կապրիմ՝ Հայրենիքս է...

Աղմուկ է, ժխոր, պար, լույսերը երաժշտության հետ ուժեղանում, թուլանում են, ականջս թեքած լսում եմ այդ նազելի աղջկան. ինքը դեռ կյանքի շեսին, բայց երեք հարյուր երեխայի հոգս է քաշում ու չգիտեմ ինչու է մեղավորության զգացումն ինձ պատում: Ինչո՞ւ... Սիրելի Արփի, ինչո՞ւ եմ ինձ մեղավոր զգում, ուզում եմ հասկանալ: Գուցե նրա համար, որ ճակատագիրը բարյացակամ է եղել, ու ես ծնվել եմ հարազատ երկնի տակ, նրա համա՞ր, գուցե, որ կողքիդ նստած հանկարծ հասկանում եմ, որ չգիտեմ քո իսկական գինը, քո գործի արժեքը, կամ՝ նրա համար, որ մինչև այժմ քո մասին չեմ իմացել, քեզ չեմ ճանաչել, եղբայր չեմ եղել, տեր չեմ եղել քեզ, կամ նրա համար եմ կանխապես մեղավոր, որ վերադառնալու եմ

տուն ու խամրելու են տպավորություններս, բթանալու են այս սուր ու ցավոտ, և՛ ուրախալի, և՛ հրճվալի զգացումներս և մտահան են անելու քեզ, իմ քույր, քեզ և այս զարմանալի մարդկանց, թեկուզ այ, այն արհեստավորին, որի անունը չկարողացա իմանալ, բայց լսում եմ՝ քսան երեխայի ուսման տարվա բոլոր ծախսերը վերցնում է իր վրա...

Այո, հայաստանահայ եմ, հալեպահայ չեմ, ֆրանսահայ չեմ ու չեմ կարող քեզ նման ասել՝ միակ բանով, որ կապրիմ՝ Հայրենիքս է... Սրա համար էլ եմ ինձ մեղավոր զգում ու տխրում: Տխրում եմ ու կողքիդ նստած նսլվում է հոգիս՝ ի՞նչ անեմ քեզ համար... Գնամ տուն ու ավելի լավ խաղամ, դառնամ ճարտարապետ, շինարար, քարտաշ, մշակ... Որ գաս, տարին մեկ դու գաս, ու քո լեւ թաց աչքերով տեսնես ու հպարտանաս, ուժ անես ու էլի ապրես, էլի գործես, ու մենք մեր պարտքը քեզ ու մեր նախնիներին տված լինենք... Ծանր է խաչդ, քույրիկ Արփի, բայց ծանր բեռը ուժեղի վզին են դնում և ուրեմն՝ տանելու ես... Մեսրոպյան դպրոցի տնօրեն, ուրֆայեցի Արփի, Արփիենե, Արփիկ...

Հա, այնտեղ ոգևորվում ենք՝ մենք—Սփյուռքը, Սփյուռքը—մենք... Քննում, քննարկում ենք, խոստումներ ենք տալիս, վերադառնում ենք ու էլի դառնում՝ «մենք», ու էլի՝ աստված իրենց տերը...

Թել-Աբիաթը, որ կնշանակի ճերմակ բլուր, փոքրիկ քաղաք է Սիրիայի ու Թուրքիայի սահմանին: Ուրֆան այդտեղից հեռու է ընդամենը 60 կիլոմետր: Պարզ է՝ դպրոց պիտի մտնես: Երեսունչորս աշակերտից չորսը արաբ երեխաներ են: Ծարված են բալկում հինգ ուսուցչուհի և տնօրենը՝ Հովհաննես Խաչատրյանը: Թուրքիայի հենց սահմանագլխին (մի քանի քայլ է) երեսունչորս երեխան երգում են հայրենասիրական երգեր, Հայոց պետական հիմնը ու խմբով ոտանավորներ են արտասանում Անդրանիկի մասին: Հովհաննեսի դեմքը դեռ տղայական է,

շարժումներ՝ պատկառագրու, պաշտոնին սազեցրած, խոսքը տրամաբանական... Քսան տարեկան է տնօրենը...

— Կուգեմ Հայրենիք գալ սովորելու, ինչպե՞ս ընեմ... — Բաժանվելիս է ասում, մինչև հրաժեշտ տալը:

— Բա դպրո՞ցը... — Փոքր-ինչ կոպիտ է ստացվում իմ հարցը:

— Քույրս կտնօրինե:

Քույրն էլ իրենից փոքր: Խենթեր... Իմ կրտսեր եղբայր, երեսունչորս երեխայի ճակատագիր տնօրինող երեխա Հովհաննես... Լույս տղա:

Դամասկոսում հանդիպեցի խորհրդային զբոսաշրջիկների, մեջները՝ իմ ընկերներ Ալեքսանդր Միխայլովը, Անատոլի Ռոմանիշինը: Սաշային շատ եմ սիրում՝ կապուտաչյա հսկա, երկու մետրանոց բարության բարուր... Հայտնի բան է, որ արտասահմանում մեզ տրված դրամը խիստ է սակավ, բայց, դե, հին ընկերներս են, բա ի՞նչ անեմ, ո՞նց անեմ...

— Հոգ մի ըներ,— ասում է Դամասկոսի թեմի առաջնորդ Ռսկան Սրբազանը, լայնահոգի մարդ: Խորհուրդ ենք անում, ու պատվիրակության կեսին Սրբազանը հրավիրում է չինական ռեստորան: Սրբազանը հիացնում է ներկաներին վեց լեզվի իր իմացությամբ, խոր գիտելիքներով, քաղաքական խնդիրների սթափ վերլուծությամբ: Հիացած, զարմացած են ընկերներս, ես մտքումս հպարտ եմ, ժպտում է Ռսկանը ու մեծ հմտությամբ ցուցադրելով բրնձածողիկների գործածության եղանակը, հայտնում է հանկարծ, որ ժամանակին հատուկ ուսումնասիրել է Մարքսի քաղաքատնտեսությունը: Ռուսերեն է հայտնում:

Օրն ավարտվեց բարեկամության մասին ճառով:

— Դուն թարգմանե:— Դիմեց ինձ:

— Ինչո՞ւ, հրաշալի ռուսերեն ես խոսում...

— Ոչ, կուգեմ հայերեն ասեմ: Ասա՛ ռուս և հայ ժողովրդի

համար եմ բարձրացնում բաժակս, անբաժան ենք մենք. ասա՝
իրենց շատ կսիրենք, սակայն աշխարհի կարգն է, որ եղբայր-
ները հոգան միմյանց ցավերը...

Դրա նախորդ օրը իմ ռուս ընկերները եղել էին հայկական
դպրոցում: Չի դիմացել Սաշան, հուզվել է Անատոլին, աչքները
թրջել են:

— Ինչո՞ւ այսպես, ինչպե՞ս կարելի է, ինչո՞ւ այս երեխա-
ները իրենց հայրենիքում չեն:

Էհ, սիրելի Անատոլի, սիրելի Սաշա, բա այդ հարցին պա-
տասխան տվողը մե՞նք ենք...

Մեսրոպյան վարժարանի աշակերտները իմ այցի առթիվ
հավաքվել են եկեղեցում. դուրսը ցուրտ է: Տերեկույթը վարում
է Սոնա Քրդանյանը՝ հինգերորդ դասարանի երեխա. երգում է,
արտասանում է, դպրոցի սիրելին է, պատրաստի դերասանա-
ցու, տաղանդավոր երեխա:

Սկզբում խմբով են երգում, հետո Սոնան հրավիրում է ըն-
կերներին, հերթով գալիս են՝ տղա, աղջիկ: Վերջապես, բարձր
դասարանցի Արփի Այրանջյանն է հրավիրվում: Կարդում է
Սարմենի «Բարբառ մայրենին».

Քանի աշխարհում կա Արարատ սար,
Ճակատին հայոց փառքն է արևատառ,
Ոչ մի ահեղ ձեռք քեզ չի սասանի,
Մեր սրտից կերտված բարբառ մայրենի:

Ու երկար դադար է տալիս... Ուժ է հավաքում. չի հերիքում,
շարունակում է մտքում և հետո՝

...Նման վառ ծիածանի,
Բյուրեղյա քերթված՝ բարբառ մայրենի:

Չգիտեմ ինչպես պատմեմ, ինչպես նկարագրեմ այս պահը,

որ սրտանմանիկ չլինի, բայց նաև՝ չոր չլինի: Այն ժամանակ, այնտեղ,
ինքս էլ իմ տերը չէի, բայց տեսնում էի՝ իմ աչքի առաջ խարխա-
փում, խեղդվում է հուզմունքից ջահել աղջնակը:

...Պիտի բարկ պահես հույսն Հայաստանի,
Մեր արյամբ զոդված բարբառ մայրենի:

Կուրծքն ուռչում է պայթելու չափ, վերուվար է անում, ձայնը
արնոտ սրտից է դուրս գալիս ասես՝ թաց, խոսրոտ. մեկ էլ բարա-
կում է իլիկի թելի պես ու՝ քրքթ կտրվում...

Քանի աստղերի թարթիչների տակ
Կծիս Վանա ծովը կապուտակ,
.
. . . զոդված բարբառ մայրենի:
. . . և հայ մայրերը երգում են օրոր,
.
Մեր հույս, մեր Աստված, բարբառ մայրենի:

Քար եկեղեցին մեզանով՝ քարանում է ավելի, չի դիմանում
Արփին, փղձկում է, հեծեծում է բարձրաձայն...

Տոնը մարեց, հանդիպման հանդիսավորությունը մարեց. մըն-
ջացանք ամենքս:

Ի՞նչն այսպես հուզեց այդ երեխային: Բառեր կա՝ կարոտ,
նոստալգիա... Չէ, շատ պարզ կլիներ, շատ ուղղակի: Մատղաշ
հոգու խոր ու բարդ ներաշխարհ, հարազատ երամի կորուստ, օտար
ծառի նյուդին հյուսած բույն, անկանոն, անառաջնորդ չու... Աստ-
ված գիտի երազների ինչպիսի դրյակներ են կառուցում իրենց երկ-
նակապույտ երևակայության մեջ դեռատի արարածները... Իսկ
իրականում...

Պատմական Կիլիկիայի Քեսարի շրջանն ունի երեք դպրոց:
Հայ Կաթողիկե դպրոցի տնօրեն վարդապետ Անտոն Ադամյանի

հետ բակում գրուցում ենք: Զանգի հետ աշակերտները դուրս
թափվեցին, շրջապատեցին մեզ՝ մեծ ու փոքր, աղջիկ ու տղա, սև
ու շեկլիկ... Տղաները հերթով, մեծավարի սեղմում են ձեռքս, ծա-
նոթանում ենք՝ Արա, Վարդան, Սեպուհ, Վարուժան, Վրեժ: Վար-
դապետը հումորով բնութագրում է՝ ասիկա մեր հասետն է, մեր
ավազակն է, ֆիդայի է, ապագա գիտնական է, կովազան է... Ծու-
շանն է, Խաժակն է, Արևիկն է՝ ապագա մեր դերասանուհին, Սա-
հակն է, Հայկը, Արամը, Անդրանիկն է... Անուններ... Երեխա-
ներ... Հայորդիներ... Մեր ձագերը...

Հայ բողոքական եկեղեցուն կից վարժարանը՝ Պատվելի Մհեր
Խաչատրյանով, առաքելական եկեղեցին իր դպրոցով՝ Արամ քա-
հանա Գլջյանի ղեկավարությամբ: Երիտասարդ մարդիկ՝ գիտուն,
նվիրյալ: Առանձին-առանձին, կարծես պայմանավորված, իմ միև-
նույն հարցին միակերպ են պատասխանում՝ «Հոգևոր դարձա, որ-
պեսզի ավելի մոտ լինեմ ժողովրդիս հոգսերին, դպրոցում լինեմ...»

Իսկապես են ծառայում, ճշմարիտ, հնարամտորեն: Դպրոց-
ներից մեկում ուշադրությունս գրավեցին պատին կախված մետաղ-
յա փոքրիկ տախտակի վրա գեղեցիկ փորագրված ասույթներ, որ
հորինել է, հավանաբար, աշակերտության համար Թաթուլ Վա-
նանդյանը 1918 թ. Կոստանդնուպոլսում: Մի քանիսը արտագրեցի:

Մեսրոպ գիս ծնավ,
Թարգմանիչք գիս գործածեցին,
Ազգը գիս կարդաց,
Գիտունը գիս հարգեց,
Բարգավաճանք գիս հարգողին

Ընդհակառակություն գիս գեղեցկացնող մատներուն...

Մեկ ու կես ամիս Սիրիայում. հազարավոր կիլոմետրեր նրա
ճանապարհներով... Բախտս բերում էր՝ ինձ ուղեկցողները բանի-

մաց մարդիկ էին: Տառտառ գիտեին հայոց պատմությունը, հին ու նոր դրվագները, փաստերը, մանրամասները:

Եղբայր Հովհաննեսի մագնիտոֆոնն անընդմեջ... Լսում է, ես էլ եմ լսում: Երբեմն ենք խոսում: Հովհաննեսն իր կարմիր մեքենան հրաշալի է վարում, մեծ վարպետությամբ: Հաճելի է:

— Եղբայր Հովհաննես, մեքենադ հնազանդ է քեզ:

— Այո, լավն է մեր «կարմիր տղան»:— Այդպես է անվանում իր մեքենան:— Կարոյի ջութակը շատ կսիրեմ... Չե՞նք կրնա հոս հրավիրել:

Ինքը հաճախ է լինում ու մեկ էլ սկսում է այցի մանրամասները հիշել:

— Արագած գնացինք, կհիշե՞ս... Իսկ Թալի՞նը... Այն մարդը, կհիշե՞ս... Մարդիկ գիտեմ, որ օդանավեն իջնելեն առաջ նախ հայրենի օդը կհոտոտեն, օտար փոշին կմաքրեն կոշիկից ու նոր միայն ոտք կդնեն հողին (կարծում եմ սա ինքն է): Սակայն մարդիկ ալ կան՝ շահի ետևից ընկած... Ոչ, ատոնք արժան չեն մեր խոսքին: Հարուխ Հայաստան պիտի սորվի (մեծն է): Ես ալ ետքը պիտի տեղափոխվիմ... Կրնա՞մ Հայրենիքին օգտակար ըլլալ:

— Անշուշտ, եղբայր Հովհաննես:

Ու ժպտում եմ քթիս տակ, որովհետև Հայրենիք տեղափոխվելու վրա մեր գրույցը կրկնում ենք օրը մի քանի անգամ ու միշտ նույն հարց ու պատասխանով ավարտում:

Ծամամյանը՝ Մելքոնը, ՀԵԸ-ի ղեկավարներից է: Նրան բնութագրելու խոսքեր դժվար գտնեմ. հարգանքս մեծ է: Ամենաքիչը նրա հետ եմ շփվել, այժմ այն տպավորությունն ունեմ, թե միշտ հետևել է ինձ, համենայն դեպս հիմա էլ չի անցնում այն զգացողությունը, թե ինձ հետ է նա ու սարի պես թիկունքիս կանգնած: Ախարոք պես մարդ:

Չանգեց երեկոյան, տեղեկացրեց, թե ում հետ եմ գնալու Դեր-Չոր: Հաջորդ օրն առավոտյան Արուշն եկավ իր մեքենայով. բարձրահասակ ժպտերես երիտասարդ, պարոն Վարդան Սվաջյանը և

Դանիել Պետրոսյանը: Դանիելը վաթսունն անց է, միջափասակ, ջլապիկն՝ կարծես կաղնուց սարքած: Ինքնավստահություն կա մեջը, որ գալիս է ուժից, իմացածի հաստատությունից: Երկար տարիներ բեռնատար մեքենայի վարորդ է աշխատել, բավական լավ տիրապետում է ուսերենին, քանի որ աշխատել է Եփրատ գետի վրա հիդրոկայաններ կառուցող խորհրդային մասնագետների հետ: Քսան տարուց ավելի է աշխատել այդ կողմերում, գործի հետ հարցուփորձով, կարդալով, ուսումնասիրելով ճշտել է տարագրության ճանապարհները. անգիր գիտի՝ որտեղ ինչ է կատարվել: Երևի դա է պատճառը, որ նրան են ընտրել ինձ ուղեկից: Մենակ չի եկել, հետը գիրք է բերել՝ քարտեզներով, ուղեկիշերով, վերնագիրն է՝ «Պատմագիրք-հուշամատյան Սեբաստիոս և գավառի հայության»: Երկու հարյուր հազար հոգու տեղահանության մասին է: Առաքելյան Պետիկն է կազմել, կես առ կես նշված են գաղթի ուղղությունները, դադարքի տեղերը:

— Այսպես է եղել,— պատմում է Դանիելն ու ցույց տալիս հայերի անցած ճանապարհը՝ Սեբաստիայից մինչև Հալեպ, Հալեպից՝ Դեր-Ջոր: Այս վերջին հատվածը 340 կիլոմետր է:

Ուրեմն, ութսունյոթի դեկտեմբերի չորսին, քաղաքը դեռ կիսաքնած, մենք շարժվում ենք:

Երկինքն ամպամած է, երկինքն արճիճ է հալել՝ ծանր կաթում է արևելյան հսկա քաղաքի վրա: Երկինքը մոայլ է, առավոտը՝ նոթերը մինչև գետին կախած, ասես ծորում է ճաք տված հոգուս մեջ...

Չնայած կարելության չափ տաք են հագնվել, խոնավ պաղությունը, սակայն, ծածկում է շորերս, հասնում մարմնիս: Մարմինս անհարմարություն չի սիրում՝ նեղվում եմ ու խոռված եմ, ջղային, ու տհաճ է այս առավոտը, այս ճամփորդությունը, կանուխ տաք անկողնուց դուրս գալը, այս բարակ անձրևը— տհաճ է: Տգաթևած թռչունի նման գլուխս ներս եմ քաշում, կուչուհուս եմ գալիս, բայց օգուտ չկա...

Իսկ նրա՞նք... նրանք, մեր եղբայրները... Այս նույն ճամփով...
Տասնևհինգին...

Հանկարծ սուր քաղց եմ զգում. գոնե մի բաժակ տաք սուրճ
լինեք, սակայն, գիտեմ, հույս չկա այս ժամին... ծխելը կփրկի:
Որոշում եմ ու անցնում գործի:

Դուրս եմք գալիս Հալեպի հին թաղերը: Դանիելը սկսում է.

— Եռլլահաթ... Կնշանակե՛ կիրակի օրվա շուկա: Այստեղ է
եղել Հալեպի առաջին ջարդը: Հայերը վազել են մոտակայքում
գտնվող անգլիական զորքի կայանատեղը՝ պաշտպանություն խընդ-
րելու: Անգլիացի հրամանատարը դուրս է եկել, քաղաքավարի լը-
սել ու՝ պարոնայք, ասել է, հիմա զորքի թեյ խմելու ժամն է, հետո
եկեք...

Մի ուրիշ հին թաղամաս... Ախր դեռ կարգին չեմ արթնացել,
ուշքի չեմ եկել... Սպասիր, Դանիել, համբերիր, ես ի՞նչ իմանայի,
որ այս առավոտ հոգիս պետք է փուլ գար այսպես: Խնայիր, Դա-
նիել, ուղեղս հիվանդացավ այս առավոտ, թող որ ինձ մի քիչ
հավաքեմ...

— Հոս Հալեպի հին բանտն է, այժմ կքանդեն, կտեսնե՞ս.

Տեսնում եմ, բա ի՞նչ եմ անում...

— Հոս, ուրեմն, արհեստավոր սասունցիներին կախեցին
իննսուն թվականին՝ Սասուն գաղտնի զենք տեղափոխելու համար:
Ատկե ետքը, ջարդերու ժամանակ, բանտը դարձավ տարագիրնե-
րու կայան...

Վերջապես Հալեպը թողինք մեր ետևում: Չգիտեմ ինչու, ըն-
կերներս երկար ժամանակ չխոսեցին: Մեքենան սլանում էր շատ
լավ կառուցած (գերմանացիների) ճանապարհով: Դեպի Դեր-
Ջոր... Ահա, այսպես քշել են մեզ դեպի անապատ... Բայց առանց
այս՝ ասֆալտե ճանապարհի, առանց այս ջրի, որ քաշել են հի-
մա, առանց այս սպիտակ, փափուկ բամբակի, որ հիմա անեց-
նում են այս վայրերում...

Մեկ ժամի չափ լուռ գնում եմք: Երևի ուղեկիցներս դիտա-

վորչալ թողնում են ինձ մտքերիս հետ, իմ ծանր, իմ դառնահամ մտքերի հետ...

Առաջին իսկ գյուղի մոտ Դանիելը հրամայում է կանգնել: Ծանապարհի եզրին խորտկարան կա, թեչ խմենք, մի քիչ հանգընտանանք:

Գյուղը ձախ է, մեզանից բավական հեռու: Դեր-Հաֆր... Նույնպես կուտակման տեղ է եղել, բայց ուրիշ կողմից եկող հոսանքի համար: Կիլիկիայի շրջաններից քշված ժողովրդի համար...

Մտնում ենք խորտկարան. երկար, ցածր սեղաններ են, անշուք պատեր, երկար թախտեր՝ հինումին կարպետներով ծածկված: Տերերը արաբներ են, միջին տարիքի մարդիկ: Դանիելի հետ ինչոր խոսում են. մեզ թեչ են մատուցում ու խմբվում նավթի վառարանի շուրջը: Բայց իրենց բանին չեն, ուշադիր հետաքրքրությամբ մեզ են զննում, ավելի ճիշտ՝ ինձ:

— Դանիել, ի՞նչ խոսեցիր սրանց հետ:

— Բան մը չէ, մի շեղվիր: Հարցուցին ո՞վ է այս օտարականը:

— Ինչի՞ց իմացան:

— Չգիտեմ: Ըսի Հայաստանեն է, դերասան է, ըսի: Հա...

Կջոկեն... Հա... Մարդիկ կան, աշխարհի տարբեր ծագերեն կուզան Հալեպ, ապրիլի քսանչորսին, կուզան իրենց ուխտը կատարելու... Հալեպեն մինչև Դեր-Չոր, ոտաբորբիկ, անոթի ու ծարավ ճամփան կանցնին, զոհված հարազատներու ճամփան կանցնին: Չարկվածներու հոգիները կարթնացնեն դարձյալ, կկիսեն անոնց ցավը... Կուզեն, որ զարկվածների հոգիները սավառնող մեճակ չմնան, արթուն մնան, միշտ արթուն մնան, մեզի հետ լինեն... Այո... Այո...

Տարագիրներուն, ուրեմն, որքան կարելի է կքշեին ճանապարհներից, գյուղերից հեռու: Նպատակ չկար անոնց Դեր-Չոր հասցնելու, ոչ: Խնդիր էր՝ մինչև անապատ հասցնելը ոչնչանալին...

Թեչն շտապով խմեցինք, ոտքի ելանք: Պարոն Վարդանը գընաց հաշիվը փակելու: Տեսա, արաբները ձեռքները թափ տվին,

հրաժարվեցին դրամ վերցնել: Ասել էին՝ մենք հասկացանք ձեր հայրենակցին ուր եք տանում, գնացեք, անոր համար այդ ճամփան դժվար է... «Դժվար է»... Դա էն խոսքը չի, նույնիսկ այսօրան ուշացած, նույնիսկ սեփական կամքով արիություն է պետք, հոգու ուժեր են պետք... Դժվար է տեսնել չոր ու ցամաք բլուրները՝ մի քոլ չկա, մի կանաչ ծեղ չկա, որ ծամես ու չէր էլ կարող լինել այս անջուր աշխարհում: Բլուրները տեղ-տեղ բարձրանում են ու նրանց կողերին ճեղքեր են երևում: Հավանաբար գիշերները երեխաներին խցկել են այս ճեղքերը՝ քամուց, ցրտից պաշտպանելու: Քամուց ու ցրտից... իսկ սովից, ծարավից, իսկ ցերեկվա արևից, իսկ թուրքից... Չէ, թուրքը լավ գիտեր՝ որ ճանապարհով քշի, որ մարդիկ տեղ չհասնեն... Ու քշում էին հայերին՝ ոչ մի տեղ չհասցնելու համար...

Դանիելը գիտեցածը պատմում է, նշում է գյուղերի, փոքրիկ քաղաքների անունները, որոնց միջով մենք էլ ենք անցնում հիմա: Խան-Քըսրը Մհամմեդ աղա: Կանգ առանք:

— Կտեսնե՞ս թուրքական ոստիկանատունը: Մթնոջ կբերեին խանի (իջևանատուն կնշանակի) բակը կլցնեին հայերուն, որ արաբները չտեսնեն, ուտելիք չտան, չօգնեն... Առավոտն արդեն երեք քառորդը չկար:

Ամեն տեղ երկար ենք մնում. նախկին խաներ, թուրքական նախկին ոստիկանատներ՝ բակերը բարձր, հաստ պարիսպներով: Հիմա կիսավեր են...

Ծարժվում ենք: Դանիելի պատմություններն ականջիս են, բայց միտքս ինձնից ծածուկ շեղվում է մի կողմ... Ինչի՞ս են պետք այս անունները, այս փաստերը. լավ չի՞ ընհանրապես մոռանալք, ասենք չի եղել... Անցածն անցավ, էլ նոր ի՞նչ... Ու՞ր ենք քարշտալիս մեզ հետ այս ցավոտ բեռը, մինչև ու՞ր, մինչև ե՞րբ...

Դեր-Չորի ճանապարհի բլուրներից մեկի տակ թաղենք, անցնենք առաջ... նոր պատմություն սկսենք... Բայց ո՞ր ծայրից, ու՞մ անցյալի վրա կառուցենք մեր նոր պատմությունը, մեր նոր «Աղ-

թամարն» ու «Անին» որտե՞ղ շինեմք...

Բեռը ծանր է, ծանր է, ծանր է... Ուսի մի թեթև շարժումով կարելի է ցած գցել՝ հերն էլ անհծած, ինքն իր համար, մենք՝ մեր... Բայց ո՞ր խցկվենք, ո՞ր ճեղքը մտնենք, ո՞ւմ փեշի տակ ծվարենք:

Հոգու մեր արիությունն այլևս չի բավարարում, հոգնեցինք անարդրյունք կովից... Կովեցի՞նք սակայն, թե՛ որոճում ենք կոփվն այդ շարունակ... Մոռանանք... Բայց մեզ ո՞վ կհարգի... Հոգնեցինք, հոգնեցինք, հայ լինելուց հոգնեցինք... Բոշայությունը մեզ հախ անենք, ցրվենք աշխարհով մեկ ու թե գիտնական ես՝ արի ակունքը գտիր... Դե արի ու այս անցյալի տիրոջը գտիր... Ինձ ի՞նչ...

Թումանյանի «Լեռների հովիվը» հիշեցի. ինձ մշտապես ցնցող մի քանի նախադասություն: Բարձրահարկ շենքի պատշգամբից կուշտ կերած մի մարդ, մի հայ մարդ դասեր հետ ծուլորեն դիտում է հովվի պարելը, լսում նրա պատմածը, տեսնում նրա սուկալի վերքերն ու...

— Գդե էտո Սասուն, պապա,— հորը փարվելով հարցրեց օրիորդը:

— Էտո տամ... դալեկո,— ձեռքը թափ տալով իբրև պատասխանեց հայրը և շարունակեց «ղնջոտալով» նայել...

Մեր հանճարն էլ քացատրություն չի տալիս, չի պարզաբանում՝ «Էտո տամ... դալեկո...»

Այս ծանր ժամանակներում և ցավոք այսօր էլ շատերիս համար «Էտո տամ... դալեկոն» կյանքի, ապրելու փիլիսոփայություն է, դիրքորոշում է: Ինձնից հեռու, մեզնից հեռու... Կոտորում են, ինչ են անում, մենք չենք տեսնում, կապ չունենք...

— Աբու-Հրեա...

Հիմա չեմ հիշում՝ գյո՞ղ էր սա, թե փոքրիկ քաղաք: Դանիելի ձայնը մի տեսակ չոր գրնգում է և ինձ կտրում մտքերիցս:

— Հոս, արաք մի ընտանիքի քով, հյուրեր կուգան: Թուրքեր:

Կրոնակից են վերջապես: Ամեն օր ճաշի են նստել, հետո էլ քըն-
նարկել հայերին: Վրդովված հայհոյել են «մարդասպան գլավուր-
ներին»:

Ու մեկ օր ալ, տան մեծ խանութը չի դիմացել, ձեռքի շերեփը
խփել է սեղանին, ճչացել է.

— Եթե մենք ենք մեղավոր եղել, եթե մարդասպանը մենք ենք,
եթե մենք են գողը, ես ինչ գործ ունեմ հոս...

Քար է կտրել մեծ գերդաստանը, պապանձվել է... Դու մի
ասա, իսկամի որդիները չեն իմացել, որ իրենց ծնող մայրը,
տատը... հայ է:

Պարոն Սվաշյանն ավելացնում է իր կիրթ, մեղմ ձայնով:

— Այո, եղբայր Սոս, ով ալ ողջ մնաց դիակներու տակ՝ իս-
լամացրին, հատկապես աղջիկներուն...

Քանի մարդուց, քանի անգամ լսեցի՝ քեռիս արար է, հորա-
քույրս այս գլուղը կապրի, բայց արար է...

Սափիսա...

Փոքրիկ քաղաք: Հենց առաջին շինությունն աջից, բարձրու-
թյան վրա թուրքական ոստիկանատունն է եղել:

— Հոս կոտորածեն ետքը հազարավոր հայ երեխաներ մու-
րացկանություն են արել...

— Անցնենք առաջ, Դանիել:

— Անցնինք...

Դըբնե...

Տխրահոշակ Դըբնե: Որ կողմից էլ որ քշել են հայերին, բո-
լորն անխտիր անցել են այստեղով: Ու նորից բլուրի վրա հսկող
պահակաշուն՝ թուրքական ոստիկանատունը...

Գլուղից ներքև, ճանապարհի մյուս կողմում, արար Աբդուլ
Քերիմի մեծ տունն է: Ոստիկանատունը բակ ու պարիսպներով
ողբ ու մահից կշտացած, հագեցած, ավերվում է Արաքստանի հո-
ղում, իսկ Քերիմի տունն իր պարտեզով կա: Ծառ ու շատ հայ
երեխաներ է փրկել այս մեծ տունը. գիշերով են փախցրել, ինչ

հնարքներ են գտել, բայց փրկել, թաքցրել են: Սեփական անձը վտանգելով...

Արդուլ Քերիմը չկա արդեն. ողորմի նրան, ազնիվ, խիզախ մարդուն, լույս դառնա նրա վեհ հոգին: Փրկված երեխաները մեծացել են ու չեն մոռացել այս տունը... Մինչև հիմա գալիս են...

Քերիմի որդիներից մեկն է տանը, իր դրացի ընկերներով: Ծանոթանում ենք. ես երախտազիտության իմ խոսքն եմ ասում նրանց հոր հասցեին: Դանհելը թարգմանում է:

— Կըսե, թե մեր հայրը կպատմեր ձեր կոտորածներու մասին, կըսե անհկա վկա էր դժբախտաբար: Մեզի պատվիրած է շնորհակալ իր պատմածները, շնորհակալ հայերու կրած չարչարանքները... Անոնք մեր հորեղբոր որդիներն են... Ինձնից հետո ալ այդպես ընդունեք հայերուն... Չմոռնաք:

Չէ, ես կարող եմ որոշումներ կայացնել, մոռանալ ու եսակենտրոն անտարբերակալ, բայց օտար ցեղի մի ողջ գերդաստան հիշի իրենց հոր պատվիրանը ու ի՞նչ մտածի իմ մասին, մեր մասին... Ասենք, մարդը պատվերով ի՞նչ կարող է վճռել, երբ կա ցեղ, կա նրա արյան հիշողությունը: Ի՞նչ է իմ չոր բանականությունը, երբ հոգիները սավառնում են այս վայրերի վրա, ձայնակցում անդադար ու սպասում մեր խոսքին...

Հատուցում... հատուցում... հատուցում...

Իմ խաչը սա է, իմ մարմնի բջիջներն այսպես են լիցքավորված: Իմ պատմությունն իմ գեների մեջ է, ժառանգական այս հատկանիշներն են, ու որոշումներով ես չեմ կարող փոխվել, չեմ կարող նմանվել ուրիշներին և ուրիշ դառնալ, որքան էլ նա լավը լինի, թեկուզ նորից ծնվեմ... Հազար անգամ էլ ծնվեմ՝ իմ պատմությունից եմ ծնվելու, հոգու իմ այս աշխատանքով, հազար տարի հետո էլ ծնվեմ, ես նույնն եմ, նույն «հավիտենական հայր»: Իմ այս աչքերով եմ ծնվելու, որ այն ժամանակ չեն տեսել, բայց պատկերներ կան նրանց մեջ տպված անջնջելի՝ կին ու երեխա, ճշոցներ, այսահարում, պողոթյուն ու բողոք ու հետո... Հետո՝ մարդկա-

յին սպանված արժանապատվություն, մարդ էության փտորում ու հետո... Հլու քայլվածք, նվաղած հոգիներ, արնոտ ոտքերով, այս ամայի վայրերով ու գոնջացած ուժեղների մտրակների տակ ու ոստիկանատների բակերով, խաներում, չղերում...

Մահ...

Սկզբից կամքն են կոտրել... Ակզբում մարդկային շնորհքից զցել են, որ ինքդ քեզնից զզվես, ինքդ քեզ չհարգես ու չուզենաս ապրել... **Ինքդ...**

Բորբոքված երևակայությունն է դարձել անգութ: Գնա, ուրեմն, գնա քո ժողովրդի ցավի ձորը մտիր: Սեղմիր ատամների ու գնա: Ամեն ոք պարտք է թելուզ մեկ անգամ անցնել իր ցեղի պատմության ճանապարհը, որպեսզի ի տես աշխարհի չստացվի այնպես, որ մեր ողբերգության մեջ դերերը խաղան կատակերգակները... Թույլ չտանք:

Շնհնկա...

Տասը կիլոմետր Դեր-Ջոր չհասած. հին կամուրջ է, այժմ գործածելի չէ: Վերևից նայում ենք՝ հին ճանապարհից մի կարճ կտոր մնացել է նրան կպած: Այն ժամանակ սա է փոխանցել ողջ մնացածներին էն կուրը՝ մահին: Ողելիցներս անհանգստանում են, որ շատ չմոտենամ զառիթափի եզրին: Այո, այո, զգույշ եմ, ի՞նչ կարիք կա մի զոհ էլ տանք... Ցածր կամարակապը, կամրջաչքը արնոտ կոկորդ է թվում, պոչը հատած հրեշ ու երևի առաջինն է այս կարմրաքար կամուրջը, որ լավ կլիներ հնում չլիներ...

Բայց շարժվենք:

Աջից բլուրներն աստիճանաբար հասակ են առնում ու նրանց տակ, ճանապարհի ձախ կողմից հայտնվում են մեծ ու փոքր լճակներ... Հազարավոր սև, ագռավասև բադեր խաղաղ ճոճվում են լճերի անհողմ ծփանքի մեջ: Իսկ այն ժամանակ... Եղե՛լ են: Եղել են, երևի, ու երբ հանկարծ ամբոխը ջուր է տեսել, խենթացել է, իրեն նետել ցած, ջուրը, երևի սևուկ, սիրունիկ բադիկները սարսափելի գոչյունով թևերին են տվել ու զարմացած բարձրացել

օր: Օդ են բարձրացել, դարձել սև ամպ ու դրա տակ վայնասունով, հրճվանքի ճիչ-գոռոցով ծերերը, փոքրերը, կանայք լցվել են ջուրը... Պահող չի եղել, ոչ էլ՝ կրակող, երևի (փամփուշտը պահել են դեռ կամքը չկոտրածների համար): Հաշվարկը պարզ էր ու հանճարեղ. ֆաշիստները մահի հանճարն են՝ օրերով ծարավ պահել ու անսպասելի դեմ անել մի ամբողջ լճի... Անհագ խմել են... Մնացել տեղում... Տիղմը մեծին քաշել է, փոքրը դառել է ջրի պղպջակ ու ջրի ծփանքը նրան վերջին անսիկն է ասել... Լիճը խաղաղվել է, լռել է, բադերը վերադարձել են իրենց լքված բները. բադերը վերադարձել են...

Դանիելի ձայնը սարթ երկար է:

— Կրնաս ջուրը մտնիլ, ձեռքդ խորացնել տիղմի մեջ, ոսկորներ հանել... Ես քանի մը անգամ փորձած եմ: Պուլտոզերը լճի հատակով անցնե՛ սար ոսկոր կելլե հոս տեղեն...

Ապշելու բան՝ մտքովս չի անցնի, որ Դեր-Ջոր անուն քաղաք կա: Եփրատի աջ ափին հարյուր հազարանոց, ժամանակակից քաղաք: Դանիելն այստեղ երկար է աշխատել, ճանաչողներ ունի: Յոթ հայ ընտանիք է մնացել. առաջներում շատ են եղել: Երեսնական թվականներին ի հիշատակ եղեռնի զոհերի այստեղ եկեղեցի է կառուցվել: Գրիգոր Տեր-Մովսիսյանը, քչախոս, ամփոփ մի երիտասարդ, իր ավագ եղբոր Տիգրանի հետ, որ տիրություն է անում այս գոց եկեղեցուն, եկան բացեցին բակի դուռը: Կիսափրատակ մի բան. ներս մտնելն անգամ վտանգավոր է, բայց չմըտնել չենք կարող... Ծանր տպավորություն. ամեն ինչ քանդված, բորբոսնած, հնացած: Եկեղեցուն կից կառույցը դպրոց է եղել՝ երկու-երեք փոքրիկ դասարան, նստարանները դեռ տեղն են, դեռ մեծ պատանոցներին հայոց այբուբենն է կախված, ծոված, փոշու մեջ կորած հայրենասիրական կոչեր...

Մի տեսակ ցուրտ մտավ մարմնիս մեջ, աննկատ մանր դող... Դրսում, եկեղեցու պատի տակ թաղված նահատակների ոսկորներ, որ ժողովել են անապատից... Տիգրանը պատմում է, որ

Ֆրանսահայեր են եկել մի բաժին ոսկոր տանելու Ֆրանսիա՝ այնտեղ կառուցվող հուշարձանի տակ թաղելու... Մասունք է: Ծրկու եղբայրները կտրուկ արգելել են:

— Մասունք է, այո, հուշանվեր չէ՝ բաժան-բաժան անենք: Այստեղի վկաներ են, հոս ալ թող մնան...

Եղբայր Վարդանը տեղեկացնում է, որ եկեղեցին քանդելու են և տեղը նորն են կառուցելու՝ հուշարձան-համալիր, որ նախագիծը պատրաստ է արդեն, իսկ հեղինակը Սարգիս Բալմանուկյանն է: Սարգիսը Երևանում ուսանած ճարտարապետ է, հայ դասական մտավորականի շենք-շնորհքով: Հալեպում իր մի օրը տրամադրեց ինձ, ոտքով պտտեցինք սրա հին թաղամասերը, ճարտարապետական բարձրարվեստ նմուշների մասին պատմեց, հիացավ, հիացրեց: Ծշմարիտ արվեստագետի նման ցավեց, որ չեն հասկանում սրանց արժեքը, չեն խնայում, որ կարծես նոր են գլխի ընկնում...

Հալեպի շնորհալի երեխաների համար գործում է նկարչական (ինչպես իրենք են ասում՝ գծագրության) դպրոց՝ «Սարյանի անվան ակադեմիա»: Սարգիսն է ղեկավարը: Ժպիտս չեմ կարողանում թաքցնել՝

— Ծատ չէ՞ ակադեմիա:

Սարգիսը նույնպես ժպտում է՝ այդպես ավելի հրապուրիչ է, ձգողական է պատվասեր ծնողներու համար:— Հետո միանգամայն լուրջ շարունակում է.— Սարյանի անվան հետ կապված ամենն արդեն ակադեմիա է...

Երեխաները սովորում են անվճար, համենայն դեպս, Սարգիսն անվճար է աշխատում:

— Ինչու՞, եղբայր, ուսուցանելը ծանր գործ է, վերջապես, ժամանակ ես վատնում. համայնքը չի՞ կարող...

— Վեց տարի իմ ժողովրդիս հաշվին Հայրենիքումս ձրի ուսում առած եմ, հիմա հոս, նյութապաշտ այս աշխարհում, հայ

մանուկներուն պարտքիս գոնե չնչին մասը պիտի վերադարձնեմ...
Մնացյալը հոգ չէ, կերպով մը կապրինք...

Սարգիս Բալմանուկյան՝ ճարտարապետ, մտավորական, ծնունդով՝ այնթափցի...

Եփրատ գետը... Քո ապրանք քաղաքում միշտ մի տուն կա, մի դուռ կա, որ չես ուզում բացել, մի փողոց, որով չես ուզում անցնել. ծանր մի հուշ, դառնավուն մի դեպք կամ թաքուն մի ամոթ կապված է դրա հետ... Չես ուզում, քանի որ մարդս ինքն իրեն իննայելու բնագր ունի, բայց... Բայց անցնում ես, ճար չկա, քո ճամփան է... Եփրատ... Այնքան լսված, այնքան հոլովված, պատմած-պատկերված... Ինչ-որ բան պիտի կատարվի ինձ հետ, բայց չի կատարվում կամ թվում է, թե չի կատարվում... Ժամանակակից կամուրջ, ժամանակակից մոդեռն մեքենաներ աջ ու ձախ եմ անում: Քիչ վերև հիմ կամրջի մնացորդն է, որ տանում է, տարել է դեպի անապատ...

Եփրատ... Չէ, կանգնիր ափին, մի քիչ երկար կանգնիր ու իրենք իրենց մտքեր կգան, տեսիլքներ զանազան, հուշեր՝ անկապ, վայրիվերո... Մեկ էլ կգնաս կհասնես Տիգրան Մեծի ժամանակները, գուցե և ավելի խորքերը գնաս, սակայն ինչքան էլ գնաս, ուր էլ գնաս, նույն ճանապարհով ես հետ գալու ու կանգնելու ես թիվ տասնհինգի վրա... Ու բոցը կխանձի էությունդ, միտքդ կդառնա հարբած կապիկ, կթռչկոտի էս ափից էն ափը, էն ափից՝ էս, ու չի փրկի քեզ ոչինչ, նույնիսկ բնության այս հրաշք գեղեցկությունն գետը, նրա զուլալ ջրերի առողջ հոսքը, անուշ խշշոցը, որի միջից հայի ականջին ուրիշ ձայներ եմ հասնում... Գետն ինչ անի, քարն ինչ անի, անապատն ինչ անի...

... Հազար դարում հագիվ դառավ Մարդասպան...

Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

Օրն անցնելու վրա է, բերաններս մի փշուր բան չենք դրել-
չուզեցի՞նք, թե՞ մոռացանք, թե՞ ամոթ էր ու ամաչեցի՞նք իրարից:
Չգիտեմ, այդպես եղավ...

— Անոթի ենք...

— Չէ, պարոններ, հետո: Եփրատն անցնենք, անապատ
մտնենք... Այսպես:

Իրար հասկացանք:

Անապատ... Գնա, թե վերջը գտնես, գնա, թե մի քոլ գտնես,
մի թուփ, մի թումբ, որ գլուխդ արծացնես արևի կրակից կամ
գիշերվա քամուց, ցրտից: Դե գնա, մարդ, վերջապես քեզ համար
էլ ոչ մի հույս չմնաց... Ոչ մի տեղից: Առջևում ամենակուլ անա-
պատն է, թիկունքդ կտրել է առնափուտ զինվածը...

— Աչքդ վախեցրել եմ, կամքդ կտրել:

— Հույս չկա, ուրեմն...

— Չէ:

— Ուզում եմ ապրել...

— Մարդու տեսք չունես, ինչի՞դ է պետք:

— Բայց տունս...

— Քոնը չէ:

— Հիշողությունս...

— Սպանված է:

— Բայց ես...

— Դու չկաս: Քանի՞ եմ քեզ:

— Բա Աստված... Աստված... Բա Աստված...

Դանիելը վկա է... Դանիելի բնույթը անարդարություն չի տա-
նում, Ձեռք չի պարզում Դանիելը ու չի հաշտվում ծով արշան հետ,
չի բարիշում... Պրպտուն միտքը, խանձված ու դաղված հոգին
արթմնի է միշտ, որոնել է, ամեն պուճախ է մտել, գտել է... Դա-
նիելը, հիշողությունը չկորցրած վկա է այսօր, վաղը, հավիտյան...
Դանիելը սպանության համաշխարհային վկան է...

— Այս այն տեղն է... Հարյուրավոր կիլոմետրեր ճամփա ան-

ցած հայը փալաս-փուլուսըց ըտրաս է սարքել, իրեն պատկերացրել եկեղեցում ու իրիկնադեմին աղոթք արել...

— Փրկությա՞ն...

— Հաստատելու, որ ինքը կա, ու տակավին հնչում է Հայոց լեզուն...

— Այս այն տեղն է... Հայուհին ողջ մնացած իր ձագուկի համար ավագի վրա մատներով նկարել է սուրբ Մեսրոպի տառերը... Ու կրկնել է հայու ձագը մորն օրհնակելով՝ այբ, բեն... Դեր-Ջոր հսկա, ահռելի, ահավոր, անհույս անապատում թույլ, սովալլուկ ձայնով հնչեցրել է երեխան՝ Այբ, Բեն, Գիմ, Դա...

— Այս այն տեղն է...

— Կաց, Դանիել... Քայլենք, մի փոքր լուռ քայլենք...

Անապատն ամեն ինչ դարձնում է խառնիխուռն, կիսավարտ, միմյանց հրմշտելով գալիս են պռատված մտքեր, պատկերներ գանազան, լցվում բորբոքված ուղեղիս մեջ ճչոցով, ճանկոտտելով ու ժխոր է, իրարանցում, դժժոց է ուղեղիս մեջ... Եվ հանկարծ փայլատակում է միտքս, ու հստակ տեսնում եմ... Այո, մեր տան բակն է...

Աքլոր ունեիսք՝ կաս-կարմիր, կրակի կտոր: Հպարտ քայլվածք, արժանապատվության մարմնացում, տերն էր բակի... Եթե հարևանի աքլորը մտներ մեր բակը, կորած էր... Ուրուրը երևար օդում՝ ազդանշան էր տալիս, հավ ու ճիվ թաքնվում էին թփերի տակ, ինքն, ի տես աշխարհի, կանգնում էր, վիզը թեքում, աչքահարում երկինքը՝ ուրուր ես, ով ես՝ արի... Արծվի սիրտ ուներ: Իսկ եթե օտար կատու կամ շուն մտներ իր տիրույթները, դառնում էր կարմիր պատիժ... Թները թափահարելով գրոհում էր, վրա էր պրծնում, հալածում մինչև սահմանը... Չէր հասկանում, որ դիմացինը գազան է, իրենից ուժեղ ու մեծ, շատ... Չէ, ով էլ լինես՝ իմը ինձ...

Մթնում է, չենք հասցնելու վերադառնալ Հալեպ. Դեր-Ջորից թեքվելու ենք, ինձսուն կիլոմետր գնանք ուրիշ ճանապարհով դե-

պի Այնարու գյուղը: Արուշի հոր տունը, որ թուրքի սահմանին է, Ուրֆայից վաթսուն կիլոմետր...

Արուշը կենտրոնացած, արդեն մթան մեջ, առաջ է մղում իր մեքենան: Կարծում էմ եղբայր Վարդանը հոգնել է ու թերևս ննջում է իմ թիկունքին: Եղբայր Դանիելը «Պատմագիրք, հուսաշմատյան Սերաստիո և գավառի հայության» հաստոտ գիրքը ծնկներին, մթության մեջ պլկատացնում է խելացի աչքերը...

— Խորհրդային տուրիստական խումբ եկած էր,— անկիրք պատմում է Դանիելը,— բերին ձեր մասնագետներու կողմեն կառուցվող ամբարտակը ցուցնելու: Ծառվոր էին: Մեջներուն երիտասարդ մը ուզեց իջնել Եփրատի ափը, սակայն ոստիկանն արգելք եղավ: Տղան աղաչեց, ըսավ՝ Եփրատը տեսնելու համար եկած է Սուրիա... Միջամտեցի՝ թույլտվություն առինք: Նետվեց ցած, շորերով նստավ ջուրին մեջ... Ավազը ձեռքերու երկու ափով կհավաքեր ու վրան կլեցներ, ջրախառը ու կուլար, անձայն կուլար... Կկարծեմ նախնիները հոս...

— Ամոթ չէ՞ր:

— Ամոթ էր,— իսկույն վրա բերեց Դանիելը, միտքս հասկանալով,— մեր կամքը պիտի կոփենք: Ողբ անելու ժամանակն անցել է...

Չախից անապատելի ու հանկարծ, ամպերի տակից դուրս է սողում նորալուսինը՝ բարակ ու կեռ... Յաթաղանի նման... Ցածր էր, իջել էր ցած, գրեթե մեզ հավասար էր... Մեր թեքվելու հետ փոխում էր դիրքը, հայտնվում աջից ու ձախից, ու մեկ էլ, լկտի հուրհրատելով հայտնվում մեր քթի առաջ, կարծես ուզում էր հիշեցնել, թե ուր էմ եկել և ինչով է լեցուն սիրտս...

Հարևան... Դրացի...

Մենք պիտի ապրենք, նրանք էլ մեր կողքին, մենք չպիտի մոռանանք, նրանք երբեք չպիտի ներեն մեզ շնոհանալը՝ «Անողը արծավ, ասողն ընկավ»:

Հարևան... Անունն արդեն վախ, անունը՝ սարսափ-անունը՝ մահահոտ...

Կիսալուսին... Կաս, դեռ կաս, գիտեմ... Խաչտում ու խաղում ես՝ աշխարհին ու մեզ հիշեցնելով, թե ինչի է ընդունակ քո կեռ սրությունը... Էդ ինչի՞ց ես այդքան կարմիր, այդ ինչու՞ ես այդքան կարմիր...

Քրիստոնյա ժողովուրդ, աստվածավախ... Վախ... Ասենք, հավատում էիր, որ աստված է ստեղծել քեզ ու ապավինում ես նրան, բայց նա հո քո դայակը չէ՞, որ պոչիցդ բռնի, ինչ է թե քեզ բան չպատահի: Չէ՞ որ աշխարհում երկու տեսակ գոհվել կա՝ սպանվել ու... մորթվել: Ինչու՞ հավատացիք, ինչու՞ շմեկստեղծեցիք, ինչու՞ զենք չվերցրիք... Ուրիշինը հո չէի՞նք ուզում, մերն էինք պահելու... Մեր արուն ինչու՞ և ինչի՞ն հավատաց, մեր էզն ինչու՞ կորցրեց իր բնագդները... Հազարներն ինչու՞ անմոռունչ քայլեցին հազարավոր կիլոմետրեր: Էդ ու՞ր էին գնում, մի՞թե չգիտեին, չէին հասկանում ուր են քշում իրենց... Բահն ու եղանը, ատամն ու եղունգը լավ զենք չեն, բայց զենք են...

Վերջապես մտանք Այն-Արուս գյուղը՝ «Հարսի աղբյուր» կընշանակի: Արուշենց տան առաջ հավաքված մարդիկ ուրախության բացականչություններով դիմավորում են մեր մեքենան: Այդ նույն օրը Հալեպից տղերքն են եկել՝ Ալեքսանը, Հրաչը, Գևորգը, Վաչեն, Վիգենը: Անհանգստացել են, քուրքավորվել են, դուրս են եկել փողոց: Աստվածներ... Գիտեն ուր են գնացել, գիտեն ինչ ճամփա են գնացել, եկել են տեր կանգնեն: Չարները տանելու տղերք...

Արուշի հողագործ հայրը՝ Գևորգը, բարձրահասակ, ջլուտ, միհարավուն մարդ, արևից խանձված, կոշտացած դեմքով, ժպտերես... Տիկին ժանետը՝ նույնպես ժպտերես, տաքուկ, սրտաբաց հայոց տանտիկին... Տոհմիկ ավանդույթները պահած օջախ... Արաքստանի խորքերում կարծես հորս տուն են ընկել...

Մեզ կարգի ենք բերում, սեղանն էլ պատրաստ սպասում է...

Տղաները քեֆ են անում, միմյանց ձեռն առնելով կատակում, խըմբովին երգում են ու, ինչպես աշխարհի բոլոր հայերը՝ անհաջող: Չէ, դեռ մեր երգն էլ չենք կարողանում մեկտեղել: Ավելի հաջող մենակատարում են: Հետո մազնիտոֆոն՝ հայոց երգ ու պարելանակ, հետո մեր աղմուկի վրա գալիս մեզ է միանում հարևանը՝ երիտասարդ մի արաբ... Խորվիրապից դուրս եկողի նման եմ ըզգում ինձ, ու շնորհակալ եմ, անչափ, ինձ պարզած ձեռքերի համար, ինքս էլ ուժ եմ տալիս ինձ, մարդիկ հատուկ հասել են այստեղ...

Հարմար ու տաք, մաքուր ու փափուկ անկողնում քնեցի...
Լուսաբացին աչքս կպավ...

Հաջորդ օրը, համարյա կեսօրին, հետ ենք դառնում Հալեպ:
Ուրիշ ճանապարհով:

— Հոս մի տեղ կա, պիտի մտնենք,— կարգադրում է Դանիելը:

Ճանապարհից շեղվում ենք, մտնում բավականին մեծ մի քաղաք:

— Բար՝ այդպես է քաղաքի անունը: Դուռ է նշանակում: Այս «դռան» մոտ դահիճը որոշել է գվարճանալ: Աքսորյալների՝ երեխա ու կինարմատ, արդեն մերկ, գրեթե մերկ, հոհուալով լցրել են քաղաք: Ժողովուրդը դուրս է թափվել թամաշի:

— Աս քաղաքը չեմ սիրեր,— ասում է Դանիելը. աչքերի կոպերը նեղանում են, աչքերը դառնում են մանր կայծեր:— Այդպես ալ չհասկըցա՝ ասոնք ինչ մարդիկ են...

Տկյոր բազմությունն առաջներն արած քաղաքի մարդիկ (մարդի՛կ...) քշել են նրանց դեպի հրապարակ՝ քրքիջով, վայրենի գոչումներով, սուլոցներով, քարկոծելով... Կանայք կուչ են եկել, երկուտակվել են, ոսկրոտ ձեռքերը տարել են ծածկելու կուրծքները, ամոթը... Բայց քաղաքից հնարամիտ մարդիկ (մարդի՛կ...) ճիպտուներ են ճարել... դաղել են ամոթը թաքցնող ձեռքերը, ձեռքերից ճարպիկ ճիպտուններով...

— Ուղղադասական ժողովուրդ,— բղավել են թուրք ուստիկանները,— տեսնու՛մ եք անհավատ հայերի կանաչք ինչքան են լիրբ ու անամոթ, տեսնու՛մ եք, քամակները քաց, օրը ցերեկով քաղաք են մտել ձեր պատվական տներն ապականելու...

Խրախճանքը, թամաշան գնալով շիկացել է, տնել մինչև ուշ գիշեր, արդեն ջահերի լույսի տակ...

— Հոս շատերը նահատակվեցան, գուցե և ամոթեն...

Բար... Դուռ... Դժոխքի դուռ, Հալեպից երեսունվեց կիլոմետր ընդամենը, ուր կային անգլիական, ֆրանսիական ու էլի ինչ-որ «ական» քաղաքակիրթ երկրների հյուպատոսարաններ...

Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան...

Այսքան:

Ծնորհակալ եմ, եղբայր Դանիել, առյուծասիրտ ծերուկ, որ դու կաս, շնորհակալ եմ մեր զրույցների, քո պատմածների համար: Չիմանեցիր ինձ ու լավ արիր: Մենք մեր մասին ամեն ինչը իմանանք՝ դժվար է, դաժան է, ամոթ է՝ ճշմարտությունն է: Ծշմարտությունն է ուժը: Ծատերը կան՝ եղերական պատմություններ լսել չեն ուզում, մյուսները կարդալ չեն կարողանում՝ նյարդերը չեն դիմանում, ոմանք էլ տարզապես ամաչում են՝ յաթաղանին հլու միս ենք եղել, կամ էլ անհատույց վիրավորանքն է խեղդում...

«Թուրքը վրա տվեց՝ փախանք... Փախեփախի ժամանակ...» Ինչքան եմ լսել այս խոսքերը: Մինչև հիմա հումոր ենք անում՝ «Էդ ու՛ր ես այդպես լեղապատառ փախչում, թուրքերը գալի՛ս են...» Մի անգամ վախեցել ենք ու ազգովին իրար վարակել...

Անդրանիկը (հորս պատմածն է) մտնում է Ջալալօղլի, միտինգ է անում, կոչ է անում գենք վերցնել (քանիտրորդ անգամ), սակայն երկու աղվամազ երիտասարդ միայն՝ հայրս ու իր ընկեր Լիպարիտն են գնում հետը: Այսպես է եղել: Ջալալօղլուց ու նրա գյուղերից ընդամենը երկու մարդ: Այսօրինակ քանի՛-քանի ամաչելու պատմություններ: Բայց ինչ անես, որ եղել են: Իսկ այնու-

հետև՝... Այնուհետև տասնյակ տարիներով համրացան մեր «նախ-
նիները»: Պատմությունը ճշմարտության հետ փակի տակ դրին
վախից, քայց, հավանաբար, նաև ամաչելուց, որովհետև ով ասես,
ինչպես ասես քայքայում էին գորթը, կազմալուծում եղած բա-
նակը: Այդ ամոթ ու շփոթ տարիների իսկական ճշմարտությունը
ե՞րբ ենք իմանալու, ո՞ր ազնիվ պատմաբանից: Եթե չասենք, շի-
մանանք, ինչպե՞ս նորանանք, ինչպե՞ս վերակառուցվենք, ինչպե՞ս
հավատանք, որ մեզ մոտ էլ բացախոսություն է...

Ամաչում ենք՝ հատուցում չի եղել... Իսկ նրանց, որ տեր են
եղել հեզ ժողովրդին և ուզել են հատուցել, որպես ժողովրդի թըշ-
նամի, քշեցին ցուրտ տեղերը... Հիմա էլ վախը «ժողովուրդների
հայր» Ստալինից էր: Սա թերևս ավելի է ամաչելու:

Մինչև կյանքի վերջը չկարողացա հորիցս իմանալ, թե քուն-
քից ծնոտի վերջն իջնող սարսափելի սպին որտեղից է: Ամեն ան-
գամ հարցումս լսելով, աչքերը խոժոռում էր վրաս ու վախեցած
շուրջը նայում: Ստալինը մեռավ, իմացա՝ Ալաշկերտում կուլի ժա-
մանակ թուրքի յաթաղանն է այտը ճղել, ատամները կողքից
բացել...

Հայեցի տղան դարձել է ձեռից բաց թողած տոնակաև փու-
շիկ՝ գույնզգույն, պատահական հոսանքի հետ պար է գալիս...
Սմբատ գորավարի կյանքի գիրքը չկա՝ տաս ձեռը կարդա, Աղ-
բյուր Սերոբի, Գևորգի, Արաբոյի, հարյուրների... Հարցրու՝ ե՞րբ
է մահացել Անդրանիկը, որտե՞ղ է թաղված. համրություն: Այսպես
հերոս կպահե՞ն: Ամոթ: Բայց եկեք ամոթից ու վախից հետո
սովորենք...

Եվ քեզ եմ շնորհակալ, եղբայր Վարդան, քո նրբանկատու-
թյան համար, թաքուն ապրումների, որ կցկտուր կիսեցիր հետս,
ինձ խնայելով... Շնորհակալ եմ, Արուշին, որ մեծի հարգը գիտի
և միջամտելու պահը:

Դպրոցի պարոն տնօրեն Ալեքսան, հայրենահոտ, օրինակելի
մարդ: Գիտեիք, որ ծնկածալվելու էի Դեր-Չորի հետդարձի ճամ-

փին, հասար, ձեր հգոր ուտերը դեմ արիք, ուժ տվիք... Այո, բարձրացիր՝ բարձրացրու...

Եղբայր Հովհաննէսը սպասում է ինձ վաղուց, ջուր կտրած աչքը հառում է վրաս, զննում՝ հասկանալու համար վիճակս: Ու ոչ մի հարց, կարգադրում է.

— Մեզի պիտի երթանք, պատվիրել եմ, Լուսինը աղվոր կերակուր եփած է... Վաղը վարսավիրանոց պիտի երթանք... Հիմա քիչ մը պիտի հանգստանաս, երեկոյան փորձի պիտի երթանք...

— Այո, Հովհաննէս ջան, փորձի, թատրոն, սիրելի իմ դերասան ընկերների հետ լինեմ, հոգիս հանդարտվի, ինձ տանը զգամ...

Պարոն Մելքոն Ծամամյանն է զանգում...

— Ինչպե՞ս ես, Սոս:

— Ողջ եմ, եղբայր Մելքոն:

Ժանոն է զանգում, Ժան Ծառան:

— Ախպերս, եկա՞ք, որևէ բանի կարիք ունի՞ս, գամ: Կուգե՞ս գամ:

— Արի, Ժանո ջան:

Վահե Սամվելյանն է զանգում.

— Սոս, եկա՞ր...

— Եկե:

— Լա՞վ ես...

(Ծիծաղում եմ):

— Որևէ բանի կարիք ունի՞ս...

(Ծիծաղում եմ):

Պարոն Մազլումյանն է զանգում.

— Պարոն Սոս, վերջապես տեղ հասար... Տիկին Սալլին քեզի համար անհանգիստ եղավ...

Գոթոն է զանգում, իմ սիրելի տղան, համեստ ու պարկեշտ, ուղղամիտ:

— Սոս քան, պանդոն՝ն ես արդեն...

— Իհարկե...

— Առո՞ղջ ես... Հիմա կուգամ:

Գալիս է քիչ հետո՝ ձեռքին գազարի թարմ հյութ:

— Սա քեզ հիմա անհրաժեշտ է, խմիր:

Սորեն Սրբազանն է զանգում.

— Եղբայր իմ, ամեն ինչ լա՞վ անցուցիր...

— Շնորհակալ եմ, Սրբազան:

Դամասկոսից են զանգում: Ոսկան Սրբազանն է զանգում.

— Էհ, ինչպե՞ս ես, վերադարձա՞ր...

Մի հայ մարդ յոթանասուն տարի հետո անցել է Դեր-Չորի ճանապարհը ու թեև խաղաղ է աշխարհն այժմ, բայց համայնքի մեջ անհանգստություն կա, սարսափ կա այդ անունից՝ Դեր-Չոր... Տեղի անուններ են ընդամենը՝ Օսվենցիմ, Բուխենվալդ, Դեր-Չոր...

— Կարմիր տղան կապատե...

Էհ, գնանք, վայելենք տիկին Լուսինեի եփած կերակուրները:

Փողոցներից մեկն անցնելիս եղբայր Հովհաննեսը շուտ է գալիս ինձ.

— Այս ձախի շենքը կոտանե՞ս: Բարեգործականի կառուցած մայրանոցն է:

— Հա, լավ է...

— Ապրիլ ամսուն մեջ ծնված բոլոր տղաքը Վրեժ անունը կունենան, աղջիկները՝ Վերժուհի... Երիտասարդ մեկը կա, անոր գաղափարն է ատիկա և այդ ողջ ամառը ծնվածների ու մայրերու բոլոր ծախքերը ինքը կհոգա...

— Իսկ իր անունն ի՞նչ է:

— Չեմ կարող ասել... իր ով ըլլալը գաղտնի կպահե:

— Դե, ինչ ասեմ, Հովհաննես... Հայ ծնվելն էլ վրեժի պես մի բան է արդեն...

— Այո, իհարկե, կհասկանամ...

Հոթել «Բարոնը» հին է. ութսուն տարեկան: Ժամանակին լավագույնն է եղել Հայկում: Գրիգոր Մազլումյանի հայրն ու հորեղբայրն են կառուցել: Պարոն Գոթոն պատմում է, թե ինչու է հոթելը կոչվում «Բարոն»: Նրա ծառայողները տերերին դիմել են պարոնով. օտարները լսել են ու որոշել, որ սրանք հայ բարոններ են: Եվրոպայից նրանց հասցեագրված նամակները հենց այդպես էլ վերնագրել են: Հիմա հյուրանոցի փողոցն էլ «Բարոն» է կոչվում: Այսպես: Հայոց մի բուն է, փոքրիկ օջախ, հանդիպման վայր, ինչ-որ չափի հայապահպանման խորհրդանիշ: Երևելի մարդիկ են այստեղ իջևանել, այս իմաստով հարուստ պատմություն ունի հոթել «Բարոնը»՝ դեսպաններ, հյուպատոսներ, Գրիգոր Չոհրապը և, նույնիսկ, այո, Թալեաթը: Այստեղից հեռագիր է ուղարկել, ջարդերը դեկավարել է այստեղից: Պարոն Գոթոն պատմում է, որ Թեյերյանի դատավարությունը շահվեց, որովհետև քրքրել են հյուրանոցի արխիվները, գտել են այդ հանցագործ հրամանների պատճենները և որպես ապացույց ներկայացրել են դատարանին:

Որքան էլ տարօրինակ լինի, թուրքերը հաճախ են իջևանում այստեղ (իմ ժամանակ էլ կային), ասում են՝ հանցավորին հանցանքի վայրը քաշում է:

— Վերջերս, — պատմում է Գոթոն, — մի խումբ է եկել և, իմանալով, որ Թալեաթն այստեղ ապրել է, զարմանքով դիմել են իրեն... Եվ այդ սենյակը դուք թանգարան չե՞ք շինել: Ի՞նչ ասես՝ դահիճ սիրող են:

— Ո՛չ, չենք շինել, մանավանդ միտք չունենք հյուրանոցը գազանանոցի վերածել... — Այսպես է պատասխանել Գոթոն:

Արշիլ Գորկու կինն է եղել, Ազաթա Քրիստին այստեղ է գրել իր սարսափազդու երկերից մեկը: Էլեկտրականության մեծ պակաս կա Հայկում: Նույնիսկ հյուրանոցը օրվա մի քանի ժամն է լուսավորվում: Պատահում է՝ խարխափելով բարձրանում ես աստիճանները, հիշողությամբ անցնում սև, մութ միջանցքերով, մինչև

հասնում ես քո սենյակը, մի փոքրիկ մոմ վառում: Գիշերները զարմանալի լուսություն է տիրում հոթել «Բարոնում» և ամեն մի թույլ թրխկոց, շշուկ, թե հատակի ճոռոց ցնցում է քեզ և ակամա մտաբերում ես Ագաթա Քրիստիի հորինվածքները... Ու եթե այդ պահին հանկարծ չկշկոցով մեկը վազի միջանցքում, կանգ առնի դռնանդ տակ ու ծանր հևա կամ ֆոշտացնի... Մթնոլորտն այնքան է խորհրդավորվում, այնպես են լարվում ջղերդ, որ հազիվ ես գլխի ընկնում՝ պարոն Գոթոյի շունն է, չէ՞, գեր ու ծուլ Բոշան... Հոթել «Բարոնը» լեցուն է անցյալով, պատմություններով, հազարավոր մարդկանց անուններով, որ ապրել են այստեղ. հնություն է բուրում օդում և, ով գիտե, գիշերները չե՞ն կենդանանում, արդյոք, նրանց հոգիները ու չե՞ն հանդիպում իրար այս խավար միջանցքներում, և ի՞նչ է պատասխանում Թալեաթ մարդ կոչվածը տիեզերական հարցականներով լեցուն Չոհրապի ոգուն...

Առավոտները սովորաբար մեկ ժամի չափ իմ սենյակում մեճակ եմ լինում. կարդում եմ: Հիմա ձեռքիս Անդրանիկ Ծառուկյանի «Նոր Հայաստան, նոր հայեր» գիրքն է: «...Եվ ուր կերթար Հայաստանը,— այս տողերն եմ կարդում,— թառ չունեցող, կեր չըգըտնող թռչունը ուր կերթա, եթե ոչ իր տաքուկ բույնը, այնտեղ փակելու աչքերը...»

Դռան թակոցի հետ ներս է մտնում հավաքարարը՝ դեղնած, ճնրթված դեմքով ծեր մի կին:

— Կարելի՞ է քիչ հետո գաք, ես գնալու եմ:— Ասածս չի հասկանում, երևի:

— Չէ, կխնդրեմ, որ քու սենյակը ես շտկեմ...

— Է, լավ...— քայլում, շարժվում է անձայն, իսկ ավելի ստույգ՝ ամեն շարժման հետ տնքում է կարծես ցավից:

— Քանի՞ տարեկան եք, քույրիկ:

— Յոթանասունհինգ,— գլուխը չբարձրացնելով պատասխանում է քույրիկը:

— Զավակներ ունե՞ք:

— Ունիմ:

— Քանի՞սը:

— Երեքը. քու ձեռքը պազնեն: Մեկ տղա, երկու աղջիկ:—
Ու անսպասելի տնքոցը մղկտոց դարձնելով, աչքերը չոռւմ է վը-
րաս:— Ինչու՞ Հայաստանը մեզի չի տաներ, այ ուժ չմնաց հոս...
Աղբարդ ինձ մեճակ ձգեց, մեռաւ... Ի՞նչ կատես, գրել տա՞նք մեր
անունները... Կտանի՞ք....

— Մի քիչ բարդ է, քույրիկ...— ձեռքի անհույս շարժումով
խոսքս կտրում է, մշուշոտ հայացքն ինձ արած լաց է լինում ան-
օգնական, անուժ...

— Ինչո՞ւ... ինչո՞ւ... կռանում, շտկում է բարձս ու հերթա-
կան ծանր տնքոցի հետ մի բուն արցունք շաղ տալիս վրան. ֆրս-
ֆսալով, քիթը քաշելով գործն ավարտում է:— Իմ հարս օտարազգի
է, չուզեց ինձի հետ ապրիլ, իմ տղան առանձին կապրի... Ես միս-
մինակս... Հեծկտալով դուրս գնաց:

...Գեղեցիկ են երազները, երբ տեղ մը կտանին,— շարու-
նակում եմ կարդալ Ծառուկյանին,— ողբերգություն են երազները,
երբ տեղ մը չեն տանիր, այլ իրենք տեղ մը կդառնան, ու մարդը
կտեղավորվի երազին մեջ...

Վերադառնալու եմ Հայաստան՝ գործեր, հոգսեր... Մոռանալու
եմ շատ բան: Մոռանալու եմ, հավանաբար, և այս ծեր քույրիկին,
ոռի հարսն օտար է, որին, ինչպես հասկացա, տանից դուրս են
արել: Մորը տանից դուրս անող էլ կա... Պատահում է: Նրա ծնա-
ծին սեփականացնում են, ուրացնում են՝ իրեն դուրս են անում:
Պատճառ որքան ասես գտնում են... Բայց...

Բայց՝ էտո տամ, դալեկո...

Ոչ միայն պետությունները, մարդն էլ իր քարտեզն ունի, վրան
կետ-գծով նշած իր բնակության սահմանը, մեծ թե փոքր՝ իր նամ-
փան: Սփյուռքահայի կյանքի քարտեզը ո՞րն է, նրանց ապրելի

կետ-գծերը որտե՞ղ են սկսվում, որտե՞ղ են վերջանում, ու՞ր են տանում: Անորոշ, անորոշ գոյություն...

Ոսկե կուզա Կաղանդ Պապան...

Կաղանդ Պապան կուզա Հայաստանեն...

Իսկ Հայաստանի հարևանը էլի Թալեաթն է: Էզոլը Էրզրում միտինգ է անում. տասնհինգին քեֆն արել են, հիմա խումհարի մեջ են, այսօր զարթոխում են անում: «Մենք այնքան ենք ուժեղ, որ կարող ենք Արարատի այն կողմն անցնել: Ուր են հայերը՝ թե տղամարդ են, թող գան, վերցնեն հողերը... Թուրք պատմաբան Գարկարը գիտական հենք է տալիս սրան: «Հայերն Անատոլիայում, չորրորդ դարից սկսած, փողով հողեր են գնել ու վանքեր են կառուցել իրենց չպատկանող հողերի վրա»: Էհ, մի սուտ ավել, մի սուտ պակաս, ի՞նչ նշանակություն ունի... բայց ո՞ր տանեն սփյուռքահայի կյանքի կետգծերը, քարտեզի ո՞ր տեղում հանգրվանեն, Հայաստանի սիրտը ինչքա՞ն մեծանա, որ կարողանա Սփյուռքի միլիոններին տեղավորել իր մեջ...

Մուհամմեդ Մուալիդի. Հալեպի նահանգապետն է: Լավ մարդ է, ասին, հարկ է, որ անոր հարգանքի տուրք տաս, մեզի պետք է...

— Էհ, թող լինի:— Նշանակած ժամից ուշ ընդունեց: Իսկապես հմայիչ մարդ էր, մեղմ, բարի հայացքով, հոգնած... Էս պետական մարդիկ, որ հոգնած են լինում, մարդ իրեն մի տեսակ մեղավոր է զգում... Ներողություն խնդրեց ուշացնելու համար:— Ֆրանսիական պատվիրակություն էր:

— Մեջներին կինարմատ կա՞ր:— Հարցրի:

— Այո...

— Ուրեմն ձեզ կարելի է հասկանալ,— ասացի,— ֆրանսուհիներից դժվար է բաժանվելը...

Ծիծաղեց նահանգապետը, մենք էլ, իհարկե, հետը: Սուրճ բերին, մի քանի կաթիլ լցրին գավաթիս մեջ. զարմացա:— Խըտացրած, հատուկ եփած սուրճ է,— ականջիս փսփսացին հա-

յերը,— փորձե, եթե հավնիս, գալարոյ անշարժ պահե, նորեւ կը-
լըցնե, եթե չուզես, գալարոյ աջ ու ձախ պտտե:

— Ավելի լալ չէ՞ խոսքով ասեմ:

— Է, կարգ է...

Զրուցեցինք պարոն Մուսլիդի հետ: Գոհունակություն հայտ-
նեց, որ մեր երկու երկրները լալ փոխհարաբերության մեջ են:
Ես էլ ինձ չկորցրի, ասացի՝ Հայկական հանրապետությունը մեծ
լումա ունի այդ բարեկամության գործում, որ մենք առանձնապես
շահագրգռված ենք, քանի, որ ինչպես գիտեք, այստեղ ապրում
են շատ թվով մեր հայրենակիցները...

— Գոհ ենք,— ասաց,— կարգապահ, աշխատավոր ժողո-
վուրդ եք, մեր երկրին օգտակար... Իսկ թատրոնն ընդհանրա-
պես մեծ դեր կարող է խաղալ ժողովուրդների բարեկամության
գործում, որովհետև ինքն իր էությամբ ժողովրդական երևույթ է...

Խոսք բացվեց Երևան և Հայեպ քաղաքների եղբայրանալու
մասին: Շատ կարևոր գործ մեր կապերը Արևելքում ամրացնելու
համար:

Նահանգապետը կարգին ոգևորվեց.

— Երջանիկ կլինեմ, եթե եղբայրության իրավունքով, այո,
եղբայրության, մի օր, առանց անձնագրի այցելեմ ձեր չքնաղ մայ-
րաքաղաքը:

Նա մի անգամ արդեն եղել է Երևանում և այդ մասին հիա-
ցած էր խոսում: Ապա, իմանալով, որ պատրաստում ենք Սարո-
յանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի բեմադրությունը, խնդրեց
իրեն ևս հրավիրել պրեմիերային: Հաստատ խոսք տվեցինք, բայց
խոսքներիս տերը եղանք: Խորհրդային դեսպանության հարցու-
մին՝ իմ այցը տասնհինգ օրով երկարացնելու մասին, Երևանը
(բայց ո՞վ) ասել էր իր չոր ու կտրուկ «ոչը»: Գլխացավանքից
հեռու:

Վերջում շնորհակալություն հայտնեցի ընդունելության համար,
կատակով ավելացրի, թե իմ հայրենակիցներին դեռ չենք տանում

Հայաստան, որովհետև ապրելու տեղը դեռ մնում է խլված մեզանից:

Ժպտաց նահանգապետը:— Սիրով, սիրով, թող մնան հայերը, եթե կարիք կա, էլի ուղարկեք, սիրով կընդունենք...

— Ձե, եղածին Աստված թող իր տանը պահի...

* * *

Միջահասակ, պատլիկ մարդ է իմ եղբայր Հովհաննեսը, քայքայ արագաշարժ ու խիստ գործունյա, պարտաճանաչ ու կարգապահ:— Ըտապ պիտի նկարահանվեինք, շտապ պիտի երթանք արևելյան բաղնիք, այնուհետև՝ վարժարան, հե՛տո՛ վարսավիրանոց, ակումբ, հետո... Ամեն ինչը պարտադիր, անհետաձգելի, անմերժելի, այս վայրկյանին: Իմ ուրիշը դանդաղ՝ գյուղացու, ինքը՝ սնդիկ: Մեկ-երկու՝ ըմբոստացա՛ Ջդերս չեն դիմանում, հոգնել են... (Եղբայր Հովհաննեսն ուշադիր, համբերատար, գլուխը թեք, լուռ սպասում է ու...— շատ բարի, թող ձեր ուզածով ըլլա, սակայն նկատի առեք, որ կսպասեն...

— Լավ, գնացիք:— Թթված տեսքով առաջ են ընկնում (արտաքնապետ). ներքուստ հպարտ են, որ իմ եղբայրը իսկական ասպետ է, խոսքի ասպետ:

Վարսավիրանոցում մեծավարպետ Կարոն ցուցադրում է իր հմտությունը: Բարեհամբույր, կյանքով լի երիտասարդ, իր գիճը չզցող արտիստ-արհեստավոր: Հաճախորդները հերթի են, ես էլ եմ սպասում...

— Կարոյին հաճախ Դամասկոս կհրավիրեն մեծավորներու մագ-մորուքը խուզելու:— Հպարտանում է Հովհաննեսը:— Մինչև անգամ...

Նրա խոսքն ընդհատում է պարզ հագնված մի երիտասարդ, որ սևեռուն նայում է ինձ:— Կուզեմ ծանոթանալ: Կարելի՞ է:

— Կարելի է, ինչու չէ,— մեծահոգաբար համաձայնում է Հովհաննեսը:

— Վրեժ Կարապետյան, Արաբոյի հորեղբոր թոռն եմ...

— Հա,— բացականչում եմ,— Արաբոյի հորեղբոր թոռը...

Միջահասակ, թուխ դեմքով, պինդ կազմվածքով տղա է: Գուցե հենց այդպիսին է եղել նա... նա, որ սկիզբ դրեց, նա, որ խախտեց համընդհանուր համրությունը, ու ծնվեցին իրենից «սպիտակուսկոր տղաները»... Ուրեմն, դեռ կան Արաբոյի ցեղակիցները... Հոսում է Արաբոյի արյունը ժողովրդի երակներում...

Էն ե՛րբ էր՝ թուրքը մորեխի պես լցվեց Հայոց աշխարհ, ու նրա ամեն գյուղ մտնելը մի չարիքի սկիզբ էր: Այդպես, դարը կուտակվեց դարի վրա, մեր հոգում շերտ-շերտ ավելացան երկշոտությունն ու բախտին հնազանդելը, շողախվեցին, դարձան ազգային բնավորության հոգեբանական հիմք... Մահի հոտ կանրանցից, ահի հոտ կա մեզանից... Ու ծնվեց «բարոյախոսությունը»՝ որտեղ հաց, այնտեղ կաց... Վախկոտի գլուխը ծակ չի լինում... Ամեն մարդ իր գլխի տերն է...

Այս վթարային ինքնագիտակցությունն էր, որ մեզ դարձրեց աստանդական ժողովուրդ...

Իսկ Քրիստոսը, հրեաների խաբեքա տղան, չի իջնում ու չի իջնում երկնքից, որ չարը պատժի, որ արդարություն սահմանի...

Արյան կարմիր, հեթանոս մի գնդիկ գլորվեց դարերի խորքից, գլորվեց-եկավ ծնվեց Արաբոյի սրտում: Զարկեցին նրա աջ այտին, ասաց՝ չէ, էս չեղավ, էս սխալ է, զենքն առավ ձեռքը, կրակեց... Զարթնեցին Էրզրի «Աղբյուրները»... Չլինեին սրանք, մենք մեզ ի՞նչ էինք զգալու, ինչպե՞ս: Այսօր մեր անունն ի՞նչ էր լինելու...

Որտեղ կովեցին՝ չպարտվեցին... Սասուն, Զեյթուն, Վան, Մուսալեռ, Ուրֆա, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, Սարդարապատ... Որտեղ որոշեցին համայն կործանվել՝ ապրեցին, որտեղ որոշեցին համայն փրկվել՝ կործանվեցին...

Արաբոյի հորեղբոր թոռ Վրեժ Կարապետյան, էս ինչքան է լավ, որ դու կաս...

Թատրոնը Ափյուռքում ժողովրդին մեկտեղելու միջոց է: Հալեալում մի քանի խումբ կա, որ սատարելու կարիք ունեն, խրախուսվելու, սակայն ոչ մի կապ Հայրենի թատերական միության հետ և ոչ մի օգնություն: Իմ տեսած ներկայացումներն ունեին և՛ գեղարվեստական մակարդակ, և՛ միտք, և՛ նպատակ, բայց նախ փաստն է ուրախալի: Չորս բեմադրիչն էլ այո, ուսումն ատել են Երևանում, պրոֆեսիոնալ են, գիտակ ու ճշմարիտ արվեստագետներ: «Ադամյան թատերախումբը» ամենահինն ու կայունն է, քսանհինգ տարի գործում է: Ունի հիմնական կոմիզ՝ շնորհալի մարդկանցից կազմված: Ծնորհքը՝ շնորք, զարմանալին նրանց վերաբերմունքն է գործին՝ այդքան նվիրված, ջանասեր ու լուրջ դերասաններ քիչ են տեսել: Անշուշտ, Հակոբ Միքայելյանն ու նրա տիկին Անին այսօր խմբի զարդն ու փայլն են: Հասուն, պինդ դերասաններ են Սամվելյան եղբայրները՝ Հովհաննեսն ու Վահեն, միշտ ամաչկոտ (բայց մինչև բեմ մտնելը) Մարի Արոյանը, Հակոբ Մուրադյանը՝ հմայիչ ու շատ բեմական... Խմբի գեղագիտությունը թելադրողները սրանք են: Իմ փորձերը Ադամյանականների հետ օր օրի դառնում էին գրավիչ: Ես միշտ նշանակություն են տվել այն քանին, թե ով է իմ խաղընկերը բեմում, ինչ մարդ է, ինչքան թատրոն կա հոգում: Հիացած էի, և առաջին հերթին, սրանց մարդկային համով... Աշխատանքից հետո, երեկոյան միայն բեմ են քարձրանում, ժամերով փորձում՝ ինքնամոռաց, երանելի մի համախոհությամբ, երանելիորեն քարյացական մթնոլորտում... Վստահ էի, որ լավ ներկայացում էր լինելու:

Արդեն Երևանում մի քանի նամակ ստացա, իմացա, որ առանց ինձ էլ փայլուն է անցել պրեմիերան, մեծ հաջողությամբ: Ուրախությանս չափ չկար, բայց, ափսոս: Ինչպես ասացի, իրենց հիմնական գործի հետ թատրոնն էլ դարձել է նրանց կյանքի մի մասը ու նաև՝ ուրիշ հազար պարտականություն: Վահե Սամվել-

լանը հողվածներ է գրում թերթերում, ուշադիր հետևում է Հա-
յաստանի մշակութային կյանքին, մեզանից պահանջում է նոր
պիեսներ, թատրոնին վերաբերող նոր գրքեր, միանգամայն արդա-
րացի հարց է բարձրացնում, որ կերպը գտնվի ու խրախուսվեն
Սփյուռքում գործող թատրոնների գործիչները: Անհանգիստ հոգի:
Նաև հուշեր է գրում Վահեն: Վ. Սարոյանի հետ հանդիպումներ
է ունեցել, ամբողջ խմբով հանդիպում են սարթել, սեղան են գը-
ցել, հյուրասիրել են, պատվել, մեծարել են ու խնդրել, որ թույլ
տա քեմադրել «Սիրտս լեռներումը»:

— Ո՛չ,— ասել է Սարոյանը,— ադ մեկը՝ ոչ...

Քեֆը շարունակվել է, արանքը գցել են, նորից են դիմել:

— Էհ... Ըսի՛ր ո-ո-ոչ...— գոռացել է Մեծը:

Երեկույթի վերջին, ավելի զինովցած, ուրեմն և՛ համարձակ,
խմբովին են վրա տվել: Մեծ մարդու քեֆն արդեն լավացած՝ զի-
ջել է.

— Էհ, լավ, համաձայն եմ... Սակայն, պայման ունիմ...

Խնդրենք, ասեք Ձեր պայմանը, սիրով, պատրաստ ենք ամեն
կարգի...

— Պայմանս ան է, որ ե-ե-ես, ձե-ձե-ձեր ադ թատրոն ձեր
խա-ադ չտեսնեմ...

— Հա-հա-հա-հա...

Ծիծաղը ավելոծել է օդը, շենքը դղրդացրել...

Վահեն պատմում է, թե ինչպես ամբողջ խումբը միացել է Սա-
րոյանի վարակիչ ծիծաղին ու ծիծաղից կոտորվել...

Հակոբ Միքայելյանը փորձի է գալիս տիկնոջ՝ Անիի հետ, որ
Թորոս Թորանյանի դուստրն է, այդ կրքերի խտացում, հավերժ
շարժուն հրաշք-հրաբուխ մարդու: Ազնիվ ու ճշմարիտ մտավորա-
կան է Թորոսը:

Հակոբը՝ Բեն-Ալեքսանդր, Անին՝ Ջոնի են խաղալու: Ես տե-
սել եմ մեր Վարդուհու փայլն այդ դերում, ուրիշ մեկին չեմ պատ-
կերացնում: Բայց Հարություն Չինոգյանը՝ քեմադրիչը, տաղան-

դավոր մարդուն հատուկ համբերություն ունի: Նուրբ դիտողություններով, սիրով բացատրում է, խրախուսում է, ու Անին կա մաց-կամաց դառնում է ինձ համար ընդունելի, գրավիչ: Աչքիս առաջ ծնվում է մեկ ուրիշ Ջոնի...

Ամեն երեկո ամուսինները թատրոնում են, իրենց երկու երեխաներով: Նուշիկը մեծն է, մեզ հետ խաղալու է, Էսթերի դերն է փորձում ու շատ հաջող: Փոքրիկ Նանորը տոգում է՝ ինչու՞ միշտ ինքը, ես ալ կուզեմ խաղալ... Աշխույժ, ժիր երեխա է, մեր փորձի ընթացքում հասցնում է դասերն անել, նկարներ է գծում և խանգարում տիկին Անիին, որ մեր հուշարարան է՝ բարի, փխրուն սրբտի տեր: Անի Պասմանյանը, Նազարեթ Տադևանը, Նազարեթ Պոյաջյանը թատրոնի ֆանատիկներն են, նվիրյալներ, առանց որոնց դժվար է արժեք ստեղծել, ու ես ակամա մտաբերում եմ մեր հին հուշախցիկը՝ ժպտադեմ Սոխակով, Մամբրե հայրիկին՝ գործիքները ձեռքին, մրջյունի ջանասիրությամբ խթխթում էր կահույքի արանքներում, սարքում ու նորոգում, Կոստանին ու օրենսդիր պատվական Անդրանիկին... Իրենց մեկ կյանքը ձոնեցին մայր թատրոնին: Իրենց գործի տերն էին, գնացին, հետները տարան կուլիսների համն ու հոտը...

Նանորն անգիր գիտե պիեսը, անհամբեր առաջ է ընկնում, խոսքը խլում տիկին Անիից, շարտում բեմ... Նրանց վեճն ավարտվում է համաձայնությամբ՝ Անի մորքուրը հուշելու է բոլորին: Նանորը՝ միայն ինձ:

Հակոբ Միքայելյանը դերասան է, նկարիչ-դիզայներ (ի դեպ, այս պիեսը հրաշալի ձևավորեց), գողտրիկ պատմվածքներ է գրում, փայլուն թարգմանում է արաբերենից: Նրա տիկինը՝ Անին, Երևանում ուսանած երաժիշտ է... Մի խոսքով, իսկական արվեստագետների ընտանիք: Մտահոգ է Հակոբը երեխաների ապագայով. երկար զրուցում ենք հյուրանոցի իմ համարում:

— Տեղափոխվինք Հայաստան... Չավակներս ի՞նչ ընեն հոս: Կրնա՞մ հոն գործ մը գտնիմ, երեխաներուս կարիքները հոգամ...

Կարծես մենախոսում է Հակոբը, մտորում է առանձին, կապածներով, տատանվելով...

— Բազմաշնորհ մարդ ես, եղբայր. քո Հայրենիքդ է՝ ինչպես քոլորն, այնպես էլ դու:

— Այո, այո:— Համաձայնում է Հակոբն ու էլի տալիս-առնում: Հետո ես եմ խոսում, հետո՝ նորից ինքը: Նույն բանն ենք ասում՝ Հայրենիքում թե՛ իրենց համար, թե՛ երեխաների, լավ է չիմելու:

— Այո, իրավ է, ճիշտ է, ամենքս ալ հոս գուցե և կործանվինք, սակայն... Սակայն, ընտանիքս կփրկվի, իսկ գաղո՞ւթը... Հակոբ Միքայելյանը սրանով վերջ դրեց մեր դատողություններին:

Ափսոս, խառնել ենք, մոռացել ենք, առաջ լավ գիտեինք, որ ամեն քար իր տեղն ունի ու խիպարով շարած պատը առանց քոշաքարի պատ չի: Հակոբը դա գիտի...

Դամասկոս. քիչ հայեր, իրար ծվարած: Իհարեկ, դպրոց, ակումբ, եկեղեցի, ազգային հոգսեր: Եղբայր Հովհաննեսն է ուղեկիցս, իսկ դա նշանակում է՝

— Նախ դպրոց պիտ այցելենք: Անկարելի է, որ...

Ժպտում եմ ու հնազանդվում: Էս քեզ թարգմանչաց դպրոցը. հրաշալի էր...

— Այժմ էլ Սահակյան վարժարան... Հայ տնօրենը բացակա է. մեզ ընդունում է պետական տնօրենը: Միջին տարիքի կին է, խիստ հայացքով, բայց հրապուրիչ է: Ծանոթանում ենք, ինձ ներկայացնում են, կտրուկ ելնում է տեղից, տիրաբար կարգադրություններ անում, շուտ գալիս ինձ:

— Կուզեմ աշակերտները ձեզ հետ հանդիպեն:

Մեծ բակ, սառը քամի, ըստ դասարանների շարված երեխաներ, որ լավ ու վարժ երգում են արաբերեն, անվարժ ու անհամարձակ՝ հայերեն: Խանդավառ չեմ:

Նկատում է, նյարդայնանում, ձեռքի հատու շարժումով պե-

տական տնօրենը փորձում է որգևորել, նույնիսկ չափ է տալիս հայոց երգը...

Չես հասկանում, բայց մթնոլորտը լարված է... Մի քանի անըրթված խոսքեր են ասում երեխաներին... Հրավիրում են տնօրենի առանձնասենյակը՝ սուրճի: Քաղցր բաներ էլ կան՝ խմորեղեն և այլն...

Դե ինչ, գնալու ժամն է, շնորհակալ են: Հանգամանքին պատշաճ, այնուամենայնիվ քաղաքավարի խոսքեր են ասում՝ ուրախ են, որ այսպիսի ազնիվ արարուհի, հայոց դպրոցում, հայ երեխաների կրթությամբ մտահոգված...

Ընդհատում է տեղն ու տեղը՝ թուրք են,— ասում է,— Սիրիայում ապրող թրքուհի են...

Մտող ջուր՝ գլխիս... Ապուշ ժպտով փորձում են թաքցնել շիրթունքս, բայց հայացքը սուր է, աչքերը խելոք, խորամանկ: Նայում է, ժպտում է...

Հա... Իսկապես... Անիմանալի են աստժո ճամփաները...

Ա՛յ քեզ մտածելու բան... Չէ, քույրիկ, չէ... Մեր միջի կամուրջները դուք եք այրել... Էս ինչու՞ են անցել մեր ափը... Բա Դերձորի անապատում գիր սովորող երեխայի այբ, բեն, գիմը քեզ չի՞ հասնում, ականջդ չի՞ ծակում...

Դե որ՝ եկել, անցել են մեր ափը, ասա՛ մտքինդ ի՞նչ է...

Դամասկոսում մեզ դիմավորեց Բարեգործականի գլխավորը՝ Սուրեն Հարությունյանը: Հրաշալի մարդ է: Առաքելյան Կարապիսի հետ համերգային խմբեր է հրավիրում Հայաստանից, Մոսկվայից. շնորհակալ գործ են անում:

Հավաքվում ենք մի տեղ: Փառահեղ արտաքինով Սարգիս Կարապետյանի հունգարուհի հայախոս տիկիներ՝ Վերոնիկան, պատմում է հումորով, որ իրենց որդին՝ Հովիկը (Երևանում ուսանող է եղել) հրճվալից նամակներ է գրում, իսկ հոկտեմբերյան հեղափոխության օրը նամակը կարմիր թանաքով է գրում: Պատմում է

Վերոնհիկան մանրամասն, տղայի գրածն ըմբռնչխնելով, հումորով և այնքան է ծպտերես, այնքան է կանացի, որ արժեր սիրահար-վել...

Ոսկան Սրբազան Քալպակյան՝ Դամասկոսի թեմի առաջնորդը, ուսանել է Էջմիածնի ճեմարանում: Մեծ գիտելիքների տեր է, քաղաքականապես հասուն ու գրագետ, անհունորեն կապված հայրենիքին: Քաղաքից յոթանասուն-ութուն կիլոմետրի վրա քրիստոնեական վանքեր կան, շատ հին, գնում ենք տեսնելու: Սրբազանն ինքն է վարում մեքենան: Մեկը Սեդնայա վանքն է, մյուսը լեռներում թառած մի գյուղում է, որտեղ դեռ խոսում են արամեերեն, Մայլուրա վանքը, որ առաջ մեհյան է եղել...

— Հնություններն անհմաստ են, մեռած են, եթե նրանց համագործը չենք ստեղծում այսօր: Հնությունը արժեք ունի, եթե հաստատում է մեր այսօրը:

— Է, այո,— համաձայնում է Ոսկան Սրբազանը,— սակայն մենք գանգատվելու պատճառ չունենք, այսօր ալ մեր մշակույթը, մեր ճարտարապետությունը բարձրության վրա են... Այ, դու կըսես, թե հրաշքներու չես հավատար, իսկ մենք եղեռնից հետո պետություն ունենք, հրաշք չէ՞, հապա... Ամեն ինչից վեր պետք է դասել պետության շահը, քանի որ անհկա ժողովրդի, դարերի խորքից եկող երազանքն է... Ամեն պահի պետք է գիտակցենք՝ երազը իրականություն է դարձել: Մենք հոս, ավելի ճիշտ Սփյուռքը, ազգային տարր ենք (կըսեք՝ Էլեմենտ), դուք Հայրենիքում պետական Էլեմենտ, կհասկնա՞ք... Պետական այրեր ունի՞ք...

Այսքան տարի է անցել, պետք է որ ունենանք... Պետական այրեր... Պաշտոնյաներ ունենք շատ-շատ... Իսկ պետական այրեր... Եսի՛մ... (Սա ես բարձրաձայն չեմ ասում՝ մտքումս եմ մըտածում, ինձ համար):

Սրբազանը վարում է մեքենան ու իր միտքը զարգացնում:

— Բնագղներով չպիտի ղեկավարվենք այլևս, բարձր գիտակցություն՝ աս է մեր փրկությունը... Փառք աստծո, մեր կառավա-

րությունն ունինք, ժողովուրդն ալ պետք է պետական հոգեբանություն ունենա...

Ժողովուրդը դեռ անստորագիր անմակներ է ուղարկում դեսդեն, դեռ մատնում են իրար... Մի քիչ նեղում ես՝ փեշները բըշտում են, վազում, ի՞նչ պետական հոգեբանություն... (Սա էլ մշտքումս եմ ասում): Ասում են, Մոսկվա գնացող բողոքների, անստորագիր անմակների թվով առաջին տեղն ենք...

Մեր կառավարությունը, ժամանակն է, որ թևերը տարածե, Սփյուռքն առնե իր թևերուն տակ...

Սրբազանը բարձրաձայն է մենախոսում, ես՝ լուռ:

Դամասկոս մտնել ու շիհնել նրա հոշակավոր շուկայում՝ անհնարին է: Եղբայր Հովհաննեսի հետ մեր «կարմիր տղա» մեքենայի համար տեղ ենք գտնում ու մի քանի ժամով կորչում շուկայի լաբիրինթոսում: Բնության ստեղծած բոլոր գույները, մարդու ձեռքով արարված բոլոր բարիքները իրար կողքի, իրար խառնած, իրար մեջ... Միրգ, թել, միս, պղինձ, կաշի, հաց, շոր, կանաչի, ձուկ, բոված պիստակ, խորոված միս... Նեղլիկ փողոցներ, չալմայով, անչալմա տղամարդիկ, չադրայով, առանց չադրայի կանայք, ջահել, ահել... Սև ու սպիտակ, դեղին ու կարմիր մարդիկ... Եվրոպացիները կարճ շավարով, բերանները՝ բաց, լուսանկարչական ապարատները աջ ու ձախ շխկացնում են չտեսի նման... Պոռնիկներ՝ Իսպանիայից «հյուրախաղերի» եկած, տեղացի պոռնիկներ, չադրաների տակ թաքնված, հայացքը՝ որսկան, բարակ ասեղի պես ծակում է սև շորը, խրվում աչքիդ մեջ... Խոշոր, մոխրագույն ավանակներ՝ բեռուքարձով կամ հեծյալով: «Սալամ ալեյքում»՝ առատ-առատ բաշխում է հեծյալը, սպիտակամորուս ծերն ամեն հանդիպողի, ու մինչև ուշքի ես գալիս, ուզում ես պատասխանել՝ հոսանքը քեզ տանում է, «Ալեյքումը» հալվում է ընդհանուր բազմաձայնության մեջ... Բոված սիսեռ, կարմիր մանդարինի սայլեր, դեղին լիմոնի բուրգեր, խաղալիքներ, կոշիկ, բուրդ...

Խոստանում եմ էժան տալ, լավը տալ, կանչում եմ, առաջարկում...
Հայերեն կլինի՝ էտի համեցեք...

Կյանքը եռում է, առևտուրը բլթբլթում... Ազգեր, ցեղեր, տար-
բեր դիմագծեր, աչքունք, պահվածք. շփվում եմ, թեկուզ և կար-
ճատն՝ ծանոթանում, հարց ու պատասխան՝ իրար հարմարվել,
հասկանալ, ինչ-որ չափով ճանաչել...

Առ և տուր, և առ... Մի աստված է իշխում այստեղ ու մի կրոն՝
առևտուրը...

— Հոս հայու խանութ կա, պիտի մտնենք:— Հովհաննեսի
ձայնն էմ լսում:

— Ո՛վ է:

— Երեկ չծանոթացա՞նք... Գրիգորը:

Բազմազանությունը հմայել է ինձ, ու չգիտեմ ինչպես անել,
որ ամենը տեսնեմ: Համատարած շարժում է, փոքր ու մեծ ցան-
կություններ, նպատակներ... Մի ուրիշ աշխարհ, աշխարհի չափ
հին ու իմաստուն ու թվում է՝ հավիտենական... Ձեռքերի անընդ-
հատ շարժում, ձեռքերի աշխատանք... Փայտ տաշող, պղինձ հրղ-
կող, թել չափող ձեռք, կշռող, դրամ հաշվող, մուրճ բանեցնելուց
կոշտացած, կրակի վրա խանձված, հյուսնի, ներկարարի, ատաղ-
ձագործի, ձկնավաճառի, նուրբ ու կոպիտ, մեծ ու փոքր, սև ու
սպիտակ, մազոտ ու անմազ մարդկային ձեռքեր, աշխատող ձեռ-
քեր ու... հանկարծ ուտիկան՝ ձեռքին ավտոմատ, պարապ կանգ-
նած...

Մարդ հարցնի՝ այդ ինչու՞ ես այստեղ կանգնել...

Հնարժեք իրերի խանութ. Գրիգոր Բարսեղյան: Չեմ կարող
իմանալ Սիրիայում քանի հազար մարդու ձեռք եմ սեղմել, քանի
լավ մարդու հետ եմ զրուցել, քանի հազար զույգ աչք եմ բերել
ինձ հետ, իմ սրտում Հայաստան և որքան կապրեն նրանք իմ հի-
շողության մեջ,— չեմ կարող իմանալ... Բայց հաստատ գիտեմ՝
Գրիգորի խոնավ աչքերը երբեք չեմ մոռանալու...

Իսկույն թեյ պատվիրեց, փոքրիկ տուփից ինչ-որ բան ւցրեց մեջը:

— Ամբրա է, բուրմունքը կզգա՞ք, ասիկա շատ թանկ բան է, ասիկա մարդու կյանքը կերկարացնէ. պտղունց մը կնետես գավաթի մեջ և...

Հայտնի մարդ է շուկայում, ու եթէ արժեքավոր հնուօթուն գնող վաճառող կա՝ խորհրդատուն ինքն է: Գիտնական չէ, չէ, գիտի:

— Այս թասը ասորական է, այս դրամը հոնական է, այսինչ դարի է...

Մի նայելով որոշում է գինը: Գրիգորը կլորադէմ, աշխույժ, արագախոս, հուզումնաւատ, միշտ ոգևորված, սիրտը բաց հայ է:

— Այս սուրը կտեսնա՞ս,— կոթ շունեցող շեղքը ծոում է, ծայրերը հասցնում իրար:— Կտեսնա՞ս որքան ճկուն է պողպատը... Աս մեկը նայե... Կլտե՞ս ինչպես կզնգա... Երկասյր է... Կկարծես ո՞ւմ պատրաստածն է:

— Դե, Գրիգոր, Դամասկոսի պողպատը աշխարհում հայտնի էր...

— Ոչ,— վճռական ընդհատում է Գրիգորը,— հայու շինած է, մեծ վարպետի...

Կարդում է հայ վարպետի անունը, որ չէմ հիշում որ դարում է պատրաստել ու իր անունով կնիքը վրան դաշել: Բայց ո՞ւմ համար... Հավանաբար հենց այնպես, վաճառքի համար...

Դամասկոսի հսկա շուկայում Գրիգորը որսկան է՝ հոտոտում է, գտնում է, հայթայթում, «բազար» անում, վճարում, առնում, դիզում, որպեսզի... ուղարկի Հայաստան:

— Հարյուր քսան ձեռագիր ունիմ Մատենադարանին հանձնած, հազվագյուտ ձեռագրեր: Ես շատ լավ կհասկնամ այդ գործեն... Դրամներու հազվագյուտ հավաքածու ունեի, փոխադրեցի Հայաստան. հոն հասկցան, գնահատեցին, հրճվեցա...

Շուկայի ժխորն այլևս չենք լսում, ոչինչ չենք նկատում, Գրիգորն իր պատմություններով մեզ կլանել է, ոգևորել է, մենք էլ հետը, վերելքի մեջ է, մենք էլ հետը, հուզմունքից աչքերը խոնավացել են, մերն էլ հետը... Աչքերը թաց, սակայն դեմքը արևի պես պայծառ, ներշնչված...

— Գրիգոր, ցուցափեղկերիդ մեջ ոչինչ չունես դրած:

— Ումի՞ն համար: Ասոնք վաճառքի ենթակա չեն, ասոնք դարձյալ Հայրենիք պիտի երթան: Հայրենիք, Հայրենիք... — Իրերը տանում է պահեստ ու հանկարծ դռների մեջ շուռ է գալիս:— Հայրենիքեն հեռու եղողը գիտե անոր արժեքը...

Բաժանվելու վրա ենք. Գրիգոր Բարսեղյանը կեցվածք է ընդունում, երջանկությունից դեմքը շողշողում է:— Շնորհակալ եմ այցելության համար, ես... Ես Սուրբ Մաշտոցի մեդալակիր եմ...

Աշխարհի ամենահպարտ մարդու կեցվածքն ունի Գրիգորը... Հպարտ, հպարտ...

Թող անպակաս լինի քեզանից այն մի պտղունց ամբրան ու եթե իրավ է, որ կյանքը երկարացնող է, թող որ քո կյանքը շատ երկար լինի, Գրիգոր Բարսեղյան:

Փորձի եմ հասնում, ու դեռ ոտքս ներս չդրած, իմանում եմ, որ Բեյրութում վախճանվել է Գառնիկ Ադդարյանը: Անհավատալի է լուրը, ցնցող: Քսան տարուց ավել է, որ ճանաչում եմ Գառնիկին, տաղանդավոր բանաստեղծին, հրապարակախոսին: Ազգային կորուստ է իսկապես:

Փորձասենյակը Հ. Ե. Ը.—յան ակումբի առաջին հարկում է, իսկ վերևում, մեծ սրահում, դեռ շարունակվում է գրքերի վաճառք-ցուցահանդեսը: Թատերական խմբի բոլոր անդամներս բարձրանում ենք վեր:

Սրահը լիքն է մարդկանցով: Թորանյան Թորոսը՝ գերլիցքավորված, անսպառ եռանդի տեր մարդ, վշտից կուչ է եկել, փոք-

րացել: Հուզմունքը խեղդելով հայտնում է լուրը, համառոտ պատմում Ադդարյանի մասին, ապա միկրոֆոնը փոխանցում է ինձ:

—... Ադդարյանը Սփյուռքում ապրող ու ձործող խորհրդային քաղաքացի էր, վատահելի կապ ու կամուրջ մեր միջև... — Կարծեմ այսպես ավարտեցի խոսքս:

Ծշմարիտ մտավորական էր, մեծ սրտի տեր: Այդ սիրտը քել-րութահայության դարդն ու ցավը տեղավորում էր իր մեջ: Լիքն էր հավատով դեպի ապագան, բայց ամեն արձակած ումբ, ամեն պայթյուն խորտակում էր հայ համայնքի մի մասնիկը և, ուրեմն, կրակոցը ուղիղ նրա սրտին էր: Չդիմացավ: Մահից առաջ նամակ էր գրել Հայաստան՝ վախենալով եք ումբերից, չեք գալիս, գոնե նամակ գրեք, մեզ մենակ մի թողեք...

Եվ ինչպես մի անգամ ևս չհիշես մեր Հանճարի տողերը՝ էտո տամ, դալեկո... Օտար երկրի անձնագիր ունեն, բայց ու՞մ մեղքով, չէ՞ որ վտարանդի չեմ: Երանք տառապանքով եմ նվաճել, սիրով ու նվիրումով եմ նվաճել այս երկրի հովանավորությունը, Հայրենիքին ծառայելու իրավունքը ու ինձ նման (և դեռ ավելին) պետք է օգտվեն հանրապետության քաղաքացիին լինելու արտոնություններից...

Զբոսաշրջիկ չեմ նրանք, մերն եմ, մենք եմք՝ նույն արյունով, նույն արմատով, նույն պատմությամբ... Մարդը զգալի ծախս է արել, եկել է Հայրենիք, հետը բերել է երեխաներին հայացնելու, երկրին կապելու, օդին, ջրին, ուզում է Ջանգեզուր գնալ, հմայվել Լոռվա չքնադությամբ... Ո՛չ: Ուզում է մի քիչ երկար մնալ... Ո՛չ: Չի կարելի: Ընդհանուր օրենք կա տուրիստ գերմանացու, անգլիացու, շվեդի ու նաև... հայ մարդու համար: Հայրենիքի արևն ինչու՞ պետք է միևնույն ժողովրդի միայն կեսին ջերմացնի...

Անչափ շնորհակալ եմ Հայ երիտասարդաց ընկերության վարչակազմին՝ հնարավորություն ստեղծեցին գնալ Միջերկրական ծով, պատմական Կիլիկիա:

Գամբերյան Գևորգը, իր տիկին Սոսին իմ ուղեկիցներն են:

Տիկիւնը սակաւախոս է, մեղմաբարո, նրբակազմ, հաճելի մարդ: Երկար ճանապարհ, ու ճամփի գրույցներ: Նախ գնում ենք Լաթակիա, ուր հայեր կան. որտե՞ղ չկան... Պարսկաստանի տարածքում Յունեսկո-ի գծով ութ բնախույզ գիտնական են աշխատել. չուներում, տափաստաններում կորած-մոլորած մի գյուղ են հասնում գիշերով, մի փոքրիկ հյուրանոց, բայց դռնապանը ներս չի թողնում: Խնդրում են գոնե ջուր տա, չհասկանալու է դնում կամ չի հասկանում: Վերջապէս, մի թղթի վրա ութ լեզվով գրում են՝ «ջուր» և հասկացնում, որ տիրոջը տան: Քիչ անց, հայտնվում է տերը:— Ձեր մեջ հայ կա՞... Որտեղե՞ն է...

— Ավստրալիայէն:

Իհարկէ, և ջուր են ստանում, և ամեն ինչ: Այնուհետ, երկուսուկէս ամիս երկրում շրջելիս, միշտ հային են առաջ գցում, որ խնդիրները լուծի՝ ամեն տեղ մի հայ կգտնվի: Եվ միշտ գտնվել է...

Տարածվեցինք՝ չշատացանք... Այս տարածություններին չենք դիմանալու...

Ուրեմն՝ ճամփի խոսք ու գրույց... Գևորգը անկաշկանդ մարդ է, մաքրամաքուր հոգու տեր, տաղանդավոր ինժեներ: Պատմում է, որ գյուտեր ունի, աշխատանքը լավ է, գնահատվում է, ամեն կողմից հրավերքներ, բայց ինքը չի ուզում մի տեղ հիմնավորվի... Խոսքն ավարտում է անսպասելի. Հայաստանը չըլլա, ես ինչու՞ պիտի հայ մնամ...

— Հայաստանը կա:

— Ադ է, կա. մեծ հույս է: Օր մը ծառայեմ Հայրենիքիս...

Զգիտեմ ինչու, տխրում եմ: Տխրում եմ, որովհետև բաներ եմ մտածում, որ չէի ուզե՞նա մտածել, բայց, դե, ով կհասկանա, մըտքերդ ինչի՞ց են ծնվում, որտեղից են գալիս, ինչու՞ են հիմն այս պահին ծնվում... Մի գեղեցիկ, փոքրիկ բացատ եմ հիշում անտառում, մեծ անտառում, արևոտ, կանաչ, պէս-պէս ծաղիկներով... Հոգիդ փառավորվում է, նայում ես ու հոգիդ գմայլվում է: Նայում

ես ու չես կշտանում... Երջանիկ ես, որ ապրում ես, որ նա կա, բայց դու էլ կաս... Գլուխդ պտտվում է, արքած ես նրա տեսքից ու ու չարչարող մի տենչ՝ մերձենալու, մինչև վերջ հագենալու, հալվելու...

Գցում ես քեզ բացատ, պառկում, կորչում բարձր խոտերի մեջ, խոտի, ծաղկի բուրմունքը լցվում է պնչերդ, հասնում թոքերիդ թոքերդ հուզում... Երանություն... Երանություն... Երեսդ դեմ տուր արևին, փակիր աչքերդ, խառնվիր հարազատ բնությանդ...

Ու մեկ էլ բզզոց ես լսում, աչքդ բացում, թեք ես անում՝ խավար իշամեղուն կապույտ ծաղկի վրա, համարյա ականջիդ կպած, սեփական ծանրությամբ կռացրել է ցողունը...

Ու մեկ էլ՝ դարչնագույն, երկար մրջյունը բարձրացավ ձեռքիդ ու չգիտես ինչ գործով վազեց դեպի վզիդ բացվածքը. ու մեկ էլ... որտեղի՞ց հայտնվեց դեղնաթունավոր բծերով այս թրթուրը, ու ոտքիդ մերկությունը փշաքաղվեց...

Ու մեկ էլ... Թիակդ խոնավ զգաց մի քիչ...

Ձե, հեռվից լավ է, հեռվից է գեղեցիկ բացատն իր ծաղկունքով, մանրէներն այս հեռվից չեն երևում...

Վեր կաց ու փախիր...

Բայց դե անտառն անտառ չի լինի, բացատն էլ՝ բացատ, եթե արև չլինի, խոտ ու ծաղիկ չլինեն, եթե չլինեն նրա անմեղ ու մեղավոր բնակիչները՝ գիշատիչ մոծակից սկսած...

Ու շուտ ես գալիս ու տեսնում ես... Բայց, դե, թավալ տված տեղդ երևում է. մի քանի կանաչ խոտ տրորվել, կոտրվել է իզուր.

— Էհ, լավ... Ծատ լոեցիներ, եղբայր Գևորգ:

— Այո... Պատմություն ընեմ:

— Հա, մնջանալը լավ բան չի...

— Օր մը, անապատեն բերվին մը կուգա քաղաք՝ Դեր-Չոր: Կուգա առևտուրի, իր բազմանդամ ընտանիքի հոգսերը հոգալու: Աս խանութը, ան խանութը, վերջապես, կոշկավաճառի մոտ կմըտնե. գնումներ ընելու ատեն ականջի ծայրով կլսե անոնց խոսքը,

Կհարցնե՛ ադ ի՞նչ լեզվով է, որ կխոսիք:

— Հայերեն...

— Սուտ է,— բորբոքվել է բեղվինը,— չկա այդպիսի ցեղ:

— Ինչպես տեսնում ես՝ կա, մենք հայ ենք...

— Իրա՞վ,— ապշել է մարդը,— հետո՞:

— Հետո, Հայեայ քաղաքում հայություն կա, Հայաստան պե-
տություն կա...

— Ես ալ հայ եմ,— շնջացել է խեղդված,— հայ եմ...

— Չէ...

— Հա, երդում կընեմ, հայ եմ...— Գոռացել է բեղվինը:

— Անունդ ի՞նչ է:

— Ալեյմա Դրրբո...

— Չէ, հայ չես... Ատիկա հայի անուն չէ:

Մոլորված ու շփոթված հեռանում է բեղվինը: Հաջորդ օրը
վերադարձել է, թե՛

— Գիտեք, ողջ կյանքս անապատում եմ անցկացրել, մենակ
ժամանակս հովվի իմ դագանակով գետնին մի բան եմ գծել, կու-
զեմ տեսնեք...

Գրիչ են տվել, թուղթ են տվել... Չէ, ասել է, անգրագետ եմ,
դուրս եկեք հողին գծեմ: Ստացվել է՝ Արամ Քեկեկյան...

— Եղբայր Սոս, չկարծեք հեքիաթ է պատմածս, չնայած հե-
քիաթներ մեզի հետ կպատահին:— Պատմությունն ընդհատում է
Գևորգը:— Տասնհինգ թվական, մահու ճամփա... Մայրը իր չորս
տարեկան մանչը՝ սովեն նվաղած, կոնե ճանապարհի եզրը: Ինքը
կշարունակե, կերթա, որ արդեն չորս զավակներու մահը տեսած,
գոնե սրանը չտեսնա... Էհ, կերթա ու կերթա... Բեղվին մը իր ոչ-
խարներու հետ տեղաշարժ ըլլալով կգա ու կգտնե այդ տղան...
Բարի մարդ կըլլա... Վզիցը կբռնե ու կնետե իր զավակներու մեջ:
Կմեծնա ադ տղան, հոր նման կդառնա բեղվին: Օր մըն ալ այդ
պատվական արաքը կմեռնի, թողնելով վեց որդի: Զավակները

խորհուրդի կնատեն անոր ժառանգությունը բաժին-բաժին կընեն, սակայն՝ հինգ տեղ: Աս տղային բաժին չեն հաներ, ըսելով՝ դուն մեր եղբայրը չես, դուն օտար ես, հայ ես...

— Հայն ի՞նչ է, ո՞վ է,— զարմացած հարցրել է տղան:

— Ժամանակին այդպիսի ցեղ է եղել, թուրքերը կոտորել են, վերջացրել:

Մեն-մենակ, աղքատ տղա... Սրա-նրա մոտ հովվություն է արել: Հետո տեսել է, որ ջրի համար ոչխարը շատ են դես-դեն բշում, միտք է անում ու սկսում է ջրհորներ փորել: Մեկ,երկու, երեք... Ջրհորների տեղ է դառնում, հարստանում է, ամուսնանում է իսլամի կարգով՝ կանայք, երեխաներ...

Սրտացավել են հայերը, հայտարարություն են տվել թերթերում, ու մայրը գտնվել է, Բեյրութում, մահից հրաշքով պրծած...

Իսկ անունը... Դժոխքի ճանապարհի կանգառներում մայրը չոփը տվել է ձեռքը, ստիպել է, որ ավագին գրի իր անունը, եթե մի հրաշքով փրկվի երեխան, իմանա ով է: Այդ սովորույթը տղան բնագոյարար պահել է ողջ կյանքում:

— Քեռի կուգա ինձի,— ավարտեց Գևորգը հուզված:— Իմ քեռիս է... Սակայն արար է: Քառասունհինգ տարեկան էր, երբ իմացավ իր հայ ըլլալը... Այլևս վերադարձ չկա... Ամեն ինչով արար է...

Մեքենան միայն պտույտներ է գործում արդեն սարոտ, անտառոտ տեղերում: Նարնջի, կարմրակարմիր մանդարինի այգիները մնացին հետևում: Գևորգը նախապես ինձ զգուշացրել է, որ մեքենան արագ չի վարելու՝ սովորություն չունի: Ես արդեն հարմարվել եմ նրա ուղիին ու նաև մի տեսակ թմրել...

— Հայաստանը չըլլա, ես ինչու պիտի հայ մնամ...— անսպասելի լսում եմ Գևորգի մտածկոտ ձայնը և չեմ հասկանում ինքն իր հետ է խոսում, թե՞ ինչ-որ մեկի հետ կոնիվ է տալիս:

Չեմ արձագանքում, ուժ չունեմ... Ալեյմա Դրրո, Ալեյմա Դրր-

բո... ծուլ-ծուլ կրկնում եմ մտքումս. կպել եմ ու պոկ չեմ գալիս: Հետո հիշում եմ Մազիին, Ռոբերին... Նորապսակ ամուսիններ եմ, երկուսն էլ բարեհամբույր, գեղեցիկ: Իրենց տանն եմ. հյուրասենյակներից մեկը կոչվում է Պարույր Սևակի անունով, այստեղ ընթերցանության երեկոներ եմ լինում, զրույցներ... Թթված դեմքով ասում եմ՝ եղբայր, այդ ի՞նչ անուններ ունեք, Ռոբերը ո՞րն է... Ամուսինները միաբերան վրա եմ տալիս՝ գիտենք, մեր երեխաների անուններով կուղղենք սխալը: Որոշած ենք...

Մազին հղի էր. բարի ազատում...

Արամ Քեկլեկյան... Ալեյմա Դրրբո... Էլ ինչ ենք դառնալու, էլ ինչ անուն ենք որդեգրելու...

Այս անտառոտ ճանապարհը մառ հանգստագուտի է, ձգվում է մինչև ծովեզերք, իր հետ տանելով խորտկարանների, ռեստորանների չընդհատվող շարքերը...

...Այնթապցի Արմենակը պատմում է, որ տասնմեկ տարեկան հասակում հոր ու մոր հետ գնացել է Էրզիր: Գնացել գտել եմ իրենց տունը:— Հայրս բախեց դուռը, «տերը» դուրս եկավ՝ ի՞նչ կուզեք:

— Բան չեմ ուզում,— ասել է Արմենակի հայրը,— տիկինս է, որդիս է, կուզենք մեկ գիշեր քնեք մեր տանը...

— Ձեր տա՞նը...

— Այո, կարծեմ իրավունք ունենք...

Թուրքը մտորել է մի պահ, ապա ներս թողել: Լավ հյուրասիրել է, հարգել՝ է, առոք-փառոք քնացրել: Առավոտյան լույսով տեսել եմ՝ ողջ բակը փորփրած, շնորհից գցած... Լարված ու սպասողական նայել է թուրքը Արմենակի հոր աչքերին՝ սպասողական ու հարցական, դարան մտած կատվի նման հետևել է նրա հայացքի ուղղությանը... Վերջը չի դիմացել.

— Էլ մի թաքցնի գալուդ նպատակը, մի տանջի, ամեն ինչ հասկանում եմ: Դուրանը քերեմ, ձեռքս դնեմ վրան, երդվեմ՝ հալալ ախապոր պես կկիսենք ձեր թաքցրած գանձը, տեղն ասա, թե

մարդ ես: Կոտորվեցի՞նք ման գալով... Հալալ ախպոր պես... (Հալալ ախպոր պես...):

— Չէ, սխալ ես հասկացել: Ուզում էի պարզապես, որ իմ որդին մի գիշեր քնի իր պապի տանը...

Ամիսներ են անցել: Արմենակի պապի տանը տիրացած թուրք՞ հասել է Հալեպ:

— Ախպեր... (ախպեր): Պետական կնիքով պարտավորագիր եմ բերել, ձեր ոսկու տեղն ասա... Կեսը քեզ հալալ:

— Ոսկին մեր երկիրն էր, որ խլեցիք, ոսկուց թանկ... Տեղը դու էլ գիտես, ես էլ: Հիմա ձեր Ղուրանը վկա՝ ի՞նչ ես առաջարկում:

Նմանօրինակ մի պատմություն էլ պատմեց արաբկիրցի Կարոն: Այս էլ ասեմ, որ չմնա սրտումս ու՝ «սա խնդիրը փակենք»:

Արաբկիր են գնացել, պապենական տունը: Լավ ընդունել, հյուրասիրել են մեկի փոխարեն երկու օր են պահել ու ճամփա դնելիս աղերսել է «տանտերը».

— Ախպեր (դարձյալ՝ ախպեր), քանի տարի է ապրում եմ այս տանը, հանգիստ չունեմ, գիշերները տանջվում եմ: Քո հոր տունն է, ճիշտ է, բայց... Մի խոսքով, հալալ արա ինձ, իմ երեխեքին:

— Չէ, ես իրավունք չունեմ... Իմ հայրը այս տան առաջ է սպանվել, այ, այստեղ, էն աշխարհից թող հալալ անի, եթե կարող է... Իսկ ես իրավունք չունեմ, ես հալալ չեմ անի...

Այսպես: Սրանով փակենք «ախպերության» պատմությունները: Կարոյի հոր ասածը մենք էլ կրկնենք՝ ոչ, հալալ չենք անի, իրավունք չունենք...

Հասնում ենք Լաթակիա: Հակոբ Ադամյանի տիկինը՝ Ալիսը, ընտիր ձուկ է եփել. սպասում են մեզ: Չթողեցին շունչ քաշենք, նստեցրին սեղան: Տանտիրուհին մեղմ է երևում, բայց սեղանի մոտ իրասածի ու համառ է՝ վերցրեք, համեցեք, փորձեք, էլի վերցրեք... ու եթե չես մերժում,— այդքան գեղանի տիկնոջն ինչպես մերժես,— դեմքը գոհունակությունից պայծառանում է:

Մտածում եմ՝ ինչի՞ց է, որ մենք՝ հայերս, ամեն տուն եկողի

ասիպում ենք շատ ուտի, կարծես սովից է փախել կամ էլ ով գիտի երբ է ուտելու: Ինչի՞ց է, որ մեր գրույցը հիմնականում սեղանի շուրջն է լինում... Որ մեր հացը ընկերովի է լինում...

Այդպես: Նոր մարդիկ, նոր ծանոթություն, գրույցի նյութը նույնը՝ Մեր Հայրենիքը, Մեր Սփյուռքը...

Տեսարկիչով նայում ենք հայ մարզիկների մեծարման երեկոն՝ մարզահամերգային դահլիճից: Ադամյանն այնքան է նայել, որ անգիր գիտի:

— Հիմա Յուրի Վարդանյանը պիտի տեսնենք, հիմա պիտի խոսե... Այժմ Մետաքսյան պիտի արտասանե «Մոր ձեռքերը»... Դավիթ Համբարձումյանն ու Բենհուր Փաշայանը անոր ծաղիկներ պիտի մատուցեն, քայց նախապես իրարու հետ ինչ-որ կխոսին... Կառավարությանը կտեսնե՛ս՝ ուրախ են, կծիծաղեն... Աս Օգսենն է, Գևորգը գիտե՛ս... Նադեժդա Սիմոնյանը... ժողովուրդը կհրրճվե... Ռաֆայել Վահանյանը... Հիմա մեկ քայլ առաջ կընե... Մեր թիկներն են... Աշխարհը կճանչնա... Մեր տղաքն են...

Տիկին Ալիսը սրտնեղում է՝ Հակոբ, մի խանգարե, ձգիր նայեն...

— Է, թող նայեն...

— Որտեղի՞ց քեզ այս կասետը, եղբայր Հակոբ:— Ես եմ հարցնում:

— Ունիմ, մի քանի ֆիլմ ալ ունիմ, սակայն... — Եվ սկսվում են արդեն ծանոթ գանգատները, հիմա էլ Միջերկրականի ափին:— Չայնասիյուրը չենք լսում, տեսակետ չկա, ֆիլմեր չենք տեսնում...— Եղբայր, մեզի ամեն ինչ կհետաքրքրի, նույնիսկ եթե «Արարատի» խաղերը տեսագրեք, վաճառքի հանեք, կգնենք... Համերգները, հեռատեսիլի ներկայացումները... Ամենը, ինչ որ կկատարվի մեր երկրի մեջ...

Այո, սփյուռքահայ ամեն ընտանիքում պետք է որ մի կտոր Հայրենիք լինի, որովհետև... «Հայաստան չըլլա, ես ինչու պիտի հայ մնամ...»

Բայց ինչպե՞ս անենք, ու՞մ դիմենք, ինչպե՞ս համոզենք, որ ամսագրերն ու թերթերը ժամանակին տեղ հասնեն, ժամանակին բան ասեն մարդկանց:

Չլուծված հարցեր շատ կան, կամա թե ակամա՝ կուտակվել են: Մեկն էլ, իմ կարծիքով, կենսական, ճակատագրական հետևյալ հարցն է՝ մեր երկու, միմյանցից տարբեր ուղղագրությունները: Մասնագետ չեմ, չգիտեմ ու չեմ հասկանում, թե ինչու ենք ժամանակին հրաժարվել դասական ուղղագրությունից, բայց հաստատ ու պարզ տեսնում եմ՝ չարիք է ազգի համար, Մաշտոցը գրով միավորեց ժողովրդին, մենք նույն գրով բաժանեցինք... Անջըրպետը, անդունդը երկու կեսերի միջև գնալով մեծանում է, խորանում է: Ով ում չի զիջում, և ինչը չի զիջում, չգիտեմ, սակայն բնական ու տրամաբանական է, որ նախաձեռնողը, առավել անհանգստացողը, հարցը լուծողը, անջրպետը վերացնողը մենք լինենք: Հայրենիքը: Պետությունը, եթե, իհարկե, նրա համար միևնույնը չէ երեքուկես միլիոն մարդկանց ճակատագիրն ու ապագան: Երկու երեխայի տեր Հակոբ Միքայելյանը պարզ ասաց, որ իրենք (այսինքն՝ բոլոր ծնողները) խուսափում են երեխաներին մեր գրքերին կապել, քանի որ դպրոցում աշակերտները շփոթվում են, չգիտեն որ ձևով գրեն՝ հին թե՞ նոր: Վերջապես հինը դարերով է ստուգված, նորը՝ մի քանի տասնամյակ:

Պուշկինը մեծ է, սուրբ անուն է: Հետազոտում, ժողովրդին են հասցնում նրա ապրած կյանքի ամեն օրվա, ժամի իմաստը, նրա խոսքն ու գրույցը: Ինչու՞ մեր Պուշկին՝ Թումանյան Հովհաննեսի ասածները, հենց թեկուզ նրա կարծիքը նոր ուղղագրության մասին, քանի տեղ չեն դնում: Նրա խոսքն ինչու՞ սրբություն չէ մեզ համար...

Լեզվաբան-օրենսդիր լինելը քիչ է, մի մարդու կամ նույնիսկ մի խումբ մարդկանց պատվամոլությունը դատարկ ու սին բան է: Մի ամբողջ ժողովրդի ճակատագրի հարց է, գոյատևելու խնդիր:

Այսօրվա լեզվաշինության գործում Սիյունքն էլ իր բաժինը պետք է ունենա...

— Մուսա լեռը պիտի տեսնե՞մ, պարոն Ադամյան:

— Հարկավ: Երթանք, քանի լույս է, ու եթե բախտ ունիս, եթե մշուշ չըլլա...

Մեքենաներով շտապում ենք ծովափ: Բասիդ է կոչվում այդ շրջանը, ծովեզրին շքեղ վիլլաներ են, ամառանոցներ... Սրտիս աշխատանքն արագացել է, սպասում եմ Մուսա լեռանը ու մտքումս սարսափում, որ հանկարծ կարող եմ չտեսնել: Հիմա եմ հասկանում այն սիյունքահային, որ Հայաստան է գալիս Արարատը տեսնելու հույսով ու... Չէ, բախտս բերում է, բախտ ունեմ, Մուսա լեռը ծածկված չէ մշուշով... Լեռը երևում է... Երևում է հայ մարդու արժանապատվության, խիզախության բարձունքը... Անվախ ենք եղել, այստեղ, առաջնորդ ենք ունեցել, մեր բակն ու մեր տունը պաշտպանել ենք, ուրուրը տեսած լեղապատառ չենք փախել, չենք սարսափել, մեկտեղվել ենք... Մեր երեսը պարզ անող Մուսա լեռ... Մուսալեռցիներ... Այստեղ դեռ առողջ ենք եղել:

Միջերկրականը, մեծ ու փոքրիկ ծիսանքով իր անվերջանալի քչփչոցն է անում ավազների հետ, ու այդ քչփչոցների, շնչունի մեջ պատումներ կան ցաւ մեր մասին...

Լեռը վիթխարի մեկնվել, պառկել է ծովափին ու ինքն իր մեջ լուռ մտորում է տեսածն ու իմացածը... Մոտենում եմ ջրին... Հին ծանոթի պես ալիքը ուրախ խշշոցով վազում է ինձ ընդառաջ, տաք ու փափուկ գրկում է սրունքներս, մի պահ մնում է այդպես, կարծես կարոտն է առնում, ապա փշրվում, փոփում է ոտքերիս տակ... Կռանում եմ, աղի ջուրը բուռ-բուռ ծփացնում եմ երեսիս...

Առավոտյան ուղևորվում ենք Քեսաբ՝ Կիլիկիայի պատմական շրջաններից մեկը: Առաջին աշխարհամարտից հետո նույնպես տրված է եղել Թուրքիային: Արտասահմանի հայերը ինչ-ինչ հը-

ճարքներով հասել են այն քանին, որ այս փոքրիկ հողակտորը մնա Մ' րիայի սահմաններում: Հայերը վերադարձել են իրենց տները:

Առաջին անգամն էմ Սիյուրքում հայկական գյուղ ու գյուղացի տեսնում:

Գրեթե Մուսա լեռան կողքին, գրեթե իրար կպած հայկական գյուղեր՝ Պաղջաղազ, Գարատուրան... Թվում է, Աշտարակի գյուղերից մեկում են՝ Ուշի կամ, ասենք, Բյուրական, այնքան է ամեն ինչ հայերեն ու նման... Հայերեն տառերով ցուցանակներ՝ «Անի» ճաշարան... Հայ մարդիկ փորում, վարում են այգիները, այրում կույտ արած տերևները, տների առաջ ավազ է, ցեմենտ, ինչ-որ բան են կառուցում, շինում, ու ամեն տեղ կոիվ է քարի հետ, մանր ու խոշոր քարի հետ, ինչպես բուն Հայաստանում, պայքար է մի թիզ հողի համար... Մեր խաչն է, մեր ճակատագիրն է քարն այս աշխարհում...

Փողոցով տարեց կին է անցնում, պարզ հագնված, պայուսակը ձեռքին, մեր ցանկացած գյուղում նրա նմանը կա: Հակոբը մեքենան կանգնեցնում է.

- Բարև, տիկին, ինչպե՞ս եք:
- Լավ եմ, շնորհակալ եմ...
- Ձեր անունն ի՞նչ է:
- Նվարդ...
- Սա պարոնը կճանչնա՞ք...

Տիկինը փոքր-ինչ կռանում է, ալեխառն գլուխը մոտեցնում մեքենայի պատուհանին, երկար զննում:

- Ամա՛ն... Նահապետը չէ՞...
- Ինքն է, — հրճվում է Հակոբը:
- Համեցեք տուն, մեզի համեցեք... Կաղաչեմ... Ասանկ չի ըլլար...

Հակոբը հասել է նպատակին՝ ինձ ճանաչել են: Ինքը հաղթանակած է:

— Մեկ ուրիշ անգամ, տիկին, մեկ ուրիշ անգամ...

Գարատորանի փողոցով վերին թաղից դանդաղ իջնում ենք ներքև՝ «Ծովի թաղը», դեպի ծով... Կողք կողքի երկու ծառապատ, կանաչ լեռներ փեշերն իջեցրել են տաք ջրի վիթխարի թասի մեջ, և դրանց արանքից անսպասելի բացվում է գուլալ ջրերի կապույտ հայելին... Չմայլելի տեսարան...

Վերադառնում ենք Գարատորան գյուղը: Մի տան առաջ, հենց փողոցում մարդիկ ցեխը շաղախ են արել՝ ինչ-որ պատ են շարում: Հակոբը իջնում է մեքենայից, մտնում նրանց մեջ, պարկն ուսին, չոմբախը ձեռքին՝ նրանց է միանում հավանաբար գյուղի հովիվը... Աշխույժ խոսքափոխ են լինում, հետո մոտենում են ինձ: Գոհունակ ժպտում են:

— Է, այո... Ջորի Միրոն է... Նման է...

Եղբայր Հակոբի ուրախությանը չափ չկա... Խմբով լուսանկարվում ենք... Հարազատ գյուղ, հարազատ մարդիկ, այսքան իրար նման, այսքան նույնը, այսքան բաժան, իրարից հեռու...

Եղբայր Հակոբի բարեկամ Մովսես Մանջիկյանի տունը վերջապես գտնում ենք: Դուռը բացվում է, դեպի մեզ է վազում ջահել, բարդու պես, բարակ ճիպոտի պես... Անին: Կլինի տասնվեց տարեկան, ինքը՝ մարալ, ամեն աչքը մարալի նորածին ձագ՝ խոնավ ու անմեղ... Ուրախ է, որ եկել ենք, նայում է մեզ, ժպտում է, դառնում է փայլփլող աստղիկ...

Խանդավառ է Անիի մայրը՝ Մարոն. խառնվել է իրար, ձեռքերը տարածել.

— Բարի, բարի տեսանք,— գրկախառնվում, համբուրվում են գեղավարի պինդ ու իսկական:— Ինդո՞ր եք, լա՞վ եք... Ալիս, Հակոբ... Գևորգը... Օհ, տիկին Սոսի... Ներկայացնում են ինձ: Նշանակություն չունի ով եմ:— Հայրենիքե՞ն է... Օհ... Ահ... Իրա՞վ կեք, Հայաստանե՞ն... Բարի եկած եք, լա՞վ եք... Աման, աման... Չըսե՞ս, մարդը Հայրենիքեն եկած է...

Մարոն՝ ասող-խոսող, սրտաբաց, հուզաթաթախ, սրախոս, մի

կրակ, մի հրաբուխ, մարդամոտ... Երկու բուսէ անց՝ հարյուր տար-
վա ծանոթ ենք, քույր-եղբայր ենք... — Պետությունը կարգիլէ
խնձորը մենք վաճառենք, ինքը կգնէ աժան... գործերը դժվարա-
ցել են, ապրելը սուղ է (այս ընթացքում հասցնում է մեզ սուրճ
հրամցնել)... Հասմիկը՝ մեծ աղջիկը, կես տարի է արդեն Երևան
կուսանէ, այնպիսի նամակներ կգրէ... Չըլլալիք բաներ: Արդեն
նպատակնիս ան է, որ Անին ալ հոն սուրէ...

Անին ներս ու դուրս է անում, հայացքս հետը տարուքերելով...
Ո՞ւմ է երջանկացնելու, ո՞ր շան որդուն, կյանքն ինչպե՞ս է տնօ-
րհնելու սրա բախտը, ո՞ր ցեղն է գեղեցկացնելու, ո՞ր ազգն է
ազնվացնելու...

Պատահել է, օվիբ եմ մտել գործով. պատերի տակ նստոտած
մարդիկ. նայել եմ ուշադիր: Հերն էլ անիծած, մտածել եմ ան-
բարեհաճ, թող կորչեն. բայց եթէ մեջները ջահել, սիրուն մարդ եմ
տեսել, սիրոս ցավացել է՝ կգնա, շներոց կլինի, իրանցով կանեն
մեր գեղեցիկը...

Մի անգամ չդիմացա. վիզը թեքած տարեց կին էր, հարցրի.
Ինչու՞ եք գնում...

— Բա չգիտե՞ս, եղբայր, խոսք ունենք՝ որտեղ հաց, այնտեղ
կաց...

Հա, ունենք, ինչ որ ճիշտ է, ճիշտ է, ունենք այդ խոսքը... Ան-
բան, կամակոր մի ձի ուներ քեռիս՝ ոչ լծվելիք էր, ոչ հեծնելիք.
անզգամը մի թուլություն ուներ՝ կերը: Քեռիս տանջվեց, տանջ-
վեց ու դրա թույլ տեղը գտավ: Մի իշաքեռ բարձում էր, խոտի
խորձը դնում թևի տակ ու առաջ ընկնում... Աչքը խոտին հառած,
վիզն ուզվորի պես երկարացրած, խոտը կամթելով, կամթելով,
կգնար... Թեկուզ աշխարհի ծայրը, ձիուկը...

Մարոյի հորանց տունը կողքերին է, հարևան են:— Անցնենք
հոն...

Տաքուկ տուն է, այժի մորթիները հատակին փռած, վառվում
է կարմիր բուխարին: Կրակը հաճելի է, քաշում է. խմբվում ենք

շուրջը ու այդ պատճառով ավելի մերձեցնում: Եղբայր Նշանն է գալիս՝ Մարոյի հայրը, մայրը, հարևանները... Քիչ առաջ տեսած քարտաշ-պատշար Նշանն է հայտնվում ընկերներով: Տունը լըցվում է: Տանտերերը սիրով են ընդունում թուրքին: Եղբայր Նշանը բերում է իր ձեռքով քաշած անմահական կարմիր գինին (Կիլիկիայի գինի են խմել, ուրեմն), կողքի ջահել հարևանուհին լավաշ է թխել թոնրում, տաք լավաշը բերում է դաստով: Մարոյի մայրը մոթալ պանիր է հանում, սոխ... Հրաշք... Հազար տարի է անցել, մոթալը չեն մոռացել, լավաշը չեն մոռացել Կիլիկիայում... Քարտաշ Նշանը գուսան է, պարզվում է՝ հոչակավոր: Երգում է, հետո տեղնուտեղը երգ է հորինում իմ գալու վրա, իմ եկած ճամփի համար, որ... Որ կսկսվե անուշ Հայաստանեն, կարոտի երկրեն... Հետո երգում է իմ խնդրանքով, Կիլիկիայի բարբառով... Սենյակում էլ տեղ չկա... Կենաց խոսքեր, հին ու նոր պատմություններ, կատակ, ծիծաղ, աղմուկ, տխրացած գլուխներ, գյուղի քեֆ... Մոռանում են, որ Հայաստանում չեմ: Տանն են, իմ ծանոթների, հարազատների հետ, մեր գյուղերից մեկում...

— Եղբայրներ, եղբայրներ, ինձի լսեք այսպես չի ըլլար, գառը պիտ մորթեն:— Նշանն է՝ տանտերը: Բոլորը համաձայն են: Ես թևը բռնում եմ... Մարոն, խինդը երեսին, մի րոպե դադար չունի՝ հրամայում է, կարգադրում է, սրամտում է ու ինքը զիլ ու թուրքից բարձր՝ կշկշում... Հիմա եղբայր Նշանը սիրո երգ պիտի երգե..

Նշանը պատրաստ է, երգում է իր հորինած Հովվի երգը, որ Կիլիկիայի սարերում կտոշորվե կարոտեն...»

Ծերունագարդ տիկին է Մարոյի մայրը, երևելի. ուշադրություն է գրավում, պատմում է՝ Երևան եկա, երեսուն տարի եղբորս չեի տեսած, գործեն տուն չէր եկած տակավին: Ըսի՝ չպիտի լացեմ, չպիտի լացեմ, երգեմ պիտի: Կնայիմ դուրս, հենց բակը մտնի եղբայրս, երգեմ պիտի... Չպիտի լացեմ...

Ուրքի է ելնում. ավեհեր կինը, բոքիկ ուրքերով այժու մոռոն:

վրա կանգնած ամենայն լրջությամբ հայտարարում է՝ երգ Ղարիպ աղբոր մասին...

Եվ ցուցադրում է, թե ինչպես է դիմավորել Երևանի Կիլիկիա թաղամասում իր հարազատին: Խորշումած դեմքը՝ պայծառ, ժպիտը՝ շուրթերին, ձեռքերը՝ խոսուն, երգում է... Երգում է երկար, որովհետև երգը երկար է, որովհետև հիմա էլ է կարոտում եղբորը, որովհետև ընդհանրապես սրտում կարոտ կա ու թեև ժըպտում է, ու թեև մարմինը ձիգ է ու հպարտ է կեցվածքը, արցունքները գլորվում են խորշումների արանքներով, գլորվում են, ընկնում են ցած...

Մարոն անխաձեռնությունը նորից է վերցնում: Ինչ-որ թվի մայիսի մեկին Երևանում է եղել, ամուսնու հետ: Օքերթի են դուրս եկել: Հայաստանի դրոշը հարազատներից վերցրել է ու ձեռքն առած երեք ժամ քայլել փողոցներով, անցել հրապարակով... Պատմում է Մարոն ու խնդում՝ Դրոշն ալ ծանրածանր, չափազանց ծանր... Ամուսինս տրտնջաց, արևը գլխուն էր զարնել... ալ ուժ չունի... Ըսի՝ ոչ, դրոշը քեզի չափտի տամ, դուն ալ չափտի հոգնիս, կողքովս պիտի քայես, չենե՛ ետ չեմ գար, քեզմե կբաժանվիմ, հոս կմնամ...

Ասպես, երեք ժամ վայելել է Մարոն իր պետականությունը...

Դե ասա՛ տուրիստ...

— Ով որ Հայաստանին դեմ է՝ իմ թշնամին է... Աս ձեռքերովս կբզկտեմ...

Եվ չնայած կատակով է ասում ու հոհոտում ենք նրա մարտական կեցվածքին ի տես, բայց, դե, ո՞վ գիտի...

— Իմ հոր տունն է ասիկա, իմ հոր կենացը պիտի խմենք, իմ պապերու, իմ տոհմի կենացը...

Տոհմ, տոհմածառ, արմատներ... Թե չէ դարձել ենք մի սերունդի մարդ, մի օրական թիթեռ...

— Ատիկա երջանկություն է, տոհմածառը հիշելը, պապու տունը հիշելը, գիտնալ, որ հորդ տունը կմտնես, հոն կապրիս... Մարդը

ադ է... Իսկ մենք՝ սփյուռքահայերս, աշխարհի փառահեղ պողոտաներուն վրա վրաններ է, որ կխփենք, ժամանակավոր կապրինք հոս, հոն, հոն՝ հոս... Երևանում, Պերճ Ֆալգյանն էր, որ բաժակ բարձրացրեց, այսպես խոսեց:

— Մենք զրկված ենք ամենաթանկ բանեն՝ հոր տունեն, որ տակավին խլած կմնա մեզմե:

Պերճը տաղանդավոր դերասան է, բեմադրիչ: Վերջերս Բելրոթից ընտանիքով տեղափոխվել է Կանադա:

Այո... Բայց ոմանց ձեռնտու չէ, որ մենք՝ հայերս, հիշենք մեր հոր, մեր պապի, մեր պապի պապի տունը, մեր հարազատ երկիրը... Ոմանց համար շահեկան չէ... Հասկանալի է՝ զավթել են ուժեղի իրավունքով, հույս ունեն վերջնականապես յուրացնել: Դուք գնացեք ավստրալիաներում, կանադաներում և այլուր մաշվեք... Ուժեղի բարոյախոսություն կա աշխարհում...

«Քաղաքականությունը հաճախ է լինում անբարոյական»,— այս տողերը Մ. Ս. Գորբաչովի ելույթից են:

Աշխարհում խորամանկի քաղաքականություն կա, ճարպիկի, անամոթի, լկտիների... Անբարոյականություն...

Սակայն այս բոլորը նշանակություն չունեն, եթե մենք եղբայր ենք, եթե միաբան ենք, հիշողություն ունենք, եթե մեր երիտասարդը որդևած չէ... Եթե մեր ծանր ու երկարատև, մեր արդար պայքարը տանուլ տանք, դա չի նշանակի, թե հակառակորդը ուժեղ էր, դա մեկ անգամ ևս կվկայի մեր սեփական անզորությունը...

Ծուտով ամանոր է: Սփյուռքի դպրոցներում ուսուցչուհին պետք է հարց տա երեխաներին.

— Երեխաներ, որտեղե՞ն կուգա Կաղանդ Պապան...

Փոքրիկները հավատով լի աչքերով՝ կպատասխանեն.

— Կաղանդ Պապան կուգա Հայաստանեն...

Կպատասխանեն, կսպասեն...

1987 թ.

ԾԱՌԸ՝ ԾԱՐԱՎ

Պայմանները թելադրեցին, սուտն էլ շատ է վարակիչ, սովորեցինք սևին սպիտակ ասել, սպիտակին՝ սև: Սուտ... Խոլերայի համաճարակի պես մի քան, դժվար կանխվող ու, երբ դառնում է համընդհանուր, ամոթը մեռնում է:

Ուրեմն, չեղածը եղածի տեղ դնելը դարձավ ապրելու նորմա: Կշեռք անելիս, ամանի քաշը դուրս չեկանք, աբրան չբռնեցինք: Ազնիվ ու հին այդ պայմանը, այս հին բառի նման, մոռացվեց: Կշովելիս, մի երեքանոցով կաշառեցինք կշոռղին, թե՛ մի քանի կիլո ավելի գրի: Գրեց: Խաբեցինք, խաբվեցին... Բայց մեզ տանողը մեզ ծնող հողն է, ու նա գիտի՝ մեր քաշը մնաց նույնը, չէ, չավելացավ: Հողից չենք ամաչում... «Այնտեղ, ուր մեղք են գործում շատերը, ոչ ոք հատուցում չի ստանում, փոքր արարքները պատժվում են, մեծերը՝ պարգևատրվում»: Դեռ ե՛րբ է ասել Մաքիավելին:

Աշխարհում առաջինը լինելու համար հարստանալը դեռ քիչ է. օրինակելին առողջ էլ պիտի լինի ու ոչ միայն մարմնով, ու ոչ միայն շեփորների ականջ ծակող հնչյուններով...

Իսկ կյանքն օվկիանոսի պես ծփում է իր բարդություններով ու քամահրում մեր լուսանկարչական կեցվածքները:

Եկավ կոմունիստների քսանյոթերորդ համաժողովը: Հունը թողնելով նույնը, կոմունիստները խնդիր են դրել գետը մաքրել կեղտաջրերից, քանդել անմաքուր. հոսանքների ճանապարհը: Ուզում են մեզ թմրությունից հանել, մանավանդ՝ կշեռքի գործը կարգավորել: Կենտրոնում: Մենք հեռու ենք կենտրոնից, առայժմ ուրիշի արածն ենք քննում կուլիսներում: Երբ ենք բեմ դուրս գալու...

«Օրենք դարձնենք իրերը կոչել իրենց անուններով, ամեն ինչի մասին դատել շիտակությամբ»: Գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի խոսքերն են: Խորհելու շատ բան կա: Բայց և՛ «սո-

վորությունն՝ այդ բռնակալը...», ականա միտդ են գալիս շեք-պիրյան այս խոսքերը: Էն ո՞վ է, որ առանց կովի, գիջելու է ձեռք բերած արտոնությունները: Չէ, այս խմորը դեռ շատ ջուր է ուզելու: Թող ուզի: Պատմական շրջադարձ է, վերակառուցում է: Հավատանք: Մտավորականներս էլ վերակառուցվենք (եթե ազնիվ ենք), մշակենք մեր սեփական կարծիքը (եթե ուժ գտնենք հրաժարվելու ձեռք բերած որոշ... «սովորությունից»), ճշտենք ում կողմից ենք, իմանանք՝ ինչն է, որ մեզ է վերաբերում:

Ամեն ինչը:

Տարիներ առաջ, Արևմտյան Բեռլինում, միջազգային թատրոնի կոնգրեսին ես էլ էի մասնակցում: Թատերական մեծություններ Ժ. Լ. Բարրոն, Բրեխտի աշակերտները, էլի շատերը խոսում էին անհրաժեշտ պաղեստինցիներից, Լիբանանից, համամարդկային այլ պրոբլեմներից և հատկապես ու շատ կրթոտ պահանջում էին թատրոնից, որ ամենաանզիջում պայքարը մղի հոգևոր արժեքները ոչնչացնողների դեմ, բնությունն ապականողների դեմ: Էսթետության ոչ մի նշույլ...

Համատեղ պետք է ապրենք մեր հսկա երկրի հետ, սակայն չպետք է մոռանանք, որ ամեն ժողովուրդ ունի իր դեմքը, ճակատագիրը, պատմությունը: Իսկ նախճիրների միջով անցած, բացառիկ ճակատագրի տեր հայ ժողովրդի երկխոսությունը աշխարհի հետ, կարևոր կետերում մնաց կիսատ: Համատեղ ապրելուց լավ բա՛ն: Բայց արդյո՞ք դա նշանակում է, ինչպես ոմանք են կարծում, ամեն ինչ մոռացության տալ, եղած-չեղածը լցնել մի ընդհանուր կաթսա մի կերակուր եփելու համար: Նոր էջը, թեկուզ և՛ «ոսկյա», ընդամենը մի էջ է և ոչ երբեք՝ գիրք...

Ինտերնացիոնալիզմը չի կարող նշանակել՝ մոռանալ կամ հրաժարվել այն ամենից, ինչը պատմականորեն, կենսականորեն քոնն է: Ինտերնացիոնալիզմը նախ և առաջ ազգամիջյան փոխհարաբերությունների սոցիալիստական էթիկա է, նրա նորմերի

պահպանումը: Բոլորի համար պարտադիր: Մինչդեռ հանդիսավոր օրերին ժպտադեմ արտասանած ճառեր լսելիս, միտդ է գալիս գետնին հավասարեցված Ագուլիս հայոց քաղաքը, որի գերեզմանատան տապանաքարերի վրա դմակավոր ոչխարն աղ է լիզում՝ լիզելով է մաշում հազար տարեկան «գրագետ քարը»: Լոում ենք, իբր տեղյակ չենք, իբր մերը չէ, մեր շնորհքով ու քրտինքով չի կառուցված, իբր, անտեր ապրանք է ու, եթե ձեր ու մեր բարեկամ լինելուն խանգարում է՝ ոչնչացրեք... Բաս: Քաղցր ժպտի համար շնորհակալ ենք ու բուռն ծափերով ամբաստանում ենք ժողովուրդների անխախտ բարեկամությունը...

Իսկ պատմությունը երբեմն վեր է ածվում ազատ շարադրանքի: Հորինում են սեփականը, ձեռքի հետ էլ՝ մեզ խմբագրում: Եկվոր եք (ուրիշ մոլորակից ենք եկել իջել Հայաստան), ձեր խաչքարը ձերը չէ՝ մերն է, էդ գորգը մերն է, ձերը չէ... պատմությունն էս մեկինն է, ճարտարապետությունը՝ էն մեկելինը... Իսկ Օուշի քաղաքում Առաքելովների կառուցած հույաշեն դպրոցը, էն Առաքելովի, որ ջրատար անցկացրեց քաղաքում, էն, որ բարի գործեր շատ արեց, էն, որ մահանալուց առաջ խնդրել էր՝ դագաղում ձեռքերս այնպես դրեք, որ ափերս բաց լինեն, երևան, մարդիկ տեսնեն, որ հետս ոչինչ չեմ տանում, ամեն ինչ թողնում եմ հարազատ քաղաքիս... ժողովրդին...

Եկվոր ենք... Դիցուք եկել ու նվաճել ենք... «Ուրարտուն»: Վաթսունյոթ տարի առաջ ամեն ծայրից մեզանից կտրածն ու իլածը չենք կարողանում հետ առնել, երկու հազար տարի առաջ մեր նվաճածը, մեր Հայաստանը հիմա ո՞ւմ տանք, տիրոջը որտե՞ղ գտնենք, երկու հազար տարվա պատմությունն ու՞մ նվիրենք:

Սրբագրում են, վերաձևում, կարում, հագնվում են և ուրիշի զգեստով ներկայանում աշխարհին: Դե գնա ու հիսուն տարի հետո ապացուցիր, որ սուտ է: Մեր աչքի առաջ ոչնչացնում են Անին,

մենք լուռ մղկտալը դարձրել ենք ազգային բնավորություն: Հակառակի պես էլ այնքան ենք կիրթ ու դաստիարակված (կամ՝ անտարբեր ու ծուլ), որ, տեսնելով ուրիշի լկտիությունը, ամաչում ենք նրա փոխարեն, լուռ ենք մատաղացու ոչխարի սուրբ հնազանդությամբ: Եթե պատմությունը գիտությունն է, ապա... Ապա ո՞ր են մեր գիտնականները: Բիայնա, թե՛ Ուրարտու, Ուրարտու, թե՛ Հայաստան... Հայ գիտնականները, ինչպես ասում են, մոլորվել են երեք սոճիների արանքում: Գողը որ տանից լինի՝ եզը երդիկից կհանեն... Այսպես:

Կամաց-կամաց մեղավորը դառնում ենք մենք, կամաց-կամաց մեր մեջ էլ բուսնում են մեզ մեղավոր հանողները (արգելում են, նույնիսկ, հիշելը): Անշուշտ մեղավոր ենք՝ չենք ուզել ստրուկ մնալ: Բայց դա մեր իրավունքն է:

Արևմուտքում հատուկ ինստիտուտներ կան ազգամիջյան մեր գործերն ուսումնասիրող: Սուր արմունկները գործի գցելը մի դեպքում, լռելն ու խեղճանալը՝ մյուսում, ստվեր են գցում սոցիալիզմի հեղինակության վրա: Պատկերը փչանում է:

Պատմության մեջ անձնական իմ գանձը իմ ապրած ժամանակն է: Սրա հետ է հախն ու հաշիվը, իմ տուր և առը, իմ պարտքն ու պատասխանատվությունը, ուրախությունը, անմիջական ցավը: Բայց կարելի է ապրել յուղոտ շրթունքներով, յուղոտ պատառը բերանում ու չզգալ ո՛չ անցյալի, ո՛չ ներկայի կծուն, կարելի է ապրելու հրճվանքից պարզապես տրճիկ տալ, անմիտ ծուլ-ծուլ լինել...

Հարևաններ ունենք՝ հացն ամբարել են վաղուց, հիմա գաթա են թխում: Ընդօրինակում ենք՝ մենք էլ ենք գաթա թխում, պակա՛ս էսթետներ ենք... Հա, բայց լեն օրվա գործերի հասել ե՞նք, որ:

Հսկա սառցաբեկոր է «տասնհինգ թվականը», արյունը մեջը լերդացած այսբերգ պատմական մեր ուղու վրա: Հմուտ ցատկորդներ ունենք՝ վրայից ցատկում են, ճարպիկ շրջանցողներ ունենք՝

շրջանցում են, բայց նա կա՛ անողոք, սառը սրությանը խոցում է մեր հիշողությունը, մեր նալի բնականոն ընթացքը խաթարում ու մոռանալու մասին կոչերը չէ, որ նրան՝ հալեցնելու են...

Ծշմարիտն այն է, որ պահանջին ծառայենք, պատմական իրադարձություններից բխող տրամաբանությամբ շարունակվենք... Էսթետիզմը նեղլիկ կաժան է, շեղ է գնում, ժողովրդի ճամփից մեզ դուրս է գցում... Դերասան ես, թատրոն-կինո, պետք է նման լինես քեզ ծնող ժողովրդին: Բա ինչու՞ է քրտինքը մեջքին ունչպարը քեզ համար հաց անում. առավոտներն էլ դեռ ուզում ես կաթ խմել՝ ուղարկում է... Բա ինչո՞ւ են ասում՝ ժողովրդի ակընկալիքների արտահայտող...

Անցնենք առաջ:

Հիմա միտքս հերոսի մասին է: Մեր մեջ ապրող հերոսի, որ ինքնահաստատվել է կյանքում, որ իրավունք է նվաճել բարձրանալու բեմ: Բայց որտեղից վերցնես, եթե կյանքից բացակա են, կամ այնքան են ստվերում, որ մեր խեղճ դրամատուրգները տեղները չեն գտնում: Իսկ միգուցե լավ չե՞ն փնտրում. փնտրելն էլ մտածելու պես ծանր գործ է...

Տարօրինակ է, որովհետև փոքր երկիր է այսօր Հայաստանը՝ մեծ պրոբլեմներով՝ ճիշտ ու սխալ լուծված, չլուծված... Պատմություն, ճակատագիր... ծով հարստություն, ու չենք կարող չունենալ արվեստ՝ համամարդկային ընդհանրացումների հասնող, չեն կարող չլինել ժողովրդանվեր որդիներ: Վերջին հարյուրամյակը, գոնե, խտացված-քամած դրամատիկական նյութ է, ողբերգական ճակատագրի սյուժե: Ու թեև փոքր ազգ, բայց մեծ պատմությամբ...

Հերոս, ուժեղ մարդ, անհատականություն, խիղճ, պատասխանատվություն... ծրարված հարցեր, արդեն բացած ծրարներ: Սևան... Ուժդ չի հերիքում՝ ափին կանգնած, սատկած ձկները ոտքերիդ տակ. շուռ գաս, հայացքով գտնես ջրի ծփանքի տեղը՝ սպիտակ եզրը: Չէ, շուռ չես գալիս, քեզ իբր մխիթարում ես, որ

Սևանի նախկին ամեհի, ժեռոտ ափերը, նրա բիբլիական վեհու-
թյունն ու շառաչող վայրիությունը շրջապատել են քաղցր-մեղք
ծառ ու կանաչով, դարձրել սովորական մի «գեղատեսիլ», «քաղ-
քենական» լճակ: Մեր անկրկնելի նմանեցինք: Ընդօրինակեցինք:
Էսթետ ենք...

Չէ, շուտ չես գալիս, վախենում ես սիրտդ ցավից ճաքի, վա-
խենում ես սպիտակ եզրը թույն թփ՝ արհամարմանքի ու վրեժի,
վախենում ես, որովհետև մարդ ես, բանականություն ունես, բայց,
սպիտակ եզրին նայելով, սեփական գլուխդ դատարկ կլոր տուփ
է թվում քեզ այդ պահին...

Սևանին մահացու վերք ենք հասցրել մենք: Մեկը հղացել է
այդ միտքը: Մտավորական արվեստագետներին մեջ ասող չկա՝
ո՛չ հղանար, ո՛չ դալարեր էն ձեռքը, որ Սևանը տաշտի պես շուտ
տվեց: Ներե՛նք հայ դրամատուրգներին: Իրականում անողի ձեռ-
քը բռնող չի եղել: Մտավորականներ...

Հայց ակադեմիայում «կարդինալների կոնկլավը» համբացել է,
պապանձվել է. բայց հնարավոր է ծափահարած լինեն:

Իսկ Սևանը իմ, քո, նրա կյանքի ժամանակահատվածում
ծածանի բնակատեղի է դառնում: Կապույտ Սևանը դեղնակա-
նաչում է: Իսկությունն այս է: Այս ենք տեսնում: Երկիրը մի տաս-
նամյակինը չէ, մի սերնդինը չէ, մի մարդունը չէ... Մենք մեր
բաժին «իշխանը» կերանք: Անիծելու է հորն այն որդին, որի հա-
մար նա հայոց փոքրիկ գետակներից կարմրախայտ է որսում դի-
նամիտով: Անիծելու է, քանի որ վաղն էլ ինքն է ուզելու կարմրա-
խայտ բռնել, բայց չի լինելու: Դինամիտով, քլորով, գործարանով
սպանվում են գետերը... Ականջդ կանչի, Թումանյանի Դև-Բեդ...
Մեղա...

Կուրթան գյուղի տակ, Ղաչաղանի ձորում այգեպանն ինձ
ասաց «Առավոտը ծեփն երկու հրաշք եղնիկ անտառից դուրս են
գալիս դիպի գետը, ջուր խմելու: Նայում եմ, տատիս հեքիաթ-

ները միտս են գալի... Բայց մարդու բան չասես, շան տղերքը, որ տեղն իմանան, կգան կապանեն, կլափեն»...

Ու սպանողի ձեռքը բռնող չկա, երկրի հարազատ զավակը չկա... Համարյա չկա իրականության մեջ, համարյա չկա արվեստում: Էկոլոգիական խնդիրներն աշխարհը ցնցել են՝ մենք բեմ ենք հանում կիսաքաղքենի, կիսագյուղացի, կիսաչար, կիսաբարի արարածներ: Պուճուր մարդկանց, պուճուր տառապանքներ...

Իրամատիկ թատրոնում՝ դրամատիկ վիճակ...

Միջին դարերում Մանդակունի կաթողիկոսը արգելել է ժողովրդին թատրոն գնալ (հատուկ կոնդակով), Լյուդովիկոսները Մոլիերին վտարել են Փարիզից, Անգլիայի թագավորները, որու արքաները հալածել են, օրենքից դուրս են հայտարարել, վախեցել են անօթևան, սոված դերասաններից: Ինչու՞:

Սրանք մի բան են տեսել, որ ուրիշները չեն էլ նկատել, բարձրաձայն մի բան են ասել, որ մյուսները մտածել են միայն: Քառասուն տարի է թատրոնում եմ, չեմ հիշում, որ վերևից մի ներկայացում արգելվի, մի ֆիլմ փակվի: Ի՞նչ ենք անում, որ արգելվի... Մենք մեզ համար խաղում ենք գրված-թխած պիեսներ: Լեռնային գյուղերն անդարձ ավերեցին, ասինք՝ այո, կեցցե, իմաստուն է՝ խոշորացնել գյուղերը: Հետո հակառակ որոշում ընդունվեց, էլի ասինք՝ կեցցե...

Երևանի Աջափնյակը, հիշում եմ, ընդունվեց որպես ճարտարապետական մոքի փայլատակում. հիմա քանդվում է. պարզվում է տեղանքը սխալ է ընտրված: Հանճարեղ Թամանյանի հոշակերտ հրապարակին կից դրվում է «Ռոսիա» կինոթատրոնը, դիմացն էլ կախովի պատշգամբներով հսկա ու անհերթելի մի շենք, ասող չկա՝ չի սազում, էլ ի՞նչ եք անում, Թամանյանն ախր, կնեղանա... Ոսկու գին ունեցող հողերն ինչու՞ են թաղվում ասֆալտի տակ... Այս որոշումներն ընդունող մարդիկ իրենց գործից որքա՞ն են տեղյակ, մտահասու... Այսպիսի հարց տվող չկա, հոսանքին հակառակ գնացող չկա...

Չէ, մեր պաշտոնյաները պետք է որ շատ գոհ լինեն հայ մտավորականությունից, մեր ձեռքից չնեղվեցին, մեր պատճառով նրանց ախորժակը չփչացավ, հոգին չխռովվեց, կասկած չընկավ սրտները, թե արդյոք ճիշտ են գրավում իրենց տեղերը, բարոյակա՞ն է, առաքի՞ն է, ազգօգու՞տ է իրենց գործունեությունը... Ու չնայած այն՝ վերը ասված դերասան-մտավորականների հետնորդներն ենք, չհավածվեցինք: Ամեն մեկիս մի բան տվին՝ կոչում, պաշտոն, մեդալ, ու յուրա ենք գնում իրար հետ...

Մենք էլ ենք շնորհակալ... Բայց ամեն մարդ տաղանդավոր լինելու իրավունք չունի...

Ստեփանավանի ճամփան բռնի, Կալինինոյի, մտիր Աշտարակ, Ապարան, Ծաղկահովիտ, Աջափնյակի տիպային շենքերը կարծես հատուկ ցուցադրում են օտար ճանապարհորդին բետոնե կամ ժանգը վրան երկաթե անավարտ ճաղերով պատշգամբներ՝ տգեղ, անճոռնի, գորշ: Հասիր Սպիտակ: Սպիտա՞կ է որ...

Չերկարացնեմ: Ուր էլ գնամ՝ տիպային բնակելի շենքեր, տիպային դպրոցներ, մանկապարտեզներ, տիպային գոմեր... Տիպային մարտնչող անճաշակություն:

Օրջանում ապրող մարդկանց համար իրենց կենտրոնը շրջանի մայրաքաղաքն է (առաջներում գերբ են ունեցել). այս հոգեբանությունը նկատի առնելով պետք է կառուցել շրջկենտրոնը՝ ավանդները, բնաշխարհին սազող երանգավորումները չկորցնելով: Մեզ օրինակ՝ Սիսիանը կամ Իջևանը, վերջապես՝ ավանդական, դասական Գորիսը:

«Տանդ դարպասը քանդիր, կամարակապ սարքիր... Քաղաքիս պատկերը մուրտառում ես: Շինածդ դարպասը կամ կամարակապ պիտի լինի կամ՝ չպիտի լինի...» Սերո Խանգաղյանի գրքում այսպես է խոսում գորիսեցու հետ քաղխորհրդի նախագահը: Քաղաքի տերը տիրություն է անում... Ավանդված է կառուցել «Դարու Ե ոչ՝ տարու համար»:

Ութսուներկու գույնի քար ունենք. հարստություն, բնության պարզև, ինչպես կասեր լուսահոգի Ռաֆայել Իսրայելյանը: Դրանք տեղը դնող է պետք... Քաղաքին տարեգրություն է պետք, որտեղ պետք է գրվի՝ այսինչ թվականին, այսինչ քաղաքապետի օրոք, այսինչ ճարտարապետի ձեռամբ բարձրացավ այսինչ շինությունը: Բարոյական մեծ պարտք ունենք՝ սերունդներին տալ այսօրվա «հերոսների» անունները...

Իմ ծննդավայր Ստեփանավանը հայտնի էր կղմինդրե կարմիր տանիքներով: Աչքդ շոյում էր ծառերի կանաչի հետ պար բռնած կարմրությունը: Ուզում եմ մեղմել խոսքս, բայց Ստեփանավանի ամեն թերացում իմ ցավն է, ամեն հուշ՝ մի փուշ:

Ստ. Ծահունյանի հսկա արձանը վիթխարի շենք-թանգարանով դրված է փոքրիկ քաղաքի միջամասում: Երևանին հարմար չափեր: Ծնչահեղձ է լինում քաղաքը, օտարանում է մի տեսակ: Ակամա հիշում ես նախկին տուն-թանգարանը՝ կղմինդրե տանիքով, գեղեցիկ պարտեզով, ծաղիկների մեջ թաղված համեստ կիսանդրիով: Պատմություն էր, հուշ էր: Նոր շենքը հիմնարկ է... Թող ներվի թույությունս, բայց չեմ կարող չհիշել Ստեփանավանի մաքուր փողոցները, փոքր, բայց միշտ աշխույժ շուկան (հիմա շուկան տարել են ծայրամասում թաքցրել, ամաչել են առևտրից, գաղափարներով են սնվել շրջանի տերերը) և հին խանութների շարքը, դեպի ձորն իջնող մեծ սալաքար աստիճանները, աջից իրար կպած արհեստանոցները, դիմացը քարի աղբյուրն իր երկար գունով, պղնձե «առյուծի երախ» ծորակով (այդպիսի արվեստով հիմա ո՞վ կտաշի Լոռվա բազալտը) և, վերջապես, քարի գլխին դրած եկեղեցին, որի վեհությամբ հիանում էիր Լոռվա հարթավայրի գրեթե ամեն ծայրից:

Քանդողները պատասխան չտվեցին...

Եկեղեցու զբաղեցրած տեղում, հին տապանաքարերի, խաչքարերի տեղում զոռ տվեցին խելքներին ու կառուցեցին... ռեստորան: Լոռվա ձորերը խնկարկվեցին քյաքաքի հոտով...

Չորերում, յոթ ջրադացների փոխարեն (իհարկե, նույնպես քանդված) հիմա գործում է մի ճենճահոտ խորտկարան-ճան-ճանոց... Ու ասում են՝ homo sapiens կնշանակի մարդ քանական...

Լոռվա ձորերում հիմա ջրադացյալներ չկան, «աշլիկ» տղերք՝ որքան ուզեք...

Հազարամայկներում հղկված գյուտ էր ջրադացը, հոգեբանություն, գեղագիտություն, հարյուրից ավել հայերեն քառ (որոնք ինչու՞ ենք կորցնում), էներգիայի խնայողություն, արահոտ մարդ...

Չէ, չկար տեղացի այն հերոսը, որ կուրծքը դեմ աներ պապերի ստեղծածի համար: Մինչդեռ հնությունը կիրառական կենսագրություն է, երեկ՝ պատմվածք, այսօր՝ լեզունդ, վաղը՝ մարդուն հայրենիքի հետ կապող բարոյական կատեգորիա: Սանդուղքի ներքի աստիճանի պես կքանդես հնությունը ու կմնաս օդում կախված... Աշխարհում ուժեղ քամիներ էլ են լինում...

Առանց հերոսի ի՞նչ պատում, ի՞նչ դրամա: Բայց, ախր, ապրել է մեր մեջ Ռաֆայել Իսրայելյանը, որի ստեղծումները պայքար են, հոսանքին հակառակ մտածելակերպ, գորշությանը՝ կոիվ, որի հայրենանվեր կյանքը մի պիեսի, մի սցենարի նյութ է: Ո՞վ կթափանցի այս հոգիների խորքերը՝ նրանց բեմ հանելու, կյանքին վերադարձնելու համար:

Առայժմ մեր հերոսին մեզ դրսից են մատնացույց անում: Կարապետյան Ծավարչը իրեն վտանգելով (կամավոր) ուրիշների կյանքն է փրկում, «Հայֆիլմը» թեմա է փնտրում... Թե՞ դադարել ենք հավատալ մեր հերոսանալուն, կամ ծանր հիվանդացել ենք. անունն ի՞նչ դնենք... Ասենք՝ ցինիզմա՞խտ:

Ուրիշը մեր վարն անելու չի, ու դայակի փեշերից կախվելն ամոթ է: Որքանով է ինքնանկախ գեղարվեստական մեր միտքը, որքանով ենք մենք մեզանով, այդքանով էլ կհետաքրքրենք ուրիշներին: «Գնա և տես» ժապավենը պետք է որ ոու՞ էլեմ Կլիմովը նկարեր, պետք է որ վրացիները «Ջոջային», մենք պետք է որ

«Նահապետը» նկարեինք... Այսօր Բրեդերի ենք նկարահանում: «Հայֆիլմում»: Օտար նյութով համամարդկային, համաշխարհային, գլոբալ հարցեր ենք լուծելու... Մեր հարց ու խնդիրը լուծել պրծել ենք: Եվ հանրահայտ ճշմարտությունները հիշեցնող չկա, ասող չկա՝ այ ընկեր, օտարամոլ, ֆիլմը աշխարհայացք է, քաղաքական դիրքորոշում է, ժողովրդի պատմությունն է, ազգային հոգեբանությունն է, դարդ ու ցավ է... Ուրիշ տեղից բերածը քո տանն ընդամենը անբան «սուլեհիր» է...

Մեծ Ռուսիայի այսօրվա մեծ զավակներից մեկն ասում է. ինձ՝ ռուս մարդու, բնավ չի ուրախացնում, ենթադրենք, մի ժողովրդի դանդաղ, աստիճանաբար վերանայու, ոչնչանալու հեռանկարը, նրա ամբողջական ձուլումը մի ուրիշ ժողովրդի հետ: Ինչպիսի՞ անձկությամբ կլցվի աշխարհը, ինչպիսի՞ ձանձրույթ կհեղեղի մեզ, եթե մնա միայն մեկ լեզու՝ էսպերանտոյի նման: Ինչի՞ է պետք նման ապագան...

Ժողովուրդների բարեկամությանը նվիրված տասնյակ ճաներն ու միտինգները, կարծում եմ, չեն կարող այնպես ամրացնել փոխվստահությունն ու եղբայրությունը, որքան այս մի քանի տողը:

Հայաստանում ապրող ադրբեջանցի երեխան հաճախում է մայրենի լեզվով իր դպրոցը:

Թիֆլիսում մի հայ ընտանիք հյուրընկալեց մեզ: Ներս մտան երկու մանչուկ՝ սևաչյա, առույգ, սիրուն: Հետները խոսեցինք, շփոթված, աչքները ճայճացրին: Մայրը վրա հասավ.

— Երեխեքը հայտնեն չեն գիդում (ինքը գիտի), վոսցու դրարոց են գնում... Էնդուր, որ վոսցու դարոցը մոտիկ ա:

Վրաստանում, Ադրբեջանում ստիպված կրճատվեցին հայկական դպրոցները: Մենք մեզ ու մեզ նեղանում ենք: Բայց ի՞նչ անեն մարդիկ, որ դու չես հաճախում: Ստիպե՛ն: Առանց այն էլ վրացիները ամեն գնով պահում են հայկական թատրոնը: Ջահել, հայրենասեր մեկը չկա, մի ռեժիսոր, որ գնա ղեկավարի այդ՝ այն-

քան հարուստ ավանդներով թատրոնը: Դերասաններն էլ չեն գնում: Գեղարվեստաթատերական ինստիտուտի մտքովն էլ չի անցնում նախաձեռնող դառնա, Վրաստանում ապրող հայ երիտասարդներից նպատակային մի կուրս հավաքի... Մի խոսքով... Նույնը՝ Ստեփանակերտի թատրոնը: Հայոց մշակույթի օջախներ, անտեր թողած գործեր...

Վերադառնանք մեր տունը...

Ծակատագիր, փա՛ռք Խորհրդին, վաղուց մեզ ցաքուցրիվ չի անում, իսկ հայոց դպրոցներում երեխաների թիվը դժվար է ավելանում: Հարազատ հողի վրա, Հայրենիքում: Հայ տիկիները գոնե նախանձե՛ն իրենց քթի տակ ապրող աղքեջանցի իրենց քույրիկներին, որոնք տասից պակաս երեխա չեն ծնում ու արժանանում են «Հերոսուհի մայր» կոչմանը: Այդ մասին մեր տիկիներն, անշուշտ, կարդում են «Խորհրդային Հայաստան» օրաթերթում: Հիրավի, իսկական հերոսություն, իսկական հայրենասիրություն: Իսկ մենք երեխայից շատ ավտոմեքենա ունենք...

Հերոսուհի էլ չունենք: Ունենք մեր քեներում նվնվացող կինարմատներ, իբր՝ ինտելիգենտ, կամ, էմանսիպացիան վայելող կապը կտրածներ... Իսկ Աղբյուր Սերոբի կողքին Սոսեն՝ կյանքը վտանգելով, հրացան էր քաշում Էրգիրը փրկելու համար...

Երկրում արժեքների վերանայում է գնում. դա պետք է վերաբերի նաև ազգային հարցերին: Երկրում վերակառուցում է, թող դա կիսատ-պոստ չլինի, միայն խոսքով չլինի:

Մի հանդիպման ժամանակ Ռ. Վահանյանին հարց ուղղեցի. «Ուզու՞մ եք աշխարհի չեմպիոն դառնալ»: Դահլիճը, որ բացառապես հայ մտավորականներով էր լեցուն, հեզկորե՛ն հոհոաց: Կարծեցին ասելիքս էր՝ եթե սկուտեղի վրա հրամցնեն, կվերցնե՞ս... (Ի դեպ, Ռաֆիկի միջամտությանը չեմպիոնական գործերին հիմա էլ եմ հավատում):

Հմուտ ձեռքերով արհեստին տիրապետողներ կան՝ մի ամբողջ կյանք սկզբնախաղեր են խաղարկում, ինչպես շախմատում, միջ-

ճախաղ չեն մտնում, որ տեսնես թե արվեստում սրանց գիճճ ինչ է, ասելիքն ինչ է...

Եթե չի խիզախում դրամատուրգը, եթե իրականության խորքերը չի մտնում թատրոնը, եթե հեռուն տանող նպատակ չկա ու չկա ազգային դիրքորոշում, քաղաքական կազմակերպված միտք, դերասանն ինչպե՞ս դառնա իր երկրի արժանավոր քաղաքացին, ինչպե՞ս դերասան դառնա: Ամեն թատրոն ազգային է ամենից առաջ ազգային կյանքի պատկերումներով: Այսպես է ասել Հովհ. Թումանյանը: Մեծի խոսք:

... Հայկական դիվիզիան հասավ Բեռլին: Ֆաշիզմի դեմ Եվրոպայում կոպող հայերն ավելի շատ զինվոր ունեին, քան Ամերիկան: Կեսը չվերադարձավ... Ողբերգական քանի ճակատագիր, քանի պիես, կինոսցենար: Մխրանքի, խիզախումի, մարդ լինելու քանի օրինակ... Բայց երկրորդ համաշխարհային պատերազմի արհավիրքները չպետք է վարագուրեն Առաջին աշխարհամարտի հայ ժողովրդի ողբերգությունները: Արծվի սիրտն է վիրավոր, թե՛ ճնճողուկինը, ցավը՝ ցավ է. պետք է ենթադրել նույն անտանելի ցավն են պատճառում տիրոջը: Հիշենք Ֆրանց Կաֆկայի խոսքը՝ փոքր ազգի հիշողությունն ավելի փոքր չէ, քան մեծ ազգինը:

Հերոսը ժողովրդի ազատագրության համար ե՞րբ է զոհվել՝ քառասունհինգի՞ն, թե՞ տասնհինգին, Արևմտյան ճակատու՞մ, թե՞ Արևմտյան Հայաստանում...

Մի կարգին արձան չունենք Անդրանիկի հիշատակին՝ մի ողջ ազգի արժանապատվությունը փրկող մարդուն: Ասում ենք՝ Սարդարապատի ճակատամարտ, ասում ենք՝ ժողովուրդը ելավ, հաղթեց: Բայց ղեկավար է ունեցել այդ ժողովուրդը՝ իր Մինինը, իր Պոժարսկին: Հայրենիքի համար իրենց կյանքն են տվել այդ ղեկավար սպաները: Ցարական սպա են եղել... Ցարական բանակ է եղել՝ բա ի՞նչ լինեին: Պատմության այս էջը, ժողովրդի համար

բախտորոշ պատմության էջերը պոկելով, ջնջելով, լոռության մատնելով ի՞նչ նպատակ ենք հետապնդում:

Մեր կողքին դաշաղներից հերոս են սարքում, մենք երդվյալ մեր հայրենասերների որբացած անունները վախենում ենք տալ: Հայաստանի ամեն մի թիզ հողը հայ ֆիդայու արյունով է ներծրծված: Եղել են այդ մարդիկ, եղել է ազատագրական շարժումը, եղել են կամավորները ուսական բանակում, ու մի քիչ էլ նրանց ենք պարտական, որ այսօր կանք: Մենք ինչու՞ ենք թանաքով ջնջում արյունով գրածը... Իրերը կոչենք իրենց անուններով..

Ժողովուրդը պետք է լայնորեն մասնակցի պետական գործերին (այսօրվա դրվածքն է), պետք է ամեն ինչին տեղյակ լինի: Մանավանդ՝ իր ճակատագրին վերաբերող գործերին:

Աշխարհով մեկ, պետական մեքենայի բութ ուժով Թուրքիայի կառավարությունը հակահայկական գործունեություն է ծավալել: Աննախադեպ լիտիությամբ շուռ են տալիս պատմությունը, սևը սպիտակեցնում, ստով սեփական ժողովրդին թունավորում, գցում մեր ջանին: Հրապարակայնության այս դարում կցկտուր տեղեկություններ ունենք: Սիյուռքի մի քանի լիարժեք հենք ու սատար չունեցող հայրենասերներ զուտ ազնիվ հոգու իրենց ուժերով փորձում են դիմագրավել, մենք մեղավոր քաշվել ենք մի կողմ, դրանց թողնել անտեր: Մեղավոր... Մենք ենք, կարծես, զավթել ուրիշի քաղաքներն ու գյուղերը...

Թուրքական բոլոր քարտեզներից վերացած է «Հայաստան» անվանումը: Իննսուն տոկոսով փոխված են հայկական բնակավայրերի անվանումները: Յունեսկո-ի ուսումնասիրությունների համաձայն, գետնին են հավասարեցված հազար երեսունվեց վանք ու եկեղեցի: Թուրքական բանակի զինավորածությունների ժամանակ թնդանոթների համար թիրախ են ընտրվում հայոց վանքերն ու եկեղեցիները: Իսկ այն, ինչ չեն հասցրել ոմբակոծել, քանդել, հետքը կորցնել՝ տուրիստներին ներկայացնում են որպես

վաղ միջնադարի սելջուկյան ժամանակաշրջանի օսմանյան ճարտարապետության նմուշ:

Այս տվյալները հրատարակել է բուլղարական «Օտեչեստվենի ֆրոնտ» օրաթերթը (1968, հոկտեմբերի 8):

Ապրիլի քսանչորսն է... Մեր մամուլը ուժեղացված խոսում է մեր նվաճումների մասին, կարդում ենք լուռ ու անցնում միլիոնավոր նահատակների հուշարձանի կողքով: Լուռ... Համազգային մեր սգի օրն է... Բայց ինչու՞, թեկուզ լուռ, չեն խոնարհվում պետական դրոշները, և եթե չայցելես Ծիծեռնակաբերդ, ինչի՞ց կըզգաս, որ Հայաստանում այսօր սգո օր է:

Արտասահմանում հաճախ են նախատում՝ բավական է խոսեք պատերազմի մասին, շատ տարիներ են անցել, մոռացեք... Ոչ: Չպետք է մոռացվի: Միլիոնավոր զոհերը չեն լուռ... Ամեն մեկը մի մարդ է եղել, ծնվել է, որ ապրի: Սպանել են: Տասնհինգ թվականից հետո թուրքական ֆաշիզմը մոռացության տվին: Լռելու, կոծկելու, ստի ու կեղծիքի վարձը եղավ գերմանական ֆաշիզմի ծնունդը: Մեծ տերությունների, դիվանագիտական մեծ խաղերի արդյունքը եղավ մեծ ավերածությունը, արյան մեծ հոսքը... Ժամանակին ճիշտը չասացինք Սևանի մասին, հիմա Բայկալն է նույն փորձանքին եկել: Փորձն ու պատմությունը, ինչպես հայտնի է, դասեր առնելու համար են, բայց դաս տվողը պետք է ազնիվ լինի, գոնե՝ ճշմարտախոս:

Կյանքի դասերից մեկն էլ, ըստ իս, այն է, որ անհատը պատմության մեջ մեծ դեր է խաղում, հսկայական ուժ է անհատը: Խնդիրն այն է, թե ինչ ազդանշաններ է արձակում նա: Ինչ ազդանշաններ են արձակում մեր բեմերում գործող հերոսները... Խակ մեր հոգևոր հայրենիքը...

Այսօր թատրոնն ու կինոն աշխարհին մեզ ներկայացնողների առաջին շարքում են: Մեզ, մեր բնավորությունը, կենցաղը, բարոյական մեր ըմբռնումներն ու կուտակումները, ապրելու մեր փիլիսոփայությունը: Ոչ մեկին չխաբենք, չներկայանանք ավելի լավ

քան կանք: Սակայն ինչու՞ երևանք ավելի վատ, քան կանք իրականում: Ամեն ինչ մեր մեջ է, ամեն ինչ սկսում է մեզանից: Ներկայանալուց առաջ նայենք մեզ, մեզ հասկանանք: Մեր գլխով շատ քան է անցել, տեսնենք ինչպես ենք դուրս եկել...

Սենտիմենտալ (իմա՝ փսյնքոտ) հարցեր ենք քննում մեր մեջ՝ ով է մեզ սիրում, ով չի սիրում: Օրիորդի նման սիրի-սիրի ենք խաղում... Ինքդ քեզ սիրիր: Տոներին գոնե ազգային մի տարազ հագիր, սովորիր երկու ձայնով երգել, սովորիր խմբով երգել, մի երգը մինչև վերջ իմացիր, գյուղում տուն ես շինում (ապարանք)՝ զուգարան-լողարան դիր մեջը, քո ազգային ուղ գործիքը նվագիր. Զալալօղլու հին դպրոցը, ուր Թումանյան Հովհաննեսն է սովորել, դարձրու սրբատեղի և ոչ թե հիմարաբար քանդիր, ավելի մեծ ո՞վ ունես: Երկրից դուրս ես գնում, քեզ պարկեշտ պահիր: «Գում»-ում գրաստի պես մի բեռնվիր ի տես աշխարհի, հասկացիր, ազգ ես ներկայացնում... Յուրիկ Վարդանյանը բարձրացնում է, դու իջեցնում ես, Արամ Խաչատրյանը վեր է տանում, դու քաշում ես վար, Պարույր Սևակը ասուպի պես փայլատակում է, դու մեջքիդ ճարպն ես թաքուն ավելացնում:

Հարստանում ենք, հարստանում ու մեկի համար դառնում ենք գրգռիչ պատառ, տալիս են գլուխներին ու խլում... Մինչդեռ ասված է՝ ոչ միայն հացիվ... Այսօր քո պարծանքը էլի հոգևոր կուտակումներն են, մի քան էլ դու ավելացրու:

«Հենց այնպես գոյություն ունենալու մեջ փառք չկա:— Ռաբինդրանաթ Թագորն է ասել:— Ժամանակները նոր են, ազատ սիրո գաղափարը՝ հրաշալի, բայց փատիվն էլ վեհ գաղափար է. վեհացնող»:

Խորամանկի համբավ ունենք. մենք էլ միամտաբար թեժացնում ենք: Անհեթեթ, ծիծաղելի, զավեշտական քան... Խորամանկ ազգը այսքան երկար, այսպես հիմնովին կկոտորվե՞ր, այսքան միամտաբար սրան նրան կհավատա՞ր, տասից ինը կկորցնե՞ր: Բայց մեզ այդպես գիտեն ու էլի ինչ-որ բաներ՝ մեզ չկաշող, չբռ-

նող... Իսկ թե ինչպես ենք աշխատում, ինչքան ենք աշխատունակ, քանի քար ենք շուռ տալիս մի թիզ հող արարելու համար, երկու-երեք տասնամյակում ինչպես կառուցեցինք մեր մայրաքաղաքը, ինչ գնով կանաչեցրինք մեր դաշտերը, քարի վրա ինչպես ենք ծառ անեցնում,— աշխարհին հայտնի չէ, այս մասին չգիտեն... Ինչու՞ ենք հողագնդով մեկ ցրված, ինչու՞ ենք դյուրագրգիռ, ինչու մինչև այսօր չի փակվում մեր վերքը, ինչու ենք իրար հանդիպելիս լաց լինում... Քչերին է հայտնի, ու մեղքը նաև մեզ ներկայացնող արվեստի՞նն է, արվեստագետ մտավորականներինը:

Հայրենագուրկ, սոված ու մերկ, բզկտված ու խոշտանգված ընկանք օտար ափեր: Պարզ է՝ մեզ լավ չենք պահել, մեր արժանապատվությունը խոցված, տրոհված է... Լավ չենք ներկայացել, բարձրության վրա չենք եղել: Մեր ջլատված երկիրը, ջլատված հոգին, տրոհված էությունը, ամեն գնով ապրելու ճիգերը, մեր համաշխարհային գաղթականությունը կարեկցանքից բացի, նաև արհամարհանք են հարուցել օտարների մեջ: Համապատասխան կարծիք, վերաբերմունք:


Ուրեմն, երեք անգամ լավը պիտի լինենք այսօր, պետք է վերջնականապես վերագտնենք մեզ, մեզանից լավը լինենք, որովհետև հայ լինելը մեր խաչն է:

Այս ամենով հանդերձ, մեր ժողովուրդը մի հրաշալի հատկություն ունի՝ հոսող ջրի նման կեղտերն ափովն է տալիս, ինքնամաքրվում է: Քչանում է, ճիշտ է, բայց տակն անընդհատ զուլավում է... Գնացողը թող գնա, ուրացողն՝ ուրանա: Մենք հավատանք նրա զուլալ հոսանքին, առողջ արմատներին...

Երկիրը քանդում է անմաքուր հոսանքների ճամփան: Մենք այս գործում հետ չբնկնենք...

1987, հունիս

Calypso's Funerary



ԵՎ ԴԵՐԱՍԱՆ ՄԻ՝ ՀՐԱՉ ԱՆՈՒՆՈՎ

...Եվ կա ու կլինի խոսք հնոց մասին ու նորոց մասին: Քանզի հինը եղել է, նորը պետք է որ կայանա: Ու կլինեն վեճեր, մեծ բախումներ կլինեն, որովհետև նորն ուզում է իրականությունն ավելի անաչառ տեսնել:

Ու միշտ կլինեն ջահելների տաքարյուն, որ կգոչեն փրփրաբերան.

— Նրանք հնաոճ են, մենք՝ նորարար,— ու կնեղեն ահելներին, որ նրանք իրենց տեղը զիջեն սորանց: Ու կասեն մեծ հավատով.

— Մեզնից, մեր սերնդից է սկսվում իսկական թատրոնը հայոց ու պատմությունը նորա..

Հետո կլինի այնպես, որ աննկատ կանցնեն տարիներ և կպակասի «թոհ-վոհն», ու կշատանա մարդու մտածելիքը: Ու նոր նորեր կգան, ու նորից կկրկնվի այն, ինչ եղել է բազում անգամներ ու լինելու է:

Թող միշտ բարով գան նորերը, ու հիմա էլ արդեն... բարի ճանապարհ մեզ:

Քառարշավ անցավ կյանքդ. օրերով պղտոր ու զուլալ, բեմում հաճախ աննկատ, նսեմ, բայց երբեմն էլ ծփացող ծափերով, ալեկոծումներ եղան աջ ու ձախ, մտքեր ճիշտ ու սխալ: Տանջալի փնտրտուր...

Անցավ: Սակայն, նախքան գնալդ դու մի անգամ չէ, որ կուզ-
վես էությանդ խորքերը՝ տեսնելու, թե կա՞ն արդյոք կուտակում-
ներ, մի քանի հատիկ արժեք ստեղծվե՞լ է...

Ու եթե այո, ապա, աստված իմ, այս ինչքան քան կա, որ կա
հենց այն պատճառով, որ քեզանից խելոք քո բնությունը, ի հե-
ճուկս մեծամտիդ, սովորել է նրանցից, հին մեծերից, ավանդա-
կաններից:

Եվ այդժամ է, որ հոգիդ կլցվի հրճվանքով, ու դու կգոհանաս:

— Ես քամու բերած չեմ,— կասես,— անարատ չեմ, և ես
առավել կբավարարվես, որ աշակերտ ես եղել խոհեմ ու խոնարհ,
ու նաև հմուտ, որ փոխ ես առել, յուրացրել այն ամենը, ինչը
կյանքի իմաստուն դրվածքով որդին սովորում է հորից:

Եվ արդար է խոսքը, որ ասում է՝ տեսնովի սովորովի: Քանզի
եթե ինձնով սկսվեր ինչ-որ քան այս աշխարհում, ինձնով էլ կա-
վարտվեր:

Ու սա ասված է այն իմաստով, որ արարչի ստեղծած ամեն
մի շնչավորի պորտ կտրում են, ճիշտ է, սակայն դա չի նշանա-
կում, թե դու կապված չես եղել մորդ հետ:

Բայց կան և բացառություններ երջանկածնունդ: Ազգը երբեմն
առ երբեմն խախտում է բնական կանոնը՝ անհրաժեշտ պահին,
ինչ-որ մի կետում խտացնում է սեփական արյունը, բնեռացնում
հոգու ուժերը ու ծնում մեկին, որի պորտը այդպես էլ չի կտրը-
վում ոչ մայր հողից ու ոչ էլ մայր ժողովրդից:

Եվ ծնունդն էլ հենց այդ... «դերասան մի՛ Հրա» անունով):

Եվ այո:

Եվ պատանի իմ տարիների լուսե հայտնություններն էին նը-
րանք, դեռ չձևավորված հոգուս մատղաշ անտառներում արևուր
բացատներ փարոսի նման՝ հանճարեղ Փափազյանից սկսած մին-
չև այդ սերնդին հարող վերջին մոհիկան, հայոց բեմի մեծ ոռ-
մանտիկ Բաբկենը:

Կարոտում եմ պոեզիայով լեփ-լեցուն թատրոնն այն, ու միտ-

քրս համառ ճամփաներ է գտնում դեպի հետ, տանում նրանց աշխարհը...

Ահա... Հոգիս շիկանում է տեսիլներից բեմական, մտովի տեսնում և դեմքեր թանկագին, որ դարձել են դիմակ ու դեր ու մարդկերպար, մարդ-աշխարհ...

Ու լսում եմ կենդանի ձայները նրանց՝ տարբեր, բազմազան:
— Նրա հայրը... Հայրը, հայրը: Մի կամ երկու բառ գնալուց առաջ... Հալեպում... Հալեպ, Հալեպ, փաթթոցավոր մի թուրք ծեծում էր...

...Սաղաթել, գնանք կուր...

... Ցերեկ չարչրվի, գիշեր չարչրվի... Հիմի՞ բարիշենք... Էս ոսկի պատերը, որ սարքիլ իս, ու՞մ փողերով...

— Ամաչում ես, որ իմ աղջիկն ես, հա՞... Տո, Մարտիրոս... Տո, հայվաններ... Փողերս բերեք, քոչում եմ, հուր-հավիտյան գնում եմ:

...Ինչ ասա՞վ... Մարքրիտին տեսիլ է ու հավնիլ... Դիպի խափում ինք ու խափում... Աշխարհս մե կարաս է, ով մեկին դեսը կբրդի, մեկելից...

...Իսկ հագիդ փարաջան փոշի՞ է... Փշիր, Գավրիլա, փշիր... Բոչորն են մեռնում, իսկ ես ինչու՞, ես Եգոր Բուլըչովս...

...Լինե՞լ, թե՞ չլինել... Նա մարդ էր, Հորացիո...

Ու կրքերի հեղեղ էր, մտքի ամպրոպներ, բախումներ մարդկային բնավորությունների, խաղ, խաղ՝ թեթև, վարակիչ, դիտողի հետ երկուստեք հաճույք, մեծ մանկություն, արվեստ, թատրոն, ծաղրածուներ հանճարեղ ու... կախարդանք համակ:

Բայց ինչու՞ է այսքան մեծ տանջանքս: Անբավարարվա՞ծ եմ այսօրվա թատրոնից, թե՞ խփել է գնալու զանգն իմ առաջին, կամ գուցե մարդկային պարզ մի ցանկություն՞ն՝ գոյությանս հանրագումարի գիծը քաշելուց առաջ ճանաչեմ ինքս ինձ:

Նրանց շնորհիվ ճանաչեմ:

Քանզի մի՞թե կհասկանաս քեզ, եթե չես ճանաչում Հորդ:

Ուրեմն, հուշերս քաղցր ու կարոտս հարազատ որսացել են պահն այս ու բերել կանգնեցրել են ինձ հսկաներից մեկի առաջ:

Նրա աչքերն էին Գեղամա լիճ, հայացքն էր հուրհրացող, հայոց հրաբուխ էր ինքը, իսկ սիրտը կարմիր թոնիր: Երկու այտերին հայոց վշտերի երկու խորն ակոս, հասակը պարթև, ճակատը վրսեմ, իսկ արյան մեջ ցեղի պատմության կանչը պահանջկոտ:

(Արյուններ կան՝ հիմար, հիշողությունից զուրկ):

Ու ես խոնարհ աշակերտ մի որպես, ակնածանքը սրտումս, ընդհատվող շնչով քարացել եմ կարծես: Ուզում եմ տեսնել, լսել, իմանալ իմաստն աչքերի, ուզում եմ կրկին ներծծվել նրա թատրոնահոտ էությանը, ըմբռնել կյանքի խորհուրդը նրա, նրա ապրելու նշանակությունը:

Հասկանալ:

Եվ ժողովուրդը հայոց և Հրաչ. և ժողովուրդը պարզապես ասում է՝ Հրաչ, ինչպես մայրն է կանչում զավակին: Եվ ժողովուրդը հրաշագործ է ու հավիտենական, եթե կարողանում է ծնել իր ուզած զավակին իրեն պետք պահին:

Եվ, այո: Նա ծնեց նրան հինավուրց իր հեքիաթներից, արդար առասպելներից, հանգչող հրաբուխներից, անխնդում հոգուց, իր թուլացող շնչից: Ծնեց ժայթքելու նման, ծնեց, որ ապրի նաև նրանով:

Պետք էր:

Ուրեմն, պետք էր, որ հղացավ ու լույս աշխարհի բերեց հրեղեն Հրաչին:

Ու մինչ այդ եղել էր ժողովուրդը, բայց բզկտվել եղեռնի մղջավանջներում: Տրորվել էր, ազգային արժանապատվությունը փրկելու համար էր պատժվել ու վոնդվել **երգրից**, նրա ժայռերի ծերպերին թողնելով սեփական մորթու ծվեցները և հողը թողնելով պապական, որ դարձել էր կարմիր ու կարմիր...

Ընկճված էր հայը ու անհավատ. խեղճությունն էր բուն դրել նրա հոգում: Բայց կար ապրելու ցանկություն:

Ու նա եկավ ճիշտ այն պահին, երբ ազգն ուներ ապրելու ցանկություն:

Եվ ասաց՝ «Պարտված եմք, բայց ոչ փշրված»: Եվ օգնեց, որ ի մի գան:

Եվ ասաց՝ «Տգեղ շենք մենք, ոչ էլ տկար, մեր կորությունը ոչ է ի ծնե»:

Եվ շատերը մեջքներն ուղղեցին:

«Մենք գեղեցիկ ենք եղել ու կդառնանք առավել գեղեցիկ:

Չե՛ք հավատում: Նայեք ինձ. ահա ես, որ ծնվել եմ ձեր կամքով, ձեր մարմնից, ձեր արյունից: Ես ձերն եմ ու ձեզանից, ու դուք բոլորդ ինձ նման»:

Եվ տեսան, որ նա իսկապես գեղեցիկ է ու առնակյան:

Եվ ասաց՝ «Ես դուք եմ: Թող կորչի թախիծն ու ողբը, նետվենք առաջ դեպի նոր կյանք, դպի խնդություն»:

Եվ այսպես խոսեց բեմերից ու էկրաններից, և նրան հավատացին:

Ու մարդը պետք է ծնվի տեղին ու ժամանակին, ու գոյությունը նրա պետք է անհրաժեշտ լինի և պետք է ունենա նշանակություն:

Ու քայլեց զարմանահրաշ իր քայլվածքով նոր քաղաքի նոր փողոցներով:

Եվ հայր տեսնում էր Հրաշին ու հպարտանում, որ ինքն էլ հայ է:

Ու միշտ էլ երկնքից պարզև է մեծ, որ դու ունես մեկը, որ բարձր է, և դու պատճառ ունես վեր նայելու:

Հրաշը մարտիկ էր մարտիկների մեջ ու զինակիցը այն առաջնորդների, որ բարձրացնում են ազգի արժանապատվությունը:

Նրա արյան կարմիր գնդիկներից ծնվեցին հրաշունչ, հուսավատ կերպարներ և դարձան հայ մարդուն ընծայված հրաշալի խորայներ: Իսկ ինքը դարձավ համազգային սեր ու պաշտամունք: Նրա Պեպոն, ամեն մի դերը նրա ընկալվում էր որպես նոր կյանքի

սկիզբն ու հաստատումն: Հումանիստ արտիստը ժողովրդի համար վավերացնում էր նոր կարգերի գաղափարները:

Ու անհագ է ժողովուրդը: Նրան դուրս քաշեց բեմից, էկրանից, իր գիրկն առավ, ներծծվեց նրանով, հալեց իր մեջ:

Ու այդպես անցավ ժամանակ ու պարզվեց, որ աշխարհում չկա մի հայ, որ առասպելական Հրաշի հետ գավաթ բարձրացրած չլիճի...

Եվ եկավ օրը: Հրաշը պառկել էր արդեն հրաժեշտի համար: Եվ ասաց՝ «Ուզում եմ Երևանի փողոցները մի անգամ էլ շրջել»: «Կտանենք,— ասացին,— ձեռքերի վրա կտանենք, ուզածիդ չափ ման կտանք»:

Հայ ժողովուրդը իր հազար ձեռքերով տարավ նրան Երևանի պողոտաներով:

Տարավ հանգստարան...

Նորերը գալու են:

Մենք դեռ կանք:

Նա եղել է...

ԱՐՏԻՍՏ ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Ծակատին շարմաղ լիպուսին էր...

Սովորաբար մարդիկ գոյություն ունեն, կան, տաշեղի պես հոսանքն ընկած, ապրում են այս աշխարհում, ապրում են այնպես, ինչպես մի անգամ իրենց ծնել են... Էլ ինչ նեղություն...

Ոմանք քրտինքը ճակատին, ողջ մի կյանք մաքառում են, վերստեղծում, կառուցում են իրենց՝ ի վերջո մի բան դուրս բերելու ակնկալությամբ: Հարգանքի արժանի...

Եվ քչերն են, որ երկրորդ անգամ, հեշտ ու անքրտինք, ծնում են իրենք իրենց ինչ-որ մի կոչման համար, և այդ ծնունդը լինում

է նույնքան բնականոն ի կատարյալ, որքան առաջին անգամ Վորից ծնվելը... Փառք, պատիվ, խոնարմունք...

Եվ այսպիսին էր արտիստը... Երկրորդ անգամ ինքն իրեն ծնել էր քեմի համար՝ տափաստանների վայրի նծույզի ամբողջականությամբ: Բայց ճշմարիտ է, որ մեծագույն հրաշագործը ժամանակն է: Ապրում ես մարդու հետ գրեթե կողք կողքի, երկար տարիներ աշխատում, շփվում և, հասկանալի է, կապվում ես հետը սև ու սպիտակ, հազար տեսակ անտեսանելի թելերով: Չէ՛ որ նույն կոլեկտիվը, ծառայության նույն վայրը, մանավանդ թատրոնական կալեյդոսկոպիկ բարդ փոխհարաբերությունները բազմատեսակ երազներ են պարունակում իրենց մեջ: Իհարկե գիտես, իհարկե արվեստագետի հոտառությունը թույլ չի տալիս մոռանալ, որ գործ ունես մեծ մարդու հետ...

Բայց, ախր, ամեն օր մեծության հետ շփվել կլինի՞...

Բանաստեղծը, նկարիչը շաբաթներով, ամիսներով իրենց գործն անում են սեփական արվեստանոցում փակված, տարին մի քանի անգամ հայտնվում մարդկանց որպես տեսիլք, պահպանելով դրանով անվան շուրջը ստեղծված խորհրդավորությունը:

Մինչդեռ... Դերասան է, ամեն օր, ամեն ժամ քեզ հետ, ամենքի համար, կարծես ապրում է ափիդ մեջ. թաքցնել թուլությունները, այսպես կոչված՝ խոհանոցային գաղտնիքները, համարյա անհնարին գործ է:

Դերասան է՝ վկաներով մշտապես շրջապատված, ու բոլորն էլ տատմոր նման անսքող հայացքով նայում են, սպասում, տեսնում... Ի՞նչ է քո ծնածը...

Եվ, մի խոսքով, մեկ էլ տեսար մերկ ու անպաշտպան կանգնեց աչքիդ առաջ...

Դերասան է, բայց հետն էլ մարդ, անձնական միշտ դժվար հոգսերով (որպես կանոն՝ անձնականը բարդ, խճճված), լուծված-չլուծված պրոբլեմներով, բնավորության ինչ-որ գծերով, որ հարկ չկար իմանալինք, երբեմն հոգնած, երբեմն սրտնեղած ինչ-որ

բանից, կյանքից զզված երբեմն... Այո, ո՛վ գիտե, ո՛վ կզգա, թե ինչպես է ծեքծեքվում, ինչ աստիճանի է ջարդուփշուր լինում նրա հոգին հանկարծակի անհաշողությունից, կոպիտ արված դիտողությունից: Եվ, ընդհակառակը, ինչպես է թե աննում խրախուսական մի հայացքից: Երբեմն էլ սեփական փոքր սայթաքումներով (պատահում է նաև մեծ), որ քաղքենու նեղ աշխարհում դառնում են առաջնային և առիթ տալիս շարախնդայու...

Եվ երբեմն էլ ստիպված է լինում ընտանեկան անախորժությունների փեշատուտը հետևից քարշ տալով մտնել թատրոն և... և... և...

Առանձնապես տեսանելիք է սովորում նրա կերպարանքին, նիստուկնացին, սովորում ես հետը շփվել, վարել առօրեական գրույցներ, փորձի նստել նույն սեղանի շուրջը, խաղալ նույն բեմում և, աստիճանաբար նրա ներկա լինելն ընկալում ես սովորական, սովորական...

Անարդար է, իհարկե, բայց այդպես է. միևնույն մարդկանց հետ երկար տարիներ (գրեթե ողջ կյանքդ) նույն թատրոնում աշխատելը դերասանի հոգում շատ ու շատ բան է խամրեցնում:

Ինչեւէ...

Իսկ բաժանման տխուր օրը գալիս է հանկարծակի. մեծ մարդու հրաժեշտն այս աշխարհին լինում է հանկարծակի, ճայթող ամպրոպի նման ու ամպրոպի պես էլ բոլորին շփոթեցնում, խառնում է իրար:

Հուղարկավորության պատրաստվող թատրոնն այդ օրերին իր մեջ ծնում է մի ուրիշ թատրոն: Բեմադրվում է վերջին ներկայացումը: Մեծ արտիստի համար ներկայացում, որի միակ ու գլխավոր դերակատարը ինքն է, և ժողովուրդը, որ հեղեղի պես այդ օրը լցվում է թատրոն, գալիս է ոչ միայն հրաժեշտ տալու իր սիրեցյալին, այլև դիտելու վերջին ներկայացումը նրա մասնակցությամբ...

Սակայն կորստի կսկիծը, ափսոսանքը, ցավը աստիճանաբար տեղ են գտնում հոգուդ մեջ և զարմանալի համառությամբ պարտադրում են մտածել դերասանի կյանքի մասին, նրա փխրուն՝ իր հետ անցնող ու անէացող արվեստի, հասարակության մեջ գրաված նրա տեղի, նշանակության ու շատ-շատ այլ բաների մասին, որ ուղղակի կապ ունեն թատրոն կոչվող երևույթի հետ:

Եվ հանկարծ քեզ բռնում են այն բանում, որ միջիցդ չքվել է նրա անվան հետ կապված «սովորականությունը», որ մտածում ես անսովոր, քեզ ոչ այնքան ծանոթ, անհասանելի մի մարդու մասին: Եվ այլևս ընտանեկանության ոչ մի հետք:

Պետք է խորն ու խոնարհ իջեցնես գլուխդ նրա անունի առաջ...

Հետո, շատ արագ, գրեթե անմիջապես, դաժանության հասնող ճկունությամբ թատրոնը, իր կոչմանն ու բնույթին հարազատ, վերադառնում է իր մի պահ ընդհատված երթին: Ամեն ինչ ընկնում է իր նախկին հունի մեջ: Գնացողը թող գնա. կյանքը շարունակվում է...

Ու այստեղ է, որ ժամանակը սկսում է քանդակել իր հրաշքը՝ եթե ձեռքի տակ նյութ կա. մարդուն ծնում է արդեն երրորդ անգամ ու արդեն սերունդների համար՝ որպես լեգենդ:

Հիշողությանդ խախալը մաքրվում է ավելորդ տիղմից, ավազից, ցանցի վրա թողնելով փայլիլուն ոսկյա հունդեր, որ հատիկ-հատիկ շարվելով Արտիստի կնճոռոտ ճակատին, իրենց հրաշալի փայլով ամբողջացնում են նրա կերպարը ու, մշտապես ծիլեր տալով, դարձնում նրան ազգային արժեք...

Մի մեծ գերդաստան նրա հույսին էր... Մեզանում սովորություն կա ասելու (տեսնես ո՞վ է ասել)՝ «անփոխարինելի մարդ չկա»: Սոսկալի խոսք՝ վախենալու, շատ հեռուները տանող դժբախտ հետևանքներով: Ասել է թե՛ մեկ մարդը, անձը, անհատը ոչինչ է, զրո, ընդհանրապես ոչ մի արժեք չունի, գին չունի, ուրեմն և...

Կարգ մը մարդիկ շատ են սիրում այս խոսքը, նրանք, որոնք միշտ պատրաստ են ամեն տեղ, ամեն ինչ, ամեն մեկին ամեն գործում փոխարինել: Մինչդեռ փոխարինողը իր երկրորդը չունի, չի կարող ունենալ: Ինքը միակն է, եզակի և, ուրեմն, անփոխարինելի, ինչպես մարդու հայրը, մայրը, սիրած կինը, ընկերը, ի վերջո (և ի սկզբանե)՝ Հայրենիքը...

Պարզապես հաշտվում-սովորում ենք փոխարինողի բացակայությանը, այնինչ, միշտ կա մեկը հենց ինչ-որ մի տեղի, ժամանակի համար: Համենայն դեպս, մեծ արվեստագետն անփոխարինելի է իր ժամանակի համար:

Եթե մեկ բառով ուզենամ բնութագրել նրան, ապա պետք է հիշեմ իր մասին ասած իր իսկ խոսքը. «Բանվոր եմ, բանվոր մարդ եմ...»

Բանվորի խղճով էլ ապրեց իր կյանքը, աշխատեց: Բայց, կարող էր, կարծում եմ, նույն հաջողությամբ ասել՝ ուսանող եմ, քանի որ բանում էր գյուղի անխոնջ մշակի նման առավոտը ծեփից մինչև ուշ գիշեր:

Արտաքինն էլ, կարծես, կացնով տաշած-սարքած կոճղ՝ կոճղի ամրությամբ, ուտաշատությամբ: Մի տեսակ ծանր դիմագծերը ու, հատկապես, ամուր տեղադրված խոշոր քիթը առանձին մի խրոխտություն, արտահայտչականություն էր տալիս նրա ողջ շինվածքին:

Դերասանական նրբագեղության նշույլ իսկ չունեիր, միայն գեղեցիկ, սևին տվող աչքերն էին, որ ամեն բույե, թաքուն մի իմաստությամբ, վկայում էին նրա հոգու անդադար աշխատանքը: Չգիտեմ, չէ՞ր կարող թե չէր ուզում, բայց կյանքի և ոչ մի հոգսից չկարողացավ պատասխարել իրեն: Ապրում էր իրականության խորդուբորդ ալիքներում թավալ տալու նման ու, թերևս, դրանից էր, որ կյանքայնանում էր ինքը, ու կյանքահամ էր դառնում իր արվեստը: Բոլորին կերակրող մեծն էր՝ փոքրերի բոլոր պարտա-

կանությունները վրան: Այո, այդպես: Բայց դե վար անողին ջրի ուղարկելը ո՞րն է...

Սովորաբար այդպիսի մարդկանց շրջապատողները համոզված են, որ պահանջելու պարտականությունը պատկանում է իրենց, կատարելունը՝ նրան:

Որովհետև...

Ինքը բարության քայլող մի դեպ էր... Մարդկանց հասնելը, նրանց օգտակար լինելը նրա համար ապրելակերպ էր: Հռչակված իր անունով, վիթխարի հեղինակությամբ բախում էր ուզածդ հիմնարկության դուռը ինչ-որ մեկի ինչ-որ անձնական մի հարց լուծելու համար:

Պարկեշտ ամուսին էր, հայր էր հոգատար, ներողամիտ, բարի, չափազանց ուշադիր ու պատրաստակամ, և այդ բոլորն առանց արտաքին քաղցրմեղքության, առանց սենտիմենտալության: Հաճախ կարելի էր տեսնել՝ ծանր զամբյուղներով բեռնված շուկայից կամ խանութներից տուն գնալիս: Ու չէր ամաչում, չէր քաշվում. պարտականություն կատարելը ամո՞թ է, միթե...

Կամ գուցե պարզապես սովորել էր իր այդ վիճակին:

Թատրոնում ծանրաբեռնված էր, կյանքում՝ բեռնված. քաշում ու գնում էր առաջ, քաշում ու իր հետ տանում էր առաջ:

Նա, ով կամովին մտնում է հոգսերի տակ, ականա ընկնում է մի սարդոստայնի մեջ, որի խորամանկ տիրուհին այլևս թույլ չի տալիս դուրս պրծնել իր այնքան հմտորեն հյուսած ցանցից:

Նրա ապրելակերպին հետևողը կարող էր կարծել, թե նա սպառվեց, վերջացավ, հանգավ, մերվեց կենցաղին ու անդարձ կենցաղայնացավ:

Այո, ընտանիք, այո, հոգսեր, այո՝ ծնել ես, ուրեմն, տեր ես, երեխադ չգիտի, որ արտիստ ես, եթե իմանա էլ, դա նրան չի մխիթարում, նա ունի իր երեխայական պահանջները, և դու ունես քո Հայր պարտականությունները:

Սակայն, այսպես թե այնպես, զարմանք էր պատճառում նրա

այդ աստիճան սովորական լինելը: Ախր ոչ մի խենթ բան չէր ա-
նում, ոչ մի աչք զարնող, արտաոռոց տարօրինակություն չունէր:

Իրականում ինչ ամենի ուժի տեր պետք է լինէր՝ հոգեմաշ
հոգսերի ծանր խորձը, հավիտենապես քեզ կարկատած կենցա-
ղային բեռը համատեղելու այն սքանչանքին, այն երկնային երե-
վույթին, որի անունն է Թատրոն...

Եվ, սակայն, երբ թատրոն էր մտնում, երբ բեմ էր բարձրա-
նում՝

Նա ինքն իրենից բուսնում, աճում էր:

Ինքն իրեն տիրում ու նվաճում էր... «Ես իրավունք չունեմ
ատ խաղալու...»

Այսպես էր ասում ամենայն լրջությամբ: Խումբը, խաղընկեր-
ները փոքր-ինչ անլուրջ էին ընդունում նրա այս կարգի հայտա-
բարությունները, իսկ ավելի հաճախ դարձնում զավեշտի նյութ...
Եվ այսօր է, որ ըմբռնում, հասկանում ես, թե պատասխանատու-
յան ինչ խորը գիտակցություն էր դա, ինչպիսի հարգանք, ակ-
նածանք հանդիսատեսի հանդեպ: Հանդիսատես, որ միշտ սպա-
սում էր նրան, հավատում էր...

Նա հասկանում էր, որ հանրաճանաչ լինելը փուչ բան է, եթե
վաստակած չէ դառը քրտինքով և եթե նրա հիմքում ընկած չէ
ժողովրդի հարգանքը:

Ուրեմն՝ կարող եմ թե չեմ կարող, ուզում եմ թե ոչ, առողջ
եմ թե տկար, ունեմ տրամադրություն թե ոչ... Պետք է լավ խա-
ղամ: Պետք է ծառա դառնամ իմ գործին, որ կրկին ու կրկին
հաստատեմ իմ անունը...

Թատրոն էր մտնում լայն կուրծքը դուրս գցած, բարձր պա-
հած հպարտ գլուխ (չէ՞ որ սունդուկյանցի էր...) և միշտ
հաստատուն քայլերով: Չգիտեմ, գուցե և սնաղմուկ էր քայլում,
բայց ինձ միշտ լսելի էին նրա ոտնաձայները:

Լցվում էր թատրոնը, համ ու հոտ առնում, մի տեսակ թատ-
րոնանում էր թատրոնը, շքեղանում՝ նրա գուլալ արտիստակա-

նությանք, կեցվածքով, ձայնով, պահվածքով: Ինչքան էին սագում իրար՝ թատրոնն ու ինքը... Մինչև անգամ թատրոնական ֆուկլորը՝ անցյալի և ներկայի, մեծ մասամբ կապված էր նրա անվան հետ:

Ներկայացման զանգերի հետ խփում էր նրա աստեղային ժամը: Մրցության դուրս եկած նծույզի նման անհամբեր փնչացում էր կուլիսներում, հետ ու առաջ անելով՝ ծանրանում, թանձրանում, ինքնախտանում էր...

Բեմ էր մտնում, բեմ էր լցվում լավայի նման հախուռն, առատ ու միշտ շիկացած, միշտ շոալ, հյուսեղ...

Ձուկն ընկնում էր ջուրը. փորձիր նրա հետ հավասար լողալ...

Համառ էր...

Մի տեսակ դերասանություն կա՝ հեշտ, որ մատչելի է շատերին ու շատերն են անում: Բայց կա, երևի, արվեստում մի աստիճան, մի գիծ, մի անտեսանելի ինչ-որ սահման, որ կարողանում են անցել միայն մեծերը: Այդ սահմանից այն կողմ արվեստի այն աշխարհն է, ուր տիրություն է անում նորին մեծությունն բնագործ՝ իր ուրույն օրենքներով կամ, ավելի ճիշտ՝ անօրինություններով... Կոշտն ու կոպիտը այնտեղ գեղեցկանում են հանկարծ, անհետթեթը լցվում է իմաստությամբ, անտրամաբանական թվացողն անհմանալի կերպով ստանում է գեղակազմ ձևեր, ճշմարիտ թվացողը դառնում սուտ ու աննշան, առերես գեղեցիկը՝ անճոռնի...

Բայց ի՞նչ է բնագործ տգետ ու աղքատ հոգում. խեղճ ու մոլորված մի մութացիկ, որ տեղ չի գտնում ապրելու, արմատակալելու... Ծմրթված հոգու ճմրթուկ է բնագործ, գոեհկություն է, եթե նրա հենքը չէ կյանքի իմացությունն ու ընդերքային իմաստությունը:

Իսկական խրախճանք է սարքում բնագործ, եթե մերձենում է տաղանդավոր հոգու, տաք սրտի տեր, կյանքի բովում թրծված,

տառապած էութունը... Անսա ինքդ քեզ, նախ՝ քեզ: Անսա և կը-
սես, եթե լսելու բան կա ներսդ...

Խրախճանքի ազնիվ պահեր կարողանում էր ստեղծել բեմի
վրա Արտիստը: Սեփական ուժի գիտակցության երջանկությունն
ունեի, ուժ, որ ծփում էր ներսը, ուժ, որ մեզ թվում էր անսպառ
ու նրան մեր աչքում դարձնում հավիտենական...

Թվում էր՝ ջանք չի թափում, ճիգ չի գործադրում, թվում էր՝
խաղում է խաղալով... Եվ եթե խաղալ բառն իր իմաստով, բուն
իմաստով հենքն ու շողախն է մեր գործի, ապա առաջին հեր-
թին սազում էր հեկն նրան:

Բայց նաև հայտնի է՝ մեծ վարպետները ընդունակ են թաքցը-
նելու իրենց ճիգն ու քրտինքը... Եվ երբ հզոր կաղնին հանկար-
ծակի տապալվեց, նոր միայն հասկացանք, որ հեշտ չի եղել նրա
կյանքը, որ ոտքի վրա այրել է ինքն իրեն մինչև վերջ, մինչև վեր-
ջին ճյուղը...

Խաղալը նրա համար այրվել է նշանակել...

Օլիմպիական մի հանդարտություն կար նրա պահվածքում ու
մանկական անմիջականություն՝ հոգու ներսում...

Տաղանդները գիտե՛ն, արդյոք, ինչ է տրված իրենց: Անշուշտ՝
գիտեն: Չէ՛ որ ամեն ոք օրվա մեջ մի քանի րոպե մեն-մենակ է
մնում իր դատավորի հետ, մնում է աչք աչքի, առանց վկաների,
և այդ պահին է միայն, որ դատավորը չի կաշառվում, այդ պա-
հին է, որ հասցնում է քննել ու զննել քեզ և հանել իր արդար
վճիռը...

Խաղում էր հանճարեղ Փափազյանի հետ: Ընդմիջմանը հա-
մարձակվեցինք, պահպանելով, իհարկե, համապատասխան տա-
րածությունն ու զգուշավորությունը, հարցնել, թե ինչպե՛ս է գնում
ներկայացումը: Մտքներիս այն էր, որ լսեինք նրա կարծիքը Փա-
փազյանի մասին: Բողարկված փոքրիկ նեղություն էլ կար մեր
հարցի մեջ՝ նրան տեսնել, վերջապես, նեղն ընկածի վիճակում,
մեկ ուրիշի առաջ խեղճացած...

— Ներկայացո՛ւմը... Լավ է... Հավասար գնում ենք... Մեկ ինքն է առաջ ընկնում, մեկ՝ ես...

Եսի վրա հատուկ մի շեշտ դրեց ու աչքերի փայլով կրակեց մեզ վրա: Բայց և նկատեցինք, որ ծնոտը անսովոր, դափաճանորեն դողաց, իսկ ձայնի մեջ, այնուամենայնիվ, խուճապի պես մի բան կար: Մենք՝ թատրոնի այն ժամանակվա երիտասարդները, այդ հուզմունքի ու սքողված ակնածանքի համար սիրեցինք նրան ավելի...

Ի վերջո, մեծին զգալն ու՝ գնահատելը մեծի գործ է...

Արտիստը չէր կարող չտեսնել, չզգալ Փափազյանի հանճարը, չէր կարող չգնահատել, քայց և իրավունք չունեի կորցնելու սեփական հավատը, երեքալու իրավունքը չունեի՝ չէ՛ որ մեկն էր այն սյուններից, որ բարձր էր պահում Մայր թատրոնի հրաշալի գմբեթը...

Երանելի ժամանակներ էին դրանք... Գուցե և ոչ այնքան համերաշխ կյանքով, սակայն համերաշխ ծառայությամբ թույլ չէին տալիս, որ պառլի հայոց թատրոնի թոնիրը:

Հետո, նրանցից հետո, եկան ուրիշ մի կյանքով ապրող մարդիկ, ուրիշ մտածմունքի... Ռեժիսորներ, որ առաջնորդելու փոխարեն՝ ճիպոտով էին առաջ քշում հետևից. դերասաններ, որ միակ սյունն էին կարծում իրենց (միակ սյան գլխին ի՞նչ դնես) և այն էլ բարձրանում էին ոչ թե գմբեթի տակ, այլ մեծամտաբար ցցվում թատրոնի կողքին... Վերջապես....

Այո, ճշմարիտ, մի դեզ ուժ էր բեմի վրա քայլող, և մենք կլանվում էինք, սքանչանում, հիանում: Տրվում էր, նվիրվում մինչև վերջ: Ասենք, ուրիշ էլ ինչ տեսակ դերասանություն կա, եթե ոչ՝ խանդով ու կրքով լցված, եթե ոչ՝ անսահման համոզվածությամբ, եթե ոչ՝ կարասներով թափած քրտինքով...

Անդրեյ Բիտովը, կարծեմ, հայոց գրերը նմանեցրել է պայտերի: Այդ զարմանալի պատկերավոր ու ճշմարիտ համեմատու-

թյան տպավորության տակ, նույնչափ պատկերավոր լինելու համար, ուզում եմ ասել՝ Արտիստի խոսքը, բեմից արտասանած, ինձ միշտ թվացել է հենց այդ պայտերի նման: Նժույզի երկաթյա պայտերի նման կռած ու կոփած: Այդչափ հզոր խոսք, խոսքի այդպիսի կերպարայնություն մեկ ուրիշ դերասանի շուրթերից չեմ լսել: Ամեն հնչյունը կարծես փորագրվում էր լսողությանը մեջ նրա ձայնի և, առանձնապես, հստակ առոգանության շնորհիվ: Պատահական չէ, որ նրա դերակատարումների շատ մեծախոսություններ հանդիսականներից շատ-շատերն անգիր արած փորձում էին նրա նման արտասանել:

Ու եթե ես հարգանք ունեմ խոսքի նկատմամբ, ապա սովորել եմ նրանից և նրանից գիտեմ, որ խոսքը սուրբ է, առաջին սրբությունն է հայ դերասանի համար, որ պարտավոր էս լսողին հասցնել անխառն, զուլալ տեսքով, պարտավոր էս հոգալ խոսքի անվակերպության համար:

Սրանք արմատներ են, որ իմ հոգում ծիլ են տվել նրա և նրա ժամանակի մեծերի շնորհիվ: Արմատներ, որոնց համար էս անչափ շնորհակալ եմ նրանց, որովհետև այսօր իմ սրտում հեքիաթի նման մի սեր և պաշտամունք ունեմ հայոց խոսքի, հայոց լեզվի հանդեպ: Իմ այս տարիքում շատ բաների վրա ակամա պակասում է զարմանքս և, ընդհակառակը, օր օրի մեծանում է՝ հայոց լեզվի հզորությունն զգալիս: Պահեր են լինում, որ հայ բառի հնչյունից համ եմ առնում, դարերի բուրմունքը...

Եվ, ճշմարիտ, հրաշք չէ՛, արդյոք, որ երկար ժամանակ պետականություն չունեցող մի ժողովուրդ, անմիաբանված, մասնատված, ցրված, միասին, միատեղ լեզվաշինությամբ չզբաղված, այնուամենայնիվ, ստեղծել է համամարդկային մշակույթի հրաշալիքներից մեկը՝ Հայոց լեզուն...

Մեր բարբառների հյութեղությունն զգալու, արտաբերելու գործում ևս բացառիկ էր ու անզուգական Արտիստը: Սունդուկ-

յանի լեզվի մի իսկական դպրոց ստեղծեց նա հայ դերասանների համար: Ցավոք, քչերս շնորհք ունեցանք օգտվելու նրա թողած ժառանգությունից:

Բայց և խոնարհ ու հեզ էր...

Ուժեղ բնավորություն ունեցող իր ընկերներից քաշվում էր. միշտ գիջողն ինքն էր, հատկապես խուսափում էր հետները երես առ երես բախվելուց. ի՛նչ իմանաս. նախ, միևնույն է, պարտվողն ինքն էր լինելու և, երկրորդ, չէ՞ որ ուժերը չափելու ավելի հարմար տեղ ուներ... Հետո բեմ էին բարձրանալու, չէ՞...

Մինչև վերջն էլ մնաց... մանկահոգի. ամենաանհավանական բանը կարող էիր պատմել, և նա դյուրությամբ կհավատար: Ինքն էլ գրեթե միշտ զբաղված էր նույնով՝ հորինում էր պատմություններ. չգիտեիր՝ հավատաս, թե՞ չհավատաս, ծիծաղե՞ս, թե ինչ անես: Սակայն, հոգը չէր՝ առաջին հավատացողն ինքն էր...

Ժամանակ անցավ. «խելոքներս» շատացանք, միամիտները պակասեցին, որովհետև քչանում էին նրանք, ովքեր գլխովին խրվում էին իրենց բուն գործի մեջ, երջանկանում իրենց նվիրումով արդեն ու երկրորդական բաներից մնում անտեղյակ:

Բայց արի ու տես, որ դրա հետ մեկտեղ ամեն ինչ փոքրացավ, հասարակացավ: Ե՛րբ, որտեղի՞ց, ումի՞ց ժառանգեցինք համատարած օգտապաշտությունը: Ինչու՞ մեռավ մեր մեջ խաղաճող մանուկը...

Ժամանակի հետ պակասեցին նաև ռոմանտիկան, թատերական անմեղ ու պարզ, հումորով լի կատակը, պատմությունները: Պակասեցին և հետաքրքիր մարդիկ թատրոնում: Չարացան մի տեսակ... Ափսոս...

Հայ էր Արտիստը, սագում էր Հայաստանին, շատ էր նման իր ժողովրդին, այնքան հարազատ ու անբաժան նրանից, որքան՝ քարն ու ձորը, մեր արևն ու տապը... Մերված էր Հայրենիքին, ու ինքն էլ հենց մերան էր, որ կար:

Կանգնած էր թանգարանի մուտքի մոտ՝ շեմին, մշտապես

«հպարտությունը գոռոզության ուսած» իր կեցվածքով: Դերասաններից ինչ-որ մեկը հեհին մոտեցավ ու գրեթե ճշաց ուրախությանը՝ Վարպետ, ձեզ Խորհրդային Միության ժողովրդական արտիստի կոչում են շնորհել:

Երեխաները անսպասելի, մեծ նվերը վարանելով են վերցնում, չհավատալով: Անօգնական թափահարեց ձեռքերը, հետհետ գնաց, հենվեց թատրոնի պատին: Ու հանկարծ տեսա՝ ծնոտը դողդողաց և արցունքները՝ երջանկության արցունքները, հոսեցին տասնյակ տարիներ գրիմ կերած, գրիմից մաշված կնճիռների վրայով:

Ոգու կորովն ու արչան թրթիռն էր, ուղեծիր հանող նրա հրթիռն էր, ճակատագիրն էր...

Առաջին հայացքից թվում էր, թե ամենակախյալն է, սեփական կարծիք չունեցողը, բոլորին հաշվի առնողը, հարմարվողը...

Այդպես էր թվում շատերին: Իրականում... Նրա հարազատ եղբայրը գործն էր, պարտականությունը՝ միակ սերը: Եվ իր հոգում ծածուկ խնդիր չունեցավ՝ ում հետ ինչ փոխհարաբերություններ ստեղծի, ասենք, թեկուզ, «հերթով եկող ու անցկեցող» թատրոնի տնօրենների հետ:

Արտիստը ճանաչում էր իրեն: Ծանաչել էր ժողովրդի շնորհիվ: Ինքը կար, ինքը պետք էր, ինքն այդպիսին էր՝ բանվոր-աշխատավոր: Արդար քրտինքն էր նրա գեներն ու զրահը և անսահման նվիրվածությունը բեմին: Հարազատ թատրոնի մշակը լինելը հպարտորեն պարզած նրա դրոշմն էր:

Այո, հրաշագործ է ժամանակը: Որքան հեռանում, այնքան մեծանում է իմ աչքում ճշմարիտ Արտիստը...

Մեծն Ավետ Ավետիսյանը.

Խոնարհումն խորին նրա ապրած կյանքի առաջ...

ԱԽՐ ԱՍԵԼԻՔ ՈՒՆԵՒ ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀՈՒՅԼՅԱՆԻՆ

Հազար անգամ նրա հետ բեմ եմ բարձրացել, հազար անգամ նրան նայել եմ բեմում: Հազար անգամ զարմացել եմ ու մտածել՝ առիթ լինի, մի քանի խոսք ասեմ: Չէ, ինչու մի քանիսը: Իմ ու նրա կյանքը որ գումարենք, հարյուր քսան տարի ու մի քան էլ ավել ապրել ենք այս աշխարհում, երկու խոսքով ո՞նց կլինի:

Հին ընկերության պարտք ու հախով, խաղացած-չխաղացած դերերի, ուրախ-ուրախ օրերի, մինչև տակոին իրար ճանաչելու, մեր անձնական իրարից շթաքցնելու, իրար վստահելու, խմած ու չխմած, ասված ու չասված կենացների ու էլի հազար քանի իրավունքով...

Առիթը եկավ, գնաց: Սպասում էի, սպասում էի... Բաց թողեցի: Քո վաթսունամյակը... Հավատացած էի՝ աղմկոտ տոն ենք անելու, ու համարյա աննկատ անցավ, «լայն խավերի» սեփականությունը չդարձավ: Կարող է մենք էինք մեղավոր, տանը չէինք, մեր տանը չենք, միգուցե մեր տեղը չգտա՞ն: Մեր տան գործերը թողած, ուրիշ տեղ էինք, ես էլ դու էլ մեր տանը չէինք... Էս ո՞ւր ենք գնում: Հաղթանակների սովորած՝ որտե՞ղ ենք հաղթանակներ փնտրում... Կյանքը մեզ դես-դեն արեց. ինչ-որ մարդի՞կ, թե «ժամանակը դուրս է եկել իր շավղից...»

Լավ: Ասի հակիրճ լինեմ, Մհերի մասին շնորհքով-հարգով քրիստոնեական մի քան գրեմ: Չստացվեց: Տարիներն իրար հրրմըշտելով, դեպքերով-դեմքերով, անկարգ ու անհերթ խառնիխուռն եկան, լցվեցին հիշողությանս մեջ...

Դե, գնա կարգավորի...

Էս ինչքան շատ քան կա մարդու ապրած օրերում...

Օրեր, օրեր... Հիշո՞ւմ ես, Ֆրունզ, ֆուտբոլի օրերը: Անհամբեր սպասում էինք, խաղ բաց չէինք թողնում, պարտադիր ստադիոնում էինք, ֆուտբոլի մեր գիտակներ Գալոյան Հովիկի, Մկրտ-

չյան Աշոտի հետ: Տոմս դժվարությամբ էինք ճարում ու եթե չէինք ճարում, դու քո հեղինակությամբ մի դաստա դերասան հետդ ներս էիր տանում: Փակ դուռ չկար քո առաջ: Հայ ոստիկանները քեզ տեսնելիս, զմայլանքից հալվում էին ո՛ր կանաչ ճանապարհ:

— Անցեք, անցեք, համեցեք, ընկեր Մկրտչյան...

Մոսկվայում, մեր վերջին խաղերի ամփոփման ժամանակ, հայտնի մի թատերագետ ասաց.

— Այս դերասանը մեզ՝ ուսանելիս, ստիպեց հեշտ արտասանել իրար կողք շարված հինգ բաղաձայն տատերով իր ազգանունը՝ **Մկրտչ...**

Հա, լուրջ պաշտոնյայի կեցվածքով, վստահ, կարգադրում էիր.

— Սրանք ինձ հետ են, բաց թողեք՝ մեկ, երկու, երեք, չորս... Դու էլ արի. գլուխը խուզած, անձանոթ ու անտոմս մի երեխա էլ վրադիր:

Արևածաղիկ չրթելով, լցվում էինք ստադիոն, եթե չունենայինք՝ տասը տեղից հյուրասիրում էին, եթե տոմս չունեինք՝ տեղները զիջում էին, իրենք մնում կանգնած, ու այս ամենը նրա համար, որ իրենց կողքին լինես: Մենք էլ քո կողքին օգտվում էինք:

Հովիվյանը որ գոլ էր խփում, վեր էինք թռչում տեղներիցս, ցնծություն էր մեր սրտերում, բավականությունից թրջվում էին մեր աչքերը, գրկվում, համբուրվում էինք... Ախր, տաղանդավոր մարդու հաղթանակը շատ է գեղեցիկ...

Արարատի պարտությունները մեր դժբախտ օրերն էին, բայց պատահում էին ավելի դառը օրեր: Հին ստադիոնում այն ժամանակվա Արարատ-Սպարտակը երեք գրո հաղթում էր Մոսկվայի Դինամոյին. Չալիկյանի, Քեհյանի ժամանակներն էին: Հետո, երկրորդ խաղակեսին, մերոնք չորս անհեթեթ գնդակ բաց թողին: Մոսկվան կարգադրել էր՝ պարտվել: Մեր խորհրդային սպորտի բարքերը...

Ցուցահանդեսներն էլ բաց չէինք թողնում: Միշտ խնդրում էի, որ առանց ինձ չգնաս, քեզ հետ հետաքրքիր էր, քո նկար կար-

դալն ու մեկնաբանելը ինձ համար շատ քան էին բացում, առանձնապես մեր ընկերներ Աթոյան Ռաֆիկի, Մելքոնյան Աշոտի, Մուտոյի, Սիրալի, մեր Ջուլուսի, մեզ հետ բոյ քաշած մյուս տղերքի գործերը... Սրանց հաջողություններով շատ էինք ուրախանում: Վիճում էլ էինք, իհարկե: Հետաքրքիր է, մեր ջահել դերասանները հայ նկարիչներին գոնե գիտե՞ն... Սարյանի անունը լսած կլինեն:

Հասնում էինք Մինասին, երկար էինք մնում... Այո, տաղանդավոր մարդու հաղթանակը և՛ գեղեցիկ է, և՛ ազգինն է...

Ֆրունզ, էն մեր ջահել օրերին ինչքան էս խեղճացրել ինձ քո Շիրակով: Թվում էիր ու թվարկում՝ քանի նկարիչ էք տվել, քանի դերասան, քանի գրող, բանաստեղծ, երգիչ ու գուսան, քանդակագործ: Վերջինից հատկապես նշում էիր Մերկուրովին՝ հայ չի, բայց մենք ենք անեցրել... Նեղն էիր լծում ինձ, լուպազանում էիր:

— Դե, ասա, ասա, ձեր Լոռին ինչ է տվել, դե թվիր տեսնեմ՝ ովքեր են ձեր մեծ մարդիկ, ձեր արվեստագետները...

Խելքս չէր կտրում, վերջերս էմ գտել քո պատասխանը.

— Հա, շատ էք, լավն էք, բայց մենք՝ լոռեցիներս, էդպես չենք կարող, մենք ծանր, դանդաղկոտ մարդիկ ենք, հազար տարին մեկ ազգի համար ծնում ենք մի... Թումանյան Հովհաննես... Բա, ախպեր ջան, էս էլ իմ ուշացած պատասխանը քեզ:

Դա քիչ էր, ձեռ էիր առնում.

— Դե, մալականի դժարոց ավարտած, հայերեն էս երգը երգի...

Ու երգում էիր համով-հոտով: Նախանձում էի:

«Սիրտս գայլերին թող բաժին դառնա...» կամ՝ «Լուսնակ գիշեր...» Սրանցից ո՞րն էր, որ կատարեցիր «Եռանկյունի» ֆիլմում: Մեկ-մեկ էլ խղճահարվում, ասում էիր՝ արի սովորեցնեմ: Սովորում էի, բայց դե... Մինչև հիմա էլ նախանձում էմ հայոց դպրոց գնացածներիդ, հարազատ մոր կաթ կերածներիդ: Նախանձելը ոչինչ, մի ամբողջ կյանք տանջվեցի հայերենն իմ մեջ իր տեղը

զգելու համար: Մինչև հիմա էլ ստորակետներից գլուխ չեմ հանում: Ամոթ:

Բայց Ծիրակ, Կումայրի, Գյումրի, Ալեքսոլ... Լավ էր, որ Լենինականից պրծանք, բայց Կումայրին այսօր հեռու է ու սարքովի է թվում: Ինձ որ մնար, կթողնեի Ալեքսոլը, համ էլ քաղաքականություն. Ռուսիան ուսանում է...

Ինչ օրեր ենք անցկացրել երազային այդ քաղաքում, քանի ֆիլմ ենք նկարահանել, ինչքան ենք քեզ հետ մեզ այնտեղ զգացել մեր հարազատ տանը... Հայության հոգին էր, քաղաք չէր... Տեսա՞ր ինչ եղավ: Կվերականգնվի՞, կվերածնվի՞ նրա համն ու հոտը... Երանի, երանի մեր զավակները իմանան, վայելեն մեր տեսածը... Ու դու գործ ունես անելու քո քաղաքի համար: Ինչպես էլ դու գիտես...

Հիսուն թվականների սկզբին, գրեթե միաժամանակ, մի մեծ խումբ երիտասարդներով, կարելի է ասել, գրոհեցինք Մայր թատրոնը: Մեծերի ճամբարում անհանգստություն նկատվեց: Այս ուլքե՞ր են, այս ինչքան են հանդուգն...

Առաջ, առաջ, մեզ գցում էինք առաջ, տեղ տվեք մեզ էլ, մենք հավատում ենք մեր ուժերին, մենք վստահ ենք, որ... Ամեն առիթ օգտագործում ենք նկատվելու, ուշադրություն գրավելու համար: Թեկուզ մի խոսք ասելուց հետո քեմից դուրս ենք պրծնում ու իրար փնտրում, հերթապահ ռեժիսորներին փնտրում, Մարատին Մարինոսյան, Կիմին Արզումանյան: Հը, ո՞նց էր, ո՞նց էր... Հարցական նայում էինք Անդրանիկ Էլիազյանի, Կոստան Մարգարյանի, Սոխակի աչքերին՝ ինչ կասեն... Մեծ արտիստները խիստ էին, երես չէին տալիս, ասածները դիտողություն էր:

Եվ ահա «Նույն հարկի տակ» ներկայացման մեջ Մհերը իր փոքրիկ ու անխոս դերի համար (անխոս-պերճախոս) ստանում է հատուկ մրցանակ՝ որպես լավագույն դերակատարներից մեկը:

Մի բառ, մի նախադասություն, չնչին գործողություն կատա-

րելը բեմի վրա դեռ մեզ համար երազանք էր: Չեմ հիշում՝ ո՞ր
ներկայացման մեջ մի ամբողջ տեսարան Գուրգեն Գաբրիելյանը
խաղում էր իմ ուսերին նստած: Ինձ համոզում էի, որ ամենակա-
րևոր գործը ես եմ անում: Վերջապես Գուրգեն Գաբրիելյանն էր,
չէ՛...:

Ուրեմն դեռ բավարարվում էինք ներկայացումից-ներկայա-
ցում, մասսայական տեսարաններում երազանքներից ու անհամբե-
րությունից մաշվել, ոմանք նույնիսկ հուսահատվում էին և հան-
կարծ, ոչ ավել ոչ պակաս՝ Մհերը ստանում է գլխավոր դեր՝
Եզոպոսը... Վաղարշյանի հետ:

Բայց չէ, հանկարծ չէր, նրա նկատմամբ սկզբից ևեթ վստա-
հությունն կար, և ինքն էլ երբեք կասկածներ չի ունեցել, չի մտո-
րել, չի ընտրել իր կյանքի ուղին. նա ի վերուստ, նշանակված էր
այդ գործին և, տաղանդի հզորությունը գիտակցելով, խիզախ
մարտիկի նման նետվում էր առաջ... Մհերը թատրոն էր եկել
հաղթանակների համար, Մայր թատրոն էր եկել նրա բեմում ա-
ռատորեն քրտինք շաղ տալու համար...

Ֆրունզ, ես ու դու երբեք խոսվ չենք եղել, բայց իրարից նե-
ղացած՝ կանք: Դե, դերասան ենք, միշտ սրված զգացողություն-
ներով. եթե մեկը պատահմամբ մեզ մեր ուզածով չի բարևում,
կամ այդպես է թվում, ասում ենք՝ ըհը, էստեղ մի բան կա: Բայց,
դե, սրանք պուճուր բաներ են, կյանքի բաներ են, կլինեն, կանց-
նեն, եթե ուզենանք՝ կանցնեն: Մեր սխալի ու մեր վատի հերն էլ
անիծած: Եթե ուզենանք ուրիշ բաներ կմտաբերենք: Չորօրինակ,
որ իրար հետ հաց ենք կերել, որ սուփրա-սեղան ենք նստել,
լավ կերակուր ունենալիս իրար փնտրել ենք, ամաչել ենք մե-
նակ ուտել, որ Սանամը քեզ շատ սիրելուց մեզ էլ է սիրել, մայ-
րական օրհնությամբ մեր առաջն էլ է մի աման ճաշ դրել: Բո
Սանամը...

Ընկեր... ընդկեր... Հայն ուզում է ասել հացդ մենակ չուտես

և ում ոեստ հաց ես կերել, քո ընկերն է, որովհետև հացը Աստծո տված սուրբն է, էն սուրբը, որ մեզ մարդ է պահում... Հէյ գիտի, մեր պապերն ինչքան բան են իմացել...

«Հայֆիլմ» կինոստուդիայի ձայնագրման խցերում քանի-քանի գիշերներ ենք լուսացրել՝ կրկնօրինակելով մեկը մյուսից անպետք ֆիլմեր: Ծանր ներկայացումներից հետո վազում էինք ստուդիա՝ մի քանի կոպեկ աշխատելու: Ինչքան առողջություն ենք քայքայել: Հոգնած, հոգեպես ճնշված ու հաճախ կիսաքաղց, ու մեզ փրկողը, մեր տրամադրություն բացողը էի Մհերն էր իր անզուսպ, անսպառ հնարամտությամբ, ծիծաղաշարժ պատմություններով, կատակներով... Նրա կրքոտ տաղանդը բլթբլթում էր ամեն տեղ, ամեն միջավայրում, պողոթնում էր, դուրս էր թափվում, ու ամեն տեղ կենտրոնում էր ինքը, սիրելի, նրա շուրջն էին հավաքվում...

Մհերը հիվանդացավ... Թոքախտով: Ցնցվեցինք... Մեր Ֆրունզը...

Մոսկվա հյուրախաղերի էինք գնացել հիսունվեց թվականին: «Նամուսն» արդեն բեմադրված էր. փայլուն հաջողություն: «Նամուսով» Աճեմյանը մեզ միավորեց: Հանճարեղ ներկայացում էր, մեծ ոգևորություն, մեծ հաղթանակ... Հայոց թատրոնի հաղթանակը, որ մեզ թե էր տվել, ասես. բոլոր ներկայացումները խաղում էինք անսպառ ավյունով, սրբությամբ կատարելով մեր գործը ու հպարտությամբ, հպարտությամբ ու հպարտ, որ դերասան ենք Մայր թատրոնի...

Մհերը Հայրապետ էր խաղում, բայց հիվանդացել էր, փռկությունը ուժեղ սնունդն էր: Մեր ընկերը նեղն էր... Էն ժամանակ իրար հասնում էինք, մենակ չէինք թողնում: Մոսկվայում անհանգիստ էինք նրա համար: Աճեմյանը կտրականապես մերժեց նրան ուրիշով փոխարինել:

— Պետք է բուժումն ընդհատի, գա իր ներկայացումները խաղա, հետո թող վերադառնա...

— Ախր, ինչպես կարող է, Վարդան Նիկիտիչ, մարդը...— Այսպես ամեն կողմից փորձում էինք համոզել, բայց...

— Չգիտեմ— չգիտեմ, առանց Ֆրունզի ներկայացումը չի գնա... Դերասանն իրավունք չունի հիվանդանալու...

Վերջապես եկավ Մհերը, բայց ինչ էինք անելու: Մոսկվա, մենք ջահել մարդիկ, անփող... Ինչևէ, խմբով ճաշեցինք, վերջում նրա համար մի սալիկ շոկոլադ առանք, ասել էին թոքերի համար լավ է: Զարդեց ու սկսեց մեզ հյուրասիրել:

— Վերցրեք, մի-մի կտոր ամեն մեկդ վերցրեք...— Առանձնապես զոռեց Խորենին: Նա չէ, սա՛ հա, նա՛ հա, սա՛ չէ... Վերջը, որ իրենից ձեռքաշեն, Խորենը տարավ-բերեց ու՛

— Այ Ֆրունզ, չեմ ուզում, էդ անպետք բանն ինչ է, որ ես ուտեմ...

Օրեր, ջահելի օրեր... Մի առիթ էր պետք, որ ծիծաղեինք:

Երկուսով գնացինք հիվանդանոց, Մհերը պիտի օդ ստանար: Ռուս բժշկուհու հետ կատակներ անելով պառկեց, կողերի արանքից մեծ ասեղ մտցրին... Ես սարսուեցի, ինքը՝ հեչ... Հետո էլ ստիպեց, որ ռենտգենով ինձ ստուգեն:

— Ինչի՛ համար,— ասում եմ:

— Պետք է, պետք է... Տեսնենք հոքեզ չեմ վարակել...

Ինքն էլ նայեց բժշկուհու հետ ու, չգիտես ինչի, ուրախացավ՝

— Էս ինչ երկար թոքեր ունես...

Մեր հյուրախաղերը, մի հյուրանոցում ապրելը, նույն ներկայացմանը մասնակցելը, մի տեղ հավաքվելը հանաք էր, հումոր էր, ծիծաղ էր, խմբով երգ էր, ուրախություն էր... Առիթը բաց չէինք թողնում իրար գլխի հավաքվելու, որովհետև մեր ապրելու ուժն էր միասին լինելը, սեր սպիտակացնելու, պղտորը մի քիչ զուլալելու մղում, բնագոյ:

Մեր պարտկոմը՝ հրաշալի դերասան, խելացի ու բարի մի

մարդ, քայց ժամանակները... Ժողովի ժամանակ ծեփեց ինձ պատին՝ զիլ ձայնով ճշաց.

— Դու, դու... Երեկ մեկ, էսօր՝ երկու, ոտ ես դրել թատրոն... Ինչո՞ւ չես մասնակցում քաղաքապետունքին, հաշիվ տալի՞ս ես քեզ ինչ է սպասում...

Իսկ Խորենը, մեր հավաքներից, այդ վտանգավոր ժամանակներում, երգում էր՝ «Կարկուտ տեղաց Խանաձորա դաշտումը...» Հրաշալի էր երգում:

Աճեմյանն ինքն էլ առիթը բաց չէր թողնում մի սրամտություն անելու, Դավիթ Մալյանը, Ավետը, Գուրգեն Գաբրիելյանը, հնարամիտ Կոթիկյանը, մեր Ավոն, Տիգրանը... Ցուրտ ժամանակներ էին, վախի, կասկածամտության, քաղաքապետունքի, մատնությունների... Բայց ջանքերն էր ջանքերն է, դերասանն էլ՝ դերասան: Թատրոնը լիքն էր խիճուկ:

60-ին էր, Սարոյանը եկավ Հայաստան: Հրաշի Պաղտիկը նայեց, հիացավ. «Իմ սիրտը լեռներում է» իր պիեսի փորձերն էին սկսվել, մի քանի ժամով Աճեմյանի հետ առանձնացան, հետո հանդիպում եղավ ընդհանուր կոլեկտիվի հետ: Բա մենք ոնց անենք: Որոշեցինք ջանելներով հանդիպում կազմակերպել: Ավո Ջրաղացպանյանին ու Նորայր Գևորգյանին ուղարկեցինք «Արմենիա» հյուրանոց բանակցությունների: Դրսում անհանգիստ սպասում էինք, ժպտադեմ եկան:

— Համաձայնեց, մի երեկո մեզ հետ կլինի...

«Արարատ» ռեստորանը նոր էր բացվել, սեղանները երկար շարքով միացրինք իրար: Գլխավերևը Սարոյանի համար ընտիր կոնյակներ, մեր մասերում՝ «Հրազդան» գինի: Երեկոն դարձավ գիշեր, գիշերը՝ լուսաբաց... Սարոյանը մի նոր աշխարհ էր մեզ համար, ուրիշ մտածողություն, անսպասելի տեսակետներ...

— ... Չմոռանանք, Հիտլերն անյնպես մենք ծնած ենք, անոր ալ կին է ծնել, ուրիշ տեղեն չէ... Մեր մեղքը անոր մեջ կա...

— Կինո կսիրե՞ք, պարոն Սարոյան:

— Ծատ կսիրեմ... էթե ձրի է...— Ու ամպագոռգոռ ծիծաղում է:

«Նամուսից» Ռուստամի ու Սեյրանի տեսարանը ներկայացրինք. Կոնյակի ֆուժերը ձեռքին, ուշադիր նայեց, դիտողություներ արեց: Թատրոնը զգում էր, հասկանում էր մինչև խորքը: Հետո դուրսկահարները մոտ եկան: Լսեց, ապա դամ պահողին խնդրեց լռել: Քիչ հետո թե՛ չէ, դուն պետք ես, չալե...

Տապալկան նոր էր մոդա Երևանում, ասացինք՝ պարոն Սարոյան, տապալկա կուտե՞ք:

Հսկա բեղերը գնացին-եկան, աչքերը չոեց:

— Տապալկա... Ադ ի՞նչ է...

— Հավ...

— Հավ ի՞նչ է...

— Դե, հավ, աքլոր, թռչուն...

— Ի՞նչ աքլոր...

— Որձակ, խորոզ, աքլոր...— Ամեն կողմից վրա ենք տալիս, ձեռքներս թափահարում ենք օդում, ցույց ենք տալիս թռչելը:

— Էհ, հա... Ըսենք...

— Ըհը... Հավի ու խորոզի ձագը... Սրանց փոքրը... Սրանց երեխան... Սրանց չոջուխը...

— Չագ ինչ է, ախպար... Չոջուխ ի՞նչ ընեմ...— Սարոյանը հուսահատվեց, կոնյակը խոշոր կում արեց:— Աս ինչ է, իրարու չենք հասկնա հայերս...

Մեզնից մեկը, կարծեմ հենց Մհերը, էլ չդիմացավ, անհամբեր ճչաց.

— Դե տապալկա, էլի, ճուտ, ճուտ...

— Ծե՛տ...— իր հզոր ձայնով գոռաց Սարոյանը:— Էհ, ճետ ըսեք... Ինչ խորոզ-մորոզ կըսեք, երեխա կըսեք... Կուտեմ:— Ու հոհոաց, հոհոաց, մենք էլ հետը... Պատերը դողացին...

Հոյակապ մթնոլորտ էր, անբռնազբոս, անկեղծ, ազատ, մենք՝

երանության մեջ և հանկարծ ներս մտան Դավիթը, Ավետն ու Ջանիբեկյանը... Ասես սառը ջուր լցրին գլխներիս: Հասկացանք, որ սրանց ուղարկել են կուսակցական հանձնարարությամբ, հանկարծ գաղափարական սխալ չանենք... Խեղճերին տեղաշորից հանել էին, գիշերով ուղարկել...

Ինչ անենք, ստիպված ներկայացրինք, կարծեմ Նորայր Գեվորգյանը: Նորայրին Սարոյանը միանգամից սիրեց, հրաշալի պարում էր Նորայրը...

— Պարոն Սարոյան, ծանոթացեք, մեր ժողովրդական արտիստներն են:

— Ի՞նչ ժողովրդական... Ինչո՞ւ ժողովրդական...

— Դե, մեր մեծ արտիստներն են...

— Անոնք ժողովրդիկնե՞ն... Էհ, հապա դուք լքման ո՛ւմն եք...

— Կոչում ունեն, էլի, պարոն Սարոյան...

— Կոչումն ինչ է... Դուք ինչու չունիք...

Կամ իսկապես չէր հասկանում, կամ չէր ուզում հասկանալ մեր կյանքը, մեր դրվածքը: Մի խոսքով, այլևս անհույս գործ էր շարունակելը: Մեր անկոչ հյուրերը որոշեցին իրենց պարտքը կատարել՝ հերթով բաժակաճառ սահն...

— ...Խորհրդային հզոր մեր հայրենիքը... Մենք պետական թատրոն ունենք...

— ... Մենք չենք վախենում իմպերիալիզմից... Ամերիկան... Մենք կհաղթենք...

— ...Մենք մեր հարազատ կուսակցության հավատարիմ սպորտստներն ենք, եթե մեզ հրամայեն, մենք կկատարենք... Կասեն գնա կովի՝ կգնանք, կասեն բեմում խաղացե՛ք՝ կխաղանք... Մենք սպորտստներ ենք...

Քաղաքապամուկ... Քար լոռություն... Սարոյանը զարմացած լսում էր վայրենի այս մտքերը, հետո ոտքի ելավ, կոնյակը մինչև վերջ լցրեց ֆուժերի մեջ, ժպտաց, ու հանկարծ դահլիճը դռրդացրեց իր մոնչյունով.

— Է-է-էհ, հա... Լավ է... Դուն խոսե, խոսե, ես երթամ շը...
Ջանիթեկյանը քթի տակ մրթմրթած, անհասցե հայհոյեց, ու փառք Աստծո, վեր կացան:

Սարոյանը չկա ու չկա: Գնացինք տեսնենք միզարանի մոտ կանգնած... Կոնյակն էլ մի կողմից է խմում: Ծուռ եկավ մեզ՝

— Է՛հ...

— Պարոն Սարոյան, սպասում ենք...

— Ան, ի՞նչ կըսեք... Ան սալդաթներ գացի՞ն...

— Այո, գացին...

— Է՛հ, ուրեմն ես եկա... Լըմանս ուրախ երգ երգեմք...

Քեֆը շարունակվեց... Երգ, պար, արտասանություններ, ինքն էլ մեզ խառնված, մեզ հետ՝ ամենաաղմկարարը, անեկդոտներ է պատմում: «Արարատի» ներքնահարկը թնդում է...

Լուսաբացին, արևի հետ, դուրս եկանք հրապարակ. լայն մեջքը հեռեց տուֆ պատին, արծվի հայացքով զննեց հրապարակը.

— Աս մեքենաներ հայերո՛ւն են... Աս մարդիկ, որ կքալեն, հա՛յ են... Ան ոստիկա՞ն ալ հայ է...

— Այո, իհարկե...

— Այս սիրունիկ տիկի՞ններն ալ հա՛յ են... Լըման հա՛յ ենք...

— Այո, այո...

— Հապա էլ ի՞նչ կուզենք,— հրապարակով մեկ գոռաց Սարոյանը:— Լըման հայ ենք, էլ ի՞նչ կուզենք...

Մեր ամենահետաքրքիր օրերից մեկը: Քո, իմ բոլորիս կենսագրությունն է, թող չկորչի: Մեծին մեծարելու, ունկն անելու, նրան ներկայանալու, արժանի լինելու... Երիտասարդի առողջ մղումներ էին: Մենք կարող ենք հպարտանալ մեր կազմակերպած այդ հանդիպման համար:

Հիմա, ասում են, թատրոնում ջահել դերասանները հաշիշ են ծխում... Թմրամոլ են... Ցավ ու ցավ...

Հիմա մեծերին, իսկապես ժողովրդին ծառայած մեծերին,

պատվանդաններից գցում են, էլի ամայություն են ստեղծում, իրենց համար տեղ են բացում: Անգրագետն ու կիսագրագետը գլուխ է բարձրացրել, եղանակ է ստեղծում: Գաճաճ մարդիկ ձեռ են բարձրացնում մինչև անգամ Անդրանիկի, մինչև անգամ Թումանյանի վրա... Այսպես... Անլվա մարդիկ...

Եվ, այո, այսօրվա հրամանատարները չէին հիշելու, չէին կազմակերպելու մեծարանքի քո երեկոն, սիրելի իմ Ֆրունզ... Բայց քեզնից չի խլված այդ օրը, դու չես նսեմացած: Խլել են ժողովրդից, նսեմացրել են ժողովրդին...

Յուրաքանչյուրը մեզանից իր կարողություններով, իհարկե, իր ճանապարհն էր հարթում, մեր սրտի երազանքներն ու նպատակներն ունեինք բեմի հետ կապված, մեր շահերը բախվում էին, սրվում էին մեր փոխհարաբերությունները, բայց հիմնականում միասին էինք, մնում էինք ընկեր՝ «բարի, գեղեցիկ, առաքինի...»՝ Հետո ի՞նչ եղավ: Հետո եկան Բրեժնևի ճղճիմ ժամանակները, ու ամեն ինչ ճղճիմացավ... Մեր նոր ղեկավարները վախեցան մեր միասին լինելուց, առանձին-առանձին մեզ հետ «աշխատանք տանելով», նախանձի խանձող կայծեր գցեցին մեր սրտերը... Հետո՝ կասկածներ, բանասարկություններ... Հետո հոգնեցինք անփող, անտուն լինելուց, անհագուստ-անկապուստ... Արդեն անուն էլ ունեինք, բայց անունը կար, ամանում չկար... Ստիպված էինք, ստիպեցին պայքարի մեջ մտնել ոռճիկի, դերի, կոշտումների ու մնացած սարքովի, արհեստական բաժանիչ բաների համար: Այս նվեր-արտոնությունները հենց դրա համար էլ հորինվել են, որ կախում ունենաս, նախանձը բուն դնի մեջդ, որ մարդը մարդուց խրտնի, կասկածի, ատի... Չառարկես սրան, հաճոյանաս՝ նրան... Անբարոյական գոյություն... Այլանդակ:

Միերը մաքուր մնաց, չհաճոյացավ, չհարմարվեց, չմանրվեց: Տղամարդու պես հպարտ ապրեց այդ կեղտոտ հատվածը, անկախ... Բայց թատրոնը քանդվեց...

Ասում եմ առիթը եկավ, գնաց, սպասում էի, հանկարծ տեսա՝
անցել է վաթսունամյակի: Քո ընկերն եմ, մեղավոր եմ ես էլ,
ամբիոն չբարձրացա, չճանեցի, չմեծարեցի, չգուրգուրեցի քեզ:
Բայց պարտավոր էի, չէ՞: Քո մեջ միշտ գլխավորն եմ առանձնաց-
րել, քո արվեստի արմատափայլը և, թվում է, ամենից լավ ես եմ
քեզ ճանաչում: Ֆրունզ, քո սիրտը քո Հայրենիքում ամեն վատի
համար մղկտացել է, ու այսօր ես չեմ կարող քեզ չասել, չեմ կա-
րող ընդհանրապես քեզ հետ չգրուցել: Ու՞ր ես... Մեր աչքի առաջ
պատի պես փլվում է մարդը, պարզվում է պատը բարձրացրել
ենք, բայց կիրուկուայի տեղը դատարկ է, պատը փուչ է եղել:
Խախտվում են մարդկային կապերը... Ոչ մի հին ու նոր կառավա-
րություն, ոչ մի հրատարակած օրենք ոչինչ չեն անի, նշանակու-
թյուն չեն ունենա, եթե հայ մտավորականը չհամարի, որ ժողո-
վրդին նրա հոգևոր արժեքները վերադարձնելը իր գործն է:

Իմ ու քո դարդը չեմ, ջահելությունն է մեղք, մենք լավ օրեր
էլ ենք տեսել, մենք զարմանահրաշ թատրոնում ենք աշխատել:
Էն ինչ էր, Ֆրունզ, հապա հիշի... Հեքիաթ էր, Երազ էր, տոն էր:
Տոն էր նոր դեր ստանալը, նոր ներկայացման օրը, թատերա-
շրջանի բացումը, ամբողջ խմբով նկարահանվելը, Աճեմյանի լի-
նելը... Տոն էին իրար հաջորդող մեծերի հոբելյանները: Մայրա-
քաղաքն ուներ թատերասեր, թատերամոլ հանդիսատես, մարդիկ
կային, որ իրենց մշտական տեղերն ունեին, դահլիճի զարդն էին...

Մեկուկես միլիոնանոց քաղաքում օրական հազար մարդ չի
ճարվում, որ հիմա թատրոն գա: Գյուղերից ավտոբուսներով բե-
րում ենք, ներկայացումը սպանում: Թատրոն գնալը մեծ կուլտու-
րա է, որ կորցրինք, վախենամ՝ անդարձ: Ղեկավարությունը թատ-
րոն չէր գալիս, այս նորերն էլ չեն գալու, սրանք էլ արվեստի
հետ գլուխ չունեն: Վերջապես, հայ ղեկավարները ավանդույթ
ունեն՝ ազատ օրերին խաշ ու քյուֆթա ուտել...

Անբացատրելին հայ մտավորականի մեկուսացած կյանքն է:
Ինքդ էլ գիտես, տարիներով հայ երգահանը, բժիշկը, դասախո-

սը, գրողը... գրողը թատրոն չի մտել: Այսպես ազգային արվեստ կստեղծվի՞, այսպես կմեծանա՞նք, կհարստանա՞նք, կազատագրվե՞նք գավառականությունից... Միություններն էլ մյուս կողմից՝ նկարիչների, կինոաշխատողների, գրողների, ժուռնալիստների, թատերական, բաժանեցին, կղզիացրին մարդկանց, մանրացրին, որ հեշտ վերահսկվեն: Մի նախագահ, մի կուսկոմ, մի քանի լրատու-իրազեկիչ...

Մեր ղեկավարներից մեկը մի քանի անգամ ինձ սպառնացել է, թե գիտե՛ս, ես դիմել եմ ուր որ հարկն է, և մարդիկ ունեմ կոլեկտիվում, ձեզնից ով ինչ խոսում է իմ մասին, ես գիտեմ...

Դե, գիտես, գիտես, սասացի, մենք էլ վախեցած պրծած ենք... Մի քիչ ուշացել էր պարոնը, ստալինյան սարսափն այլևս չկար, հիմա էլ կար բաժանելու տիրելու փորձված հնարանքը, խորամանկությունը, ցինիզմը... Մի խոսքով, հուսահատ ձեռքս թափ եմ տալիս այս ամենի վրա...

Բայց սպասիր, քո մասին եմ խոսելու: Մեկ էլ լուր է հասնում ինձ՝ Ֆրունզը քո մասին այսպես ու այնպես արտահայտվեց... Իհարկե, վատ բաներ: Ցնցվում եմ... Աստված մեզ դատավոր: Վերջապես, ստույգ չի, հաստատ չի, ենթադրություններ են: Հաստատը իմ գիտցածն է...

Գիտեմ, թե որքան ես անպաշտպան գոեհկության դիմաց, թե ինչ զարմանալի տնարար ու ընտանիքատեր մարդ ես, հոգացող ու ուշադիր հարազատներիդ նկատմամբ:

Գիտեմ, թե ինչ աշխատավոր ես և եթե լծվում ես, ոնց ես քաշում: Սուտը չես սիրում, ու սուտ չես խոսում:

Գիտեմ, որ ընկերներիդ երբեք «մեր» չես հայհոյել, ընդհանրապես հայհոյող չես, զուսպ ես բնությունից, բոլորիցս առավել: Շնորհակալ եմ...

Գիտեմ, ո՛չ ինձ, ո՛չ էլ մեկ ուրիշին խաղաթուղթ չես դարձրել քո ձեռքին՝ ինչ-որ նպատակի հասնելու համար, որովհետև

ճշմարիտ արվեստագետ ես ու ոչ երբեք կարիերիստ... Շնորհակալ եմ:

Գիտեմ, ոչ մտքումդ, ոչ դարակներումդ ընկերներիդ վարկաբեկող փաստեր չես հավաքել, որ տեղն ընկած տեղն օգտագործես մարդկանց թուլությունն ու սխալը... Շնորհակալ եմ:

Գիտեմ, որ կոիվ անես՝ հակառակորդներիդ ուսին, ձեռքին, գուցե դոշին էլ հարվածես, բայց դեմքին ու գլխին՝ երբեք, աչքին՝ երբեք: Քո էությունն է՝ մտավորականի, ազնվականի... Շնորհակալ եմ, որ այդպիսին ես ու իմ ընկերն ես:

Գիտեմ, պատահել է կյանքում սուրդ սրվել է, ավելի շատ պատյանում ես պահել... Երբեք քո թուրը «աջ ու ձախ» չի կրտրել, որովհետև գիտես ինչ ավերածություններ են լինում դրանից:

Այսպիսին եմ ճանաչել քեզ, քո էությունն ու բարձր հոգին, այս համոզումներով եմ գնահատում:

Գիտես նաև ինչի համար եմ շնորհակալ վերջերս: «Հատակում» ֆիլմում միասին աշխատելու, քո դերասանավարի ռեժիսորություն անելու, դերասանի համար: Աստիճը դեր էր, խաղացի՞նք՝ լավ թե վատ: Սրա մասին չէ խոսքը, վերջապես, մի դեր ավել, մի դեր պակաս...

Շնորհակալ եմ ճակատագրից, որ էլի մի բանի ամիս մենք՝ ես ու դու, միասին էինք: Նորքում ապրում էինք կողք կողքի, հին օրերի նման անբռնազբոս ընկերություն էինք անում, ու ես մեր ջահելությունը հիշելով, ճաշակեցի քո հումորը, վայելեցի շոպլ քո հոգու անվերջ հմայքը, մեր ախպերությունը... Պարզևի պես մի բան էր ինձ համար օր ծերության, մանավանդ հոգիս դառնացած էր այդ ժամանակ, քո ներկայությունը իմ կողքին: Մեր բաժակներն էլ չխկացրի՞նք իրար, դարձյալ հաց կերանք միասին... Մեզ մարդ պահողն էլ հացն է...

Աճեմյան... Ֆրունզ, վաղուց մտքիս կա մի բան գրել նրա մասին և այսպիսի վերնագրով՝ **Աճեմյանի խաչմերուկներում...**

Զգիտեմ ինչու չի ստացվում: Երևի շատ է բարդ Աճեմյանի խաչմերուկը...

Ինձ հետ որ շատ էր բարդ: Ինձ համար զարմանալի էր նրա վերաբերումները: Ինստիտուտում բոլոր գլխավոր դերերն ինձ էր տալիս. երևի ստիպված, եկա թատրոն, ինքն էր բերողը. տարիներն անցնում էին, էպիգոդիկ դերերից այն կողմ չէր թողնում: Պարզ էր, որ չէր հավանում ինձ: Համբերում էի: Բայց մի գեղեցիկ օր լուր հասավ ինձ, թե Աճեմյանն ասել է՝ «Մենք Սոսի վրա «ստավկա» չենք անում»: Էստեղ հույսս կտրվեց: Դե, լավ... Որոշեցի գնալ հեռուստատեսություն: Ռեժիսորություն կանեմ, ասի, գլուխս կպահեմ: Կանչեց: Իրեն հատուկ կիրթ կոպտությամբ ասաց՝

— Զգնաս... Ինչ գործ ունես դու այնտեղ:

— Ախր ինչքան սպասեմ էստեղ, Վարդան Նիկիտիչ:

— Զգիտեմ... Ինչքան ուզում ես սպասիր... Դու ռեժիսոր չես, դու դերասան ես քո ամեն ինչով, քո տեղը թատրոնն է...

— Է հա, բայց էս ինչ վիճակ է իմ վիճակը...

— Զգիտեմ, այդ է... Վերջ:

Տարօրինակն այն էր, որ ինձ հետ ընկերություն էր անում. կարծում եմ, ես այն քչերի թվին էի պատկանում, որոնց հետ նա անկեղծանում էր: Քաղաքական գործիչներից, ազգային մեր ցավերից զրուցում էինք այնպիսի բաներ, որ եթե հայտնի դառնար, տեղ հասներ... Բաժանվելիս միշտ զգուշացնում էր՝ ուրիշ տեղ չխոսես, չվստահես...

Խրուչչովի ժամանակ թեթև շունչ քաշեցինք: Հիշո՞ւմ ես, Արուսը պատմում էր, թե ինչպես Գորգեն Մահարուն տանելուց հետո, «Աճեմը գիշերները չէր քնում: Ծամպրուկը կապած, պատրաստ նստում էր վրան ու ամբողջ գիշեր, ականջը դրսի ձայնին, դողում էր վախից»:

Վերջապես, ինչպես է լինում, ընկնում է Գրիգոր Հարություն-

նովի մոտ: Սա ուշադիր լսում է ու մի օր ժամանակ խնդրում:
Հաջորդ օրն ասում է.

— Ահա, էս ձեր գործերը (նգմ-ից բերած), ահա իմ դա-
րակը. դնում եմ մեջը և կողպում ձեր աչքի առաջ: Քանի ես կամ
ոչինչ չի պատահի: Գնացեք, հանգիստ աշխատեք...

Պատմում են, որ Գ. Հարությունովն այսպես շատերին է
փրկել:

Աճեմյանը հանգստացել է, բայց, գիտես՝ վախը հետոն էր
միշտ, ամեն ինչից վախենում էր, ամեն մեկից: Ինչ էլ լիներ,
եղեռն տեսած, 37-ը տեսած մարդ էր: Մտավորական մարդ էր...

Իմ երեխա ժամանակ Ստեփանավանում մեկը կար, անունը
չեմ հիշում, մունջ, ինքնամիտի, 15-ին հարազատներին կորցրած...
Ստեփանավանցիները, ասենք, էշի կատակ էին անում. հեռվից
հանկարծ գոռում էին՝ թուրքը, թուրքը... Խեղճ մարդը գործը
զցում էր, գլուխը երկու ձեռքով բռնում ու աղիողորմ ճչալով վա-
զում էր դեպի ձորը: Վախը մեջը բուն էր դրել: Լավ էր շուտ մե-
ռավ, մեղա քեզ Աստված...

Հիշո՞ւմ ես, Ֆրունզ, մի երեկո ես ու դու Ավետին ուղեկցե-
ցինք տուն: Պատմում էր Ջանանի մասին, ուրիշ էլի շատերի,
որոնց այդ տարիներին քշել էին... Անհասկանալի էր, թե վախե-
ցած ու զգուշավոր այս մարդը ինչու բացվեց մեր առաջ: Լցված
էր, հուզված էր... Վերջում դու հարցրիր՝

— Ավետ Մարկիչ, ինչպե՞ս եղավ, որ ձեզ ձեռք չտվին, չտա-
րան...

Ավետը երկար մտածեց: Մտածեց, մտածեց ու մի տեսակ
շատ հասարակ, շատ հաստատ պատասխանեց.

— Ժողովուրդս ինձ պահեց...

Ասածի մեջ մեծ իմաստ դրեց, և միգուցե այնքան էլ սխալ
չէր...

Հորեպանները կարկուտի պես թափվում էին մեր գլխին. սրա

հիսունն է, նրա՝ վաթսունը, էն մեկելի յոթանասունը: Ասես մըր-
ցություն էր: Մայրաքաղաքից թատրոնի հոտ էր գալիս, թատե-
րականություն կար: Հիմա թատրոնները շատացել են, բայց այդ
հոտը չկա օդում... Մայր թատրոնի օդը վարակված է քյաքաքի
հոտով... Չկա... Շատ բան չկա: Մեր մայրաքաղաքն էլ այն չի:
Տեսքը, դեմքը կորցրեց. հմայք, բարի բնավորություն չկա: Ինչո՞ւ
այդպես եղավ, Ֆրունզ...

Ամեն նոր կառույց մեզ ուրախություն էր պատճառում. Խոս-
տիկյան Արմենը վառվող աչքերով մտնում էր թատրոն ու՝ օպե-
րայի շենքը վերջապես ավարտում են, գետնուղին սկսել են, Աբով-
յան փողոցը գեղեցկացնում են: Մաշկս էր ցավում, երբ տեսնում
էի թե «ազգային գործիչները» ոնց էին այն օրերին սոսնձով-
բանով մուրտատում օպերայի պատերը... Ուրիշը չունենք:

Ամեն բարձրացող շենքի հետ մենք էլ էինք բարձրանում,
շնչում էինք մեր քաղաքի հետ, նրա զարկերակը մեր զարկերակն
էր, նրա գեղեցկությունը՝ մեր հպարտությունը: Ո՞վ խլեց... իշխա-
նավորները չէին կարող ծայրամասում ապրել... Ու սկսվեց մայ-
րաքաղաքի կործանումը, այլանդակելը: Ծառուծաղկի համար նա-
խատեսված ընդարձակ բակերում ցցեցին բարձրահասակ տգե-
ղություններ ներսի հատուկ հարմարություններով՝ լեն ու բոլ: Ի՞նչ
ծառ, ի՞նչ խաղահրապարակ, ի՞նչ հատակագիծ... Եղած ծառերն
էլ ոչնչացրին ավտոտնակների համար. խցկեցին այդ ժանգոտ
այլանդակությունները որտեղ ասես: Այդ երկաթն ու թիթեղը, ամ-
ռանն արևի տակ շիկանալով, շնչելու օդ չեն թողնում: Ասում ենք՝
Նաիրիտ... Ի՞նչ է Նաիրիտը այսքան միլիոն տոննա երկաթի, ներ-
կի, ժանգի դիմաց: Քաղաքում խաղաղ անկյուններ չմնացին,
անաղմուկ փողոց, բակ չմնաց: Սովորեցինք ցեխի մեջ ապրել,
անկարգության մեջ... Մենք մեր ձեռքով ենք ավերում մեր երե-
խաների առողջությունը, մեր սարքած գծանցում...

Եվ լռեցինք մենք, այս ավերածությունները տեսնելով, ճար-
տարապետական այս սպանդը տեսնելով. ոչ մի մտավորական,

ոչ մի գրող կամ լրագրող, ոչ մի ճարտարապետ տեր չկանգնեց, չհերոսացավ... Էլ նոր ի՞նչ խոսենք...

Մայր թոտրոնում ծիածաններ էին կամարվում, արև էր լինում և, իհարկե, նաև՝ ամպ, անձրև, սելավ, բայց և ծափերն ամպրոպի պես ճայթում էին նրա կամարների տակ:

Մեծ արտիստի հոբելյան... Դրանք եկան փոխարինելու հին բենեֆիսներին (ինչո՞ւ չենք վերականգնում): Երևույթ էին այդ օրերը և ամենահուզվողը ջահելներս էինք, քանի որ մեր ուսերին էր ընկնում պատասխանատվության զգալի բաժինը: Նաև առիթ էր մեզ ցույց տալու: Պետք է հիշես, Ֆրունզ, ամենաշքեղ հոբելյաններից մեկը Ավետինն էր: Աճեմյանի ղեկավարությամբ շքեղ երեկո սարքեցինք: Հատվածներ էինք ներկայացնում նրա խաղացած դերերից, իհարկե, մեր հնարած խոսքերով: Դու պետք է Ջամբախով ներկայացնեիր, ինձ բաժին էր ընկել նրա իշխան Սաքուն: Որոշ բաներ մտքիս մեջ մնացել է.

— ... Մին էլ տեսնամ մի ձեռն ա գալի, մի ձեռն ա գալի... Ասի, յա Հրաչն է, յա Փափազը... Աշխարհում երկու իգիթ եմ ճանաչում՝ մի՞նը Նազարն է... Չէ, աշխարհում երկու դերասան եմ ճանաչում՝ մի՞նը Փափազն է, մի՞նն էլ Փափազը կասի թե ով ա...

Այսպես, հումորով, սիրով, հարգանքով...

Սպասում էի, վստահ էի, որ իսկական տոն էր լինելու, համայն հայությունը մի օր ապրելու էր քեզնով, հանդիսատեսը թատրոնի դռները ջարդելու էր՝ քեզ տեսնելու, լսելու, մեծարելու համար... Չկայացավ: Արի ներողամիտ լինենք, ասենք, որ մեր ժողովուրդը լուրջ գործերով է զբաղված, թատրոնի գլուխ չունի... Հիմա հայոց խորհրդարանի նիստերն է դիտում, ուր պատգամավորները «որպեսզին» «որպիսի»-ից չջոկելով, դեմոկրատիա են սարքում...

Առանց Արցախի մեր ինչին է պետք...

Անկախություն ենք հռչակում...

Առանց Արցախի, որ ո՞ր գնանք...

Որոնք խառնվել է ցորենին...

Բայց այն էլ ասենք, որ եթե մեր ժողովուրդը մոռանում է իր մեծի տարելիցը շնորհավորել ու նշել, եթե թատրոն չի հաճախում, ուրեմն շեղվել ենք, ուրիշ տեղ ենք գնում, ուրիշ ժողովուրդ ենք դառնում...

Մի նեղ շրջանակ դրամատուրգներ ունեինք, հաստիքավոր, գրում էին, գրում էին... Հանկարծ այդ շրջանակը պատռեց, թատրոն մտավ մասնագիտությամբ բժիշկ, կոչումով արվեստագետ-թատերագիր Ժորա Հարությունյանը՝ թևի տակ դրած «Սրտի առատ» թատերգությունը՝ կյանքով, ճշմարտությամբ լեցուն, թարմ, սրամիտ, փայլուն... Աճեմյանն, ասես, հենց դրան էր սպասում...

Էն ինչ էր, ինչ էր... Մհերն ու Թադևոս Սարյանը դուրս էին գալիս բեմ... Հղկված, մշակված տեսարաններ ու հետն էլ միշտ պատրաստ անսպասելի իմպրովիզացիայի, դրա իրավունքը ձեռք բերած... Չէ, չեմ տեսել, չեմ պատկերացնում աշխարհի ոչ մի թատրոնում արվեստի հորդացող այդպիսի լավա, այդպիսի հըրճվանք, այդքան ծափ, այդքան երջանիկ հանդիսատես...

Մհերը հայտնվում էր, դահլիճը դրդում էր ծափերի որոտից... Մի ծով հմայք էր գալիս, ու սկսվելու էր խրախճանքը: Խենթանում էր դահլիճը. մենք՝ նրա խաղընկերները, որ մասնակցում էինք այդ ներկայացմանը, մեր տեսարանն ավարտում էինք ու կախվում կուլիսներից, որ ոչ մի նոր երանգ, ոչ մի նոր գույն բաց չթողնենք: Կլանվում էինք նրա խաղով, հմայվում, հաղորդվում...

Խաղում էր Մհերը, խաղացնում էր հանդիսատեսին իր հետ, ստիպում, որ ստեղծագործի հավասար, մասնակցի ճշմարտության արարմանը:

Սոցիալիզմի բանաձևով ասած այդ բացասական կերպարը՝

Գվիդոնը, տաղանդավոր կատարմամբ դառնում էր բեմում ամենատաղանդավոր մարդը, ամենասիրելին: Հնարամիտ, հեզնական, ճշմարիտ բան ասելիս՝ զգույշ, կարծրացած օրենքները հրմտորեն շրջանցող, իմաստուն մի մարդ, որ գիտի, տեսնում և հասկանում է շատ ավելի, քան շրջապատի դրական բարոյաբանները: Պարզունակ մարդու դիմակը վրան՝ աջ ու ձախ ծաղրում էր այս իրավակարգը, նրա սուտը, կեղծը, անմարդկայինը:

Ես քո դերերը վերլուծողը չեմ, Ֆրունգ, դա իմ ինչ խելքի բանն է, մանավանդ խոսքը ընդունակ չէ արտահայտելու դերասանի արածը, բայց եթե տեսել եմ զարմանալի դերակատարում, իսկական, խորը, կատարելության հասնող դերասանի արվեստ՝ մեկը քոնն է եղել, քո արածը:

Դե ինչ, դերասանի ճակատագիր է, արածն անէանում է, և վաղվա սերունդը իր դերասանն է ծնում... Բայց մենք ինչպես կծնվեինք առանց նրանց, սրանք ինչպես կծնվեն առանց մեզ...

Միգուցե դու էլ քո բաժին հանցանքն ունես... Դու քո տանը չես... Այսօր Մայր թատրոնում նոր ձայներ են հնչում՝ օտար ու չսազական մեր բեմին, անիմացության մեջ խարխալում են շնորհալի այդ երիտասարդները, որովհետև բնական փոխանցումը չկայացավ, «վարակը» տեղի չունեցավ, չտեսան, չշփվեցին, չըսեցին քեզ...

Բայց անարդար եղան նրանք, ովքեր քննող ու դատող են. եթե չլինեին կանխակալ, քո Գվիդոնը և ինչու միայն դա, դնելու էին, քեզ էլ դասելու էին աշխարհի մեծագույն կատակերգուների շարքը դեռ էն ժամանակ:

Ի վերջո, չնայած մեր ժամանակներում ապրող, բայց Փափազյանի, Սիրանույշի, Հրաչի ու Ջանիբեկյանի թատերախոսներն էին նրանք, նրանցն էին, մերը չէին: Մեր սերունդը չունեցավ իր թատերախոսը: Երևի պատճառներից մեկն էլ դա էր, որ մեր թատերախոս-օրենսդիրները աստիճանաբար հեռացան հայոց թատ-

րոնի գործերից ու կյանքից՝ ասպարեզը թողնելով թատերական մագնատներին:

Հոշոտվեց և մեծագույն դերասանուհի Մետաքսը՝ գեղեցիկ մեր հրաշքը. իր գործունեության վերջին տարիներին, գուրգուրանքից զուրկ, փաստորեն դուրս մղվեց... Անսպասելի վախճանվեց: Հիշո՞ւմ ես նրա թաղումը: Կարգադրիչները նրան հրաժեշտ տալու մի կարճ ժամանակ տրամադրելով, ուզեցին խցկել կիսաժանգոտ, անշուք մի մեքենա: Ժողովուրդը թույլ չտվեց: Խլեց նրա դիակը, ու, չնայած անտանելի շոգին, ձեռքերի վրա հասցրրեց հանգստարան...

... Հումորի հեղեղը թափվում էր բեմից, լցվում դահլիճ, բարձրանում մինչև առաստաղ, տարածվում, կլանում ողջ թատրոնը, թատրոնի մարդկանց՝ հսկիչներից մինչև հրշեջները... Թվում էր, այդ օրը թատրոնի պատերն էլ էին քրքջում... Եվ այս էր Աճեմյանի թատրոնը, այս էր ժողովրդական թատրոնը:

Քրքջում, խենթանում էր հանդիսատեսը, որովհետև հայտնըվել էր մեկը, որ իր վրեժն էր առնում անիրավ այս կարգերից:

Մեծ արտիստները ծնվում են իրենց ժամանակին, կանխորոշված է նրանց հայտնությունը: Գալիս են իրենց կոչումով, իմաստով, գալիս են ժողովրդի կյանքում ճակատագրի թելադրանքը կատարելու: Հիսունական թվականների հայ ժողովուրդը եղեռն ու հեղափոխություն մտքում պահած, պատերազմ ու Ստալին, բանտ ու արքայ, Ալթայի երկրամաս տեսած, վերքոտ, կորուստներով բազում... հոգնած ու մռայլ, հազար կապանքի մեջ սառած, հուսահատ լցվում էր թատրոն՝ հալեցնում էր իր սառած հոգին, շնչում խիճո՞ւ ու լույս, ազատվում կապանքներից, նորանում, մաքրվում...

Բեմի վրա մի սովորական հայ մարդ էր, որ ուզում էր պարզապես մարդավայել ապրել: Անօրինություններն անօրինությամբ շրջանցելով, չէր ուզում կոմունիզմի կառուցման մեծ գործի մաս-

ճակիցը լինել, հասարակ մարդ էր, փոքր մարդ, բայց չէր կամե-
նում ստրկաբաժնով աշխատել, մեկի ձեռքին պտուտակ լինել...

Մեր լուսավոր իրականությանը «խորթ տարր», բայց հան-
դիսատեսը նրա մեջ իր իղձերն էր տեսնում և հրճվում էր հենց
նրա համար, որ, ահա, եկել է մեկը, որ իր փոխարեն խիզախում
է, վերջապես մեկը, որ անհնազանդ է, ըմբոստ, անկառավարելի:

Մինքն Մկրտչյանը իր ժողովրդին սովորեցրեց ժպտալ, ծիծա-
ղել, սովորեցրեց խորաթափանց լինել և կյանքի ծանրությունը
թեթևացնել հումորով...

Եվ ով էր ծնելու Միներին: Թուրքի սարսափներից մազապուրծ,
որբանոցներում մեծացած, զրկանքներով սնված Մուշեղն ու Սա-
նամը: Կամոքն Աստծո, նրանք, տաղանդից բացի, իրենց որդուն
շնորհել են իմաստնություն, անհանգիստ, պրպտուն միտք և խո-
րը ողբերգական էություն: Ողբերգականը նրա մեջ ազգային երե-
վույթ է, արյան մեջ է, հայոց ճակատագիրն է, որ ամենքից ծա-
ծուկ լուռ միտում է նրա ներքնաշխարհում...

Հայոց թատրոնը մեր ժողովրդի համար եղել է սպեղանի:
Սպեղանի էր և Միների Գվիդոնը «Սրտի արատ» ներկայացման
մեջ:

Արդեն թատրոնում էինք աշխատում, բայց դեռ ուսանող
էինք: Ես Ստեփանավանից եկա, դու՝ Լենինականից: Երկու գա-
վառացի երիտասարդ՝ մայրաքաղաքում: Յուրաքանչյուր ներ-
կայացմանը մասնակցելու համար ստանում էինք տասը ուրբի:
Օրերից մի օր, երկուսով ունեինք ընդամենը մեկ ուրբի, հիմիկ-
վա տասը կոպեկը: Քաղցած էինք, որոշեցինք մի բաժակ արևա-
ծաղիկ առնել, որ ուտելու պատրանք լինի: Թատրոնի այգում հե-
ծանք նստարանին, թղթե փոքրիկ տոպրակը դրինք մեջտեղը: Հի-
շո՛ւմ ես, Ֆրունզ, ինչից էինք խոսում: Իհարկե, հիշում ես՝ թատ-
րոնից, Ստանիսլավսկուց, մեր դերասաններից. գրուցում էինք
աշխարհը մոռացած, քաղցը մոռացած, թատրոնով զմայլված ու
հմայված... Թատրոն, դերասանություն, թատրոն, թատրոն... Խո-

սելը երկարացնում էր մեր արևածաղիկ չրթելը, և դա, կարծեմ, մեր կախարդական օրերից էր...

Նոր թատրոնն էս սարքում: Ամեն անգամ հիշելիս, ժպտում եմ: Տնաշեն, ոտից գլուխ թատրոնն էս, թատրոնը քո հոգում սարքած պրծած է, էդ ի՛նչ էս տանջվում: Բա դու ափսոս չե՛ս՝ մեխ ու տախտակով զբաղվես: Աստված քեզ ազատ է ստեղծել: Դու անսանձ ու անթամբ ձի հեծնող, անկաղապար արվեստի տեր՝ ինքդ ինչո՞ւ էս կապանում: Թող ծառս լինի ձիդ, խրխնջա, զրնգուն... Մրցանակներ շահես ազգիդ համար...

Ուրիշի գործով թող ուրիշը զբաղվի՝ բարձունքներից սովոր մարդ...

Տարիներ անցան... Նկարահանվում էինք «Մենք ենք մեր սարերը» ֆիլմում: Փառքի մեջ լողում էր Մհերն արդեն, նույնիսկ մեքենա ուներ արդեն: Գնում էինք Իջևանի սարերը մեր կիսատ գործին: Սևանի խորտկարաններից մեկի առաջ կանգ առավ:

— Հերն էլ անիծած նկարահանումների, իջիր:

— Ֆրունզ, Հենրիկը սպասում է...

— Հենրիկը կհասկանա մեզ, աշխարհը չի քանդվի, իջիր...

Մհերը հաստատ քայլերով մտավ ներս, թագավորական տեղ ընտրեց, ձեռքի թագավորական շարժումով մատուցողին հրավիրեց. սա հալվեց երջանկությունից ու սկսեց թվել ճաշատեսակները...

— Բեր...

— ...

— Բեր...

— ...

— Բեր... Մի խոսքով, ինչ որ լավ բան ունես, բեր:

— Ինչ ենք անում, ասի, երկուսով այսքանն ինչ ենք անելու:

— Քու բանը չի, դու սուս... Էն սեմուշկեն հիշո՞ւմ էս... Մուռը հանենք, էս սրանց հերն էմ անիծել...

Խորովածը, խավիարը, իշխանը կերանք-խմեցինք իշխանա-
վարի, հին ու նորով, ապագայով համեմեցինք մեր խոսքն ու զրույ-
ցը, հիշեցինք մեր ծնողներին, տխրեցինք, ուրախացանք, վշտա-
ցանք, իրար կենաց խմեցինք հազար անգամ...

Մհերի շատրվան հաջողությունների տարիներն էին, մի
Ֆրունզ էր, մի Հայաստան: Մեծից փոքր ճանաչում էին նրան,
սեր, հարգանք, գուրգուրանք...

Սևանցի մի մարդ փորձեց մոտենալ մեր սեղանին: Մհերն
իսկույն զգաստացավ, խոժոռվեց.

— Ի՞նչ ես ուզում, ախպեր ջան:

— Ֆրունզ ջան, կուզեմ քեզ պատիվ տամ...

— Ուրիշ անգամ, էսօր մեզ մի խանգարի:

— Բա իմալ կեղնի... Չհարգե՛մ, չսիրե՛մ քեզ...

— Հեռվից, հեռվից... էսօր մեր մուտ հանելու օրն է...

Անձանոթ պարոնը շփոթվեց, մենք լկտիաբար ծիծաղեցինք,
մեր լկտիանալու օրն էր...

Հետո պարոնը կոնյակ ուղարկեց մեր սեղանին ու հեռվում
նստած բաժակ էր բարձրացնում: Մհերի համար: Դեմքին երա-
նություն էր, աչքերի մեջ ակնածանք, պաշտամունք...

Նայում էի ընկերոջս ու մտածում՝ ի՞նչ մեծ երջանկություն է
դերասան լինելը, ուրիշ էլ ո՛վ, ո՛ր պաշտոնյան, աշխարհի հզոր-
ներից ո՛ր մեկը կարող է արժանանալ այսպիսի հարգանքի, այս-
պիսի սիրո...

Վաթսունվեց թվականին առաջին անգամ Մայր թատրոնը
մեկնեց արտասահման հյուրախաղերի: Իջանք Բելյուսի օդակա-
յանը: Հազարավոր մարդիկ, ասես, ծեփված են նրա շենքին, բո-
լոր հարկերի պատուհաններից, պատշգամբներից գոռում-գոչում
են, ծափահարում: Չարմացած աչ ու ձախ ենք նայում՝ այս ինչ
բազմություն է, ինչ է պատահել...

Հայերն էին, եկել էին մեզ դիմավորելու: Դեռ ուշքի չէինք

եկել, ընկանք սրանց գիրկը: Բեյրութահայերը առաջին անգամն էին տեսնում Հայրենիքից եկած այսպիսի խումբ: Հնարավոր չէ պատմել ինչ էր կատարվում... Ծաղիկների ծով, լացի ու արցունքի ծով, անհասկանալի է՝ մարդիկ ծիծաղո՞ւմ են բարձրաձայն, թե հեկեկում, իրար հրելով ձգվում են դեպի մեզ՝ գրկեն, համբուրեն, մի կերպ կաշեն, լիզեն... Տարեց մամիկները, թոռնիկներին ձեռքներն առած, իրար գլխի վրայից պարզում են մեզ.

— Ձեռք տուր, յավրիկս, բռնե, շոյե, Հայրենիքի համն է, Հայրենիքի հոտն է...

Ամբոխ է, ժխոր, ճչոցներ, ժպիտներ, հարց ու հարցումներ. միևնույն է, իրար չենք լսում. շփոթված, մոլորված, արցունքները մլարել են մեր աչքերը, արցունքները հոսում են, հոսում են...

Մեզ չեն ճանաչում, չգիտեն ով ով է, թերևս, Փափագյանի անունն են լսած կամ տեսած՝ տարիքավորները, բայց դա ինչ նշանակություն ունի կարոտից պապակած սրտերի համար, մեզ դիմավորող, սպասող երկու հազար, երկու հարյուր հազար հայության համար... հայրենիքից ենք... Հսկա ամբոխը ալեկոծվում է, լաց է լինում, մենք լաց ենք լինում, պաշում ենք իրար թաց երես, իրականում արցունք ենք պաշում... Աշխարհը շուռ եկավ մեզ համար: Ցնցված էինք: Հեղաշրջվեցինք. մեր միտքը լույս դառավ ու տեսանք այն անմարդկային անդունդը, որով տասնյակ տարիներ մեզ բաժանել են, կտրել են մեր հարազատներից, մեր կեսից: Մենք միայն աղոտ գաղափար ենք ունեցել Սփյուռքի մասին, այս աշխարհը չկար մեզ համար, խաբված ենք եղել, խաբված ու ստորացած, և կոմունիզմն էլ, սոցիալիզմն էլ, խորհրդայինն էլ, ինչով մեզ կերակրել էին մինչև հիմա, այս հուզված, խեղված, այս լացող մարդկանց դեմ է եղել...

Հայերը եկել էին իրենց մեքենաներով, որ մեզ պատվով-շուքով հասցնեն հյուրանոց, բայց մեր ղեկավարությունը, հատուկ հիմնարկից եկած հատուկ մարդը աշալուրջ են, կարողանում են զատել մեզ և լցնել մի ավտոբուսի մեջ:

Կոլեկտիվ ենք...

Հյուրանոցում տեղավորվելուց հետո անմիջապես կոլեկտիվի հավաք են անում: Մեզ նորից են հրահանգներ տալիս, դաստիարակում են, ուշքի են բերում, սարսափեցնում են, վախեցնում, տնայնացնում... Մեր ղեկավարությանը քոմագ է գալիս մեր դերասանատան հատուկ բաժնի հատուկ հաշ մարդը: Զգոն եղեք, զգուշացեք, աչալուրջ եղեք՝ ձեր շուրջը վիտում են լրտեսներ, թշնամիներ, սադրիչներ, գաղափարական մեր թշնամիները, դաշնակցականները ամեն վնաս կարող են հասցնել... Սուտ: Ափաշկարա սուտ... Եվ ով կհավատա այլևս: Միայն միամիտ Ավետը օրերով հյուրանոցի նախասրահից դուրս չէր գալիս, «Կազբեկ» շիտելով քայլում էր.

— Հատուկ նշանակված եմ Փափագի վրա, հանկարծ դաշնակցականների հետ չհանդիպի...

Միերը խաղաց Պաղտասար ախպար, և խմբի ստորակարգումները խախտվեցին. համայնքը ազատ, բնական, առողջ՝ ամեն մեկիս դրեց իր տեղը ըստ արժանիքի, կոչումներից անկախ: Միերը միանգամից դարձավ անկառավարելի, անհսկելի, դարձավ բոլորինը: Դաշնակցականները, որ գուսպ էին և զգույշ՝ չլինի թե մեզ հետ շփվելով մեզ վնաս հասցնեն, Միերի հարցում չդիմացան,— կորցրին իրենց զգուշավորությունը: Նրա Պաղտիկը դարձավ հյուրախաղերի զարդը: Վաթսունվեց հյուրախաղերը Բեյրութում Միեր Մկրտչյանը դարձրեց իրենը, իր ամենօրյա բենեֆիսները և իր հոշակով անմրցելի էր: Թերևս մեկ էլ Արաջյանն էր, որ համայնքի համար բացում էր Պարույր Սևակի աշխարհը շոայլ ու շոայլ...

Ազգային հպարտություն էր Միերը Բեյրութում: Օտարության մեջ Հայրենիքից կտրված, ծարավ մարդիկ նրա միջոցով վերագտնում էին իրենց, գիտակցում, որ կան, որ ժողովուրդ են, երկիր ունեն, տաղանդներ ունեն, Միեր Մկրտչյան ունեն...

Մի հսկա, մի ծանր քարի տակից է Սանամ քույրիկը հանել նրան, դուրս է քաշել լույս աշխարհի մեզ համար և ինքն էլ հսկա

մի ժայռաբեկոր հայոց թատերարվեստի ոստանում, ծանր-ծանր...
Շնորհալի մարդը Աստծո կողմից է շնորհվում ազգին, բացառիկ
է ու թանկ...

Մեկ էլ ինչ հիշեցի, Ֆրունզ: «Ռոմեո ու Ջուլիետը», քո տգե-
ղության հմայքը, քո զարմանալի Մերկուցիոն, վերածննդի ազնու-
վազարմ ոսկյա երիտասարդը... Ասեմք, որ իմանան՝ եվրոպացի-
ներից առաջ մենք էինք, որ կոտրեցինք ավանդական-դասական
կեղծ ոճմանտիզմը, Կապուլետների և Մոնտեգյունների տղաներին
դուրս բերինք փողոց, փողոցի կյանք տվինք, կյանքի կյանք
տվինք, կենդանացրինք, շնչել տվինք լիաթոք, ապրեցրինք բեմի
վրա իսկական սիրով ու ատելությամբ, իսկական կովելով, իսկա-
կան մեռնելով...

Մեր ընկերը՝ Հենրիկ Հարությունյանը, մենամարտի ուսուցիչ,
էն, որ մեզ թողեց, գնաց Ամերիկաները, ինչքան աշխատեց մեզ
հետ, ինչքան տանջվեց, որ մեզ սովորեցնի մենամարտի բարձր
արվեստը:

Եվ դու էիր վերածննդի առաջին պճնամուղը բեմի վրա, և ես
գիտեմ, թե քեզ հետ մենամարտելիս, մահն աչքիդ առաջ, կար-
միր վարդը ձեռքիդ՝ ինչպես էիր մենամարտում և ինչքան էիր այդ
պահին գեղեցկանում... Ապշելու բան էր: Խտացված կիրք, կենտ-
րոնացում, հանդուգն, ազատ, մահն արհամարհող խաղ, խաղ...
Ու հանկարծ անսպասելի լուրջուն... Մահացու վերք՝ Թիբայթի
խարդախ հարվածը... Ջահելի, կյանքը դեռ չվայելած ջահելի
մահ... Քո Մերկուցիոյի՝ շրջապատի ամենափայլուն երիտասար-
դի աչքերի մեջ մահվան գիտակցություն... Եվ աչքերիդ մեջ ինչ
ողբերգություն կար, ինչ հանդիմանանք շրջապատին՝ եթե մահը
կա, եթե խաղ չէր սա, ես ի՞նչ եմք անում, ինչ թշնամություն,
մարդիկ... Քո դիմաց կանգնած, ես կարդում էի քո փակվող աչ-
քերը, տեսնում էի հայացքդ, որ ճշում էր ասես, աղաղակող բո-
ղոք էր՝ անարդար է, անմիտ է, անարդար է մահը...

Հրաշալի էիր խաղում այդ դերը: Հիանում էի ամեն անգամ, զարմանում, իմ մեծ ընկեր, իմ հպարտություն...

Թբիլիսիի ո՛ր թաղամասում էինք, հա, Սոլովակում, հին Թիֆլիսի հայոց բարձր խավի շրջանում: Յուրա երգնկյանը, դու, ես մեր դերազգեստներով, հսկա մի ծառի՝ հսկա սաղարթի տակ կանաչ ներկած նստարանին նստած, մշակում էինք մեր երկխոսությունը «Խաթաբալա» ֆիլմի սուտ թաղման տեսարանի համար: Մենք հորինում էինք ու մենք էլ առաջինը կոտորվում ծիծաղից... Եվ ինչքան էր զվարթ իմ հոգին, այսպես ասած, ստեղծագործական որոնումների մեջ, որ քեզ հետ էի անում իմ սիրած գործը: Թատրոնը զվարթ գործ է, դերասանությունը ուրիշ աշխատանք. և աշխատանք է, և աշխատանք չի՝ ուրախ, պայծառ, քրտինքը՝ քաղցր, հաճելի... Եթե հաճույք չկա, եթե զրկվել ես կամ զրկել են քեզ չափից ավել լրջությամբ ու կարգապահությամբ իսկ դերասանությունը հեշտ է դարձնել պատիժ, դա թատրոն չէ ուրեմն: Հիմնարկ է: Տանել չեմ կարողանում թատրոնում տխուր, ճնշված, կյանքի թելը կորցրած մարդկանց...

Աճեմյանն իմաստուն էր և այս առումով. գիտեր, որ լավ խաղալ կարելի է միայն խաղ անելով... Եվ հետո, և դրանից առաջ կինոյում, թատրոնում, շատ անգամ եմ քո խաղընկերը եղել, և միշտ հեշտ, թեթև, հաճույքով, անբռնազբոս եմ խաղացել, որովհետև դերասանություն անելիս երջանկությունդ անպակաս է, հոգիդ ժպտուն է, դու՝ դու ես...

Արդեն վաղուց քեզ հետ չեմ աշխատել, հետաքրքիր է՝ հո չե՛ս կորցրել գեղեցիկ քո հատկությունները... Հո չես մոռացել մարդկանց հետ կատարելը, սովորեցնելը, նրա կյանքը թեթևացնելը...

Մեկ էլ էն եմ հիշում, որ մենք միասին, առաջին անգամ կարծեմ միասին, նկարահանվում էինք «Տերն ու ծառան» ֆիլմում:

Աշտարակի հյուրանոցում (Օջականում էին նկարահանումները) երեկոները փակվում էինք կիսախափար քո սենյակում ու՝ երկու ծառաներս, քրքրում, քուշուշ էինք անում մեր դերերը, թե էլ ինչ գտնենք վաղվա համար: Այդ օրերին էր, որ քեզնից սովորեցի փորձ անելիս չամաչել, ընկերոջից չամաչել, ճիշտ ու սխալ բացվել, այսինքն՝ անել մեր գործը մասնագիտորեն: Դերասանի մասնագիտություն, ընկերովի գործ, լուծը երկուսով քաշելու, երկուսով, երեքով, շատով... Էս ենք մենք...

Աշտարակի հյուրանոցում էր մնում և լուսահոգի Թադևոս Սարյանը, հայ հանճարեղ դերասաններից մեկը, չգնահատված... Մի օր երեքով էինք. Սարոյանն արդեն վատառողջ էր, ես էլ շարունակ մի հարց տվի, մի քիչ պարծետիկ ստացվեց. «Ի՞նչ կուզենայիք խաղալ, ի՞նչ եք երազում...»

Առանց այն էլ խոշոր աչքերը չոեց վրաս, երկար նայեց...

— Երազում եմ... (մրմնջաց քթի տակ), երազում եմ... Ուզում եմ առողջ լինել նախ և առաջ...

Վեց տասնամյակ ապրեցինք, ինչ-որ բաներ գիտենք այս աշխարհից, բայց շատ բան էլ չգիտենք... Օրինակ՝ գիտենք, որ ժամանակը թանկ է, բայց ինչպես տնօրինենք, ինչպես խնայենք, չգիտենք... Եվ ի՞նչ բան է ժամանակը, ո՞վ է, ովքե՞ր են նրա կառավարիչները...

Մեր օրերի վատ նշաններից մեկն էլ այն է, որ ժամանակը թատրոնը դուրս է շարտում ժողովրդի կյանքից... Վատ նշան է, որովհետև, ճիշտ է, հացն է մեզ մարդ պահում, բայց հացը հոգու հետ է լինում, որովհետև հացը ոգեղեն սկիզբ ունի...

Ի՞նչ ենք անելու գոնե մեր հասկացածով...

Սրանով խոսքս ավարտում եմ մեր ժամանակի մեծագույն դերասանի մասին: Անկրկնելի է Մհեր Մկրտչյանը բոլոր մեծերի նման, երկրորդը չի լինելու, և դա ճիշտ է, թող ուրիշները գան... Մեծերը անհետ չեն անցնում, նրանք բեմում մի բան են թողնում,

որ պետք է հոտոտես, գտնես, զինվես, զորանաս, փոխանցես հաջորդին...

Հաջորդին փոխանցես, անպայման փոխանցես...

Տրունգ, քո մասին խոսելով, տեսա՛ր, ուր ասես գնացի, ինչի ասես ձեռք տվի: Կներես, բայց ինձ թվում է այս ամենը քեզ հետ կապ ունի... Չնայած, ո՛վ գիտի...

Չկարծես թե այլևս քեզ ասելու բան չունենմ. պարզապես քո վաթսունամյակին պատշաճ է, որ չերկարացնեմ, խոսքը տամ ուրիշներին էլ...

... Երագում եմ, նախ և առաջ, առողջ լինես...

Չտխարես, իմ վաթսունը քոնից մի տարի շուտ էր, ուրեմն մի տարով քեզնից մեծ եմ: Հա, ի դեպ ասեմ, որ, բացի Արցախի թերթերից, ոչ ոք չհիշեց:

Եվ, չկասկածես, հարյուրամյակդ շուքով է տոնելու ազգդ, կտեսնես... Մեծ արտիստի օրը մեծ տոն է սարքելու... Համազգային... Դեռ մի բան էլ դեմը...

Տաղանդավոր մարդու հաղթանակը գեղեցիկ է, որովհետև միանգամից դառնում է ազգային հարստություն և մտնում է համաշխարհային գանձարան...

Տրունգ, առանց հոգու, առանց հոգևորության, ազգը հաց չի ունենալու. .

փետրվար, 91

ԻՄ ԼՈՒՅՍ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՐԴ...

Սուրենի հետ հանդիպել եմ երկու, թե երեք անգամ: Բարձրահասակ, խոշոր մարդ էր, վայելչակազմ: Ընտիր իմաստությամբ, խոսքի ու խոսելու հմտություն. զրույց անող, լսող-ասող: Կյանքաճանաչ ու մարդ հասկացող... Նրա մարդ-էությունը տաղանդավոր էր:

Միանգամից ջերմացավ մեր իրար տեսնելը. ընկերացանք: Ես

սիրեցի նրան, նա էլ, կարծեմ, ինձ: Բաժանվեցինք նոր հանդիպումների հույսով, բայց, ավաղ... Մնացին միայն մնայուն տպավորություններ:

Սուրենը կլինի Հենրիկի հայրը...

Գեղեցիկ տղամարդու, առնականության մի հատուկ օրինակ էր Դավիթը: Դեռ պատանեկության տարիներից իմ հոգու մեջ էր ինքն ու իր փառահեղ կինտո Կակուլին: Մինչև վերջ մնացինք բարեկամ ու ընկեր, ու նրա ծիծաղը, որ ես նմանեցնում էի ազնվացեղ Ածույզի վրնջունին, մինչև հիմա էլ ականջիս է...

Դավիթը... պաշտված ու սիրված, տաղանդաշատ այդ դերասանը, որ նորահարսի պես ամաչում էր սեփական փառքից:

Դավիթը կլինի Մալյան Հենրիկի հորեղբայրը...

Ես էլ, ուրեմն, Հենրիկին համարյա արմատից գիտեմ, տակնին եմ ճանաչում:

Քո վաթսուն տարուց, սիրելի ընկեր, ինչ-որ վերին մի իրավունքով երեսունը քեզ հետ եմ, ու մեր ընկերությունն ինձ համար եղել է իմ տոթակեզ օրերի սառնակունք...

Արվեստագետ Մալյանի աշխարհը, հայոց հենք-հիմքով Մաշտոցյան մի իմաստուն դպրոց է, ու ես՝ այդ դպրոցի մշտական սանը:

Պուտ ու պակաս կլինեք այսօրվա մեր մշակույթը առանց խորապես ազգային մալյանական ֆիլմերի: «Եռանկյունին», թե «Նահապետը», «Կտոր մը երկինքը», թե «Մենք ենք, մեր սարերը» ապրում են ժողովրդի սրտում, հարատևում են ժամանակի քննությունը գերազանց բռնած, ու դրա վկայությունը այն է, որ դիտողներից շատերը գրեթե անգիր գիտեն դրանք:

Մալյանի ստեղծագործությունը ազգային է առանց ճիգերի, բնականոն, ինչպես հարազատ հողից բխող աղբյուր: Դրա շնորհիվ է, որ գեղագիտական և փիլիսոփայական իրենց խորությամբ, վերջնական ընդհանրացումներով դրանք դառնում են մոտ ու հասկանալի տարբեր ազգերի մարդկանց:

Ասածիս գումարեմ և այն, որ Մալյանը երբեք մտքով չի անցկացնում առևտրով զբաղվել, այսինքն սկսել մեկին կամ մի խումբ մարդկանց շահելու, դուր գալու համար: Մալյանը ստեղծագործում է հանուն հայոց մշակույթի, հանուն ժողովրդի: Նա գործում է անսալով սեփական սրտի թելադրանքին և հայեցի մարդու արյան կանչով...

Հենրիկ, ինձ ասել են մի երկու խոսք գրեմ քո մասին: Գրում եմ և տեսնում եմ, որ երկու խոսքի բան չէ ասելիքս: Չէ՛ որ մեր ամեն մի ֆիլմը եղել է ապրումների, տառապանքների մի աշխարհ, ըստ էության՝ մեր կյանքի մեջ առանձին մի կյանք: Էջեր ու էջեր են պետք: Բայց և այնպես...

Անհատներ կան, որոնք ընդունակ են ճակատագրական դեր խաղալ թեկուզ մի մարդու կյանքում: Ես չգիտեմ ինչպես կընթացար կինոդերասանի իմ կենսագրությունը, եթե քսան տարի առաջ Մալյանն ինձ չհրավիրեր մասնակցելու մեծ ընկերության մասին իր «Եռանկյունին» ֆիլմում: Բայց հետաքրքիր ու զարմանալին այն է, որ այժմ էլ, արդեն հասուն իմ տարիներին, հաճախ եմ կարիք ունենում հեռվելու նրա ուսին, ու նա մնում է ինձ համար այն մարդը, որը կարող է կտրուկ փոխել ստեղծագործական իմ հունը, առաջադրելով անսպասելի, ամենաբարդ խնդիրներ: Դրանք իմ հոգին լցնում են երկյուղով, բայց և՛ խինդով, բերկրանքով

Խոսելով «Հայֆիլմի» ծննդի մասին, այսօր Փարաջանովի կողքին պետք է դնել Մալյանի հզոր անհատականությունը, որն իր մարդկային ու արվեստագետի էությանը (իսկ դրանք անբաժան և միևնույն բաներն են) ավելի մոտ է կանգնած հարազատ ժողովրդին:

Անսահման հավատ ունեյ Հենրիկի գեղարվեստական ճաշակին, չափի զգացողությանը, ընդհանրապես նրա գեղագիտական ըմբռնումներին: Սիրում եմ նրա աշխատելառճը՝ անբռնագրոս, թեթև: Միշտ զարմանում և հիանում եմ մարդկանց հավաքագրելու, համախոհ դարձնելու նրա կարողությամբ: Երևի հե՛նց

այդտեղից է սկսվում իսկական տաղանդը: Եվ եթե պատահում է վիճում կամ հակաճառում եմ, ապա, միևնույն է, ականջիս պոչով սպասում եմ նրա վերջին խոսքին...

Ամեն մարդ այս աշխարհն է գալիս մեջքին մի շալակ ցախ: Խնդիրն այն է, որ բերածդ ցախը մինչև վերջ այրես ու նոր միայն գնաս: Հետդ չտանես, կամ չթողնես, որ այստեղ մնա փտի, անտեղի փշանա: Դա քո բերած փայտն է:

Սիրելի իմ ընկեր, թանկագին ընկեր, վաթսուն ես թե ինչքան ես, չգիտեմ, դա ինձ քիչ է հետաքրքրում... Գիտեմ, որ մեջքիդ շալակը մեծ է, գիտեմ, որ այրելով հագիվ ես հասել կեսին: Ուրեմն, իմ ցանկությունն ու պատվերը քեզ՝ փայտի ոչ մի կտոր թող չմնա, մի հատիկ տաշեղ անգամ չմնա: Ապրիր այնքան, որ դատարկ գնաս:

Լիքն ես եկել, դատարկ գնաս: Ազնիվ մտավորականի սուրբ պարտքն է սա հարազատ ժողովրդին, ազգին:

Լույս աշխարհ ու մութ աշխարհ է մարդու կյանքը: Սուրենի որդի Հենրիկը իմ լույս աշխարհի մարդն է:

ՀԵՆՐԻԿ... ՀԵՆՐԻԿ...

Մենք միասին ենք եղել, միշտ միասին, նույնիսկ այն ժամանակ, երբ դեռ իրար չէինք հանդիպել ու դեռ ծանոթ էլ չէինք: Միասին ենք եղել, որովհետև մի ժողովրդից ենք սերվել, ուրեմն և՛ մի արգանդից, և մեր սրտերը բաբախել են նույն արյունով: Հիմա նրա սիրտը չի բաբախում...

Հիմա ինքը չկա, ինքը գնաց... Որքացած ու մոլորված ու շվարած մտածում եմ...

Բա, էս ո՞նց կլինի...

Ում հետ եմ գրույց անելու թատրոնից, կինոյից, աշխարհից

ու ազգից, մեր ճակատագրից, մեր հոգուց, ում հետ եմ երազելու, հուսալու, հավատալու:

Բա ես ում մոտ եմ գնալու մեծ խոստովանանքի...

Շախմատի տախտակի վրա էն սուր ու անսպասելի քայլը չի լինելու, կապույտ քո աչքերում խաղացող թաքուն ժպիտը չի լինելու, իմ կրտսերի իրավունքով քեզ հետ տաք-տաք վիճելն ու քո իմաստուն լռելը չի լինելու, մեր իրարից նեղանալն ու խոռվելը, ներելն ու «բարիշել»...ը...

Օրիորդի պես շառագունում, կարմրում էիր գործած ու չգործած մեղքերիդ համար, բայց հաճախ՝ ուրիշ մեղքերի, ծանր ու մեծ, բայց հաճախ թրջվում էին աչքերդ անարդարության հանդիպելով, բայց ուրիշի լավն ըմբռնխնում էիր, ներծծում քո մեջ, ու ազգային ամեն հաջողություն թե էր տալիս քեզ, ու ճախրում էիր երջանիկ:

Սկզբից մինչև վերջ, ոտից գլուխ հայ էիր, հայկական. մեր իղձերն, ախր, կիսատ մնացին, իսկ ազգը քո վերջին խոսքը չլռեսեց, քո վերջին գործը չտեսավ, քո ամենագլխավորը... Մեծ Կոմիտասն, ախր, էլի մնաց սպասող...

Հայ կինոյի պատկառելի ներկան էիր, և հիմա բացակա՞...

Ուժեղ ու հաստատ էիր Հայաստանում, ապրած ամեն վայրկյանդ օգտավետ, իմաստալից, բայց ոտքդ դուրս էիր դնում քո հողից, ու կարոտն սկսում էր կրծել քեզ, ու երևի դրանից էր, որ դրսում դառնում էիր մի տեսակ մոլորված գառնուկ: Մենք գիտեինք՝ եթե միասին Երկրից դուրս ենք գնում, ուրեմն յուրաքանչյուրս պարտք ունի գուրգուրելու, երեխայի պես խնամելու քեզ, քանի որ կենցաղում անօգնական էիր, սնվելում՝ քչով, եղածով, պատահականով բավարարվող, ինքդ քեզ սիրելու մեջ՝ անշնորհք...

Ախր մի բուպե իսկ քո հոգին չէր դադարում աշխատելուց, և հիմա մտածում եմ հոգևորն ինչ է, ով է... Տեսնում եմ՝ դու ես...

Էս ինչո՞ւ պակասեցիր...

Ինչ խոսք, առանց քեզ էլ նկարահանվել ու նկարահանվելու

եմ, բայց քեզ հետ ուրիշ էր, իմ ու քո պայմանն ուրիշ էր, քո պարտքն ազգին ուրիշ էր, քեզնից սպասելիքն էր ուրիշ:

Վերջերս երկար լռեցիր, մարդկանց հոգին ծարավից պապակեց, անհամբեր սպասում էին՝ գան քո նոր աղբյուրը...

Ախր նվիրյալ էիր, քո գործի քուրմն էիր բարձրաճաշակ, արվեստի աստծուն անդավաճան, և քեզ համար չկար ավելի մեծ բաղձանք, քան Հայրենիքիդ ծառայելը...

Ձեմ տեսել, պատմել են՝ ամեն օր էս փետրվարին արդեն ծանր ու դժվարին քայլել ես, բարձրացել օպերայի հրապարակ, կանգնել ես Թումանյանի արձանի կողքին, հրճվել ես հարչուր-հազարավոր քույրերիդ ու եղբայրներիդ ազնիվ մղումներով, նրանց միասնությամբ, հավատով, անչար պողոթկումներով...

Մտովի քանի ֆիլմ ես նկարահանել այս օրերին, քանի բարձր-արվեստ դրվագ ես ստեղծել, երկնագույն քո աչքերը քանի-քանի հայ ազնիվ դեմք են նշմարել, քանի ոգեշունչ հայացք... Ինչ մտահղացումներ տարար քեզ հետ, ինչ հրաշալի ծրագրեր, միայն դու գիտես...

Ձե, մինչև վերջ չայրեցիր քեզ հետ բերած շալակիդ ցախը, չհասցրիր... Իսկ մարդիկ չէ՞ որ սպասում էին, վստահ էին, որ տաքանալու են քո մեծ, ամենամեծ խարույկի կողքին...

Ախր, գրավածդ տեղը շատ էր մեծ. բա ինչպե՞ս ենք լրացնելու...

Բա էս ո՞նց կլինի, Հենրիկ...

Ախր, մարդու սիրտը երբեմն դառնում է ասի նետված ձուկ, արծաթավուն ձուկ, որ չոր քարերի մեջ թաքտում է, թաքտում...

ԼՈՒՅՍԵ ԷՐ ՆՐԱ ԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՂԱԽԸ

Հեռացավ մեզնից նա, որի գրաված տեղը Մայր թատրոնում

շատ էր գեղեցիկ ու մեծ. գնաց մեր բեմի անկրկնելի դերասանուհին, մեր Մետաքսյան...

Ծանր է գիտակցել, ծանր է հաշտվել նրա մահվան հետ՝ երիցս ծանր է, գրեթե անհնար հայոց բեմը պատկերացնել առանց նրա, առանց այդ ծով հմայքի, հմայք, որպիսին ես չեմ տեսել, չեմ հանդիպել մեր բեմերում և ոչ միայն մեր... Հմայք՝ կախարդիչ ու գերող, որ տաք ալիքի պես իր հետ գալիս էր բեմ, առատորեն լրջվում դահլիճ, ջերմացնում մարդկանց սրտերը: Պարզապես անհնար է հավատալ, որ այլևս չենք լսելու ծովիցարի նրա դյուրական ձայնը, որի նմանը բնության մեջ պատահում է շատ հազվադեպ. այնքան էր հարուստ, այնքան էր հոգուց... Շուայլ է եղել արարիչը՝ տալով նրան ամենաչքնաղ արտաքինը, ամենաբեմականը...

Գրեթե քառասուն տարի աշխատել եմ Մետաքսյայի հետ և միշտ երջանիկ եմ եղել նրա հետ խաղալով միևնույն ներկայացման մեջ, որ, ավաղ, հաճախ չի պատահել: Բայց և այնպես հիշում եմ նրա ամեն մի խաղացած դերը, և այժմ աչքիս են գալիս նրա խենթօխտախո Շուրկան՝ «Եգոր Բուլլչովում», Սուսանը՝ «Նամուսում», որ հայ տղամարդու համար երազ ու երազանք էր, «Դիմակահանդես» ներկայացման մեջ՝ Նինան, կիրթ ու ազնվական և այնքան մաքուր, այնքան նվիրյալ, որ անհավատ ու կասկածամիտ Արբենիկի խանդը պիտի բորբոքեր, դարձներ կրակ, հրդեհ... Աերմակաթև Դեզդեմոնան, խոռվահույզ, փոթորկոտ, կյանքը տանուլ տված Նաստասյա Ֆիլիպովնան «Ապուշը» ներկայացման մեջ ու... Ու էլի դերեր ու դերերի շարք՝ մեծ մի պատկերասրահում տեղավորվելիք...

Հիշում եմ հերթով, ու իմ սիրելի Մետաքսյան, իմ ընկերը ներկայանում է ինձ որպես վիթխարի տաղանդի տեր դերասանուհի, մեծ վարպետ: Ծատերն էին, որ շփոթված էին ու նրա հաջողությունները վերագրում էին զուտ նրա արտաքին բարեմասնություններին: Զարմանալի չէ՝ լուսարձակում էր բեմի վրա, աստղ էր

առաջին կարգի մեծության, քրտինքով չէր շաղախած նրա տեղանդը, լույսն էր նրա ստեղծումների շաղախը... Լույսը շլացնում է... Շատերն էին, որ նրա կողքին հարմար չէին ապրում՝ մեծ պատառ էր, կույ չէր գնում, իսկ փշրվել, մանրանալ չէր կարողանում... Սակայն, մի ողջ ժողովուրդ գիտեր նրան, ճանաչում էր, չնայած կինոֆիլմերում հաճախ չէ, որ նկարահանվում էր: Ժողովուրդը սիրում էր, մեծարում, գուրգուրում էր նրան հարազատ դատեր նման, միևնույն իր գավալի նման...

Մեկն էր, միակն էր, մի հատիկ էր մեր Մետաքսյան՝ հայոց բեմի չքնաղ թագուհին: Երկինքը, ինչպես կասեր հանճարեղ Փափազյանը, իր կապույտը կաթեցրել էր նրա ճերմակ ճակատին... Ժամանակը կդասի նրան ամենամեծերի շարքը...

ՇԱՀՈՒՄ ՂԱԶԱՐՅԱՆ

Ամերիկացի հանրահռչակ գրող Ռեյ Բրեդբերին ուսանողների հետ հանդիպման ժամանակ ասել է.

— Կուզե՞նայի՞ք, արդյոք, ձեր կյանքում երբեք չաշխատել:

— Այո, իհարկե, — գոչել են ոգևորված ուսանողները, — բայց ինչպե՞ս:

— Սիրահարվեք ձեր աշխատանքին, և այն կդադարի ձեզ համար աշխատանք լինելուց:

Ես շատ դերասաններ գիտեի (հիմա էլ գիտեմ, նրանք իմ կողքին են), որոնց համար իրենց գործը այդպես էլ աշխատանք չդարձավ:

Ռոքան ես գիտեմ, Շահում Ղազարյանին, իսկ ես գիտեմ նրան բեմական առաջին քայլերից սկսած, երբեք չի «աշխատել»: Դերասանն ընդհանրապես երբեք չի ասում՝ «գնում եմ աշխատանքի», այլ ասում է միայն այսպես՝ «գնում եմ թատրոն»: Թատրոն մտնելն իսկ նրա համար գոյության իմաստ է, որ պա-

րունակում է իր մեջ ամեն ինչ՝ կյանքի լուսաբաց ու մայրամուտ: Երջանիկները հենց բեմի վրա էլ գտնում են իրենց մայրամուտը: Միաբան եղբայրները խոնարհվում են այդ բախտավորների առաջ և, նախանձը սրտներում խեղդելով, վերջին անգամ ճանապարհ են դնում նրանց թատրոնից:

Թատրոն... Նոր ներկայացումների տոնական հանդիսավորություն, հյուրախաղեր, հանդիպում անժամոթ հանդիսատեսի հետ, հրճվանք ու երկյուղ, նոր պիեսի ընթերցում ու սրտի թրրթիռ, գաղտնի սպասումներ, նոր դեր ու տառապանք, հույսեր, հույզեր, հուսալքություն, ծափեր, շնորհավորանքներ կամ՝ պարտության դառը կակիժ, մորմոք, ամոթ...

Դերասանի կյանքը...

Թատրոնում ամեն մի օրը յուրովի տոն է, և հրաշալին այն է, որ այդ տոները բոլորի համար են կամ՝ գրեթե բոլորի, այսինքն բոլոր նրանց համար, ովքեր, հաղորդվելով թատրոնի գաղտնիքներից, ապրում են, մասնակցելով նրա ծեսերի հրճվալից խորհրդավորությանը:

Սիրելի...

Եղած-չեղածը սա է: Սիրելի՛ ուրեմն նվիրվել, տրվել մինչև վերջ, չփայտալելով ու չխնայելով անձդ, ամեն անգամ բեմ բարձրանալ այնպես, կարծես դա քո վերջին բեմելն է: Եվ եթե զոհվելու ես՝ ուրեմն դիրքերում, եթե գտնելու ես քո «մայրամուտը», ուրեմն, տա աստված, որ դա լինի միմիայն բեմում:

Ծահումը ֆանատիկորեն է սիրում իր գործը՝ թատրոնը, կինոն:

Հիմա շատ են խոսում երիտասարդների դաստիարակության մասին, այն մասին, թե, իբր, անհրաժեշտ է նրանց մեջ սեր ու հարգանք սերմանել դեպի թատրոնը: Անձամբ ինձ համար այդ ամենն առնվազն ծիծաղելի է: Սեր ասածը՝ կնոջ հանդեպ լինի, թե թատրոնի, չեն սովորեցնում: Ինչպես հայտնի է, դա կատարվում է բնականոն: Կամ՝ կա, կամ՝ չկա:

Միևնույն տարիներին ենթ սովորել ինստիտուտում, և դեռ այն ժամանակ ինձ հիացնում ու ոգևորում էին նրա ակնածալի վերաբերմունքը, նրա մի տեսակ բնական պրոֆեսիոնալիզմը և, իհարկե, սերը... անսահման մեծ սերը թատրոնի հանդեպ:

Ախալցխայում, Էրզրումցի Արամի օջախում ծնված Ծահումը մայրաքաղաք էր եկել դերասան դառնալու հաստատ վճռով, հետո թերելով Արամ հորից սովորած հայրենասիրական երգերը, հարազատ ժողովրդի պատմության իմացությունը, հայ թատերական գործիչների անգիր արած անունները...

Իբրև նեցուկ անձանոթ միջավայրին և ուսանողական կյանքի փորձություններին, նա իր հետ բերել էր նաև իր հոգու անարատությունը, գավառական պատանջակին հատուկ պարզամտությունը և դերասանական միաբանությանը զինվորագրվելու անուրանալի երդումը:

Նրա հայր Արամը վեհ մարդ էր, իսկական տոհմական «կոնք»: Նա ոչ միայն գիտեր իր ժողովրդի ավանդույթները, դարերով կուտակած նրա իմաստությունը, այլև կրում էր դրանք իր մեջ, հարգում ու պահպանում: Հայ ժողովրդի ստեղծած բարոյական շատ հիմքեր նրա համար հավիտենական սրբություններ էին: Դեռևս երիտասարդ տարիներին կամավորականների շարքերում նա կոպել էր հայրենիքի ազատագրության համար, տեսել էր եղեռնի սարսափները, գաղթն ու սվերը, զրկանքներ, օտարություն... Հոր կենսագրությունը սրբություն է Ծահումի համար, և պատահական չէ, որ արյան կանչով, արյան հիշողությամբ տնքում ու ցավում է ոչ միայն հոր ճակատագրի, այլև հայ մարդու ոչ հեռավոր անցյալի դառը բախտի համար: Եվ, կարծում եմ, այստեղ են ակունքները, այստեղից է սկսվում նրա ազգային էությունը, նրա ազգային արվեստագետ լինելը: Ծահումի համար հայրենասիրություն, ազգային արժանապատվություն և ընդհանրապես ընկերություն ասվածը փուչ խոսքեր չեն, այլ մարդկային այնպիսի

առաքինություններ, որ նրա կյանքում դարձել են ուղեցույց չափանիշներ:

Այսպիսին է Շահումը. նա երբեք չի զանգատվում դժվարությունների հանդիպելիս և, մանավանդ, անձնական դժբախտությունը չի դարձնում գուր իր հայցելու միջոց: Այդ իմաստով նա ինձ համար, իհարկե, այր-ընկեր է, ասպետ-ընկեր: Այդպիսին գիտեմ ես նրան:

Ընկերների հետ Շահումը կապված է պարզ ու շիտակ փոխհարաբերություններով՝ առանց կեղծիքի, առանց հաճոյանալու, չնսեմացնելով երբեք ոչ մեկի արժանիքները: Արտաքնապես ծանրակշիռ ու խոհուն՝ իրականում զգայուն սիրտ ու խոցելի էություն է Շահումը, պոռթկուն ու կրքոտ: Հաճախ եմ տեսել նրա դեմքի արտահայտությունն այն պահերին, երբ մեծ ճիգեր է գործադրել հոգու հավասարակշռությունը և ներքին խոռվքը թաքցնելու համար:

Հիշում եմ ուսանողական տարիների ամենօրյա մեր հանդիպումները, ծայր չունեցող մեր զրույցները թատրոնի, արվեստի, ընդհանրապես կյանքի մասին: Հիշում եմ ինստիտուտի բեմում Պեպոյի նրա դերակատարումը: Ներկայացումից հետո այնքան էինք հուզված, որ չէինք կարողանում հենց այնպես բաժանվել: Ծիշտ է, ընդամենը ուսանողական բեմի վրա էր, բայց չէ՛ որ Սունդուկյան էր... այն էլ՝ Արմեն Գուլակյանի ղեկավարությամբ: Զրուցելու այնքան նյութ ունեինք, այնպես էինք հուզված, որ խոսում էինք, խոսում, իսկ վերջը չէր երևում: Հիմա արդեն չեմ հիշում քանիցս ուղեկցեցինք մեկս մյուսիս, զգացինք միայն, որ երկինքը շառագունում է: Այդ հրաշալի տարիներին գործի նյութական կողմը մեզ չէր հուզում, թեև ապրում էինք չափազանց սուղ պայմաններում: Հոգեպես ազատ էինք ու անկաշկանդ: Երիտասարդ արվեստագետներ էինք, չէ՛... Ներքուստ կարծես նույնիսկ գոհ էինք, որ դժվարություններն ուղեկցում են մեզ:

Ինստիտուտն ավարտելուց հետո արդեն ամեն երեկո մաս-

սայական տեսարանների մեր մունջ դերերով մեծ արտիստների կողքին կանգնած, հրճվում ու հիանում էինք նրանց արվեստով և բոլորովին էլ վստահ չէինք, թե երբևէ կհասնենք նրանց, հայտնի էլ չէր, թե ինչ տեղ ենք գրավելու թատրոնում ընդհանրապես, սակայն մի բան պարզ էր ու անվիճելի՝ մեր տեղը թատրոնն էր, ուրիշ ճանապարհ չունեինք:

Դեռ ուսանողական բեմում նկատելի էր, որ Շահումը, թերևս ավելի բնագոյով, քան գիտակցված, առաջնությունը տալիս էր դերի տրամաբանական զարգացմանը, աշխատելով ամեն ինչ ենթարկել մի նպատակի՝ ասելիքը դարձնել ավելի խոր և հստակ: Այս առումով նա, իհարկե, մնաց իբրև ծրագրային դերասան:

Բոլոր ժամանակներում էլ, մեր օրերում առավել ևս, դերասանությունն ունեցել է և ունի հասարակական կարևոր նշանակություն: Տարիներ հետո, երբ Շահումը «Սպիտակ ափեր» ֆիլմում խաղաց Տարոնյանի դերը, անկեղծորեն ոգևորված էր այն մտքից, որ ֆիլմը, պատմելով Արփա-Սևանի շինարարության մասին, նվիրված էր Սևանի փրկության պրոբլեմին: Պատանու նման ուրախանում էր, որ ինքն էլ այդ կերպ մասնակից է մեր հանրապետության համար այնքան կարևոր խնդրի լուծմանը: Այստեղից էլ Շահումի քաղաքացիական մոտեցումը՝ դերասանի կոչումը քաղաքացիությամբ ընկալելու, իմաստավորելու ձգտումը:

Ցավոք, այսօր մեզանում քիչ են այն դերասանները, որոնք ըմբռնում են մայրենի լեզվի մաքրության կարևորությունը, խնամքով են վերաբերում ու զգում նրա համն ու հոտը, գեղեցկությունը: Այդ քչերի մեջ առաջիկաներից է Շահումը: Նա ոչ միայն խստապահանջ է իր հանդեպ, այլև զարմանալի կրքոտությամբ ընդդիմանում է կուլիսներ բերված պատահական խոսելակերպին: Բնականից հետաքրքրասեր՝ նա մի առանձին փայլալույսն ունի մայրենի լեզվի նրբերանգների հանդեպ: Ըստ իս, պետք է շատ բարձր գնահատել դերասանի այս հատկությունը, որովհետև լեզուն է մեր գործի սկզբնաղբյուրներից մեկը, մեր կողմից օգտա-

գործվող հիմնական նյութը, իսկ լեզվին չտիրապետող դերասանը, լեզվի ընդերքային գեղեցկությանն անհաղորդ մարդը դժվար թե կարողանա որևէ խոշոր կամ գեթ փոքր-ինչ արժեքավոր գործ ստեղծել: (Կարծեմ ասածս վերաբերում է ոչ միայն դերասաններին): Դերասանի լեզվական կուլտուրան բեմում լինի թե կենցաղում, պետք է բարձր ու գեղեցիկ լինի և որպեսզի բնական ու ամբողջական հնչի, անհրաժեշտ է, որ շուրթերը վարժ լինեն այս կամ այն խոսքն արտասանել այսպես և ոչ թե այլ կերպ: Սակայն սա նաև մտածելակերպ է: Մտածելակերպ կամ մտածելու կուլտուրա, որ բոլոր դեպքերում կապված է խոսքի հարստության, լեզվի անաղարտության հետ: Համենայն դեպս, այս է միջոցը՝ լեզուն դերասանի ձեռքում օգտակար զենք դարձնելու համար:

Ծահումը երկար սպասեց թատրոնում իր ժամին: Ծիշտ է, այս կամ այն չափով նա ուշադրության ոլորտում էր, սակայն մեծ մասամբ խաղում էր այնպիսի դերեր, որ հնարավորություն չէին տալիս լիովին արտահայտվելու: Եվ քանի որ ամենայն լրջությամբ էր մոտենում հանձնարարված գործին, ապա, ուրեմն, համարվում էր վստահելի ու կայուն դերասան: Այսքանը:

Մինչդեռ տարիներն անցնում էին ոչ հարթ ու սահուն: Անցնում էին կյանքի խորդուբորդերով, կորուստներով, երբեմն նաև խոր վշտերով: Անցնում էին հույսի դիպվածային փայլատակումներով և հուսալքության հոգեմաշ պահերով: Միշտ չէ, որ Ծահումը կարողացել է պահպանել պատշաճ հավասարակշռությունը. երբեմն սայթաքել է, բայց չեմ կարծում, թե երբևէ նա դադարել է իրեն հավատալուց, իսկ ամենագլխավորը՝ վստահ եմ, որ թատրոնից հիասթափվելու պահեր երբեք ու երբեք չի ունեցել:

Անցնում էին տարիները, նրա հոգու մեջ թողնելով տառապանքներից ծնված ինչ-որ թանկարժեք հատիկներ, ինչ-որ կուտակումներ, որոնք աստիճանաբար թանձրանում էին:

Հետո, շատ մեծ ուշացումով, նա եկավ կինո: Ուշ եկավ և, ի տարբերություն թատրոնի, շուտ հաստատվեց: Միմյանց հաջորդե-

ցին մի շարք աչքի ընկնող դերակատարումներ. Տարոնյան՝ «Ապիտակ ափեր» և Հայկ՝ «Կյանքի լավագույն կեսը» ֆիլմերում: Այդ դերակատարումներով Շահումը միանգամից կանգնեց այն կինոարտիստների կողքին, որոնք ի գորու են հայ կինոյում լուծել բարդ խնդիրներ:

Հայտնի է, որ դերասանն իր վարպետությունը հղկում ու զարգացնում է թատրոնում: Կինոն հնարավորություն չունի դերասանին ժամանակ տրամադրել: Նա պատրաստի դերասան է պահանջում: Շահումի կինոհաջողությունները պայմանավորված էին թատրոնում նրա խաղացած դերերով: «Սրբություն սրբոց» ներկայացման մեջ Կելինի դերակատարումը նվաճում էր ոչ միայն Շահումի, այլև թատրոնի համար: Դրան հետևեց իր բարդությամբ, հետաքրքրությամբ ու խորությամբ ոչ պակաս Վասիլկովը՝ «Կատաղի փողեր» ներկայացման մեջ: Նրա վերջին աշխատանքներից կցանկանայի նշել հոռմեացի քաղաքացու դերը «Կորիոլան» ներկայացումից:

Եվ, ճշմարիտ որ, կարոտի կուտակում կար, կար երկար տարիների սպասում, սակայն ոչ թե ծալած ձեռքերով, ոչ թե ծուլության տաք գրկում նիրհած: Այդ տարիներին խաղում էր գրեթե անընդհատ, փոքր ու մեծ, սազող ու չսազող դերեր, մինչև անգամ երեխաների համար բեմադրված ցերեկային հեքիաթ-ներկայացման մեջ Արջի դերը խաղում էր մեծ սիրով, իր ոգևորությամբ մրցելով դահլիճում նստած մանուկ հանդիսատեսի հետ: Այնուհետև ամենօրյա ելույթներ ուղիղով, ֆիլմերի կրկնօրինակման խցիկում, հեռուստատեսությամբ: Գումարման մեջ այս ամենը նշանակում է հոգու մշտական աշխատանք, մտքի անհանգիստ պրպտումներ՝ ինքնահաստատման ճանապարհին: Այս ամենն անում էր առանց ավելորդ խուճապի, առանց ուրիշներից արմունկով հրելու, վնասելու, ճանապարհին հատիկ առ հատիկ հավաքելով, որպեսզի տեղ հասնի ոչ՝ աղքատ հոգով ու ձեռնունայն:

Մեզանում այսօր շատ կան հեշտ կյանքով ապրող դերասան-

Անք: Հեշտ են ապրում ոչ միայն այն պատճառով, որ հեշտությամբ ու շուտ են ստանում իրենց դերերը և հեշտ էլ խաղում են, այլ որովհետև թեթև են նայում իրենց գործին: Երգե՛լ է պետք՝ խընդրեմ, պարե՛լ՝ նույնպես, կարող են ծիծաղել ու շատ բնական փրորշտալ: Եվ այսպես տարիներ շարունակ անհոգ լողում են մակերեսի վրա չծանրաբեռնվելով, լողում են, անցնում կյանքի կողքով՝ սակավարյուն էակների նման: Մինչդեռ խորքերը սուզվելու համար պետք է ունենալ մասսայի թանձրություն, վերջապես՝ մարդկային կշիռ:

Հիմա ինձ այնպես է թվում, թե Ծահումն ինքն էլ «մեղավոր» է իր երկար ճանապարհի համար: Չէի ասի թե գիտակցաբար է դանդաղեցրել սեփական ընթացքը, բայց համոզված եմ, որ դեպի ինքնահաստատում տանող բնականոն ճանապարհը եղել է ընդհատումներով, գիտակցված կանգառներով, երբ անքուն գիշերներից հայացքն ուղղել է իր էության ներսը, քննել ու զննել է արածն ու չարածը, վերլուծել անցած ուղին, ճիշտն ու սխալը, էականն ու ոչ էականը: Անընդհատ կոիվ տալով ինքն իր հետ ու աստիճանաբար հաղթահարելով ներքին կաշկանդվածությունը, հրդեհելով վարպետությունը, նորից ու նորից ճշտելով իր վերաբերմունքը դեպի թատրոնը, իր սկզբունքներն արվեստում, երբեք չվերցնելով ավելին, քան տվել է,— սրանով իսկ նա աստիճանաբար ինքն իր համար ստեղծեց հաստատուն մի հիմք:

Ծատ եմ տեսել Ծահումին մուտքի առաջ, առանձնապես նոր ներկայացման հանձնման օրերին: Նա այնքան է հուզվում, որ, պարզապես, քրտինքը ծորում է վրայից, մի կերպ զսպում է ոտքերի դողը, իսկ աչքերի մեջ նկատվում են երկյուղածություն, փոքր-ինչ շփոթմունք, փոքր-ինչ խուճապ: Հենց այդ պահերին էլ սիրել եմ Ծահումին: Դերասանն իր հարդասենյակից բեմ տանող ճանապարհը պետք է անցնի խոր ակնածանքը սրտում: Դա այն ճանապարհն է, որ տանում է բեմական խիզախումների:

Ամենադժվարն, ըստ իս, կինոյի և թատրոնի նկատմամբ

հավատը պահպանելն է, քանի որ դերասանը միշտ չէ, որ իրեն հավասարապես լավ է զգում թե կինոյում, թե թատրոնում. եթե կուզեք ընդհակառակը՝ երբեմն է լավ զգում: Հավատալը չհավատալուց դժվար է, հավատը պահանջում է զոհաբերություն, և հավատ ասածդ ոչինչ է, եթե ընդհանրապես է: Հավատը կոնկրետ հասկացողություն է, գրեթե՝ առարկայական, շոշափելի ձև ու իմաստ ունի, նպատակ ու անցնելու ճանապարհ: Պետք է ունենալ Շահումի հավատն ու նվիրվածությունը, նրա տոկուն, ու նրբազգաց հոգին, հավատը տարիների միջով մինչև կյանքիդ վերջը հասցնելու համար:

Շահում Ղազարյանը խորապես հավատում է դերասանի իր կոչմանը և այն համոզմանն է, որ իր արած գործը պետք է մարդկանց, օգնում է նրանց կյանքն ալելի լավ ճանաչելու, ազնվանալու և միգուցե նաև փոքր-ինչ երջանկանալու: Այսպես է նա արդարացնում իր գոյությունն ընդհանրապես կյանքում և մասնավորապես արվեստում:

Միամիտ է: Այո: Սակայն այս միամտությունն է, որ նրան մոտեցնում է մեզ ու դարձնում ցեղակիցը մեր Մեծն Ասխորհների, հաղորդակից դարձնում մեզ նրանց անթառամ հավատին:

Շահումն այն դերասաններից է, ովքեր միշտ ուրախանում են հարազատ թատրոնի, ինչպես նաև ընկերոջ ամեն մի հաջողության համար, այդ հաջողություններն ընդունելով որպես հայ թատերական և կինոարվեստի գանձարանի հարստացում: Մի կասկած, որ կապված է իր՝ հայ դերասանի անվան հետ: Լինելով շուտ բռնկվող, նա վարակվում ու անկեղծորեն ոգևորվում է նոր գաղափարներով: Ունակ է իր մասին լսելու և՛ լավը, և՛ վատը, կարողանում է և անպայման ձգտում է լսել ընկերոջ խորհուրդը և միշտ կասկած ունի իր արածի արժեքի վրա: Սունդուկյանցի դերասան է Շահում Ղազարյանը՝ իր մարդկային խոր ու հասուն էությունը, սիրված ընկեր է, պրոֆեսիոնալ արվեստագետ: Թերևս՝ պատանեկան տարիներից մնացած կամ մեր արտիստների հու-

շերի ազդեցությամբ, երբեմն որոշ, այսպես ասած «բռնեմային» անկայծումներ են նկատվել նրա վարքագծի մեջ, որ խանգարում են նրան աշխարհն ավելի իրական ընդունելու, բայց գուցե դա ևս բացատրելի է: Այսպես թե այնպես, ամեն մի դերասան, ամուր կանգնած լինելով հողին, հորինում է իր համար նաև անըջային մի փոքրիկ աշխարհ և էության մի մասով ապրում է այդ անիրական աշխարհում: Հանգստանում է այնտեղ, թե նվիրական մըտքերով է տարված... Ո՞վ գիտե: Գուցե այդ անուրջների մեջ պահպանվում ու նորանում են նրա հոգու ուժերը...

Մարդս պետք է հիշի իր ակունքները, իմանա որտեղից են եկել ու ովքեր են իր նախնիները: Ռանչպար Արամի որդի Ծահում Ղազարյանը հորից ժառանգել է համատրեմ աշխատելու ունակությունը: Աշխատում է պարզ ու հստակ, հասարակ հանում-գումարումով, ցանում է, որ հետագայում կարողանա հնձել...

Ամեն գործի թիկունքում կանգնած է մարդը: Այդ իմաստով բացառություն չի կազմում նաև դերասան ասածը. ընդհակառակը՝ ինչ չափի մարդ, նույն չափի էլ դերասան:

Թե՛ բեմ և թե՛ կինոէկրան մարդ-դերասանը դուրս է բերում ինքն իրեն:

6. 07. 83

ՀՌԳՈՒ ԿԱՆՉ

Կյանքում ոչինչ անհետ ու անհետևանք չի անցնում: Եթե մի օր մի տեղ մի ծառ ես տնկել, տարիներ հետո, դու էլ չէ, ինչ-որ մեկը պիտի նստի նրա շվաքին: Իսկ թե մի օր մի տեղ մի ճյուղ ես կտորել, աշխարհի երեսից մի բուռ շվաք, մի քիչ սուսափ կպակասի ու կխաթարվի տիեզերքի հավասարակշռությունը: Կյանքում ոչինչ անհետ ու անհետևանք չի անցնում: Ամեն մարդ աշխարհ է գալիս իր ծառը տնկելու, իր ծառի ճյուղը կտրողի ձեռքը բռն-

Անլու, իրենով տիեզերական հավասարակշռությունը պահպանելու: Ամեն մարդ աշխարհ է գալիս՝ իր հոգու կանչի հետևից գնալու: Հոգու կանչ, ասել է թե՛ կոչում: Ո՛րն է քո կոչումը, քո էության ձայնը, որին լսել պիտի սովորես: Ասում են՝ ուզում եմ դերասան դառնալ: Ինչո՞ւ չէ, եթե դա է քո կոչումը: Բայց մարդկայնորեն բարդ երևույթ է ճշմարիտ դերասանը: Չեմ ասում, թե առաջն է, ոչ: Սովորական չէ, պարտքն է շատ. իր առաջ, ժողովրդի առաջ: Ու երբ մի դեր ես խաղում՝ դրական կամ բացասական, երկնքից չէ, քո հոգուց ես պեղում-հանում նրան կյանքի կոչող բոլոր լարերը...

Ինչպես քո պապերը. հողը հերկելի, հատիկ պահ տալի, ամուսնանալի ու օրհնանք-մաղթանքի չափ շեն ու լի տուն ու տեղ ու յոթ որդի ունենալի... Բայց ճակատագիրը ստիպեց քեզ զենք վերցնել, ու դու հերոսացար. սպանեցիր՝ չուզելով, ուզելով պաշտպանեցիր, փրկեցիր՝ որքան կարողացար: Ասում ենք՝ հերոս, հերոսություն: Հերոս չեն ծնվում, դառնում են: Ամեն մարդու մեջ հերոսանալու նախապայման կա, ամեն մարդու մեջ քնած հերոս կա, որն իր աստեղային ժամին է սպասում, դա էլ կարող է գալ կամ չգալ, նայած հանգամանքներին: Քո մեջ իմ ժողովրդի ամենատողջ երակն է բաբախում՝ պայքարի ու դիմադրության երակը: Եվ ոչ մի դաժանություն չկարողացավ մեր հոգում սպանել մարդկային առաքինությունները, մեր հոգևոր քաղաքակրթությունը: Քանի որ քաղաքակրթության չափանիշները միայն նյութական արժեքները՝ ճարտարապետությունը, գրականությունը, գիտությունը չեն, այլ նաև մարդկային, հոգևոր, բարոյական նկարագիրը, առաքինությունները, որ ստեղծել է ժողովուրդը դարերի ընթացքում: Դարերը «երբեք հոգով ձեռքի նման չկոշտացրին» մեզ, չդաբաղեցին մեր հոգին, որ զարմանալիորեն զգայուն է մնացել բոլոր քամիների և նույնիսկ հովերի առաջ: Ու փետրվարյան այն օրերին էլ, երբ մեր ժողովրդի հույսի ու սպասումները

րի բարոյները տատանումներ էր ունենում, ցավով էին արձագանքվում ամեն մի հոգում:

— Բարե,— ասում էմ Նահապետին էլ:— Ու ասես Արտամանի խնձորների բույրն էմ առնում:— Ինչպե՞ս, ինչպե՞ս կարողացար, սաղարթախիտ խնձորենի, ճղակոտոր լինելուց հետո էլ ուժ գտնել քո մեջ նորից ծաղկելու, ծլարձակելու, շարունակելու, հարատևելու...

Ես շնորհակալ էմ իմ ճակատագրին, որ հանդիպեցի երկուսիդ էլ: Այս երկու ֆիլմերում ժողովուրդը տեսավ և՛ իր պատմությունը, և՛ իր պարտությունն ու հերոսացումը: Դուք դարձաք նրա հոգևոր կյանքի մի մասը: Ու ես հպարտ էմ դրա համար: Կերպարները, երբ հատկապես մեծ անհատականություններ են դրանք, հետադարձ կապի օրենքով փոխում են, կրթում ու դաստիարակում նաև դերասանին: Դուք ինձ էլ կրթեցիք ու փոխեցիք որպես մարդ, քաղաքացի:

Բայց ձեզ հետ, ձեր ճակատագրի հետ հանդիպումը բարոյական մեծ պարտք է նաև: Ու ամեն անգամ, երբ նորից այցելում եք ինձ, ասես քննությունն էմ հանձնում, ինչպե՞ս էմ ապրում, արժանի՞ եմ, արդյոք, մնացել ձեզ՝ բեմից ու էկրանից դուրս իմ կյանքում: Դուք նաև իմ կյանքի մասն եք դարձել:

Այնպես, ինչպես իմ կյանքի մասնիկն են իմ բոլոր դերերի կերպարները: Թվում է, թե ես էմ որպես դերասան ստեղծել նրանց, բայց նրանք էլ իրենց հերթին հղկել ու կրթել, փոխել են ինձ, ամեն մեկը՝ մի քիչ: Երբեմն ինձ թվում է, թե ես բազմաթիվ կյանքեր էմ ապրել: Ու ամեն անգամ հոգուս մեջ պեղել, գտել էմ այդ կերպարը: Նույնիսկ բացասականները: Զարմանալի բան է, բայց մարդու մեջ ամեն ինչի սկիզբ կա. և՛ լավի, և՛ վատի: Ու երբ շատ դերասաններ խուսափում են բացասական կերպարներ խաղալ (իբր թե՛ ես ի՞նչ կապ ունեմ այդ սրիկայի հետ), ավելի շատ, երևի, վախենում են իրենց հոգու խորքը նայել, վախենում են այնտեղ նրան տեսնել, խոստովանել... Մինչդեռ դա նույնպես

կարևոր է: Ես Յագո եմ խաղացել՝ ամենաչար ու դաժան մարդը շեքսպիրյան հերոսներից: Ու երբեմն էլ այցելում է ինձ, այդ զարմանալի խելքի տեր, խորաթափանց, ուժեղ, խիզախ, բայց նաև զարմանալի դաժան մարդը: «Նստիր,— ասում եմ նրան էլ,— ես քեզ նույնպես շատ եմ որոնել իմ հոգում, գտել, զարմացել ու սարսափել... Բայց դու էլ շատ ես օգնել ինձ խորությամբ ճանաչելու մարդու էության թաքուն ծալքերը, նաև՝ արատները: Իսկ ճանաչված թշնամին արդեն սարսափելի չէ»: Ու ամեն կերպարի հետ աշխարհներ են բացվել իմ առաջ, կյանքն է բացվել:

Իմ բախտը քերել է: Ես կյանքում (էկրանին ու քեմում) շատ լավ մարդկանց եմ հանդիպել, կերպավորել: Ահա փոքրիկ մի հանդիպում Տարկովսկու «Սոլյարիս» ֆիլմում աստղանավորող-գիտնական Գիբարյանի հետ: Մարդը տիեզերքում էլ չի կարողանում ազատվել իր երկրային մեղքերից: Ամեն մեկի մեղքը, հոգի ու մարմին առած, հատնում է իր դեմ: Ուրեմն, եթե դու երկրային քաղաքակրթության ներկայացուցիչն ես տիեզերքում, այնտեղ պիտի գնաս մաքուր ձեռքերով ու մաքուր հոգով, բարոյապես կատարելության հասնելուց հետո միայն: Մենք լավ գիտենք տիեզերքի ֆիզիկական օրինաչափությունները, իսկ բարոյակա՞ն... գուցե մենք անզգուշորեն խաթարե՞նք տիեզերական հավասարակշռությունը:

Ուրեմն, տիեզերքում անզամ մեր տեղը փնտրելը պիտի օգնի մեզ ճշտելու մեր տեղը հենց երկրի վրա:

Omnes Evangelii,
et per omnia saecula



«ՀԱՅՈՑ ՎԻՇՏԸ ԱՆՀՈՒՆ ՄԻ ԾՈՎ...»

ՍՊԻՏԱԿ...

Ուղղաթիռը մեր խնդրանքով ցածրացավ, գնում է գյուղեգյուղ... Սպիտակ ծածկերով տները տափակել են, նստել գետնին, անտեր մնացած անասունը՝ հավ, ոչխար, տավար, մուրրված, անկեր-անջուր դես-դեն է վազում... Վերևից երևում է:

Մարերը թեթև ձյունել են. թեթև: Բայց և այնպես դեկտեմբերն է, սարերը՝ տկլոր, տները՝ փլված: Մարդ ենք փնտրում ու չենք գտնում, չկան. սարսռում են ամայությունից. բայց չի կարող պատահել, որ բոլորը... Վերջապես նկատում ենք՝ ծվարել են դեզերի մոտ: Մի քանիսը վազում են բաց տեղ, ձեռքով անում թե՛ իջեք... Հետո կիջնենք, իսկ այժմ ուղղաթիռը գնում է վիրավորների հետևից:

Սպիտակի վրա ենք... Վերջապես հարազատացավ անունի՞՜ փոշուց սպիտակ է ամբողջովին: Թվում է հազար-հազար ումբ է ընկել քաղաքի վրա, թվում է ոչ մի առողջ տեղ չունի քաղաքը: Չունի: Ծանր փոշին, սպիտակ ցինկի պես ծանր փոշին, կոլոել է ամեն ինչ: Ծանոթ շենքերի տեղերում հսկա բուրգեր են՝ մրջնանոց հիշեցնող ու նրանց վրա նշմարվում են մրջյունների նման դես-դեն անող մարդիկ...

Դարավերջին մենք տեսանք դժոխքը... Ու դարձյալ հազա-

րավոր հայ մնաց անկացարան, բայց ո՛ւմ տանք մեր խաչն ու ճակատագիրը...

. Պտտվում ենք փոշու ամպերի մեջ, իջնում ստադիոնի դեռ կանաչին տվող դաշտում:

Բժշկական վրան, սպիտակ խալաթներ, բժիշկների տանջահար դեմքեր, աղետյալների քարացած հայացք, հուսահատ դատապարտվածություն, անհուն ցավ... Էլի ինչ-որ վրաններ, փոքրիկ դաշտը շղթայած զինվորներ, կույտ արած կարտոֆիլ, դատարկ ու լիքը հազարավոր շեր հանքային ջրերի, հաց, հացի բոքոններ... դիակներ: Սպասում են դագաղների, որ հայի կարգով թաղեն, գոնե դագաղով թաղեն: Այլանդակված դիակների դարսակներ... Ջղաձիգ կեցվածքով, վերջին պահին ծառու եղած աստծո զարհուրելի անարդարության դեմ՝ մեռել չեն, հանգած չեն, համայն բողոք են ու ցասում...

Առաջին խոսքերը, որ լսում ենք ողջերից.

— Վրացիների չարը տանենք... Էս ոնց հասան, պեժի պես հասան, էս ո՛նց են աշխատում, էս ինչքա՛ն են հարազատ...

Վիշտը մեր չափ չունի, վիշտը կուացրել է մեզ, մեր սիրտը լցրել սև արյունով, բայց չենք մոռանում, առաջին հերթին շնորհակալ ենք մեզ հասնողին: Բարեկամություն բառը շատ մաշեցինք՝ եղած-չեղած տեղը բանացնելով: Հերն անիծած սուտ խոսքի, կեղծ բարեկամության հերն անիծած, դրա աստառը մենք տեսանք: Վրացիների արածը, չէ՛, բարեկամություն չէ, հարևանություն չէ, եղբայրություն է: Մենք էլ չենք իմացել՝ հայի, վրացու արմատները շատ են խոր, շատ են խառը, շատ են միասին:

Ջորի Բալայանն է, Արմեն Հովհաննիսյանը, Յուրի Ռոստը «Լիտերատուրնայա գազետայից», մեկ էլ Բակուրը՝ հեռուստատեսությունից: Նկարեց, կտեսներք... Իմ նկարագրությունն ավելորդ կլինի, տեսածս պատմելու չէ, ականջի համար չէ, աչքի համար է...

Ոմանք մեզ ղեկավարի, կարգադրողի տեղ են դնում. գանգատները բազմաթիվ են:

— Լավ չի կազմակերպված, չգիտենք ով է մեզ ղեկավարում...

— Եթե ասա՞նք օրվանից սկսե՞նք փրկել, զոհերի թիվը պակաս կլինե՞ր...

— Բժիշկները կեցցեն...

Կեցցեն: Մենք էլ ենք տեսնում՝ գերգերազանց են աշխատում բժիշկները՝ գիշերը ցերեկ արած: Գերգերազանց են աշխատում օդաչուները, նրանց ղեկավարները, նվիրումով, դրան էլ ենք ապանատես:

— Գյուղում տավարն անտեր է... Գողանում են...

— Ով ասես լցվել է քաղաքը, թալան է...

.

— Աչքովս եմ տեսել. փող-բան են գտնում, իրարից խլիլում: Մարադյորներ...

Մի շենքի մնացորդ. հսկա մի բուրգ, փշրված ցեմենտ, տնային իրեր, քար, ասես ծամած սառնարաններ, մահճակալներ, ծամած երկաթ: Երևանից իրկարար խումբ է աշխատում: Ամբոխը շրջապատել է. ավերակների տակից ձայներ են լսել: Ցեխի ու փոշու մեջ կորած տղերքը անցք են բացել, մեկը սողոսկել է ներս, ջանում են փրկել մի կնոջ, որ հրաշքով ողջ է մնացել թեք ընկած, հսկա պանելի տակ: Մարմինն ազատ է, ոտքերը՝ գերության մեջ: Զգուշությամբ անցքն են մեծացնում: Կեղտի մեջ կորած, հմայիչ դեմքով մեկը պատկել է պանելի երկարությամբ... կողքին էլի մարդ կա:

— Հեռու կացեք պանելից, աղաչում եմ, հեռու. հազիվ է պահած, կիջնի, երկուսն էլ տակը կմնան, խնդրում եմ...

Հինգն աշխատում են, հիսունը՝ նայում՝ Սպիտակում: Տասն աշխատում են՝ հարյուրը նայում՝ Լենինականում: Բայց այդ հինգը կան, այդ տասները կան, դրանց էլ է մեր ժողովուրդը ծնել... Աստվածային մեր ուսուրերն ու դուստրերը...

Համբերություն, զգուշություն պահանջող շարժարանք: Ներսի տղան մեծ ու փոքր քարերի կտորներ է փոխանցում դուրս, պատկած ընկերոջը, աթոռի ոտ, ինչ-որ շորեր, բարձեր, ջարդած հայելի ու մեկ էլ անվնաս մնացած հախճապակյա մեծ բաժակներ... Երկրորդ հարկի բնակարան է եղել. տիկինն իր բնակարանում է մնացել, թշնամի դարձած սեփական իրերի մեջ: Վզի թանկարժեք զարդն է ուղարկում, նշանի մատանին... Փոխանցում են մոտիկ կանգնած ամուսնուն, հանդիմանական գլուխը տմբտմբացնում է, ամաշում է, աչքերից թափող արցունքներով երեսի փոշու հաստ շերտը ցեխ սարքում...

— Այ կնիկ, էս ինչ էս անում դու ինձ հետ...

Անցքից սղոց են ուզում, հետո մեխ քաշելու արքան, հետո էլի ինչ-որ գործիքներ ու նորից քարեր: Տղաները շարք են կազմել, ձեռքից ձեռք են փոխանցում այդ ամենը, որ ավելորդ շարժում չլինի, փուլ եկածը էլի փուլ չգա... Լարվածությունը հասնում է ծայրահեղության:

— Շուտ արեք, ձեզ մատաղ, շուտ արեք,— անօգնական աղերսում է ամուսինը:

— Ժողովուրդ, մի քանի րոպե անշարժացեք, խնդրում եմ, քիչ մնաց...

Պատկած երիտասարդն է, սպիտակ ատամներն ու խոշոր աչքերն են միայն մաքուր: Գլուխը խոթում է անցքից ներս:

— Ի՞նչ... Ջո՞ւր...

— Խմելու ջուր հասցրեք...

Ջուրը հայտնվում է իսկույն, լցվում բաժակի մեջ, որ ուղարկվի վիրավոր կնոջը:

— Ձէ,— երջանիկ ժպտում է երիտասարդը,— չեղավ, էս քանը շատ է, ազահություն կանի լրիվ կիմի, կվնասվի...

Բաժակի տակ թողնում է մի երեք-չորս կում: Ազնվական են մեր երիտասարդները, թվում է ամեն ինչ գիտեն, բարի են, հոգով են իմաստուն:

Տիկնոջը հանում են լույս աշխարհ... Երեք օր անց, երեք օր-վա դժոխքից փրկում են... Մի ակնթարթում բժիշկը սրսկում է. աղմուկ, ճիչ, լաց ու՝ պատգարակով թոցնգլում են շտապ օգնության մեքենան, դեպի...

Հազարավոր մահեր, բայց մի փրկված կյանք ու այդքան ուրախություն...

Մի կյանք...

Զիմացա ժողովրդով շրջապատված տղաների անունները, հնարավոր չեղավ մոտենալ: Ասեմք ո՞ր մեկի անունն իմանա, ո՞ր մի հերոսի:

Օգտվում ենք հաց ու պարեն բաժանող Յուրայի ուղղաթի-րից, իջնում ենք Սպիտակի գյուղերը: Կանայք լաց-շիվանով շրջապատում են. վրան չկա, խոտերի մեջ են ապրում, ուտելիքի պակասությունն ունեն, տաք հագուստի:

— Մեզ մոռացել են,— գանգատվում են տղամարդիկ:

Էս ինչքան ենք մեր ժողովրդին սովորեցրել ղեկավարի. կարգադրողի: Ինչպես եղավ, որ նույնիսկ հասարակ որոշում չեն կարող կայացնել առանց հրամանի...

Ստեփանավան... Զոհեր համեմատաբար քիչ է տվել, բայց կտա, կլինեն, եթե ամենաշտապ կերպով չհասնենք Ստեփանա-վանին: Մի՞թե յոթ-ութ օր է պետք, որ հիշեինք, տեր կանգնեինք: Մի տեղ ամեն ինչի գերակատարում, մյուսում՝ ոչի՛նչ:

— Պետք է մեռնեի՛նք, որ մեզ էլ տիրություն անեիք.,— կուսշրջկոմի քարտուղարն է ահագանգում, Մշմարիտյանը:— Շենքերը, համարյա բոլորը, անպիտան են ապրելու համար: Դեղորայք չկա, սննդամթերքը պակաս է, ընտանիքները ծվարել են բակերում, իսկ առաջներս ձմեռ է: Ի՛նչ է լինելու, պետությունը ե՛րբ և ինչ-պե՛ս է հասնելու, որ նորից տուն կառուցվի: Չէ՛ որ տների մեծ մասը հարկավոր է հիմնահատակ քանդել:

Կորուստները անդառնալի են, ողջերի մասին մտածենք, մնա-ցածը փրկենք: Այլևս ոչ մի զոհ: Եթե ո՛չ՝ մեղքը մերն է լինելու:

Դանդաղելը մահացու է, մեր տեմպերը պետք է խելահեղ դառնան, եթե չենք ուզում, որ մեր ողնաշարը ջարդվի: Ու հարցեր կան, որ շտապ պատասխան են ուզում:

Մենք մեզ ինչպես ենք պահում, ինչպես ենք պահելու այս դժոխային քառսում: Հացը Ստեփանավանում պակասել է, բոքոնը երեք ուրբով են վաճառել մասնավորները: Սրա անունն ի՞նչ դնենք: Այսպիսիներով կարո՞ղ ենք դուրս գալ այս փորձություննից, կկարողանա՞նք մեր տգրուկներին խեղդել: Բամբաստողներին, խումապ սերմանողներին, գողերին վերջապես ուժ կգտնե՞նք զրուպելու:

Կկարողանանք, եթե մինչև խորքն ըմբռնենք աղետի չափը:

Կարգուկանոն կստեղծե՞նք մենք՝ ինքներս, քաղաքացիներս, մենք՝ հայերս, այսօր, երբ հանրապետության հսկա մի տարածք կործանվել է, երբ հարյուր հազարավոր մարդ անօթևան են, երբ այսքան մահ կա, այսքան հուսալքություն, երբ ընդամենը մեկ շաբաթ առաջ դողում էինք ամեն մի հայի կյանքի համար, աշխարհի չափ թանկ էր ու հաշվի մեջ, երբ պայքարում էինք ամեն մի գյուղ գնացող շնչի համար, ամեն մի ծննդավայր վերադարձող արցախցու համար էինք պայքարում...

Տասն օր առաջ ուրիշ էինք, այսօր՝ ուրիշ, այսօր այլ խնդիրներ ունենք լուծելու: Համարյա մեկ միլիոն մարդ պետք է փրկվի, ծածկ ունենա գլխին, արմատը հարազատ հողից չկտրի:

Ուրեմն կամք՝ երկաթյա, միաբանություն՝ իսկական, կարգապահություն՝ ամենախիստ: Արհավիրք է, ամեն ինչի համար պատասխանատու ենք բոլորս: Հիշենք՝ աշխարհը մեզ է նայում: Մեր դեմքն ինչպիսի՞ն է տեսնելու...

Մեզ զգաստացնող, թեկուզ և դաժան, ճշմարիտ խոսքեր են պետք, և այդ խոսքը պետք է ասենք մենք ինքներս, մեր լսելիքի համար:

Մանաչենք մեզ, որպեսզի այս համազգային ողբերգություննից դուրս գանք ավելի առնական, ավելի վճռական, էլ ավելի հզոր ու

մարդկությանը պիտանի: Այսօր քարը քարի վրա դնողն է հայրե-
նասեր, ու հազարավոր մեր բուննգքները բահ ու մուրճ է, որ պեւք
է բռնեն:

Լենինական... Մեր հրաշքը, մեր ամենահայտողը, մեր ամե-
նաքաղցրը...

Ամեն տեղ, ուր եղել եմ, դժոխք է, Լենինականը՝ բազմա-
պատկված դժոխք... Որքան ինձ հայտնի է, Հայաստանի բոլոր
կինոօպերատորները աղետի վայրերը նկարահանում են. բազում
տեսնելիք, բազում թեմա, բազում գույն ու երանգ, բազում ցավ
ու դարդ...

Ծառ-շատ են երկրի տարբեր տեղերից եկածները, արտա-
սահմանցիները: Աշխարհի ուշադրության կենտրոնում ենք ալա-
մա, մարդկությունը վերջապես բարի, օգնող ձեռք է պարզել մեզ,
մեր պատմության մեջ առաջին անգամ: Հասանք սրան, բայց...
Բայց ի՞նչ գնով...

Ծնորհակալ ենք մեր երկրին, աշխարհին, մենք միայնակ այս
ծանրության տակից դժվար դուրս կգանք, շնորհակալ ենք, բայց
ցավը նախ մերն է ու ցավի տերը՝ մենք: Ծիրակն ու Լոռին կաթ-
վածահար են. ամուր պահենք մեր սրտերը, ճակատագրին հա-
կառակ՝ լինենք, ապրենք, գոյատևենք: Կարգավորենք մեր ներ-
աշխարհը ու թող թանձրանա մեր երակների արյունը, կարծրանա
մեր կամքը: Մեզ կարեկցում են, շնորհակալ ենք հազար անգամ,
մեզ շատ են կարեկցում՝ հանկարծ չթուլանանք ու սկսենք ինք-
ներս մեզ խղճալ: Տասն ամիս մեզ հետևել են հեռվից, հիմա տես-
նում են մոտիկից, այժմ շոշափում են մեզ մատներով, տեսնեն
ի՞նչ նյութից ենք սարքած: Ուրեմն թող արդարանա հայոց հան-
ճարի՝ հայի մասին ասված խոսքը. «Ամեն մարդ չի կանա կարդա,
իմ գիրն ուրիշ գրեն է. Քարափ է, քար ու կրեն է...»

Աշխարհը մեզ է նայում մոտիկից...

Լենինական. Ուժ է հարկավոր, որ չփուլես գետնին ու

գլուխդ քարերովը տաս: Սողոմ-գոմոր... Կործանվեց մեր աղու-
հացուտը...

Չկա այն ուժը, այն մեկը, որ կարողանա ամեն ինչ իր ձեռքն
առնել ու ինչ-որ կարգ հաստատել: Չկա և չի էլ կարող լինել, եթե
յուրաքանչյուրս չենք ու, առաջին հերթին, հպարտ գլուխներին,
որ միշտ աչքի է ընկել ազգային իր արժանապատվությամբ, որի
զավակները հայոց փառքը սփռել են աշխարհով մեկ: Սատար
լինենք իրար, հուսալքությունը թող բուն չղնի մեր սրտերում, մեր
վիշտը տանենք տղամարդու պես:

Քաղաքում սննդամթերքի գերկուտակում կա, հացը թափվում
է գետնին, հացի հետ անխնա ենք վարվում, ուտելիքը ոտի տակ
թափված է, ու մեզ դիտում են... Քաղաքը դեռ ջուր չունի, կոյու-
ղին չի աշխատում, մարդիկ շատ են, մարդիկ բնական պետքեր
ունեն: Մտածել է պետք շտապ...

Հոգեկան ցնցումներից քարացել են մարդիկ, անտարբեր են
դարձել նույնիսկ հիգիենայի հարցում: Սանիտարական վիճակը
ծանր է, եթե չասենք՝ ահավոր: Ամենակտրուկ միջոցներով պետք
է դուրս գանք այդ դրությունից, եթե չենք ուզում մի նոր ցավ ա-
վելացնել: Պարապությունը կործանարար է. գործը, պարտակա-
նությունը, աշխատանքն է մեզ փրկողը, լավագույն սպեղանին.
այսօր և վաղը հոգեկան փլուզումներից ազատողը՝ գործն է:

— Մեր քաղաքը ես չեմ թողնի, գնա... Խաչը մերն է, պիտի
կրենք...

Դե արի, լսի էս կնոջը, էս գլուխներում ու կարողացիր ար-
տասուքների զսպել: Կանգնած եմ զարհուրելի մի շենքակույտի
մոտ, շրջապատված տասնյակ կանանցով. սպասում են, հույս
ունեն, որ կույտերի տակից հանեն իրենց մեռելներին: Սպասում
են, լաց են լինում, խոսում են...

— Պահանջենք հայոց կառավարությունից Հայաստանում
արքրտների արգելեն...

— Ում էինք մի կտոր հաց տվել, որ էս քանը Երևանին չեղավ...

Երևան... Մայրաքաղաք... Հենարան, հույս, ապավեն: Ի՞նչ մթնոլորտ է ստեղծում հանրապետությունում, ինչ օրինակ է տալիս...

Այսօր կարևորը քար տաշելն է, քարը քարին դնելն է: Դատ ու դատաստանը վաղը կանենք...

ՎԵՐԱԿԱՆԳՆԵՆՔ ԿԱՄՈՒՐՋԸ

Պատվելի Սոս Արտաշեսի, Ձեզ մոտ գալուց առաջ մի քանի հարցեր էի պատրաստել զրույցի համար: Իմանալով, որ ուսուցչական թերթից եմ, մի լայն ու խոր ժպիտ սահեց Ձեր դեմքով, և, չնայած մի քիչ տկար էիք զգում, բազկաթոռին ընկղմված՝ անձնատուր եղաք կյանքի, մարդու, ուսուցչի մասին ունեցած Ձեր խոհերին ու մտորումներին: Այլևս պետք չէր ընդհատել Ձեզ, հարցերն ավելորդ էին: Եվ էս երջանիկ զգացի, որ իմ առջև նստած տաղանդավոր դերասանը, կյանքի ու արվեստի ոգեղեն թանձրույթով ներծծված մարդը, մի պահ մոռացավ և՛ տկարությունը, և՛ գրամեքենայի վրա կիսատ մնացած էջը և իր հոգու ձայնին ունկնդիր՝ սկսեց քարձրաձայն մտորել...

ՎԱՐԴԱՆՈՒԾ ԹՈՐՈՍՅԱՆ

Ուսուցիչ, աշակերտ, դպրոց... Դպրոցի մասին չմտածել չենք կարող այնպես, ինչպես չենք կարող չմտածել մեր օդի մաքրության մասին, մեր լեզվի մաքրության մասին: Դպրոցում են սկզբնավորվում ամեն գեղեցիկի և ամեն վատի արմատները:

Դպրոցը եւ ազգային հոգս եւ համարում: Երբ արվեստագետը, մտավորականը հայերեն չի խոսում ու մտածում, նա ազգային հոգս չունի: Սա թողած, երբեմն ընկնում ենք մանր-մունր բաների հետևից. պաշտոն, անուն: Մեր մեծերը հասարակական ավելի մեծ նշանակություն, հեղինակություն ունեին, նրանց խոսքը խոսք էր՝ ծանր, արժեքավոր, հասարակական կարծիք ստեղծող: Իսկ հիմա...

Այս սերնդի տերն էլ, նրա համար պատասխան տվողն էլ մենք ենք: Երբ մենակ եմ մնում, չեմ փնթփնթում, թե մենք ավելի լավն էինք, քան սրանք: Սարսափում եմ այն մտքից, որ այն վատը, ինչ կա աշակերտի մեջ, գալիս է ծնողներից, ուսուցչից:

Ուսուցիչը: Ինչպիսին ես տանը, այնպես էլ դպրոցում պիտի լինես. պարզ, հասկանալի, մարդկային: Խաբել չի կարելի: Այս պահին աչքիս առաջ է Տելտոպը՝ Ստեփանավանի դպրոցի իմ ուսուցիչը: Նա երբեք իրեն թույլ չէր տա ոչ պատշաճ արտաքին՝ թե՛ տանը, թե՛ դպրոցում: Քայլվածքը չէր կարող անփույթ լինել: Գնում էր դասի, ինչպես ուղմիկը՝ մարտի: Այդպիսին էր ամենուր: Մի քանի առարկա դասավանդեց Լայպցիգում կրթություն ստացած, ռուսական ազգանունով, բայց ազգությամբ հայ իմ ուսուցիչը: Սակայն նրա տված գիտելիքները, չէ, որ մնացել են իմ մեջ, այլ նրա կերպարը, մարդու կերպարը: Դպրոցն ավարտելուց հետո էլ ընկերություն արեցինք Տելտոպի հետ: Այդ ժամանակ ավելի խորությամբ զգացինք, որ դպրոցում էլ նա ընկեր էր մեզ համար: Այդպիսին էր և Վարսենիկ Թումանյանը: Նրա դասերին քար լուծություն էր տիրում դասասենյակում, բայց մեր միջև մոր և որդու փոխհարաբերություն կար: Երեխան ամեն ինչ զգում է: Անհնար է, որ ուսուցիչը առաքինություններ ունենա, և աշակերտը չզգա: Դրա համար էլ հիմա ասում են՝ սկսիր քեզնից: Ինչպե՛ս: Մանկավարժը պիտի մտածի. գնում եմ դպրոց ի՞նչ եմ տանելու, ի՞նչ ունեմ տալու երեխաներին:

Կարող եք չհամաձայնել, բայց բարոյական շատ արժեքներ,

որ ունեցել է մեր ժողովուրդը, խարխլել ենք: Քանդել ենք մի շատ կարևոր կամուրջ: Ո՛ւմ է պետք այն հասարակությունը, որտեղ բոլորը գիտնականներ են: Բարձրագույն կրթությունը կիրթ մարդու խորհրդանիշ չէ, խնդիրն այն է, որ ապրելակերպով առողջ մարդ դաստիարակենք: Մեր հասարակության նյութական պակասությունները գալիս են նրանից, որ մենք զրկեցինք մեզ արհեստավորից: Առանց նրա բան դուրս չի գա: Ո՛ր են հնձվորը, հովիվը... Գնալով պակասում են: Կորցրել ենք շատ արհեստներ, հետն էլ բարոյական արժեքները: Երբեմն պատանեկան հեղափոխական զգացումներ են ունենում: Տեսնում են կեղծիքը, ուզում են գյուղ գնալ, զբաղվել հողագործությամբ:

Զարմացած են: Ժողովրդի մեջ ինչքան թաքնված ապրումներ, ազնիվ մտքեր են եղել: Մեր ժամանակների ոգին արթնացրել է դրանք: Հանճարեղ մտքերի խրախճանք է: Կյանքն ավելի հետաքրքիր, հավատն ամուր դարձնելու համար շատ բան հիմնովին փոխում ենք: Պաշտոնյային կարող ես փոխել, իսկ մանկավարժին: Բաց, շիտակ խոսակցություն պիտի ծավալվի: Նայենք երեխաներին հավասարի, ընկերոջ աչքերով, քանզի վաղվա հասարակությունն ենք դաստիարակում: Պետք է վեր-կանգնել նյութապաշտությունից: Երեկ չի ստեղծվել մեր ժողովուրդը, է, հետնայենք արմատներին, ինչ խորքից է գալիս: Փոքրիկ հանրապետություն ենք. սովորենք պարզ նայել միմյանց աչքերի, բաց խոսել սովորենք: Դրանով կհասնենք այն բանին, որ կվերականգնենք մեր ձեռքով ավերած կամուրջը: Չկա հին ու նոր կյանք. կա մեկը: Ինչպե՛ս Մաշտոցին իմ կյանքից դուրս նետեմ, անցյալի պատմությունն ինչպե՛ս թողնեմ: Իմ մեծագույն ցավն այն է, որ այսօրվա սերունդը իր արմատը չի ճանաչում: Բայց չէ՞ որ սեփական դեմք ունենալու համար իր արմատից պիտի աճի, սնվի նրա հյութերով:

Ինձ միշտ մի հարց է հուզել: Մեր գոռում-գոչյունները, ինչպես եղավ, բերել են եսակենտրոն մտածողության: Մի փոքրիկ օրինակ: Դասարանում հուշողին պատժում են: Կասեք՝ բա ինչպե՛ս,

ճիշտ են անում: Բայց մտածենք: Այդ պահին հուշվողը 40 հոգու առաջ կանգնած, մենակ չի՝ զգա արդյոք իրեն: Էլ ի՞նչ կոլեկտիվիզմ, երբ առաջին իսկ դասարանից, թեկուզ հուշելու պարագայում, կտրում ենք մեզ կոլեկտիվի օգնությունից: Դեռ նոր աշակերտական նստարանին նստած, երբ կողքինս ինձ արգելում է արտագրել, իրեն ավելի ուժեղ է զգում: Չշփոթենք՝ սա ուրիշի վաստակը յուրացնել չի: Դրանով մենք երեխայի մեջ մեղցնում ենք գթասրտությունը, իսկ գերազանցիկները կողքիններիս վերանց նայելու գենք են դարձնում իրենց լավ սովորելը:

Պատկերացնո՞ւմ եք հուզվողի ապրումներն այդ պահին: Մարդը կանգնել է անօգնական, խեղդվում է, իսկ դու ասում ես՝ խեղդվիր, քո հերն էլ անիծած: Հիշենք, թե ինչ ապրումներ ենք ունեցել մենք կյանքի խորդուբորդություններիս հանդիպելիս և ինչքան ենք օգնություն ակնկալել կողքիններից: Ուսուցիչը դաժան չպիտի լինի, չպիտի վերանա մարդկային գործոնը: Ծատ հաճախ մենք չենք հասկանում, որ երեխայի թախիծը գալիս է նրանից, որ դըժվար է գիտելիք վերցնում: Հենց այդպես՝ վերցնում: Մեր գերխընդիրը գիտելիք տալն է: Ո՞վ կտա. ուսուցիչը, ընկերը, թե դասագիրքը, կարևոր չէ, կարևորը նրան հասկանալը, գիտելիք վերցնելու պայմաններ ստեղծելն է:

Մարդ արարածը ստեղծվում, ձևավորվում է դպրոցում: Դըպրոցում ստացած, մանկության տված կապիտալն է նա ծախսում հետո, տարիներ անց:

Ուսուցիչը... մի խումբ (չեմ ասում երեխաների) մարդկանց հույսն ես, ցավը, ուրախությունը: Ինչքան հոգու արիություն է պետք, որպեսզի կոչումիդ նշանակությունը զգաս:

Ցավեր շատ կան: Ո՞րը նշեմ: Երեխաների մեջ շատ է տարածված երդվելու՝ հորս արև: Այս բնագոյ դարձած երդումը գալիս է նրանից, որ մոռացել ենք խոսքին տեր կանգնելու զգացումը: Դաստիարակության կարևոր մի պահ: Պահենք խոսքի արժե-

քը և երդվելու կարիք չի լինի: Մեռալ հավատը, մարդն էլ է մեռնում:

Եվ կամ՝ ինչքան ենք արժեզրկել «ընկեր» արտահայտությունը: Ընկեր այսինչյան, դիմում է աշակերտը ուսուցչին: Նա ընկեր է ասում նաև ընկերոջը: Տարբերություն չկա: Ախր այդ դեպքում պակասում է ակնածանքի հիմքը: Չեմ ընդունում, որ որոշ բաներ մաշվում, անպետքանում են, և հարգանք չի մնում այլևս դրա նկատմամբ:

Մի կարևոր հարց էլ կա: Չգարմանանք, Լենինգրադ մեկնելիս, ես այլևս էրմիտաժ չեմ մտնում: Սիրտս ցավում է, երբ տեսնում եմ, թե ինչպես երիտասարդ այցելուների մի մասը արվեստի գյուխագործոցների կողքով անցնում է որպես սուկ ցուցադրանքի: Չեմ մեղադրում: Չգիտեմ, թե աշխարհին ներկայացվող այդ գործերում ինչ պատմություն, ինչ սյուժե ու բովանդակություն է ամփոփված: Ռեմբրանդտի «Անտուակ որդու վերադարձը» ինչպե՛ս հասկանան, երբ չգիտեն, որ կրոնի պատմության հետ է կապված մարդկության պատմության մի ամբողջ ժամանակահատված: Կրոնը ինքը յուրացրել և օգտագործել է ժողովրդի ստեղծած արժեքները: Հիշենք տասներկու պատվիրանները. մի սպանիր, մի գողացիր, քեզ համար կուռք մի ստեղծիր և այլն: Մենք մեր կամքով դա թողնում ենք կրոնին, մոռանալով, որ ժողովուրդն է դրանց հեղինակը: Կարծում եմ, վատ չէր լինի, եթե գիտնականները մտածեին ու գտնեին, թե ինչպես ուսուցանվի՝ ինչ է ավետարանը և որ պատմություն կա կրոնի հետ կապված: Ի՞նչ վատ կլիներ, եթե քարձր դասարանցին ընդհանուր ուրվագծերով ծանոթ լիներ այդ պատմությանը, իմանար՝ ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ:

Եվ վերջում՝ թատրոնի մասին: Թատրոն գնալը երեխայի համար պետք է պարզև դարձնել, ծննդյան տոնի նվեր: Ամեն ինչ երևույթ պետք է լինի, ինչպես, ասենք, առաջին զգեստը, դպրոցական առաջին օրը, առաջին ներկայացումը: Թատրոնի տոմար, գիրքը, նկարը արժեքներ են, որ, դառնալով լայն սպառման ա-

ուարկաներ, արժեզրկվում են: Այդպիսի աուարկաները սպանել են քարոչական արժեքները: Հավասարման նշան դնողները բոլորս ենք: Դեռևս դպրոցում պիտի երեխան զգա, որ թատրոնը տոն է, ոչ թե ժամանց: Ահա թե ինչու ակնածանք չկա ո՛չ թատրոնի, ո՛չ էլ նրա ստեղծողի հանդեպ:

Վեր են կենում խմբով, կոլեկտիվով թատրոն գնում: Բայց ոչ թե ներկայացում են դիտում, այլ իրենք են ներկայացում սարքում. զվարճանք, կատակ, աղմուկ, աղաղակ: Չեն ընկղմվում թատրոնի մթնոլորտը, կապ չի ստեղծվում երեխաների և թատրոնի միջև: Չափից ավելի ենք երեխաներին զվարճացնում:

Ես ընդհանրապես չեմ ընդունում մանկական, պատանեկան թատրոն հասկացողությունը: Թատրոնը մեկն է: Ես տգիտություն եմ համարում մինչև 16 տարեկաններին «մեծական» թատրոն մըտնելն արգելելը:

Ինչո՞ւ զրկել երեխային մեծ աշխարհի հետ գեղագիտորեն շփվելուց, թատրոնի հմայքը մեծերի հետ կողք կողքի, նրանց օգնությամբ վայելելու հնարավորությունից:

Վերականգնենք թատրոնի հեքիաթը:

88 դեկտեմբեր

ՎԵՐԱԴԱՌՆԱՆՔ

, Հիշողությանս մեջ թաղված ունեմ վաղուց տեսած մի ֆիլմ՝ «Դրեյֆուսի գործը», առանձնապես նրա մի դրվագը, քսան թե քսանհինգ տարի բանտվելուց հետո, Դրեյֆուսին արդարացնում են, բանտապետը բացում է մենախցի դուռը:

— Ազատ եք, պարոն Դրեյֆուս...

Պարոն Դրեյֆուսը մոտենում է շեմին ու չի կարողանում, չի

համարձակվում քալ անել: Տասնյակ տարիների վախ ու սարսափ, բանտակարգ, վերջապես սովորություն...

Հուլիս ամսվա տոթ օրերին ես Մեղրի քաղաքում եմ, նրստած եմ շրջկոմի՝ մարդկանցով լեփ-լեցուն, անօդ դահլիճում: Հեղձուցիչ մթնոլորտում քրտնախաշ ենք լինում, բայց հավաքը՝ բուն ու կրքոտ, տևում է հինգ ժամ: Օրջանի ընդլայնված պլե-նումը քննարկում է ագրարային հարցեր:

Մարդիկ պարզապես խուճապահար են, պարզապես սար-սափած...

Ո՞նց թե, հողը սեփականություն...

Ո՞նց թե, կոլխոզ չլինի...

Էս, հո, դավադրություն է...

Հոսում են ճառերը՝ սոցիալիզմ-կոմունիզմով. պետական պլաններ, պետական շահեր, պարտավորություններ... Ամրապըն-դենք կոլխոզ-սովխոզը, թե չէ՝ այս ինչե՛ր եք խոսում...

«Փոքրիկ պտուտակների» ծրագրային փիլիսոփայություն...

Այ ընկեր ջան, այ պարոն ոսանչպար, գյուղատեր, գյուղա-տընտես՝ բարձրագույն կրթությամբ, ի՞նչն ես ամրացնում, ինչ-պե՛ս... Ախր, կարկատելու էլ տեղ մնա՞ց որ...

Ազատ եք... Չէ, չենք համարձակվում գիծն անցնել, քանի որ կես դարից ավել հմուտ վարժեցնողները, մեզ մտածելու հոգսից ազատելով, սարքել են զուտ ստամոքսահոգս արարածներ:

Ուրեմն ուրախություն չկար, տոն չկար, ինչպես, օրինակ, քսանական թվականներին, երբ հայտարարվեց՝ «Հողը գյուղա-ցուն» հիպոնոսացնող կարգախոսը...

Մեղրի, Ղափան, Սիսիան... Հասցրի մի քանի գյուղ մտնել. հանդիպումներ, զրույցներ ու... ոչ մի խանդավառություն:

Ուրախությունից կմեռնի ճապոնացի գյուղացին, եթե նրան երեք հեկտար հող տաս անվճար, Աստծո պարգև կհամարի: Դա կլինի մարդու, գյուղացու բնական զգացողություն: Մեր միա-մըտությունների հետ կորցրել ենք և մեր բնականությունը, շատ

գիտենք, չափից ավելի շատ բաներ գիտենք թե քաղաքներում, թե գյուղերում, միայն մոռացել ենք, ափսոս, մեր պապերի պատվիրանները... Ավետարանի պատվիրանները... Նորից սկսենք լուսավորվել, լուսավորել... Ձե, դիպլոմի մասին չէ խոսքը՝ անանցանելի արժեքների, բարձրամակարդակ կենցաղի, մարդ-հող, մարդ-մարդ փոխհարաբերությունների...

Գառնուկը գեղեցիկ է, հորթուկը, ձվից նոր դուրս եկած ճուտիկը գեղեցիկ են երեխայի աչքերի համար. հողի հետ մեզ կապող կապեր, կյանքի էությունիկա... Կամ գուցե հին կարոտ... Է, ինչ կա դրա մեջ վատ: Մանկուց՝ խաշլամա ու խորոված գիտենք, գառը... ծառը քարով տուր, թող պտուղը թափի, ճղակոտոր արա... Եկող տարվա հերն անհիծած...

Մի խոսքով՝ գիշատիչ-սպառող կամ սպառող-խուլիզան... Նոր տեսակի արարած, բնության մեջ չեղած:

Գյուղացի փոքրիկ տղան «Ժիգուլի» է երագում... Վատ չէ, բայց ձի չկա գյուղում, գեղագիտություն չկա տղայի հոգում, անուանց ձիու տղան տղամարդ դժվար է դառնում, հողին դժվար է կապվելու, թույլիկ է մնալու; հիստերիկ, անհանգիստ... Ձին հայ երիտասարդին միշտ պետք է գալու, մեր դժվարանցանելի ձորերում, սարերում...

Վերքոտված-վիրավորված մեր այլանդակված հողակտորը հայոց սիրո կարոտ է: Դեռ մի քիչ շնչող, դեռ հոսող աղբյուրը, դեռ կանաչող ծառը, դեռ դաշտ մնացած հանդակտորը... Աղբն ու միլիոն տոննա ժանգոտած, ժանգոտող երկաթ պետական ձեռքն ու մեր կոպիտ հոգիները Հայաստանը կդարձնեն ամայի անապատ: Մենք մեր երկիրը թալանի՝ ենք եկել: Եթե ոչ, ինչո՞ւ ենք օտարի ոտնաման հագած անխիղճ, բիրտ, կոպիտ տրորում մեր գետինը: Ինչո՞ւ ենք ավտոմեքենաներ լվանում գետերում ու աղբյուրներում...

Լինե՞լ, թե՞ չլինել... Դարձյալ հայերի գլխին ուրվականի պես պտտվում է անհիծյալ հարցը...

Հայաստանը կարող է, պետք է, պարտավոր է ինքն իրեն կերակրել այսօր, վաղը, հետագայում... Հիմքը պետք է գտնվի անհապաղ... Կարող ենք: Չորս-հինգ տարում բան չենք կառուցել-վերակառուցել: Բյուրոկրատական մեքենան աշխատում է առաջվա պես անխափան... Հողից սկսենք: Երկրագործական գիտությունից, կուլտուրայից: Սիրելուց:

Գրեթե տասնչորս հազար դատարկ տուն կա Հայաստանում, բազմաթիվ հանգչող ու կիսահանգած գյուղեր Արցախի մարզում: Հորդորում ես՝ հայեր, գնացեք ձեր հող ու ջրին տեղ կանգնեք: Համարյա ոչ մի երիտասարդ հայրենասեր, Թատերական հրապարակը թողած, հայրենասիրական մղումով չի գնացել բնավորվել գյուղում:

Սրանից ձեռք առնենք...

Հորդորանք... Հորդորիր, որ լավ աշխատի մարդը... Ինչո՞ւ լավ աշխատի, ո՞ւմ համար, պատմությունն այս կարգի շահագործում տեսած կա՞: Եվ գյուղացու համար ի՞նչ նշանակություն ունի՞ ով է շահագործում՝ կալվածատե՞րը, թե՛ պետությունը: Դաշտում ծամած երկու հասկի համար՝ երկու տարի բանտ... Մինչ հիմա ստրկություններն ու ճորտությունները մանկական խաղեր էին:

Մեզնից իված մեր ամենաթանկ բանը հետ տվեք: Առանց տիրոջ հողը հիվանդանում է, չորանում, աղոտվում-արցունքոտվում... Նրան սիրողը չկա, խնամողը չկա. քչեցին, գնաց ու չվերադարձավ... Փորձենք նորից ծնել:

Եկեք ասենք բոլոր «հանճարների»՝ աշխարհում ամեն ինչ կարող է լինել ընդհանուր, համայնական: Հողն ու կինը անպատճառ անձնական, միայն անձնական...

Քչով բավարարվելը, ցածրակենցաղ ապրելը նորմա է դարձած, շատերս սովոր ենք, ախր, հետն էլ դեսից դենից մի բան փախցնում ենք, մի տեղ խաբում-կեղծում, մի բան գողանում կամ մուրում... ապրում: Սա ապրել է, ապրելու կուլտուրա՞...

Համեստ ապրողը կարծես անճարակ է, հարուստը՝ վախե-

ցած, բայց բոլորիս ենթագիտակցության մեջ կիսաաչքավորի, կիսաաղբատի փիլիսոփայությունն է: Երկար սնուցված պաշտոնական դրվածք. գրեթե մի դար հպարտ ենք եղել, հարցաթերթիկներում պարծենալով ենք գրել՝ բատրակ ենք, չքավորի որդի, բատրակի թոռ: Կուրծքդ ծեծի՝ չքավորական ծագում ունեմ, տվեք երկիրը ղեկավարեմ...

Այո, հենց դա է, ոչինչը դարձավ ամեն ինչ, ու ամեն ինչի մեջ...

Տեսած սոցիալիզմից վախեցածներն էլ կան, քիչ չեն:

— Էսօր հողը կտաք, վաղը կիւլեք, սրանց հավատալ կլիցի՞...

— Էս ինչ է,— բռնակոթցի մի գյուղացի է ասում,— ուզում եք չարքաշ աշխատենք, մի բան կուտակենք, որ երկրորդ անգամ կուլակաթափ անեք մեզ. շնորհակալ ենք, կոտորվելուց կուշտ ենք...

Կոլխոզ-սովխոզի տնօրենները, գլխավոր այսինչներն ու այնինչները, ղեկավարությունը, մի խոսքով՝ վարչահրամայական ապարատը չի ուզում, անթաքույց չի ուզում գրկվել իշխանությունից. պաշտոնը կերակրում է:

Ոչ, գյուղացին է կերակրում: Անվճռական այն գյուղացին, որն այսօր չի համարձակվում հողին տեր դառնալ: Գուցե մեր սոցիոլոգները նրա աչքերը բացեն, հաշվեն, թե քանի՞ ղեկավար՝ մարդ է նստած վզին:

Հա, պինդ են բռնած իշխանությունը մեր ղեկավար «ընկերները», տերն են գաղափարի, օրենքի, իշխանության... Իսկ հողն ու ջուրն անտեր է...

Մեկ քառակուսի մետր հողն Արարատյան դաշտավայրում ջրում ենք մեկ մետր բարձրությամբ ջրով. չլաված բան, տես թե ոնց ենք վարվում Սևանի ջրի հետ... Սրա անունը կամ բթություն է, կամ վնասարարություն:

Նույն Մեղրիում, սեփական աչքերով եմ տեսել, կարկուտի

պես գետնին թափած ընտրագույն դեղձը. եթե վրայով քայլեի՝ կհասներ ծնկներիդ: Եթե հավաքող է ճարվում՝ արկղ չկա, եթե արկղ է ճարվում՝ փոխադրամիջոց չկա: Տեր չկա...

Վերջապես՝ ինչպե՞ս քանդել կիսաֆեոդալական, կիսառազմական այս կառույցը: Հայոց մամուլը լռում է, գյուղագետները լռում են, տնտեսագետները լռում են: Հակառակ սովորության, կենտրոնից էլ օրինակ չեն վերցնում: Մինչդեռ հողային հարցը պետք է Հայաստանում զրնգար, չէ՞ որ հացից բռնած մինչև միրգն ու չիրը դրսից ենք բերում: Ամոթ:

Արցախը, որ կարծես խորհտնտեսության հետ է լույսաշխարհ եկել, այնտեղ էլ հողի մասին ծպտուն հանող չկա:

Օգնելու, խորհուրդ տալու համար մտավորականության միտքն է պետք. հիմա է պետք. հարցերը շատ-շատ են:

Ինչպե՞ս կառուցեն մենատնտեսությունները, ինչպե՞ս օգտը վեն մեքենայացումից՝ գնե՞ն, թե՞ վարձեն, ջուրն ինչպե՞ս բաժանվի, բանկերն ինչպե՞ս համագործակցեն, արտադրանք ո՞ւմ միջոցով իրացնեն, ի՞նչ գներով գյուղխորհուրդներին ի՞նչ չափերի մաս հանեն...

Ծամփաբաժանի առաջ է կանգնած ազգը, ճակատագրական՝ կամ այս կամ այն կողմ... Եթե չվերակենդանացնենք գյուղացուն, եթե հողին ու նրան շունչ չտանք, եթե հողն ու գյուղացին լիաթոք չապրեն, չենք ապրի մենք...

Մեղրիում առաջարկում էին հողաբաժանն անել տնամերձերի ձևով, այսինքն՝ ընդլայնել տնամերձերը կամ ամբողջությամբ տալ վարձակալներին: Առաջարկություն կա հողի մի մասը գյուղացուն տալ ձրի, ասենք՝ երեք հեկտարի չափը ձրի, մյուսը մաս մաս անել ու հանել աճուրդի:

Ծիշտ կլինի, որ ամեն շրջան, նույնիսկ ամեն մի գյուղ մշակի, գտնի հողաբաժանման իրեն հարմար ձևը: Մի բան պետք է լինի հաստատ, պարտադիր՝ գյուղացին պետք է վստահ լինի, որ

նողի տեր է դառնում ընդմիջտ, հիմնավոր, հավիտյան, առանց
այցերի, առանց այս ու այն վերապահումների:

Ինչո՞ւ ենք կարծում, որ հողային ռեֆորմը Հայաստանում
առաջնահերթ է, հրատապ խնդիր է, անհետաձգելի է:

Հին ժամանակներում, խոշոր երկրաշարժերից հետո, բնակ-
չությունը բնագոյաբար լքել է աղետյալ վայրը, քաշվել մի կողմ:
Զարմանալի չէ, որ մեր օրերում էլ նույն միտումներն են գործում:
Սեփական հող ունենալը, հողի լիիրավ տերը դառնալը այսօր
կփարատի աղետյալ գյուղացու շատ ցավեր, կլցնի նրան նոր
մտահղացումներով, եռանդով և, անշուշտ, կկապի նրան հարա-
զատ վայրերին...

Սեփականությունը բարոյական բարձրագույն կատեգորիա-
ներից է և քաղցր... Սեփական հող ունեցողը խոսքան չի գնալու:
Կյանքն ապացուցում է, որ ոչ մի հորդորանք, ոչ մի հայրենասի-
րություն չի հաղթահարում մարդու անձնական շահի ձգտումները:
Այսօր հարազատ գյուղն ավերակ թողած, նա էլի հեռու-հեռու-
ներում ուրիշի տուն ու գոմ է շինում...

Հողը գյուղացուն տալ, ի վերջո, նշանակում է ծնել նոր մարդ
(մոռացված հինը), բարոյական և հոգեբանական նոր արժեք,
սեփական ուղեղով մտածող, սեփական նախաձեռնություններով:
Սեփականատեր գյուղացու մեջ չի կարող չմեռնել գողը, շորթո-
ղը, խաբողը, ուզվորը. սպառողից նա կդառնա արտադրող:

Հիշենք՝ ամեն մի արատավոր մարդ երագում է երբևիցե ապ-
րել ազնիվ քրտինքով, հանգիստ խղճով. հողը, սեփական գործը
կատիպեն, որ նա գտնի իր հոգու խորքերում այս մաքուր մղում-
ները:

Հայաստանում անգնահատելի է ամեն մի մետր հողը. եթե
մենք ցանկանում ենք ինքներս մեզ կերակրել, ապա հարկ է, որ
մեր ձեռքը կպցնենք ամեն մի քոլի, ծառի, քարի... Կոլխոզ-սով-
խոզի տարածքներում անտեր մնացած, մոլախոտը կերած, քար-
քարոտ, պետական տրակտորի ծանր մեքենայի անիվների տակ

սպանված, պոռթած, վերքոտած հողակտորներ ինչքան ուզես կա: Եվ ոչ մեկին չես կարող մեղադրել ազգային այս հարստությունը փչացնելու համար, քանի որ հողը ոչ մեկինն է, ոչ ղեկավարինը, ոչ էլ հասարակ կոլտնտեսականինը:

Պետք է փորձել մեր փախստական-վերաբնակներին մույնպես հաղորդակից դարձնել այս գործին: Օգնել, ասենք, հեռուտատեսային դասընթացներով, օգուտ քաղելու սեփական այգուց ու բանջարանոցից:

Տասնյակ տարիների ընթացքում իշխանությունները չկարողացան լուծել գյուղի բարենորոգման խնդիրները, չնայած ճրճրոտան կարգախոսներին՝ գյուղի կենցաղը մոտեցնենք քաղաքին, վերացնենք տարբերությունը և այլն: Գյուղերը մեծ մասամբ կառուցված են անսիստեմ, չունեն հատակագծեր, ծուռումուռ փողոցներով են: Գյուղերից շատ քչերն ունեն կոյուղի (ասում են՝ հագար տարի առաջ Անի քաղաքը կոյուղի է ունեցել), քչերն են ապահովված ջրով, քչերն են, որ ունեն ասֆալտած փողոցներ: Գյուղական խանութները, որպես օրենք, սնունդը վաճառում են կոշիկի, բահ ու եղանի հետ: Բեսոնապատ հատակով, անհրապույր տեսքով, առանց ցուցափեղկերի, թող ներքի ասել՝ խոզանոց են հիշեցնում: Ծամճերի պարսերի մասին էլ չխոսենք... Ղեկավարության կարծիքով գյուղում երկրորդ կարգի մարդիկ են ապրում...

Մեր գյուղացին լավ չի հագնվում, ճաշակով չի հագնվում, մաքուր չի հագնվում: Կանայք շուտ են կորցնում իրենց կանացի հրապույրները, որովհետև տղամարդիկ չենք խորշում ամենածանր աշխատանքների քշել նրանց մի քանի կոպեկի համար: Գյուղացի կինը գուրկ է սեփական լողաբանից, որ գոնե աշխատանքից հետո մաքրի վրայից դրսի փոշին...

Սեփականատեր գյուղացին մաս կհանի իր եկամուտներից գյուղխորհրդի բյուջեին և կհետևի, կպահանջի ծախսել այն համընդհանուր բարօրության համար:

Ամենուրեք պաշտոնակոհիվ է, նույնը և գյուղում, լինելու է միշտ. կարիերիստները լինելու են միշտ: Կաշառակերությունը... Մարդ փոխելով չի. սիստեմը ստիպում է, պրոտեկցիոնիզմը՝ նույնպես: Համենայն դեպս՝ ներկա չափերը: Ուրեմն գյուղում գոնե հարկավոր է նվազագույնի հասցնել պաշտոնների քանակը: Պաշտոնչափն գյուղում հարկ է աշխատագրել: Դա կլինի, եթե գյուղացուն դարձնենք ինքնուրույն գործատեր, իր գլխի տեր ու տնօրենը:

Պահը բարենպաստ է, պետք է օգտվել, պետք է վերցնել ու այլևս հետ չտալ հողը, ոչ մի գնով...

Հողային ռեֆորմը ազգային ծրագրի կարևոր կետերից մեկն է:

Պետք է համարձակվել, պետք է քայլ անել անազատությունից դեպի լեն ու բոլ աշխարհը...

Պարոն գյուղացի, խոսքը քոնն է...

ԽԱՌԸ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԽԱՌԸ ՄՏՔԵՐ

Քարերը շարտե՛նք...

Քարերը հավաքենք...

Խորենացուց մինչև Չարենց ենք երազել՝ միաբանություն... Դարերի մեջ ծամելով մաշեցի՞նք այս խոսքը ու այսօր էլ դատարկ հնչյուն. համազգային հավաքականությունը մնում է երազանք...

Նույնիսկ փորձությունների, ողբերգությունների մեջ կոփված հայոց ազգի ուժը չի կարող անվերջանալի լինել, եթե մսխվի անմտորեն: Կասկած կա, որ տեղատարաի հարվածներից թըմրած լինի մեր մարմինը, ցավ չզգա, վտանգը չնկատի... Արևաքամ եղած, մեկ էլ տեսար սպառվեցի՞նք, տկարացանք ու մեկ էլ տեսար մեր երթը չի շարունակվում, պրծնում ենք: Այդպես պոռթած ջփալից աննկատ հոսում է ցորենը:

Գոնե մենք մեզ խնայողաբար վերաբերվենք. հարյուր միլիոն չենք, ոչ էլ հիսուն: Հնուց ի վեր սատանան մեր սարերում է քեֆն անում... Թվում է, Աստված մեզ փորձությունների համար է ստեղծել... Աստված էլ թող ամեն մեկիս երեք մարդու խելք տա: Այդպիսով եռապատկվենք...

Քանի՜ մարդ ես առաջնորդում. անվնաս տեղ հասցրու, թե չէ գիտենք, մեր մորթու վրա է փորձած՝ «լես ուրյատ, շչեպի լետյատ»: Մեր համբերությունից մեր վատին էլ բաժին հանենք: Մնացինք մատների վրա հաշված ժողովուրդ: Կարևորն ընձյուղվելն է ...

Նա, ով դեռ չի մարել, թող հետ տա փետրվարից այս կողմ մեր կյանքի ժապավենը, սկզբից նայելով գա, դրվագ առ դրվագ վերլուծի, սուր տեղերում ասի՝ «ստոպ», ու «դանդաղեցրած կարող» ստուգաբանի ճիշտն ու սխալը, ջոկի կարևորն անկարևորից, հաղթանակը՝ պարտությունից, օգուտն՝ անօգուտից... Հետագոտելը շնորհք է, անաչառ լինելը՝ համարյա սխրանք, իսկ եթե կարողանանք նաև իրականությունն իրական տեսնել, կդառնանք անգին...

Լինել չլինելու խնդիրն է ծառացած... Եղբայր իմ, Հո՞ երթաս...

«Տեսա կրակը թեժ են արել՝ մի ծեղ էլ ես գցեցի»: Թեժ կրակ սիրողներ էլ ունենք, բայց քամի էլ կա, մեկ էլ տեսար մեր արած կրակի բոցը դեպի մեզ արավ...

Ծանրածանր է ժամանակը. ցից մեխված գլխավոր մի հարց կա քո, իմ, նրա խղճի առաջ՝ ո՞րն է նպատակը: Ինչքան էլ շուտումուռ տանք, որ կողմից էլ նայենք, սրա պատասխանը փնտրենք ու չմոռանանք անսպ խորքերից մեզ հասնող Եղիշեի ձայնին՝ «Մարմնոյ եւ հոգւոյ՝ մտօք կառավար...»:

Ճիշտն ու ճշմարիտը ես եմ... Էս է, որ կա, համադում եմ: Մեր «ճիշտը» առաջ ենք տարել մեծամասնության ջերմեռանդ հավանության կոչերի տակ: Բազմությանը հաճոյանալ անհա-

մեմատ հեշտ է, քան մի անհատի. բազմությունը հեշտ դառնում է ամբոխ, ամբոխը սիրում է հաճոյախոսություն ու հորթի պես հրճվում, եթե իր անունից ես խոսում: Յոթանասուն տարիները դաժան դասեր ունեն. բազմությունից էին ճչում՝ մահ «ժողովրդի թշնամիներին», այսինչին կամ այնինչին՝ մահ... Միտինգներում, ժողովներում... մեզ ավերողը կուռքերի կոչերն էին, առաջնորդների անշեղ գծերը: Մի գիծ, անվիճելի, անառարկելի... Ու, չհակաճառես, դեմ չգնաս՝ «արժանացել է մեծամասնության հավանությանը»: Կուռքը, քուրմը, գերագույնը բարբառել է...

Չծուլանանք, պատմության մեջ գտնենք մեզ նմանին, նրա գնահատականն ու մեր արժեքն ըստ այդմ իմանանք: Մեր գլխով անցածը, հին ու նորը բանականության դատին տանք, մեզ էլ հետը: Հանրապետության ճակատագրի համար երբեք այնքան կարևոր չի եղել ամեն մեկիս դիրքորոշումը, իհարկե, սեփական մտքով. իհարկե՝ առանց գեղեցիկ կեցվածքի: Հանրապետության համարում ունենք: Ունենք: Մի բան ունենք: Մերն է: Դարձնենք հայեցի պետություն: Եղածը շատ թանկ գնահատենք... Իրա՛վ է, որ իմ գործելակերպը, արտասանած խոսքը օգուտ են հայրենիքին: Հայրենիք բառը սովորենք սիրելով ասել. չամաչենք...

Խառնակ վիճակ է Անդրկովկասում. դարասկզբի մեր հարևանները էլի մեր հարևաններն են. քաղաքական (և ոչ միայն) խոշոր անհատականությունների պակաս ունենք. դեռևս քիչ են պետական նվիրյալ այրերը... Իսկ ձևագունդը գլորվում է մեծանալով... Սատար լինենք իրար...

Ինքնաքննարկումը մեծ կուլտուրա է, լինի անհատ թե մի ժողովուրդ, իսկ մե՛նք... Մենք արդեն գյուղացի չենք, դեռ քաղաքացի չենք, հինը քամուն ենք տվել, նորը՝ դեռ չունենք... Աղաղակիր, թե մատենադարանի տեր ես: Այսօրվա քո կենցաղաբարքովարքով պիտի հիմնավորես: Ծչա, թե հայրենասեր ես, հպարտ ես, որ հայ ես, որ հազար վեց հարյուր տարեկան գիր ունես... Ի՞նչ իմաստ, եթե բուն հայոց 4482 թվականին երեխա-

յիդ ձեռքը բռնած տանում ես օտար գրեք սովորեցնելու: Հայոց մեծ զարթոնք ութսունութի սեպտեմբերի մեկին...

Երկրում դեֆիցիտ բաներ շատ կան, սակայն ամենակարևորը իսկականի պակասն է. ասենք՝ իսկական բժշկություն, թատրոն, ուսում, իսկական նվիրում, իսկական հայրենասեր, իսկական ղեկավար... Խաբուսիկ, թվացյալ բաներով չթվացնենք մեզ, թե հայրենասիրական այս շնորհի մեջ իրար դեմ ասելությունն անբանելով, սրա-նրա վարկը գցելով, կասկածելով, մերժելով թունդ հայրենասեր ենք և վիթխարի օգուտ ենք տալիս ժողովրդին:

Գործադուլ, դասադուլ անողը նախ նրա վնասն ու օգուտը պետք է դնի կշեռքի նժարին, թե չէ...

Մինչև երկրաշարժն արդեն անժամկետ գործադուլները կուպիտ հարված էին մեր սեփական տնտեսությանը. խաթարվեց ոչուփուչ մեր կարգապահությունը, ոչուփուչ ուսումը: Տեղից ձիգ չէինք, դարձանք անփույթ, մաքրասեր չէինք առանձնապես, քաղաքները կեղտի մեջ կորցրինք. հազար ու մի բան... Տնտեսական մեր ուժն է Արցախի հեճարանը...

Իշխանության հեղինակություն. մոռացված բան: Հրամայել են և՛ վերջ: Գորբաչովը ձնհալ քերեց հետը, ու տակից երևաց անջրպետը՝ օտարացումը, որ կար ժողովրդի ու ղեկավարների միջև: «Որ կոծկես, ի՞նչ ես շահելու...»

Մտահոգվողը լրջորեն պետք է մտահոգվի: Մի խոսքով... Մի խոսքով՝ «ներքևը» ուժերը սպառում է «վերևին» չսիրելու վրա, մի խոսքով՝ ուժերի անտնտես վատնում: Շուայություն:

Տիրասիրություն չենք ունեցել ու չունենք. տերե՛րը չեն եղել լավը... Մե՛նք էն չենք... «Մեր ուժը այդ է, դրա մեջ է,— շատերն են այսպես դատում,— այդպես ենք գոյատևել, ամեն մի հայ մի գեղի իշխան»:

Գոյատևեցինք «աքսուրդային այս տարածքում». մենք մնացինք իշխան, մեր «գեղերը շան բերան...» 18—19 թվականներին Աստաֆյան փողոցում հայոց պառլամենտի դեպուտատներ-

րին կառքից իջեցնում էին, ծեծում... Տիրահռչակ մեր չտիրասիրությանը, տիրահռչակ մեր խորամանկությանը տասից ինը կորցըրինք...

Ամաչելու բաները մոռանանք: Մոռանա՞նք որ...

Ծնորհիվ տանկերի, թե հոգնածության, թե երկրաշարժի՝ դադար է, ակտիվության հետընթաց: Մինչդեռ անդուր մի լարվածություն կա մթնոլորտում, իր ժամին սպասող պահ՝ զսպանակով... Արցախի հարցը լուծված չէ ու դեռ անհաշտ է... Դեպքերը անկախ մեր կամքից են զարգանում, անկախ մեր կամքից կառավարության մեջ ավելանում են ոչ հայեցի հրամանատարները...

«Վերևում» պետք է, որ օգտվեին ժամանակավոր այս դադարից, արահետներ փնտրեին դեպի, ինչպես իրենք են ասում՝ մասսաների սիրտը:

Վարչարարությանը, երկփեղկանի հաստ դռներով, սև «Վոլգաների» մեջ այլևս տեսնող աչքերից թաքնվել չի լինի: Մեղավորը վերջին քսան տարիներն են և դրանց նախորդած քառասունը: Մասսաները խորթացել են ոչ միայն մշկամկենու փափախներ դրած իշխանավորներից, «մասսաները» խորթացել-օտարացել են և կարգերին: Կոլխոզ ու Ստալին տեսած ժողովուրդ ենք, մեր ազգային ցավերն էլ վրադիր...

Ստից ու կեղծիքից, ձևականից են հոգնել «մասսաները»: Ծենքի առաջ, ուր ես բնակվում եմ, զարնանը փոսեր փորեցին, ծառատունկ արին, չորս-հինգ տարեկան արդեն, Չորացած արմատներով տնկիներ. մի անգամ ջրեցին, գնացին զեկուցեցին, թղթի վրա գրեցին, որ գործն արված է: Տնկիները երբեք ոչ մեկին շվաք չեն անելու, բայց դա մեզ համար կարևոր չէ: Այսպես քանի՞ տարի:

Արդեն անգիր արած դասեր ունենք. լավ մարդն ինչո՞ւ պետք է հասներ այդտեղ... Բրեժնևյան թթոտ պողոտիների ցալքուկները բարեբեր խոնավություն էին երկրով մեկ նոստենկլատուրային փարթամ, ստերջ բուսականության համար... Տաղանդավոր

անշնորհքներ, տասնյակ տարիներ ստանց կարմրելու, խոսքով՝ ուրիշ, գործով՝ ուրիշ... Գնա, հավատա...

Թույլ տվեք դրությունը կայունանա, որպեսզի զբաղվենք լուրջ շտկումներով...

Զբաղվենք: Կաշառակերությունը փորձում է նոր թափ առնել: Պրոտեկցիոնիզմը ծաղկում է առաջվա պես. «հրամանատարները» մերձավորներին քաշում են, կապում մտորին մոտիկ, պետականին: Պաշտոնակոիվը թունդացել է առավել, և ո՛վ է հաղթանակում՝ արժանավո՞րը, անարժա՞նը, չգիտենք, գոնե իմանալիք: Բայց ո՞ր մեկը թվես: Մեր մարմնի ամեն տեղն է ցավում...

Կարդում, նայում ես աղետին նվիրված հաղորդումները ու չես հասկանում ո՛վ է գլխավոր պատասխանատուն, չես հասկանում աշխատո՞ղ չկա, թե՛ աշխատանք տվող:

Ինչպես միշտ, ստույգ տեղեկություն չկա: Հայաստանում այս տարի, այս օրերին քանի՞ գործազուրկ կա, հանուն բարեկամության եղած կամ ներմուծված քանի՞ ձեռք, «խոպան» գնացած քանի՞ հայ արհեստավոր: Եթե, իսկապես, մի հայ մարդ, մի հենավոր տեղ տուն է կառուցում կամ գոնե, հետաքրքիր է, ի՞նչ են մտածում մեր մասին այնտեղ... Այսօր:

Լիքը անպատասխան հարցեր կան, մեկն էլ՝ ով է հասկանում, թե մեզանում մարդուն ինչո՞ւ են պաշտոնազուրկ անում: Վատ աշխատելո՞ւ, թե՞ լավ չհաճոյանալու համար: Եթե վատ աշխատանքի, ապա ինչպե՞ս է լինում, որ շրջկոմի հանված քարտուղարը դառնում է մի կարևոր գործի գլուխ, ոչ ավել, ոչ պակաս՝ մայրաքաղաքում:

Կադրային քաղաքականություն... Այս վարագույրը միշտ փակ է եղել ժողովրդի համար: Հիմա պիտի բացվի: Համաձայն ենք՝ էլի դուք, էլի ձեր շարքերից, բայց գոնե իմանանք, ջոկենք ձեր մեջի տաղանդավորին անտաղանդից: Վերակառուցման օրինակը պետք է վերևից գա:

Մտավորականը հասկանում է՝ գործադուլն ավերածություն է

ավերված երկրում, չարտոնված միտինգը՝ օրենքի խախտում, բայց... Բայց սեփական խղճին ի՞նչ պատասխան տա մտավորականը, երբ պարզից էլ պարզ է, որ բաղձալի կարգուկանոնից օգտվողը մեծ ու փոքր պաշտոնյան է, ծառայողական մեքենայով քաղաքում վխտացողը նրա շուայլ ապրող մերձավորները... Սրանք նայում են տանկերի փողերի տակ երկյուղած ժողովրդին ու անթաքույց մոլտում՝ «Էլի մեր ժամանակն է...»

Աղետ, փորձություն... Դրսում ղեկավարներ ենք փնտրում, որ մեզ ղեկավարեն: Տասնյակ տարիներ մենք ո՛ւմ ենք աճեցրել, ազգային մեր հրամանատարներն ի՞նչ եղան, ո՛ր են...

Կաց, կանգ առ, «ստոպ»: Մեղքը սրա-նրա վրա բարդելով ջվալը չի կարվում: Ազգովին կդառնանք մեղադրող, պահանջող, վատաբանող, ճառ ասող... Ծառ ասող... Մեր զանգն ո՛վ է կախելու...

Մեր խոսքը մտածմունքից ծնենք, մեր կողմնորոշումը՝ տանջահար մեր պատմությունից: Խելոք մի մարդ ասել է՝ քաղաքականությունը հնարավորության արվեստ է: Թեթևամտորեն չկապկռպենք սրան-նրան, ուրիշ է մեր ճակատագիրը, այլ են մեր լուծելիք խնդիրները, ծանր է մեր խաչը... Հեշտ ենք կորցնում, դրժվար ենք հետ բերում տանուլ տվածը...

Կողքից նայողը կասի՝ հայերը արդեն քանի դար է պատրանքներով են ապրում: Պատճառն այդ է երևի, որ հաճախ ենք ուրիշի ձեռքին խաղալիք եղել: Մի հինավուրց ժողովուրդ, փորձված, ծեծված մի ժողովուրդ ժամանակն է, որ իր եղած բարեմասնություններին գումարի իմաստնություն:

Խորհրդային Միության ամբողջականությունը այսօր մեր, հայերիս մասնավոր, առանձնակի, կենսական անհրաժեշտությունն է: Այդ է թելադրում ճակատագիրը, պատմությունը, կյանքը, մեր ապագան: Մեկ ուրիշ պլտերնատիվ չունենք: Խնդիրն այն է՝ գրավես քո արժանապատիվ տեղը...

Մեր վիճակը դեռ չի հասել գիտակցության մեր խորքերը:

Ազգային մեր գոյատևումը վտանգի տակ է. թեթևամտորեն մեջքով ենք կանգնած անդունդի եզրին, վիճիչ չենք տեսնում... Մեր ապագան բզկտված, չարչարված այս փոքրիկ հողակտորն է, մեր միակ հույսն է, խնայենք: Խնայենք ինքներս մեզ, խնայենք մերկացած ջղերով այս ժողովրդին...

Մտավորականի համար չի կարող լինել՝ «վերևի-ներքևի» կողմ: Հայրենիքն ամբողջական հասկացողություն է: Հայրենիք... Դարավոր իղձեր, դարավոր ցավեր... Ցավեր, որոնց մորմոքն իրենց հետ տարան և չտարան Սևակը, Ծիրազը, Դաշտենցը, Գալշոյանը, շատերը...

Իրարհասկացության ճամփան բռնենք...

Այսուհանդերձ, դեմոկրատիան անարխիա չէ: Հանրապետության հիմքն ու ուժը պայմանավորված են նրանով, թե քանի իսկական աշխատավոր ունենք: Ծուլությունը չդառնա ազգային հատկություն, շատախոսությունը՝ հիվանդություն... Առանց մեծ կուլտուրայի, մեծ գիտելիքների, մեծ մասնագետների «Հայոց հարցը» հավիտյան կմնա հարցականի տակ:

Վհատելու չէ: Հուսանք, որ հայոց պատվամենտը ամբողջովին կունենա ազգային շունչ... Նոր ենք սկսում: Հուսանք, որ կառավարությունը ամբողջովին կդառնա ժողովրդական: Հուսանք, որ կնայենք իրար՝ աչքերի և պարզ ու բաց կխոսենք բոլոր հարցերի մասին: Հուսանք, որ կպակասի «վերևին» կամ «ներքևին» հաճույացողների թիվը: «Երկարատև, բուռն ծափահարողների» մի խումբը չփոխարինենք մեկ ուրիշ խմբով:

Մի դար, գուցե և ավելի, կուտակված հայոց շլուծված հարցեր: Գրեթե մի դար այստեղից ու այնտեղից պոռթվում է հայոց ջվալը, հայոց ցորենը գնալով պակասում է...

Մեր ճակատագիրը՝ մեր ճակատագիրն է, տերը մենք ենք՝ մեծից փոքր...

Հայոց Հանրապետության քաղաքացիները մենք ենք...

Մայիս, 89 թ.

ԳՈՒ ՈՒ ՔՈ ԱՍՏՎԱԾԸ՝ ԶՊԱՐՏՎԵՍ

Մոսկվայում հացադուլ արած իմ եղբայրհերին՝ Վիկտոր Համբարձումյանին, Զորիկին, Վաչեին ու Սիմեոնին:

Հայաստան երկրի կյանքն էլի դժվարացավ... Մեր տուն-տեղը քանդվեց, ավերվեց, գաղթականն ու չունևորը էլի հայտնվեցին, լավն ու վատը խառնվեց, ավազակներ բուսնեցին. ներսից են քրքրում... Դրսիներ քիչ էր...

Բայց և այնպես ապրում ենք, կանք, շնչում ենք, պայքարում, հույս ունենք... Ու պահեր ենք ունենում ուրախության, կնունքի, հարսանիքի, ծնունդի, բայց և այնպես, դողանջում են մեր եկեղեցու զանգերը, ու մենք մեր հորեմական օրենքով, մեր հին կարգով ժամ ենք գնում, խաչակնքվում ենք, աղոթում...

Գիտենք՝ զարթնել ենք ու կանգնել նոր ճամփի գլխին... Պիտի մեր քայլն անենք, մեր նոր քայլը, որ ծանր է ու դժվար...

Բայց և այնպես, զարթնել ենք ու արթնացնողը համայն հայության, դու ես եղել, իմ Արցախ...

Իմ քույր ու եղբայր, ձեր, որից ես ոչ մի օր չեմ բաժանվում, կարոտն ինձ խեղդում է, ու ամեն մեկիդ՝ մեծ թե փոքր, տանում եմ սրտիս մեջ, իմ սիրելի, իմ չգուրգուրված, իմ խենթ ու հպարտ, առասպելական... իմ իմաստուն ու համեստ, իմ ազնվական, իշխանական... Մորից կտրված ու չկոտրված... Կուրծքդ բաց, կուռդ քար, ճակատդ բարձր, իմ խիզախ...

Քեզուքեզ ոտքի ելար, ազգդ ոտքի կանգնեցրիր... Մեկտեղ քայլ անենք, գնանք առաջ...

Մեր ձեռը չի հասնում քեզ, դեռ շատ չի երկար, մեր տեղն էլ է նեղ, ու էլի մեմակ ես համարչա...

Եվ դու չպետք է երերաս, չպիտի ընկրկես, մեր հետևիկներ անդունդ է... Մեր քարավանի նառն ու առաջնորդը դու ես այսօր.

ու կտրելու ես անապատը... Մեր բախտի աստղ, մեր կապույտ հորիզոն, Արցախ...

Դուրս արի քարի արանքից, նորից ուժ առ, նորից լցվիր իմաստությամբ... Հրաշքդ գործիր, Մովսեսի նման գերությունից ազատիր ցեղն հայոց...

Առանց քեզ Հայաստան չկա, առանց քեզ հենարան չկա, առանց քեզ հեռուներ չկան...

Իմաց կաց...

Ես ինչքան սիրեմ քեզ, սուրբ Արցախի իմ սուրբ քույրիկ, իմ եղբայր, ի՞նչ անեմ, որ արժանի լինեմ քեզ...

Դու ու քո Աստվածը՝ չպարտվես...

Մենք ու մեր Աստվածը՝ քայլենք...

17 սեպտեմբերի, 1990
Մոսկվա

ԽՈՍՔ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՍ ԽՈՍՔԻ ՄԱՍԻՆ ԿԱՄ

ԾՈՒՌԸ ՆՍՏԵՆՔ, ՇԻՏԱԿ ԽՈՍԵՆՔ

Պատահում է, ականջ ես անում մարդկանց առօրյա խոսք ու զրույցին և թվում է երևանցիները մտքները դրել են ծուռուծրոտիկ-հաշմանդամ բառերից ստեղծել մի «նոր» լեզու: Նկատի ունեմ մեր երիտասարդությանն ընդհանրապես, բայց հատուկ ու առանձնակի մտահոգությունն, այնուամենայնիվ, իրենց կյանքը քեմին նվիրաբերելու պատրաստվող իմ գործընկերներն են: Սրանց մեջ շատ է ակնառու մի խումբ, որն իրեն հաշիվ չտալով, նույնիսկ միմյանց հետ մրցության մեջ մտած, մի տեսակ ցուցակյան հոխորտանքով, իջել է այնքան, որ սովորույթ է դարձրել թատրոնում խոսել, այսպես կոչված, քուչի լեզվով:

Հին մի ասացվածք կա՝ հանդի խոսքը ներս չեն բերի: Մինչ-
դեռ, բոլորս էլ ամեն լուսե լսում ենք՝ «արա էսի, արա էնի, էտի,
գալըմ եմ, էթըմ եմ, էս յան, էն յան...» Ծատ օրինակների հարկ
չկա: Բացատրվելու մտադրատ այս կերպը ոչ միայն խոսք է ու
արտաքին ձև, այլև, ըստ էության, փոխադարձ հարգանքից զուրկ
մարդկանց հարաբերություն՝ անպարկեշտ ու լկտի: Սա այն է,
ինչից սկսվում է թատերական էթիկան, որն, ինչպես ասում և
ուսուցանում էր Կ. Ստանիսլավսկին, նույնքան կարևոր է, որքան
էսթետիկան: Բնձոտո բառապաշարով բավարարված ու գոհու-
նակ այս «մտավորական-դերասանները», որքան էլ ցավալի լի-
նի, ստեղծում են թատրոնում իրենց հարմար, իրենց վայել մըթ-
ոլորտ, միշտ պատրաստ «հանաքը դանակ անել», միտքն ու
դաստիարակությունը փոխարինել անասնձ, անզուսպ կրքերով,
որ կեղտաջրի նման լցնում է թատրոնի ծակուծուկը և ի վերջո
հոսում բեմ: Թումանյանի ասած՝ սրանք ծառայում են ոչ թե ճա-
ճաշակին, այլ՝ փեշակին»: Ցավալին նաև այն , որ նման ան-
պատկառության կողքին մյուսները նսեմանում, տեղի են տալիս,
ամաչում են բարեկիրթ երևալուց, մարդավայել խոսելուց: Բայց
մարդը ճանաչվում է և խոսքով, ու նրա ասած-չասած խոսքով է ըս-
տեղծվում պահը, ժամը, օրվա տրամադրությունը, օրվա կենսագրու-
թյունը: Մանավանդ թատրոնում ձևն ու պահվածքը շատ է կարևոր և,
ընդհանրապես, իհարկե, շատ է կարևոր՝ առանց պայմանական
պահվածքի մարդկային նորմալ փոխհարաբերություններ չեն լինում:
Ասածս ոչ նորություն է, ոչ էլ հայտնություն: Մայրենի լեզվով
լավ չենք խոսում: Երևի պատճառները շատ են: Ումի՞ց թաքցը-
նենք և ինչո՞ւ: Իսկ եթե թաքցնենք, ի՞նչ կշահենք: Թատերական
երիտասարդությունը բեմից դուրս խոսում է այնպես, որ, եթե
մի պահ մոռանաս թատրոնի պատերը, դժվար կուահես, թե գըտ-
նըվում ես արվեստագետների միջավայրում: Նրանց գրույց ու
պահվածքից արդեն կարելի է որոշել թատրոնում իշխող գեղա-

գիտական ըմբռնումների, դավանանքի (եթե այդպիսին կա), ճաշակի և առհասարակ տիրող մթնոլորտի մակարդակը: Այս ամենը անպատիժ չի մնում: Բեմն իր կանոններով, իր ուրույն պահանջներով դաժան է ու անզիջում: Վաղ թե ուշ գալիս է տուրևառի այն պահը, երբ տվածիդ չափ ստանում ես, բերածիդ չափ՝ տանում: «Ինչ մտանես՝ էն գտանես»: Ոչ ավել, ոչ պակաս:

Իհարկե, դժվար է աղետալի այս վիճակի համար մեղադրել միմիայն դերասաններին: Հարկ է հիշել միահեծան թատերապետներին, նրանց ցույց տված անձնական օրինակը, այսօրվա և, հատկապես, վաղվա համար պատասխանատվության նրանց զգացումը, մտահոգության, նվիրվածության չափը հայոց թատերական գործին: Այսօր, չգիտես ինչպես, ում թողտվությամբ (կամ, գուցե, շահագրգռվածությամբ) թատրոնների խաղացանկ են մտնում ողբալի հայերենով թարգմանված պիեսներ, որ ապակողմնորոշում, մոլորեցնում են դերասաններին, որոնք, անկախ իրենցից, սխալներ է, որ սերտում են: Թերևս հանդիմանության են արժանի և մեր դրամատուրգները. մատների վրա կարելի է հաշվել հայեցի մտավորականի այն կերպարը, որ վերջին ժամանակներս բեմ է բարձրացել: Բայց չէ՞ որ դերն էլ, իր հերթին, հղկում, կրթում է դերասանին, ու, եթե նկատել եք, մեր բեմերում անհամեմատ հաջողվում են պակասավոր, թերարժեք մարդկանց կերպարները: Մտածելու, մտահոգվելու ևս մի հանգամանք...

Մեր թատրոններում, և ոչ միայն թատրոնում, հիսյունվել են մարդիկ, որ խոսում են զարհուրանք պատճառող «աջաբասանչալով»: Հայաստանում ապրելով՝ ոչ հայերեն գիտեն մի կարգին, ոչ էլ՝ օրինավոր ոուսերեն, որ մարդ լսի ու սիրտը փառավորվի: Եթե հիմքը մայրենին չէ, իսկ այլ հիմք չի լինում, ուրիշ լեզու ինչպե՞ս կսովորես. նույնն է, թե քայլել սկսես ուրիշի ոտքերով: «Ավանսցենեն ուսավորի, պրոֆեկտորն ուղղի, պոռտեքստը գիտի, այսօր պրագոն է, արշչենիե չկա, գեներալնի

փորձ...»: Հարյուրավոր այսպիսի արտահայտություններ կարելի է լսել թատրոններում:

Դե գնա ու կռահի, թե սա ինչերեն է: Անուկոր լեզու՝ ոնց ասես պատում են և դեռ իրենց՝ էլ համարում են «վերին արտի ցորեն»:

Հայտնի բան է՝ այսօր բոլորս պետք է տիրապետենք նաև ռուսերենին: Այլապես, ուրիշներից հետ կընկնենք, առաջընթացից դուրս կմնանք: Եվ, բացի այդ, չէ՞ որ դեռ մեր պապերն են ասել՝ որքան լեզու գիտես, այնքան անգամ մարդ ես: Այսուհանդերձ, ոչ մեկին իրավունք չի տրված աղավաղելու ո՛չ «սուրբ տաճար մայրիկի» չքնաղ հայերենը, ո՛չ էլ ռուսաց փառահեղ լեզուն:

Համարձակվես շուռ գալ ու հարցնել. «Այ ընկեր-ընկերուհի, հարգելիս, բարոյական ի՞նչ իրավունքով կամ ո՞ր օրենքի որ հողվածով ես այլանդակում երկու հրաշալի լեզու: Չէ՞ որ ամեն մեկը մի-մի գաճն է: Ռուսերե՞ն ես ուզում խոսել՝ խնդրեմ, էլ հայերենին ինչո՞ւ ես քացի տալիս, բա մեղք չի՞, առանց այն էլ իր երկար ճանապարհին բզկտված ու չարչրկված, այսօր, փառք Աստծո, պետական է մեր լեզուն»: Սրանք են, ահա, որ ստեղծում են լեզվական մի խառնափնթորություն, որն, իր ժամանակին, Սևակն անվանել է «քչավառա-մոսկովյան» լեզու:

Հիմա շատ է ընդունված՝ «մեղավորների շարանը» սկսել հայերենի ուսուցիչներից, եղած-չեղած մեղքերը կապել նրանց վզին: Դե ինչ, մեկ էլ ասենք: Ասենք, որ ժամանակին նրանք ի գորու չեն եղել երեխայի հոգու մեջ հարգանք սերմանել հանդեպ մայրենին, չեն կարողացել նրա առջև բացել հայոց խոսքի սքանչելի աշխարհը, որ խնդիրը ոչ միայն ճիշտ գիրն է, այլև արտաբերվող բառերը հմայքազերծ չանելը. թե չէ դպրոցականը անգիր արած ասում է՝ «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...», բայց ո՛չ համ կա մեջը, ո՛չ էլ՝ սեր...

Մանկավարժը՝ մանկավարժ, բայց խիղճն էլ խիղճ պետք է լինի: Ինչո՞ւ ենք մոռանում, որ մինչև դպրոց հաճախելը, լեզուն

սովորում ենք տանը: Հիշենք նաև՝ մեր լեզուն անվանում ենք մայրենի, ասել է թե՛ հարազատ մոր լեզուն: Եվ պարզապես զարմանալի է՝ այսքան մայրապաշտ ժողովուրդ ու այս աստիճան անփույթ, անուշադիր, անհարգալից վերաբերմունք մայրիկի լեզվի նկատմամբ...

Մայրենի լեզուն պահպանող առաջին գործուն օգնականները պետք է լինենք մենք՝ դերասաններս. սակայն ինչպե՞ս, ինչո՞վ, մեր կրթվածության ո՞ր աստիճանով, լեզվական կուլտուրայի ո՞ր մակարդակով: Մանավանդ հիմա, երբ դերասաններս մի պատկառազորու ջոկատ ենք կազմում, եթե ոչ՝ բանակ, մեծ մասս էլ՝ կոչումնավոր, իսկ մնացյալը՝ կրթոտ հավակնողներ: Հարկ կա՞ հիշեցնելու, որ մեզ դիտում ու լսում են հարյուրավոր, իսկ կինոֆիլմերով ու հեռուստատեսությամբ՝ հազարավոր մարդիկ, այդ թվում նաև՝ ողջ աշակերտությունը: Ու եթե կուզեք, մայրենի լեզվի նկատմամբ հայ թատրոնի պատասխանատվությունը միշտ եղել է ու կա իբրև պատմական պատասխանատվություն: Երևանցի ասածդ այսօր աշխարհի չորս ծագերից ներգաղթած, հայրենի հողի վրա ի մի եկած մարդիկ են, յուրաքանչյուրն իր հետ բերած օտար տեղի ազդեցությունը, կենցաղը, սովորույթը և, իհարկե, խոսելու ուրույն եղանակը: Ակամա շաղախվում ենք, եփվում այն հույսով, որ գտվենք, մաքրվենք թեփուկներից, ընդունենք մեր բնական, պատմական տեսքը: Նաև չպետք է մոռանանք, որ դրսում երեք միլիոնից ավելի Սփյուռք ունենք, ապրում, Հայրենիքով են շնչում, մեզնից են սովորում, մեզ են ընդօրինակում, զավակներին ուսումնառության են ուղարկում այստեղ, հայացնելու են ուղարկում, քանի որ նրանց հույսն ու գոյատևման պայմանը մենք ենք՝ մեր տնտեսական և հոգևոր նվաճումներով: Ուրեմն, շատ է կարևոր մեր հրամցրածը՝ երաժշտությունից մինչև խոսքի տեսակը: Սա նույնպես պարտք է, հարազատին չկորցնելու պարտք: Արվեստագետներս խորապես պետք է գիտակցենք այս իրողությունը և հաշիվ տանք մեզ հասարակության

կյանքում գրաված մեր տեղի ու դիրքի նշանակության մասին: Թատրոնը ոչ միայն դպրոց է հոգևոր ու բարոյական, այլև դրպրոց է մայրենի լեզվի՝ ծավալով, խորությամբ, գրական խոսքի անաղարտությամբ, բարբառների հյութեղությամբ, պոետիկայով: Թատրոնը վայրն է խոսքախրախճանքի:

Եթե ոտք ես դրել թատրոն, կարող ես և ամենաշնորհալին շլինել, բայց «կուլտուրական լինել պարտավոր ես»: Երիտասարդ իմ տարիքում, չնայած Գուրգեն Զանիբեկյանի և Գեղամ Հարությունյանի միջնորդություններին, Արմեն Գուլակյանը կտրականապես մերժեց ինձ ընդունել, ասելով՝ Սունդուկյանի թատրոնին անկիրթ դերասաններ պետք չեն, թող գնա բարձրագույն կրթություն ստանա: Սա թատերապետի քաղաքականությունն էր, պետական մտածելակերպը:

Մակարդակով միջինն է մեծ պոռթկումների երաշխիքը. լեռնաշարն է գագաթ ծնում: Թատրոն մտնողներից բոլորը չէ, որ ճիշտ հասցեով են եկել՝ վաղ թե ուշ երևում է ում ինչ լինելը: Բայց մեր օրերում թատրոն ընդունվելն ու թատրոնին պասկվելը նույն բանն է, պրծում չկա: Ուրեմն, հարկավոր է գոնե ընդհանուր կուլտուրայով, բանիմացությամբ արդարացնել այդ պակասը:

Գավառականությունն ունի աչք զարնող մի հիմնական հատկանիշ՝ յուրա տանելու սովորույթը: Ծնորհքովի համարում ունեցող երիտասարդներ կան, որոնց հետ ինչ-ինչ հույսեր ենք կապում ու անչափ ներողամիտ ենք նրանց պակասությունների հանդեպ՝ ոչինչ, որ տգետ է, որ անդաստիարակ է, յուրա կտանենք: Ու այդպես «յուրա տանելով» ստիպված ենք լինում սանտիմետր առ սանտիմետր իջեցնել նրա թոփշքաձողը:

Մտաբերելով մեծերին՝ Փափագյանից մինչև Հրաչյա ու Վահարշյան, միտք ես անում՝ այս ինչպես եղավ, որ որոշ արվեստագետների համար գրագիտությունն ու կրթվածությունը դարձավ երկրորդական-երրորդական գործ, մինչև անգամ՝ թերություն: Ուրեմն, ինչո՞վ ենք տարբերվում նրանցից, որոնք հույր ու հույ-

րանոց են ասում, ձույն ու թույնավոր, երշիկին՝ կապրաս, իսկ մեզ՝ դեռուսասան: Ասենք, սա էլ օրինական է, եթե հայ մտավորականը չի ջանում խնամել երեսը պարզ անող իր գործիքը, ապա ուրիշ մեկը, որ անմիջականորեն լեզվի հետ գործ չունի, ումի՞ց իմանա ու սովորի և ինչո՞ւ չասի դեռուսասան:

Սովորությունը դառնում է էություն, և դրա հետևանքով արդեն անգիր արած «կիրթ» բառերը օտարոտի ու արհեստական են հնչում դերասանի շուրթերից: Դրան գումարվում է և ձայնը, որ ակամա կենցաղայնանում է: Դա և հասկանալի է, և շատ բնական, որովհետև մարդու կոկորդը, շուրթերը, սովոր չեն նման խոսքերի, վարժված չեն նման հնչերանգների, շեշտադրումների: Վերջապես, ամեն մարդ ունի ապրելակերպի, վարքագծի ներքին մի ծրագրայնություն, որ բույեապես փոխելն անհնարին է: Համենայն դեպս, եթե բեմում հրաշք է կատարվելու, ուրեմն այդ հրաշքի սկիզբը պետք է որ շատ վաղուց դրված լինի:

Ասում են, տգիտությունը կարելի է բարեհաջող թաքցնել լուծով, լուսկյացությամբ: Դա մեզ համար չի ասված, մեր գործը խոսելն է: Ուզենք-չուզենք, ոնց էլ պահենք ու թաքցնենք մեզ, վերջը ջրի երես ենք դուրս գալու: Դերասանի գործը բեմում չի սկսվում. լուսաբացից լուսաբաց հոգու աշխատանք է. այդպես է, մեր ընտրածն է, ո՞ւմ բողոքենք: Պարզապես պարտադրված ենք անընդհատ, մեր լսողությունը սրած, որոնել, պրպտել՝ գըտնելու համար խոսքի իմաստը, կերպարայնությունը, հմայքը: Խոսքի հմայքը... Ու եթե մենք ինքներս չենք ճաշակում, չենք ըմբռնում մեր արտասանած խոսքը, ուրեմն էլ ո՞ւմ կվարակենք, ինչպե՞ս կգերենք լսողին: Միհնչդեռ շնորհից զրկված բառեր է, որ լսում ենք բեմից, հեռուստաէկրանից՝ մա-ծի-մա-ծի-կա, կո-լեկ-ծիվ, հա-վիծ-յան, ար-ծ-խատ, գեղեցիկ դյութանքի փոխարեն՝ ձ-յութանք, ընկերի տեղը՝ ըն-գ-եր: Սազակա՞ն է, բեմական խոսք առարկան չորս տարի ուսումնասիրած, պրոֆեսիոնալ դերասանի վկայագիր ստացած երիտասարդին բացատրել,

թե չի կարելի երաժշտությունն ենթադրելով, ասել «երա-շ-տու-թյուն», թե հարկավոր է հետևել առողջանությանը և հատակ արտաբերել՝ հետաքրքիր է և ոչ թե՛ հետա-ք-իր, որ որպիսին և որպեսզին տարբեր իմաստներ ունեն, կամ թե որքան հաճախ ենք լսում՝ ի-ս իսկի-փոխարեն և կամ ի-չու, բա Ա-Ա- ի՞նչ եղավ: Տառեր է, որ կույ են գնում, անիմաստ սղվում, բառն այլակերպում: Խոսքը դառնում է ոչ հատակ, թույլ, թափթփված, փնթի ու, եթե ուշադիր լսեք՝ ավելորդ աղմուկներով լի:

Մեկ էլ տեսար դերասանը բեմում բացականչեց՝ գ-թ-ա, գթա... Ախր ինչպես: Ինչու՞ քեզ գթա քեզնից առավել կիրթ հանդիսատեսը, որ մի կերպ գլխի է ընկնում, որ ուզում ես ասել գոտա: Ոչ մի գթություն, ոչ մի ներում, որովհետև դրա կողքին՝ շնորհակալ-ց-յուն ես ասում, ստես-ս-յուն ես ասում, որովհետև այսպիսի օրինակներն աթենիվ են և պատահական վրիպումներ չեն, այլ էություն ու մակարդակ: Այս խեղճ գոտան մի երկրորդ փորձության էլ է ենթարկվում. ասում են՝ քթա, քթիր, քթնել... մնում է պոզահարելու պես, միանգամից քթահարեմք այս բազմաշարժար գոտա-ն:

Տարիներ առաջ, փորձի ժամանակ, «վարկաբեկելու» փոխարեն սխալմամբ ասացի «վարքաբեկել»: Վարկն է բեկվում, վարկը,— ուղղեց Վարդան Աճեմյանն ու չհանգստացավ, մինչև արմատապես չպարզաբանեց վարքի ու վարկի իմաստները: Անկաշկանդ մթնոլորտում ընթացող նրա փորձերին փորփրում էինք ոչ միայն հոգեբանություն, այլև կարողանում էր տրամադրել մեզ (ինքն էլ հետներս) քուջուջ անել, փնտրել, գտնել անհրաժեշտ խոսքը, դարձվածքը: Բայց, դե, «քուջուջ» անելու համար հող է պետք ունենալ; բառապաշարի պահեստ:

Աճեմյանի հետ կապված օրինակս բերեցի նաև այն պատճառով, որպեսզի երիտասարդ ռեժիսորները գիտակցեն իրենցից ակնկալվելիք գիտելիքների չափը: Ռեժիսորությունը ուսուց-

չութիւնն է ամեն իմաստով: Իսկ դերասանները հարցաւեր մարդիկ են...

Առիթից օգտւելով, ասեմ ինձ հուզող ևս երկու հարցի մասին:

Բոլորս համատարած, գրեթէ առանց բացառության, արտասանում ենք ցյուն վերջավորությունը՝ պետու-ցյուն, ընկերուցյուն և այլն: Առնվազն անհասկանալի է, թե ինչու է թ-ն դառնում ց-ը: Էլ չեմ խոսում այն մասին, որ աշակերտներից շատերը, մանկավարժների օրինակով, երևի, ասում են՝ յո-ցցերորդ, ու-ցց-երորդ: Թվում է, ճիշտ կլինի և անհամեմատ ավելի բարեհնչյուն, եթե պայմանավորվենք ու թ-ն դնենք իր տեղը և արտասանենք հնարավորին չափ հստակ, այսինքն, առանց ց-ին խառնելու, նրանից զատ ու կոշտ, որովհետև չկա, չունենք փափուկ ու քաղցր-մեղցր թ-ը: Չէ՞ որ առանց այն էլ «ց» յախտող է լինում լեզուն՝ նայեցեք, նստեցեք, լսեցեք...

Այնուհետև. դերասաններ կան, որ կիրթ լեզվով խոսելու մարմաջ ունեն: Սա էլ մեկ ուրիշ ծայրահեղություն է, ապակողմնորոշում, մի խոսքով՝ գլխացավանք: Սրանք մի տեսակ զուգում-զարդարում են, մի տեսակ կլորացնում են տառերը և... Էժան օժանելիքի հոտ է փչում դրանց խոսքից, էժան դիմափոշու...

Լ-ը տառը, օրինակ, այնպես են արտաբերում, որ հասարակ լոբին անգամ չես ճանաչում՝ դառնում է ինչ-որ լոբի, կարծես լեզվի տակ իսկապես հենց մի բուռ լոբի էլ կա, այն էլ խոշոր տեսակից: Հաճախ էլ, անհասկանալի ու անտեղի, Լ-ից առաջ դնում են շշաձև է-ն ու հանգիստ խղճով ասում՝ գնաց-էլ, անց-էլ, պակ-էլ, հարձակվ-էլ... Էլ չենք խոսում այն մասին, թե ինչպես են վարվում մեր ակնադրյուրի պես զուլալ ձայնավորների հետ: Ա-ն սարքում են ինչ-որ էր, օ-ն կիսով չափ օ, մնացածով ու-ից սկսած մինչև ինչ ուզես:

Հայոց «արևահամ բառը», եթե իրոք սիրում եք, գեղեցկացնել պետք չէ, նա դրա կարիքը չունի:

Իսկ դերասանը պարտավոր է ունենալ լեզվի զգացողություն, լեզվի «շկոլա»: Խոսքս նաև մեր բազմահարուստ բարբառների, Սունդուկյանի, Պարոնյանի լեզուներին տիրապետելու մասին է: Տեղին է այստեղ հիշել, թե ինչ ակնածանքով են վերաբրվում, օրինակ, Փոքր թատրոնում Օստրովսկու լեզվին:

Վերջերս լույս տեսան Մայա Ավագյանի «Խոհեր լեզվի մասին» և Լևոն Հախվերդյանի «Զրույցներ լեզվի մասին» հրաշալի գրքույկները: Ուզում եմ սխալված լինել, չհավատալ, որ երիտասարդ իմ գործընկերները չեն կարդացել, չեն ուսումնասիրել այնքան ուսանելի, իրենց նշանակությամբ դերասանի համար պարզապես անգին այդ աշխատությունները: Իհարկե, շատ ցանկալի կլիներ, եթե դրանք դառնային մեր երիտասարդության սեղանի գրքերը:

«Նախնիներից ստացած մեծագույն գանձը մեր լեզուն է»: Ասել է մեծն բանաստեղծ Պարույր Սևակը:

Այո, քամու բերած չէ հայոց լեզուն, ուրեմն և չդառնա քամու բերան տված դարման... Թանկ գնահատենք մեր ստացածը և սրբությամբ փոխանցենք մեզնից հետո եկողներին:

Հունիս, 86 թ.

ԳՐԱԳԵՏ ՔԱՐԵՐ ԵՎ ԱՆԳԵՏ ՀՈԳԻՆԵՐ

Ասում են՝ հեռու-հեռուներում փնտրածդ քթիդ տակ է լինում հաճախ... Այո, քիթդ հոտառություն ունի: Այս բանը վաղուց է հասկանալի ու... Ձեռքս նակատիս դրած, հիվանդոտ հուզատուությամբ չէ, որ նայում եմ հեռուները, թե՛ պահ, պահ, պահ... Էն ինչեր կան այնտեղ:

Ինչկաչկան, լավնուվատը իմ կողքին է, մանավանդ՝ իմն է: Իդձ ունեմ՝ թոշակի անցնեմ, քաղաքից քաղաք գնամ, մեր գյու-

դերը՝ սարերով, սարվորների կողքով, հովիտներով, աղբյուրների մոտով, որ, միգուցե (չէ, հոգիս չէ), աչքս կշտանա հայոց աշխարհից:

Այժմ ազատ ժամանակ շատ քիչ եմ ունենում: Անցյալ տարի միայն բախտը մի քանի օր ժպտաց: Մինչ այդ, համոթ ինձ, չէի եղել Շամշադինում. առիթից օգտվեցի: Ընկերներով ճամփա ընկանք, բայց մեր կամքից անկախ բանդ եղանք Իջևանում:

Հիացա:

Անմիջական տպավորությունն այն էր, թե մի շատ շնորհալի, հմուտ, ձեռքն ամեն ինչին հասնող տանտիրոջ օջախ ենք մտել:

Իջևանը մեր գողտրիկ ու, ցավոք, հազվագյուտ այն քաղաքներից է, որի միջով գետ է անցնում: Ծաղկառատ ու ծաղկուն տեսք ունի քաղաքը. ծաղիկը մեծ ու փոքր պուրակներից մտել է բակերը, բարձրացել շենքերի պատշգամբները, թառել պատուհանների գոգերին:

Ծաղիկն էլ հոգևոր նվաճում է, բայց և՛ կենդանի նվաճում: Դեռ հինավուրց հեքիաթներից սկսած մարդու բարի ճակատագիրն է և զարմանալի մի խորհուրդ ունի իր մեջ, երբ նկատում ես, որ տխուր օրերին էլ ենք մեր ձեռքը պարզում ծաղկին:

Առաջներից, շատ առաջներից գեղափակությունն է ունեցել հայ մարդը, բայց չեն թողել, որ նրա տնկած ծաղիկը մնա, տրորել են, ինքն էլ վերցրել ու ծաղիկը քարից է սարքել... Ծաղիկը մեր բնական հատկանիշներից է, մեզ սազող: Իջևանցիները հիշել են դա և այսօր արտահայտել հրաշալի:

Մեր պապերն ասում էին՝ տան կատուն էլ պիտի սիրուն լինի...

Քաղաքակրթության նվաճումներն ակնհայտ են, բայց և այնպես հետսքրքիր է սոցիոլոգ, կամ, ասենք, մարդաբան լուրջ մի գիտնականի հարցնել, թե այս բոլոր նվաճումներում և առհասարակ մարդուն մարդ դարձնելու գործում ի՞նչ դեր է ունեցել մարքությունն ասվածը:

Նորոգվող Գոշավանքը և արդեն ավարտուն Մակարավանքը... Մակարավանքը շքեղ է ու վեհ, հուզական, բայց և զուսպ: Պաշտոնակալն, բայց և թաքուն մտերմիկ: Հրաշալի է նիստը, դիրքը շրջապատող փարթամ անտառը, հրաշալի է և աղբուխտրից գերծ, մաքուր շրջակայքը:

Մեր հյուրերին համարձակ կարող ենք տանել Իջևան, ի տես և ի հաստատումն այն ճշմարտության, որ, իրոք, Հայաստան աշխարհը թանգարան է՝ բաց երկնքի տակ սփռված իր գոհարներով, որ, իրոք, բազմադարյան է մեր մշակույթը ու ոչ միայն քարով-խաչքարով, այլև՝ կենցաղով: Այո, ազգային արժեքները պետք է որ պարտադրեն, թե չէ օտարի նման հիացա Հոփսիսինով, դունչս շուռ տվի, գնացի ո՛ր նա իր հավերժությամբ, ես էլ իմ այսօրվա ճղճիմությունների հետ...

...Միտքս ինձ տանում է հետ. դարեդար հետ է տանում, գլուխ եմ տալիս նրան, ով կառուցել է այս կոթողը իմ այսօրվա պարծանքի համար, ու դառնում եմ սրտով շնորհակալ նրանց, որ նորոգեցին Մակարավանքը, նրանց, որ պահպանում-խնամում են, ի վերջո, դարձյալ ինձ համար, մեզ համար, մեր պարդերեսության համար...

Բանաստեղծներն անչափ ավելի լավ կպատկերեն Իջևան ու Ծամշադին բնաշխարհի խելահեղ գեղեցկությունները: Միայն կասեմ, որ ներշնչման զարմանալի պահեր ապրեցի այդ անբնական թվացող բնության մեջ: Օձի կաշվի պես մի բան, մի ինչ-որ ավելորդ բան պլոկվում է քեզնից, թվում է՝ նորանում ես այդ սարերում, թվում է՝ խորն անդունդներից նոր կյանքի համար ես դուրս գալիս, նոր ճակատագրի...

Ապա միտք ես անում՝ ինչու՞ են իրենք իրենց կողոպտում բանից անտեղյակ մեր «բիրդան աղաներ», որոնց ուշքն ու միտքը հայտնի հեռու տեղերն են միայն այն բանի համար, որ օտար անվանումներով հարևանին զարմացնեն...

Այսպես, ուրեմն, Ծամշադին: Բերդ մտնելուց առաջ որոշե-

ցինք նախ տեսնել Վարագավանքը: Դեռ հեռվից նշմարվում է տեղանքին ներդաշնակ, կանգուն մնացած նրա պատերի մի մասը: Ո՞վ է ընտրել այս վանքի դիրքը, մտածում ես, ո՞վ է հղացել նրա ձևն ու տեսքը... Քարը չի սուրբ, չէ, ոչ էլ վանքը... Քո հայրենակցի միտքը, որ ապրել է քեզնից հազար տարի առաջ, ձեռքը, որ տաշել-տեղադրել է այս թանձր քարերը, մեջքը, որ կորացել է այս խաչքարի վրա, խաչը ծաղիկ արել ու նաև՝ քրրտիները, որ կաթիլ-կաթիլով փխրունացրել է քարը՝ բազմապիսի այս նախշերը հեշտ փորագրելու համար:

Հնությունը հորենակյան հարգանք է պահանջում: Մոտենում ես ակնածանքով լի, բայց...

Ինչպիսի երևակայություն է պետք ունենալ, ինչ խոսքեր, որ սառնասրտորեն նկարագրես այն բացառիկ անտերությունն ու ապականությունը, որին մատնված է այդ հնադարյան կոթողը: Ու դեռ աղբանոցի վերածված շրջապատի ծանր տպավորությունից ուշքի չեկած (աղբը մեր հետևից չհավաքելը, ցավոք, ոմանց համար սովորույթ է դարձել), տեսնում ես շատ ավելի սուկալին՝ կարծես իրար հետ մրցելով, մեր երիտասարդները կարմիր ու կապույտ, սև ու սպիտակ ներկերով, անճոռնի տառերով դրոշմել են իրենց աղավաղված անունները՝ ի «հիացումն» գալիք սերունդների, այլանդակել են պատերը ներսից ու դրսից, անգամ խաչքարերը, անգամ «նեղություն են քաշել», հատուկ բարձրացել են դեռ կանգուն աշտարակի վրա ու այնտեղ էլ են «անմահացել»: Չգիտեմ, ժամանակը, որ հազարամյակներով է հաշվվում, թշնամին կամ երկրաշարժը այնքան վնաս հասցրե՞լ են, արդյոք, միատեղ:

Ինքնակամ հիմարանալ: Եվ այս աստիճան...

Երկար ճանապարհս փոշմանած, շվարեցի անպաշտպան պատերի մեջ, ու հանկարծ հիշողությունս լուսավորվեց...

Փարիզ քաղաքում էի, Լուվրում. Հին Եգիպտոս, Հին Հունաստան, Հռոմ, շումերներ, Ջոկոնդա, քանդակներ, նկարներ... ծով

հանճարեղության մեջ հոգիդ խենթանում է, աչքդ դառնում է փարախն ընկած սոված գայլ, ագահությունը խեղդում է, տենդորեն սրահից սրահ ես վազում ու մեկ էլ... Երազ չէ՞, արդյոք, տեսածս: Ամենապատվավոր տեղերից մեկում խնամքով կանգնեցված մեր **խաչքարը**... Խորհրդային Հայաստանի նվերը Ֆրանսիային... Հպարտությունս խտացավ, մի բուն դստավ, կոկորդս խեղդեց: Սա էլ ենք մենք, մեր արվեստը, մի մնուշ միայն, հազար տարեկան մեր գրագետ քարը, մեր հավիտենության վկայագիրը, հայոց ազգի գեղեցկություններն իր մեջ ամբարած...

«Էմա պլյուս Սեռոժ, Դեզիկ պլյուս Բաբիկ...»: Հենց խաչքարերի վրա, քիմիական ներկերով...

Իսկ Ղարաբաղ, Շուշի քաղաքում երևանցի Վոլոդյա Բաբայանը (նույնպես երիտասարդ) քանի տարի է արդեն, քարափոշին երեսին շերտ կապած՝ վերակառուցում է Ղազանչոց եկեղեցին...

Ծամշադիկները թող չնեղանան. օրինակս վառ էր ու թարմ, դրա համար բերեցի: Նրանք կարող են «մխիթարվել», որովհետև նույն աղբուփսորը, նույն անկարգությունը տիրում է Չարենցի կամարի շուրջը (մանավանդ՝ անկյուններում) և ուրիշ շատ տեղերում:

Տխուր է այս ամենը, և ավելի ես տխրում, երբ մտաբերում ես, թե սրա կողքին որքան «մանր» բաներ կան, որ աչքաթող ենք արել: Մինչդեռ հենց մանրուքներից է կազմվում մեր կենցաղը, ապրելակերպը, տրամադրությունը, ինքնազգացումը: Կուտակվում են, դառնում քանակ ու որակ:

Կարելի է ձեռք թափ տալ, ասել՝ մանր բաներ են, չարժե ուշադրություն դարձնել, ժամանակ վատնել, բայց դա, իսկնասած, կլինի հոգու ծուլություն, եթե ոչ՝ անգիտություն...

Անշուշտ, մանրուք է ճանըր, բայց եթե ճաշարաններում պարսեթով հարձակվում են ուտելիքիդ վրա, և, ասենք, դու շրջա-

ճային հյուրանոցում ես ապրում ու քաղցած ես, ստիպված ես խեղդել զզվանքի, արհամարհել վարակի վտանգը...

Մանրո՞ւք է մեր, ներեցեք, հանրային (և ոչ միայն) զուգարանների վիճակը, մինչև ե՞րբ աչք (ու քիթ) փակենք ու ձևանաք, թե դա մեզ հետ կապ չունի: Մենք էն ենք, որ ստում են՝ բազմադարյան մշակույթ, իսկ սա, հեշ, մանր բան է...

Մանրո՞ւք է փողոցը սխալ անցնելը:

Մանրո՞ւք է կանաչը տրորելը, ծառի շիվը կտրորելը: Իսկ կանաչը, եթե նկատել եք, քաղաքում ցանում, խնամում են կանաչք, մեր քույրերը, հողն էլ են իրենք փորում, ծառն էլ Հայաստանում հաշվված է...

Ջրի բարակ շի՞թն էլ մանրուք է, որ անհմաստ հոսում է գրեթե բոլոր հիմնարկների ու բնակարանների ծորակներից... Այդ թվում նաև՝ խնայողության կոչ անողների...

Փողոցի լեզուն սև ձյութի համառությանը լցվում է մեր ականջները, համարում ենք մանրուք ու վարժվում դրան էլ...

Խնջույք-հավաքներում երգասեր մեկը քթի մեջ, խունում կըլկըլացնելով, երգում է, համարում ենք մանրուք, վերջում էլ ծափ ենք տալիս: Բա ի՞նչ եղավ Կոմիտասի ոգին, որ պիտի հպարտ թևածի հայոց երգարվեստում ու ավելի շատ՝ հոգիներում: Ասենք, ումի՞ց սովորի երգասերը, երբ որոշ, նույնիսկ պրոֆեսիոնալ, կատարողների մեջ Կոմիտասի ոգին ոչ միայն չի թևածում, այլև իսկի ներկա էլ չէ...

Մանրուքնե՞ր են... Իհարկե, մեր հրաշք կառույցների, հրաշք գյուտերի ու ստեղծագործությունների կողքին մանրուք են, բայց կան, չէ՞ կողքին են, չէ՞: Իրականում դրանք ևս մեր գոյության արտահայտությունն են, չէ՞, աշխարհին ներկայանալու մեր որոշակի կերպը... ճանճն էլ է փոքր, բայց կարող է պղծել ամենաշքեղ սեղանն իսկ...

Ժամանակն է, վերջապես, որ ընտանի հայրենասիրությունը մեր խնամված, կոկիկ տներից ու բնակարաններից դուրս հանենք,

տարածենք մեր բակի, փողոցի, քաղաքի երկրի վրա, «մանրուք-
ների» վրա՝ ևս...

ՀՐԱՇԱԼԻ ԻՄ ԵՐԻՏԱՍԱՐԴ

կամ

ԻՆՉՈՒ ԵՄ ԽՈՒՍԱՓՈՒՄ ՆԱՅԵԼ ԲՈ ԱԶՔԵՐԻՆ

Ահա վերջացավ ներկայացումը, վերադարձա տուն ու մնացի
մենակ: Մենա՛կ, արդյոք: Քիչ առաջ էր թատրոնը, բեմը, լեփ-
լեցուն դահլիճը ու հարյուրավոր աչքեր, սպասումով լի աչքեր,
հարյուրավոր մարդկանց հևք: Ու մենք այդ մարդկանց ներկա-
յացնում ենք կյանքի մի կտոր: Նրանց կյանքից խտացրած ու
շիկացած մի հատված ենք խաղում մենք:

Մենք, ովքե՛ր...

Մենք՝ բոլորս, դերասաններս, բեմ **բարձրացածներս:**

Դեռ ինձ հետ է բեմի փոշին, նրա յուրահատուկ հոտը, այն-
քան ծանոթ, այնքան հարազատ: Ու կասկածները ծվատում են
հոգիս՝ այնտեղ ավել եմ արել, այստեղ՝ պակաս, այնտեղ չեմ
արել այն, ինչ ասված ու որոշված էր, ու գիտեմ, բաներ կան, որ
չեն ստացվում դեռ կամ, եթե ստացվում են, ապա պատահակա-
նորեն և, ուրեմն, չկա հաշտություն կարողություններիս ու մտա-
հղացումներիս միջև, և տառապանքն ինձ բաց չի թողնելու մինչև
լույս... Դրվագ առ դրվագ վերհիշում եմ ներկայացումը, աչքնիս
առաջ են գալիս բոլոր նրանք, ովքեր այսօր ինձ հետ **բարձրա-
ցել էին բեմ, մի կտոր կյանք խաղալու համար...**

Ու խոր գիշերվա մեջ, արդեն, խոսում եմ ինքս ինձ հետ. ոչ,
եղբայր, ոչ, բոլորը չէ, որ ուզում էին քեզ հետ կյանքից մի կտոր
խաղալ, բոլորը չէ, որովհետև...

Որովհետև, ինչպե՛ս կարելի է անկյանք աչքերով բեմում,
հատկապես բեմում, կյանք խաղալ: Ու եթե մենք բոլորս բեմում,

մի ներկայացման թե՛ մի մարմին ենք, ապա, ցավոք, մարմնի մի քանի մասեր անկենդան էին և, ուրեմն, հազար ներողություն, այսօրվա մեր հանդիսատես, հազար ներողություն, համբերատարդ ու սիրելիդ թմ, այս երեկո քեզ մի քիչ խաբելու համար:

Ծճմարիտն ասւ՛ծ, դժվար թե խաբված լինես, պարզապես այնքան ես ազնիվ ու պարկեշտ, որ թույլ չես տա քեզ մատնացույց անել մարմնի անկենդան մասը, ինչպես կիրթ մարդիկ չեն նկատում կամ նրբորեն ձևացնում են, թե չեն նկատում, մարդու կարողությունը կամ մեկ ուրիշ արատ: Պարզապես այսօր դու այնքան ես կրթված, որ թույլ չես տա քեզ նեխած հավկիթներ շարտել անբաններին քեմից վոնդելու համար: Ներողամիտ ես դու և մեծահոգի: Ելանի ես էլ քեզ նման լինեի:

Սակայն հնուց եկած մի ճճմարտություն ինձ հանգիստ չի տալիս: Բոլորի հետ ուսել ես գերանը, ուրեմն ազնիվ եղիր, ուրեմն քո ողնաշարը թող որ իր բաժին ծանրությունը կրի իր վրա, գլուխ մի պահիր, մի ձևացրու, թե բոլորի հետ ես, մանավանդ՝ տանելու փոխարեն գողի նման թաքուն ինքդ մի կախվիր գերանից...» Իմ հրաշալի, երիտասարդ խաղընկեր, անչափ շնորհակալ եմ քեզանից՝ քո ազնվորեն աշխատող աչքերի համար, մասսայական տեսարանում անգամ, երբ լուռ կանգնած ես մի անկյունում, և իմ հայացքն ընկնում է քո աչքերին ու տեսնում եմ, որ հավատում ես իմ արածին... Ոչ, ինչ եմ ասում, ինչո՞ւ իմ արածին, պարզապես թատրոնին, բեմում կատարվածին, դրությանը, բայց և, ի վերջո, քեզ, քեզ ես հավատում, քո նշանակմանը, քո կոչմանը, հագածդ զգեստներից, խաղընկերոջդ խոսքերին, կովին, ծիծաղին, սարսափին, կարեկցանքին... Կյանքի քո ընտրած ուղուն, քո ապագային: Ես չունեմ խոսքեր բավականաչափ, պատմելու, թե՛ այդ պահին որքան եմ սիրում քեզ, որքան եմ շնորհակալ քեզանից, երախտապարտ՝ քո համերաշխության համար:

Եվ հիմա, ուրեմն, մեն-մենակ, սենյակումս, զգացված թո արածից, ժպտում եմ ակամա, սիրտս լցվում է ջերմությամբ: Հպարտությամբ մտածում եմ, որ դու հենց նա ես, որ կարողանում է առայժմ բեմում կախարդվել (վաղը թո հերթին, ուրեմն, ընդունակ կլինես կախարդելու) և մինչև գետին խոնարհվում եմ այդ հավատիդ առաջ: Ոչ, արդար չեմ, խոնարհվելը փոքր վարձ է այդքան մաքուր, այդքան անարատ էությանդ համար: Քեզ, առանց դետուդենի, ուղղակի պաշտում եմ:

Դու իմ վստահություն, իմ հենք, իմ թատրոնի ապագա. չե՞ որ թո ու քեզ նմանների շնորհիվ է հարատևում իմ սրտում ու կանգուն մնում երանելի այն բարձունքը, որ կոչվում է բեմ:

Խորին հարգանքով մտածում եմ՝ ինչ էլ լինի, հետագայում ինչպես էլ պտտվի թո բախտի անիվը, ի վերջո, կգա թո օրը, դու կասես թո խոսքը: Բայց ավելի կարևոր է այն, որ դու թո ողջ կյանքում միշտ երջանիկ լինես, երջանիկներից երջանիկը: Ասե՛նք հենց այդպիսին ես, քանի որ ներկայացում կոչվող բարդ կազմըվածքի ապրող, թրթռացող, շնչող մի մասն ես: Քանի որ բեմ ես մտնում լիքը ու հեռանում դատարկված...

Սակայն այս ինչո՞ւ մի թաքուն ցավ, գողտուկ, ալիքի պես շփվում է երեսիս, ծոր տալով լցվում հոգուս մեջ և... Եվ խունանում է այսօրվա տոնը, խամբում, փշանում, և օտար բույրեր եմ զգում մեր մեջ:

Մի ուրիշ տեսակ աչքեր էլ կային, ախր:

Աչքեր, աչքեր... Հավատով լի, այո, բայց և թերահավատ, բայց և մեծամիտ ու նախանձը կոպերի տակ թաքցրած: Արհամարհական, բայց և հարգանքով լի, խրախուսական, բարի ու երբեմն էլ հիացմունքով լի, երբեմն էլ մինչև վերջին բջիջը մեզ հետ մերձեցած, իր թեժացած թոքերով մեզ հետ շնչող: Աչքեր ու աչքեր, դերասանի աչքեր... Սա է թատրոնը, ու հարգել է պետք, հաշտվել ու ապրել նրանց մեջ, նրանց հետ: Այո, հաշտվել, համակերպվել:

Սակայն, մի ուրիշ տեսակ աչքեր էլ կան, ախր, որոնց հետ ոչ

մի կերպ, ոչ մի պարագայում ու այսօր էլ, այս ծանր ներկայացումից հետո չես կարող ոչ հաշտվել, ոչ էլ ներել: Մի տեսակ աչքեր, որ միայն մի պաղ հայացքով հեքիաթը դարձնում են ավերակ, ծաղրանքի արժանի մի բան, և քո արածը (դու էլ հետը) դառնում է անպաշտպան ու հանկարծ, բեմի կենտրոնում կանգնած, զգում ես քեզ մերկ, ողորմելի և քիչ է մնում ամոթից դուրս փախչես:

Եվ ինչքան ճիգ է պետք՝ հեռու մնալու, այդ պաղ ու պաղ հայացքին չհանդիպելու համար, որովհետև դրան հանդիպելն ու գլխիդ սառը ջուր լցնելը նույն բաներն են, որովհետև մի այդպիսի հայացք բավական է, որ ուժերդ լքեն քեզ, և դու դառնաս նույնչափ անօգնական, որքան փետրահան թռչունը:

Եվ՝ անտարբեր աչքեր...

Բեմում ցցված անկենդան մարմինների, ծուլ ու հոգնած մարմինների, ժամ առաջ բեմից փախչելու պատրաստ, իր բեմելը որպես պատիժ ընկալող մարդկանց անտարբեր աչքեր...

Հրաշափ իմ անհավատ երիտասարդ, փրկիր քեզ, նախ և առաջ՝ քեզ, շտապիր գտնել քո իսկական տեղը կյանքում, եթե չես կարող հոգուդ տգեղությունը թողնել քո տանը, բեմ մի բարձրացիր, վերջապես՝ հեռացիր սրանցից: Սրանք խենթ ու խելատարարածներ են՝ այս դերասանները, սրանք ընդունակ են օրը առաջ ժամ՝ մնալ բեմում, սրանք պատրաստ են հազար ու մի գրկանքի, ընդունակ են հրաժարվել կյանքի բոլոր վայելքներից՝ հանուն այստեղ մնալու, թեկուզ այստեղ մեռնելու: Սրանք ամաչում են, երբ բեմում չեն, դու՝ ընդհակառակը... Մեղք չե՞ս դու:

Այո, այո, գիտեմ, շատ ես սիրում թատրոնը: Խնդրեմ, մեկ-մեկ համեցիր որպես պատվաբեր հանդիսատես, բեմի փոշիները անտեղի կուլ տալու փոխարեն առոք-փառոք փովիր բազկաթոռին, քեզ համար նայիր, քննիր ու զննիր, ընդունիր կամ մերժիր, եթե շատ կուշտ չես, ծափահարիր... Ի՞նչ գործ ունես սրանց մեջ: Գնա գտիր քո աշխարհը, զիջիր տեղդ նրան, ով իր սեփական

ոտով եկել է մատաղ դառնալու այս բեմ կոչվող բարձունքի վրա: Ուրեմն, թող մատաղանա մատաղացուն, Ինչո՞ւ դու... Մեղք ես: Մեղք ես: Նայում եմ քեզ, մի պուճախում թաքնված, միշտ տխուր, օտար, դժբախտ, սպանում ես թանկարժեք ժամանակդ: Իսկ մի տեղ, մի ուրիշ տեղ, ղեկավարի մի աթոռ կամ ջուլհակուհու մի հաստոց սպասում է իր տիրոջը: Միգուցե հենց դու ես...

Գիտեմ, մտածում ես՝ «Ինչո՞ւ ոչ ես, ես էլ կարող եմ լինել կենտրոնում»:

Հա, կենտրոնում կանգնել կարող ես, և կարող է պատահել այնպես, որ քեզ կանգնեցնեն, և դու դերդ ջրի պես անգիր արած ասես ծայրեծայր, ստորակետ առ ստորակետ: Անգամ կգտնվեն մարդիկ, որ գովասանքի խոսքեր կասեն քեզ: Թատրոն է՝ հազար ու մի փոխհարաբերություն, հազար ու մի նկատառում, հաշիվ... Սակայն, դու քո անտարբեր աչքերով միշտ կմնաս դժբախտ, որովհետև ինչքան էլ գովեն, հրեն քեզ առաջ, դու հո միամիտ չես, որ չհասկանաս՝ կաս ու կմնաս մշտապես ներկայացում կոչվող կառուցվածքի անկենդան մասը միայն: Ախր ինչքա՞ն կարող է ուրիշը ուսել գերանի քո բաժին ծանրությունը, իսկ դու միայն ձևացնես: Ախր ձևացնելուց էլ կհոգնես, անընդհատ ձևացնելն է տաղտկալի է սաստիկ և մի քիչ էլ ամոթ, և, վերջապես, մեղք է այդ ուրիշի ուսը...

Արի ինձ հետ միասին նայիր, տես, հիշիր, խնդրում եմ: Այսօր քո կողքին կանգնած էին տարեց դերասաններ, պատկառելի, վաստակաշատ, նկատիր նրանց աչքերը ու կտեսնես՝ մարմինը չէ, որ դուրս են բերել բեմ, այլ վառվող, հավատով վարակված ու վարակի հավատ տարածող իրենց աչքերը:

Արտիստը բեմ է բարձրացել:

Եվ ինչպիսի՞ ինքնամոռացում: Հոգ չէ, թե ինքը լռելու է այսօր, բավական է, որ նա ներկա է իրադարձություններին... Ինքնարտիստ է և չի կարող հաշվել բեմից դուրս գալու բռպեները: Ոչ, նա միայն այստեղ է լիաթոք շնչում, ապրում: Նա բոլորի հետ

է, և դա է նրա տարերքն ու երջանկությունը: Եվ նրանք այսօր չէ, որ այդպիսին են: Այդպիսին են եղել առաջին քայլերից, այդպիսին են ծնվել՝ հավատով վարակվելու, վարակելու տաղանդով: Նրանք գիտեն թատերական հին իմաստությունը. «Ով չի կարող երջանիկ լինել բեմում (ինչ էլ անելու լինի), թող փնտրի երջանկությունը ուրիշ տեղ, այլապես նրա կյանքը կդառնա տանջանքի օղակներից հյուսված մի երկար շղթա»:

Իսկ այսօր... Այսօր հավատա, սքանչելի իմ «անհավատ», իմ «չվարակվող» ընկեր, սարսափելի է կենտրոնում կանգնածի համար հանդիպել քո աչքերից, հավատա, քո մարած ու անտարբեր աչքերի պատճառով բեմը պարզապես փլվում է: Իսկապես հավատա, որ բեմում դրված քո տխուր մարմինը ոչ մեկին հարկավոր չէ:

Հայտնի բան է, որ առանց հասարակ զինվորի չկա շախմատի խաղ, և ամեն մի մեծ դերասան սկսել է զինվորությունից:

Քանի չի սպառվել մեր այսքան կիրթ հանդիսատեսի համբերությունը, քանի դեռ ուշ չէ...

Եկեք, հրաժեշտ տվեք իրար՝ դու և թատրոնը...

Հայրի մեյն



ՎԱՐԱԳՈՒՑՐԻՑ ԱՅՍ ԿՈՂՄ

Զմեռվա վաղ մի առավոտ

Զմեռվա վաղ մի առավոտ արթնանում եմ փայտաշեն մեր տանը, Ստեփանավանի Սլաբոդկա կոչվող թաղամասում: Չեմ եմ տալիս, ու մարդ չի պատասխանում...

Մեր հին տան հին դուռը՝ մի փեղկանի, լայն, հաստ, ծանր... Մեջքիս ուժ եմ տալիս, թավ ու պատկառելի ճոռում է, ինձ հետը տանելով, դանդաղ բացվում...

Սպիտակ աշխարհը լցվում է աչքերիս մեջ... Ամենազարմահալին ծառերից կախված բրդոտ ձյունն է ու մեկ էլ դեղնակարմիր դդում արևը, որ դրել են մեր հարևանի քարե ցանկապատին, ուղիղ իմ դիմաց...

Մեր շունը՝ խոշոր մի գազան, երկար պոչը ձախուսաջ զարկում է չոր կողերին, գոմալով լնդերը մերկացնում, ծուլ լինում ու տաք, կարմիր լեզվով քիթմուրթս լիզում...

Սառը օդը լցվել է թոքերս... Կարծես ինչ-որ մեկը ողնաշարս ճիպոտում է, պոկվում եմ տեղիցս ու վազում, շունը ետեվիցս: Գիշերվա պարզկան ձյունը կոշտացել, կեղև է կապել. փշոտ, սառը, բոբիկ ոտքերիս տակն այրվում է... Վազում եմ խենթացած, գծի նման... Հասկանում եմ, որ ապրում եմ, և ուրախությունը խեղդում է ինձ...

Ոտքս մի բանի կպավ, ու փովեցի գետնին: Քիթս, խոփ դառած, ձյունն ակոսեց, բերանս լցվեցին ձյան խոշոր, կարծր՝ ավազահատիկները, տհաճ դրճորճում են ատամներիս տակ...

Հայրս կռանում է ինձ վրա... Իհարկե, հայրս է: Նրա գրկից շվարած նայում եմ ընկածս տեղին...

— Բա, տղա,— ծիծաղում է հայրս իմ զարմանքի վրա. թաթմանը հանում է, տաք ձեռքով սրբում քիթմուրթիս արյունը ու ինձ խցկում ծոցը՝ ոչխարի մորթուց հաստ քուրքի տակ...

Այսպէս եմ հիշում առաջին անգամ լույս աշխարհ դուրս գալս...

ՄԻ ԵՐԵԿՈ,

բոքոն կաթնահունց էր, տաք, մոխրահամ... Օխայ, ձեռքիս է... Երկար գերանի վրա նստած եմ մորս կողքին, օխայ... Գերանը հսկա է, մեր ժառանգ եզն է դուրս քաշել մերուց, ձմեռվա փետ ենք անելու, իսկ առայժմ նրա վրա նստում եմք:

Օրը վերջացել է, խաղաղ երեկո է, Լոռվա երեկո... Մեզ հետ է մեր հարևանուհի Մարուսը, մեր հավիտենական դրացին՝ սըր-տամոտ, հարեհաս... Միայն զրուցում են, խոսքի արանքում, իրար վարակելով, ձենով հորանջում: Ականջիս մորս գեղջկական ձայնն է՝ խզված, հոգնած... Հացը ծամելով նայում եմ վերս՝ աստղերը շատ-շատ են ու ոնց որ պսպղուն գարու հատիկներ, որ առավոտյան մայրս բուռ-բուռ շաղ է տալիս մեր չալպուտուրիկ հավերի առաջ... Երևի...

Կշտացա, մտնում եմ մորս թևի տակ. օխայ, խմորի հոտ եմ առնում, ծխի, խնոցու, մի քիչ էլ մեր սպիտակ կովի հոտը... Ոչինչ չեմ մտածում, բան չունեմ մտածելու... Մերկ ծնկներիս դեռ տաք բոքոնի մնացածն է, բոքիկ ոտներս գետնին են, գետինն էլ տաք է, ճոռիկներն իրար կանչում են, օդն էլ է տաք, մայրս էլ... Երեկո է, երեկոն էլ է տաք... Մեր Մարսլ կովը բացօթյա է կապած, պառկած է մեր կողքին, ես նիրհիս մեջ արդեն լսում եմ նրա հավերժական որոճը... Մայրս այս ինչ է խոսում... Գորտերն էն որտեղ են համերգ տալիս... Քնում եմ, օխայ...

ՊԱՊՍ, ՏԱՏՍ ԷԼ ՀԵՏԸ,

Ագարակ գյուղից են: Մորական պապս Բարխուդարյան Սարիբեկն էր, տեղական ցեղի բոյակարճ մի ձիուկ ուներ, այդ ձիով

տարվա մեջ երկու-երեք անգամ գալիս էր մեզ տեսության, տա-
տիս էլ հետն էր բերում: Երկուսով հեծնում էին այդ թերատ խեղ-
ճուկրակին, տառս մի ձեռքով պինդ բռնում էր պապիս ար-
ծաթե գոտուց ու ձիու թոքերը ճաքացնելով, հետը խոսել-համո-
զելով, խաթրն առնելով, խաբելով, հասնում էին տեղ:

Ասում են՝ մի ձեռքով, որովհետև Հայկանուշ տատը մի ձեռ-
նանի էր, ավելի ճիշտ՝ աջ ձեռքի դաստակը չկար. ա՛ջը թե
ձախը, ձա՞խը, թե՛ աջը... Մի խոսքով, մի ձեռնանի էր, չսիրող-
ներն ասում էին՝ էն կոնդը: Պատճառը մինչև հիմա չգիտեմ:
Ինքն այդ մասին չէր խոսում, իսկ ուրիշներն իմ հարցուփոր-
ձին պատասխանում էին՝ որը, իբր, լուրջ, որը՝ ձեռ առնելով:

— Իրա շաշ խելքից...

— Բա չես իմացել, չգիտե՞ս, տատդ դաշաղ ա եղել:

— Հա, ասեմ, Նիկոլի սալդաթ եղած ժամանակ կամավորա-
կանների հետ տանկական ֆրոնտում...— Ու անամոթ փոթկաց-
նում էին երեսիս, խրխնջում: Մեծերը:

Կամ էլ թե՛ ինչ-որ թվին, ինչ-որ ձորում փախեփախի, թե
պաշտպանվելու ժամանակ, պապիս կողքին հրացան քաշելիս...
Մի խոսքով, թուրքի գյուլլեն եկել է ու տատիս դաստակը տարել:

Իզուր: Ծատ իզուր, այդ պատճառով էլ խեղճ տառս կես-
տատություն արեց մեզ: Տարիների հետ մենք շատանում էինք,
գումարվում, ինքը շվարում էր: Մի փեշ թոռ, ինքը՝ կոնատ, ինքը՝
կոնդ...

Մի բան էլ այստեղ էր պռատված՝ տատ և՛ կար, և՛ չկար:
Իհարկե, մեր դժվար օրերին, պարտքին հավատարիմ, մեզ հետ
էր, բայց խմորը ինձնից փոքր Սեդա քույրիկս է հունցում, կովը
ես են կթում: Մայրս հանկարծ լուր էր ստանում, թե այսինչ հոս-
պիտալում է պառկած զինվոր տարած հայրս: Ուրախանում էր,
որ ողջ է, բայց, թվում է, ավելի շատ նրա համար, որ պատճառ
լիներ միառժամանակով գլուխը մեզնից պրծացնելու:

— Ես գնացի: Տատին իմաց տվեք, թող գա ձեզ պահի...

Ծաբաթներով, պատահել է ամիսներով, մնում էինք մենք ու մեր կիսատատը: Առավոտյան հինգին ձեռք էր տալիս՝ դե, վեր կաց, այ որդի, կովը նախրից հետ ընկավ...

Վեր կաց... Մեծը ես եմ, պարտավոր եմ... Էդ ինչքան եմ մեծ:

— Այ որդի, կովի կուրծքը լվա նոր կթի, մոռանաւ ոչ...

Մոռանաւ ոչ... Լվա... Արի լվա, տեսնեմ ոնց է... Դե, հիմա էլ կթի... Բնաթաթախ եմ, քնահարամ եմ, աչքերս փակվում են, մարդու կոպերն էլ այսքան ծանր լինեն... Կոնիվ եմ տալիս, մատներս թմրում են, կովն էլ նեղանում է, թրքոտ պոչը շրմփացնում է երեսիս, մորս է ուզում, որովհետև ես անփորձ եմ կթում, կաթը պահում է, չի տալիս, մեզ էլ շատ է պետք, բայց հերն էլ անիծած, որովհետև դրսում անձրևը մաղում է, իմ քունն էլ տանում է, սրան դեռ պիտի նախրին հասցնեմ, տատս էլ կողքիս կանգնած դողողանի է գալիս, որ չի կարողանում ինքը կթել, մեր շորերը կարկատել, մեր վրա-գլուխն անել, հերս էլ բանակում, ես էլ անընդհատ կիսատված, տատս կիսատատ, ես անտեր անելիք կոնիվն էլ վերջ չունի, Լոռին էլ անձրևոտ, ցեխը հասնում է մինչև ծնկներս, կոշիկներս էլ յոթծականի...

Բա, ախպեր ջան...

Դե լավ... Նրանց հայտնվելն ինձ համար մեծ ուրախություն էր: Սարիբեկ պապս ծանրաբարո մարդ էր, մեղմ ձայն ուներ, փափուկ, գեղեցիկ, փարթամ բեղեր, միշտ սափրված էր և հատուկ «եղևում էր, որ շորերն իստակ լինեն, կոկիկ»: Նրա այս սովորությունը այնքան էլ տատիս սրտովը չէր: Ասում, պատմում էին՝ հաճախ էր Թիֆլիս քաղաք գնում, իբր, գործերով. «Գնալը կար, գալը՝ չէ... Տուն էր գալիս ջան հոտերը հետը բերած...»

Պապս արդեն մահացել էր, ես տատիս հետ կյանքումս առաջին անգամ գնացել եմ սար: Ուլերի, գառների հետևից ընկած, վազուվազ եմ անում օբաների արանքներում: Սմբած մի պառավ առաջս կորում է: Կոպերը՝ չորացած չամիչ, մեջները երկու

լուսավոր կորիզ՝ ասեղի նման սուր նայում է ինձ: Վախեցա, բայց ժպտաց, չարաճճի ժպտաց... Ջադու, ջադու, տատիս պատմած հեքիաթներից... Հանկարծ ձեռքը շարունակ անաչ ու ոսկրոտ մատներով ուսս արքայանեց... Պահ, տղա ես դիմացիր...

— Սարիբեկի թո՞նն ես, անուշ ջան...

Ապշեցի. այդ՝ համարյա երկտակված, պառավի մեջ գուլպ ու վճիտ ձայն, աղջկական ձայն... Հեքիաթներում կախարդները ջահել աղջիկ են դառնում...

— Հա, Սարիբեկն իմ պապն էր, ինչ ես ուզում, թող, թող...

— Սարիբեկը... Քու պա՞պն էր Սարիբեկը...

Երգե՞ց, թե՞ մղկտաց, մղկտա՞ց, թե՞ երգեց պառավը, օրորեց գլուխը, քարշ տվեց ինձ, խցկեց իրենց օրեն... Կորս, հիմա ինձ խաշելու է, ուտի, ջադուն...

— Հլա տեսնեմ պապիդ քաշե՞լ ես, թե չէ...

Կաթի թարմ սերը լցրեց փայտե թասի մեջ: Խմի, հրամայեց, էգուց էլ կգաս... Էգուց որ գաս, մեղր եմ տալու գոմշի մածնով... Օղորմածիկը սիրում էր, սիրում էր..

Պառավը նստեց դիմացս, ծնոտը շորացած ձեռքով խշմարեց ու մղկտաց երգելով.

— Սարիբեկի թոռ, Սարիբեկի շիվ, Սարիբեկի համուհոտ... Կեր, կե-եր, անուշ արա... Ուզում է չաղացնի, որ հետո ուտի...

Կոպերի ճեղքերում, կիսախավարի մեջ, տեսնում եմ, փայլ-փլում են երկու փոքրիկ ցողիկներ... Փայլփլեցին, մեծացան ու, ինչ-որ շարժման հետ, կապույտ ուլունքների նման գլորվեցին ներքև, մի պահ կանգ առան դողացող ծնոտի խորշումներում ու ընկան ցած, փշրվեցին... Ինձ խղճում է ջադուն, ինձ վրա է լաց լինում...

— Կերա՞ր, անուշ ջան, դե գնա... Էն կոնդ ջանը չասես, էգուց կգաս...

Իհարկե, քնելուց անաչ տատիս պատմեցի:

— Էն ո՞վ է, տատի, մեր ինչն է...

— Հողեմ դրա պրճկված գլուխը... Էն խորը գնացածի կարող հիմի էլ քեզանից ա առնո՞ւմ... Հանգուցյալ պապիս հասցեին են ասված այս խոսքերը:— Բա ձեռիդ մի փետի կտոր չկա՞ր, մի եղանի պոչ չկա՞ր դրա կուզիկ մեջքը դգեիր...

— Այ տատի, ես ինչ մեղք ունեմ...

— Ձեանդ: Պաշե՞ց էլ... Թողնելու չեմ էդպես տեղաշոր մըտնես, Էն խորը գնացածին էլ չէի թողնում, վեր կաց գնա էդ հարամած սֆաթդ լվա... Էգուց կոներիցը կրոնես կտանես քամակը Էն չոչոան աղբրի տակը կկոխես, բալի հովանա անթառամ բոզը...

Հա, ուրեմն, Սարիբեկ պապս նախ ինքն էր իջնում ձիուց, հետո խտտում էր տատիս, դնում գետնին և, մինչև խորջինն ու քամած մածնի տոպրակները կարճակեր թամբից, տատս աղմըկոտ, ի լուր ամբողջ թաղի, պոռշախառը, թքախառը պաշպըչում էր թշերս: Հերս գալու է տուն, տեսնելու է տատիս, աչքերը վրաս ոլորելու է թաքուն՝ գնա, լվացվի...

Պաշպոռշտին ավարտելուց հետո, առողջ ձեռքով սկսում էր ինձ շուռ ու մուռ տալ: Էս ո՞նց ա, պակասել ես... Էս առաջ գնալու փոխարեն, հետ ես գնո՞ւմ... Էս ինչի՞ չես ջանի գալի... Մեր աղջիկն արդեն քեզ մերթող ա արե՞լ... Էս ինչի՞ չես ջանի գալի... Բա քու մերը մեր ա՞... Բա քու հերն ախոս չի՞... Բա բոնես ոչ դրա մազերը կտրե՞ս... Հլա դու տես ես ում եմ աշխարհի գցել...

Ու խոսքի հետ քազմաթիվ փեշերի ծալքերը քրքրում էր ու չգիտես որ գրպանից, հատկապես ինձ համար պահած մի կտոր չորացած գաթա էր հանում կամ հերվա մի խնձոր, թեկուզ և ճլորած, մի բուռ թոզոտ տանձի չիր՝ յոթ Օր ծամես մաշվելու չի:

Ծատ էլ համեղ էր...

— Դե կեր, կեր, անուշ ջան,— թաքուն շնչում էր ականջիս տատս, փեշերի մեջ ինձ թաքցնում աշխարհից, ասես ուր որ է

չորս կողմից վրա են տալու, շիրուչամիչն ինձնից խլելու: Ստիպ-
ված ծամում էի...

Շատ էլ համեղ էր...

Քրտիկնքի մեջ կորած ձիուկին գոմում տեղավորելուց հետո,
պապս միշտ նույն կերպով կուսնում էր ինձ վրա:

— Բարով է... էլ ո՞նց ես... Հլա տեսնեմ էստեղ մի բան ավե-
լացրե՞լ ես... — Ձեռքը կոխում էր շեքերիս արանքը:— Պահ,
պահ, պահ... Ծանաչո՞ւմ ես, գիտե՞ս ես ով եմ...

— Իմ պապն ես:— Խոոված էի պատասխանում, քանի որ
նրա արարքից խիստ վիրավորված էր լինում տղամարդկային
արժանապատվությունս:

— Պահ... «Իմ պապն ես» գիտի... Հլա տես ինչքան ա խե-
լոք, ինչքան ա բանիմաց... Դե սա, մանկապարտեզումդ վար-
ժուհիդ քեզ ինչ ա սովորեցրել, հը՞... Բա չի ասե՞լ, որ մի ուրիշ
պապ էլ ունես... Հա, բա Լենին պապի՞կը... Ապրես: Ձեր չարը
տանեմ, ընկեր կոլխոզնիկներ, լսեցի՞ք, իմ թոռն ա, բահ... Ես
ձեր նանը... Գիտակից ենք, է, գիտակից... Շան թուլա... Ես ձեր
հնարողի, ես ձեր դեսն ուղարկողի...

Այս անհասկանալի մենախոսություններից ինձ փրկողը տա-
տըս էր:

— Այ մարդ, ի՞նչ ես ուզում իմ քորսիցը...

— Մի նաչարն էլ դու ես... — Փնթփնթալով պապս գնում էր
դեպի ջրի ծորակը լվացվելու:

Հյուսն էր, հետն էլ՝ գրասեր: Գիրք էր կարդում, թերթեր էր
կարդում: Կարդացածի հետ կռիվ էր տալիս Երեկոյան, ընթրի-
քից հետո, հորս հետ սկսում էր զրույցը՝ կոլխոզներից, գյուղ-
խորհրդից, վերջացնում ամերիկացիներով, գերմանացիներով, թուր-
քերով...

Գալու հաջորդ օրը երկուսով նստում էինք ձին, դուրս գա-
լիս դաշտ: Հիմա էլ ես էի մեջքից կաշում: Թամբից կախ երկու

պարան ուներ. երկարով ձիուն էր կապում իր ոտից, կարճով քարկապ էր անում ինձ:

— Ոչ մեր ձիւն կորչի, ոչ էլ մեր թոռը, թէ չէ ճոնտիս ուծը էլ էն չի, անոշ ջան: Համ էլ՝ տարան տարան: Չախկալը շատացել ա, չախկալը... Երկուտունանի չախկալ տեսած կա՞ս, Չէ՞... Անպետք բան են, քեզ ասեմ, գող են... Փախցնում են, իմ ու քո չեն հարցնում... Աշխարհը դառավ, սարքեցին տանող-տանողի... Հիմի, անոշ ջան, ձիւն կարածի իրա համար, դու էլ քեզ համար խաղ կանես... Ես խտոր ընկնեմ մի թիքա աչքս կպցնեմ: Գիտե՞ս ինչի եմ զարմացած՝ չախկալն էլ չախկալ չի, գել ու գազան ա, բահ... Հավատում չե՞ս... Այ, տա, աչքովս եմ տեսել, հավ գողացողը հիմի գազան ա կտրել: Բահ, դե գնա... ,Էրնեկ քեզ, ասում եմ՝ Էրնեկ քեզ, որ ինձ նման խելոք պապ ունես...

Ասում էր, ու բեղերի ծայրերը հասնում էին մինչև ականջները. ուրեմն ժպտում էր հատուկ ինձ համար, որ ես չնեղանամ: Թամբը դնում էր գլխատակը, չուխայի մի փեշը վրան, մյուսը՝ տակը, քնում էր: Ես ինչ անեմ ոտնակապ: Մի քիչ դես, մի քիչ դեն, սկսում էի պարանը ցնցել, բայց խորամանկությունն հերքում էր՝ ձիուկի պարանը, իբր, ես չեմ:

— Հեյ, քուռակ... Քնի մեջ մրթմրթում էր պապս: Բանը վերջանում էր թնկթնկոցով:

— Պահո, պահո,— աչքերը վրաս նայնպացնելով զարմանում էր,— Էդ լաց լինել էլ գիտե՞ս: Ես էլ ասի խելոք տղա ես եղել, էն օրը էնքան գովեցի քեզ մեր կոլխոզի ընդհանուր զահրմարում... Ժողովում, էլի: Ասին՝ կուլակ ես, մեկատեր ես, Էդ ինչի ես թաքցրել: Ասին, որ Էդքան լավն ա, բեր տուր կոլխոզին, թե չէ կուլակաթափ կանենք, զոռով կխլենք... Գիտե՞ս ինչ ա կուլակաթափ անելը: Պահ, պահ, պահ, լացացնես դու դրանց մերը... Բայց տալու չեմ, ջան թուլա, դե գնա, որ լաց ես լինում հենց անհատ էլ մնա, տանջվի, քեզ տեղն ա... Լաց ես լինում, քու օգուտի համար ես լաց լինում, քու անձնականի, բա կարելի՞ ա:

Ասում չես թե կոլխոզ ա, այ տա, ամեն ինչը համայնական ա, մինը կքնի, մինը կարածի, մինն էլ զարթուն կմնա, որ գողություն քիչ քիչ: Հլա որ ուզում ես իմանաս, պահակ շատ ա պետք: Չախկալն, է, չախկալը գլուխ ա բարձրացրել, ոհմակ ա դառել...

Երկար թոկը ձեռին օղակներ անելով, ձիուկին քաշում էր դեպի իրեն, կամաց-կամաց հավաքվում էինք: Արդեն տունդարձին գրույց էր անում ինքն իր հետ կամ ինձ հետ, կամ՝ ձիուկի: Դե ուրիշ ո՞ւմ վստահեր...

— Է, հե, հե... Ոնց էլ անես, կապելու են՝ մի տեղի, մի գործի, մի կնկա... Կապելու են, անոշ ջան: Նեղացար՝ արձակեցի, գիտե՞ս ինչի: Չգիտես: Քու պապն էմ, այ շաշ, դրա համար: Ուրիշն արձակող չի, սիրտդ էլ որ ճաքի, ազատելու չեն...

...Ստիպելու են, վարժվելու ես ոտնակապին, վզակապին... լեզվակապին... Ծունը ոնց ա սովորում, էնքան ա սովորում, էնպես ա սովորում, որ վիզն առանց կապի մրսում ա: Գիտե՞ս ինչի. նրա համար, որ վիզը կապից բարակում ա: Եզը ոնց ա վիզը դեմ տալիս տիրոջը, թե լուծդ դիր... Բա-ա-ա...

Էս տիրոջ մասին մի երգ գրի... Հը՞... Ոտանավորից, բանից: Գովական: Ինչի՞ չես աշուղ դառնում, որ... Թու, թու... լավ կլիներ, է... Կասեի ձեզ գովաբանող աշուղի պապ էմ... Իը..ը... Ժամանակին ծխելը չսովորեցինք, որ հիմի մի կուշտ ծխեինք... Լադիկին ճանաչո՞ւմ ես: Չես ճանաչում, մեր գյուղացի Լադուշին, առաջ... Առաջ դու նրա նանը լացացնես, հիմի՞ ճառասաց ա... Փիֆ, սարսափ: Դու էլ սաս: Չասես թե պուճուր ես, թուլեն հաչալով ա շուն դառնում...

Լսում էմ պապիս խոյ ու փափուկ ձայնը, հասկանում էմ, որ տանջվում է, ու սիրտս խղճահարվում է: Հարազատանում էմ, որովհետև խաղաղ չի նրա հոգին, որովհետև պապ է, բայց վախեցած ու իրա ուզածի պապությունն չի անում: Երանի թե այսպես ձի նստած, ես մեջքին կպած, գնանք ու գնանք, մի հեռու տեղ գնանք, ինքը գլուխը դնի թամբին քնի, բայց ձիուն չկապի

նորից, ինձ չկապի, որ ես էլ չխանգարեմ նրա հանգիստը, պարան շլինի, կապ շլինի...

Հետո էլ քթի տակ երգում էր, հետո էլ ինձ մոռանում, շուր էր գալիս ձիուկին:

Քու գործն էլ գործ չի, Քուռակ, քու կյանքն էլ կյանք չի, համա դե ես ինչ անեմ, դու ինչ անես...

Հետո էլ մի ծանր հառաչանքի հետ, երկար տնքոցի հետ... Օֆ, օֆ... Հիմի էլ ուզում եմ արձակեն, ուզում եմ չարձակեն, եղած-չեղածը գնաց, ամեն ինչի հետ հաշտվեցինք, ամեն ինչի սովորեցինք... Գնաց, գնաց... Հի, հի, հի... Անոշ, տատդ մնաց... Հի, հի, հի... Արմանք ու զարմանք, էլ ոչ հանելուկ, ոչ բան... Այ տա, էս ինչի՞ հանելուկ չմնաց... Հի, հի, հի... Անոշ, մեկակ տատդ մնաց... Տատիդ սիրո՞ւմ ես: Չասես՝ հա, շաշանաս ոչ, ես դրա տվողի... Առաջնորդին սիրի, շան թուլե: Քեզ խելոք կպահես, թե չէ... Իմ մասին որ կհարցնեն, կասես չունեմ, չկա, ես պապ չունեմ... Կասես՝ ես դրա կուլակ հերն եմ անիծել, կասես՝ ես դրան վախկոտ սրհենցն ու հընենցը... Ադա, մատնի՞չ ես, ես ձեր սովորացնողի, ես քու վարժուհու նանը... Էսա քեզ գցում եմ Քուռակի ոտների տակը... Ես ձեր...

Պապա շուտ մեռավ: Վախը սրտում...

ՍԻՐՈՒՆ ԹԻԹԵՌԻ ԿԱՄ ՆՄԱՆ ՄԻ ԲԱՆ

Էինք երգում մանկապարտեզում: Հա, մի տարի էլ մանկապարտեզ եմ գնացել:

Մաթիլդա, ընկեր Մաթիլդա... Աչքերը կապույտ էին, թե՞ կանաչ: Հիշում եմ, շատ բոյով էր ու բարակ, նրբազգաց էր: Մի խոսքով կարգապահ, մաքրասեր գերմանուհի: Որտեղից-որտեղ լոռեցի մի մարդ գտել, բերել էր սարքել իր երեք երեխայի մայր, մեզ՝ դաստիարակչուհի:

Չմեռ էր, սենյակը՝ նեղվածք: Ընկեր Լյայլան դաշնամուր է նվագում, սովորում ենք երգել: Երեխաները նայում են ինձ ու թաքուն ծիծաղում: Ընկեր Մաթիլդան իմ կողքին է նստած, բոսայեն մեկ շոյում է գլուխս, բոսայեն մեկ կուշ են գալիս, կծկվում նրա ձեռքի տակ:

— Հի, հի, հի, հա, հա, հա...— Փոթկացնում, մկների նման ծվծվում են երեխաները:

Երեկ օրը կիրակի էր. հայրս ինձ տարավ վարսավիրանոց, հանձնեց վարպետին, ինքը գնաց օրվա առևտուրն անելու: Հին շուկայի խանութների շարքում փոքրիկ մի խուց էր, վարպետը սեպոիկ մի մարդ էր, փոցխաշար ատամներն ու անգույն լնդերը միշտ երևում էին, թվում էր՝ անընդհատ ժպտում է:

Ճաքճաքած, պղտոր հայելու առաջ նստած եմ, կիսաքոռ մըկրատը շխկշխկացնում է ականջիս տակ շատ վարժ, իբր հմուտ վարպետ է, իբր վարպետաց վարպետ է: Չխկշխկացնում, չըխկչըխկացնում է մկրատն օդում, վերջապես մի երկու մազ է պոկում ու շուռ գալիս պուճախում պազած ընկերոջը: Սա էլ հո չի ծխում... Խեղդոց:

— Լցրու, լցրու, տենամ...

— Բարի լույս...

— Բարի լույս...

— Մարդ ըլենք...

— Հա, ախպեր, մարդ ըլենք...

Էսպես քաղցր գրուցելով արաղը խմում են, ինձ մոռանում: Երբ հայրս վերադարձավ, ես արդեն ազատվել էի այս գերությունից:

— Համեցեք, եղբայր ջան, ձեր ապրանքը ստացեք,— կատակում է վարպետը, մկրատն օդում վարպետորեն չխկշխկացնելով:— Արի մի բարի լույս արա մեզ հետ, մի թաս...

Հայրս նայում է գլխիս ու հոնքերը կիտում:

— Երեխուն շնորհքից գցել ես: Էս ինչ նարդիվան ես սարքել, արա...

— Տեցի կտոր ա, ախպեր ջան, հանգիստ կենո՞ւմ ա որ...— Ժպտացող քերանով կատակում է վարպետը:

Հիմա ընկեր Մաթիլդան ուզում է իմ նարդիվան-նարդիվան անշնորհք խուզած գլուխը փրկել երեխաների ծաղրանքներից, բայց իմ պետքը չի...

Երեկ հայելու առաջ շատ նեղվեցի, երկար ու անշարժ նըստելուց սիրտս ճաքում էր: Մազմուզն էլ մի կողմից էր նեղում, լցվում էր օձիքիս տակ ու մեջքս քոր ածում: Ուսերս վերուվար էի անում, որ վիճակս մի քիչ թեթևացնեմ: Վարպետը, վարպետների վարպետը, ավանակային մի հարված է հասցնում՝ ականջախառը:

— Տո, իշի քուռակ, անշարժ կաց...

Ցավից կուչ եկա ու փայտացա:

— Տեսա՞ր ոնց խելոքացրի...

— Բա ոնց, աչքը պիտի վախեցնես, որ խեղճանա,— գոհանում է պուճախում արաղ խմողը,— աչքի փուշը որ չկոտրես, հնազանդվելու չի...

Այս նյութի վրա երկար փիլիսոփայում են ու արաղը խմում...

— Մարդ ըլենք...

— Հա, ախպեր, մարդ ըլենք...

Ես ականջիս ցավից մեռնում եմ...

Ընկեր Մաթիլդան իր նուրբ մատներով կաշում է ականջիս...

Ընկեր Լյալյան էլ մեզ սովորեցնում է «Սիրուն թիթեռը» կամ դրա նման մի բան...

ՄԱՆԿՈՒԹՅԱՆՍ ՏԱՔ ՔԱՄԻՆԵՐԸ

սարերից իջնում են մեր փոքրիկ քաղաքի վրա: Վավաշտտ կըր-

քոտությամբ պոճոկում են ծառերի տերևները, նրանց վերջին լաթ-լաթ ծածկոցը: Տկլորացնում են...

Ես եմ ու քամիները: Մարդ չկա...

Աշուն է, տերևի կույտեր, հազարագույն տերևների թագավորություն, տերևների աշխարհ, նրանց տիրապետությունը, գույների, քամիների խրախճանք...

Տարվա բոլոր եղանակներին սիրում եմ լինել մեր քաղաքային այգում: Նախ, որ հենց մեր տան կողքին է, ծառաշատ-ծաղկաշատ է, տեղ-տեղ խիտ թփուտներով, թաքուն անկյուններով, անտառի նման խորհրդավոր...

Հովեկներն արդեն գնացել են: Մեր փոքրիկ քաղաքն արդեն դատարկվել է, հանգստանում է ժխորից, անսովոր ձայներից, օտար աղմուկներից: Մնջացել է, ընկել իր բնական հունը, ու ես շատ եմ սիրում նրա այս սուսիկ-փուսիկությունը, կամաց-կամացությունը, իմ մանկությունը, այգու մանկությունը...

Մանկությունը նրանով է հրաշալի, որ մեծերը հաճախ են մոռանում քո գոյությունը...

Տերևը վեր է կացել, սաստկացող քամու հետ ալիք-ալիք, ազատ, անկաշկանդ զվոնում է այգով մեկ, ծառերի հաստաքեստ բներից է զարնվում, փշրվում, դառնում բացվող գորգ ու փռվում, փռվում, փռվում հսկայածավալ...

Վազում, ընկնում-թավալվում եմ, խտտում եմ տերևը խուրձ-խուրձ, շարտում օդ բարձր, էլ ավելի բարձր ու կորչում նրանց տակ, խառնվում, տերևանում... Մեկ էլ հանկարծ քամու հոսանքն եմ բռնում, վազում նրա հետ՝ թեթև, արագ, ծանրությունս չզգալով, գետնից պոկված թևավոր եմ դառնում, քամու վերին հոսանքների մեջ սավառնում եմ համարձակ...

Հանկարծ հանդուգն ու ըմբոստ շուռ եմ գալիս քամու դեմ մեխվում, ծառի արմատներ գցում խորը... Անսասան եմ... Այսպես... Դե, փշիր, որ ինձ տեղահան անես...

Ոռնում, զրնգում է քամին ականջներին մեջ, փափուկ, մի տեսակ շոյանքով լցվում է ծոցս, լցվում թոքերին մեջ...

Ես ազատ... Գոյությունս հավիտյան... Ուժերս անսահման... Ինձ բաց թողեք, ես գնամ իմ... մանկությունը...

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆՈՒՐՋՆԵՐԸ

Ինչ-որ մի տարիքում դառնում եմ տեր ու տնօրենը մարդու մտքի և հոգու...

Մութն արդեն վաղուց կտոր է կապել աշխարհի վրա և միայն մի փոքրիկ տեղ լուսավոր է Լոռվա հարթավայրում, փարսխանման թաքնվել է քաղաքային այգու ծառերի խիտ ճյուղերի տակ, ապրում, շնչում է ուրիշերով... Տեղին փողային նվազախումբը մինչև ուշ գիշեր հնչեցնում է հետպատերազմյան քնքահույզ վալս-բուտոններ, տանգոներ, ֆոքստրոտներ:

Մենք արդեն երեխա չենք, ոչ էլ դեռ տղամարդ: Մեր մուտքն արգելված է պարահրապարակ, բայց գիշերը գալիս է, ու մեր քունը փախչում է: Անհաղթահարելի մի ուժ՝ անձանոթ, զորեղ ու քաղցր, մեզ տանում է այգի...

Պարահրապարակը ցանկապատված է երկար տախտակներով, կանաչ ներկած. ամեն մեկս մեր տախտակն ունենք, որ ցերեկով նրա ներքևի մասը տեղահան ենք արել: Հիմա քաշում ենք մի կողմ, բացում եռանկյունի մի անցք, պառկում բարձր խոտերի մեջ: Հարմար, հրաշալի դիտակետ. աչքերդ չորս արա ու նայիր վարից վեր...

Հեշտաժիծաղ հովեկուհիներ, ալ շրթունքներ լայն ժպտացող, անձանոթ բուրմունքներ, որ դիպչում են մեր պնջերին, նուրբ, փափիկ ձեռքեր, որ դրված են... տղամարդկանց ուսերին: Մեր ուղեղը համարյա մթազնում է, մենք համարյա խենթանում ենք չարչարանքից...

Էս ո՞ր էիք... Բա մենք կարծում էինք թե կհնարմատը շո-
րերով է ծնված. մեր տատը, մեր հորքուր-մորքուրները, մեր
ուսուցչուհին, մեր դասընկերուհին... Էս դուք ո՞ր էիք... Էս ո՞ր
մոլորակից իջաք այսքան թեթև, ծաղկավոր, թափանցիկ, փայլ-
փլուն շորերով, կլորիկ, տեսական, կաթնահունց ուտերով...
Կհնարմատի ուս, որ դեռ ձեռք էլ են տալիս, դիպչում են իբր
պատահական, իբր ի միջի այլոց, իբր պարն է այդպես պահան-
ջում, բայց իրականում թաքուն շոյում են կոշտուկուպիտ մատներ-
ով ձեր հոտին եկած շան տղերքը...

Մեր հերթը ե՞րբ է հասնելու, մենք ե՞րբ ենք տոմսի փող ունե-
նալու, մեր ոտաբոբիկությունը ե՞րբ է վերջանալու, բա մեր իրա-
վունքը ե՞րբ է գալու...

Պտտվում են երկնքից իջած աստվածուհիները... Պտտվում են
շիկացած ուղեղով մեր գլուխները, մեզ այցելած, մեզ գերած նոր
ու անծանոթ մտքերից ամաչում ենք իրար աչքերի նայել, խոսք
փոխանակել... Մենք տեսնում ենք՝ ինչ-որ բան եք քչփչում գե-
ղեցիկ, բայց չենք լսում, չնայած պատրաստ ենք թեկուզ մեռնել
դրա համար... Մենք լսում ենք միայն մեր խակ սրտերի գրմբ-
գրմբոցները, անուրջների այս աշխարհում մենք միայն ցավ
ունենք կարոտներից...

Ուր որ է կվերջան «խտտի-պտտին», կցրվեք այգով մեկ,
անհոփիվ ոչխարների պես, դես ու դեն կճթա չորացած ջախը,
դեսից-դենից կլսվեն ձեր հեքոտ դունդունները...

Մենք՝ գայլի սոված ձագեր, մեր աչքերը գիշատիչ, դուք գե-
տին իջած չաղիկ սկյուռիկներ...

Պտտվում են փերիները... Նայում ենք ծիսացող փեշերին, փե-
շերի տակից աչքով անող ծնկներին, ու մեր խանձված երևակա-
յությունը ինչ նեղ ու դժվար խորխորատներով էր տանում մեզ
դեպի քաղցր տառապանքը, անհիմանալի երազը, անծանոթ հե-
քիաթը...

Հեքիաթ, որ մեզ համար չէր պատմվում...

Ժամանակ անցավ... Պարահրապարակը քանդել էին արդեն, փողային նվագախումբը ցրվել էր, հովելուհիներն էլ չէին գալիս մեր փոքրիկ, գավառական քաղաքը հանգստանալու...

Իրենց հետ բերած հեքիաթը իրենց հետ տարան...

Մեզ մնացին անուրջները...

1991 թ. հունվար

ԵՆՈՔՆ ՈՒ ԵՍԹԵՐԸ

Յոթ ձի՝ բարակոտ ու չոր, արագաշարժ ու տաք, բեռուբարձի տակ ճկոած, իծաշարով բարձրանում էին վեր: Առաջագնա որձ ձիուն, որ գույնը կարմիր կրակ էր ու սիրտը կրակի կտոր, առոք-փառոք բազմել է Եսթերը: Գեղեցիկը, երբ էլ երևար, որտեղ էլ հայտնվեր, և ինչ կերպարանքով, բուն էր դնում նրա հոգում, նրան տեր դառնում. ծառի սաղարթ էր թե նորածին հորթ, վազող ջուր, թե սիրուն աղջիկ, կախարդվում էր ասես, դառնում լուսնոտ ու չգիտեր ինչու: Այդպես էր դեռ աղջնակ տարիքից... Հիմա փափուկ թամբին նստած, հմայված ու կլանված նայում է մեկ ձախ, մեկ աջ, մեկ հեռուները:

Քանի օր է պտտում են սար ու ձոր ընկած, բայց ինքը անտրտունջ է: Մինևույն չէ՞, թե ուր կտանի իր Ենոքը: Թող տանի:

Անհրապական անդունդների եզրերով են անցնում, ու խորքից լավող մութ լուսությունը կանչում է Եսթերին. ձորեր են՝ ճեղքվում-բացվում զարմանահրաշ տեսքով, ու ինքը մտովի Ենոքի կարմիր-կրակ ձիով թռչում է նրանց վրայով, ժայռեժայռ: Դիվոտած գետակների են դեմ առնում, ջրածեժ քարերի, ու մինչ Ենոքը ծանծաղ տեղ է ման գալիս, որ ապահով անցնեն, Եսթերի սիրտը նույնպես դիվոտում է, խենթանում ու սլանում է վեր: Ու կարմիր ձիով մտնում է գետակի սպիտակ փրփուրների մեջ, լողալով գնում է, գնում է՝ ով գիտի ուր:

Եսթերը շնորհակալ է Ենոթին անվերջ ճամփի համար:

Ու մեկ էլ, անսպասելի, դուրս են գալիս լեռնային մի ջրվեժի մոտ, կանգնում են: Եսթերը ժպտալով նայում է նրա ցուլքերին ու մտածում ժպիտ-աչքերով, թե ո՞վ գիտի, քանի սատանա է ապրում ցուլքերի տակից երևացող խուլ անձավում, ու ինչե՞ր են անում նրանք լուսնկա գիշերներին այս անմարդ տեղերում:

Պաղ ու խոնավ անտառ էին մտնում, վիթխարի, լուակյաց, մռայլ ծառեր էին տեսնում՝ ճյուղերն ու բույսերն իրար հյուսված խառնիխուռն ու համակվում էր անտառի խորհրդավորությամբ, համ էլ վախեցնում էր, որովհետև նրան թվում էր՝ շատ է բարդ ու խրթին անտառի կյանքը, փշակ էր փնտրում, որ այնտեղ ապրի թաքուն:

Գնում էին... Քանի՞ օր էին գնում, Եսթերը չէր հաշվում արդեն, Եսթերը չէր նեղվում ոչ արևից, ոչ անձրևից, ու երբ բարձր սարերում ամպն ու մառախուղը խառնվում էին իրար ու կոշտ լում իրենց փոքրիկ քարավանը, Եսթերի հոգին էլ հալվում էր, դառնում էր թեթև ամպ, միտքը կորչում էր ու անէացած սավառնում էր սարերի գլխին, թվում էր, թե հասել է բարձրացել է երկինք:

Ու ամեն լուսաբացի ինքը Ենոթի աչքերում մի նոր հույս էր տեսնում ու շտապում, շտապեցնում էր ձիերին Ենոթը, բայց մեկ էլ մի սարի լանջին քարավանը պահում էր Ենոթը, կանգ էին առնում երկար, շատ երկար, որովհետև լանջն ամբողջ ներկված էր լինում կարմիր կակաչով, ու Եսթերը պիտի վայելեր այդ գեղեցկությունը... Եսթերը պիտի իջներ ձիուց ու քաղեր, կռանար ամեն կակաչի գլխին, որ սիրտը նվաղի: Հետո վայրի մանուշակների կապույտ աշխարհն էին ընկնում: Հետո մի փոքրիկ հովիտ, սպիտակ ու դեղին խառնած, երիցուկի աշխարհն էր. յուղոտ, դեղին յուղաներկը դեռ չչորացած: Այստեղ էլ Ենոթը պիտի համբերեր, մինչև որ Եսթերը քայլեր, փեշերը դեղնոտեր:

Ուսնկա, անվերջանալի շարվել են սարերը, ուս ուսի տված

իրիկնադեմին քոչարի են պարում սարերը, ծալք-ծալք քարձրանում են, բուրգ-բուրգ արած ձգվում են վեր, վեր, վեր, շարանշարան գնում են, գնում են:

— Հե-հե՛յ, էս ո՞ր եք գնում, հայոց սարեր,— Ենոքն է ասում:

— Հե-հե՛յ սարեր, մեզ էլ տարեք:— Եսթերն է ասում:

Օրվա տեսիլները մտնում էին նրա մեջ, սարուլանջերի, ծառուծաղկի, քարուչուլերի բույրերը մտնում էին նրա մեջ, ծաղկափռչին լցվում էր ծոցերը: Ու չնայած ջարդվում էր ձիու թամբին, ու չնայած գիշերները ոսկորները հոգնած նվվում էին, հոգին խաղաղ էր, հոգու վրա ծանրություն չկար ու երազներ էր տեսնում, աղջնական երազներ էր տեսնում: Երազում վախեցավ մի անգամ, երազում ստինքների պտուկները մզզացին, տաքացան, թվաց, թվաց, թվաց...

Արևի հետ զարթնեց Եսթերը, Ենոքին ժպտալով, խորամանկ ամաչեց:

— Հը՞,— հարցրեց Ենոքն ու ինքն իրեն պատասխանեց,— բա...

Ու մի օր էլ երկար նայեց Կարմիր ձիու սանձը բռնած քայլող Ենոքին, նրա լայն ու հոգնած թիկունքին, կախ ընկած մեծ ականջներից, ծոծրակին... Նայեց, նայեց ու հասկացավ, որ ինքը կա առանձին ու չկա, հասկացավ, որ ինքը մի բուռ աղի նման հալվել է այս մարդու մեջ ու զարմացավ շատ, որովհետև այս մտքից կուրծքը լցվեց բերկրանքով, հոգին իշխանացավ, տեր դարձավ և՛ Ենոքին, և՛ աշխարհին: Ու տեսավ, որ ճիշտ որ աշխարհը սիրուն է, որովհետև ինքը մի ուրիշի մեջ էլ կա...

Մի ամբողջ օր Ենոքը շխուեց. մոռալ էր ու անհանգիստ: Երբեմն մի սարի կատարին պահում էր իր ձիաքարավանը, քննախույզ, սևեռուն նայում հեռուները, նայում էր, նայում: Հետո գիրթ՝ շուռ էր տալիս ձիու գլուխը, եկած ճամփան նորից իջնում ու քարձրանում մի ուրիշ սար:

Անծայրածիր այդ լեռնապարի մեջ մոլորվել էր Ենոքը: Ծամ-

փա չկար՝ ո՛չ կածան, ո՛չ արահետ: Տանում էր Ենոքը իր քարավանը տեղերով, ուր մարդու ոտք չի դիպել, աչք չի տեսել:

Օրվա միջօրեի շոգին բզոտում էր Կարմիր-կարկ անույզը, խրխնջում էր ըմբոստ ու փորձում սանձը խլել, կամ էլ ծառս էր լինում, հանկարծ, որ Եսթերին թամբից ցած շարտի, պոկվի, պրծնի անհմաստ երթից, բայց դեռ պինդ էր Ենոքի կուռը, բռան մեջ կարճացնում էր սանձը, ճողթում նրա փրփրած բերանը ու ստիպում, որ հնազանդվի, ենթարկվի:

— Է-հե՛յ: Կարմիր ձի, մեջքիդ Եսթերն է, սանձդ էլ Ենոքի ձեռին:

Կարմիր-կրակ ձի, քո վայրենությունը քեզ կմնա: Իմ Ենոքը ուրիշի կամքին ենթարկվող չի, իմ Ենոքն արդար է:

— Աբրահամի աղջիկ, Եսթեր, ինչի՞ չես հարց տալիս:

— Ասա, հարցրու՝ հարցնեմ:

— Հարցրու՝ ու՞ր եմ տանում քեզ:

— Տանողը դու ես:

Ժպտում էին Եսթերի աչքերը. այդպես էր նկատել նրա աչքերը Ստեղծողը: Նայում էր Ենոքն ու մտածում, որ այս հանելուկ կնոջ աչքերը վարագույր են, որ ինքն այդպես էլ չիմացավ, թե նրա հետևը ի՞նչ է կատարվում, ե՞րբ է ուրախ, ե՞րբ է տխուր կամ խոռվ...

Ծան աղջիկ, էս ո՞նց ա շինած քո աչքերը, որ միշտ ժպտում են ու ամեն ինչ թաքուն պահում:

— Աբրահամի աղջիկ, Եսթեր, երբ դեռ երեխա էի, պապս ասաց՝ մեր սարերում, շատ բարձր, եթե միշտ գնաս դեպի արևելք, մի տեղ կա, որ տեսնում են միայն բախտավորները: Ու հիմա ման եմ գալիս: Չգիտեմ, կտեսնե՞մ:

— Հովհաննեսի տղա, Ենոք,— ասաց Եսթերն ու լռեց. հետո գեղեցիկ երեսը թեքեց ուսին: Դա նշանակում էր, որ խոռվեց, հետո ժպտաց նաև շուրթերով ու ավելացրեց.— գնա առաջ: Դու կտեսնես Օխտնաղբյուրը:

— Օխտնաղբյո՛ւրը... դու որտեղի՛ց գիտես:

— Գիտեմ... Ես եմ... Գնա...

Խոր, շատ խոր, հսկա մի խառնարան, հսկա լեռան գլխին, հսկա մի կրկես կարմիր ու սպիտակ ապարներով պատած, որի ծերպերին աճում էր կանաչը, աճում էին վայրի բազմագույն ծաղիկները, աննկատ կարկառներից կախվել էր բոց մասրենին ու նաև՝ ծառեր մխրճված քարին, քմահաճ ձև առած:

Ապշահար նայում էին Ենոքն ու Եսթերը, ու նրանց տեսածը հրաշք էր:

Հրաքո՛ւխն է այստեղ ժայթքել Նոյից առաջ, ով գիտե. քարեր կային՝ կողերը կրակը լիզած, թե հին Աստվածների խրախճանատեղի՞ էր, որ հատուկ սարքել էին իրենց համար կամ գուցե անեղծվածային նախամարդն է հասել այստեղ, որ տիեզերքին մոտ լինի, որ խառնարանի մութ խորքից գրույցներ անի աստղերի հետ: Ո՞վ գիտե:

Հավիտենականությունն էր, որ կար: Հաստատ էր ամեն ինչ:

Ծառերի արմատները խրվել էին խառնարանի թեք պատերին, ու ուրիշ տեղից դուրս եկել, հյուսվել իրար հեքիաթային հանգույցներով ու նորից մտել քարը: Յոթ տեղ, յոթ ժայռ էր ծակել ջուրը, հորդում էր կատաղի, բունն ու աղմկոտ շատրվանվում, դառնում բարակ անձրև, թաց ամպ, որ օդի փոփոխվող հոսանքները տարածում էին, հագեցնում ծառ ու ծաղկի ծարավը: Ու ծիածանի կամարներ էին կապում խառնարանի վրա, արևի ճառագայթների հետ:

Քար ու կանաչ, կանաչ էր ու ջուր, սպիտակ էր, կարմիր էր ու կապույտ ծաղիկներ, ալ կակաչներ ու դեղին երիցուկ ու վայրի մանուշակ, աշխարհի պես-պես գույները ու հասնող մասրենի, որ կարմիր աստղիկներ էին պատերից կախ:

Անհամբեր էր, սիրտը կրակ կարմիր նծույզը, նրանց արանքին կանգնած, կարոտել էր մատակներին, ազատություն էր ուզում... խրխնջում էր...

— Համբերիր,— ասաց Եսթերը, ձեռքը գցեց ձիու վզովը, շոյեց դունչը, ու քարացան այդպես երեքով:

Առաջին օր...

Ենթը ձիերին բեռնաթափեց, ազատ արձակեց: Կարմիր ձին առաջն արավ մատակներին, քշեց տարավ դեպի կանաչ հարթավայրը:

Ենթը ոչխարի հաստ քուրքը գցեց խոտերին, վրան փռեց Եսթերի գործած խալին, մութաքաները: Բռնեց Եսթերի ձեռքից, նստեցրեց խալու գլխին:

Եսթերը հնայված նայում էր, նայում էր Օխտնաղբյուրին ու նրա ժպտ-աչքերը լաց եղան անձայն:

— Ես սա տեսել եմ, երազում,— ասաց Եսթերը:

— Դու իմ երազն ես տեսել,— ասաց Ենթը:

— Սա աշխարհի պսակն է,— ասաց Եսթերը:

Էս պսակը ես դնում եմ քո գլխին,— ասաց Ենթը: Հետո վեր կացավ, գնաց խորջինը բերեց դրեց Եսթերի առաջ: Եսթերը հանեց ծաղկավոր սուփրան, փռեց իրենց մեջտեղը, հանեց լավաշը, ոչխարի պանիրը, հանեց ռեհանը, մեծ մի դուռում արեց, մեկնեց Ենթին: Ենթը դուռումը մեջտեղից կես արեց, բաժանեց երկու տեղ:

— Քո թխած հացը համեղ է,— ասաց Ենթը:

— Կեր,— ասաց Եսթերը:

— Էս ջուրն անմահական է,— ասաց Ենթը:

— Գնամ կուլան լցնեմ, բերեմ...

Ջուրը Եսթերը բերեց լցրեց կլայեկած թասը:— Խմի,— ասաց:

— Ջուրը պունուրինն է,— ասաց Ենթը:

Եսթերը շուրթերով էլ ժպտաց ու խմեց պաղ ու անմահական ջուրը, հետո թասը մեկնեց. Ենթն էլ խմեց:

Եսթերը գլխաշորը հետ քաշեց, աչքերը փակեց ու Օխտնաղբյուրի հրաշքն իր մեջ էր առնում: Ենթը նստեց նրա կողքին:

Երկրորդ օր...

— Օխտնաղբյուրի ծաղիկները պսակ են անում ու դնում են քո գլխին,— ասաց Ենոքը: Եսթերը մեջքը բարակ, դիք նստած էր խալու վրա... Թագուհի էր Եսթերը...

— Էս խալիչան դու ես գործել,— ասաց Ենոքը:

— Հա, որ եկա քո կտուրի տակ, իմ առաջին գործն է քո հոր տանը,— ասաց Եսթերը:

— Իմ կտուրը ամեն օր ծխացրել ես, Եսթեր:

— Ծխացնելու բան է եղել, Ենոք:

— Ես քո հոտից չեմ կշտացել, Եսթեր:

— Միայն քոնն եմ եղել, դրանից է:

— Ես քո հացից չեմ կշտացել, Եսթեր:

— Տեր ես եղել, դրանից է:

Արևը թեքվել էր, և Օխտնաղբյուրի հատակն ավելի էր մըթնել, լցվել խորհրդավոր կանչերով... Նրանք նստած էին կողք կողքի, իրար ձեռք բռնած ու լույսի մեջ էին, որովհետև արևն իրենց դիմացն էր և ընկերավարի չէր հեռանում:

Երրորդ օր...

— Աքրահամի աղջիկ, Եսթեր, սրանից հազար տարի, թե քանի տարի առաջ մի ջահել տղա հանդիպել է մի սիրուն աղջկա: Քեզ հայտնի է, որ մինչև երկուսը մեկ չեն դառնում, երեքը չի լինում:

— Հա,— ասաց Եսթերը,— սա Երկրի օրենքն է:

— Մեկ են դառել ու դառել են երեք, ճյուղ են տվել, հետո դառել են ճյուղավոր ծառ: Ծյուղը ճյուղ է տվել, ճյուղն էլի ճյուղ է տվել ու ծնվել ես դու:

Եսթերը ժպտաց ողջ դեմքով ու մի քիչ կարմրեց: Ասաց՝ շնորհակալ եմ:

Արևը մայր մտավ:

Աքրահամի աղջիկ, Եսթեր, ես շնորհակալ եմ էն ջահել աղջրկան, որ եղել է քո նախա-նախատատը, որ չի մերժել ու սիրել է էն ջահել տղին, որի պատճառով դու էսօր կաս:

— Հա,— ասաց Եսթերը: Վեր կացա՛յ մե՛ծ խալու վրա տեղա-
շոր գցեց:

Ենոքը նայեց խալուն ու ասաց.

— Էս խալին որ հինեցիր տասնօխտը տարեկան էիր,— ու
մեկնվեց, ձգվեց: Եսթերը մութաքան դրեց նրա գլխատակին,
պառկեց կողքին: Ենոքը աջ ձեռքը պարզեց, որ Եսթերն ըստ սո-
վորության գլուխը դնի նրա թևին, քնի:

Արևն իր երկար ու վերջին շոշափուկները քաշեց, իրանով
արավ:

Կարմիր-կրակ նծույգը, փափուկ դուփելով, մոտեցավ խառ-
նարանի բերանին ու մեղմ խրխնջաց:

— Գնա,— ասաց Ենոքը,— գնա, երամիդ տիրությունն արա,
գիշեր է:

Ձին սմբակը խփեց քարին, մթության մեջ պե՛ծ արավ. երկու
մարդ երկարել էին կողք կողքի: Ու հեռացավ ձին:

Երկարել էին կողք-կողքի Ենոքն ու Եսթերը ու նայում էին
աստղերին:

— Էս աստղերից ո՞րն ես դու,— ասաց Ենոքը:

— Էն, որ քո կողքին է,— ասաց Եսթերը:

Ծատ ու շատ հոգնած էին: Մի դար հոգնած էին: Ու քնեցին:

Օխտնաբյուրի չորրորդ օրը...

Առավոտը կանուխ ծտերը ծլվլացին, ասելով թե՛ Արևը գա-
լիս է, զարթնե՛ք:

Եսթերը պառ ջրով լվաց երեսը, Ենոքի ձեռքերին պառ ջուր
լցրեց Եսթերը, հաց կերան:

Ենոքը գնաց անտառ ու արևի թեքվելու հետ վերադարձավ:

— Վախեցա՞ր, Եսթեր աղջիկ,— ասաց Ենոքը:

— Չէ, դու կողքս էիր: Համ էլ Կարմիր ձին ձե՛ն էր տալիս:

— Դե, կեր,— ասաց Ենոքը, փեշը լիքը մորի էր,— քեզ հա-
մար եմ հավաքել, դու սիրում ես:

— Հովհաննեսի տղա, Ենոք,— ասաց Եսթերը,— հազար, թե

քանի հազար տարի առաջ ապրած էն ջահել տղեն ուրիշ սիրունների թողած ընտրեց քո նախա-նախատատին, ձեռ ձեռի սվին, եկան, եկան ու ծնեցին քեզ... Ծնորհակալ եմ նրան:

Մթնշաղ էր արդեն, Ենոքը նայեց հեռուները: «Ձիերը դեռ էստեղ են, արածում են»,— ասաց Ենոքը:

— Կարմիր ձին մատակների՞նք բաց չի թողնում,— ասաց Եսթերը:

— Կարմիր ձին մատակներից չի կշտացել,— ասաց Ենոքը:

— Ջահել է... Կարմիր ձին ջահել է,— ասաց Եսթերը:

Եսթերը քաղցր մորին կերավ:

Օխտնադբյուրի հինգերորդ օրը...

Ջարթնեցին ու տեսան, որ սարերի ծայրերը մոմի պես սպիտակել են: Կապույտ երկնքում պսպղում էին, փայլփլում էին սարերի ձյունածածկ, սուր կատարները, ու խեղճանում էր Եսթերը սրտի զմայլանքից...

Անտառից վերադարձավ Ենոքն ու Եսթերի համար բերեց փեշը լիքը, հատ-հատ քաղած, ջոկած կարմիր մոռը: Եսթերը կերավ: Ու Ենոքն ասաց.

— Արբահամի աղջիկ, լավն ես: Դու եկար, ոտ դրիր իմ շեմից ներս ու էն օրվանից իմ ոչխարը ջուխտ է ծնում, իմ կովն առանց հորթ չի մնում, իմ ձին՝ առանց քուռակ: Իմ մի ցանածը տասն է դառնում, իմ ցանած տասը՝ հազար: Օխտնադբյուր պսակը դնում եմ գլխիդ:

Օխտնադբյուրի վեցերորդ օրը...

Առավոտյան Եսթերն ասաց.

— Հովհաննեսի տղա, Ենոք, ես քեզ սիրել եմ:

— Եսթեր աղջիկ, իմ պապն ինձ ասել էր՝ էս սարերում մի հին մատուռ կա, չեմ գտնում, որ աղոթք անեմ:

— Գնա, էսօր կգտնես,— ասաց Եսթերը:

...Ու չեկավ Ենոքը: Դեմքը խաղաղվել էր: Պարտքը կատարել էր:

— Քեզ համար սև մոշ եմ բերել,— ասաց Ենոքը:

Սև մոշը կերավ Եսթերը, որովհետև սիրում էր:

Օխտնադբյուրի յոթերորդ օրը...

Աբրահամի աղջիկ Եսթեր, օխտը զավակ էս ծնել ինձ համար, ու էս հավիտյան ճյուղավորվելու եմ: Ու սրանով խոնարհվում եմ քո առաջ ու սրանով էս իմ վերջը շտեսա: Ծարունակվում եմ:

— Մի եղիր անտերմ: Տերն է ասել: Ու փառքն էլ, կամքն էլ Աստծունն է: Մեր աղոթքն անենք Տիրոջը: Մենք պարտք ենք կատարել միայն:

— Կրակ եմ արել,— ասաց Եսթերը,— կրակ եմ արել, ջուրը՝ տաքուհով: Ծորերդ հանի, որ քեզ լողացնեմ, Ենոք տղա:

Ենոքը շորերը հանեց, ու կանաչ խոտերի վրա Եսթերը լողացրեց նրան Օխտնադբյուրի անմահական ջրով...

— Գնա արևի տակ պառկի, իմ գործած խալու վրա ու երեսդ շուռ տուր, էս էլ եմ լողանալու,— ասաց Եսթերը: Ինքն էլ լողացավ ու եկավ պառկեց իր տեղը՝ Ենոքի աջ կողքին: Ու Ենոքը ձեռքը պարզեց, ու Եսթերը գլուխը դրեց նրա աջ թևին:

Աշխարհը սպիտակել էր, խառնարանի վրա լուսությունն էր կախվել: Օխտնադբյուրը հաստ սառցաշերտերով կապվել էր, տակից խոլ խշշում էր ջուրը: Արևի ճառագայթների տակ ձյան խոշոր հատիկները պսպղում էին, փայլփլում: Արևը պայծառ էր, աչք ծակող:

Անտառից դուրս եկավ մի նապաստակ, քամակը ծուլ անելով կտրեց մոտի բացատը ու հասավ խառնարանին: Երկու բլրակների մեջ ինչ-որ քոլ գտավ, պոկեց, ականջները խլշկոտելով արագ-արագ ծամեց, ետևի թաթերի վրա ձգվեց, վեր նայեց աջ, ձախ, ուտոտալով, խորամանկ օղակներ գծելով, խաղալով կրտրեց բացատն ու մտավ անտառ...

Յգոտոտու, 90 ք.

ՏՈՆԱԾԱՌ

Նոր տարի էր:

Հայրս ինձ տարել էր հանդեսի:

Երբեք ինձ երես չի տվել հայրս, երբեք: Մի անգամ, երբ պատերազմ էր գնում, կոացավ, համբուրելու պես ինչ-որ բան արեց,— եղածն այդ էր: Կտրուկ ուղղվեց, ծանր բեռը թողեց ուսիս՝ չվախենաւ, տղա...

Թե ինչու էի վախենալու, չգիտեմ: Կոիվ գնացողն ինքն էր...

Ենթադրում եմ, հույս ունեւ, որ շատ փոքր ժամանակ, ասե՛նք՝ բարուրում, ինձ գրկած լինի, գոնե մի երկու անգամ՝ չնայած չեմ պատկերացնում, համենայն դեպս չեմ հիշում: Մի ձեռքիս մատների վրա կարող եմ թվել, թե երբ է իմ երեսին ժպտացել:

Ախր, համարյա համընդհանուր, համատարած կոլխոզացման ժամանակ եմ լույս աշխարհի եկել: Ես, ուրեմն, հայտնվել եմ, կոլխոզն եկել է, ես, չոքչոքից ոտի եմ կանգնել, հորս կուլակաթափ եմ արել, նրան բանտ եմ նստեցրել:

Հեշ, իսկի սիրելու ծնունդ չեմ եղել:

Ասում եմ, հորական տատու էլ՝ Մական, չի սիրել ինձ: Չհասցրի մի քիչ մեծանամ, հարցնեմ, ախր ինչո՞ւ, այ պատալ: Մեռալ: Դեմքն էլ չեմ հիշում. ես ի՞նչ մեղք ունեմ:

«Էս ինչ քոռաբախտ լակոտ դուրս եկալ...» — իբր այսպես է ասել Մակա տատու: Ո՞վ գիտի...

Չեմ հիշում՝ հայրս ինձ իր հետ մի տեղ տարած լինի: Ասե՛նք՝ լողալու կամ ձուկ բռնելու, ձուկ չէր բռնում: Եվ, ընդհանրապես, խաղեր էլ չէր խաղում: Ամբողջ թաղը նարդի էր խաղում, ինքը՝ ոչ: Հազարից մեկ շաշկի էր խաղում, երևի բանտում էր սովորել: Հազարից մեկ ուշ էր տուն գալիս: Մայրս ասում էր՝ Անվանց տանը «կարտ» ա խաղում: Չեմ տեսել: Համ էլ չէր տանի հետը:

Բայց չէ, աշխատելիս աշխատանքի թունդ ընկեր էինք. գե-

րան սղոցենք, քար կտրենք, ծառ ջրենք... Մի խոսքով, երկուսի գործ, ու մենք պի՛նդ կապված, անբաժան ընկերներ էինք, չխուկան:

Կամ էլ շատ առաջ, հիշում եմ, մի շոգ օր,¹ մի մեծ փոս: Նայում եմ ցած. քլունգը ձեռքին կալ է քանդում: Ծատ դեղին կալ էր: Ինքը փոսի խորքում, ուղղվում է, հասակով մեկ կանգնում, քրտինքն աչքերը կերել է, կալ ու քրտինքից երեսը չի երևում: Երկար ձեռքը պարզում է, իմ բերած կապոցը խլում:

— Փոսից հեռու կաց...

Պատկում եմ դուրս տված կալի կույտի վրա, նայում եմ ցած, փոսի անկյունում պազել, խոշոր-խոշոր ուտում է: Հանկարծ տակնահան նայեց ինձ. գողի նման վախեցա՞ծ էր, թե ինչ: Չհասկացա: Ձեռքին վերջին կտոր հացն էր, վրան յուղ էր քսած, մի քիչ էլ շփոթվեց, տատանվեց, բայց յուղը հալվել էր, ծորաց դաստակին, հացի վերջին մեծ կտորը շտապով դրեց բերանը:

— Գնա տուն...

Գնալը՝ կգնամ, բայց էլ ի՞նչ ես նեղանում: Ասել են՝ հորդ հաց տար, բերել եմ, ճամփին էլ չեմ կերել: Դու էլ, չգիտեմ, ո՞ր հիմնարկի սևագործ քանվորն ես, կալ ես քանդում, շոգից ես էլ եմ նեղվում, ես ի՞նչ մեղք ունեմ:

Սա՛ չեմ հիշում, նոր էր քանտից եկել, թե՞ նոր էին տանելու: Հետո, շատ հետո (ծերացել էր) համարձակվեցի ասել.

— Բուշնիկի տարի էր, դու էլ՝ խելքդ տեղը մարդ, էն ո՞ւր էիր քլունգն առել ձեռքդ. մտնեիր դրանց շարքերը, մի բանի տեր դառնայիր՝ դու էլ, մենք էլ:

— Մերս որ մեռնում էր (այսինքն՝ իմ Մակա տատը), ասաց՝ Արտաշ, հազար տարին մեկ սատանեք են գալիս աշխարհ, քեզ հեռու կպահես... Սրանք են... Սրանք ինչ էլ անեն, սատանի գործ ա:

Ուրեմն, իմ հորագուրգուրանքից զուրկ մանկությունից անսո-

վոր, ինչպես ասում են, ոչ տիպական, ոչ բնորոշ մի դեպք, ավելի ճիշտ մի հուշ շատ պայծառ, որոշ մանրամասներով մնացել է հիշողությանս մեջ. մանկությանս, պիտի ասեմ՝ վաղ մանկությանս, օրաշարաններից խորթ մի քան՝ տոնածառ:

Հա, չգիտեմ թե ինչո՞ւ եմ ուզում ասել. «բարոյական-անբարոյական» այս բառերը չգիտեր, ուսիկ մարդ էր: Ոչ ինքը գիտեր, ոչ ընկերները: Բառերի ուրիշ աշխարհ էր իրենց սեփականը, իրենց հասկանալունը. «Անկյալ շան որդի», Հարամ կաթ կերած մարդ», «Պատիվը ձեռքին պահած մարդ» կամ՝ «Այ տա, էն շան տղեն պարելուց իշին քեռի ա ասում», «Աղուհացով մարդ»...

Իսկ ավելի հաճախ, կարող եմ ասել՝ շատ հաճախ, ատամների կրճտոց եմ լսել ու դրանց արանքներից քամած թանձր հայհոյանք: Մենակ ժամանակ, ինչ-որ գործ անելիս, քթների տակ, խուլ, մրթմրթոցով, արնակալած աչքերով, մռայլ հայրս, մեր հարևանները, ընկերները, հորեղբայրս, քեռիս, մորաքրոջս ամուսին փեսա Պատվականը. տասնմեկ երեխատեր էր, տարան պատերազմ, հետ չեկալ:

Զգիտեմ ինչի՞ և ո՞ւմ. հասցե չկար կամ հասցեն մոթներում էր: Խուփ աշխարհ էր, պատենավորված մարդիկ էին, թաքուն տեղեր էին ման գալիս: Իրենք մեծ, ես՝ փոքր, ի՞նչ կհասկանաս: Երևի հայհոյանքի տարի էր: Բայց տարին շատ էր մեծ:

Լոռվա անձրևը մաղում է: Հացի են ուղարկել, թևիս տակ պահած, տուն եմ գալիս: Լոլոզ ու պոլոզ, միհար մի մարդ գնում, կանգնում է: Հարբած է, ուրեմն, դրովհետև կանգնած տեղը ճոճվում է: Հասնում եմ, մի քանի քայլ տարածություն պահած հետևում եմ:

— Ընկեր Բասմաջյան, ես քու ղեկավարած հիմնարկի նախ... — ու չորս հարկանի ուշուցակապ: Մի քանի քայլ է անում գոմուսով:

— Ես ձեր սոցիալիզմի... այս անգամ յոթհարկանի ընտրագույն մի շարոց:

— Ես ձեր գծագրած կոմունիզմը...— հարկերը խառնում եմ:

Մարդն առաջ է գնում, այս անգամ ավելի երկար է քայլում, գլուխը կախ, ու, չգիտեմ ինչու, ուսերը ցնցվում են, ասես հեկեկալիս լինի, անօգնական, հուսահատ: Սիրոսս խղճալուց ճմրկվում է, բայց մեկ էլ հանկարծակի ժայթքում է.

— Տո, ձեր կապիտալիզմն էլ էնտեղ...

Հետո շուռ եկավ ու ինձ նկատեց: Փողոցում ես ու ինքն եմք, երկինքը մթնոլորտ, խավար: Աչքերը ճպճպացնելով չորացրեց, կկոցեց, երկար զննեց.

— Ո՛ւմ տղեն ես... Բան եմ ասում, այ լածիրակ... Հլա մոտ արի... Մոտ արի, ես ձեր պիոներ մաման...

Դատարկ փողոց: Ես ու ինքը, երկիրը մթնոլորտ, կողքներիս «Հարամ ջրի կամուրջը, անձրևն էլ մաղում է, ջուրն էլ վարարում է, հարբած, դառնացած մարդ, հասցեն էլ ստույգ հայհոյած, իմ գործն էլ էն է՝ հացը հասցնեմ տուն... Տո, դե մի կորեք է...

Եվ այսպես, ուրեմն, այնքան եմ փոքր, որ կանգնած եմ հորս ծնկների արանքում կամ այնքան եմ մեծացել, որ ծնկներիցն չի նստեցնում, կարևոր չի, վերջապես: Բայց, իհարկե, պատերազմից շատ առաջ է, արդեն հասցրել են և կուլակաթափ անել, և բանտ նստեցնել: Հիմա ինչ-որ հիմնարկում բանվոր է:

Հիմնարկը Նոր տարի է անում բանվոր-ծառայողի երեխաների համար: Մեծ մի սրահ է նախկին հարուստի տուն, երևի, որը կամ փախել է թիֆլիսները, կամ պլատիգորսկները, կամ Պարսկաստան՝ կամ ով գիտե...

Մեծ տոնածառը մեջտեղը դրած, գեղեցիկ զարդարած, պլուպրդուն բաներ, սկյուռիկներ, արջուկներ: Առաջին անգամ եմ տեսնում: Տակին էլ բամբակ, իբր թե սպիտակ ձյուն է եկել: Ծնողներն ամեն մեկն իր երեխայի հետ՝ որը շարքերում նըս-

տարաններին, որը պատերի տակ նստած են: Մենք ամենա-
անկյունում ենք:

Հեռվում, մեզ հակառակ, նստած է Բլդուղ Գևորգը՝ Սերոժի
հետ: Սերոժն իմ ընկերն է, մի փողոցից ենք, նայում ենք իրար,
ժպտում: Նրա հայրը կարծում է իրեն է հասցեագրված ժպիտս:
Ծառ լայ մարդ է, բերանը բացում է, լեզուն մի քիչ դուրս հա-
նում ու շատ լայն ժպտում ինձ, իբր՝ տեսա քեզ, նկատեցի ու քեզ
անչափ սիրում եմ: Հաստապոռոշ, լայներես, լայնաբերան, խո-
շորատամ ու շատ բարի մարդ է Բլդուղ Գևորգը: Հաստ թշերից
մեկը ճղած է, կարած ու շատ անճոռնի դուրս ընկած: Դրա հա-
մար են երևի անունը դրել Բլդուղ: Ծառ լայ մարդ է Բլդուղ Գե-
վորգը, մեր մոնտյորն է, չանգերով բարձրանում է էլեկտրապո-
ների վրա, բոլորիս լույս է տալիս, անձրևոտ օրերին խմում է ու
կատաղում: Լոռում էլ անձրևն անպակաս է: Կատաղում է ու փո-
ղոցի մեջտեղով, մինչև ծնկները ցեխի մեջ ընկած, քայլում է,
քայլում է ու հայհոյում գոռալով: Թաղի կանաչք ներս են ընկ-
նում, պատուհանները դիպում, բայց չէ, ոչ մի տգեղ խոսք: Ուղ-
ղակի.

— Ես ձեր սինեցն ու նհեցը, հա-ա-ա-ա... Ես ձեր բոլորի
սինեցն ու նհեցը, հա-ա-ա-ա...

Վերջի այս «հա-ա-ա»-ն՝ երկար, զգուշացնող ու ահարկու:

— Ես ոչ մեկիցն էլ ա վախենում չեմ, հա-ա-ա-ա... Ես մին
տոկիցն եմ վախենում, մին էլ ընկեր Ստալընիցը, հա-ա-ա-ա...

Կարճիկ, հաստափոր մի քեռի տոնածառի տակ կանգնած
ճառ է ասում մեզ համար: Ձեռքերը բռունցք արած, աջ ու ձախ
թափ է տալիս, կարծես օդում թշնամիներ է տեսնում ու հարվա-
ծում է սրա գլխին, նրա գլխին, նրա գլխին, սրա գլխին. կոտո-
րած:

Մարմինս ակամա փշաքաղվում է, վախը ընկնում է սիրտս:
Ներկաները չգիտեմ, լսո՞ւմ են թե չէ, բայց շատ ուշադիր նայում

են, նրա ամեն հարվածից հետո ծափ են տալիս ու նորից կլանված նաչում:

Միայն հորս կողքին նստած Եփրեմը կակազ է, դա է պատճառը, որ նրա հայհոյանքները չեն հիշում: «Ես քու, քու» ցի էն կողմ չի կարողանում անցնել բարկացած ժամանակ, իսկ էնպես՝ ոչինչ, խոսում է ու չի հայհոյում: Եփրեմը հաճախ թեքվում է հորս կողմը ու թաքուն փսփսում:

— Հա-հա-հայ գիտի, հայ Թրքանց Լադուշ, գը-գը-գը-գարու հացին կակա էր ասում...

— Կարտուլը կլեպով էր ուտում...

— Հիմի աշխարհը փը-փը-փը-փորն ա լցնում... Արա, էս կլան շան որդին վերջը խաղալիքները ջարդելու ա, թը-թը-թը-թու...

Վերջացավ, ցմփորը ճառելը վերջացրեց, հիմա էլ մի մորթում է իրեն կտրատում ծափ տակ: Նախադասության վերջերում շունչը չի հերիքում ու ստիպված խոսքն ավարտում է ծղրտոցով: Ամեն նրա ծղրտոցի հետ Եփրեմը հոնքերը վեր է գցում:

— Պա՛հ... պա՛հ, քու... Արա, սա հերվա չը-չը-չը-չիր ա... Սրա մերը մրան բը-բը-բը-բարուր չի արե՛լ... Պահ... Քու-քու-քու մերը չմեռնի... Հլա ինչքան են ծուռտիկ... Հլա, ո-ո-ո-ոտների արանքին ինչքան տեղ կա... Մըմը-մը-մտնես փեշի տակ տափկընոցի խաղաս:

Եփրեմը փոթկում է, հայրս էլ հետը: Ինձ փարդա են սարքել, կոշտ-կոպիտ շուռ մուռ են տալիս, թաքնվում են իմ նեղ թիկունքի հետևում, ծիծաղը իրենց մեջ խեղդելով կոտորվում են:

Մորքուրը կարմիր մատը տնկում է տոնածառի կողմը.

— Մերն է, մեր նվաճումն է, բոլորինս է, համայնական է և ոչ թե...

— Կարմիր պը-պը-պը-պոռոշի կծես... Հի-հի-հի, հա-հա-հա... Մեծ մարդիկ են, մկան ձայներ են հանում, ինչ-որ ծվոցներ...

Իմ լացը գալիս է, խոսվում եմ մտքումս, որովհետև ես սովոր
չեմ հորս այդպես տեսնել, այդպես ինքը՝ ինքը չի, օտար է ինձ
համար, խուլիգանի միևն է, այդպես ինքը իմ հերը չի:

— Դե, երեխաներ, հիմա երգեք, պարեք, զվարճացեք... Ձերն
է, բոլորինդ...

Երգեցին, պարեցին, Լենին պապիկի մասին արտասանեցին:
Հետո ինչպես եղավ, ո՞վ կպավ, ծառն օրորվեց, խաղալիքները
շխկշխկացին... Երեքաց ծառն ու... Ու հետո էլ ի՞նչ երգ, ի՞նչ
պար: Ժողովուրդը մեկեն հարձակվեց տոնածառի վրա: Գոռում
են ու ճշում, հռհռալով իրար բրդում աջ ու ձախ, իրար ձեռքից
խլխլում: Հայրս երկար ձեռքերը պարզած, մարդկանց գլուխների
վրայով ինձ դեմ է արել ծառին, փշերը մտնում են աչքերս:

— Քաշի՛ տղա, քաշի՛, պոկի՛...

Մեծ ու փոքր խառնվել են իրար, անամոթ ծիծաղում են, դրժ-
ծում են, կոկում են, իրար վիրավորում են, նեղանում են:

— Ադա, չտաս... Դիր ծոցդ... Կոտրածը դեմ շարտի... Կող-
քինը քաշի... Էն մի ձեռով էլ քաշի... Պսպղանը... Չիլեն... Գառ-
նուկը, նապաստակը, խոզուկը...

— Այ կնիկ, էդ ու՞ր ես երեխու ձեռիցը խլում...

— Ադա, ուժդ սրանն ինչ պատո՞ւմ...

— Հորդ տանիցն ես բերե՞լ...

— Չլսեցի՞ր, ասին համայնական ա...

Այ քեզ իսկական ուրախություն՝ համընդհանուր... Այ քեզ
զվարճանք, ծիծաղ, հրմշտոց, իրարանցում... Նոր տարի... Թա-
լան... Կողոպուտ... Ժողովրդական խաղ... Փախցնոցի...

Իսկ տոնածա՞ռը... Ի՞նչ տոնածառ, ի՞նչ ձյունիկ-մունիկ,
ի՞նչ սպիտակ բամբակ...

Պոկած-պոճոկած կանաչ ծառը... ճղակոտոր... Տկլորացրած
ընկած էր ոտնատակ...

— Թը-թը-թը-թու..., ես ձը-ձը-ձը, ձեր... Թու... թու...

Հայհոյեց կակազ Եփրեմը... Այս անգամ մինչև վերջ...

ԺԱՌԱՆԳԸ

Մուտք մթին մեկնում էինք դաշտ՝ հնձելու, վարելու կամ մի ուրիշ ռանչպարական գործի: Քունս դեռ չեմ անել, խոով եմ, դժվարությամբ իբր՝ դե, տեսեք, ինչքան է խեղճ երեխան, և որքան եք դուք անխիղճ, թնգթնգալով, ինձ տանջելով մագլցում եմ սայլը, թաղվում խոտի մեջ:

— Զաւնս դուրս գա...— Քթի տակ ու անհամարձակ մայրս է ասում:

Հայրս չպետք է լսի, որովհետև կզայրանա, որովհետև տանել չի կարողանում, երբ տղամարդուն խղճում են: Մայրս տեղավորվում է կողքիս, կոշտ կարպետի տուտը քաշում վրաս: Ծնորհակալ եմ, բայց ես չկամ, վերջ, քնած եմ. ինչ ուզում եք արեք:

— Ժառանգ...— հայրս է, եզան հետ խոսում է: Ածդահա ժառանգն այնքան է սև, որ սևությունից պսպղում է. գլխին գույգ կիսալուսին կոտոշներ՝ հզոր ու ահարկու, ծայրերը սուր ու սպիտակ:

— Դե, գնացի՞նք, քեզ տենամ... Էսօր գործ շատ ունենք...

Կարպետի տակ ծվարել եմ. քնած եմ-քնած չեմ. ինձ հետ է հորս թավ ու թանձր ձայնը, եզների առողջ, կուշտ տնքոցը, մեր սայլի այնքան ծանոթ ճոռոցը: Եկեղեցու տակից մտնում ենք էլ ավելի մութ ձորը, Կարմիր կամուրջն անցնում ու բարձրանում Լոովա հարթավայրը: Հանդի սառը քամին զարկում է քթիս... Հաճույքից ժառանգն առույգ փնչացնում է, հայրս առույգ փընչացնում է, ես կատվաձագի փոշտոց եմ տալիս:

— Ժառա-ա-ա-անգ...— Ի՞նչ է ուզում ժառանգից, չգիտեմ, բայց ձայնի մեջ խնդխնդոց կա. հուզմունքի պահին այդպես է լինում: Վաղորդյան պաղ օդը անկշտում լցնում է թոքերը ու հանկարծ աղմկոտ-հուժկու դուրս շարտում լայն կոկորդից:

— Օհ-հե-հե-հե-եյ...

— Վույ քոռանամ... — մայրս էլի ինչ-որ բանով ծածկում է ինձ:

— Հե-ե-ե-... — սարերն են արձագանքում...

Հենց այնպես է աղմկում հայրս, հաճույքի համար՝ դաշտին, սարերին, եզների շնչին, աշխարհին խառնվելու համար... Ջահել է, առողջ: Ուրախանում է... Հետո շուտ է գալիս, մտրակի երկար կոթով թխկթխկացնում չոր կարպետը:

— Տղա, հե՛յ... Մորդ փեշի տակից դուրս արի...

Ոչ շարժվում եմ, ոչ ձայն հանում: Բայց նրա պետքը չէ, ինքը համոզված է՝ լույսը բացվեց թե չէ, տղամարդը պիտի ոտքի լինի:

— Հո-հել, տղա... Սարերը զարթնում են, լույսի հետ լուսացի...

Երկար ու բարակ մտրակն օդում խաղացնում է: Մտրակը նրա ձեռքին մի հրաշագործ բան է՝ օդը կտրատում, ճեղքում, սուլում, շաշում-շառաշում է, տրաքտրաքում, ճայթում, պայթում... Հորս մտրակախաղերը, տղայական խաղերը... Իմ ուշքն էլ գնում է դրա համար, նախանձում եմ. կարպետի տակից թրթուրասող եմ տալիս...

— Կաթնոտեց, երկինքը կաթնոտեց... Հրե-հե... Ոնց ա շաղվում-փստրվում, մտիկ արա, է...

Սայլի առաջնամասում բոյով մեկ կանգնած է, սիրում է այդպես ինքն իրեն ցուցադրել, երևալ-երևակայել: Տաքացած բույնս թողած, կառչում եմ նրա ծնկանն ու պինդ փաթաթվում: Նայում եմ վեր՝ փայլ ու գույնը կորցրած մի քանի հատիկ աստղ է մնացել, որ ուզե՞նամ կհաշվեմ: Չյան խոշոր փաթիլներ են, որ հավվում-չքանում են աչքիս առջև: Ու հանկարծ, ինչ-որ մի լեռան կատար կրակվում է, բոց դառնում, ցալքուն է տալիս երկար շիթերով: Հետո դեղին ու հաստ թոկերով իրար են կապվում սարի գագաթները ու դրանց վրա, ճոճվելով, հայտնվում է արևը... Երևում է արևը իր հազարավոր տեսքով... Թառում է ամենաբարձր սարի ուսին... Նայում է մեզ...

— Բարի լույս... Եկել եմք մեր գործին...

— Վերին իրավունքով բարով եք եկե ձեր գործին...

Սայր հոգսաշատ մորս ճոճանից է արել, դանթում է հորիցս թաքուն, բայց արևը դառնում է նրան, պեծոտ ճառագայթով կրակում է կոպերին. ցնցվում է, մեղավոր նայում դեսուդեն: Ես ծիծաղում եմ...

Արևը դանդաղ պոկվում է տեղից, լողում դեպի վեր՝ կապույտ երկինք...

Հմայվել է հայրս, լարի պես ձգվել է դեպի վեր... Բարձրահասակ, երկարոտ, վիթխարի ուժի տեր: Հունձ անելիս, մեջքին կպած թաց շապկի տակից տեսնում էի նրա ձիգ ողնաշարի ամեն մի ողը առանձին-առանձին, խոշոր ու շարժուն...

— Սարերը քնից քեզարել են, է...

Տականից նայում եմ իրեն. զարմացած եմ, բաց չեմ ծիծաղում. հայրս է՝ հավատում է, ես էլ եմ հավատում՝ սարերը քնում, արթնանում են: Արթնանում են լայնալանջ դոշերն ուռցնելով, տնքալով, հորանջելով...

Լուսաբացին հանդերում օդը զարմանալի համ ունի՝ ծաղիկների գիշերվա ցողն է գոլորշիանում, աշխարհը լցնում բույրով: Չարթնում է բնությունն ամեն առավոտ, հսկա երեխայի նման ճմլկոտալով, նորածնի սքանչանք ու հոտ արձակելով...

Հորս կողքին եմ, մորս կողքին եմ, նրանց մեջ եմ, նրանց հետ. քոլը, ծաղիկը, սարն ու քարը, մեր ժառանգ եզրը, արևը ինձ համար են, և իրենք էլ առանց ինձ պակաս ու պռատ էին լինելու..

Իրենցից եմ ելել...

— Օհ-հե-հե-հեյ-յ-ն...— ձեն է տալիս հայրս:

— Օհ-հե-հե-հեյ-յ-յ...— ծղրտում եմ ես:

Հենց այնպես եմք ձայնում, ցեղի նույն արյան պահանջով: Թող լավի... ժառանգն ականջները խլշկոտում է, սև մորթու տակ

մկանները խաղում են, պար են բռնել, եոքը բլթբլթում է ներսը,
լուծը ծուլեծու է անում՝ իբր, ինձ չմոռանաք, ձեզ հետ եմ...

* * *

Հացը դեռ տաք է, մոխրահամ և շատ համեղ: Բոքոնը՝ ձեռքիս
նստած եմ գերանի վրա: Հսկա ծառաբուն է գերանը՝ ժառանգն
է դուրս քաշել անտառից, մենակ: Մի ամբողջ ձմեռվա փետ ենք
անելու, վառելիք: Մանրմունք բաների հետ հայրս գլուխ չունեք.
մտել է անտառն ու ազահաքար ջոկել:

— Սրան մի շաքաթում վեր կգցես:— Ծիծաղել են ընկերները:

— Չէ, մի օրում:

— Օխտը հոգով եք կտրելու...

— Մենակս:

— Էդ հո պոտոտահան կլինես, այ տա...

— Ձեր բանը չի:

— Պահ...

— Բա...

— Հետո... Էս խորխորատից ո՞վ ա հանելու, տո՛, խեղճի
տոպրակ:

— Ժառանգը:

— Պահ...

— Բահ...

«Տղամարդու գործն ու գործիքը պետք է իրեն սազի՝ քաշին,
բոյին...» Ասում էր հայրս ու հատուկ պատվիրում՝ կացինը սո-
վորականից մեծ, լինգը հաստ, բահը լայն, գերանդին երկար,
ժառանգը... հսկա:

— Փղի ուժ ունի, հավատա... Աշխարհ ման արի, սրա նմանը
չկա, չես հանդիպել... — պարծենում էր խնամած-պահած եզով:
Օրը վերջացել է. խաղաղ երեկո է, Լոռվա երեկո... Գերանին

Ճատած են մայրս ու մեր հարևանուհին, գործները վերջացրել, միավար գրույց են անում, արանքներում, իրար վարակելով ձայնավոր հորանջում... Հացը ծամելով, նայում են վերև. աստղերը գարու ոսկյա հատիկներ են... Առավոտյան բուռ-բուռ շաղ ենք տալու մեր չափալուտորիկ հավերի առաջ:

Կշտացա... Պսոկում են գերանի վրա, ոչինչ չեմ մտածում, բան չունեմ մտածելու: Սուսուփուս երեկո է, աշխարհը լիքը աստղեր, մեր բակից ծխի հոտ է գալիս, ես կիսամերկ եմ ու բոբիկ, բայց օդը տաք է, հողը տաք է, ժառանգի բերած գերանը՝ լայն, հարմար... անտառահոտ...

Կոպերս փակում եմ ու աշխարհից վարագուրվում... Ծոփկները կանչում են իրար... Մորիցս խմորի հոտ է գալիս... Մեր Մարալ կովը բացօթյա է կապած, պարկել է իմ կողքին, ու ես նիրհի մեջ արդեն լսում եմ, թե ինչպես է ծամում իր հավերժական ծամոնը... Ղըրճ, ղըրճ, ղըրճ...

* * *

Տարվա բոլոր ժամանակներում Լոռին հրաշք է, իսկ աշնանը՝ հեքիաթի սկիզբ: Աշնանային իր կախարդանքներով գնալու է, գնալու և հասնելու, մտնելու է խոր ձմռան մեջ, հեքիաթասեր Լոռվա ձմռան մեջ...

Թվում է, աշնանը բնությունը կանգ է առնում՝ ինքն իր ստեղծածով հիանալու, ինքն իրեն ընթռշխնելու... Սարալանջերի անտառները՝ հազարագույն, աղբյուրների քչքչոցը՝ քնքույշ, մեղմ, տափուկ, դաշտերի հողը՝ փխրուն... Հողը ոտքիդ տակ փոված, բերքի հետ հասունացել, ճկնկվել է՝ պատրաստ տրորվելու, բացվելու, ի ցույց դնելու մի ողջ ամառ թաքցրած հրաշալիքները: Վայելիր...

Իսկ հայրս՝ ճակատին քրտինքի խոշոր կաթիլներ, ժպտում է... Լոռում բերքահավաք է: Հայրս ու հողը հրաշալի գույգ էին. հողը

սիրում էր նրան, նրա ցանածը դուրս էր գալիս: Քրտնում ու ժրպտադեմ է, քրտինքը շաղ է տալիս հողին ու այդպես գումարվում են, բնական ու պարզ դառնում են մի...

Ամեն իրիկնադեմի աթարակրակ ենք անում, կարմիր կրակ ենք անում, կարտոֆիլ խորովում: Կարտուլը կամ կարտուփը, ինչպես կասեր բուն լոռեցին... Մայրս, մատներին փշելով, քերում է կեղևի այրված տեղերը, երկարուկ պալարները սարքում կարմրաթուշիկ հարսներ, խնոցու կարագը քսում ենք դրանց մոռութներին ու... Ու՛ աստվածների կերակուր:

Խնոցին չկա, կովը չկա, կովը չկա, հայրս էլ չկա արդեն. ժառանգի անունն է մնացել, հուշեր են մնացել...

Եզները քաշում են պոնկեպոունկ քարձած սայլը: Ժառանգի լուծընկերը՝ նույնպես խոշոր մի կենդանի, մեջքը կորացրել է, ծնկներին գոռ է տալիս, չարչարվում է շնչահեղձ: Փնտրեց, փընտրեց հայրս, տարին մեկը փոխեց ու այդպես էլ ժառանգին հավասարը չգտավ, չճարեց, իրոք չկար:

Ժառանգը լայն ու հաստ կնդակները խրում է փխրուն հողի մեջ, տղայական չարությամբ, ետևի աջ ոտքը քաշելիս, հողը շարտում է մեր կողմը, թոզ անում: Բեռն ինչ, ծանրությունն ինչ՝ մի ամբողջ օր ազատ, անգործ է եղել, արածել է ուզած տեղը, մրափել պորտը տաք գետնին տված, անտառի թավուտներից հոսող աղբյուրի հետքով գնացել, ծարավը հագեցրել է սառն ու գուլալ ակունքից, հզոր վիզը դարավոր կաղնիների բներով է քորել...

— Հլա սրան, հլա սրա գծություններին, հլա ինչքան եմ էրես տվել... — իբր բարկանում է հայրս, բայց հիացմունքն այնքան է շատ, որ հազիվ է թաքցնում՝ հաճույքից խնդխնդում է, բեկբեկվում է ձայնը տարօրինակ երանգներով... Ժառանգը ծանր գլուխը թեքում է, հորս հասցեին օդը պոզահարում՝ իբր նեղանում էս, նեղացիր, քեզ ով է բանի տեղ դնողը, իբր՝ դեռ շնորհակալ կաց, որ սրան, այսինքն՝ զուգընկերոջ, ակի տակ չեմ կոխում...

Մթան թանձրանալու հետ ածխասև ժառանգն աներևութա-
նում է, ու նրա պոզերի սպիտակ ծայրերը ինձ համար դառնում
են թռչկոտացող լուսատիտիկներ... Տերևուքի փափուկ խրձի
վրա թեք տված, հայրս դնդնում է իր սիրած «Վարդ կոշիկս», մեր
ընթացքին չի հետևում. ժառանգը գիտի, որ ձմռան պաշարը տա-
նում ենք տուն:

Դեռ շարժվելուց առաջ, հանգչող կրակի հետ խաղալիս, գտել
եմ երկարուկ, տաքուկ, մոխրի մեջ դեմն առած մի կարտուլ: Չեռ-
քիս է, խաղում եմ հետը, հետո եմ ուտելու... Մեր առջևից գնա-
ցող մի ուրիշ սալի ենք հասնում, դեմ ենք առնում ու հարմար-
վում նրա ընթացքին:

— Հո, հա, հո, հո, հո... — վարոցն ու եզներին չխնայելով,
թարսվել է սալապան Ուհաննեսը, մեր առջևից գնալը պատիվ է
համարում, ճամփա չի տալիս: Հորս հին ընկերն է թեև, ու մթան
մեջ խիստ հարմար է ուրիշի հետևից գնալը, բայց... Բայց դըն-
դընոցը կտրում է, թեքվում դեպի աջ:

— Հը, հատա՞ր, կտրվեցի՞ր, խալխի պո՞չ ես... — մտրակը
ճտթացնում է ժառանգի փորատակերին: Ամենավիրավորական
բանը նրա համար: Խոցվում է ժառանգը, ֆոշտոցով լուծը թափ
է տալիս, ընկերոջը հրում ձախ, մղվում, պոկվում է ու համարյա
քառատրոփ շրջան անում: Ուհաննեսի եզները հուշտ են լինում
մի կողմի վրա...

— Խա-բար-դա... հաղթական հռհռում է հայրս:

— Խաբար-դա-ա-ա... — քրքջում եմ ես: Մեր թիկունքից ար-
դեն լսում ենք Ուհաննեսի հայհոյանքները:

— Դու ե՞րբ տես մարդ դառնալ, Ջանջալանց շաշ, երբ տես
լրջանալ, թու հա, թու հա...

Մեր պետքը չի, խնդխնդում ենք, հրճվում ենք՝ հայրս, ժա-
ռանգը...

Դեռ տաք կարտուլը ջարդում եմ, երկու կես է լինում: Սրսուռ,

խոշոր բրնձի հատիկներ՝ բուռն են լցվում:

Մի քիչ տալիս եմ հորս...

* * *

...Հոլ արա, եզո, ջան, ջան, ջան...

Այսպես ու սրա նման, երկար ու ձիգ դարեր երգել ենք: Ապա-
վիճել ենք նրա ուսին, վաստակել հանապազօրյա հացը: մեր:

...Ախպեր ջան, եզո ջան... Տորենը ինձ, դարմանը՝ քեզ...

Անմոռունջ քայլեց մեզ հետ մեր կյանքի բավիղներով, ծառա-
յեց հավատարիմ, անդավաճան, բանեց ու բանեց... Լուծը դրինք
վիզը, քշեցինք ուր ցանկացանք, երբ ցանկացանք՝ շոգին, սառ-
նամանիքին, անձրևին, ցեխին... Քամեցինք ուժերի վերջին կա-
թիլը, իսկ երբ սպառվեց, հատավ, ծերացավ, դուրս չարինք, դեն
չգցեցինք, ազատություն չտվեցինք, չէ... Կաշին ոտնաման սար-
քեցինք, ոտները...

...Եզո ջան, ախպեր ջան... Ակոս արա...

Եկավ կուլեկոտիվացումը,՝ արճճե ծանրությամբ պառկեց մեջ-
քին...

Դե, քաշի, գնա մտիր հնգամյակը, կառուցիր նոր աշխարհը:
Էլ ինչ ախպեր՝ համայնական ես... Ծիպոտը ջարդվում էր, եղա-
նի կոթը ջարդվում էր, նրա կողերը ջարդվում էին... Ո՞նց թե չես
դիմանում, բա ես ո՞նց եմ դիմանում...

Քու տիրոջ...

...Ախպեր ջան...

Արևածաղիկը հասել էր: Բաթատները յուղոտ դեղնությամբ
մի քանի սալաբեռ կիտված են մեր բակում: Փեչտե կարճ թա-
կոցներով թմբկահարում ենք դրանց կլոր-լիստիկ մեջքները՝ սերմը
թափում գետնին փռած կարպետների վրա: Մեր տան դիմաց այն
ժամանակ մանկատունն էր. եղեռնի սարսափներից հրաշքով
փրկված երեխաներ: Երան-երան լցվում էին մեր բակը, իբր՝ օգ-

նելու, քիչ ու միչ բզբզում էին ու հայդա, գրպաններն ու ծոցները լիքը, ծլկում: Ես օգնում էի, որ գողությունն աննկատ անցնի, մայրըս փնթփնթում էր, հայրս՝ աչքերը վրան ոլորում:

— Թող տանեն... Բռնացի... Իրենց տունը չի՝ իրենց երկիրն ա...

Դատարկ բաթառներից արդեն մեծ բուրգ էր գոյացել: Ազատ արձակած կով ու հորթ, և, իհարկե, մեր զույգ եզները իրար խառնված ուտում էին ագահորեն, ախորժելի չմփչմփոցով: Երկտարեկան շատ սիրունկ, կարմիր մի երինջ ունեինք (ապագա կովացու, մորս հույսը) բուրգը կոխկրճելով վերևացավ, ընկավ ժառանգ եզան առաջը: Սա լուծ քաշելիս չէր հանդուրժում իրենից առաջ ընկնողներին, ուր մնաց թե... Մեկ-երկու դժգոհ փընչացնելով, թեթև պոզահարեց այնպես, կողքանց, կարծես հասկացնելով, թե տեղդ ճանաչի... Բայց պնդերես էր կարմիր երինջը, երես առած... Ու հանկարծ աղիողորմ, սարսուզոյ մի բառաչոց տարածվեց թաղով մեկ: Ժառանգն այդ տասը փթանոց կենդանուն պոզերին առնելով բարձրացրել էր օդ, հիմա թափ էր տալու գլուխն ի վար:

Վազ տվի ահաբեկված, կպա մորս փեշերից: Որբանոցի երեխաները խելահեղ ճիչերով, վայնասունով մի ակնթարթում ցրիվ եկան պատերի տակ, չորացան...

— Հեյ-հեյ, ժառանգ...— որոտաց հայրս:

Արձանացավ ժառանգը... Փշաքաղված մի լուռություն տիրեց մեր բակում: Զարհուրելի այդ տեսարանից, վտանգի սպասումից բոլորն, ասես, ընդարմացան: Անճոռնի ձև ընդունած երինջն էր միայն լեզուն դուրս գցել, աչքերում մահ, տարօրինակ մկկում էր այծի պես, ողորմություն հայցում:

Եվ մեկ էլ շեկլիկ Ոսկին՝ որբերից ամենասիրուն աղջիկը, ընկել էր գետնին, գլուխը թաքցրել մի քարի տակ ու՝ չէ, չէ ասելով, դողում էր հիստերիկ լացի մեջ. «Չէ, չէ, խնայե, չէ չէ, չէ...»:

Կարծրացավ հորս հայացքը, դաժանացավ, սևումութ ատելու-

թյուն կար սև եզան հանդեպ. պրկվեց, լարվեց տեղում ու գո-
նաց, որոտաց կրկին կատաղած, հրամայական, անողորմ ու
սպառնալի.

— Ժառանգ... Ժառա-ա-անգ, անելու չես էդ բանը...

Եվ հրաշք կատարվեց... Բիրտ ու անվախ այդ եզը զգուշու-
թյամբ երինջին դրեց ցած: Պարզեց կյանքը: Հաղթահարեց իր
մեջ սպանելու անասնական տենչը, բայց ալեկոծված էր խիստ:
Երկար պոչը ջղային զարկեց կողերին, գլուխը թափահարելով
նետվեց դեպի ցանկապատն ու բառաչեց իսկական գազանի
նման մոլեգնած, ամեն անգամ փրփրած դունչը դեպի երկինք
շարտելով... Չէր հանդարտվում, երկաթյա պայտերով պատռում
էր գետինը, ու վայրի էր տեսքը, վախենալու էր, օտար էր...

— Անտեր անեմ քեզ,— շնչաց մայրս,— քորփա երեխուս
ոնց վախացրեց...

Այդքան սիրթնած հորս երբեք չէի տեսել: Ասենք, մի ան-
գամ, ձմռանը հիվանդացել էի, բժիշկը նար չէր գտնում, և հայրս
հենց այդպես, հենց նույն շփոթված ու մտահոգ աչքերով էր նա-
յում ինձ:

Այդ օրը այլևս Ժառանգին չաշխատեցրեց ու չհեռացավ կող-
քից: Ղաշավին ձեռքին, թիմարում էր փորատակերը, մաքրում
պարարտ մեջքը քրտինքից ու դաշտերի փոշուց սառը ջրով լվա-
նում էր նրա խոշոր աչքերն ու հետն էլ ինչ-որ խոսում, պատմու-
թյուններ անում, երգում... Մարդացնում էր նորից, դարձնում ըն-
տանի...

Ժամանակ առ ժամանակ ըմբոստության պես մի բան ծառս
էր լինում Ժառանգի մեջ, արթնանում-փոթորկում էր նրա թմրած
արյունը, որ բողոք էր դառնում կարծես՝ ինչո՞ւ ես այն չեմ, ինչ
որ եղել եմ, ինչ որ կամ, ինչո՞ւ եք զրկել, ինչու չեք թողնում:
Երբեմն արարքներ էր անում, որ եզանը հատուկ չեն, երբեմն
հարազատի պես մտերմիկ կանգնում էր Մարալ կովի կողքին՝
աչքերում խոր թախիծ, անհույս կարոտ: Գլուխը դնում էր Մա-

րալի /մեջքին, անօգնական ու շփոթված ծանր տնքում էր, ծանր տնքում էր...

Յնգվեց և որբերի կոշտ ու ցուրտ աշխարհը, դառը կորիզ անց կյանքը: Ծիչ-աղաղակով, ծղրտոցով, փոքրիկ գիշատիչների նման հարձակվեցին փրկված երինջի վրա. փարվում էին պարանոցին, իրար ձեռքից խլում, փաղաքշում, քաշքշում: Խենթացել էին ուրախությունից, ասես սրանից հարազատ ոչինչ երբեք չեն ունեցել, կորցրել ու գտել են ահա...

Հետո բերնեբերան այս եղածը, պակաս-պուստը լրացրին, դարձրին հրաշք-հեքիաթ՝ լաց լինող երինջներով, խոսող եզներով, գթությունով... Ու արդեն պատմում էին իրար բարի վախճաններով հեքիաթներ...

— Իմաստուն ա,— ասում էր հայրս,— ամեն բան գիտի: Խոփը գցես ակոսը՝ կգնա, էլ ծռել չկա... Մի խոսքով, ուստա էր, այ տա, նրա արած գործի մեջ հարամություն չկա: Լծվե՞ց՝ հասկանում ա ինչ գործի ենք գնում, ուր ենք գնում... Ու բեզարել չկա: Գիշերվա ճամփեքին գայլի հոտը քամուց առնում էր, ինձ իմաց անում: Արձակում էի... Ահը կտրածը պոզերը սրում էր ու մոնչալով մտնում խավարի մեջ... Դե, գել ես՝ արի, դե դիմացի... Բա... Առավոտը ծեգին, որձակները դեռ չկանչած, զարթնում էր, որ շաղոտ խոտերում արածացնես, որովհետև աշխատավոր էր, հատուկ էր, մի հատիկ էր, իմ հույսն էր... Իմ կամեցող-չկամեցողին էլ էր ջոկում: Մինը կար՝ մի ավազակ, գող շանորդի... Ծատ վնաս տվեց: Մի օր, մթնշաղի հետ, հասա Քարի բլուխը, տեսնես՝ հրե, դեզը կոկիկ կանգնացրել ա... Ժառանգին արձակեցի, ասի՝ էս էն ա, էն ավազակի դեզն ա, մնացածը դու գիտես... Ծուռ տվեց, շաղ տվեց, ավերեց դեզը... Ծաղկած տեղերը կերավ, կշտացավ, վերջում էլ պոչը տնկեց ու մեջտեղը մի լավ թրքեց. բա... Էքսի օրն էդ մարդն եկավ ինձ գտավ:

— Գանգատ եմ անել, դեզս դու ես փչացրել:

— Չէ, ասի ես չեմ:

— Բա էլ ով ա...

— Ժառանգը...

— ...

— Բա...

Տարիներ շարունակ հիշում էր, պատմում էր միամիտ հավատով, տղայական ոգևորությամբ, որբանոցի երեխաների նման Ժառանգին առասպել դարձրած:

...Վար-վար արա, ախպեր ջան...

— Իմ մերն ու քու Մակա տատը... Անհրապը վռագեց, շուտ գնաց, դու չես հիշի... Հա, ինչ էի ասում: Ժառանգն առչառությունից նոր էր դուրս եկել, լուծը չէր սիրում, դժվար էր ընտելանում... Հա... Ախր անհաշտ էլ էր: Մի առավոտ համբերությունն հատացրեց, ջգրված ճվացի ու ինձ կորցրած, ականջը մի թունդ ոլորեցի... Սա կատաղեց, մոռնչաց ու պոզը խրեց կոնատակիս: Տեր աստված, էն ինչ ձեռն հանեցի, էն ինչ ցավ էր. աչքերս մըթնեցին, էլ չհասկացա, թե ինչ եմ անում... Երկաթի սամին քաշեցի ու տվի: Սա վրա պրծավ... Խփում եմ որտեղին հասնի, ուզում եմ թե սպանեմ... Ես գոռում եմ, ինքը գոռում ա, նեղում ա ինձ, նեղում ա ինձ, ուր որ ա մեխելու ա ինձ պատին:

Մակա տատդ հասավ, մեջ ընկավ, եղանի կոթով՝ մեկ ինձ, մեկ իրան, մեկ ինձ... Մի խոսքով, բաժանեց մեզ: Բա... Ու տեսնեմ լաց ա լինում...

— Էդ ո՞ւմ համար ես լաց լինում,— հարցրի:

— Ե՞ս եմ քեզ ծնել,— ասում ա,— անխիղճ շուն:

— Այ, անաստված կին, այ անգութ, արյունս ծոցս ա լցրել, չե՞ս տեսնում: Բա... Հասկացա՞ր... Եզան դարդին էր, լաց էր լինում:

...Քաշիր, քաշիր, ուսիդ մատաղ, եզո ջան...

...Գութան չըլներ, աշխարհն ինչ էր...

— Տղա, գարթնի, կովն էս գիշեր ծնել ա...

Վերջին խոսքերի վրա սայթաքում է, ձայնը կերկերում է, դառնում խնդխնդոց ու չես հասկանում՝ լա՞ցն է զսպում, թե ծիծաղը:

Մի հարցնող լինի՝ ի՞նչ էս ուրախանում, այ մարդ: Քանի՞ ծնած կով կլինես տեսած, չսովորեցի՞ր, չընտելացա՞ր, չձանձրացա՞ր: Հայրդ, պապդ, պապիդ պապը... Հիմա ո՞ւր հասնենք. տեսել եմ, անգիր եմ արել, հենց կով ծնեցնելով եմ ապրել, հիմա դու ի՞նչ էս տղայի նման թրթռում, ինչ էս խառնվել, ինչո՞ւ էս քունս ի՞նչո՞ւ պարում... Հերն էլ անիծած, կով է, էլի, ծնեց, իրեն գործն է, ուզում է ծնի, ուզում է չծնի... Դեռ գիշերն էլ չես քնում, հսկում էս, որ մեռակ չմնա, դեռ վերջում էլ ավելացնում էս խընդալով.

— Մի վեր կաց տես, պեծը հորթի ճակատին ինչքան ա սիրուն, ինչքան է մոր նման, այ տա, հորն էլ ա նման...

Մանավանդ դու... Դու ինչո՞ւ պիտի սիրես քո մի հատիկ, անհատական կովին, ո՞ր իրավունքով, դա ի՞նչ անցյալի մնացուկ է քո մեջ, ընկեր այսինչ ու այսինչյան...

Ռանչպար էր...

— Մեղր, մեղր, լավ մեղր...

Կիզիչ արևի տակ խաշվելով, օրվա ամենաթունդ շոգին, աներևակայելի մեծ մի խրճակապ խոտ մեջքին, քերել հասցրել է տեղ, շոտ է տվել դատարկ գոմի առաջ, ինքը կռնակը հարևանի տան պատին հենած, ձեռքերը ծնկներից պազել, մտահավաք-մոայլոտ թուրթուն է քաշում:

— Մեղր, մեղր... Լավ մեղր... Անարատ մեղր... — քրտնած բարակ մի ձայն մեր փողոցով բարձրանում է վերև: Մայրս տաշտի լվացքաջուրը պատշգամբից շփում է դուրս, օճառոտ ձեռքով

տրորում է ճակատը, արևից աչքերը կկոցելով նայում է ձայնողի
հետևից:

— Հողեմ ձեր գլուխը, չէ, չեմի, անարատ, անարատ բան
թողի՞ք... Կարգին հուզվում է մայրս: Նրա հետ ինչ գործ ունի,
ինչ է ինքն իրեն ուտում:

Ժառանգին տարել են կոլխոզ: Սայլը, գութանը, ամեն սարք
ու կարգ... Չկա: Տկլոր է մեր հայաթը: Մորս հույս կարմիր երիցն
էլ չկա. ով գիտի ո՞ր համայնական գոմում, ո՞ւմ կողքին է կա-
պած:

Երեկ էլ կարճբոյ-կարճամազ կատարածու Ելենը պատից խա-
լին պոկեց տարավ:

— Հարկերը, պետական հարկերը...— թեժ-թեժ խոսեց ու
տարավ: Որ կողմը նայում ես՝ ամայություն է: Մնացել է պառա՛-
ված Մարալ կովը, որի ձմեռվա խոտը հայրս, մանգաղը ձեռքին
(մանգաղը կնկա բան ա, այ տա...), սարուձոր ընկած հայթհայ-
թում է, բերում հասցնում տուն շալակով: Լոռում երևելի հնձվոր
հայրս... Հաճախ անշարժանում է մի դիրքով, երկար, պինդ ու
դժվար մտածում, ինչ-որ բան է ուզում հասկանալ, բայց երևում է,
չի կարողանում: Հիմա երկար ու երկար նայում է իր բերած
խորձին:

— Տղա, հավատա՛ տասը փութ կլինի:

Գուցե չափազանցում է, բայց միևնույն է, ես դեռ ոչինչ չեմ
հասկանում, առավել ևս՝ փթերից. հավատում եմ:

Կոլեկտիվացում էր: Հայրս դեմ չէր՝ աշխարհով ա, այ տա...
Էս ա...

Ժառանգին ինքը տարավ դարձրեց համայնական՝ ինչ կլի-
նի, որ ամեն մարդ իրա եզր բանացնի: Առաջարկում եմ...

Ձէ, ասել էին, վերևից հրահանգ կա, ամեն ինչ ընդհանուր է,
մոռացիր: Ու ժառանգին կցել էին Մնացականին:

— Էդ ո՞նց, էդ ինչի՞... Դա ո՞վ ա, դա ո՞ւմ շունն ա, որ իմ
ժառանգին բանացնի, էդ ինչի՞ ա տեր կանգնում իմ պահած

Ժառանգին... Դրա պահած մի գույգ եզը երկու պոզ ունեն, մի պոզ... Իրենը տվեք իրան...

Ժառանգի հետ գնաց, մենակ եկավ՝ խոռված, անհաշտ:

— Մեղր, մեղր... Լավ մեղր... — Էլ ավելի նեղացած, անգույն ձայնը ծորում է ցած, վերջնականապես հուսահատ ելեվեջներով մոտենում է մեր դռանը: Գույնը խամրած կապույտ կնուճը շալակին, ծերացող կամ արդեն ծեր մարդ: Նստում է քարին, գդակը հանում, թեթևացած շունչ առնում: Գլուխը դեղին էր, երկարուկ, ծիծաղա եկավ, մտածեցի՝ հասած կամ որթնած սեխ լինի ոնց որ... ճակատը արխալուղի փեշով սրբում է: Ծույլ-ծույլ մի քիչ առևտուր արին: Մորս անխոս հերստությունը չափ չկար: Տեղին էր նրա վրդովմունքը, որովհետև մեղրը, մեղր էր նրանով միայն, որ ծորում էր, մնացածը հայտնի չէր... ծերուկն ինքն էլ էր զգվում իր սպրանքից ու չէր գոլում, անտարբեր նստել էր, կարծես եկել էր մեր տուն հանգստանալու: Սառը ջուր ուզեց ինձնից, խոշոր կումերով խմեց, ողորմի ասաց մեր անցավորաց, փողն առավ ու գնաց:

Հայրս նորից սուզվել էր մտքերի խորխորատները. ծխախոտը նորից փաթաթեց, դանդաղ, խնամքով ու անսպասելի աչքերը խոժոռեց վրաս:

— Պիտի առնեիրք... Մեծ մարդ ա, էս շոգ կրակին, արևի տակ քարշ ա գալիս...

Ոչինչ չեմ պատասխանում, բայց առարկողն ու անհամաձայնը ես հո չեի՞, մայրս էր:

— Ծանաչում եմ,— շարունակեց հայրս,— Յաղդան գյուղիցն ա, բերձեն ա... Փախել ա գյուղից... Չարչի ա դառել, ոանչպար էր շան որդին... Հա... Բա էս ո՞նց կլինի...

Անիծյալ քրտիները վերևից գլորվում, սողում է ու նորից մըտնում նրա աչքի մեջ: Խեղճ հայրս անօգնական ճպճպացնում է, ճպճպացնում կոպը ու դարձյալ մի աչքը փակում, դառնում մի աչքը հանած...

Հանկարծ ծիծաղում է:

— Անունը մեղր ա, կերեք...

* * *

Մնացականին կարգեցին գյուղխորհրդի նախագահ: Դատեցին հորս, նստացրին բանտ, հետո քշեցին Ալավերդու պղնձի հանքերը աշխատելու: Համարյա երկու տարի չտեսանք իրար: Ինչու էր մեղադրվել՝ չգիտեմ, բայց կարծում եմ՝ կոլեկտիվացումը բոլկոտելու համար... Չնայած հետո, տարիներ հետո, հայրս մտածմունքն ընդհատում էր հանկարծ ու քնծիծաղ տալիս.

— Վայ, Մնացական, վայ...

* * *

Չորում, կամուրջից մի քիչ վեր, գետի ձախ ափին սպանդանոցն էր: Նրա առաջամասը ցանկապատել էին, դարձրել «Մսի մթերման գրասենյակի» կայան: Տավարն անում էին այդտեղ, մի քանի օր պահում, այսինքն այնքան, մինչև վերևից մորթելու հրահանգ գար: Դրանց կեր տվող չկար, անհմատ էին համարում... Նույն տեղում պտտվում էին անօգնական, հունցում մինչև պորտները հասնող լոպոպ ցեխը: Հարյուրավոր անասունների աղիողորմ բողոք-բառաչները խառնվում էին իրար, խառնվում էին գետի շառաչին, դիպչում հանդիման ժայռերին, արձագանքվելով գլորվում ձորով ցած, լցվում խուլ ու մութ անձավները, խլանում, խեղդվում...

Հինավուրց ձորը շատ բան էր տեսել, այդպիսինը՝ երբեք...

— Քու տիրոջ... — Քթի տակ քամահրանքով փնթփնթում էր քաղաք իջնող գյուղացին, անցնում էր Կարմիր կամուրջը ու այլևս հետ չէր նայում...

Եվս մեկ օր՝ ու արդեն սովահար անասունը ուժասպառ, դատապարտված կանգնում էր...

Հայրս կալանքից վերադարձել էր. ձորը կտրում, գնում էր Սարիբեկ պապիս գյուղը՝ Ագարակ, հաց-մաց հայթհայթելու... Կամուրջն անցնելիս, նկատել է Ժառանգին:

— Տեսա, հրեն պատի տակ կանգնած, գլուխը քարշ արած. համա էլի ջոկվում էր, սար էր... Մոտ գնացի, ձեռն տվի. ճանաչեց: Հրմշտեց, դես-դեն արավ, ճամփեն բացեց, մոտեցավ: Ժառանգը... Չոլախին էր տալի, դունչը գետնին քսելով, ցավից տրեքավով մոտեցավ... Տեսա՝ պճեղները ջարդված են: Բոքիկ լծել են... Փչացրել են շխտողին... Կանգնել ենք դարպասի երկու կռնանը, մտիկ ենք իրար անում:

Ասի՛ Ժառանգ...

Մզզաց... մզզաց...

* * *

Ամռանը բլթբլթում է մենավոր մի ժայռի տակից, զմրուխտ-զմրուխտ փշրվում ճալաքարերի մեջ, քշքշում, լցվում խոտերի տակ, սուսիկ-փուսիկանում ու այդպես անաղմուկ հագեցնում, ծլացնում, շենացնում է աշխարհը...

Փոքր է, բայց սառնորակ է, մաքուր ու զուլալ է, զարդ է, բնությունից է...

Ինչ-որ մի եկվոր էլ, փոխանակ ծարավը հագեցնի ու անցնի, գնա, չգիտես ինչու, որոշում է փոխել նրա հունը. կարծես աղբյուրը սխալ է հոսում, սխալ է կարկաշում, սխալ տեղից...

Լոռին լեցուն է աղբյուրներով, հարուստ է: Ամեն գարուն ձյան տակից, ձնծաղիկների հետ նորերն են ծնվում... Սարերը կենդանացնում են իրենց զրնգուն ձայներով, շունչ են տալիս... Անմահ է կանաչագեղ Լոռին իր բյուր աղբյուրներով, միայն թե՛ հոսեն... Հոսեն վերևից ներքև... Բնականոն...

Բարի լույս արևին...

Բարի լույս... Վերին իրավունքով բարով եք եկել ձեր գործին...

ԵՌԱՆԿՑՈՒՆԻ

Հեր-հեր գյուղի մոտերքից, սարն ի վեր, դեպի լեռնանցքն է բարձրանում անտառը: Նրա տակ, քիչ թեքություն ունեցող հարթության վրա, անտառից անջատ, կանգնած էր մեն-մենավոր մի ծառ: Տակի կանաչը՝ խիտ գործած ու կոկիկ խուզած գորգ, հսկա մի գորգ, որ հատուկ փռել էին նրա համար. ինքը բարձր ու սլացիկ, հզոր սաղարթը գլխին, տարուբերվում էր քամուց համարյա աննկատ, ու ինձ թվում էր՝ արժանապատվությամբ: Անտառի հետ նույն կյանքով էր ապրում: Հեովից... «Ձեզ նման եմ, ձեզ հետ եմ՝ պարզապես նեղվածք չեմ սիրում...»

Ամեն անգամ անցնելիս, գերվում էի նրա անկախ մեկնությամբ, նրա հպարտ ու խրոխտ տեսքը սրտիս ուրախությունն էր պարզևում. երբեմն էլ չկնքված մի եղբայրությունն էի զգում մեր միջև, հենու-հենավոր հարազատ մի կապ: Բայց այդպես էլ չհամարձակվեցի մոտենալ, չիմացա ինչ էր, ինչ ծառ էր...

Ինչո՞ւ հիշեցի...

Ծանր հիվանդացավ հայրս: Տանջվեց մի քանի երկար ամիսներ: Գանգատվեց մեկ անգամ միայն, մի մութ, խոր գիշերով: Բուժքույրը տեղացի, սիրունատես ու տոռուզ մի կին, քնով էր ընկել, երևի:

— Տղա, ցավերս անաստված են, գնա էն ջահելիին ձեռն տու, գա: Համ էլ կներես, որ զարթնացրի քեզ:

Այս էր նրա եղած-չեղած տրտունջը, նրա տված նեղությունը...

Աշխարհ եկավ ու ապրեց նույն տեղում, ուր բուսնել էր, տեղահան չեղավ՝ արմատները խորն էին: Աշխարհ եկավ, տեսավ արևը, ջուրը, կանաչը, տեսավ ծեռ, կին, զավակ, ընկեր, հեր... Ծարունակվեց... Ապրեց բարդ ժամանակներում ու բարդ, իրար հակասող պոռթկումներով հոգու, հաճախ անբացատրելի արարքներով, տրամադրություններով, շատ անբացատրելի... Եվ մի օր

Էլ որոշեց ծերանալ ու գնալ: Հոգին բեզարեց, թևերը կախ ընկան, մաշվեց... Հիմա մեռնում էր...

Ով գիտի, վերջին հարվածնե՞րն էին կոշտ թե ծնած պտուղների մեջ դառը շատ էր, կամ հողից կտրել էին, կամ, պարզապես, ճակատագի՞ր էր: Իսկ միգուցե մենակությունը դարձավ դատարկություն՞ն:

Մայրան Հենրիկը սկսում էր «Եռանկյունի» ֆիլմը: Ես պետք է դառնայի վարպետ Մկրտիչը, հարազատների կորուստը տեսած մարդ, որ Վան հայոց քաղաքից ընկել է Ամերիկա, մեն-մենակ ապրել է կարոտը սրտում չմարած ու վերադարձել Հայրենիք: Դարբինների միաբանությունը նրան ընդունել է իր շարքերը: Օտարության փոշին դեռ վրան է, ու Գյումրվա ավանդական «շլապկայի» փոխարեն կատելոկ է դնում գլխին, հայոց զնդանի մոտ: Սակայն ոչ ոք չի ծիծաղում վրան, ոչ ոք մատով ցույց չի տալիս, չնայած տարօրինակ է ու մի քիչ էլ՝ զավեշտական: Դե, մարդ է, վերադարձել է տուն ու հեռուներից հեռը մի բան բերել է: Ամերիկաներում համարյա բան չի տեսել, օտար աշխարհում օտար հաճույքներ չի վայելել, աշխատել է՝ ձի է պայտել: Մինչև անգամ կինո չի տեսել, աշխատել է, որ ապրի, որ վերադառնա, ձի է պայտել...

Փոքրիկ տղա Հովիկն ապշած է՝ ինչպե՞ս, բա Հովիվուդը...

— Ի՞նչ Հովիվուդ...

Ու Հովիկը պատմում է Ամերիկայից վերադարձած վարպետին Ամերիկայի մասին: Վարպետ Մկրտիչը լսում է, Վարպետ Մկրտիչը զարմանում է: Ձե, չի հիշում: Չի տեսել Հովիվուդի հոշակավոր դերասաններին, չգիտի: Բայց դրա փոխարեն լավ հիշում է, որ հարազատ Վան քաղաքում տեսել է բեմի վրա Մեծն Փափազյանին:

— Վան, Փափազյան... Հրաշք...

Մինչ այդ ունեցել էի անդառնալի կորուստներ, ողբերգական: Սիրտս դեռ մղկտում, տնքում էր թաքուն: Թաքուն... Մի բանի

բաժին է մարդը՝ սրա, նրա, մյուսի համար. բաժանում են՝ սեփականացնում, ու ամեն մեկն իրենն է ուզում, իր ձևով: Տուր, հրամցրու... Տնքա՛լս որն է: Տնքալն իրավունք է քեզ համար, ինձ իմ հասանելիք խիճող տուր... Կոտորակվում-հարմարվում ենք «փիլիսոփայում» ենք, սուտ ու սխալի, կեղծի մեր անշնորհքության տակ հող ենք քաշում: Այդպես հեշտ է, այդպես արդարանում ենք: Ապրում ենք...

Վիշտն ու ցնցումներն այլևս չեն վեհացնում մեզ, մեր հոգին չեն դարձնում իմաստուն: Ախր չենք թողնում, որ ծանր բանը մեր միջով քամվի, նստվածք տա, թանձրանա. ձեռնափով երեսքաշ ենք անում ու վռազ դեն ածում:

Այդուհանդերձ, այդ կորուստների ու ցավերի գլխավոր տերը հայրս էր: Իսկ այժմ... Այժմ վրա էր հասնում կյանքիս ամենադժվար փորձությունը՝ մեծ կորուստը՝ հայրս, ու ցավի գլխավոր տերը ես էի. որքան էլ բնական թվա ծնողի մահը... Վաթսունհինգ տարեկան էր ընդամենը:

Զգալարվեց, ձեռքերը փրփուրներից չոցեց, խուճապի շմատնըվեց, մղկտոց էլ չհամեց: Հեռանում էր տղամարդու պես՝ հանդարտ արժանապատվությամբ:

— Հո հազար տարի չեմ ապրելու, — ասաց:

Վաթսունհինգ թվականին Լենինականի հին թաղերից մեկում Հենրիկն ու Սերիկ Իսրայելյանը գտել, ընտրել էին եռանկյունի մի հին, մոռացված դարբնոց: Հինգ դարբիններս մտանք նրա շեմից ներս ու ամիսներ շարունակ ապրեցինք այնտեղ իսկական դարբինների կյանքով: Երկաթ շիկացնող սառը քուրան մեր ձեռքով ծխեց, կարմրեց, կենդանացավ: Պարապությունից համրացած մեծ ու փոքր զնդանները մեծ ու փոքր մուրճերի տակ լեզու առան, ուրախ ու զվարթ դնգացին-զնգացին...

Իմաստուն Հենրիկն աննկատ, կողքանց ընկերացրեց մեզ, միաբանեց, դարձրեց իրեն համախոհ: Զափել էինք, կյանքը մեր առջև, մենք համարձակ գրոհող, մեր միջի գծությունները դեռ

մեջ, մի տեղ, աչքերս հոգնությունից փակվում էին, ու ես, իբր պարտքս կատարած, խոր քուն էի մտնում: Հայրս կեսից ընդհատում էր խոսքը, որ ինձ շխանգարի ու դարձյալ մեն-մեռակ կռիվ էր տալիս իր ցավերի հետ: Քնիս մեջ ականջիս էին հասնում շների փոխնահաչը, հետո արլորների քաղցր ծուղրուղուն, որ դառնում էին անուշ երազ ու ինձ տանում անհոգ իմ մանկությունը...

Ու մեկ էլ.

— Տղա, գործից հետո մի ընկնի, վեր կաց...

Դեռ կրծքի ձայնով, դեռ էլի թավու թանձր, դեռ էլի... պահանջկոտ:

«Վիլիսը» դիկդիկալով Լենինականի ճամփան է բռնում, որ հասցնի ինձ նկարահանման: Ես քնաթաթախ ու դժկամ, հետևի նստատեղին աղջամուղջի ցրտից կծկված, մտքերիս հետ եմ: Տեր աստված, երեսունյոթ տարի՝ մի ամբողջ կյանք, լսել եմ այս նույն խոսքերը՝ «գործից հետո մի ընկնի»: Դպրոցական էի, չէր ասում՝ դասից կուշանա, չէ, կարճ ու կտրուկ՝ «հասի գործիդ»: Աշխատանքը ինքնուրույն, պարագաներից անկախ ու ազատ հասկացություն էր նրա համար և «գործն անտեր» թողնողին, «չհասնողին» արդարացում ու ներում չկար, նույնիսկ՝ մահանալիս...

Տառապանքները խոնավ, բարեբեր հող են գյուտերի համար:

Հորս բահ ու գերանդի բռնող խոշոր ձեռքերի մեջ բուն էին դրել արևն ու հողը, երկաթի ժանգը, քարը, ցուրտը... Ինձ միշտ թվացել են ի ծնե այդպիսին: Աչքիս առաջ են ծանր, ինչ-որ անծանոթ խտացված նյութից սարքած կոշտ ձեռքերը...

Նկարահանումներից առաջ մի օր, առավոտվա լույսի հետ, հասնում եմ տուն: Մտնում եմ ներս, աչքերը փակ, խաղաղ պառկած է հայրս, անշարժ, երկար ձեռքերը պարզած վերմակի վրա: Կանցնեն տարիներ, նույն կերպ չոր թախտին կպառկի Դիան գյուղում հանգրվանած իմ նահապետը: Իսկ այժմ ապշած՝ քար եմ կտրել. մի քանի ամիս արդեն հանգստացած հորս ձեռքերին

անսանձ, սրամիտ-հնարամիտ, կողքինի համար անվնաս ու հա-
ճելի: Նկարահանում լիներ, թե չլիներ, վառում էինք քուրան,
երկաթը շիկացնում, մուրճերն առնում ձեռքներս, թըրխկ հա
թըրխկ, շըրխկ հա շըրխկ... Իհարկե, խանգարում էինք գործին,
իհարկե, Սերիկը փրփրում, բարկանում, նեղանում էր, և, իհար-
կե, Հենրիկը մի անկյուն քաշված, կապույտ աչքերում խորամանկ
ժպիտ, ավելի շատ ինքն իր մտորումների հետ, ներում էր մեր
գծությունները հանուն այն բանի, որ մենք միասին ենք: Աշխա-
տանքից հետո, աղմկոտ, խառնիխուռն, իրար ձեռքի ջուր ածե-
լով (ինչ գեղեցիկ բան) իրար վրա ցալքուն անելով, լվացվում
էինք ու ծիծաղելուց կոտորվում, որ ջուրը մեր երեսի ու ձեռքերի
մրից սևանում էր, որ օճառն էլ չէր օգնում, քրքջում էինք, թվում
էր, անտեղի ու անիմաստ, բայց իրականում մեր մրտոված լի-
նելու, մեր բանվոր-աշխատավոր լինելու բավականությունից:

Չափելէինք, ազնիվ, համարյա անարատ...

Իմ առաջին, խոշոր դերն էր կինոյում: Դերասանի հոտառու-
թյամբ հասկանում էի, որ կարող է ճակատագրական լինել:
Պետք էր նվիրվել, ամեն ինչ մոռանալ, պետք էր մտորել, հորի-
նել... Սակայն ինչո՞ւ հորինել: Էն գլխից դեռ իմ կյանքը իմ առ-
ջնից է գնացել իր բարդություններով, հազիվ եմ հասնում հետե-
վից, որ տեղավորվեմ իմ սեփական կենսագրության մեջ, որ
իմաստավորեմ, հասկանամ եղածը, վերադասավորվեմ: Կուս-
կում չի եղել, որ հանդարտ մարսես...

Խաղընկերներս՝ արդեն հոչակավոր, կոչումնաւոր, ալիքի
վրա, ճամփին՝ կանաչ լույս: Ես առաջին վարանոտ քայլերս եմ
անում: Հենրիկը սրատես մարդ էր, տեսնում էր իմ անվստահու-
թյունը, իմ վիճակը ու... Ու մեկ էլ ձեռքիս տակ զգում էի նրա
զգայուն ուսը...

Մեջ-մեջ գալիս էի Ստեփանավան, գիշերը նստում հորս կող-
քին ու ուժերս ներածին չափ խնամում, զբաղեցնում զրույցնե-
րով, որ գոնե մի քիչ մոռանա «անաստված» ցավերը: Գիշերվա

եմ նայում ու աչքերիս չեմ հավատում՝ մաշկը նուրբ, զարմանալի գեղեցիկ, երկար մատներ, թերևս դաշնակահարին սազող, ազնվականի ձեռքեր... Ու ինձ համար գյուտ եմ անում. ազնվականություն՝ աշխատասիրություն կնշանակի, ուրեմն, մանավանդ՝ աշխատունակություն... Եվ իմ ազնիվ վարպետ Մկրտիչը, իսկական արհեստավորի նման, իսկական մտավորական է, և ոչ մի արտառոց բան չկա, որ Աղասի Այվազյանը նրան հեկնց կատելով է ներկայացրել սցենարում:

Այո, հետո շատ եմ համոզվել՝ «պլեբեյները» ամաչում են աշխատանքից...

Դարբնոցը նայթում էր գվարթ կենսախնդությունից: Ֆրունզի ու իմ ընկերության ոսկեդարն էր (երանելի ժամանակներ). նրա երևակայությունը ծայր չուներ, անհատնում էր, փայլփլում էր սրամտություններով: Չափ չկար և իմ հիացմունքին: Արմենը՝ նուրբ ու խելոք. կյանքով լի Զուրաբը՝ Լափերաձեն: Ռուսախոս փիլիսոփա Պաշա Արսենը՝ Պողոսը, Սերիկն իր ճաշակավոր կինոխցիկով ու Հենրիկը:

Յոթեղբայրություն...

Ծուխ ու մոլոր, տոթ, շիկացած երկաթ, ընդմիջմանը զնդանների վրա հաց ուտել, երգ, քրտինք, վեճ ու բանավեճ, պատմություններ՝ հորինված ու իրական, որ այսօր, Ֆրունզի շնորհիվ, դարձել են կինոֆոլիոն, — այս էր դարբնոցի կյանքը: Նկարվելու հետ մեկտեղ յուրացնում էինք դարբնի արհեստը, իրար հետ մրցելով, արդեն պատրաստում էինք զանազան իրեր: Ես, օրինակ, հմտացել էի պայտի մեխ սարքելու գործում և շատ հպարտ էի դրանով, բայց ֆիլմն այդ մասին չէր լինելու: Ռեժիսոր Մայլանը պարզապես մթնոլորտ էր ստեղծել այդպես ապրելու համար:

Ստեփանավանում ավելի հաճախ եմ լինում: Հայրս արդեն պարզ ու բաց է խոսում «գնալ-մնալու» մասին, պատգամներ է թողնում ինձ: Չեմ առարկում, իմաստ չունի կեղծելը, երկուսս էլ

գիտենք՝ փրկություն չկա: Սառնասիրտ ենք երկուսս էլ, մի տարբերությամբ միայն, որ դժոխային ցավերը կրում է ինքը...

Հայր ու որդի ենք եղել: Շատ ենք միասին եղել, բայց որոշակի մի տարածություն խստորեն պահպանվել է միշտ: Ներաշխարհը արգելագոտի էր բոլորիս համար, ու ինչ էլ լինեք, ինչ էլ պատահեք, ինքը մի քիչ գոնե վերանց էր: Պահվածքն էր այդպիսին՝ նայում էիր ու քեզ թվում էր, որ ինքը մի բան գիտի, որ մենք չգիտենք:

Հիմա կարծես ընկերական մտերմություն է ստեղծվել մեր մեջ. գիշերային մեր զրույցները ջերմ են, սրտալի, բաց: Ինձ այդպես է թվում: Պատմում եմ իմ գործերից, «Եռանկյունի» ֆիլմից, հարցեր է տալիս կցկտուր, ոգևորվում եմ, ուզում եմ գոհ լինի, որ ես իր որդին եմ: Ուրիշի արած սրամտությունն ինձ եմ վերագրում, ուրիշի հաջողությունները, ուրիշի ծափերը... Բարձրացնում եմ իմ վարկը, բարձրացնում եմ ու չափս կորցնում: Ախր շատ եմ ուզում, որ հայրս ինձ հաջողակ տեսնի:

Երկար լսելուց հետո, անսպասելի ընդհատում է:

— Տղա, քեզ ինչի՞ չեն վաստակավորի կոչում տալիս:

— Կտան:— Դեռ տաքացած վրա եմ բերում:— Արդեն ներկայացրել են:

Լռությունը քարանում է, լռությունը դառնում է անտանելի: Սուտ եմ խոսել. այթոռին նստած զգում եմ՝ կարմրեցի, քունքերս քրտնեցին, աչքերս քրտնեցին... Քիչ առաջ էլ ստեցի՝ ոռճիկս եռակի ավելացնելով... Հա, գլուխգոլմանությունն ինձ շատ հեռուն տարավ: Դե ի՞նչ անեմ, ուզում էի իրեն լավ զգար, ուզում էի ուրախացնել...

Աչքերը փակեց, միառժամանակ հեռացավ ինձանից:

— Ընկերներս հարցնում են, չգիտեմ ինչ պատասխան տամ: Դե լավ, էդ հեջ... Մարդ ենք, չսիրող էլ կունենանք: Իրենց տղերքը խոշոր պաշտոնների են, ավտոյով-բանով գալիս են... Պորտները ճարպոտած...

Այս անգամ դարբնոց եմ վերադառնում չափազանց կոտորված, չափազանց տխուր: Ինձ համար գոնե պարզ է՝ հայրս իմ ոչ մի հաջողությունը չի տեսնելու, եթե նույնիսկ ունենամ էլ: Ի՞նչ պորտ, ի՞նչ ճարպ... Այնքան եմ նիհար, որ ինքս ինձնից զրգվում եմ...

Շատ տարիներ հետո, հորս մտերիմ Կալդոնանց Սաքոն, կենացս խմելիս, պատմեց, որ մի անգամ, մի շրջապատում, խոսք ու գրույց է բացվել որդիների մասին: Ամեն մեկը պարծեցել է իրենով, հետո շուտ եմ եկել հորս նեղել՝ որ լավ դերասան է, ինչո՞ւ կոչում չեմ տալիս: Խեղճացել է հայրս: Ես իմ,— ասել է.— գնա, ասի, Երևան, մարդ դառ, գնացել, դերասանություն է անում...» Չարախնդացողներ եմ եղել, հայրս, սրտնեղած, բաժանվել է շրջապատից: Խեղճ իմ հայր: Ախր ես գիտեի՝ հոգու խորքում շատ է հպարտ, որ տղան դերասան է. ներկայացումներս նայում էր, սպասելիքներ ուներ, չնայած փոքր դերեր էի խաղում, աննշան:

Ընկերները հերթով գալիս էին նրան տեսության: Օրերից մի օր եկավ և հին ջալալօղլեցի ջրաղացպան Լիպարիտը: Մինչ այդ ես նրան մեր տանը տեսած չկայի: Ընդհանուր բարևեց, ուղիղ գնաց դեպի հորս մահճակալը, հարցախույզ կանգնեց գլխավերևը...

— Արտաշ, ասում եմ, հիվանդ ես:

— Հա, Լիպարիտ:

— Գործերդ լավ չե՞ն:

— Չէ:

Շատ երկար լռեցին: Այս մարդու գալով տան մթնոլորտը կարծես միանգամից փոխվեց, դարձավ մի տեսակ խորհրդավոր, նույնիսկ՝ հանդիսավոր:

— Ցավերդ շա՞տ եմ:

— Հա, Լիպարիտ:

— Բնո՞ւմ ես:

— Դժվար:

— Դե, եկել եմ, Արտաշ:

Շուտ եկավ ինձ, կարգադրեց սենյակի ավելորդ իրերը դուրս տանեմ, ինքն էլ ինձ օգնելով, մեր հին թախտը դնել տվեց հորս մահճակալի դիմացի պատի տակ:

— Իրիկունը գործից հետո կգամ: Կասես տեղաշոր գցեն Էստեր:

Իսկական մթան հետ եկավ, մի քիչ հաց կերավ, ուշադրություն դարձած հարցրեց ու լսեց, թե որ դեղը ինչի համար է և երբ է տրվելու: Բացատրեցի. հանվեց, պառկեց թախտին:

Հարևան սենյակից մինչև ուշ գիշեր լսում էի նրանց ձայները, մինչև ուշ գիշեր, մինչև քնելս... Տարօրինակ էր այս ամենը, անսովոր: Մորս հարցրի՝ էս Լիպարիտը մեր ի՞նչն է:

— Եսիմ,— ասաց,— միթո՞ւմ թե մանկության ընկերներ են եղել... Եսիմ, այ բալա, հորիցդ բան կհասկանա՞ս...

Առավոտյան, երբ արթնացա, Լիպարիտն արդեն գնացել էր իր գործին: Տունը ավրահոտ էր ընկել: Ես էլ պետք է գնայի Լեհիճական, հասնեի իմ գործին: Մոտեցա հրաժեշտ տալու:

— Հա, տղա, գնա, չանհանգստանաս, Լիպոն եկավ...

Վիրավորվեցի, նեղացա, ինչպես թե՛ չանհանգստանաս: Սկսեցի եռանդուն հավատացնել, որ շուտով աշխատանքներս ավարտվում են, արդեն երկար կմնամ, ամեն ինչ լավ կլինի...

— Հա, էդ հասկանալի է:— Ընդհատեց ինձ հայրս, ու դարձյալ նրա ձայնի մեջ զգացի նախկին անկախությունն ինձնից, ամեն ինչից ու ինչ-որ մի ինքնավստահություն, ամբողջություն:

— Մի բան հարցնեմ: Կրթություն ստացած մարդիկ եք... Ժողովուրդը ձեզ ա նայում, ձեր խոսքին ա մտիկ անում... Էս մեր երկիրը մեզնից խլեցին, հիսի ինչ եք ասում... Ի՞նչ եք մտածում.. Էս մեր Ղարաբաղն ու Նախիջևանը...

— Դե, մեր երկիրն է, ու թե շուտ՝ մերն է...

— Հա, լավ ես ասում...

Աչքերը փակվեցին. մտածեցի՝ հոգնեց: Հանկարծ, ինչ-որ երգ դանդանաց, խոսքերը չհասկացա, անծանոթ էին, մեղեդին՝ նույնպես:

— Տղա, Ալաշկերտը տեսած կա՞ս, Ալաշկերտը...

Գլխիկոր կանգնել եմ կողքին: Ալաշկերտը որտե՞ղ պետք է տեսնեի, ինչպե՞ս... Էս ի՞նչ է խոսում: Զառանցո՞ւմ է... Սիրտս ճնշվում է, մոմոում է, չեմ կարողանում հեռանալ:

— Ձեր փայլը, ձեր բերը ծանր դուրս եկավ... Էդպես ստացվեց... Հավաք կացեք... ծառը կանաչելուց առաջ արմատի ձեռքն ա լսում... Դե, գնա: Պինդ կաց...

Եռանկյունաձև դարբնոցի մուրճերը լռեցին, քուրան հանգալ, զնդանները սառան... Դարբնոցից դուրս եկանք, նկարահանումներն ավարտված էին: Նշեցինք ավարտը, հուզվեցինք, գրկախառնվեցինք: Ամեն մեկից մի բան մնաց մեջս, ինձ հետ: Անմոռաց օրեր: Քսան տարուց ավել է անցել, ու եթե մինչև հիմա հիշում եմ Պաշային, Զուրաբին, եթե սիրում եմ Ֆրունզին ու Արմենին կարոտում, եթե հոգեհարազատ է Սերիկը, ապա, պատճառը «Եռանկյունի» հայոց ֆիլմն է: Ես շնորհակալ եմ իմ ճակատագրին, որի գործերին միշտ խառնվել է Մալյան Հենրիկը:

Բաժանվեցինք: Ամեն մեկը գնաց իր ճանապարհով, իսկ ես շտապեցի իմ ծննդավայրը, դեպի Ստեփանավան: Ստեփանավան... Ինչքան եմ երջանիկ եղել, բայց և ինչքան դառն օրեր եմ տեսել, ինչքան կորուստներ անժամանակ, միայն աստված գիտի ու ես... Սիրել եմ, երբեմն էլ՝ խոռվել, և, այնուամենայնիվ, քաղցր է ու քաղցր ինձ համար իմ հեքիաթային Լոռին, Հայաստանի գոհարը...

Մեր տան առաջ մեքենայից իջա, դանդաղաքայլ մտա մեր բակը, վախվորեցի: Հանկարծ զգացի, որ լռություն է... Մեր տան՝ մինչև կրունկները բաց դռների խորքից լռություն էր ծորում...

Ուշացել եմ, չեմ հասել վերջին շնչին, վերջին խոսքին: Դիմեցի հարազատներիս սովորական հարցով՝ ի՞նչ ասաց, ի՞նչ խոսեց...

— Հեչ,— ու հեծկլտացին,— հեչ: Վերջում ասաց՝ Լիպարիտ, էստե՞ղ ես:

— Հա, Արտաշ, կողքիդ եմ, չվախենա...

— Դե, ձեռք բռնի...

Վիշտու մոռացա, խոցվեցի: Ինչպե՞ս, ուրեմն ինձ չի հիշել: Բա ես... Ախր ես... Ես նրա ավագ որդին եմ, պաշտում էի...

Մի բակի երեխաներ են եղել, մեծացել են միասին, ջահել ժամանակ կամավոր կոիվ են գնացել՝ Էրզիրը փրկելու. Ալաշկերտի տակ հայրս վիրավորվել է... Մի օր երդում են արել ընկերության, հավատարմության, այն բանի համար, որ նեղ օրերին իրար տեր լինեն... Ով գիտե, ինչեր է անցել նրանց գլխով՝ երկար կյանք, բարդ ժամանակներ: Ո՞վ գիտե... Խոսացող չէին, պատմող չէին, ինչ իմանա...

Ծերացած մի մարդ երկու ամսից ավել քնեց մի բուն դառած իր հին ընկերոջ կողքին, դեղ տվեց, արևոտ օրերին գրկեց, դուրս տարավ վերմակի մեջ փաթաթած... Գեղեցկացրեց նրա վերջին օրերը: Իսկ ավարտին.

— Դե, ձեռք բռնի...

Խոսացող չէին, պատմող չէին...

«Եռանկյունի» ֆիլմը դուրս է եկել Էկրան: Մարդիկ նայում են: Աջափնյակից տաքսիով գնում եմ թատրոն: Վարորդն ինձ նանաչեց:

— Երեկ երեկոյան կնոջս հետ գնացի, նայեցի ձեր «Եռանկյունին»: Մի անհամեստ բան ասեմ, բայց չնեղանաք, կներեք, էի... Մի խոսքով, չհավանեցինք...

— Ձեր իրավունքն է:— Ազդվեցի, չոր պատասխանեցի, երեսու շուր տվի մի կողմ, իբր՝ պետքս էլ չի:

— Ախր իզուր եք նեղանում... Ախր, դե, ինչ եք ուզում ասել դրանով, է...

— Ուզում եմք ասել, որ հինգ հայ տղամարդ, տղամարդուն վայել ընկերություն են անում...

Մեքենայի ընթացքը դանդաղեցրեց, քաշեց աչ ու մի հարմար տեղ կանգնեց: Ես չառարկեցի: Անձանոթ վարորդը, ձեռքերը դեկին, առաջ թեքվեց, անշարժացավ, մտքերի հետ էր: Ենթադրում եմ՝ կինոնկարն էր վերհիշում:

— Գիտե՞ք, չէի մտածել: Ինչ լավ բան ասիք:— Ու նորից լռեց:

— Բայց դուք հավատո՞ւմ եք, կյանքում այդպիսի բան լինո՞ւմ է:

— Լինում է, ասացի,— հայրս ուներ մի այդպիսի ընկեր...

Անտառի տակի ջահելության իմ այն ծառը հիմա չկա: Ինձ անհայտ մնաց՝ կայծա՞կը խիեց-այրեց, մարդի՞կ արմատից սղոցեցին իրենց մեկ օրվա պետքության համար, թե՞ բնականոն ապրեց իր դարը, պրծավ...

1987, օգոստոս

ԲՈՎԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ

Հմայքի մեծ խորհուրդը 0 0

ՉՈՐՈՒԿ ՄՅՈՒՂԵՐ

Չորուկ ճյուղեր 0 10

Եթե եղբայրներ ենք 0 74

Ծառը ծարավ 0 140

ՆՎԻՐՈՒՄԻ ԽՈՐՀՈՒԹՅՈՒՆ

Եվ դերասան մի՛ Հրաչ անունով 0 108

Արտիստ Ավետ Ավետիսյանը 0 178

Ախր ասելիք ունեի Մեր Մկրտչյանի հոբելյանին 0 186

Իմ լույս աշխարհի մարդ 0 216

Հենրիկ... Հենրիկ... 0 210

Լույսն էր նրա արարումների շաղախը 0 221

Ծահում Ղազարյան 0 223

Հոգու կանչ 0 222

ԾՈՒՌԸ ՆՍՏԵՆԸ, ԾԻՏԱԿ ԽՈՒՄԵՆԸ

«Հայոց վիշտը անհուն մի ծով...» 0 238

Վերականգնենք կամուրջը 0 246

Վերադառնանք 0 251

Խառը - ժամանակների խառը մտքեր 0 259

Դու ու քո աստվածը՝ չպարտվես 0 267

Խոսք գործընկերներիս խոսքի մասին
կամ

Ծուրը անտենք, շիտակ խոսենք 0 268

Գրագետ քարեր և անգետ հոգիներ 0 277

Հրաշալի իմ երիտասարդ կամ

Ինչու եմ խուսափում նայել քո աչքերին 0 288

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

Վարագույրից այս կողմ 0 290

Ենթե ու Եսթերը 0 306

Տոնածառ 0 315

Ժառանգը 0 322

Եռանկյունի 0 339

**Սոս Արտաշեսի Սարգսյան
ՎԱՐԱԳՈՒՅՐԻՑ ԱՅՍ ԿՈՂՄ**

**Сос Арташесович Саркисян
ПО ЭТУ СТОРОНУ ОТ ЗАНАВЕСИ**

(На армянском языке)
Ереван, «Айастан» 1991

**Խմբագիր՝ Կ. Լ. Սարիբեկյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սոոոյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Մ. Հովհաննիսյան
Տեխն. խմբագիր՝ Գ. Բ. Նահապետյան
Վերատպող արագրիչ՝ Լ. Ս. Գեորգյան**

ИБ 7575

Հանձնված է շարվածքի՝ 6.06.1991 թ.: Ստորագրված է
տպագրության՝ 9.09.1991 թ.: Ֆորմատ՝ 70×108¹/₃₂: Թուղթ
տպագրական № 1: Տառատեսակ՝ «Նորք»: Տպագրություն՝
բարձր, 15,57 պայմ. տպ. մամ., 15,74 պայմ. ներկ. թերթ,
14,87 հրատ. մամ. + 2 ներդիր: Տպաքանակ՝ 20.000: Պատ-
վեր՝ 716: Գինը՝ 5 ռ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Իսահակյան
28:

Издательство «Айастан», Ереван-9, ул. Исаакяна, 28.
Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին
առընթեր մամուլի կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան առ-
լիգրաֆիական արտադրական միավորման գունավոր տպա-
գրության տպարան: Երևան, 375114, Ծովակալ Իսակովի
պող., 48:

Типография цветной печати полиграфического п/о Аго-
па Мегапарта при комитете по печати Совета Мини-
стров Республики Армения Ереван, 375114, пр Адми-
рала Исакова, 48.

